

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

Հարգելի՛ ընթերցող,
«Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպությունն իր գործունեության վեց տարիների ընթացքում նախաձեռնել է ավելի քան չորս տասնյակ ծրագրեր, որոնցից հատկանշելի է www.artsakhlib.am հասցեով գործող «Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքէջը, որն Արցախի և Հայաստանի կենսագործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ գիտական, գեղարվեստական և ճանաչողական նյութերի համահավաք շտեմարան է:



Ներկայումս կայքում ամկա նյութերի քանակն անցել է 12.000-ի, իսկ նյութերի հեղինակների թիվը՝ 5.700-ի սահմանագիծը:

Եթե ունեք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տպագրված գիտական աշխատանք և այն նշված կայքէջում տեղադրելու ցանկություն, խնդրում ենք ուղարկել artsakhlib@gmail.com էլեկտրոնային փոստին: Իսկ եթե փնտրում եք Արցախի և Հայաստանի վերաբերյալ տեղեկատվություն, սակայն դեռ չեք գտել, գրե՛ք մեզ նույն հասցեով և մենք կփորձենք օգնել Ձեզ:

Նշենք, որ «Գիտական Արցախ» պարբերականում ընդգրկված գիտական հոդվածների էլեկտրոնային տարբերակները ևս կարող եք ԱՆՎՃԱԲ ներբեռնել Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքից:

Dear reader!
«Union of Young Scientists and Specialists of Artsakh» (UYSSA) NGO has initiated more than four dozen programs during the six years of its activity, of which the Artsakh E-Library website can be singled out - www.artsakhlib.am, which presents a consolidated repository of scientific, artistic and educational materials reflecting various spheres of life of Artsakh and Armenia.

Currently, the number of materials on the site exceeded 12.000, and the number of authors of materials - 5.700.

If you have published scientific work about Artsakh and Armenia and you wish to make it available on our website, please send it to the following e-mail address: artsakhlib@gmail.com. And if you are looking for the information on Artsakh and Armenia but have not found it yet write to us to the same e-mail and we will try to help you.

It should be noted that you can also download FREE electronic versions of scientific articles published in the journal «Scientific Artsakh» from the Artsakh E-Library website.

Уважаемый читатель!
Общественная организация «Объединение Молодых Учёных и Специалистов Арцаха» (ОМУСА) в течение своей шестилетней деятельности инициировала более четырёх десятков программ. Среди них можно выделить сайт **Электронной библиотеки Арцаха** - www.artsakhlib.am, который является сводным хранилищем научных, художественных и познавательных материалов, отражающих различные сферы жизнедеятельности Арцаха и Армении.

На данный момент количество материалов на сайте превысило 12.000, а количество авторов материалов - 5.700.

Если у Вас имеется изданная научная работа об Арцахе и Армении и желание опубликовать на нашем сайте, то просим отправить её на следующий адрес электронной почты: artsakhlib@gmail.com. А если Вы ищете сведения об Арцахе и Армении, но пока ещё не нашли их, напишите нам по тому же адресу, и мы попробуем помочь Вам.

Отметим, что также можете БЕСПЛАТНО скачать из сайта Электронной библиотеки Арцаха электронные варианты научных статей, опубликованных в журнале «Научный Арцах».



«ԱՐՑԱԽ»
ԳԻՏԱՆԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



«HI-AM»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԳԻՐԱՄ

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ




SCIENTIFIC ARTSAKH



НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(8), 2021



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(8), 2021

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(8), 2021

www.scientificartsakh.com

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականը պետերկված է www.elibrary.ru կայքում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The «Scientific Artsakh» journal is posted on www.elibrary.ru website.

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных

Высшим аттестационным комитетом Республики Армения (BAK RA).

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»

ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН

2021

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒՉԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստորոմա, ՌԴ**)

Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալֆրեդ դե ՉԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարեն ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլջտին, Լեհաստան**)

Նատալյա ԿՈՎՎԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Մինսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԻ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆՆԻ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱԿՈՐՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մուշեղ ՀՈՎԱՆԵԹՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԻԿՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 1(8), 2021, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2021, 280 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2021թ. 1-ին (8-րդ) համարի տպագրությանն աջակցել է «Hi-Am» բարեգործական հիմնադրամը:

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D. in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D. in Philology, Associate Professor

Members:

Anna ASATRYAN, Doctor of Arts, Professor
Lena ASRYAN, Doctor of History (Tarragona, Spain)
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D. in Philosophy, Associate Professor (Lviv, Ukraine)
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D. in Law, Associate Professor (Minsk, Belarus)
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economics, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D. in Economics, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economics, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economics, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (Geneva, Switzerland)
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 1(8), 2021, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2021, 280 pages.

The publication of the 1st (8th) 2021 «Scientific Artsakh» journal was supported by «Hi-Am» Charity Foundation.

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Анна АСАТРЯН, доктор искусствоведения, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 1(8), 2021, Ереван, Издательство «АРЦАХ», 2021, 280 страниц.

Публикация 1(8) номера 2021 года журнала «Научный Арцах» была осуществлена при содействии благотворительного фонда «Hi-Am».

ԲՈՎԱԼՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * CONTENTS * СОДЕРЖАНИЕ**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ**

- Գևորգ Ստեփանյան.** Հայերի էթնիկ զտումների և ցեղասպանական քաղաքականության իրագործման փուլերն Արևելյան Այսրկովկասում (XI-XX դդ.) (Մաս 1).....9
Gevorg Stepanyan. The Stages of Implementation of the Policy of Ethnic Cleansing and Genocide of Armenians in the Eastern Cis-Caucasus (11th-20th cc.) (Part 1)
Геворг Степанян. Этапы осуществления этнических чисток армян и геноцидальной политики в Восточном Закавказье (XI-XX вв.) (Часть 1)

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
 ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

- Կատերինա Ալթունյան.** Համայնքների խոշորացումը Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում. դրական և բացասական կողմերի վերլուծություն.....35
Katerina Altunyan. Enlargment of Communities in the Local Self-Government System of the Republic of Armenia: Analysis of Positive and Negative Outcomes
Катерина Алтунян. Увеличение общин в системе местного самоуправления Республики Армения: анализ положительных и негативных сторон

- Անժելա Էլիբեգովա.** Հայերի ջարդերը Սումգայիթում 1988 թվականին՝ որպես Ադրբեջանում հակահայկական քարոզչության գործոն.....47
Anzhela Elibegova. Armenians Pogrom in Sumgait in 1988 as a Factor of Anti-Armenian Propaganda in Azerbaijan
Анжела Элибегова. Погромы армян в Сумгаите в 1988 г. как фактор антиармянской пропаганды в Азербайджане

- Արտակ Հարությունյան.** Պետության ռազմական անվտանգության ներուժը. եռությունը, կառուցվածքը և առանձնահատկությունները.....54
Artak Harutyunyan. The Potential of Military Security of the State: Essence, Structure and Features
Артак Арутюнян. Потенциал военной безопасности государства: сущность, структура и особенности

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

- Արթուր Դամբարյան.** Իրավունքի և օրենքի կոլիզիաները իրավունքի փիլիսոփայությունում.....64
Artur Ghambaryan. Collisions of Law and Justice in the Philosophy of Law
Артур Гамбарян. Коллизии права и закона в философии права

- Տիգրան Մարկոսյան, Անահիտ Սանթրոսյան.** Եվրասիական տնտեսական միության մարմինների նորմատիվ իրավական ակտերի կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում.....86
Tigran Markosyan, Anahit Santrosyan. Issues Pertaning to the Application of Normative Legal Acts of the Eurasian Economic Union Bodies in the Republic of Armenia
Тигран Маркосян, Анаит Сантросян. Проблемы применения нормативных правовых актов органов Евразийского экономического союза в Республике Армения

Ելինա Մխիթարյան. Փախստականների իրավական կարգավիճակը Արցախի Հանրապետությունում.....98
Elina Mkhitaryan. The Legal Status of Refugees in the Republic of Artsakh
Элина Мхитарян. Правовой статус беженцев в Республике Арцах

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

Արաքս Փաշայան, Նազելի Նավասարդյան. Իսլամական աշխարհի աջակցությունն Ադրբեջանին 2020թ. Արցախյան պատերազմի ընթացքում. իսլամական համերաշխությունից մինչև ջիհադականություն..... 106
Araks Pashayan, Nazeli Navasardyan. Muslim World Support to Azerbaijan in the Course of 2020 Artsakh War: from Islamic Solidarity to Jihadism
Аракс Пашаян, Назели Навасардян. Поддержка Азербайджана мусульманским миром во время Арцахской войны 2020 г.: от исламской солидарности к джихадизму

Լիլիթ Հարությունյան, Տաթևիկ Մանուկյան. Իսլամական արմատականությունը Վրաստանում. Նոր միտումներ և մարտահրավերներ..... 120
Lilit Harutyunyan, Tatevik Manukyan. Radiacal Islam in Georgia: New Trends and Challenges
Лилит Арутюнян, Татевик Манукян. Исламский радикализм в Грузии: новые тенденции и вызовы

Վահե Հակոբյան. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի արաբատառ ֆոնդի թիվ 1713 և Սաուդ թագավոր համալսարանի թիվ 6770 ձեռագրերում առկա մեկնաբանությունների և ծանոթագրությունների համեմատական քննադիրը..... 136
Vahe Hakobyan. Comparative Description of the Commentaries and Annotations in the 1713 Manuscript of the Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts of the Arabic Fund and the 6770 Manuscript of King Saud University
Ваге Акопян. Сравнительное описание комментариев и сносок рукописи № 1713 арабского фонда Института древних рукописей имени Месропа Маштоца и рукописи 6770 университета короля Сауда

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА

Սվետլանա Մանուչարյան. Ոչ գրական (քարքառային և խոսակցական) լեզվաշերտը Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» ստեղծագործության մեջ..... 144
Svetlana Manucharyan. Non-Literary (Dialectal and Colloquial) Language Layer in «Autumn Sun» by Hrant Matevosyan
Светлана Манучарян. Нелитературный (диалектный и разговорный) лексический слой в произведении Гранта Матевосяна «Осеннее солнце»

Հռիփսիմե Սարգսյան. Անցյալ կատարյալ ժամանակածևի ուսուցումը ՀՀ հանրակրթական դպրոցում..... 158
Hripsime Sargsyan. The Teaching of Past Perfect Tense at the Ra Secondary School
Рипсима Саргсян. Преподавание прошедшего совершенного времени в средней Школе РА

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Նադեժդա Աֆյան, Գարրի Գասպարյան. Հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման հեռանկարները Հայաստանում: SWOT վերլուծություն..... 164
Nadezhda Afyan, Garri Gasparyan. Prospects for Sustainable Development of the Mining Industry in Armenia. SWOT Analysis
Надежда Афян, Гарри Гаспарян. Перспективы устойчивого развития горнодобывающей отрасли в Армении. SWOT-анализ

Հայկ Բեջանյան, Լուսինե Խաչիկյան. ՀՀ դրամավարկային քաղաքականության արդյունքների վերլուծությունն ու արդյունավետության գնահատումը..... 171
Hayk Bejanyan, Lusine Khachikyan. Analysis and Assessment of Effectiveness of RA Monetary Policy
Айк Бежаниян, Лусине Хачикян. Анализ и оценка эффективности денежной политики РА

Անի Գրիգորյան. ՀՀ տնտեսության պարտքային անվտանգության խնդիրները Արցախյան պատերազմի համատեքստում..... 181
Ani Grigoryan. Economic Debt Security Problems of the Republic of Armenia in the Context of the Artsakh War
Ани Григорян. Проблемы экономического долгового обеспечения РА в контексте Арцахской войны

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, PEDAGOGY, ПЕДАГОГИКА

Միշա Թադևոսյան. ՀՀ քրեակատարողական հիմնարկներում ոչ ֆորմալ կրթության կազմակերպման պրակտիկան..... 189
Misha Tadevosyan. Practice of Organization of Non-Formal Education in Penitentiary Institutions of RA
Миша Тадевосян. Практика организации неформального образования в пенитенциарных Учреждениях РА

ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ, PSYCHOLOGY, ПСИХОЛОГИЯ

Սվետլանա Բաղդասարյան. Մոտիվացիոն գործոնների ազդեցությունը կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտի վրա. հետազոտության արդյունքների համեմատական վերլուծությունը..... 203
Svetlana Baghdasaryan. The Influence of Motivating Factors on the Psychological Environment of the Personnel: Comparative Analysis of Research Results
Светлана Багдасарян. Влияние мотивационных факторов на психологическую атмосферу коллектива: сравнительный анализ результатов исследования

Մարգարիտա Կարապետյան. Հոգեդիագնոստիկ մեթոդների կիրառման առանձնահատկությունները անձի պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրման գործընթացում..... 211
Margarita Karapetyan. Features of Application of Psychodiagnostic Methods in Studying Personal Protective Mechanisms
Маргарита Карапетян. Особенности применения психодиагностических методов при изучении защитных механизмов личности

Մարիամ Կարապետյան. «Հայրենիքի պաշտպանի» և «մարդասպանի» անհատական հոգեբանական առանձնահատկությունները զինծառայողի ընկալման մեջ.....221
Mariam Karapetyan. Individual Psychological Characteristics of the «Defender of the Fatherland» and the «Killer» in the Perception of a Serviceman
Мариам Карапетян. Индивидуально-психологические особенности «защитника отечества» и «убийцы» в восприятии военнослужащего

Մարիամ Մեհրաբյան. 2021 թվականի հոգեբանական աշխատանքների վերլուծությունը մարտական գործողությունների ժամանակ և հետպատերազմյան փուլում տարբեր խմբերում անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիայի շրջանակներում.....228
Mariam Mehrabyan. The Analysis of Psychological Work During the Hostility and at the Post-War Stage in Different Groups in the Framework of Person-Centered Intensive Program Psychotherapy

Мариам Меграбян. Анализ психологических работ 2021 года, проведенных в разных группах во время военных действий и на послевоенном этапе в рамках лично-ориентированной интенсивной программной психотерапии

ԱՐՎԵՍ, ԻՏԿՄԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ԱՐԿ

Նաիրա Նազարյան. Տիտղոսաթերթի գեղարվեստական ձևավորումները Թորոս Տարոնացու արվեստում (1307թ. Եսայի Նչեցու Ավետարան).....237
Naira Nazaryan. Title Pages Decoration in the Art of Toros Taronatsi (The Gospel of Yesai Nchetsi 1307)

Наира Назарян. Художественное оформление титульных листов в искусстве Тороса Таронаци (Евангелие Есаи Нчеци 1307 года)

Զահրա Մալեքի. Եվրոպական մոդեռնիզմի արձագանքները XX դարի Իրանի նկարչության մեջ (1920-1980 թվականներ).....250
Zahra Maleki. Impact of European Modernism on Iranian Painting of the XX Century (1920-1980s)

Захра Малекки. Отражение европейского модернизма в иранской живописи XX века (1920-1980 годы)

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԵՏԱԶՈՏՈՂԻ ԱՍԲԻՈՆ TRIBUNE OF YOUNG RESEARCHER ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ

Գևորգ Բարսեղյան, Մանե Մարկոսյան, Հրայր Հովակիմյան. Տրանսցենդենտալ ֆենոմենալոգիան որպես իրավական հետազոտությունների իրականացման մեթոդ.....258

Gevorg Barseghyan, Mane Markosyan, Hrayr Hovakimyan. Transcendental Phenomenology as a Method for Conducting Legal Study

Геворг Барсегян, Мане Маркосян, Грайр Овакимян. Трансцендентальная феноменология как метод проведения правовых исследований

«Գիտական Արցախ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները.....275

The Requirements for «Scientific Artsakh» Journal.....276

Требования к оформлению статей для журнала «Научный Арцах».....278

ՊԱՏՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

**ՀԱՅԵՐԻ ԷԹՆԻԿ ԶՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ
ԲԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼԵՐՆ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ (XI-XX ԴԴ.)
(ՄԱՍ 1)***

ՀՏԴ 94 (479.25); 343.412

DOI: [10.52063/25792652-2021.1-9](https://doi.org/10.52063/25792652-2021.1-9)

ԳԵՎՈՐԳ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և
Սիյունքի պատմության բաժնի վարիչ,
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր,
բ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
sasun-07@mail.ru

Հոդվածի նպատակն է տարաբնույթ սկզբնաղբյուրների (արխիվային փաստաթղթեր, վիճակագրական նյութեր, պարբերական մամուլ, թեմային առնչվող գրականության) հենքի վրա ներկայացնել Արևելյան Այսրկովկասում Կուրի դաշտավայրից մինչև Ապշերոն թերակղզի ընկած տարածքում, XI-XX դարերի ընթացքում տեղաբնիկ հայ բնակչության նկատմամբ իրականացված Էթնիկ պտումների ու ցեղասպանական քաղաքականության պատճառներն ու իրագործման փուլերը:

Աշխատանքը շարադրված է փաստերի համադիր բնույթամբ, պատմաբնական ու պատմահամեմատական վերլուծության սկզբունքների կիրառմամբ: Աղբյուրների հավաստիության ու վավերականության աստիճանը ճշտել ենք դրանց համակողմանի ուսումնասիրության միջոցով:

Փաստերի համադրմամբ տրվում է հիմնահարցի պատմության հետևյալ փուլայնացումը. Արևելյան Այսրկովկասում տեղաբնիկ հայերի Էթնիկ պտումներն ու կոտորածները տակավին իրականացվել են XI-XVIII դարերում, երբ երկրամասը պարբերաբար հայտնվում էր այլևայլ նվաճող, վաչկատուն ցեղերի ու պետությունների արշավանքների և տիրապետության տակ (թուրք-սելջուկներ, մոնղոլ-թաթարներ, Լանկ-Թեմուր, կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական քոչվոր ցեղեր և դվրաշների արշավանքներ, դրանց հաջորդած թուրք-պարսկական պատերազմներ, սուննի լեպգիններ, Նադիր շահի ու Աղա Մուհամմադ խանի արշավանքներ): Դրա հետևանքով հայ բնակչության մի որոշ մասը բռնատեղափոխվեց և լքեց հայրենի տարածքները կամ հարկադրաբար ընդունեց նվաճողների մահմեդական դավանանքը: Էթնիկ պտումների ու կոտորածների հաջորդ փուլը հայ-թաթարական ընդհարումների շրջանն էր (1905-1906 թթ.):

Հետագայում ցեղասպանական քաղաքականությունը պետական մակարդակով է իրականացվել՝ արդեն արհեստաձին «Ադրբեջան» կազմավորման մուսավաթական (1918-1920 թթ.) և վերջում՝ Ադրբեջանի խորհրդային վարչակարգերի ժամանակաշրջաններում (1920-1990 թթ.):

* Հոդվածը ներկայացվել է 02.03.2021թ., գրախոսվել՝ 10.03.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

Հողվածում հիմնավորված է այն իրողությունը, որ երկրամասի տեղաբնիկ հայ բնակչությունը էթնիկ պտույտների ու ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում, այնպես, ինչպես երիտթուրքերն իրագործեցին արևմտահայերի բնաջնջումը 1915-1916 թթ-ին. Արևմտյան Հայաստանում: Հետևաբար այդ քաղաքականությունը պետք է որակել որպես հայերի ցեղասպանության շարունակություն և բաղկացուցիչ մաս, քանզի Հայոց ցեղասպանությունն իր աշխարհագրական ընդգրկմամբ (Կիլիկիայից մինչև Բաբել) համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր:

Պատմագիտական գրականության մեջ թեև խնդրո առարկա հարցի վերաբերյալ անդրադարձերը բավառթիվ են, սակայն առանձին բնության առարկա չի դարձել Արևելյան Այսրկովկասում՝ Կուրի դաշտավայրից ներառյալ Ապշերոն թերակղզի ընկած տարածքում հայերի էթնիկ պտույտների ու ցեղասպանական քաղաքականության ամբողջական ուսումնասիրությունը:

Հիմնաբառեր՝ Արևելյան Այսրկովկաս, Բաբելի նահանգ, Կուրի ծախափնյակ, համաթուրքականություն, էթնիկ պտույտներ, այլատյացություն, ցեղասպանություն, բռնագաղթ:

Դիտարկելով Արևելյան Այսրկովկասի (ներառում է Կուրից հյուսիս պատմական Բուն Աղվանքի¹ և նրանից հյուսիս-արևելք տարածվող մերձկասպյան, ինչպես նաև Կուրի աջափնյա դաշտավայրը և Երասխ/Արաքսի ստորին հոսանքից հարավ գտնվող՝ Մեծ Հայքի Փայտակարան² աշխարհի արևելյան՝ Կասպից ծովի առափնյա շրջանները),

¹ Բուն Աղվանքի աշխարհագրական սահմանների և առնթրից հարցերի մանրամասն բնութայնում տե՛ս **Աкопян А. А.**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987; **Սվազյան Հ.**, Աղվանից աշխարհի պատմություն (ինագույն շրջանից VIII դարը ներառյալ), Երևան, 2006; **Վարդանյան Ա.**, Աղվանքի պատմաաշխարհագրական բնություն, Երևան, 2013; **Յակոբեան Ա. Ա.**, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար, Երևան, 2020:

² Մեծ Հայքի 11-րդ՝ Փայտակարան աշխարհը Հայաստանում Արշակունյաց թագավորության վերացումից (428 թ.) հետո տարբեր ժամանակներում մտել է այլևայլ պետությունների կազմի մեջ: Թուրքմենչայի 1828 թ.-ի փետրվարի 10-ի հաշտության պայմանագրով Այսրկովկասում Ռուսական կայսրության տիրապետության հաստատումից հետո անցկացվեցին վարչատարածքային բաժանումներ: Ցարական կառավարությունը նախ՝ Կասպիական մարզի (1840 թ.), ապա՝ Շամախու նահանգի (1846 թ.), իսկ այնուհետև՝ Բաբելի նահանգում (1867 թ.) Շիրվանի, Բաբելի և Ղուբայի պրովինցիաներից բացի ընդգրկեց նաև Փայտակարանի (ունեցել է 12 գավառ) արևելյան շրջանները. հյուսիսում Մուղանի դաշտի մեծ մասը (հետագայի՝ Չավատի գավառը), հարավ-արևելքում՝ Կասպից ծովի առափնյա շրջանը՝ Լենթորանի ցածրավայրը և Թալիշի լեռնային շրջանը (հետագայի՝ Լենթորանի գավառը): 1920 թ.-ի ապրիլի վերջերին Փայտակարանի արևելյան շրջանները բռնակցվել են Ադրբեջանական ԽՍՀ-ին (տե՛ս **Աբրահամյան Ա.**, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 350; **Հարությունյան Բ.**, Փայտակարան, ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 301-302; **Նույնի՝** Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կազմությունը 387-451 թթ., Բե՛Հ, Երևան, 1976, էջ 77-95; **Նույնի՝** Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, ԼՀԳ, Երևան, 1981, № 12, էջ 61-76; **Նույնի՝** Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների (քարտեզ), Երևան, 2001); **Амбарцумян А.**, Область Пайтакаран и гора Сабалан. Филологические и этимологические очерки (этимология названий и происхождение традиций). Международная конференция по арменоведению «Письменные памятники армянского наследия», Сб. докладов и тезисов. Ред. составитель Д. С. Мкртчян, СПб., 2017, С. 21-40); **Յակոբեան Ա. Ա.**, Աշխարհացոյցեան Փայտակարան նահանգի գաւառների տեղորոշման նոր փորձ («Հայաստանը եւ արեւելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Գ»: ճանաչված հայագետ-կովկասագետ Պավել Չոբանյանի (1948-2017) ծննդյան 70-ամյակին նվիրված Հանրապետական գիտաժողով (մայիսի 17-18, 2018): Չեկուցումներ եւ զեկուցումների դրույթներ, Երևան, 2018, էջ 236-246; **Նույնի՝** Локализация кантонов (гаваров) провинции

տեղաբնիկ հայերի³ կոտորածների, եթևիկ գտումների, հետազայում նաև ցեղասպանության վերածված քաղաքականության հիմնահարցը՝ ժամանակագրական առումով

нции Пайтакаран Великой Армении по «Ашхraphаоц»-у («Армянской географии» VII века), «Anatolia – The Caucasus – Iran: Ethnic and Linguistic Contacts» (ACIC), 10-12 May, 2018, Yerevan, Institute of Oriental Studies, Russian-Armenian University, Armenia in Cooperation with the Institute of Empirical Linguistics Goethe University of Frankfurt am Main, Abstracts. Yerevan, 2018, p. 19-20.

³ Պատմական հավաստի հիշատակությունները վկայում են, որ Կուրի ձախափնյակի և մերձկասսայան շրջանների տարեթևիկ տարածքում վաղ ժամանակներից բնակվել են ոչ միայն աղվաններ, այլև որոշակի հայկական եթևիկ տարր, որն ուրույն դերակատարություն է ունեցել երկրամասի մշակութային ու քաղաքական զարգացումներում (տե՛ս **Գալստյան Յ., Հակոբյան Ա.**, Եթևալեզվական գործընթացները Բուն Աղվանքում (**Գալստյան Յ., Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ** (ժողովածու): Կազմ. **Մարության Յ.**, Երևան, 2003, էջ 91-92): Հայկական լեռնաշխարհից արևելք՝ Կուրի ձախափնյակում, հայ եթևիկ տարրի վաղեմությունը փաստող բազմաթիվ ապացույցներ կան հայկական աղբյուրներում: Ինչպես, օրինակ, Սիմեոն Ա Երևանցի պատմագիր կաթողիկոսը հիշատակարանում գրում է. «Իսկ բազմութիւնք հայալեզու և հայակոս ժողովորոցն, որք այժմ գոն ի յերկիրն Աղուանից, **հայք են ի բնէ**» (ընդգծումը մերն է - Գ. Ս.): Դիւան Հայոց պատմութեան, Գ գիրք, մասն Բ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, հրատարակեց **Գիտ քահանայ Աղանեսաց**, Թիֆլիս, 1894, էջ 417-418): Նշենք, որ երկրամասում հայերի տեղաբնիկ լինելը փաստում են նաև օտար աղբյուրները: Այդ հիմաստով հատկապես ակնառու է կովկասագետ Յու. Գագենյեստերի տեղեկությունը. «Նախկին Կասպիական մարզի ամբողջ բնակչությունից իրենց նախաբնակությունը կարող են ապացուցել միայն հայերն ու ուրիները» (**Гагемейстер Ю.**, Хозяйственный очерк Закавказского края: народонаселение (Сборник газеты «Кавказ»), первое полугодие 1847 года. Изд. **О. Н. Константиновым**, Тифлис, 1847, С. 58. Ըստ որոշ տեղեկությունների՝ միջնադարում երկրամասի ողջ տարածքում Կուրից մինչև Կասպից ծով, բնակվում էին մեծ թվով հայեր. հայաբնակ բնակավայրերի թիվը հասնում էր ավելի քան 200-ի (տե՛ս **Կարապետյան Ա.**, Շամախու գավառի գյուղերի պատմությունից, ԼՀԳ, Երևան, 1989, № 2, էջ 57):

Բաբլի շրջակայքում գոյություն ունեցած հայկական գյուղական համայնքների մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում XV դ. սկզբի տեղացի արաբ աշխարհագրագետ ու ճանապարհորդ Աբդ աբ-Ռաշիդ ալ Բաթուվին՝ ավանդաբար նրանց բնակիչներին կոչելով քրիստոնյաներ: «Բաթուվի... մերձակայքում,- գրում էր Բաթուվին,- կան շատ գյուղեր և յուրաքանչյուրն ունի ամրացված միջնաբերդ ամրապինդ պատերով: Այդ գյուղերի բոլոր բնակիչները քրիստոնյաներ են (իմա՝ հայեր - Գ. Ս.)...» (**Абд ар-Рашид ал-Бакуви**, Китаб талхис ад-асар ва аджа`иб ал-малик ал-Кахар («Сокращение [книги о] «Памятниках» и чудеса царя могучего»)). Издание текста, перевод, предсловие, примечания и приложения **З. Буниатова**, Москва, 1971, С. 89-90). Այստեղ հարկ է նշել, որ աշխատության հրատարակիչ, հայտնի պատմակեղծարար Հիա Բունիաթովը, որին հատուկ է պատմական անցանկալի փաստերի նենգափոխումն ու աղավաղումը, կասկածի տակ ղնելով այդ հաղորդման հավաստիությունը, հանիրավի միջամտել է պատմիչի շարադրանքին և բնօրինակի այդ հատվածում դրել հարցական նշան:

Ի լրումն վերոնշյալի՝ ավելացնենք, որ 1683 թ.-ի հունվարի 6-8-ը Բաթու այցելած գերմանացի բնագետ ու բժիշկ Էնգելբերտ Կենմաֆերը քաղաքի բազմակողմանի նկարագրությունից բացի ուշագրավ տեղեկություններ է թողել նաև «Կույսի աշտարակի» ու ամրոցի գլխավոր մուտքի՝ «Շամախիի» դարպասների մոտ գտնվող հայկական երկհարկանի բարավանատան մասին (տե՛ս - **Kempfer E.**, Amoenitatum Exoticarum Politico-Phisico-Medicarum Fasciculi, Lemgoviae, 1712, p. 264-286).

Կուրի ձախափնյակի մշակութային զարգացումներում հայկական ազդեցությունն առավելապես դրսևորվել է քրիստոնեության և դպրության տարածման ու հաստատման գործում: Ազաթանգեղոսի հաղորդմամբ՝ Գրիգոր Լուսավորիչը և Հայոց թագավոր Տրդատ III Մեծը (298-330 թթ.) քրիստոնեության քարոզչությունը տարածեցին «...մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից...» (**Ազաթանգեղոս** Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ **Գ. Տեր-Մկրտչյան եւ Սու. Կանայեանց**, Տիֆլիս, 1909, էջ 439): Պատմականորեն հավաստի է, որ IV դ. 30-ական թվականների սկզբներին երկրամասում քրիստոնեություն է քարոզել Բուն Աղվանքի և Վիրքի համար եպիսկոպոս կարգված Հայոց կաթողիկոս Վրթանես Ա Պարթևի երեց որդի Գրիգորիսը, որը Մասքթաց հեթանոս Սասեսան թագավորի հրամանով նահատակվել է

Դերբենդից հարավ՝ Կասպից ծովի ափին գտնվող Վատնյա դաշտում (ներկայիս Խաչմասի շրջանում): Տե՛ս **Փաստոսի Բիզանդացու** Պատմութիւն Յայոց, բնագիրը **Զ. Պատկանեանի**, թարգմ. և ծանոթ. **Ստ. Մախասեանի**, Երեւան, 1987, էջ 26; **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Ա, Կ. Ղոխի, 1912, գ 99, էջ 138-139; **Հարությունյան Բ.**, Մազքթաց Սանեան թագավորի արշավանքը, ԼՂԳ, Երևան, 1981, N 6, էջ 76-77; **Мурadian П.**, Кавказский культурный мир и культ Григория Просветителя, «Кавказ и Византия», вып. 3, Ереван, 1982, С. 5-20; **Акопян А.**, Албания-Алуанк, С. 124-145; **Սվազյան Յ.**, Աղվանից կաթողիկոս Մանուկ Գրիգորի, «Էջմիածին», 2003, N 2, էջ 39-46:

Բուն Աղվանքում գրի, լուսավորության ու քրիստոնեության հետագա տարածումը սերտորեն կապված է Մեսրոպ Մաշտոցի կրթալուսավորական գործունեության հետ, որը Հայաստանում նորաստեղծ գրի ամրապնդումն ու լուսավորական գործը հաջողությամբ ավարտին հասցնելուց հետո՝ V դ. սկզբներին, նույն առաքելությամբ անցել է Բուն Աղվանք և Եսվաղեն թագավորի, Երեմիա եպիսկոպոսի ու Բենիամին երեցի օգնությամբ տարածել իր ստեղծած աղվաներեն գիրը (**Կորյուն**, Վարք Մաշտոցի: Բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր **Մ. Աբեղյանի**, Երևան, 1941, էջ 70; **Ակիսեան Ն.**, Ս. Մաշտոց վարդապետ. Կեանքն եւ գործունեութիւնը, հանդերձ կենսագրութեամբ Ս. Սահակայ, Վիեննա, 1949, էջ 295-319; **Абрамян А.**, Дешифровка надписей Кавказских агван, Ереван, 1964, С. 73; **Յակոբեան Ա.**, Մաշտոցի երկրորդ հիսիսային ուղեւորութեան ժամանակը եւ ինդիքները, Միջազգային գիտաժողով՝ նվիրված Յայոց գրերի գյուտի 1600-ամյակին (Երեւան, 12-17 Սեպտեմբերի, 2005 թ.): Չեկուցումների ժողովածո, Երեւան, 2006, էջ 122-131):

Բուն Աղվանքը հնուց գտնվել է հայկական պետականության ու Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր ու քաղաքակրթական ազդեցության ներքո: Այն, որ վաղ միջնադարից մինչև Հայոց թագավորության անկումը (428 թ.) Աղվանից թագավորությունը որոշ ընդհատումներով գտնվում էր հայկական թագավորության քաղաքական ու մշակութային ազդեցության ներքո, խոսում վկայության ենք շահնդիպում Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Յայոց» երկում. «Սկիզբն առաջնոյ պատմութեանն եղաք զսուրբ Լուսավորիչն Յայոց... զսուրբն Գրիգորիոս... Իսկ երկրորդ հատուածիս դիցուք զլուսաւորիչս կողմանցն Աղուանից, որպէս զազգայնոց և զհաւատակցաց մերոց, մանաւանդ զի և առաջնորդք նոցա հայալեզուք, հայերենախօսք յորովք էին. թագաւորքն՝ հնազանդք՝ թագաւորացն հայոց, ընդ ձեռամբ նոցա լեալք, և եպիսկոպոսքն՝ ձեռնադրեալք ի սրբոյն Գրիգորէ և յաթոռակալաց նորա, և ազգն ուղղափառութեամբ ընդ մեզ կացեալ ի կրօնս, վասն այնորիկ արծան է ի միասին յինչյիշատակ երկուց ազգացս» (**Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Յայոց, աշխատասիրութեամբ **Կ. Մեխիթ-Օհանջանյանի**, Երևան, 1961, էջ 192): Յայր Ներսէս Ակիսեանի դիտարկմամբ՝ «...Աղուանից աշխարհը ոչ միայն ... Մեծ Յայաստանի հովանայն տակ սպարծ էր եւ անոր մշակոյթով մնած, այլ եւ... կրօնքով եղբայրացած... թեպէտ յետոյ քաղաքականապէս անկէ բաժանուած, բայց եղած է... անոր հետ դաշնակից եւ դրացիութեամբ» (**Ակիսեան Ն.**, Ս. Նշվ. աշխ., էջ 315): Հ. Աճառյանը, բարձր գնահատելով Յայոց քաղաքակրթական նշանակությունը երկրամասում, գրել է. «Աղուանից երկրին մեջ գտնուէին հայկական ծագում ունեցող ցեղեր... Ասոնք այնպէս ուժեղ էին և այնպէս հաստատուն կերպով տեղաւորուած երկրին մեջ, որ ոչ թէ միայն իրենց ինքնուրոյնութիւնը կորցրած չէին, այլ և ընդհակառակը, զանազան յաջող հանգամանքներու պատճառաւ... ազդեր էին երկրի վրայ...» (**Աճառյան Հ.**, Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 44): Շիրվանում հայ բնակչության՝ հնուց և վաղ միջնադարից եկող մշակութայնորտ գործունեության շարունակականության վերաբերյալ ուշազգրված դիտարկում է արել Լեոն՝ Նշելով, որ «Հայերը Շիրվանում բնակություն են հաստատել իստ հին ժամանակներից: Բացի դրանից, չը պետք է մոռանալ, որ Շիրվանը հին Աղուանից երկրի մի մասն է, իսկ Աղուանից երկիրը, երկար դարերի ընթացքում եղել է հայերի կուլտուրական եւ քաղաքական խիստ ազդեցութեան տակ» (**Լ [Լեոն]**, Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 7, № 28):

Երկրամասի Եթևոմշակութային պատմության մեջ հայոց Եթևոհոգևոր ու քաղաքակրթական ակունքների ու հայաբնակ գյուղերի մշակութային գործունեության անվիճելի վկայություններն են հայ ճարտարապետության հորինվածքներով կառուցված միջնադարյան բազմաթիվ եկեղեցիները, վանքերը (Քիչի Ս. Եղիշտ Առաքյալ, Ճալեթի Ս. Աստվածածին, Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա, Մեյսարիի Ս. Աստվածածին և այլն) և մատուռները, հնավայրերի հայերեն արձանագրված հարյուրավոր խաչքարերն ու տապանաքարերը, որոնցով հարուստ են Նիժ, Վարդաշեն, Ճալեթ, Ամուրավան, Գանձակ, Ղալակա, Վանք, Ռուշանաշեն, Հնդար, Սաղիան, Մատրասա և այլ գյուղերի գերեզմանատները (տե՛ս **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Երևան, 1997):

դրանք պայմանականորեն բաժանել ենք չորս հիմնական փուլի՝ սկսած XI դարից՝ ներառյալ վաչկատուն թյուրքայեզու մահմեդական եկվորների հիմքի վրա 1918 թ.-ին ստեղծված արհեստածին «Աղրբեջան» կազմավորման խորհրդային ժամանակաշրջանը՝ 1920-1990 թթ.:

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ (XI-XVIII ԴԴ.): Պատմական Առանի և Շիրվանի տարածքն ընդգրկող Արևելյան Այսրկովկասն իր աշխարհագրական դիրքով վաղ ժամանակներից եղել է տարբեր ժողովուրդների ու մշակույթների ակտիվ փոխազդեցության, հյուսիսից՝ ճորա կամ Դերբենդի լեռնանցքով պարբերաբար ասպատակող վաչկատուն խազարների, Արևելքի ու Արևմուտքի հզոր տերությունների՝ Պարթևական թագավորության և Յոնմեական կայսրության, Սասանյանների ու Բյուզանդիայի մրցակցության ու ռազմական բախումների թատերաբեմ մեծապես տուժելով ավերիչ պատերազմներից ու տիրապետություններից: Ինչպես իրավամբ գրում է Մակար եպս. Բարխուտարյանը. «Ոչ մի երկիր ենթակայ եղած չէ վերջին աստիճան ճնշման, սրածուրթեան, արիւնահեղութեան, սովի և գերեվարութեան, որքան Աղուանից երկիրն: Աղուանից երկիրն, լինելով հիւսիսից հարաւ և հարաւից հիւսիս անցուդարձ անելու միակ ճանապարհն կամ դուռնն, բազմիցս ոտնակոխ է լինում յաճախակի անցուդարձ անող բռնաւորների հրոսակներից մանաւանդ քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ»⁴:

Հայկական լեռնաշխարհից արևելք՝ Կուրի ծախափնյակի էթնոմշակութային պատկերում, դեռևս պարսկական (V-VI դդ.) տիրապետության, ապա արաբական արշավանքների ու նվաճումների շրջանում (VII-IX դդ.) սկսված մշակութային, քաղաքական ու էթնիկական փոփոխություններն ավելի մեծ ու լուրջ բնույթ ստացան XI-XVIII դդ. ընթացքում, երբ երկրամասը պարբերաբար հայտնվեց այլևայլ նվաճող, վաչկատուն ցեղերի ու պետությունների տիրապետության տակ⁵:

Այսպես՝ 1066 թ.-ին Ատրպատականից ելող սելջուկ-թյուրքերը Կարա-Տեկին ամիրայի առաջնորդությամբ արշավում են Շիրվան⁶: XI դ. 70-ական թվականներին Շիրվանի

Կուրի ծախափնյակում հայերեն խոսքն ամրապնդվում ու տարածվում էր նաև հայերեն գրով: Այս առումով պատմական բացառիկ արժեք ունեն նաև երկրամասի տասնյակ գրչօջախներում (Բաբու, Շամախի, Սաղիան, Մեյսարի, Ճալեթ, Մատրասա և այլն) XIV-XVIII դդ. ընթացքում ընդօրինակված հայերեն ձեռագիր բազմաթիվ մատյանները (Ավետարաններ, սաղմոսարաններ, քարոզգրքեր, ճաշոցներ, եկեղեցական-ծիսական այլ ժողովածուներ՝ մաշտոյներ, ժամագրքեր, խորհրդատետրեր և այլն) (տե՛ս **Եգանյան Օ.**, Մերոպ արքեպ. Սմբատյանի «Նկարագիր Շամախույ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 1970, № Ա, էջ 45-48, տե՛ս նաև **Խոյնի**՝ Աշխատութիւններ: Հրատարակութեան պատրաստեց՝ **Գ. Տեր-Վարդանեան**, Երևան, 2014, էջ 72-75): Երկրամասի գրչության կենտրոններում ոչ միայն ընդօրինակվել են մատյաններ, այլև գրատներում պահվել, կորստից փրկվել և մեզ են հասել այլ վայրերում (Սպահան, Թիֆլիս, Բաբերդ, Արցախ, Գողթան, Նոր Ջուղա, Սյունիք, Մոկս, Կաֆա և այլն) XIV-XIX դդ. ընդօրինակված, նվիրատվությունների կամ այլ ճանապարհներով ձեռք բերված մեծաքանակ արժեքավոր ձեռագրեր, որոնց մի մասն այժմ պահպանվում է Մաշտոցյան Մատենադարանում և Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի գրատանը (տե՛ս **Ստեփանյան Գ.**, Շամախու Հայոց թեմի գրչության այլ վայրերում գրչագրված եկեղեցապատկան և վանքապատկան մատյանները (XIV-XIX դդ.), «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2005, № ԺԲ, էջ 67-73):

⁴ **Բարխուտարեանց Մ.**, Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 88-89:

⁵ Տե՛ս Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. II, Երևան, 2016, էջ 489-513:

⁶ X դարից Կուրի ստորին հոսանքից մինչև Կասպից ծով և Ալաշերտի թերակղզուց հյուսիս-արևմուտք՝ ընդհուպ մինչև Դերբենդի ամիրայություն ընկած ողջ մերձկասպյան տարածքը Շամախի կենտրոնով սկզբնաղբյուրներում առավելապես հայտնի էր «Շիրուանայ երկիր» անունով, որի հիմքում ընկած էր վաղմիջնադարյան ճիղքի բուն-աղվանական թագավորությունը: Մ. Չամչյանն այդ մասին գրում է. «Աղուանից աշխարհ..., որ է ընդ մէջ Կուր գետոյ և Կասպից ծովու՝ մինչև ի Դարբանդ. և սա կոչի Աղուանք Շիրուանայ, կամ Շիրուան...» (**Միքայել Չամչյանց**, Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հ. Գ, Երևան, 1984, հավելված, էջ 131): «Շիրվան» երկրանվան

լեռնահովիտները ողողվեցին օղուզա-թյուրթալան քոչվոր ցեղերի կողմից⁷: Այդ ամենն ուղեկցվում էին անլուր ջարդերով, անասելի դաժանությամբ ու բռնությամբ, թալանով ու կողոպուտով: Սելջուկյան աշխարհակալ տերության թուլացմանը զուգընթաց՝ Կրաստանի թագավոր Դավիթ Դ Շինարար թագավորը, 1124 թ.-ին առանց նկատելի դիմադրության հանդիպելու, տերության կազմի մեջ մտցրեց նաև Շիրվանը⁸:

Շիրվանահայության համար դաժան փորձությունների ժամանակներ սկսվեցին մոնղոլ-թաթարական ավերիչ արշավանքների հետևանքով: 1222 թ.-ի սկզբներին մոնղոլական զորաբանակը, հյուսիս-արևելյան Հայաստանից շարժվելով Շիրվան, պաշարեց Շիրվանի երբեմնի մայրաքաղաք Շամախին⁹: Քաղաքի բնակիչները դիմում են ինքնապաշտպանության: Սակայն եռօրյա համառ մարտերից հետո մոնղոլները գրավում են քաղաքը և դաժան հաշվեհարդար տեսնում ազգաբնակչության հետ¹⁰: Հայ և օտար աղբյուրներն իրար լրացնող տեղեկություններ են հաղորդում մոնղոլական արշավանքների ու չարագործությունների մասին: Չորօրինակ՝ XIII դ. արաբ պատմիչ Իբն Ալ-Ասիրի վկայությամբ՝ «Բնակիչները հոգնած, ուժասպառ ու թուլացած էին, ուստի ընկճվեցին, իսկ թաթարները գրավեցին քաղաքը, շատերին կոտորեցին, ունեցվածքը կողոպտեցին և այլանդակություններ գործեցին»¹¹: Շիրվանահայության հետագա վիճակն էլ ավելի ծանրացավ մոնղոլ-թաթարների՝ ճարմաղանի (1236 թ.), ապա 1318-19 թթ.-ին Ոսկե Հորդայի իսկ Ուզբեկի արշավանքների ժամանակ¹²:

1387 թ.-ից Շիրվանը ենթարկվեց նաև Լանկ-Թամուրի ամայացնող արշավանքների¹³: Վերջինիս բանակները ավերեցին իրենց ճանապարհին ընկած քաղաքները, բերդերն ու եկեղեցիները: «Շրվանայ երկրի» Մատրասա հայկական գյուղում Թումա Թավրիզեցի գրչի 1403 թ.-ին ընդօրինակած «Մեկնութիւնք եւ քարոզք Մատթոսի վարդապետի, աշակերտի Գրիգորի Տաթևացւոյ» ձեռագրի հիշատակարանում Լանկ-Թեմուրի չարագործություններն մասին դառնությամբ արձանագրված է հետևյալը. «...ի նեղ և ի դառն և ի յանձկացեալ ժամանակիս, զի հենք և երկիւղ և սասանումն և դողումն թշուառականին և նեռին կարապետին՝ **Թամուրին**, որ թարթմանի **դա մուր**, զի ուր և հասանէ մթնատեսակ և մրրատեսակ առնէ, զոմն կողոպտելով, զոմն չարչարելով, զոմն սպանելով,

ստուգաբանման և հարակից հարցերի մանրամասն քննությունը տե՛ս **Минорский В.**, История Ширвана и Дербента X-XI вв., Москва, 1963, С. 85, 106-119; **Փափագյան Հ.**, Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Կրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (X դ.), «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1953, № 5, էջ 80, 86; **Акопян А. А.**, Албания-Алуанк, С. 90; **Դալալեան Տ.**, Շիրուան տեղանուն ստուգաբանութեան շուրջ, «Հայկագեան հայագիտական հանդես», Պեյրուբ, 2006, հ. Ի-2, էջ 17-28; **Հակոբյան Ար.**, «Շիրվան» երկրանվան ծագման հարցի շուրջ, «Մերձավոր Արևելք», հ. IV, Երևան, 2007, էջ 61-65:

⁷ Տե՛ս **Բռնազյան Ս.**, Հայաստանը և սելջուկները (XI-XII դդ.), Երևան, 1980, էջ 135, 175, 200:

⁸ Տե՛ս Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. II, էջ 319:

⁹ 1192 թ., Շամախիում տեղի ունեցած ահեղ երկրաշարժի պատճառով Շիրվանշահ Ախսիտան I-ը (մոտ 1160-1196/7 թթ.) մայրաքաղաքը ժամանակավորապես տեղափոխել է Բաթու (տե՛ս **Джидди Г.**, Средневековой город Шемаха (IX-XVII вв.): историко-археологическое исследование, Баку, 1981, С. 39-40):

¹⁰ Տե՛ս **Ալթունեան Գ.**, Մոնղոլները եւ նրանց արշաւանքները ԺԳ դարում, Վաղարշապատ, 1913, էջ 19, տե՛ս նաև **Ստեփանյան Հ.**, Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլների լծի դեմ, Երևան, 1990, էջ 41:

¹¹ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, արաբական աղբյուրներ, Բ, **Իբն Ալ-Ասիր**: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ **Ա. Տեր-Ղևոնդյանի**, Երևան, 1981, էջ 305:

¹² Տե՛ս Կրաց ժամանակագրություն (1207-1318): Թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Պ. Մուրադյանի**, Երևան, 1971, էջ 72:

¹³ Տե՛ս **Կիրակոսյան Գ.**, Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, Երևան, 1997, էջ 52:

գումն գերելով, զհայր ի յորդոյ բաժանելով և զորդի ի հօրե և այլն: Եւ ոմանք մագապուրծ լինելով ի յայրս և ի ծերպս և յամրոցս և ի դղեակս, և ոչ լինէին ազատեալք, զի ոմանք ի սովոյ մեռանէին և այլք ի տօթոյ և ի ծարաւոյ, կէսք ի յահե և յերկիւղէ զինքեանս քարավէժ առնէին, և այլ բազում չարիս...»¹⁴:

Լանկ-Թամուրի տիրապետությունը նվաճյալ երկրների համար ունեցավ ծանր ու աղետալի հետևանքներ: Ավերածություններից ու կոտորածներից զատ՝ Լանկ-Թամուրը Արևելյան Այսրկովկասի մի շարք գավառներում բնակեցրեց հուրասանից բերված թյուրքական ցեղեր՝ այս կերպ հետզհետե փոխակերպելով երկրամասի էթնիկ պատկերը¹⁵: Լանկ-Թամուրի մահից հետո (1405 թ.) Նրա որդի Շահռուխի և Իսթանդար կարա-կոյունլուի միջև իշխանության համար մղվող տևական բախումների ժամանակաշրջանում ամայացան բազմաթիվ գյուղեր, հրի ու սրի ճարակ դարձան հազարավոր բնակիչներ: Հերթական անգամ Իսթանդարը 1434 թ.-ին մեծ բանակով արշավելով Շիրվան՝ քարուքանդ է անում գյուղերն ու ավանները, բարբարոսաբար կտրել տալիս այգիները, անողորքաբար սրի քաշում ազգաբնակչությանը¹⁶:

Շիրվանը գերծ չմնաց Նաև Այսրկովկասում իրենց տիրապետությունը հաստատելու նպատակով XV դարի սկզբից կարա-կոյունլու և Նրանց ցեղակից ակ-կոյունլու թուրքմենական քոչվոր ցեղերի միջև սկսված հակամարտությունից ու արշավանքներից: Կարա-կոյունլուների առաջնորդ Կարա-Յուսուֆը 1411 թ.-ի աշնանը ավերում է Շամախին և Շիրվանի գյուղերը՝ անլուր զրկանքներ պատճառելով ազգաբնակչությանը¹⁷:

Քրիստոնյա, այդ թվում նաև հայ բնակչությունը մեծապես տուժեց Նաև XV դարի վերջին Արդաբիլի շեյխերի և Շամախիի Շիրվանշահերի միջև գերիշխանության համար տևական պայքարի ընթացքում: Պատերազմական գործողություններից ու արշավանքներից տուժեց հատկապես քրիստոնյա ազգաբնակչությունը, որի մեծ մասը սպանվեց, գերեվարվեց կամ դարձավ բնավեր: Պատմությունը բազում հիշատակություններ է թողել Արդաբիլի շեյխերի տրամադրության տակ գտնվող Սեֆյանների հիմնական հենարան դարձած թյուրքական քոչվոր ցեղերի՝ ղզբաշների¹⁸ Շիրվանում և հատկապես Շամախի քաղաքում գործած ոճրագործությունների մասին: Նկատենք, որ Նախքան ղզբաշների արշավանքները Շիրվան, Շամախի քաղաքն ուներ հոծ հայ բնակչություն: Այս առումով փաստագրական տեղեկություններ են արձանագրել եվրոպացի բազմաթիվ ճանապարհորդներ: Ինչպես, օրինակ, XV դարի երկրորդ կեսի իտալացի դիվանագետ, ճանապարհորդ ու վաճառական Ջոզեֆո Բարբարոն, որը 1471-1473 թթ.-ին եղել է Վենետիկի դեսպանը Պարսկաստանի այդ ժամանակվա տիրակալ ակ-կոյունլու Ուզուն-Յասանի արքունիքում, Վենետիկ վերադառնալու ճանապարհին Թավրիզից հետո լինելով նաև Շամախիում՝ հետևյալ տեղեկությունն է հայտնում. «Այս [Շամախի] շատ լավ քաղաք է, ունի չորս հազարից հինգ հազար տուն եւ շինում է մետաքս, կտավ և ուրիշ բաներ իրենց ե-

¹⁴ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Մասն առաջին (1401-1450 թթ.): Կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Երևան, 1955, էջ 31:

¹⁵ Տե՛ս **Սանանդյան Յ.**, Ձևական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ (XI դարից մինչև XV դարի սկիզբը), Երևան, 1952, էջ 347, 352:

¹⁶ Տե՛ս **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն: Աշխատասիրությամբ **Լ. Խաչիկյանի**, Երևան, 1999, էջ 100, տե՛ս նաև **Կիրակոսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 95:

¹⁷ Տե՛ս **Կիրակոսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 80-81:

¹⁸ XV դարում Սեֆյանների գլխավոր հենարան դարձած թյուրքական վաչկատուն ցեղերը, որոնց մի մասն ուներ բուն օղուզական ծագում, իսկ մյուսը մասը սերում էր միջինասիական թյուրքերից, XV դ. երկրորդ կեսին ստացան «ղզբաշներ» անունը (թյուրքերեն՝ «կարմրագլուխներ»), քանի որ այդ ռազմիկ քոչվորները որպես տարբերակչան սկսեցին կրել տասներկու ալ երիզներով չալվա: Հենց սրանք անունով Սեֆյանների պետությունը հաճախ անվանվում է «ղզբաշական» (տե՛ս **Петрушевский И.**, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Ленинград 1949, С. 18, տե՛ս նաև **Բայբուրդյան Վ.**, Իրանի պատմություն (ինագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005, էջ 296):

ղանակով: **Գտնվում է Մեծ Հայաստանում**¹⁹, և **բնակիչների մեծ մասը հայ են**» (ընդգծումը մերն է – Գ. Ս.)²⁰:

Այսպես, ղզլբաշները, շեյխ Յեյդարի գլխավորությամբ 1488 թ.-ին մտնելով Շիրվան, անողորբաբար, առանց սեռի ու տարիքի խտրության կոտորում են Շամախիի քրիստոնյա ազգաբնակչությանը, այդ թվում նաև՝ հայերին: Մշո Առաքելը վանքի ճառընտիրի հիշատակագրությունն այդ իրադարձության վերաբերյալ հետևյալ հաղորդումն է թողել. «Որ եւ ժողովեաց (շեյխ Յեյդարը – Գ. Ս.) յայսմ ամի արս իբրև ԽՌ. (40.000), եւ գնացեալ խաբեութեամբ եմուտ **ի Շամախի**, եւ զամենեսեան, որ ի ձեռն էած ի քրիստոնէից... զարս եւ զկանայս՝ սրով կոտորեաց, և զքաղաքն ամենայն հրով այրեաց...»²¹: Շեյխ Յեյդարի հրամանով գազանաբար սրի են քաշվում նաև մանկահասակ երեխաները՝ աննկարագրելի տանջանքով. «...և գմանր տղայքն ժողովեալ առ ինքն և դիգեալ ի վերայ միմեանց հինգ և վեց, և ինքն ի վերուստ նիզակաւ անցուցաներ մինչև ի ներքին տղայն. և վերացուցեալ նիզակաւն կանգներ, և տղայքն աղիողորմն թալկանային ոտիւք և ձեռօք ի ծայրս նիզակացն...»²²:

Յեյդարի գազանությունները շարունակում է որդին՝ շեյխ Իսմայիլը, որը 1501 թ.-ին 7000-անոց բանակով գրավում է Շամախին ու Բաքուն²³: Շիրվանում գործած նրա հրեշափոր ոճիրների մասին, որ տեղ է գտել մի Հայսամավորքում, ասվում է. «...և եկեալ յանկարծակի, մտեալ ի մեջ Շարունայ տանս... և բազում քրիստոնայք յանկան ի ձեռն անաւրիսին և մաշեցան ի սուր սուսերի, և դիակունք ի յերկիր անկան և կերակուր եղան թռչնոց և գազանաց...»²⁴: Այս առումով նկատենք, որ Լեոյի տված մի տեղեկության համաձայն, որ վերաբերում է XVI դարի սկզբին, այդ դաժան ու արյունալի իրադարձությունների շրջանում Շամախիի շրջակայքում Շիրվանի սահմաններում կային 60 հայաբնակ գյուղեր²⁵:

Շարունակվող թուրք-պարսկական պատերազմների ընթացքում Պարսկաստանի շահ Թահմասպը 1538 թ.-ին գրավեց Շիրվանը, իսկ 1551 թ.-ին՝ Շաքին (Նուխի)²⁶:

Այսպիսով՝ մահմեդական վերաբնակիչների, մասնավորապես օղուզ-թյուրքական և թուրքմենական քոչվոր ցեղերի հայտնվելուն զուգընթաց՝ հետզհետե փոխվեց Բուն Աղվանքի և մերձկասպյան մարզերի՝ առանց այն էլ ոչ միատարր էթնիկական կազմ²⁷: Նկատենք սակայն, որ էթնիկական բարդ խճանկար ունեցող Արևելյան Այսրկովկասում

¹⁹ Կասկածից վեր է, որ Շամախին գտնվում է Կուրի միջին հոսանքի ձախափնյակում և, բնականաբար, չէր կարող լինել Մեծ Հայքի սահմաններում: Ենթադրելի է, որ Չ. Բարբարոյին շփոթեցրել է Շամախի քաղաքում ստվար հայության առկայությունը, ուստի և քաղաքը ներկայացրել է Մեծ Հայքում: Ի դեպ, նշենք, որ Չ. Բարբարոյի տեքստի այդ հատվածը արդրեջանական կեղծարար «պատմաբանները» միտումնավոր կերպով դուրս են թողել «Исторический очерк о Азербайджане. Под ред. Э. Шахмалиева, т. I, сост. З. Ямпольский, Баку, 1961, С. 74» գրքից:

²⁰ **Հակոբյան Ջ.**, Ուղեգրություններ: Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, հ. Ա, ԺԳ-ԺԶ դդ., Երևան, 1932, էջ 199:

²¹ **Սարգիսեան Բ.**, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 1159-1160, տե՛ս նաև Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Մասն երրորդ (1481-1500 թթ.): Կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Երևան, 1967, էջ 107:

²² Նույն տեղում:

²³ Տե՛ս Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. I: Կազմեց՝ **Վ. Հակոբյան**, Երևան, 1951, էջ 144, տե՛ս նաև **Լեո**, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Ա, Երևան, 1969, էջ 170:

²⁴ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Մասն երկրորդ (1451-1480 թթ.): Կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Երևան, 1958, էջ LII:

²⁵ Տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Ա, էջ 169:

²⁶ Տե՛ս Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. II, էջ 76:

²⁷ Տե՛ս **Խառատեան Ջ.**, «Աղբրեջանցիները», «կովկասալեզուները» եւ «իրանալեզուները». ինքնութեան զարգացումներն Աղբրեջանում, «Ջանդեա ամսօրեայ», Վիեննա-Երեւան, 2012, հիշատարի, էջ 273:

զգալիորեն առկա էր էթնիկ լայն ներկայությամբ ու քաղաքական իշխանությամբ օժտված իրանական շերտը: Վերջինս մեծ դեր ունեցավ Արևելյան Այսրկովկասի էթնոմշակութային ու էթնոգրավանական զարգացումներում, որն ընդհուպ մինչև XV-XVI դդ. արտահայտվեց իրանական մշակույթի, մասնավորապես պարսկերենի (միջին պարսկերենի կամ պահլավերենի, հետագայում նաև նոր պարսկերենի) տարածմամբ²⁸: «Ըստ էության,- գրում է ազգագրագետ, պ.գ.թ. Արսեն Յակոբյանը,- 5-6-րդ-16-րդ դդ. Արևելյան Այսրկովկասում, չնայած տարաբնույթ քաղաքական, դավանական փոփոխություններին, գերակայում էր իրանական ազդեցությունը: Երկրամասը կառավարում էր և սոցիալական վերնախավը կազմում էր իրանական տարրը, գոյություն ուներ նաև էթնիկական իրանական հոծ զանգված»²⁹:

Տեղին նշենք, որ թեև պարբերաբար կրկնվող արշավանքներից զգալիորեն կրճատվել էր հայ բնակչության թիվը, այսուհանդերձ Շամախի քաղաքի օրինակով փաստվում է, որ հայերը Շիրվանում տակավին կազմում էին ազգաբնակչության զգալի հատվածը: Այս առումով ուշադրության արժանի են նշանավոր ճանապարհորդ ու վաճառական Անթոնի Ձենկինսոնի՝ Շամախիում 1563 թ.-ի ապրիլի 10-ին կատարած գրառումներից հայերին վերաբերող տեղեկությունները: Ըստ նրա՝ «...այս քաղաքը ծովից ուղտով յոթը օրվան ճանապարհի հեռու է, բայց հիմա շատ ավերակ է, բնակված գլխավորապես հայերից... (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»³⁰:

XVI-XVII դդ. Շիրվանը գտնվել է մերթ Սեֆյան Պարսկաստանի, մերթ Օսմանյան կայսրության տիրապետության ներքո³¹: Երկրամասի նվաճման համար երեք տասնամյակ տևած թուրք-պարսկական տևական արյունահեղ պատերազմները քրիստոնյա ազգաբնակչության, այդ թվում նաև՝ հայերի համար մեծ փորձությունների, աննկարագրելի կոտորածների, կոտորածների, կրոնական ու տնտեսական հալածանքների ու գերեվարության մի սոսկալի ժամանակաշրջան էին: Ընդամին, մարտնչող կողմերը ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած վայրերի ազգաբնակչությանը ենթարկում էին զանգվածային տեղահանության: Ամասիայում 1555 թ.-ի մայիսի 29-ին կնքված հաշտության պայմանագիրը, որը ավարտին հասցրեց թուրք-պարսկական պատերազմների առաջին փուլը, դեռևս չէր նշանակում հարատև խաղաղություն արևելյան երկու պետությունների միջև: Օսմանյան կայսրությունը ակնհայտորեն ձգտում էր ներթափանցել Կենտրոնական Ասիա: Ինչպես նշում է թուրք ժամանակակից պատմաբան Ի. Յ. Դանիշմենդը. «...դուրս գալով Կասպիական (Խազարական) ծով՝ թուրք նվաճողները հնարավորություն կունենային անմիջական շփման մեջ մտնել միջինասիական թուրքերի հետ...»³²:

Պատերազմական գործողությունները վերսկսվեցին 1578 թ.-ին: Խախտելով Ամասիայի պայմանագիրը՝ օսմանյան 100.000-անոց բանակը Մուստաֆա Լալա փաշայի գլխավորությամբ ներխուժեց Արևելյան Յայաստան՝ հասնելով մինչև «ի Շրուան և մինչ ի

²⁸ Տե՛ս **Минорский В.**, նշվ. աշխ., С. 30-35, տե՛ս նաև **Սարգսյան Յ.**, Յայաստան, Իրան, Կովկաս (տարածաշրջանային խնդիրներ), «Գիտության գլոբուս», Երևան, 2001, № 1, էջ 65-66, տե՛ս նաև **Յակոբյան Ար.**, Արևելյան Այսրկովկասում հայկական և իրանական էթնոմշակութային ներդրումների շուրջ (մի խմբի ձևավորման օրինակով), «Մերձավոր Արևելք», հ. Ա, Երևան, 2002, էջ 26-31:

²⁹ **Յակոբյան Ա.**, Արևելյան Այսրկովկասում..., էջ 30:

³⁰ **Յակոբյան Յ.**, Ուղեգրություններ, էջ 372:

³¹ Մանրամասն տե՛ս **Նաջարյան Յ.**, Թուրք-իրանական հարաբերությունները XVI դ. ու XVII դ. առաջին կեսին և Յայաստանը, Երևան, 1961; Յայաստանի հարակից երկրների պատմություն, հ. II, էջ 513-516:

³² Տե՛ս **Չուլայան Մ.**, Թուրք-պարսկական պատերազմները Յայաստանի տերիտորիայի վրա և նրանց հետևանքները (1555-1595), «Տեղեկագիր», 1961, № 3, էջ 45:

թագաւորական մեծ քաղաքն Տփղիս»³³: Մուստաֆա Լալա փաշան, Չըլըըր լճի մոտ 1578 թ.-ի օգոստոսի 9-ին հաղթանակ տանելով պարսիկների նկատմամբ, օգոստոսի 24-ին գրավում է Թիֆլիսը, այնուհետև առանց լուրջ ընդհարումների տիրում պարսկական ռազմակալման ենթարկված Շամախիի, Արեշի, Բաքվի և այլ բերդերին, ինչպես նաև գրավում Շիրվանի մյուս քաղաքները³⁴:

Չըլըըրի ճակատամարտից հետո օսմանյան մեկ ուրիշ բանակ արյունարբու գորավար Ուզդեմիր Օսման փաշայի գլխավորությամբ ասպատակում է Շիրվանը³⁵: Թուրքական զորքերը մեծ ավերածություններ գործեցին Շիրվանում: Օսմանցի նվաճողները էթնիկ գտումների, բռնագաղթերի, գերեվարումների և ջարդերի ճանապարհով երկրամասի մի զգալի տարածքում Շաքի-Շիրվան գոտում, տեղահանեցին ազգաբնակչությանը: Այդ չարաբաստիկ իրադարձությունները ոչ միայն մարդկային մեծ զոհեր պատճառեցին, այլև գրեթե ավերակների վերածեցին երբեմնի շեն ու ծաղկուն բնակավայրերը: Համընդհանուր թոհուրեհի մեջ անողոք դաժանությամբ տեղահանվեցին ու գերեվարվեցին նաև հայերը, որոնց թվում ծերեր ու փոքրահասակ երեխաներ: Ընդհանրապես հիշյալ պատմական ժամանակաշրջանում հայ բնակչության զանգվածային բռնագաղթերի ու գերեվարումների մասին քանիցս հիշատակվում են 1580-ական թվականների ձեռագիր մի շարք հիշատակարաններում: Այդ տեղեկությունները շատ հաճախ տրված են այնպիսի մանրամասներով, երբեմն այնպիսի մանրունքներով, որ թվում է, թե հեղինակն իր նկարագրած դեպքերին ոչ միայն ժամանակակից է, այլև ականատես: Ինչպես, օրինակ, Արճեշում գրիչ Չաքարիա սարկավագի գրչագրած «Աւետարան»-ի³⁶ հիշատակարանում Առաքել գրիչը 1584 թ.-ին որոշակի տեղեկություններ է հաղորդում օսմանյան բանակի կողմից Շիրվանը գրավելու տարում (1578 թ.) անօրինակ դաժան եղանակներով հայ գերեվարվածների զգալի թվի մասին: Հիշատակարանում կարդում ենք. «Չի արդ ես անկեալ հող անկար և անկարե, որ և բարթամ մեղաբ և յունայն բարո չեմ արժան. Առաքելս վշտտահացա և առի սուրբ Աւետարանս կապելը, որ եւթն ամ էր սասանում եղաւ յաշխարհիս վասն ծովացեալ մեղաց իմոց...: Մտաւ ի տամուրդաբն և ելաւ զթաթարն ի ալ պաւզեա, անց զծովս և հասեալ ի մոտս Շարվանս և գերեաց զազգս<ս> Հակագանց եւթանասուն ԲԲ (72.000) գերի տարան այր ու կին, ծեր եւ տղա, եւ այլ թինն միայն Հայրն գիտի...»³⁷: Այս տողերից կարելի է եզրակացնել, որ գերիների ու զոհվածների թիվը նշվածից ավելի մեծ է եղել: Գերեվարվածներից շատերը, հատկապես ծերերն ու մանկահասակ երեխաները ոչնչացան ճանապարհներին:

Ուզդեմիր Օսման փաշայի ասպատակությունները Շիրվանում կրկնվեցին նաև 1580 թ.-ի ամռանը³⁸: Ի դեպ, նշենք, որ թուրքական արշավանքներին մասնակցում էր

³³ Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. II: Կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 241-242, 252:

³⁴ Տե՛ս Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. I: Կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 145, տե՛ս նաև Փափագյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺՁ դ.), «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1973, № 6, էջ 31

³⁵ Տե՛ս Չուկայան Մ., նշվ. աշխ., էջ 47, տե՛ս նաև Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. II, էջ 107:

³⁶ Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ: Կազմողներ՝ Օ. Եգանյան, Ա. Չեթունյան, Փ. Անթրայան, Երևան, 1970, էջ 602:

³⁷ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան, ձեռ. Հ⁴⁹ 7745, էջ 248բ-249ա: Հմտ.Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 253: Ի դեպ, նշենք, որ «Մանր ժամանակագրություններ»-ում նշված է ձեռագրի հին համարը (9323):

³⁸ Տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 252, տե՛ս նաև Չուկայան Մ., նշվ. աշխ., էջ 47:

ևս Ծրվանից կայսրությունից կախում ունեցող Ղրիմի խանը³⁹, որը Շիրվանից մեծաթիվ գերի է տանում իր հետ, որոնց թվում և՛ շատ հայերի⁴⁰: Այսպիսով՝ չընդհատվող պատերազմական գործողությունները, ասպատակությունները և որպես դրանց անմիջական հետևանք՝ բռնագաղթերն ու գերեվարումները կործանիչ ազդեցություն ունեցան երկրամասի համար: Թե ինչպիսի ծանր հարված էր հասցված շիրվանահայությանը նվաճողների բարբարոսական քաղաքականության հետևանքով, վառ ու կենդանի լեզվով նկարագրված է Կարևո գավառի Սալածոր գյուղում 1586 թ.-ին Առաքել սարկավագի ընդօրինակած «Աւետարան»-ի հիշատակարանում: Շիրվանում գործած սոսկայի ոճի ռեզնի և գանգվածային տեղահանության ու գերեվարության մասին ասված է. «Ետոյ ելաւ Խան թաթար (իմա՛ Սուլիմեդ-Գիրեյ II-ը – Գ. Ս.) յերկրէն Քաֆայու (այժմ՝ Թեոդոսիա – Գ. Ս.) և անցաւ ի լեռնս Ալքըղայ (?)»⁴¹, և մտաւ երկիրն Շարվանայ, շատ աւեր Էած, գերեաց **զագգքս Զայկազանց** (ընդգծումը մերն է – Գ. Ս.), քակեցին ծառն ապրիշումի⁴²: Յետո թիւ եղաւ ԵԿԻ. (160.000) գերինք ին տարել՝ ծովն Քաֆայու վերայ տարան, ի Մար (իմա՛ Եգիպտոս – Գ. Ս.) վաճառէին՝ հաւու պէս՝ այր ու կին, ծեր ու տղայքն ի ձեռն այլագգի»⁴³: Եվ այսպես տասնյակ վկայություններ:

Ի հավելումս այս ամենի՝ աղետների, արշավանքների և դրանց հետ կապված կողոպուտների հետևանքով 1579-1580 թթ.-ին սկսեցին մոլեգնել սոսկայի սովն ու համաճարակները: Անողորմ էր հատկապես պարբերաբար կրկնվող «մահտարածամը» (ժանտախտը կամ խոլերան), որին զոհ գնացին մեծ թվով մարդիկ: Ձեռագիր հիշատակարաններում բավական տեղեկություններ են պահպանվել Շիրվանում տարածված համաճարակների մասին: Զովհանիսիկ Ծարեցին «ժամանակագրության» (XVI դ.) մեջ արձանագրել է 1579 թ.-ին մոլեգնած համաճարակի փաստը. «Իսկ ի թվականս ՌԻԸ (1579) եղև սաստիկ և մեծ տարածամ մահ ի Յատրպատական և ամենայն Յաղանից և կոտորեր զբազումս ի յամենայն ազգեաց, մինչ բազում տունք անտերունջք և բազում հայրք և մայրք անզաւակ մնացին»⁴⁴:

Այստեղ նշենք, որ 1578-1588 թթ.-ի պատերազմների ընթացքում, երբ Օսմանյան կայսրությունը Պարսկաստանից խլեց Շիրվանը, օսմանցիների սահմանած ծանր հարկապահանջության, հալածանքների, սոցիալական, ազգային ճնշման ու հարստահարությունների հետևանքով շատ հայերի ստիպել է լքել հայրենիքը և տեղափոխվել Պարսկաստան⁴⁵: Զ. Առաքելյանը իրանահայերի պատմությանը նվիրված աշխատությունում հարկադրված այդպիսի գաղթի մասին գրում է. «...Ուտեացուց աշխարհից, Շամախու եւ Գանձակի կողմերից բազմաթիւ հայեր գաղթեցին Պարսկաստան: Դրանք բոլորը գնացին Ասպահան քաղաքը, որտեղ Շահաբբաս բնակեցրեց նրանց: Այդ եղաւ 1586 թուին»⁴⁶:

³⁹ Տե՛ս **Զովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, Երևան, 1959, էջ 62, տե՛ս նաև **Չուկայան Ս.**, նշվ. աշխ., էջ 47:

⁴⁰ Տե՛ս **Չուկայան Ս.**, նշվ. աշխ., էջ 47:

⁴¹ Զարգայանը Բ. Սարգիսյանինն է: Զայր Ղևոնդ Ալիշանը նշում է *Ալյաղղայ* ձևով: Ըստ նրա՝ խոսքն այստեղ մեծ Կովկաս լեռնահամակարգի ամենաբարձր լեռնազանգվածի՝ Էլբրուսի մասին է (տե՛ս **Ալիշան Ղ.**, Զայապատում, Վենետիկ, 1901, էջ 599):

⁴² Մետաքսի:

⁴³ **Սարգիսեան Բ.**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, Վենետիկ, 1914, էջ 667: Զմտ. **Ալիշան Ղ.**, Զայապատում, էջ 598: **Զովհաննիսյան Ա.**, Դրվագներ, հ. Բ, էջ 63:

⁴⁴ Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 242:

⁴⁵ Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 17:

⁴⁶ **Առաքելեան Զ.**, Պարսկաստանի հայերը (սրանց անցեալը, ներկան եւ ապագան): Մասն Ա, Վիեննա, 1911, էջ 42:

Պարսկաստանում գահ բարձրացած Շահ Աբբաս I-ը (1587-1629 թթ.), ռազմական գործողություններ ծավալելով Օսմանյան կայսրության դեմ, 1605 թ.-ին գրավում է Շիրվանը, 1607 թ.-ին՝ Շամախին⁴⁷: Հարկ է կշռել, որ հաճախակի կրկնվող թուրք-պարսկական պատերազմների հետևանքով, երբ քաղաքական անապահովությունից դրոպած՝ Շիրվանից ու Արցախի հայաշխարհից որոշ թվով հայեր ինքնակամ տեղափոխվել էին Արևելյան Կրաստան՝ Կախեթ, Շահ Աբբաս I-ի արձակած հատուկ հրամանով նրանց թույլատրվեց գաղթել Պարսկաստան և հաստատվել Մազանդարանում, ինչը տեղի ունեցավ 1614-1615 թթ.-ին⁴⁸: Թուրք-պարսկական պատերազմներն ավարտվեցին 1639 թ.-ի մայիսի 17-ին Կասրե-Շիրինի կամ Չոհաբի պայմանագրով, որով Այսրկովկասն ու Ատրպատականը մնացին Սեֆյան Պարսկաստանին⁴⁹:

Պարսկական տիրապետության շրջանում (XVI-XVIII դդ.) Շիրվանի հայ բնակչությունը ենթարկվեց ոչ միայն տնտեսական, սոցիալական ու հարկային ճնշման, այլև ազգային ու կրոնական հալածանքների: Բապտիստ միսիոներ, Հիսուսյան միաբանության անդամ Յոհան Լամացը, անդրադառնալով շամախահայությանը պարտադրվող տուրքերին, Շամախիից Մոսկվայի իր հավատակից՝ Ֆրանցիսկ Եմիլիանիին 1702 թ.-ի մայիսի 18-ին հասցեագրած նամակում գրում է. «Վերջին ամսվա ընթացքում մեզ մոտ այստեղ տեղի էր ունենում բավականին ուժեղ երկրաշարժ, որը յուրաքանչյուր գիշեր երեք-չորս անգամ ցնցում էր տները: Քանի որ հայերն այդ կապակցությամբ հանդիսավոր կերպով բարձրացել էին սարի գագաթը, որպեսզի քաղաքն (Շամախին - Գ. Ս.)⁵⁰ աղետից ազատելու համար աղոթեն Աստծուն, հարկադրված եղան դրա համար մոտ 200 թուման տուրքանք վճարել»⁵¹: Յ. Լամացը, Ֆ. Եմիլիանիին 1702 թ.-ի սեպտեմբերի 1-ին ուղարկած մեկ այլ նամակում դարձյալ անդրադառնալով Շիրվանում հայերի իրավական վիճակին, պարսից իշխողների դաժան ճնշումներին և հարկահանների տնտեսական հարկադրանքներին, գրում է. «...Շամախիում հայերին կործանելու զարմանալի միջոցների են դիմում նրանք: Անհիմն տանջանքներ են բարդում նրանց վրա, իսկ գյուղացիներն այն աստիճանի են ճնշված, որ գրեթե բոլորն էլ մտածում են իրենց երկրից հեռանալու մասին և եթե ունենային ապահով ապաստան, այստեղ չէր մնա ոչ ոք»⁵²:

Ասվածին անմիջականորեն առնչվում են Պետրոս Ա-ի կողմից հետախուզական նպատակով Պարսկաստան ուղևորվելու ճանապարհին 1716 թ.-ի սեպտեմբեր-դեկտեմբերին Շամախիում հանգրվանած դեսպան Արտեմի Վոլինսկու լայն իրազեկությամբ առանձնացող փաստագրական հագեցած տվյալները, որոնք հավաստում է նաև Յ. Լամացի վերոհիշյալ տեղեկությունները: Մասնավորապես Ա. Վոլինսկին իր տեղեկագրում վկայություն է թողել տեղի խոսքով խանի հրամանով մեծմանդար Ալլա Կուլի-բեկի կողմից Շամախիի գավառի Զարխան (Զալախան՝ - Գ. Ս.) հայկական գյուղի բնակիչներին դա-

⁴⁷ Տե՛ս Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. I, էջ 145, տե՛ս նաև **Петрушевский И.**, նշվ. աշխ., Շ. 55, 82.

⁴⁸ Տե՛ս Նույն տեղում, Շ. 252-253.

⁴⁹ Տե՛ս **Նաջարյան Հ.**, նշվ. աշխ., էջ 263-264:

⁵⁰ Շամախիի XVII դարավերջի ազգաբնակչության թվաքանակի, էթնիկական և դավանական կազմի վերաբերյալ ուշագրավ հիշատակություն է թողել 1686 թ.-ին այդտեղ այցելած ֆրանսիացի Հիսուսյան քարոզիչ Ֆիլիպ Ավրիլը: Ըստ նրա՝ մոտ 50-60-հազարանոց բնակչություն ունեցող Շամախիում «Բացի հայերի մեծ թվից, որ կարելի է հասցնել 30.000-ի, կան նաև հնդիկներ, մոսկովիտներ, վրացիներ, յոյներ, թուրքեր, չերքեզներ եւ բազմաթիւ այլ ժողովուրդներ...» (**Philippe Avril**, *Voyage en divers etats d'Europe et d'Asie*. Paris, 1962, p. 114, տե՛ս նաև **Թաջիրյան Է.**, Կոռնելի լը Բրյուկնի «Ուղեգրությունը» որպես աղբյուր հայ գաղթօջախների պատմության, «Իրան-Նամե», Երևան, 1993, սեպտեմբեր, № 4, էջ 21):

⁵¹ Письма и донесения иезуитовъ о России конца XVII и начала XVIII века, СПб., 1904, Շ. 104, տե՛ս նաև **Հովհաննիսյան Աշ.**, Դրվագներ, հ. Բ, էջ 542:

⁵² Письма и донесения иезуитовъ о России, Շ. 107, տե՛ս նաև **Հովհաննիսյան Աշ.**, Դրվագներ, հ. Բ, էջ 543:

ժան ծեծի ենթարկելու մասին⁵³: Ուշադրություն են գրավում նաև Ա. Վոլինսկիի՝ Շիրվանի խանությունում տեղական բեկլարբեկին ենթարկված քաղաքների՝ Աղդաշի, Շամախի, Բաբլի, Ղուբայի և Դերբենդի նկարագրություններն ու տեղի հայերի իրավական վիճակի մասին տեղեկությունները: «Թեպետ մահմեդականները,- գրում է Ա. Վոլինսկին,- նրանց (իմա՝ հայերին – Գ. Ս.) կրոնին մեծ խոչընդոտներ չեն ստեղծում, այնուամենայնիվ, այդ քրիստոնյաները մեծ հարկերի ու տուրքերի հետևանքով նեղվում են նրանց կողմից և այդ պատճառով շատերը ստիպված են մահմեդական կրոն ընդունել կամովին»⁵⁴:

XVIII դարը երկրամասի հայ ազգաբնակչության համար մեծ փորձությունների, էթնիկ ինքնությունը պահպանելու երկարատև ու համառ պայքարի ժամանակաշրջան էր: Դարի առաջին տասնամյակների ընթացքում Շիրվանը մեծապես տուժեց հյուսիսկովկասյան լեռնականների՝ սուննի լեզգիների կրկնվող ասպատակություններից ու արշավանքներից, որոնք ուղեկցվում էին հազարավոր մարդկանց գերեվարումով: Այդ արշավանքները դեպի Պարսկաստանին ենթակա տարածքներ հրահրվում էին Օսմանյան պետության կողմից⁵⁵, որը Այսրկովկասում իր տնտեսական ու քաղաքական գերիշխանությունը հաստատելու հեռահար նպատակով լեզգիների միջոցով ձգտեց թուլացնել Պարսկաստանի ու Ռուսաստանի ազդեցությունը երկրամասում⁵⁶:

Լեզգիների՝ իրար հաջորդող արշավանքները գլխավորում էին Սուրխայը, Շամխալը, Իսմիլը, Ալի Սուլթանը և Յաջի Դավուդը, որոնց՝ 1712, 1716, 1720, 1721 թվականներին Շիրվանի հայաբնակ գյուղերում ձեռնարկված ավերիչ արշավանքների հետևանքով հրո ճարակի մատուցեցին և հիմնահատակ ավերվեցին բազմաթիվ գյուղեր, կոտորվեցին, կողոպտվեցին ու գերեվարվեցին անպաշտպան վիճակում հայտնված բազմաթիվ բնակիչներ⁵⁷: Սուննի լեզգիներն իսկական պատուհաս դարձան Շիրվանի համար և գործիք՝ օսմանների ձեռքին:

Այդ ասպատակությունների հետևանքով Շաքի-Շիրվան գոտում տեղաբնիկ հայերի և Բուն Աղվանքի հնագույն՝ լեզգիական խմբի լեզուներով խոսող ժողովուրդներից մեկի՝ քրիստոնեությունը դավանած ուղիների բնակավայրերից շատերը դարձան սակավամարդ կամ ամբողջովին դատարկվեցին: Չորսրինակ՝ լեզգիների 1712 թ. արշավանքից հատկապես տուժեց Արեշ գավառի հայկական հնագույն գյուղերից Զանդակը,

⁵³ Տե՛ս **Бушев П.**, Посольство Артемия Вольнского в Иран в 1715-1718 гг. (по русским архивам), Москва, 1978, С. 72.

⁵⁴ **Չովհաննիսյան Ա.**, Դրվագներ, հ. Բ, էջ 543:

⁵⁵ Ի դեպ, նշենք, որ իսլամի ձևավորման ժամանակից սկսած քաղաքական ղեկավարության խնդիրը սուր կերպով կանգնած է մահմեդական հասարակական-քաղաքական օրակարգում: Արևելյան Այսրկովկասի պարագայում սուննիների ու շիաների միջև կրոնական ու քաղաքական տարածայնությունները դրսևորվել են տակավին XVI դարից սկսած: Շիաներն ավելի կողմորոշված էին իրանական մշակույթի կողմը և գերադասում էին պարսկերեն գրական լեզուն, իսկ սուննիներն ավելի հակված էին սուննիական Օսմանյան պետության և թուրքերենի կողմը (տե՛ս **Խառատյան Յ.**, Հայատեացուքիւնը որպէս թուրքական ինքնութեան կառուցման գործօս: Գաւառահայերը Թուրքիայի Հանրապետութիւնում 20-րդ դարի միջնադարում, Երևան, 2018, էջ 487-494): Սուննի և շիա մահմեդականների միջև իշխանության առաջնության և սոցիալական գերակա դիրքի հակադրության պայքարը սուր բնույթ ընդունեց հատկապես XVIII դարի սկզբներին:

⁵⁶ Տե՛ս **Лыццов В.**, Персидский поход Петра I. 1722-1723, Москва, 1951, С. 130, տե՛ս նաև **Հայ ժողովրդի պատմություն**, հ. IV, ՅՍՄՐ ԳԱ հրատ., Երևան, 1972, էջ 146, տե՛ս նաև **Очерки истории Дагестана: отв. ред. М. О. Косвен**, т. I, Махачкала, 1957, С. 161, տե՛ս նաև **Հակոբյան Ա.**, Հարավարևելյան Կովկասի դերը միջազգային հարաբերություններում 18-րդ դ. 1-ին քառորդում, «Տարածաշրջանային խնդիրներ», Երևան, 2014, № 4, էջ 99-101:

⁵⁷ **Եսայի Հասան-Ջալալեանց**, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Յերուսաղէմ, 1868, էջ 23, 30-31:

որը նախքան այդ ուներ 500 տուն հայ բնակչություն⁵⁸: Եսայի Հասան-Ջալալյանցի վկայությամբ՝ «Այժմն եկեալ (լեզգիները - Գ. Ս.) ի Զանտաք անուն գիւղօրայս՝ իսպառ տարան»⁵⁹: Դավանական հողի վրա հայ բնակչության նկատմամբ լեզգիների՝ 1721 թ.-ին իրագործած կոտորածի պերճախոս վկայությունն է XVIII դ. առաջին կեսի հասարակական ու գրական գործիչ Եղիա Մուշեղյան Կարնեցու «Պատմութիւն իմն կարճաժօտ ի վերայ անձկութեանց...» ինքնակենսագրական բնույթի երկում հիշատակված հետևյալ տեղեկությունը. «Ընդէ՞ր յորժամ, որ Սուրխայն լազկոց տիրեց Շամախու, 75 հոգի ի հայոց սպաննեց, վասն քրիստոնեականի հաւատոյ»⁶⁰:

Պարսկական պետության թուլացումը նպաստավոր պայմաններ ստեղծեց Ռուսաստանի և Օսմանյան պետության համար՝ Այսրկովկասի ու Պարսկաստանի արևմտյան սահմաններին տիրանալու համար: Կայսր Պետրոս Ա-ն Հյուսիսային պատերազմի ավարտից հետո՝ 1722 թ.-ի գարնանը, ձեռնամուխ եղավ Կասպից ծովի արևմտյան երկրամասերի գրավմանը: Կասպիական արշավանքի ընթացքում թեև ռուսները 1722 թ.-ի օգոստոսին գրավեցին Դերբենդը, սակայն արշավանքի անակնկալ դադարեցման և Պետրոս Ա-ի՝ Պետերբուրգ մեկնելու պատճառով հետաձգվում է Շամախու և Բաքվի գրավումը: Վերջինս գրավվեց 1723 թ.-ի հուլիսի 26-ին՝ Կասպյան երկրորդ արշավանքի ժամանակ⁶¹: Ռուսաստանի ներկայությունը տարածաշրջանում խիստ անհանգստացրեց Օսմանյան կայսրությանը⁶², որը դարձյալ Դաղստանի սուննի լեզգիների միջոցով փորձեց հակազդել Ռուսաստանի հիմնավորմանը երկրամասում:

Քրիստոնյաններին կոտորելու և կողոպտելու նպատակով լեզգիները 1724 թ.-ի երկրորդ կեսին հերթական անգամ ասպատակության ենթարկեցին Շամախիի, Շաքիի և Ղուբայի գավառների հայաշատ բնակավայրերը: Լեռնի բնորոշմամբ՝ «Այս մի սարսափելի աղետ էր ամբողջ հայ ազգաբնակչության համար, որ ապրում էր Կովկասյան լեռնաշղթայի հարավային ստորոտներում՝ մինչև Կուր գետը և արևելյան ստորոտներում՝ մինչև Կասպից ծովը»⁶³: Այդ ավերիչ արշավանքի մասին ուշագրավ վկայություն է թողել Մեյսարիի վանքի վանահայր Մարտիրոս եպս. Մեսիրյանը՝ Աստրախանում գտնվող Կրաստանի Վախթանգ Գ թագավորին օգնության հասնելու նպատակով 1725 թ. փետրվարի 5-ին դիմած նամակ-խնդրագրում. «...Վա՛յ մեզ, վա՛յ մեր Հայոց գլխին, որ վասն մեր մեղաց Աստուած բարկացել է մեզ վերայ որ փուչանանք. առաջ Շամախին Ղասանին ժողօւրդ չափմիշ⁶⁴ արարին. Ղափալաւ ԼԷ (37) գեղ չափմիշ արարին. Ղարասովի գեղերանք թուրքացրին. Շաքուայ երկրի գեղերանք ևս թուրքացրին...»⁶⁵:

Լեզգիներն իրենց ասպատակությունների ընթացքում ավերակ դարձրին շեն ու ծաղկուն հայկական գյուղերը, կողոպուտի ենթարկեցին անպաշտպան մնացած հայ և

⁵⁸ Տե՛ս **Ջալալեանց Ս.**, Գանապահորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, Բ մաս, էջ 383:

⁵⁹ **Եսայի Հասան-Ջալալեանց**, էջ 23: Բ. Ուլուբաբյանը ենթադրել է, որ Զանդակը եղել է հարակից գյուղերի ընդհանուր անունը (տե՛ս Համառոտ պատմություն Աղվանից երկրի: Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Բ. Ուլուբաբյանի**, Երևան, 1997, էջ 42):

⁶⁰ **Կարապետեան Ս.**, ԺԸ դարի առաջին քառորդի մի երկխօսություն, «Հանդես ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2009, ճիգ տարի, էջ 430:

⁶¹ Տե՛ս **Лысов В.**, Նշվ. աշխ., С. 123-124.

⁶² Տե՛ս **Միրզաբեկյան Գ.**, Այսրկովկասի քաղաքական իրավիճակը 1720-ական թվականներին, «Հայագիտության հարցեր», Երևան, 2017, № 2, էջ 62:

⁶³ **Լեո**, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Բ, Երևան, 1973, էջ 213:

⁶⁴ Ասպատակել, արշավել:

⁶⁵ **Эзов Г.**, Сношения Петра Великого с армянским народом (документы), СПб., 1898, С. 416, տե՛ս նաև. Армяно-русские отношения в I-ой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. II, под редакцией **А. Иоаннисяна**, Ереван, 1967, док. 308, С. 230-233.

ուղի բնակչությանը⁶⁶ ստրկության տանելով կանանց ու երեխաներին: Օրհասական էր նաև կոտորածից փրկված հայերի դրուժությունը, որոնք ապրում էին սոսկումի մեջ, թեև նրանց մի մասը տեղահան եղավ և գաղթեց լեռնային շրջաններ: Այս առիթով հայերի մասին ավելի ուշ շրջանում 1843-1844 թթ.-ին, բավականաչափ տեղեկություններ է հաղորդում երկրամասում ճանապարհորդած պրուսացի նշանավոր գիտնական ու գրող բարոն Ավգուստ Ֆոն Յաքստհաուզենը: Ըստ նրա՝ «...Բոս-Դադի լեռնաշղթայի ամբողջ գծով և Շամախու լեռներում գտնվում են հայկական բնակավայրեր և գյուղեր: Բոս-Դադում և Շաքիի պրովինցիայում սկսած Նուխիից մինչև Չատմաս (Խաչմաս՝ - Գ. Ս.)⁶⁷ ամենուր հանդիպում են քրիստոնեական եկեղեցիների ավերակներ, որոնք պատկանում են անհետացող հայկական բնակավայրերին»⁶⁸:

Երկրամասի քրիստոնյա ազգաբնակչության համար ռազմաքաղաքական անբարենպաստ պայմաններում 1724 թ.-ի հունիսի 12-ին, Կ. Պոլսում կնքվեց ռուս-թուրքական պայմանագիրը: Պայմանագրի համաձայն՝ Օսմանյան կայսրությունը ճանաչեց Ռուսաստանի իրավունքները Պարսկաստանի մերձկասպյան շրջաններում, այն է՝ Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Սայանի, Լենքորանի, Ռեշտի և Էնզելի անցումը Ռուսաստանին, իսկ Ռուսաստանը փոխադարձաբար ճանաչեց Օսմանյան կայսրության իրավունքները Պարսկաստանի այսրկովկասյան տիրույթների նկատմամբ⁶⁹:

Նկատենք, որ պայմանագրի կնքումից հետո Օսմանյան կայսրությունը չիրաժարվեց մերձկասպյան շրջաններում հեռահար նպատակներով հաստատվելու մտադրությունից: Այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունն անթաքույց կերպով «իրենն» էր համարում Բաքուն ու Դերբենդը և դրան համելելու համար ձգտում էր վերացնել հայկական սեպը, վկայում է հետևյալ փաստարկը: 1725 թ.-ի մարտի 1-ին Վարանդայի ճակատամարտում գերի ընկած Սալահ փաշան, պատասխանելով այն հարցին, թե դուք

⁶⁶ Ст'ю История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, под ред. М. Косвена и Х. Хашаева, Москва, 1958, С. 116-117.

⁶⁷ Խաչմասը եղել է Ղուբայի գավառի իրանալեզու (թաթախոս) հայերի հնավանդ հայկական բնակավայրերից: Գտնվել է Վատկյան դաշտի շարունակության վրա՝ մի գեղեցիկ դաշտահովտում (տե՛ս **Բարխուտարեանց Ս.**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 130): Դեռևս XVIII դարավերջին և XIX դարասկզբին 52 տուն հայ բնակչությամբ Մուշկուրի շրջանում գոյություն են ունեցել Մեծ և Փոքր Խաչմաս հայկական գյուղերը (տե՛ս **Броневский С.**, Новейшая географическая и историческая известия о Кавказе, ч. II, отд. VI, гл. III, Ширван, § I (Ханство Кубинское), Москва, 1823, С. 383, տե՛ս նաև **Бутков П.**, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, ч. I, СПб., 1869, С. 94, տե՛ս նաև ч. III, СПб., 1869, С. 424, տե՛ս նաև **Յակոբեան Ա.**, Հայ-թաթերի տարաբաշխվածութեան ու տեղահանութիւնների պատմութիւնից (ԺԸ դարի սկիզբ-ԺԹ դարի վերջ), Հահկագեան Հայագիտական Հանդես, Պեյրուֆ, 2001, հ. ԻԿ, էջ 131-132), որոնք, հարակից լինելով, կազմել են քաղաքավան: Ըստ Հայր Ս. Եփրիկյանի՝ «Ի հնումն հայաբնակ քաղաքաւան Աղուանից, և այժմ փոքրիկ գիւղ Հայոց և Մահմեդականաց» (տե՛ս **Եփրիկեան Ս.**, Պատկերազարդ Բնաշխարհիկ բառարան, հ. Բ, գիրք Ա, Վենետիկ-Ս. Ղազար, 1907, էջ 149):

Ղազար քին. Հովսեփյանցը *Խաչմաս* տեղանունը ստուգաբանում է իբրև հայերեն «խաչ» և «մատուկ» բառերից կազմված. «Խաչ-մաս, որ նշանակում է խաչի մատուկ կողո» (**Ղազար քի Յովսեփեան**, Նուխուայ գաւառի մահմեդական հայերը (տե՛ս **Թովչեան Ե.**, Լոյս պատկերազարդ օրացոյց հանդես 1905 թ., Թիֆլիս, 1904, էջ 194): Ըստ Մետրոպ արքեպ. Սմբատյանցի՝ «Խաչմաս բառը պարզ հայերէն է, և նշանակում է այստեղ խաչի մասն լինել, և գուցէ Աղուանից պատմութեան մէջ յիշուած խաչն լինի...» (**Սմբատեանց Ս.**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախույ թեմի, Տիֆլիս, 1896, էջ 544): Տեղացի հայերն անվանել են *խոչմաս* (տե՛ս Кавказский Календар на 1852 г., Тифлис, 1856, С. 382).

⁶⁸ **Закавказский край.** Путевые впечатления и воспомонания **Барона Август-Фон-Гакстгаузена**, ч. I, СПб., 1857, С. 208-209.

⁶⁹ Ст'ю Армяно-русские отношения в I-ой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. II, док. 266, С. 136-143, տե՛ս նաև **Лысцов В.**, նշվ. աշխ., С. 237-238.

ինչպե՞ս էք եկել այս երկիրը, առանց թաքցնելու ասել էր. «...Մեր թագաւորն հրաման է արարեալ, որ պիտի մեք այս երկիրներին Յայն և ղզլպաշն փչացնեմք. չուն որ Ըռուս թագաւորի զօրքն ծովի այս կողմն են անցել, մեք լոցա վերա պիտի գնամք. **Յայն այս մեջս չպիտի և այս երկրներս խարապ պիտի լինիլ, որ մեր ճանապարհն բացուի. նաև ասաց այս փաշաս, թէ Դուք չէիք այս միջումս, մեք հիմա Դարպասնու և Պաթու վերա էինք գնացել, որ ղատիմի**⁷⁰ **մերն է (sic!)**» (ընդգծումը մերն է – Գ. Ս.)⁷¹:

Թուրք փաշայի վկայությունից դժվար չէ եզրակացնել, որ արդեն XVIII դ. 20-ական թվականներին Օսմանյան կայսրության կողմից Կովկասում տարվող քաղաքականության մեջ որոշակիորեն ուրվագծվում էին համաթուրքականության (պանթուրքիզմ) նկրտումները, և առաջին քայլերն էին կատարվում դրա իրականացման ուղղությամբ: Յայկական լեռնաշխարհի արևելքում Արցախի, Սյունիքի և Արևելյան Այսրկովկասի հոծ հայ բնակչությունն էր, որ, սեպի պես խրված լինելով դեպի Դերբենդ ու Բաթու տանող ճանապարհին, թույլ չէր տալիս Օսմանյան կայսրությանը՝ իրականացնելու իր ոճրագործ ծրագիրը⁷²: Միակ միջոցը վերջինս համարում էր հայերի ոչնչացմանն ուղղված զանգվածային կոտորածները, տեղահանությունը, հայրենագրվումը, էթնիկ գտումներն ու հայկական քաղաքակրթական ժառանգության ոչնչացումը:

Պետք է արձանագրենք, որ այդ շրջանում Այսրկովկասի քրիստոնյա ժողովուրդների քաղաքական կողմնորոշումը Ռուսաստանի կողմն էր: Ռուսաստանը, որի օգնության հետ մեծ հույսեր էր կապում նաև Կուրի ձախափյակի քրիստոնյա՝ հայ և ուրի բնակչությունը, ճակատագրական պահին վերջիններիս թողեց թուրք ու իրանցի բռնակալների ուղորմածությանը: Վերահաս վտանգը ժամանակին կանխազգացել էր Մեյսարիի վանքի վանահայր Մարտիրոս եպս. Մեսիրյանը, որը դեռևս 1724 թ.-ի փետրվարի 24-ին Դերբենդի պարտն Ա. Յունգերին հղած նամակում զգուշացրել էր թուրքերի՝ դեպի մերձկասսյան շրջաններ նախապատրաստվող հարձակման մասին: Նամակում ասվում էր նաև, որ թուրքերը պատրաստվում են հաշվեհարդար տեսնել Շամախիի և հարևան շրջանների հայ բնակչության հետ, և այդ նպատակով խնդրում էր շուտափույթ ռուսական զորք ուղարկել Շամախի և Նիյազաբադ⁷³ խոստանալով տեղի հայ մարտիկների օժանդակությունը⁷⁴: Մարտիրոս եպիսկոպոսը նույն թվականի փետրվարի 24-ին գրած նամակում տեղեկացնում էր, որ Շամախիում արդեն 50 օսմանցիներ կան, որոնցից մեկը «պոլուբայաշի»⁷⁵ են ասում. համիշա⁷⁶ ձի կուհեծնի, մեյդանում ջիլիթ⁷⁷ կուխաղա, մեջլիս կուղանեն»⁷⁸: Մարտիրոս եպիսկոպոսը Ա. Յունգերին մարտի 6-ի գրած մեկ այլ նամակում տազնապով ուղղակի հայտնում էր հայերին սպառնացող վտանգների մասին, որ թուրքերը նախապատրաստվում են կազմակերպել կոտորած և այդ մասին մտախոնջ հայտարարում են հետևյալը. «Այ կաւոր պատլ»⁷⁹ փիրսուսգ⁸⁰ Ուռուս գալիս է, ուրախացել էք, ձեզ յենց կոտորենք, որ լոցա երես չի գետնուք: Ամեն օր մաւլահաթ են անում, որ

⁷⁰ Հնուց ի վեր, մշտական:

⁷¹ Эзов Г., Изд. азխ., С. 422, տե՛ս նաև Армяно-русские отношения в I-ой трети XVIII века, док. № 315, С. 249.

⁷² Տե՛ս Aivazian A., *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal*, Yerevan, 1997, p. 40.

⁷³ Ծովեզրյա Նիյազաբադ քաղաքը գտնվում էր Դուբա քաղաքից 45 վերստ հեռավորության վրա (տե՛ս Вейденбаум Е., Путеводитель по Кавказу, Тифлис, 1888, С. 341):

⁷⁴ Տե՛ս Армяно-русские отношения в I-ой трети XVIII века, док. № 214, С. 72-73.

⁷⁵ Չորապետ, գորագլուխ:

⁷⁶ Միշտ:

⁷⁷ Ձիավարժություն:

⁷⁸ Նույն տեղում, док. № 214, С. 73 :

⁷⁹ Անպիտան, փչացած:

⁸⁰ Աստեր:

հայեր կոտորեն»⁸¹: Դառնալով հայերի հուսահատ վիճակին՝ Մարտիրոս եպիսկոպոսը շարունակում է. «...մեք մնացել ենք ի մեջ դարակուսանաց, չենք գիտում թե ինչպես անանք»⁸²:

Հարկ է նշել, որ թուրքերի հնարավոր վրեժխնդրության մասին հայկական բնակչության մտավախություններն անհիմն չէին: Այսպես՝ Օսմանյան տիրապետությունը և նրանց կողմից Շիրվանում տեղական կառավարիչներ նշանակված Հաջի Դավուդն ու Սուրխայ խանը, որոնք գործիք էին դարձել օսմանների ձեռքին, ծանր իրավիճակ էին ստեղծել քրիստոնյա ազգաբնակչության համար: Վերջիններս պարբերաբար հարձակումներ էին գործում Սայլանի, Ղուբայի, Դերբենդի և ռուսական տիրապետության այլ բնակավայրերի վրա⁸³: Ընդամենը, երկրամասում հաստատված ղզլբաշ վաչկատուն ցեղերը պարբերաբար բռնություններ էին գործադրում տեղաբնիկ ազգաբնակչության, հատկապես՝ քրիստոնյաների նկատմամբ՝ հարկադրելով նրանց մահմեդական դառնալ⁸⁴: Հուսահատությունն ու հուսալքությունն իրենց արտահայտությունն են գտել հայկական վեց գյուղերի ավազների՝ Պետրոս Ա-ին 1724 թ.-ի հոկտեմբերի 28-ին օգնության ակնկալիքով գրած նամակ-խնդրագրում, որում մասնավորապես ասվում էր, որ ղզլբաշները «Մեր գեղերանքն թամամ և Շաբու երկիրն թուրքացրել էն ուժով: Մեր գիր գրանքն և եկեղեցիքն այրեցին, մեր քահանայքն կոտորեցին, շատ մարտ վասն հաւատոյ խաթրին սուրով զնացին: Հիմայ ցերեկն թուրքութիւնն էնք անում, գիշերն հայութիւնն, այլ ջար չի ունեմք, մեր ջարն հրամանքտ էս»⁸⁵:

Շամախիի խանությունում, որը 1724 թ.-ի հունիսի 12-ի ռուս-թուրքական պայմանագրով հայտնվել էր Օսմանյան հովանավորչության տակ⁸⁶, հայերը ստիպված էին միայնակ պայքարել թուրքական զորքերի դեմ: Հուսալքված Ռուսաստանից սպասվող օգնությունից՝ շամախահայերը, հանուն ազատության և ազգային արժանապատվության, 1725 թ.-ի օգոստոսին ապստամբություն բարձրացրին Օսմանյան բռնակալների դեմ: Ապստամբությունը ճնշելու նպատակով թուրքական հրամանատարությունը Շամախի ուղարկեց հիմնական բանակից առանձնացված 6000-անոց զորք, սակայն ապստամբներին հաջողվեց պարտության մատնել թուրքերին: Կանգ չառնելով ապստամբության մանրամասների վրա՝ միայն նշենք, որ եվրոպացի մի հեղինակի վկայության համաձայն՝ «...վեց հազար հոգուց բաղկացած և հիմնական բանակից առանձնացված (թուրքական) զորքերը, որոնք ուղարկվել էին Շամախիի մերձակայքում գտնվող ապստամբ հայերին հնազանդեցնելու համար, պարտություն էին կրել նրանցից...»⁸⁷:

Շարունակվող հայահալած քաղաքականության մասին բավականաչափ տեղեկություններ է հաղորդում Սանկտ-Պետերբուրգի գիտությունների կայսերական ակադեմիայի անդամ, գերմանացի աշխարհագրագետ ու ազգագրագետ, Պետրոս Ա-ի Կասպիական արշավանքի մասնակից Յոհան Գուստավ Գերբերը, որ փոքր-ինչ ուշ՝ 1728 թ.-ին, քարտեզագրել է մերձկասպյան մարզերը: Ուշադրության են արժանի Գերբերի գրառումները լեզգիների կողմից 1727-1728 թթ.-ին հայկական գյուղերի թալանման, կանանց ու երեխաներին ստրկության տանելու, հայերի նկատմամբ ամեն տեսակի անսանձ հալածանքների ու ստորացումների վերաբերյալ: Տնտեսական բազմաբնույթ ճնշումները

⁸¹ Նույն տեղում, док. № 223, С. 81.

⁸² Նույն տեղում:

⁸³ Տե՛ս Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. II, էջ 519:

⁸⁴ Տե՛ս Aivazian A., նշվ. աշխ., p. 39-40, տե՛ս նաև **Խառատեան Հ.**, «Աղրբեջանցիները», «կովկասալեզուները» եւ «փրանալեզուները». ինքնութեան զարգացումներն Աղրբեջանում, էջ 274:

⁸⁵ Армяно-русские отношения в I-ой трети XVIII века, док. 324, С. 264.

⁸⁶ Տե՛ս **Лыцков В.**, նշվ. աշխ., С. 238.

⁸⁷ Տե՛ս **Չուլայան Մ.**, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների. XIII- XVIII դարեր, գիրք Ա (քաղաքական պատմություն), Երևան, 1990, էջ 207:

գուգակցվում էին կրոնական հալածանքներով ու հետապնդումներով: Հայերը, որպես «անհավատներ», Շամախի քաղաքում ապրում էին առանձին թաղամասում, որպեսզի չխառնվեին մահմեդականների հետ: Օսմանների կողմից Շիրվանի կառավարիչ Նշանակված Հաջի Դավուդի հրամանով հայերն ու հրեաները մահմեդականներից տարբերվելու համար նույնիսկ հագուստի վրա՝ կրծքի շրջանում, կրում էին տարբերակիչ նշան՝ դեղին մահուդից լաթիկ: Ըստ Գերբերի՝ այդ արվում էր նրա համար, որպեսզի «մահմեդականը նրանց բարևեր առանց դիպչելու՝ խուսափելով մեղք գործելուց»: Գերբերը վկայում է, որ շատ հայեր կրոնական հալածանքներից փրկվելու միակ ճանապարհը տեսնում էին մահմեդականություն ընդունելու մեջ, որի հետևանքով «քրիստոնյա հայերի թիվը բավական քչացել էր»⁸⁸:

Շիրվանի հայությունը մեծ զրկանքներ պատճառեցին նաև Իրանի Նադիր շահի արշավանքները: Թուրքական նվաճումներին դիմագրավելու նպատակով Նադիրը 1734 թ.-ի մայիսին Մուղանի վրայով շարժվում է Շամախի, հիմնովին ավերում ու հրդեհում քաղաքը և մեծ թվով գերիներ վերցնում քրիստոնյաներից⁸⁹: Աբրահամ Երևանցու հաղորդմամբ՝ «Ի Գանջայոյ Ելեալ Ղուլի խանն (իմա՛ Նադիր շահը - Գ. Ս.) գնաց ի վերայ Շամախու և Էառ գնա, Նոյնպես և զՇիրուան»⁹⁰: Նադիրի հրամանով հրդեհվեցին նաև Շամախու շրջակայքի մի շարք գյուղեր, ապա ասպատակության ենթարկվեցին դաշտավայրի բնակավայրերը: Շամախին ավերելուց հետո Նադիր շահը կենդանի մնացածներին վերաբնակեցրեց հին Շամախիից հարավ-արևմուտք՝ 26 կմ հեռու՝ Աղսուլի մոտակայքում: Նոր բնակավայրը ևս ստացավ Շամախի անունը⁹¹: Թե՛ բնակլիմայական պայմաններով և թե՛ ապահովության տեսակետից նոր բնակատեղին խիստ աննպաստ էր շամախահայերի համար. դեռևս շարունակվում էին լեզգիների ասպատակությունները: Աբրահամ Գ Կրետացի պատմագիր կաթողիկոսը հաղորդում է. «Այլ և վասն բնակութեան, զի զՇամախին աւերեալ էր և քակեալ Վայինամաթն, յորժամ Էառ՝ յառաջ քան զգալն ի Կենճէ, և Ը. ժամու ճանապարհի հեռու ի Շամախուցն՝ յողէ բերդ մի շինեալ՝ հրամայեաց զմնացեալ Շամախեցիքն անդ բնակեցուցանել. և զի էր օղն ապականեալ, և տեղն շողային, և ջուրն պակաս, և տաճկունք՝ որք են Լազկիք եւ Սուննիք՝ վշտացուցանելին և զտառապեցուցանելին զԱզգն մեր (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»⁹²: Այդտեղ հաստատված հայերը հին Շամախի վերադարձան միայն Նադիր շահի մահվանից (1747 թ. մայիսի 9) երեք տարի անց՝ 1750 թ.-ին: Նադիր շահի մահից հետո Պարսկաստանում ծայր առած գահակալական կռիվների պատճառով Շիրվանի բեկլարբեկության տարածքում XVIII դ. 40-ականների սկզբներին ձևավորվում են Շաքիի, Դերբենդի, Ղուբայի (1765 թ. հետո վերջինիս է միացվում նաև Դերբենդի խանությունը), Շամախիի, Բաքվի, Թալիշի, կիսանկախ խանությունները⁹³:

⁸⁸ Гербер И., Известия о находящихся с западной стороны Каспийского моря между Астраханью и рекой Курой народах и землях и о их состоянии в 1728 г., «Сочинения и переводы к пользе и увеселению служащих», СПб., 1760, Октябрь, с. 304-305, տե՛ս նաև Гербер И., Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря. 1728 г. (История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, под ред. М. Косвена и Х. Хашаева, Москва, 1958, С. 116).

⁸⁹ Աբրահամ կաթողիկոսի Կրետացույ Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 65:

⁹⁰ Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թ., պատ խմբագիր՝ պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Երեւան, 1938, էջ 87:

⁹¹ Арунова М., Ашрафян К., Государство Надир-Шаха Афшара. Очерки общественных отношений в Иране 30-40-х годов XVIII века), Москва, 1958, С. 187.

⁹² Աբրահամ Կրետացի, էջ 65-66:

⁹³ XVIII դարի երկրորդ կեսի Արևելյան Այսրկովկասի խանությունների ձևավորման գործընթացի և եթնոգավանական պատկերի մասին մանրամասն տե՛ս Մխիթարյան Գ., Արևելյան Այսրկովկասի վարչաքաղաքական կազմավորումները ԺԸ դարի երկրորդ կեսին, Երևան, 2018:

XVIII դարը և հատկապես դարի երկրորդ կեսը Շաքի-Շիրվան գոտում տեղաբնիկ ազգաբնակչության՝ հայերի ու քրիստոնեությունը պահպանած ուղիների համար մեծ փորձությունների, եթևիկ ինքնությունը պահպանելու երկարատև ու համառ պայքարի ժամանակաշրջան էր: Բռնի մահմեդականացման, թրթալեզվացման ու ապագայ-նացման քաղաքականությունը հատկապես գործադրվեց Շաքիի ու Արեշի գավառներում⁹⁴: Դավանափոխված հայերն իրենց հերթին աստիճանաբար դարձան թրթախոս: Դրանում բացասական դերակատարություն ունեցավ հատկապես Շաքիի մահմեդականացած հայկական ընտանիքից սերած Յաջի Չելեբի խանը⁹⁵, որը «...ի նմին ժամանակի (1740-1750-ական թվականներ – Գ. Ս.) բոլոր Շիրուանայ տիրեր»⁹⁶: Դավանափոխվածների թիվը Սարգիս արքեպ. Ջալալյանցը նշում է 14.000⁹⁷, Մակար եպս. Բարխուտարյանցը «տաճկացեալ հայոց» թիվը նշում է 15.480 ծուխ⁹⁸, իսկ Ղազար քն. Յովսեփյանցը՝ 100.000 մարդ⁹⁹: Ծնունդով Արեշի գավառի հայկական Դաշբուլաղ¹⁰⁰ գյուղից մանկավարժ Գարեգին Սեյրանյանը, անդրադառնալով ավելի ուշ շրջանում՝ 1917-1918 թթ.-ին շարունակվող հայատյաց քաղաքականությանը, Բաքվում լույս տեսնող «Արեւ» լրագրում հայտնում էր հետևյալը. «...Աղանից երկրի հայութեան վերջին մնացորդները անդնդի եզերքին են կանգնած: Նուխայ և Արեշի գաւառներում քրիստոնէայ ուտեացիներին և հայերին սրի ուժով Մահմեդի կոսին հաղորդակից անելը նոր երևոյթ չէ: Դեռ 17-18 դարերում թուրք անգիտակից խուժանը, իր ապիկար և մոլեռանդ հովիւների առաջարկութեամբ շատ գիւղեր մահմեդականացրել են: Նուխայ գաւառի Քիշ (Գիս), Կոխմուխ, Բդեզ, Վարդանլու և այլն թրթաբնակ գիւղեր (17-18

⁹⁴ Մանրամասն տե՛ս **Առաքելյան (Խառատյան) Յ.**, Եղիշե առաքյալի պաշտամունքն ուղիների մեջ և Ուտի գավառի հարցի շուրջ, ԼՂԳ, Երևան, 1991, № 6, էջ 69; **Նույնի՝** Этноконфессиональные процессы в зоне Шеки-Кабала (XVIII-XX вв.), С. 83-84; **Նույնի՝** Ուղիների կրօնը եւ հաւատալիքները ԺԹ-Ի. դարերում, «Յանդես ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2010, ԾԻԴ տարի, էջ 436-494; **Նույնի՝** Кавказско-албанский фактор в процессе формирования азербайджанской этнической идентичности (Народы Кавказа в цивилизационном пространстве России. Материалы VI международного форума историков-кавказоведов, г. Ростов-на-Дону, 13–15 ноября, 2019 г.), Ростов-на-Дону, 2019, С. 505-506.

⁹⁵ Տե՛ս **Բարխուտարեանց Ս.**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 291-292: Ըստ վրաց Անանուն աշխարհագրի (1769 թ.)՝ Յաջի-Չելեբի խանի հայրը եղել է դավանափոխված հայ երեց (տե՛ս Վրաց աղբյուրները Յայաստանի և հայերի մասին, հ. Գ (ԺԸ-ԺԹ դդ.): Զաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, առաջաբանով, ներածություններով և ծանոթագրություններով՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Երևան, 1955, էջ 151, 154, տե՛ս նաև **Абдул-Латиф-эфенди**, История Шекинских ханов, Баку, 1926, С. 5).

⁹⁶ **Միրզա Աղիզեզալ-Բեկ**, Ղարաբաղ-նամե: Աշխատասիրությամբ՝ **Ա. Մաղալյանի**, Երևան, 2016, էջ 42: Յաջի Չելեբի խանը Շաքին և Շամախին գրավել էր 1753 թ.-ին (տե՛ս Վրաց աղբյուրները Յայաստանի և հայերի մասին, հ. Գ, էջ 225):

⁹⁷ Տե՛ս **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., Բ մաս, էջ 368:

⁹⁸ Տե՛ս **Բարխուտարեանց Ս.**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 291-292:

⁹⁹ Տե՛ս **Ղազար քահանայ Յովսեփեան**, Նուխայ գաւառի մահմեդական հայերը (**Թովչեան Ե.**, Լոյս պատկերագրող օրացոյց հանդես 1905 թ., էջ 193):

¹⁰⁰ Ըստ Բաֆֆիի՝ Դաշբուլաղ գյուղը հիմնադրել էր Արցախի Գյուլպարաղի Մելիք-Ռուստամ Մելիք-Ալլահվերդյանը (տե՛ս **Բաֆֆի**, Խամսայի մելիքությունները (1600-1827): Նիպեր Յայոց պատմութեան համար, Վիեննա, 1906, էջ 134, 221): Մակար եպս. Բարխուտարյանցը, երկրամասում ճանապարհորդելու ժամանակ (1890 թ.) լինելով Դաշբուլաղում, գյուղի մասին թողել է հետևյալ նկարագրությունը. «...շինւած է 3 ձորակների և սեռերի վերայ. բառաժայռ լեռներ բարձրացած են գիւղի արևմտեան կողմում: Գիւղիս դիրքն արևելահայեաց է, տեսարանն դուրեկան, օդն ու կլիման և ջուրն պատուական: ...բնակչաց նախնիքն գաղթած են Ջրաբերդ և Խաչեն գաւառներից» (**Բարխուտարեանց Ս.**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 236-237):

դարերում այս գիւղերում հայեր ու աղւաներ էին ապրում) միջնադարեան ինկվիզիտորների գործած «քաջագործութեան» կենդանի վկաներ են»¹⁰¹:

Նկատենք, որ երկրամասով մեկ ընթացող բռնի մահմեդականացման և ուժացման աղետաբեր գործընթացներից անզիջում պայքարի գնով հաջողվել է խույս տալ Գյոքչայի, Շամախիի և Ղուբայի գավառների հայերին: Ինչպես գրում է երկրամասի հայերի պատմությանը քաջածանոթ շամախեցի հասարակական-քաղաքական գործիչ, տնտեսագետ Ներսես Աբեյանը. «Շիրվանի բնակչութիւնը, որի մեջ արմատացած է լինում Չենգավեստի (իմա՛ գրադաշտականության – Գ. Ս.) կրօնը և քրիստոնեութիւնը (լուսաւորչական դաւանութեամբ, ըստ որում տեղական քրիստոնեաների յարաբերութիւնները լինում են Աղուանից կաթողիկոսարանի հետ, ինչպես երևում է մեր պատմագիրների վկայութիւններից), մեծ ընդդիմադրութիւն է ցոյց տալիս իսլամի տարածուելուն: ...Մահամեդականութեան ահեղ հոսանքից Շիրվանում զերծ են մնում Ղուբի (իմա՛ Ղուբայի - Գ. Ս.), Գեօզչայի և Շամախիի գաւառների քրիստոնեաները, մինչդեռ Բաքուի գաւառում¹⁰² քրիստոնեայ հայերը սպառնվում են՝ թողնելով մի քանի աննշան հետքեր»¹⁰³:

Ոչ նպաստավոր էթնոգործընթացների կիզակետում հայտնված Շաքիի հայ բնակչության մի հատվածը այդ և հետագա տարիներին, թեև մահմեդական և թյուրքալեզու տարրերով շրջապատված՝ հարկադրաբար ընդունել էր մահմեդականություն և դարձել թրքախոս, այդուհանդերձ, հիմնականում պահպանել էր ազգային նկարագիրը¹⁰⁴: Իրենց իսկ խոստովանությամբ՝ «...Մենք՝ մի բուռ թրքախոս հայերս, թեև անօրէն լեռնականներին և արիւնարբու մահմեդականներին զոհ տուինք մեր թանկագին մայրենի լեզուն, մեր կեանքն ու հարստութիւնը, բայց մեր կրօնքն ու հաւատը, մեր ազգութիւնն ու մեր ս. եկեղեցին արեան գնով անխախտ ու հաստատ պահեցինք»¹⁰⁵: Ընդամիս, չնայած այդ քաղաքականությունը հանգեցրել էր բազմաթիվ գյուղերի քայքայմանը, այսուհանդերձ, հայերն ու քրիստոնեությունը դավանող ուղիները շարունակում էին մնալ երկրամասի

¹⁰¹ **Սեյրանեան Գ.**, Խանաբաղ, «Արեւ», Բագու, 1918, յունիսի 2 (20) մայիսի, № 103:

¹⁰² Պատմական աղբյուրները վկայում են, որ Բաքուի գավառը ներառնող Ապշերոն թերակղզում հայաբնակ գյուղեր են եղել Բալախանը, Սաբունչին, Մաշթաղան, Շաղանը, Սուրախանին, Բուզովան և Մարդաքյանը: «Մշակ» թերթի խմբագիր Ալ. Զալանթարյանը «Նամակ Բուզովայից» հոդվածում գրում է. «Պետք է նկատել, որ այդ գիւղերը առաջուց (180-200 տարի սրանից առաջ) բնակեցուած են եղել հայերով: Դրա ապացոյց կարող են համարուել եկեղեցիները թէ՛ ամբողջ (Բուզովայում) թէ՛ անհետացած (Բալախանում) և գանազան գերեզմանաքարերը որոնցից մեկը մի հայ կնկայ է, որ մօտ 400 տարի սրանից յառաջ մեռած է եղել» (**Զալանթարեանց Աղ.**, Նամակ Բուզովայից, «Մշակ», Թիֆլիս, 1874, սեպտեմբերի 19, № 37):

¹⁰³ **Աբեյան Ն.**, Արթուրական հայ գիւղացին Անդրկովկասում (II): Բաքուի Նահանգ, «Արծա-գանք», Թիֆլիս, 1887, օգոստոսի 16, № 30, էջ 487:

¹⁰⁴ Հակառակ բռնի մահմեդականացումներին՝ դավանափոխ ու թրքալեզու հայերից շատերը կենցաղում շարունակում էին պահպանել քրիստոնեական մի շարք սովորույթներ ու ավանդու-թյուններ: Ինչպես, օրինակ, խմորին խաչի նշան դնելը և այլն: Սիմեոն կաթողիկոսն իր հիշատակա-րանում այդ մասին թողել է հետևյալ վկայակոչումը. «...որք այժմ կան անդ տաճկական հաւատով (իմա՛՝ դավանափոխ շիրվանահայերը - Գ. Ս.) զորոց բազումք վկայեն թե՛ ունին տակալին յարարո-ղութիւնս իւրեանց զմանս նշանս քրիստոնեական, զի առնեն ի վերայ խմորոյ զխաչ և զայլս այս-պիսիս ունիլ ասեն» (Դիւան հայոց պատմութեան, Գ գիրք, մասն Բ, էջ 417): Ի հաստատումս վերը նշվածի՝ ծառայում է նաև Ղազար քին. Հովսեփյանի հետևյալ վկայակոչումը: «Զանիցս անգամ ես հարցրել եմ թրքացած կանանցից շատերին թե՛ «ինչու՞՞ էք խաչ քաշում նոր հունցած խմորի վրա»: Միշտ պատասխանել են ինձ, միայն «խաչ» բառից խուսափելով թե՛... մեր հօրից և պապերից մնա-ցած մեր հին սովորութիւնն է, այդ «նշանը» քաշում ենք, որ մեր խմորը ամեն ժամանակ անհատ ու անկապկաս լինի» (**Ղազար քահանայ Յովսեփեան**, Նուխուայ գաւառի մահմեդական հայերը (տե՛ս **Թովչեան Ե.**, Լոյս պատկերագրող օրացոյց հանդես 1905 թ., էջ 195-196):

¹⁰⁵ **Ղազար քահանայ Յովսեփեան**, Ակնարկներ ուտիացի և մահմեդական հայերի մասին, Թիֆլիս, 1904, էջ 31:

ստվարաթիվ էթնիկ ներկայություններից մեկը¹⁰⁶: Վրաց Անսանուն աշխարհագրի 1769 թ.-ին հեղինակած «Վրաստանին կից երկրների նկարագրությունը» երկում ասված է. «...Այս երկրում (իմա՝ Շաքիում - Գ. Ս.) բնակվում են շատ քրիստոնյաներ... հայեր՝ բացահայտ...»¹⁰⁷: Ականավոր բանասեր-պատմաբան Արշակ Ալպոյաճյանի դիպուկ բնորոշմամբ՝ «Հարուստ երկիր մըն էր Շիրուան, որուն բնակչութեան կարեւոր մասը կը կազմէին Հայերը, հակառակ հայածանքներուն եւ բռնի իսլամացումներուն»¹⁰⁸: Նկատենք, որ երկրամասում այլազգի և այլադավան հանրությունների մեջ ազգապահպանության հարցում հայերի հարատևման տեսակետից մեծ դեր էր վերապահված ազգային եկեղեցուն¹⁰⁹ ու դպրոցին, որոնք ուսուցանում և գործածական էին դարձնում հայերենը: Կովկասագետ Պ. Բուսկովի վկայակոչած տվյալների համաձայն՝ 1783 թ.-ի սկզբներին Շիրվանում կար 2000, Շաքիում՝ 1000 ծուխ հայ բնակիչ¹¹⁰:

Շիրվանի ազգաբնակչությունը, այդ թվում՝ հայերը մեծապես տուժեցին Նաև Պարսկաստանի Աղա Մուհամմադ խանի՝ 1795 թ.-ի արշավանքի հետևանքով: Երբ Թիֆլիսն ավերելուց հետո Նա վերադարձավ Մուղանի դաշտ՝ ձմեռելու, զգալի ավերածությունների ենթարկեց Նաև Շիրվանը: Վավերագրի վկայությամբ՝ «Ի բանակիլ Միամմադ շահին ի Մուղան, տարածեաց զձեռն իւր ի վերայ Շամախու և Նուխուայ՝ որ ասի Շաքի Շիրուան...: Ապա սփռեալ ի գիւղորայս ևոցա այրեցին զամենայն շինուածս...»¹¹¹:

XVIII դ. վերջերին Ռուսաստանը վերստին ձեռնամուխ եղավ նվաճելու Այսրկովկասը և մասնավորապես իր դիրքերն ամրապնդելու մերձկասպյան շրջաններում: Կոմս Վ. Չուբովի հրամանատարությամբ 1796 թ.-ի ապրիլի 30-ին սկսված ռազմական ակտիվ գործողությունների արդյունքում մայիսի 10-ին գրավվեցին Դերբենդը, այնուհետև՝ Բաբուն, Լենքորանը, Ղուբան, Շամախին, Ջավադը և Շաքին¹¹²: Չնայած ռազմական հաջողություններին՝ Եկատերինան Բ-ի անակնկալ մահվան և ծագած բազում դժվարություններին պատճառով Նոր կայսր Պավել Ա-ն 1796 թ.-ի Նոյեմբերին ռուսական զորքերին հետ քաշվելու հրաման է տալիս, որով և Այսրկովկասում ժամանակավորապես դադարեցվում են ռազմական գործողությունները¹¹³: Ռուսների հեռանալը դարձյալ վտանգավոր դրություն ստեղծեց երկրամասի հայ բնակչության համար: Ռուսական կողմնորոշում ունենալու պատճառաբանությամբ արյունարբու տիրակալ սուննի Մեհտի բեկը մեծաքանակ զորքով հարձակումներ գործեց հայկական բնակավայրերի վրա¹¹⁴: Մեհտի բեկի կազմակերպած կոտորածներից հատկապես տուժում է Շամախիի գավառի Չարգարան

¹⁰⁶ Տե՛ս **Харатьян Г.**, Этноконфессиональные процессы в зоне Шеки-Кабала (XVIII-XX вв.), «Научная мысль Кавказа», Ростов-на-Дону, 2003, № 3, С. 85-86.

¹⁰⁷ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, էջ 154:

¹⁰⁸ **Ալպոյաճյան Ա.**, Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950, էջ 386:

¹⁰⁹ Մատենագրական աղբյուրներում V դարից հիշատակվող Կապադակի, Բաղասականի, Հաշուի, Ցրիի, Բախաղատի և Շաքիի եպիսկոպոսական թեմերի հենքի վրա X դ. վերջերին XI դ. սկզբներին Աղվանից կաթողիկոսության ենթակայությամբ կազմավորվել են Շամախիի (Շիրվանի) և Շաքիի հայոց թեմերը: Մանրամասն տե՛ս **Ստեփանյան Գ.**, Շամախու հայոց թեմի սկզբնավորման հարցի շուրջ (Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան: Տարեկան գիտա-ժողովի կյութերի ժողովածու), Երևան, 2005, № 3, էջ 870-873:

¹¹⁰ Տե՛ս **Бутков П.**, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, ч. II, СПб., 1869, С. 142.

¹¹¹ Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.): Աշխատասիրությամբ **Ռ. Տ. Տիտանյանի**, Երևան, 1981, էջ 190:

¹¹² Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 240:

¹¹³ **Չոբանյան Պ.**, Հայ-ռուս-պարսկական կապերի պատմությունից (XVIII դարի վերջ), ՊԲՀ, Երևան, 1991, № 2, էջ 62-63:

¹¹⁴ **Фигуни А.**, История последней столицы Ширвана (историко-этнографический очерк), «Известия Азербайджанского комитета охраны памятников старины, искусства и природы», вып. 3, Баку, 1927, С. 125.

հայկական գյուղը, որտեղ «պարսիկները մի օրուայ մեջ, բացի ծերերից, երիտասարդներից, 100 մանր երեխաներ մորթեցին, իրանց վրեժը լուծելու համար»¹¹⁵: Ծանր էր նաև Շամախիի հայ բնակչության վիճակը: Շամախիի Մուստաֆա խանը սպանել տվեց նույնիսկ Հովհաննես վարդապետին, որն իբր «գրգռում էր հայերին խանի դեմ յօգուտ ռուսների»¹¹⁶:

Ռուսական կողմնորոշում ունենալու պատճառով վախենալով խաների վրեժ-խնդրությունից՝ Բաքվի, Ղուբայի, Դերբենդի և Մուշկուրի խանությունների շրջակայքում գտնվող հնուց անտի հայաբնակ գյուղերի հարյուրավոր ընտանիքներ ռուսական կառավարության թույլտվությամբ 1796-1797 թթ.-ին գաղթեցին Հյուսիսային Կովկաս: Ըստ Պ. Բուստովի՝ այդ շրջաններից գաղթեց ավելի քան 500 հայ ընտանիք¹¹⁷: Հովսեփ արքեպ. Արղությանի կազմած տեղեկագրի համաձայն՝ Դերբենդից և Մուշկուրից գաղթածների թիվը 610 ընտանիք՝ 5212 շունչ էր¹¹⁸: Նրանց մի մասին ցարական իշխանությունները բնակեցրին Ղվարում և Նրա շրջակայքում Մոզդոկում, Հին և Նոր Մաճառում կամ Սուրբ Խաչում (հետագայում Պրիկունսկ, Բուդյոնովսկ)¹¹⁹: XIX դ. երկրորդ կեսի պատմագիր Վարդան Օձնեցի, անդրադառնալով այդ գաղթերին, գրում է. «Բազումք ի Հայոց և սակաւք ի տաճկաց անցին ի Վրաստան, ի Սոմխեթ, յԵրևան, ի Կարս և յաշխարհն Սարմատացոց՝ ի Մոզդոք և ի Ղվար»¹²⁰: «Ղարաջալլեցի» ծածկանունով հեղինակը գրում է. «Մաջառը, որ բովանդակվում է երկու միմեանցից կես վերստաչափի հեռի գիւղի մեջ Հին և Նոր: Երկու գիւղի բնակիչները ևս... գաղթած են Ղարբանդի և Ղուբայի շրջակայքում գտնուող Խաչմազ, Սոլլախալի, Քիլվար, Ղարաջալլի... գիւղերից...»¹²¹:

Այսպիսով՝ XI-XVIII դդ. ընթացքում գլխավորապես տարածքի գավթման բնույթ կրող արշավանքների շրջանում, Արևելյան Այսրկովկասի էթնովշակությանի պատկերում դեռևս պարսկական տիրապետության (V-VI դդ.), ապա արաբական արշավանքների ու նվաճումների շրջանում (VII-IX դդ.) սկսված էթնովշակությանի և ժողովրդագրական փոփոխությունների ավելի մեծ ու լուրջ բնույթ ստացան XI-XV դդ. ընթացքում՝ վաչկատուն սելջուկ-թուրքերի, մոնղոլ-թաթարների, Լանկ-Թեմուրի, կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական թռչվոր ցեղերի, ապա՝ ղզլբաշների ասպատակությունների շրջանում: Այնուհետև XVI-XVIII դարերի ընթացքում, երբ երկրամասը հայտնվեց երեք հզոր պետությունների՝ Պարսկաստանի, Օսմանյան կայսրության ու Ռուսաստանի ռազմաբաղաբա-կան բախման կիզակետում, տևական պատերազմների, պարբերաբար կրկնվող ամայացնող արշավանքների, ասպատակությունների, շարունակվող էթնիկ գտումների, կոտորածների, բռնագաղթերի ու գերեվարումների պատճառով հայաբնակ մի շարք գյուղեր վերածվեցին ավերակների, զգալի չափով նվազեց հայ բնակչության թիվը, ոչնչացվեցին հոգևոր ու մշակութային ժառանգության վկայությունները. ավերվեցին, թալանվեցին վանքերն ու եկեղեցիները, մանրանկարչության բարձրարվեստ օրինակներով զարդարված ձեռագիր մատյանները: Նստակյաց զարգացած հողագոր-

¹¹⁵ Փարոս (Սմբատ Գարագաշյան), Չարգարան, «Նոր-դար», Թիֆլիս, 1898, սեպտեմբերի 17, № 167:

¹¹⁶ Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 153:

¹¹⁷ Տե՛ս Бутков П., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, ч. I, СПб., 1869, С. 94.

¹¹⁸ Տե՛ս Զորանյան Պ., Ռուսահայոց գաղթօջախի բնակչության քանակական կազմը (XVIII դ. վերջին քառորդ), ՊԲՀ, Երևան, 1998, № 3, էջ 64:

¹¹⁹ Տե՛ս Յակոբեան Ա., Հայ-թաթարի տարաբաշխվածության ու տեղահանությունների պատմությունից (ԺԸ դարի սկիզբ-ԺԹ դարի վերջ), «Հայկազեան հայագիտական հանդես», հ. ԻԱ, Պեյրուզ, 2001, էջ 131:

¹²⁰ Վարդան Օձնեցի, Նոր քաղաքական և եկեղեցական պատմությունն Հայաստան աշխարհի Մեծի և Փոքու, Մատենադարան, ձեռ. № 4331, թ. 91բ-92ա:

¹²¹ Ղարաջալլեցի, Մաջառ (Սուրբ Խաչ քաղաք), «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1879, հուլիսի 7, № 51:

ծուրթունքը շատ տեղերում տեղի տվեց քոչվորների անասնապահական տնտեսությանը, ինչը անվերականգնելի հարված էր երկրամասի քաղաքակրթական արժեքներին: Ընդամին, հայ բնակչության նկատմամբ հալածական քաղաքականությունն ուղեկցվում էր նաև բռնի մահմեդականացմամբ ու թրթալեզվացմամբ: Ըստ ազգագրագետ, պ.գ.թ. Հրանուշ Խառատյանի՝ այդ քաղաքականությունը «օրինաչափորեն համապատասխանում էր թրթալեզու-մահմեդական միասնական ժողովուրդ ձևավորվելու գործընթացին»¹²²: Հարկ ենք համարում նշել, որ անկախ ոչ հայանապաստ ժողովրդագրական, մշակութային ու դավանական գործընթացներից, համատարած քայքայման ու ավերումների այս ողբերգական ժամանակաշրջանում Կուրի ստորին հոսանքից մինչև Կասպից ծով և Ալաշերոնի թերակղզուց հյուսիս-արևմուտք ընկած ողջ մերձկասպյան տարածքը շարունակում էր բնակեցված մնալ տեղաբնիկ հայ էթնիկ տարրով: Շաքի-Շիրվան գոտում բնակվող հայերը եկվոր թյուրքական ցեղերի կազմակերպած կոտորածներից ու հալածանքներից փրկվելու նպատակով բնակություն էին հաստատում նաև լեռնալանջերում, ձորերով ու կիրճերով մեկուսացված վայրերում, որտեղ պաշտպանվելու տեսակետից տեղանքն ավելի ապահով էր¹²³:

Արևելյան Այսրկովկասի հայերի՝ վերոնշյալ ժամանակաշրջանի տարեգրությունը եզրափակելիս հարկ է նկատել, որ Շաքի-Շիրվան գոտին Նորից հայաշատ դարձավ, երբ XVIII դ. վերջերին զգալի չափով համալրվեց Արցախից տեղափոխված հայերով: Այսպես՝ Իրանի Աղա Մուհամմադ խանի՝ 1795 և 1797 թթ.-ի ավերիչ արշավանքների և ավարառությունների պատճառած սովի ու համաճարակների հետևանքով հուսահատության եզրին հասած արցախահայության մի սովոր զանգված 1797-1798 թթ.-ին հարկադրված տեղափոխվեց Վրաստան ու Շիրվան¹²⁴: Ընդ որում, իրենց պապենական օջախներից հեռանում էին բնակչության բոլոր խավերը¹²⁵: Հայրենակիցներին պատուհասած դառը

¹²² **Խառատյան (Առաքելյան) Հ.**, Ուղիներ (Աղվանների առասպելը), «Իրան-Նամե», 1994, № 2, էջ 14: Կովկասագետ Սեմյոն Բրոնևսկու տեղեկացմամբ՝ 1796-1897 թթ.-ին Հյուսիսային Կովկաս գաղթից հետո XIX դարի սկզբներին Ղուբայի պրովինցիայում Հին և Նոր Խաչմաս և Զիվար գյուղերից բացի դեռևս հայաբնակ էին Բարախում (I), Բարախում (II), Ղարաջալի և Ղարաղուրտ գյուղերը (տե՛ս **Броневский С.**, նշվ. աշխ., շ. II, отд. VI, гл. III, Ширван, § I (Ханство Кубинское), С. 383):

¹²³ **Տե՛ս** Списки населенных мест Российской империи по Кавказскому краю. LXV-Бакинская губерния. Список населенных мест по сведениям 1859 по 1864 г. Сост. глав. ред. ком. **Н. Зейдлицем**, Тифлис, 1870, С. 89.

¹²⁴ **Տե՛ս Բաֆֆի**, նշվ. աշխ., էջ 177, 212, 246, տե՛ս նաև **Լեո**, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Բ, էջ 405:

¹²⁵ 1805 թ. մայիսի 14-ի Զյուրակչայի պայմանագրով, երբ Արցախն անցավ Ռուսաստանի հպատակության տակ, 1798-1799 թթ.-ին այդտեղ բռնկված սովի ու ժանտախտի պատճառով հեռացած մեյիթներից ոմանք սկսեցին վերադառնալ հայրենիք և զբաղվել Շիրվանում ու Վրաստանում ցրված արցախցի հայրենակիցներին հայրենի եզերք վերադարձնելու գործով: Այդ նպատակով Վարանդայի տիրակալ Մելիք-Ջումշուդը 1806 թ.-ի դեկտեմբերի 2-ին խնդրագրով դիմում է Սանկտ Պետերբուրգի Լազարյան հռչակավոր գերդաստանի ներկայացուցիչ Մինաս աղա Լազարյանին՝ հայցելով նրա միջնորդությունը ցարին՝ Շիրվան տեղափոխված հայրենակիցներին հայրենիք վերադարձնելու թույլտվություն ստանալու համար: Մելիք-Ջումշուդն այդ քայլը հիմնավորում էր Արցախում կանոնավոր գործազուրկ ստեղծելու և ռուսական զորքերին աջակցելու գործոնով (տե՛ս **Բաֆֆի**, նշվ. աշխ., էջ 208-213): Նույն թվականին Մ. Լազարյանին համանման բովանդակությամբ նամակ են հղում նաև Արցախի հինգ մեյիթները, որպեսզի «...թոյլ տրուի նրանց հաւաքել իրանց զանազան երկրներում ցրիւ եկած ժողովուրդը Ղարաբաղում, իրանց՝ մեյիթների կառավարութեան ներքոյ...» (նույն տեղում, էջ 214): Կովկասի կառավարչապետ Ի. Գուրդուխչը, ընդառաջելով մեյիթների խնդրանքին, 1807 թ.-ի դեկտեմբերի 14-ի հրամանագրով հանձնարարում է փոխգնդապետ Տիխոնովսկուն Շիրվանի խանությունից վերադարձնել Արցախի բնակիչներին (տե՛ս **Մաղապյան Ա.**, Արցախի մեյիթությունները և մեյիթական տները XVII-XIX դդ., Երևան, 2007, էջ 230): Սակայն հետագա վավերագրերը փաստում են, որ զանգվածային վերադարձ, որպես այդպիսին, տեղի չի ունե-

ճակատագիրը խորապես հուզել է Մակար եպս. Բարխուտարյանցին¹²⁶, որը ցավով գրել է. «Տրուած եւ գերուած հայեր... միլիոնաւոր (նկատի է ունի մեծ քանակութիւնը - Գ. Ս.) հայ բնակիչներով հարուստ Արցախն իսպառ դատարկուած: ...Մի մասն կերակուր եղաւ 1798-1799 թուի սովին եւ ժանտախտին. մի մասն գերի գնաց Պարսկաստան, մի մասն գաղթեց Տաճկահայաստան, մի մասն Պարսկաստան, մի մասն Շաքի եւ Շամախի, մի մասն Կախէթ եւ Վրաստան, մի մասն Բագու, Ղուբա, Դարբանդ եւ Ռուսիա»¹²⁷: Փոքր-ինչ առաջ անցնելով՝ նշեմք, որ այս դեպքերն իրենց արձագանքն են գտել նաև XIX դ. պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովի (Յովսէփ Յովսէփյանց) «Թարիխ-ե Սաֆի» («Եմարտացի պատմութիւն») պարսկերէն պատմագրական երկում, որում հեղինակը գրում է. «Երեք տարի Ղարաբաղում երկնային ու երկրային աղետի՝ [երաշտի] հետևանքով անբերրիություն ու սով էր: Այնտեղի բնակչության մեծ մասը իր օրվա հացն ապահովելու համար ցրվել էր Շաքիի, Շիրվանի, Ղարաղաղի և [խարևան] մյուս երկրները»¹²⁸: Գեն. Պավել Ցիցիանովի՝ 1805 թ.-ի մայիսի 12-ին Ալեքսանդր I-ին հղած զեկուցագրում Շիրվան տեղափոխված հայերի թիվը նշվում է 8000 տուն¹²⁹: Ըստ մեկ այլ աղբյուրի՝ Շիրվանի վիճակում հաստատվել էր շուրջ 12.000 տուն¹³⁰:

Հաստատվելով Շիրվանում՝ արցախահայերը համայնել են հնաբնակ հայերի թիվը՝ երկրամասում հետզհետե կազմավորելով սովոր բնակչությամբ հայաբնակ գոտի: Եսայի Հասան-Ջալալյանցը հավաստում է. «Եւ երկիրն էր (իմա՝ Բուն Աղվանքը - Գ. Ս.) բարեյի և շէն և մարդաշատ, **թէ հայ ազգօք, որ ի Ղարաբաղու երկրէն ժողովուրդք յուլմբ անցեալ էին յերկիրն այն աւելի քան զտեղականսն.** (ընդգծումը մերն է - Գ. Ս.) և եթէ այլ ազգօք՝ որ բնիկ ի յերկրէն են...»¹³¹: Արցախահայերը Շաքի-Շիրվանում հիմնադրեցին շուրջ հարյուր գյուղ¹³²: Իրենց համար բնակության Նոր վայրեր ընտրեցին Նախկինում հայաբնակ և այժմ դատարկված կամ մասամբ բնակեցված հնավանդ գյուղերը, որտեղ գրեթէ առանց բացառության պահպանվել էին բնիկ հայերից մնացած բազմաթիվ եկեղեցիներ, արձանագիր խաչքարերով ու տապանաքարերով գերեզմանոցներ: Գյուղերի մեծ մասը վերականգնվեց նույն տեղում և շատ դեպքերում նույն անվան տակ շարունակեց պահպանել իր գոյությունը¹³³:

Արցախահայերն իրենց գործիմացությամբ և անսպառ եռանդի շնորհիվ էապես նպաստեցին երկրամասի հայերի սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային կյանքի

ցել: Այն մասամբ կատարվել է Վրաստանից ու Շաքիից: Այսպես՝ 1817 թ.-ի կետերին 187 ընտանիք Շաքիից վերադարձել էր Արցախ (տե՛ս Акты, собранные Кавказской археологической комиссией (այսուհետ՝ АКАК), т. VI, Тифлис, 1874, ч. I, док. № 1081, С. 721), իսկ 1820 թ. Կախէթից որոշ ընտանիքներ վերադարձել էին ոչ թէ Արցախ, այլ՝ Շիրվան (տե՛ս **Սմբատեանց Ս.**, նշվ. աշխ., էջ 140): Բաֆֆին այդ առիթով գրում է. «Թեւ Ղարաբաղի գաղթականների մի մասը Վրաստանից տեղափոխուեցաւ իւր հայրենիքը, բայց դարձեալ դեռ բաւական թուով մնացել էին այնտեղ: Շամախու գաւառը գաղթողներից դեռ ոչ ոք չէր վերադարձել» (**Բաֆֆի**, նշվ. աշխ., էջ 216):

¹²⁶ Երախտաշատ հոգևորական Մակար եպս. Բարխուտարյանցը ծննդյամբ Արցախի Խանաձախ գյուղից էր և խորապես իրազեկ հայրենի Արցախի ժողովրդագրական տեղաշարժերին:

¹²⁷ **Բարխուտարեանց Ս.**, Արցախ, Բագու, 1895, էջ Ը:

¹²⁸ **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, Եմարտացի պատմություն: Թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները **Զ. Կոստիկյանի**, Երևան, 2000, էջ 73:

¹²⁹ Տե՛ս АКАК, т. II, Тифлис, 1866, док. № 1436, С. 703, տե՛ս նաև **Լեո**, Հայոց պատմություն, հ. Դ, Երևան, 1984, էջ 252:

¹³⁰ Տե՛ս **Բելնազարեանց Ա.**, Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 242:

¹³¹ **Եսայի Հասան-Ջալալեանց**, էջ 26:

¹³² Տե՛ս **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները՝ հորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 12:

¹³³ Տե՛ս **Կարապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 4:

հետագա առաջընթացին: Լրանց ջանքերով ևորահիմն գյուղերում կառուցվեցին ու վերականգնվեցին եկեղեցիներ, բացվեցին եկեղեցական-ծխական դպրոցներ և այլն¹³⁴:

THE STAGES OF IMPLEMENTATION OF THE POLICY OF ETHNIC CLEANSING AND GENOCIDE OF ARMENIANS IN THE EASTERN CIS-CAUCASUS (11TH-20TH CC.) (PART 1)

GEVORG STEPANYAN

NAS RA Institute of History, Department of History of Armenian Colonies and Diaspora, Head, Doctor of Sciences in History, Professor, Yerevan, Republic of Armenia

The aim of the article is to present the motives and implementation stages of ethnic cleansing and genocidal policy perpetrated towards the indigenous Armenian population during the 11th-20th centuries in the Eastern Cis-Caucasus – in the territory stretching from the Kur Valley to the Apsheron Peninsula, on the basis of various primary sources (archival documents, statistical materials, periodical press, theme related literature).

The work is written by a combined examination of facts, applying the principles of historical investigation and historical-comparative analysis. The level of reliability and validity of the sources through their comprehensive study have been verified.

Through the combination of facts the following phases of the history of the main issue are presented: the policy of ethnic cleansing and genocide of Armenians in the Eastern Cis-Caucasus were still implemented in the 11th-18th centuries when the region regularly appeared under the invasions and dominion of various conquering nomadic tribes (Turk-Seljuks, Mongol-Tatars, Tamerlane, nomadic Turkmen tribes of Kara-Koyunlu and Ak-Koyunlu, Kizilbash invasions followed by the Turkish-Persian wars, Sunni Lezgins, invasions of Nader Shah and Agha Mohammad Khan). As a result, some part of the Armenian population was deported and left native lands or forcedly accepted the Muslim religion of the conquerers. The next phase of ethnic cleansing and atrocities was the period of the Armenian-Tatar clashes (1905-1906). Later, the policy of ethnic cleansing and genocide was implemented at state level already during the Musavat regime of the artificial “Azerbaijan” formation (1918-1920), and finally during the Soviet regime (1920-1990).

The article substantiates the fact that the indigenous Armenian population of the region was subjected to ethnic cleansing and genocide in its cradle, just as the Young Turks carried out the extermination of the Western Armenians in 1915-1916 in Western Armenia. Therefore, this policy should be described as a continuation and an integral part of the Genocide of Armenians, as the Armenian Genocide with its geographical coverage (from Cilicia to Baku), was a consequence of the implementation of a comprehensive pan-Turkic program.

There are numerous references to the issue in the historical literature, though the comprehensive study of ethnic cleansing and genocidal policies of Armenians in the Eastern Cis-Caucasus – in the territory stretching from the Kur Valley to the Apsheron Peninsula, has not been the subject of a separate study.

Keywords: *Eastern Cis-Caucasus, Baku province, left bank of Kur, Pan-Turkism, ethnic cleansing, xenophobia, genocide, deportation.*

¹³⁴ Մանրամասն տե՛ս **Ստեփանյան Գ.**, Արցախահայերի քաղաքակրթական ավանդը Շիրվանի և Ապշերոնի զարգացման գործում (իսամառոտ ակնարկ): Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2019, էջ 26-57:

ЭТАПЫ ОСУЩЕСТВЛЕНИЯ ЭТНИЧЕСКИХ ЧИСТОК АРМЯН И ГЕНОЦИДАЛЬНОЙ ПОЛИТИКИ В ВОСТОЧНОМ ЗАКАВКАЗЬЕ (XI-XX ВВ.) (ЧАСТЬ 1)

ГЕВОРГ СТЕПАНЯН

*заведующий отделом истории армянских колоний и
Диаспоры Института истории НАН РА,
доктор исторических наук, профессор,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – на основе разнообразных источников (архивные документы, статистические материалы, периодическая печать, тематическая литература) представить причины и этапы осуществления этнических чисток и геноцидальной политики по отношению к коренному армянскому населению Восточного Закавказья в течение XI-XX вв., на территории, простирающейся от долины р. Куры до Апшеронского полуострова.

Работа изложена с применением принципов сравнительно-исторического анализа, сопоставительного изучения фактов. Степень достоверности и подлинности источников уточнена нами путем их всестороннего исследования.

На основе сопоставления фактов история проблемы представляется следующими этапами: политика этнических чистки и погромы по отношению к армянам Восточного Закавказья в XI-XVIII вв., когда регион подвергался захватническим набегам и установлению господства турок-сельджуков, монголо-татар, Тамерлана, кочевых туркменских племен кара-коюнлу и ак-коюнлу, кзлбашей, а также последовавшими за всем этим турецко-персидским войнами, походам суннитов лезгинов, Надир-шаха и Ага-Могамед-хана. Вследствие всего этого определенная часть армянского населения была насильственно депортирована из родных очагов или вынужденно приняла веру мусульманских захватчиков. Следующий этап этнических чисток и погромов армянского населения происходил в период армяно-татарских столкновений 1905-1906 гг. Затем политика этнических чисток и геноцида осуществлялась уже на государственном уровне мусаватистским режимом искусственного образования, именуемого «Азербайджан», в 1918-1920 гг., и наконец – в период советского периода в 1920-1990 гг.

В статье обосновывается тот факт, что коренное армянское население края было подвергнуто этническим чисткам и геноциду на своей родине, так же, как младотурки осуществили геноцид западных армян в 1915-1916 гг. в Западной Армении. Следовательно, эту политику следует квалифицировать как продолжение и составную часть политики геноцида армян, так как геноцид армян в своем географическом охвате (от Киликии до Баку) был следствием реализации единой программы пантюркизма.

Хотя в исторической литературе неоднократно обращались к рассматриваемой проблеме, однако она не становилась предметом отдельного всеобъемлющего исследования.

Ключевые слова: *Восточное Закавказье, Бакинская губерния, левобережье Куры, пантюркизм, этнические чистки, геноцид, депортация.*

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

**ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ***

ՀՏԴ 352.075 (479.25)

DOI: [10.52063/25792652-2021.1-35](https://doi.org/10.52063/25792652-2021.1-35)

ԿԱՏԵՐԻՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
հանրային կառավարման ամբիոնի ասիստենտ,
բաղաժանանի գիտությունների թեկնածու,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
katya.altunyan@ysu.am*

Հոդվածի նպատակն է համայնքների խոշորացման դրական և բացասական կողմերի վերլուծության հիման վրա ուղենշել հանրային կառավարման բաղադրիչ հանդիսացող, տեղական ինքնակառավարման համակարգի արդիականացման գերակա խնդիրները ՀՀ-ում: Խնդիր է դրվել ուսումնասիրության միջոցով ներկայացնելու համայնքների խոշորացման գործընթացի փոփոխությունները՝ վերջին տարիների հասարակական-բաղաժանանի կերպափոխումների լույսի ներքո: Հոդվածում քննվել են համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման որոշիչ գործոնները՝ վարչատարածքային փոփոխությունները և ապակենտրոնացման խորացման քայլերը գնահատելու համար:

Հետազոտությունն իրականացվել է համագիտական և նեղ մասնագիտական մեթոդաբանության հիման վրա: Համայնքների խոշորացման տեսական հիմքերն ուսումնասիրվել են ապակենտրոնացման տեսությունների համեմատական մեթոդի կիրառմամբ: Հոդվածի շրջանակներում ներկայացված մտահանգումները՝ ընդհանուրից մասնավոր և հակառակը, դուրս են բերվել դեդուկցիայի և ինդուկցիայի մեթոդներով: Համապարփակ վերլուծության են ենթարկվել տեղական ինքնակառավարման դաշտը կարգավորող իրավական ու օրենսդրական հիմքերը:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ համայնքների խոշորացման հայեցակարգային հիմքերը վերանայման կարիք ունեն: Այդ են պահանջում հատկապես հասարակական-բաղաժանանի նոր իրողությունները և հանրային կառավարման համակարգի արդիականացման ընթացքը: Մյուս կողմից, հայեցակարգային բարեփոխումների անհրաժեշտությունը թելադրված է հանրային կառավարման համակարգի և տեղական մարմիններում առկա խնդիրների վերաարժևորման անհրաժեշտությամբ:

* Հոդվածը ներկայացվել է 30.01.2021թ., գրախոսվել՝ 01.02.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

Հիմնաբառեր՝ տեղական ինքնակառավարումը ՀՀ-ում, համայնքների խոշորացում, սուբվենցիա, խոշորացված համայնք, համայնքային միավորում, վարչատարածքային բարեփոխում, հանրային կառավարում:

Ներածություն

Հայաստանի Հանրապետության (ՀՀ)՝ արտաքին աշխարհի հետ համընթաց զարգացումը և հանրային կառավարման բարեփոխումների շարունակականության ապահովումը պահանջում են պարբերաբար վերաարժևորել կառավարման հայեցակարգային հիմքերը: Ժողովրդավարական կերպափոխումների միջազգային փորձը ցույց է տալիս, որ անցումային (տրանզիտի) փուլում գտնվող պետությունները հանրային կառավարման բարեփոխումները, որպես կանոն, իրականացնում են մեխանիկորեն, առանց ազգային առանձնահատկությունները, ռեսուրսներն ու հնարավորությունները ներուժը ճշգրիտ հաշվարկելու: Բացի այն, որ դա չի լուծում առկա խնդիրները, դեռ մի բան էլ ավելացնում է նորերը: Հարկ է, այդուհանդերձ, նշել, որ կառավարման հաջող փորձը պետք է լինի ուղենիշ ցանկացած պետության համար, քանի որ այդ դեպքում է հնարավոր առնվազն արտաքին աշխարհի հետ համընթաց զարգանալ: Սակայն մշտապես միջազգային փորձի վրա հիմնվելու և դրանից «կառչած լինելու» բացասական հեռանկարն այն է, որ ժողովրդավարության անցումային փուլում գտնվող պետություններն անընդհատ փնտրտուքի մեջ են: Այդ անվերջանալի փնտրտուքը (և ոչ միայն) իրապես խանգարում է պետության ինքնուրույն զարգացման ու արդիականացման գործընթացներին:

Ժողովրդավարական պետության կայացման և հանրային կառավարման արդի համակարգի ինստիտուցիոնալացման պարտադիր պայման են տեղական ինքնակառավարման ավանդույթների հաստատումը կամ «ներքևից» (կառավարման տեղական օղակից) ժողովրդավարական արժեքանության սերմանումն ու ամրապնդումը, ինչպես նաև կառավարման ու իշխանության ապակենտրոնացումը խորացնելը: Այս իմաստով ՀՀ-ում տեղական ինքնակառավարման արդի համակարգի հիմքերը դրվել են դեռևս 2000-ականների սկզբին՝ հանրային կառավարման բարեփոխումներ անցկացնելու քաղաքականության շրջանակներում: Թեև իրականացվել են սահմանադրաիրավական և ինստիտուցիոնալ բնույթի միջոցառումներ, ընդունվել են համապատասխան կարգավորումներ, ՀՀ-ում տեղական ինքնակառավարման մակարդակում առկա խնդիրները անկախությունից մինչև օրս լիարժեք չեն լուծվել: Այսպես օրինակ՝ մարզերի ու համայնքների համաչափ զարգացում ապահովելը, տնտեսական ու ֆինանսական թույլ ապակենտրոնացումը, որը պայմանավորում է իր հերթին քաղաքական ապակենտրոնացման ցածր աստիճան: Համայնքներում շարունակում են խնդիրներ մնալ հանրային ծառայությունների հասանելիությունը, ենթակառուցվածքների կառուցման ու տնտեսության զարգացման միջոցների սղությունը, համայնքային ռեսուրսների անարդյունավետ բաշխումը, կառավարումը և այլն:

Հատկանշական է, որ ապակենտրոնացման տեսության համաձայն՝ տեղական ինքնակառավարման համակարգի այսօրինակ խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է ապահովել վարչատարածքային, ֆինանսական ու տնտեսական ապակենտրոնացում: Ապակենտրոնացման երեք գործընթացներն էլ ներառվել են ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների քաղաքականության մեջ: Սակայն ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, հիմք է ընդունվել վարչատարածքային բարեփոխումների միջոցով ապակենտրոնացման մյուս երկու՝ ֆինանսական ու տնտեսական ձևերը խորացնելու առաջնահերթությունը: Ըստ այդմ, համայնքների խոշորացումը ապակենտրոնացման գործընթաց է, որն իրականացվում է վարչատարածքային փոփոխությունների, այն է՝ համայնքների միավորման կամ կարգավիճակի փոփոխության եղանակով: Այդ նպատակով ՀՀ-ում ընդունվել է համայնք-

ների խոշորացման հայեցակարգը, որը գրեթե մեկ տասնամյակ է, ինչ չի վերանայվել և կարիք ունի վերաարժևորման:

2018 թվականին ՀՀ համայնքների խոշորացման գործընթացի ժամանակավոր «սառեցումը», ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, նպատակ ուներ ոչ թե վերանայելու խոշորացման հայեցակարգի՝ մինչ այդ գործող տրամաբանությունը, այլ մշակելու նոր մոտեցումներ՝ գործընթացը շարունակելու համար: Ակնհայտ է, որ խոշորացումից առհասարակ հրաժարվելու նպատակ նոր ձևավորված քաղաքական էլիտան և լիազոր գերատեսչությունը չէին դրել: Պաշտոնական հայտարարություններից առնվազն պարզ է դառնում, որ խնդիրը պարզապես համայնքների խոշորացման ընթացակարգային ու գործիքային միջոցների վերանայումն էր, բացասական երևույթների պատճառների վերհանումը, խոշորացման ուղղությամբ առավել կշռադատված քաղաքականություն վարելու ցանկությունը և, ինչու չէ, տնտեսական հեղափոխության նպատակի իրականացումը: Համայնքների խոշորացման գործընթացի էությունը և փոփոխությունները հասկանալու նպատակով սույն ուսումնասիրության մեջ կքննարկվեն գործընթացի որոշ դրական ու բացասական կողմերը:

Համայնքների խոշորացում և միջհամայնքային միավորումներ

Տեղական ինքնակառավարման միավորներում խոշորացման գործընթացի ուսումնասիրության տեսական հիմքերը ներկայացված և հիմնավորված են «Բարեփոխումների տեսության» շրջանակներում (սույն՝ «Теория реформ»), որի բազում ուղղություններից է տեղական ինքնակառավարման համակարգի զարգացումն ու ժողովրդավարացումը: Այդ տեսության համաձայն՝ համայնքների խոշորացման դրական կողմերի շարքում նշվում են հանրային (համայնքային) ծառայությունների ծավալային աճը, համայնքների ֆինանսական ու բյուջետային կարողություններն ավելացնելու հնարավորությունները, քաղաքական հովանավորչության ձևերից խուսափելու ինստիտուցիոնալ եղանակները և այլն¹³⁵: Համայնքների խոշորացումը, սույն տեսության համաձայն, հնարավորություն է տալիս խորացնելու ապակենտրոնացման քաղաքականությունը՝ նոր կազմավորված (խոշորացված) համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահելով ավելի մեծ ծավալի լիազորություններ և դրանով իսկ մեծացնելով վերջիններիս դերը հանրային կառավարման համակարգում: Բարեփոխումների տեսության մեջ հանդիպում ենք «համայնքների խոշորացում» հասկացության սահմանմանը, որը նշանակում է առանձին բնակավայրերի համայնքի կարգավիճակից զրկում և դրանց միավորում նոր համայնքի սահմաններում¹³⁶: Սույն սահմանումը տրվում է նաև ՀՀ համայնքների խոշորացման հայեցակարգում, ինչը նշանակում է, որ համայնքների խոշորացման տրամաբանությունը մեզանում ևս կիրարկվել է միջազգայնորեն ճանաչված տեսությանը համահունչ:

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում խոշորացման գործընթացի կարևորությունն ու նպատակահարմարությունը հասկանալու համար ուսումնասիրությունը սկսել ենք վարչատարածքային բաժանման խնդրից: Անկախությունից ի վեր մի շարք փորձագետներ ու պրակտիկ գործիչներ ՀՀ վարչատարածքային բաժանումը գնահատել են անարդյունավետ: Վարչատարածքային միավորներն աչքի են ընկել խիստ անհամաչափությամբ և մասնատվածությամբ: Այդուհանդերձ, մարզերի բաժանումը կատարվել է այնպես, որ յուրաքանչյուր մարզ ունենա համապատասխան ռեսուրսային հենք՝ պետության սոցիալ-տնտեսական

¹³⁵ St' u Sharpe, L. J. Theories and Values of Local Government, Political Studies, Political Studies, 1970, P. 153-174:

¹³⁶ Ст'у Мирошниченко Н.В., Государственное и муниципальное управление в XXI веке: теория, методология, практика, Издательский дом «Среда», Чебоксары, 2018, С. 80-88.

ընդհանուր համակարգում մասնագիտանալու համար: Մարզերի ձևավորման ժամանակ հաշվի են առնվել նախկին շրջանների առանձնահատկությունները և գործող սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքները: Եվ վերջապես տարածքների բաժանումը մարզերի կատարվել է այնպես, որ բացառվի շրջանների տրոհումը տարբեր մարզերի միջև¹³⁷: Ավելին, վարչատարածքային անճշտությունների ու փոփոխությունների շուրջ հնարավոր հանրային վեճերը կանխելու նպատակով գրեթե բոլոր բնակավայրերը ստացել են առանձին համայնքի կարգավիճակ, ինչը նույն փորձագետների կարծիքով խորացրել է համակարգի մասնատվածությունը: Նշենք, որ 1995 թվականին՝ ՀՀ նոր տարածքային վարչական բաժանումը հաստատատելուց հետո, 1996 թվականին ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը: Այս երկու հիմնարար օրենքներով ճանաչվեցին վարչատարածքային միավորների սահմանները: 2002 թվականին «Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիան» ստորագրելուն պես ՀՀ-ն ձեռնամուխ եղավ կառավարման համակարգի ապակենտրոնացման խորացմանը, որին մեծապես նպաստեցին տեղական ինքնակառավարման մասին նոր օրենքի ընդունումը, 2005 թվականի սահմանադրական բարեփոխումները, ինչպես նաև «Երևանում Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը: 2011 թվականին Կառավարությունն ընդունեց «Միջհամայնքային միավորումների ձևավորման և Համայնքների խոշորացման» հայեցակարգը, որով սկիզբ դրվեց վարչատարածքային փոփոխությունների նոր փուլին¹³⁸:

Տեսականորեն նոր վարչատարածքային միավորների ձևավորման աշխատանքները սկսվեցին 2013 թվականից, որոնց ավարտին՝ 2015 թվականին, ՀՀ Ազգային ժողովը հավանություն տվեց Դիլիջան, Թումանյան և Տաթև համայնքների խոշորացման գործընթացին: Վերոնշյալ երեք համայնքներում անցկացված տեղական հանրաքվեի դրական արդյունքներն առնվազն փաստում են, որ խոշորացումը պահանջված էր տեղական ինքնակառավարման համակարգում: Պահանջված լինելու առավել ակնհայտ պատճառների շարքում կարելի է նշել նույն վարչատարածքային մասնատվածությունը, որը գործնականում ազդել է կառավարման արդյունավետության վրա, ինչպես նաև համայնքների թույլ ենթակառուցվածքները, հանրային ծառայությունների ցածր որակը, համայնքային խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների սակավությունը և այլն: Գիշտ է, միջազգային պարտավորությունների համատեքստում ՀՀ կառավարությունը համաձայնվեց տեղական ինքնակառավարման մարմիններում կառավարումը հանձնել համայնքներին, այդուհանդերձ խոշորացման գործընթացից հետո կենտրոնական իշխանությունից կախվածությունը չնվազեց: Հանրային կարծիքի ուսումնասիրությունների համաձայն՝ խոշորացման գործընթացի արդյունքները գոհացնող չեն եղել, ըստ այդմ, գործընթացի հանրային օգտակարության աստիճանը բավականին ցածր է գնահատվել¹³⁹: Համայնքների միավորման վերաբերյալ առկա դժգոհությունները, որպես կանոն, պայմանավորված են եղել նաև համայնքային փնջերի կազմավորման մոդելների և դրանցում համայնքների ընդգրկման վարչատարածքային, տնտեսական

¹³⁷ Տե՛ս Թումանյան Դ., Գիմիշյան Ս., Ամյան Կ., Թումանյան Լ. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման օպտիմալացումը և տեղական ինքնակառավարման զարգացումը, Երևան, Տիգրան Մեծ հրատարակչություն, 2003, էջ 6:

¹³⁸ Տե՛ս «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», Եր., 2011:

¹³⁹ Տե՛ս ՀՀ հինգ բազմաբնակավայր համայնքներում հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների վերաբերյալ քաղաքացիների գոհունակության ամփոփիչ գնահատում, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Հայաստանում Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գրասենյակ, ՄԱԿ-ի Չարգացման ծրագիր, Երևան, 2019, 69 էջ:

Նպատակահարմարության վերաբերյալ փորձագիտական հիմնավորումների թուլությամբ, ինչպես նաև կենտրոնական իշխանության ազդեցությունների, որոշումների կայացման ոչ բավարար թափանցիկության, հրապարակայնության և մասնակցության խնդիրներով¹⁴⁰:

Առաջին խոշորացումից հետո տեղական ինքնակառավարման մարմիններում ապակենտրոնացումը շարունակվեց 2015 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վրա հիմնվելով: Սահմանադրությունից փաստացի հանվեց խոշորացումից առաջ տեղական հանրաքվե անցկացնելու դրույթը, ինչը Եվրոպական խարտիայի ամենաառաջնային սկզբունքը չկատարելուց բացի նշանակում էր հանրային կարծիքի ստորադասում: Մինչ այդ օրենքով նախատեսվում էր տեղական հանրաքվեի անցկացումը, սակայն նշվում էր, որ հանրաքվեի բացասական արդյունքները չեն կարող խոչընդոտել խոշորացման գործընթացի իրականացումը: Ինչպես տեսնում ենք, տեղական հանրաքվեի ինստիտուտը, որպես որոշումների կայացման գործընթացի վրա ազդելու գործիք, ի սկզբանե լիարժեք չի կիրարկվել տեղական ինքնակառավարման մակարդակում: Իսկ արդեն հաջորդ՝ 2016 և 2017 թվականներին, խոշորացման փնջերում տեղական հանրաքվեներ առհասարակ չեն անցկացվել: Ավելին, խոշորացման գործընթացի մի շարք սկզբունքներ, ինչպիսիք են, օրինակ, միավորվող համայնքների ընդհանուր վարչական սահմանի առկայությունը, բնակավայրերի բնակիչների համատեղելիությունը և մենթալությունը, լիարժեք հաշվի չեն առնվել: Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ համայնքների խոշորացումը, որպես վարչատարածքային փոփոխություններ կատարելու գործընթաց, դժվար է համարել արդյունավետ: Անարդյունավետության՝ վերը թվարկված պատճառների շարքում կարելի է ավելացնել նաև այն, որ խոշորացման գործընթացն իրականացվել է միավորման տարբեր մոդելներով: Դրանց մեջ են նախկին վարչական շրջանի սահմաններում միավորված համայնքների, նախկին շրջկենտրոնից կամ քաղաքային ու գյուղական համայնքներից կազմված համայնքների, միայն գյուղական համայնքներից կազմված համայնքների մոդելները:

Ի լրումն արդեն քննարկվող խնդիրների՝ ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի մասնատվածության խնդիրը լուծելու անհրաժեշտությունից դրված՝ որոշում ընդունվեց ստեղծել նոր **բազմաբնակավայր համայնքներ**, որը կրկին պետք է իրականացվեր համայնքների խոշորացման միջոցով: Բազմաբնակավայր համայնքների ձևավորման ամենախնդրահարույց կետը վերաբերում է խոշորացվող կամ միավորվող համայնքների «**արդյունավետ թվին**» (վերջինը ենթադրում է սահմանային այն միավորը, որը թույլ է տալիս արդյունավետ կառավարել ու ղեկավարել): Հասկանալու համար, թե ինչ շեշտադրումներով է ընթանում տեղական միավորների արդյունավետ թվի մասին մասնագիտական խոսույթը (դիսկուրսը), քննարկենք համայնքների համաչափ զարգացման և արդյունավետ կառավարման միջազգային փորձը: Եվրոպական երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղական ինքնակառավարման միավորների արդյունավետ թիվը տարբերվում է, իսկ այսպես կոչված խոշորացվող համայնքների արդյունավետ թիվը որոշում են, որպես կանոն, տնտեսական նպատակահարմարության, ժողովրդավարության, հանրային ծառայությունների մատուցման չափանիշներով: Հիմք ընդունելով այս տրամաբանու-

¹⁴⁰ Տե՛ս Վարչատարածքային բարեփոխումների երրորդ փուլում միավորված Արագածոտնի մարզի Ապարան, Ճաղկահովիտ, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Վարդենիս, Լոռու մարզի Ստեփանավան, Տաշիր, Գյուլագարակ, Կոտայքի մարզի Բյուրեղավան, Եղվարդ, Մեղրածոր, Չարենցավան, Շիրակի մարզի Անի, Ախուրյան, Մարմարաշեն, Սյունիքի մարզի Սիսիան, Վայոց Ձորի մարզի Արենի, Տավուշի մարզի Բերդ համայնքներում կառավարման արդյունավետության ուսումնասիրություն, «Իրավաբանների հայկական ասոցիացիա», «Մարդկային կապիտալի զարգացման կենտրոն», Արթիկ 2019, էջ 5:

թյունը՝ ՀՀ-ում նույնպես համայնքների խոշորացման հիմքում դրվել են նույն չափանիշները: Մինչև այժմ համայնքների միավորման գործընթացի ուսումնասիրությունը փաստում է, որ 1-ին փուլում՝ 2015 թվականին, ձևավորվել է 3, 2-րդ փուլում՝ 2016 թվականին՝ 15, 3-րդ փուլում՝ 2017 թվականին՝ 34 բազմաբնակավայր համայնքներ: Սակայն խոշորացված ու բազմաբնակավայր համայնքներն արդյունավետ կառավարելու խնդիրները և դրանց զարգացման թույլ տեմպը փաստում են գործարկման *մեթոդական սխալների մասին*: Մանրամասնելով վերջին միտքը՝ նշենք, որ ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում համայնքների խոշորացումը բարդացնում է արդյունավետ կառավարման կառուցակարգը (հատկապես գյուղական համայնքների դեպքում): Կառավարման կառուցակարգի բարդացումը, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, միամակարդակ տեղական ինքնակառավարման համակարգ ունենալու հանգամանքով է պայմանավորված: Այսպես օրինակ՝ մեկ քաղաքի շուրջ 30-ից 40 համայնքների միավորումն արդեն իսկ ղեկավարման բարդություններ է ստեղծում: Համայնքների խոշորացման հայկական փորձը փաստում է, որ խոշորացման բացասական կողմերից է կառավարման կառուցակարգերի բարդացումը: Այդ խնդիրը բացակայում է եվրոպական երկրներում, քանի որ դրանց մեծ մասում գործում են տեղական ինքնակառավարման երկրորդ, երրորդ մակարդակներ: Ավելին, այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Չեխիան և Հունգարիան, երկրորդ ու երրորդ մակարդակների ամպլայության շնորհիվ փոքր համայնքները չեն խոշորացվում, և գործող կառավարման բարդ կառուցակարգերն ապահովում են արդյունավետ կառավարում: Ըստ այդմ, բազմաբնակավայր համայնքների կազմավորումը արդյունավետ չէ միամակարդակ տեղական ինքնակառավարման համակարգում: Երկրորդ մեթոդական սխալն այն է, որ ՀՀ տարածքում որոշ համայնքների աշխարհագրական դիրքը, ինչու չէ՛ նաև ոչ բավարար նյութական և ոչ նյութական ներուժը չեն խթանում խոշորացումը, ինչը խոշորացման դեպքում երբեմն հանգեցնում վարչատարածքային միավորների կազմալուծման: Կերչինի լավ օրինակ է Սյունիքի մարզի Կապան քաղաքում իրականացված խոշորացումը, որից հետո մնացել են փոքր թվով չխոշորացված համայնքներ: Հարկավոր է հաշվի առնել այս խնդիրը, խոշորացվող համայնքների արդյունավետ թիվը որոշելու հարցը և խուսափել մեթոդական այլ սխալներից:

Շարունակելով նշենք, որ ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում համայնքների խոշորացման բացասական կողմերը շատ են: Այդուհանդերձ, համակարգային խանգարումներ ունեցող խոշորացման գործընթացը համայնքներում ծրագրերի կառավարման և իրականացման տեսանկյունից ունեցել է դրական տեղաշարժ: Խոշորացված համայնքների ծրագրային փաստաթղթերի վերլուծությունից պարզ է դառնում, որ համայնքների խոշորացումն էականորեն նպաստել է **սուբվենցիոն ծրագրերից** օգտվելու համայնքների հնարավորությունների ընդլայնմանը: Հայտնի է, որ այսօր սուբվենցիոն ծրագիրը համայնք-պետություն հորիզոնական համագործակցության ձևաչափ է, որը ենթադրում է համայնքի կողմից կապիտալ որևէ ծրագիր ներկայացվելու և կառավարության կողմից դրական եզրակացություն ստանալու դեպքում այդ ծրագրի արժեքի մի մասի համաֆինանսավորում պետական բյուջեի միջոցներից: Ներկա դրությամբ ՀՀ Կառավարությունը սահմանում է սուբվենցիոն ծրագրերի ուղղվածությունները, ինչպես նաև սուբվենցիոն ծրագրից օգտվելու համար համայնքի համաֆինանսավորման չափը որոշելու նորմերը: ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիայի չափաբաժինը տոկոսային հարաբերությամբ սահմանվում է Կառավարության որոշմամբ ընդունված կարգով¹⁴¹: Սուբվենցիոն ծրագրերի

¹⁴¹ Տե՛ս ՀՀ կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի N62-Ն որոշման «ՀՀ տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտի մշակման,

գործարկման այս նոր տրամաբանությունը հաստատվել է 2018 թվականին: Փաստաթղթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամենացածր տոկոսով տրամադրվող սուբվենցիաները տրամադրվում են այգիների, պուրակների և հասարակական շենքերի կառուցում և/կամ վերանորոգում իրականացնելու ծրագրերին: Ամենաբարձր՝ 65-70 տոկոսով տրամադրվող սուբվենցիաներ տրամադրվում են խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի, ոռոգման համակարգի, փողոցային լուսավորության համակարգի, մանկապարտեզների կառուցման և/կամ վերանորոգման, բնակավայրերի գազաֆիկացման ծրագրերին: Տոկոսադրույքների սահմանման կարգում կարևոր չափանիշ է համարվում նաև մայրաքաղաքից համայնքի հեռավորությունը: Այսպես օրինակ՝ եթե մայրաքաղաքից մինչև 60 կմ հեռավորություն ունեցող բնակավայրին խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցման և/կամ վերանորոգման համար տրամադրվող սուբվենցիայի պետության չափաբաժինը 50% է, ապա 100 կմ-ից ավելի հեռավորություն ունեցող բնակավայրինը՝ 65%: Լայն արտոնություններով են սահմանվում հատկապես սահմանամերձ և (կամ) բարձր լեռնային բնակավայրերի սուբվենցիաների չափաբաժինը, որն արդեն վերը նշված բնագավառում ենթադրում է 70%-ի ֆինանսավորում: Սուբվենցիաների տրամադրման նախկին կարգով նման չափանիշներ չեն սահմանվել և բյուջեից տրամադրվել են ընդհանուր գումարներ: Հատկանշական է նաև, որ ՀՀ վարչապետի 2019 թվականի թիվ 278-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից հավանության արժանացած սուբվենցիայի ծրագրային հայտերի ցանկում կարելի է տեսնել պահանջվող ընդհանուր գումարի, համայնքի մասնակցության և պետությունից պահանջվող գումարի չափերը (առավել մանրամասն տե՛ս *աղյուսակ 1-ը*):¹⁴²:

Աղյուսակ 1. Սուբվենցիոն ծրագրերի համաֆինանսավորումը

	2018թ.	2019 թ. հունիսի 18-ի դրությամբ (4 նիստերով)	2019 թ. հունիսի 20 (5-րդ նիստ)	2019 թ. հունիսի 26 (6-րդ նիստ)	2020 թ.
Հավանության արժանացած ծրագրերի թիվը	-	239	-	-	-
Պետբյուջեից համաֆինանսավորման չափը, ՀՀ դրամով	1,620,693,828	6,236 մլրդ	1,723 մլրդ	8,02 մլրդ	17,467 մլրդ
Համայնքների համաֆինանսավորման չափը	-	5,038 մլրդ	1,259 մլրդ	8, 22 մլրդ	24,849 մլրդ

Ընդունված կարգավորումները դրական են, քանի որ նշված տրամաբանությամբ պետությունը ֆինանսավորում է տրամադրում այն ժամանակ, երբ հաստատվում է, որ համայնքն ի վիճակի է ծրագրով պահանջվող գումարի իր մասնաբաժինն ապահովել համայնքի բյուջեից: Այդ դեպքում համայնքներն իրենք շահագրգռված են լինում իրենց բյուջեի գումարները օգտագործելու նպատակային: Ի վերջո պարզ է՝ որքան մեծ է համայնքային բյուջեն, այնքան ավելի մեծ է լուրջ սուբվենցիոն ծրագրի դիմելու

ներկայացման, քննարկման և հաստատման կարգ», էջ 8 https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2019/01/62v_voroshum.pdf:

¹⁴² Տե՛ս ՀՀ վարչապետի 2019 թվականի թիվ 278-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից հավանության արժանացած սուբվենցիայի ծրագրային հայտերի ցանկ, http://mtad.am/u_files/file/ME/1_4_nister.pdf:

հնարավորությունը: Այստեղ հարկ է նաև հավելել, որ համայնքային բյուջեի ծավալը մեծացնելու տեսանկյունից համայնքների խոշորացումը, անկասկած, դրական ազդեցություն է ունեցել, բանի որ այդ գործընթացի շնորհիվ միավորվել են ոչ միայն համայնքները, այլև դրանց բյուջեները: Բազմաթիվ փոքր ու ֆինանսատնտեսական թույլ ներուժ ունեցող համայնքներ այդ կերպ կարողացել են լուծել ենթակառուցվածքների վերանորոգման, նորերի կառուցման և բազում այլ խնդիրներ: Այսպես օրինակ՝ Սյունիքի մարզի Ագարակ համայնքը Կապանին միացնելուց հետո հնարավոր է դարձել ոռոգման ցանցի և ջրի անցկացման խնդիրը լուծել սուբվենցիոն ծրագրով, ինչը համայնքում չի հաջողվել իրականացնել երկար տարիներ: Այլ համայնքներում մեծացել է ցանքատարածության շրջանառությունը, վերանորոգվել են ենթակառուցվածքները, ընդլայնվել հողերը, ստեղծվել են ֆերմերային տնտեսություններ: Ըստ այդմ, համայնքների ֆինանսական ներուժի բարձրացումը տեղական ինքնակառավարման համակարգի համար մնում է օբյեկտիվ անհրաժեշտություն: Ձեռնարկված վարչատարածքային բարեփոխումների ընդհանուր նպատակն է եղել ազգային ու տեղական մակարդակներում այնպիսի համակարգերի ստեղծումը, որոնք պետք է հնարավորություն տային համայնքներին՝ դառնալու բնակիչների պահանջմունքների նկատմամբ ավելի արագ արձագանքող միավորներ: Վերոնշյալ բարեփոխումների ընթացքում փոփոխվել են նաև համայնքի կառավարման, ռեսուրսների ձեռքբերման և տնօրինման սկզբունքները¹⁴³: Սուբվենցիոն ծրագրերից օգտվելու նպատակով փոքր և թույլ ներուժ ունեցող համայնքների միավորումը խոշորացման միջոցով, այդուհանդերձ, մի կարևոր հարցի պետք է պատասխանի, այն է՝ արդյոք դա կունենա՞ր երկարաժամկետ արդյունավետություն, թե՞ ոչ: Եթե համայնքների միավորման նպատակը պետք է լինի միայն սուբվենցիոն ծրագրից օգտվելու հնարավորությունը, ապա դժվար է երկարաժամկետ հեռանկարում խոշորացումը արդյունավետ համարել: Այստեղ է, որ անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ միջհամայնքային միավորումների ձևավորման խնդրին՝ դիտարկելով այն որպես խոշորացման գործընթացի այլընտրանք:

Մինչև 2011 թվականի բարեփոխումների մեկնարկը ՀՀ-ում փոքր համայնքների համար համայնքային ծառայությունների բարելավման այլընտրանքային տարբերակ է համարվել միջհամայնքային համագործակցության ձևավորումը: Միջհամայնքային միավորումների (ՄՄ) ձևավորման և գործունեության իրավական համակարգը ՀՀ-ում ձևավորվել է 1996 թվականի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, որը նույնությամբ պահպանվեց 2002 թվականին ընդունված նոր օրենքում: 2005 թվականին կատարված փոփոխություններից հետո ՀՀ Սահմանադրությունը ևս ամրագրում է միջհամայնքային միավորումներ ստեղծելու իրավունքը: Սակայն ՄՄ-ների սկզբունքները և կառավարման կարգը լիարժեք օրենսդրական ձևակերպում են ստացել միայն 2018 թվականին՝ որպես առանձին օրենք:

2011 թվականի դրությամբ ՀՀ-ի համայնքների շուրջ 70 տոկոսը ներառված է եղել նման համագործակցության ծրագրերում, որոնց մի մասը ստեղծվել է բանավոր համաձայնության հիման վրա և նույնիսկ պետական գրանցում չի ունեցել¹⁴⁴: Միջհամայնքային համագործակցության միջոցով համայնքներում առկա խնդիրները լուծելու նպատակով ստեղծված կառույցները, որպես կանոն, գործել են օրենսդրական անկատարության և սուղ ֆինանսական միջոցների պայմաններում: 2018 թվականին «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ ստեղծվել է կայուն

¹⁴³ Տե՛ս Վարչատարածքային բարեփոխումները Հայաստանում. Միջանկյալ գեկույց քաղված դասերի վերաբերյալ, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն, Երևան, 2017 հունիս, էջ 10:

¹⁴⁴ Տե՛ս Հայաստանում գործող միջհամայնքային կառույցների առկա իրավիճակի գնահատում, Զարգացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագիր, ԱՄՆ ՄՉԳ/Զառնթերփարթ ինթերնեշնլ, Երևան, 2011, էջ 10:

իրավական հիմք ՄՄ արդյունավետ գործառնման համար՝ նրան տալով հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ: Ամրագրված օրենսդրական դրույթների լիարժեք իրականացումը հնարավոր է միայն համայնքների կարողությունների զարգացման և համագործակցության կարևորության գիտակցման պարագայում: Ինչպես սահմանում է օրենքը, ՄՄ-ն տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կամ հանրային շահերից ելնելով ստեղծված համայնքների միավորում է, որն իրականացվում է օրենքով կամ համայնքների ավագանիների որոշումներով իրեն վերապահված լիազորություններով¹⁴⁵: ՄՄ-ները կարող են ստեղծվել կամավոր հիմունքներով և օրենքով՝ ՀՀ Կառավարության առաջարկությամբ: Ըստ այդմ, կամավոր հիմունքներով ստեղծված միավորմանը փոխանցվում են միավորման կանոնադրության մեջ ներառված՝ անդամ համայնքների պարտադիր խնդիրների լուծման նպատակով սահմանված համայնքների ղեկավարների սեփական լիազորությունները, ինչպես նաև համայնքի ավագանու լիազորությունները: Երկրորդի դեպքում, այսինքն՝ օրենքով ստեղծված միավորմանը կարող են փոխանցվել միայն միավորման մեջ ընդգրկված համայնքների ղեկավարներին պետության պատվիրակած լիազորությունները: Ինչ վերաբերում է ՄՄ ստեղծման նպատակներին, ապա ըստ օրենքի՝ դրանք կարող են հանդիսանալ տեղական հումքի համատեղ օգտագործումը և արտադրանքի թողարկումը, արտադրական ենթակառուցվածքների (այն բնագավառներում, որոնք սպասարկում են արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության արտադրությունների աշխատանքների կազմակերպումը), ծառայություններ մատուցող օբյեկտների ստեղծումը և օգտագործումը (հիվանդանոցներ, մարզական շինություններ, մանկապարտեզներ):

2000-ականներից ի վեր ստեղծված ՄՄ-ներից շատերը (օրինակ՝ «Թումանյան միջհամայնքային միավորում» համայնքների միությունը (2004), որի կազմում ընդգրկված են Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի բոլոր 31 համայնքները¹⁴⁶) տրամադրել են մասնագիտական խորհրդատվություն համայնքներին, իրականացրել բարեգործական ծրագրեր, ինչպես նաև դրամաշնորհային ծրագիր: Հայկական մի շարք համայնքներում ձևավորված ՄՄ-ների հիմնական գործառնությունների մեջ են եղել նաև համայնքների կարողությունների զարգացումը, ուսուցումը, տեխնիկական աջակցությունը, համայնքային ծառայությունների մատուցումը, համայնքային կարիքների գնահատումը: Հատկանշական է, որ միջհամայնքային համագործակցության արդյունքում ստեղծվել են նաև կազմակերպություններ, ինչպես օրինակ՝ Վեդի տարածաշրջանի 18 համայնքների միավորման արդյունքում ձևավորված միջհամայնքային միավորման շրջանակներում է ստեղծվել «Մաբուր երկիր» ՄՂԸ-ն (2012), որը աղբահանության կառավարման խնդիրները լուծելու առաքելություն ստանձնեց: Մեկ այլ օրինակ է 2004 թվականին Արագածոտնի մարզի Ապարան տարածաշրջանի մի քանի համայնքների ստեղծած ՄՄ-ն՝ համայնքների սոցիալ-տնտեսական, միջհամայնքային ճանապարհաշինության, ֆինանսական աջակցության, տեղեկատվության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված այլ հիմնախնդիրների լուծման համար: Նկատելք, որ որքան մեծ թվով համայնքներ են միանում միջհամայնքային միավորում ստեղծելու նպատակով, այնքան ավելի լուրջ հիմնարկ է ստեղծվում:

Ինչպես տեսնում ենք, ՄՄ-ների ստեղծումը նախատեսվում է հանրային ծառայությունների մատուցումը համատեղ միջոցներով իրականացնելու, ծառայությունների հասանելիությունն ապահովելու և որակը բարձրացնելու նպատակով: Վերջինիս

¹⁴⁵ Տե՛ս «Միջհամայնքային միավորների մասին» ՀՀ օրենք, ընդունված 2018 թվականի մարտի 7, հոդված 2-ի կետ 1-ին, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150514>:

¹⁴⁶ Տե՛ս Թումանյան միջհամայնքային միավորում, <http://tumanyan.vs.am/%D5%B4%D5%A5%D6%80%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6/>:

առավելությունն այն է, որ համայնքը ֆինանսական անբավարարության պատճառով իր ինքնուրույնությունից հրաժարվելու և մեկ այլ համայնքի մեջ ընդգրկվելու փոխարեն կարող է նախաձեռնել կամ միանալ ՄՄ-ին՝ վերը քննարկված բոլոր խնդիրների համար լուծումներ գտնելու և հանրային ծառայությունների ապահովման համար: Այս առումով ՄՄ-ների՝ որպես տեղական ինքնակառավարման համակարգի արդի ինստիտուտի ուսումնասիրությունից հանգում ենք, որ ՀՀ մարզային ու համայնքային ծառայություններն ընդլայնելու և բարելավելու տեսանկյունից գրանցվել է դրական տեղաշարժ: ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում վարչատարածքային միավորների միջև առավել օրգանական միասնությունը ապահովելու տեսանկյունից ևս ՄՄ ինստիտուտն առավելություններ ունի համայնքների խոշորացման գործընթացի նկատմամբ: Այսպիսով՝ միջհամայնքային միությունների ստեղծումը վարչատարածքային փոփոխությունների կարևոր ուղղություն է: Միջհամայնքային համագործակցությունը ոչ պակաս կարևորվում է նաև պատվիրակված ու կամավոր լիազորությունների իրականացման ընթացքում: Համագործակցությունն անչափ կարևորվում է կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից, որովհետև առանձին համայնքներ պարզապես ի գործ չեն լուծելու իրենց համայնքներում առաջացած կառավարման խնդիրները, քանի որ փորձ ու անհրաժեշտ ֆինանսական միջոցներ չունեն՝ հրավիրելու այդ ոլորտի բարձրակարգ մասնագետներին:

Եզրակացություն

ՀՀ-ում համայնքների խոշորացումը չի ունեցել բացարձակ դրական կամ բացասական կողմեր: Գործընթացի վերլուծությունը փաստում է, որ ձեռքբերված արդյունքներն ունեցել են միաժամանակ դրական ու բացասական կողմեր: *Առաջին դրական կողմն* այն է, որ համայնքների խոշորացումը մասամբ կարողացել է լուծել տեղական ինքնակառավարման համակարգի մասնատվածության խնդիրը, ստեղծել բազմաբնակավայր համայնքներ: Սակայն նույն գործընթացի *բացասական կողմն* այն է, որ մինչև օրս որոշված չէ խոշորացվող կամ միավորվող համայնքների «արդյունավետ թիվը»: Ավելին, խոշորացման ընթացքում թույլ են տրվել մեթոդական սխալներ, օրինակ՝ միամակարդակ տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները հաշվի չառնելը, որ հանգեցրել է կառավարման կառուցակարգի բարդացմանը: Եվս մի մեթոդական սխալն այն է, որ խոշորացումը որոշ դեպքերում հանգեցրել է վարչատարածքային միավորների կազմալուծմանը: *Երկրորդ դրական կողմն* արձանագրվել է սուբվենցիոն ծրագրերից օգտվելու համատեքստում: Շնորհիվ նաև ընդունված նոր կարգի՝ համայնքների խոշորացումը ուղղակիորեն նպաստել է սուբվենցիոն ծրագրերից օգտվելու՝ համայնքների հնարավորությունների մեծացմանը: Պաշտոնական վիճակագրությունը ցույց է տալիս, որ համայնքի համաֆինանսավորման չափը 2018-ից ի վեր աճել է: Նույն գործընթացի *բացասական կողմը* դրա երկարաժամկետ արդյունավետության հավաստիքի բացակայությունն է: Անհրաժեշտ է հասկանալ՝ արդյոք արժե՞ գնալ խոշորացման միայն սուբվենցիոն ծրագրից օգտվելու համար, թե՞ ոչ: Հիշենք, որ համայնքների խնդիրների լուծման տեսանկյունից կարող է գործարկվել նաև միջհամայնքային միավորումների ինստիտուտը:

Այսպիսով՝ համայնքների խոշորացման դրական ու բացասական կողմերի վերլուծությունը ևս մեկ անգամ փաստում է, որ անհրաժեշտ է նոր հայեցակարգ, որում պետք է առաջարկվեն նաև վերոնշյալ խնդիրների լուծումները:

ENLARGMENT OF COMMUNITIES IN THE LOCAL SELF-GOVERNMENT SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA: ANALYSIS OF POSITIVE AND NEGATIVE OUTCOMES

KATERINA ALTUNYAN

*Yerevan State University
Faculty of International Relations,
Chair of Public Administration, Assistant,
Ph.D. in Political Sciences,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to point out the main issues of the local self-government system in the Republic of Armenia based on the analysis of the positive and negative aspects of enlargement process. The aim of the study is to present the changes in the conceptual basis of community enlargement in the light of recent socio-political reforms. The article examines the determinants of community enlargement creation of inter-community units to assess administrative-territorial changes steps to deepen decentralization.

The research conducted on the basis of scientific general methodology. The study of the theoretical basis of enlargement process in the Armenian local self-government system is carried out using a comparative method of decentralization theories. The considerations presented in the context of the hypothesis, from the general to the private and vice versa, derived from the methods of induction and deduction. The legal-legislative bases regulating the field of local self-government were comprehensively analyzed.

As a result, in the end of the research, it is concluded that the conceptual bases of enlargement need to be reconsidered, as it requires the simultaneous development of new socio-political realities and the modernization of the public administration system. On the other hand, the need to change the conceptual framework reforms is supported by the need to reconsider the issues existing in the local self-government system.

Keywords: *Local self-government in the Republic of Armenia, community enlargement, subvention, enlarged community, community union, administrative-territorial reform, public administration.*

УВЕЛИЧЕНИЕ ОБЩИН В СИСТЕМЕ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: АНАЛИЗ ПОЛОЖИТЕЛЬНЫХ И НЕГАТИВНЫХ СТОРОН

КАТЕРИНА АЛТУНЯН

*ассистент кафедры государственного управления
факультета международных отношений
Ереванского государственного университета,
кандидат политических наук,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – на основе анализа положительных и отрицательных аспектов процесса увеличения общин на местном уровне указать на приоритетные вопросы модернизации системы местного самоуправления в Республике Армения. В статье исследуются детерминанты увеличения общин, создание межобщинных единиц для оценки

эффективности административно-территориальных изменений, а также по углублению децентрализации.

Исследование проводилось на основе общей и узко профессиональной методики. Изучение теоретических основ увеличения местных общин проводилось с использованием сравнительного метода теорий децентрализации. Идеи, представленные в контексте гипотезы, от общего к частному и наоборот, были выведены методами индукции и дедукции; комплексно проанализированы законодательно-правовые основы, регулирующие сферу местного самоуправления.

В результате исследования сделан вывод о том, что концептуальные основы увеличения общин нуждаются в пересмотре, поскольку это требует одновременного освоения новых социально-политических реалий, модернизации системы государственного управления. С другой стороны, необходимость изменения концептуальных реформ продиктована необходимостью пересмотра проблем, существующих на местном уровне.

Ключевые слова: *местное самоуправление в Республике Армения, укрупнение общины, субвенция, укрупненная община, союз общин, административно-территориальная реформа, государственное управление.*

ПОГРОМЫ АРМЯН В СУМГАИТЕ В 1988 г. КАК ФАКТОР АНТИАРМЯНСКОЙ ПРОПАГАНДЫ В АЗЕРБАЙДЖАНЕ* ¹⁴⁷

УДК 327.5

DOI: [10.52063/25792652-2021.1-47](https://doi.org/10.52063/25792652-2021.1-47)**АНЖЕЛА ЭЛИБЕГОВА**

*Российско-Армянский университет,
кандидат политических наук, доцент,
г. Ереван, Республика Армения
elibegova@gmail.com*

Целью статьи является определение и анализ основных тезисов азербайджанской пропаганды вокруг погромов армян в Сумгаите 27-29 февраля 1988 года. Задачей автора является выявление противоречий и фальсификаций в официальной позиции Азербайджана при освещении данных событий.

В данной работе автором на первом этапе использован мониторинг азербайджанских СМИ и официальных высказываний. На последующих этапах использован метод структурного и контент-анализа текстов уголовных дел и свидетельских показаний относительно сумгаитских погромов.

В ходе исследования автором выведены основные тезисы азербайджанской стороны, выявлены отличия в тезисах относительно погромов армян в Сумгаите и Баку, а также опровергнут миф вокруг фигуры Эдуарда Григоряна как организатора и координатора погромов.

По результатам исследования автором выработаны универсальные рекомендации для армянской стороны, целью которых является минимизация влияния азербайджанской пропаганды и эффективное противодействие ей.

Ключевые слова: *Азербайджан, Сумгаит, 1988, погромы, пропаганда, Эдуард Григорян, армянофобия.*

Введение

Город Сумгаит был основан в 1949 году и являлся крупным центром нефтехимической промышленности Азербайджана. Помимо неблагоприятной экологической ситуации, в советское время город был также известен тяжелой криминогенной обстановкой и резким классовым расслоением общества. Сегодня Сумгаит также является одним из центров распространения радикального ислама и ваххабизма¹⁴⁸.

Из 250-тысячного многонационального населения города в советское время армяне составляли около 18 тысяч¹⁴⁹. Большинство из них являлись квалифицированными специалистами высокого уровня с соответствующим уровнем благосостояния.

* Հոդվածը ներկայացվել է 08.02.2021թ., գրախոսվել՝ 22.02.2021թ., տպագրվել է 30.03.2021թ.:

¹⁴⁷ Исследование выполнено при финансовой поддержке Государственного комитета по науке МОН РА в рамках научного проекта № 19YR-5F024.

¹⁴⁸ **Искандерзода О.**, «К вопросу о причинах распространения религиозного радикализма в Азербайджане». Kavkazoved.Info от 13.01.2014 <http://www.kavkazoved.info/news/2014/01/13/k-voprosu-o-prichinah-rasprostranenia-religioznogo-radikalizma-v-azerbajdzhane.html>.

¹⁴⁹ «Армянские погромы в Азербайджане в 1988-1990», <http://www.nkr.am/ru/armenian-pogroms>, 09.03.2021.

27-29 февраля 1988 года в городе начались погромы армян. Банды погромщиков в составе 50-80 человек, по заранее спланированному сценарию, имея на руках точные карты с адресами армян и вооружившись металлическими прутьями, топорами, молотками, ножами, заточками и другими видами холодного оружия, напали на квартиры, где проживали лица армянской национальности. В общей сложности в погромах приняли участие от 800 до 1000 человек.

Примечательно, что за день до начала погромов, 26 февраля, на центральной площади Ленина в Сумгаите на митинге звучали лозунги «Смерть армянам», а также призывы изгнать армян из города и завладеть их имуществом.

Согласно свидетельствам очевидцев, в дни погромов все дороги, въезды в Сумгаит и выезды из города были перекрыты. В ЖЭК-ах составлялись списки квартир, где проживали армяне. В квартирах армян были отключены телефоны и электричество. Правоохранительные органы и службы скорой помощи на вызовы не реагировали. Уже 29 февраля в городе в спешке велись ремонтные работы и уничтожались следы погромов¹⁵⁰.

С многочисленными свидетельствами очевидцев погромов армян в Сумгаите можно ознакомиться здесь¹⁵¹:

На состоявшемся 29 февраля 1988 года заседании Политбюро ЦК КПСС 29 февраля 1988 года министр обороны СССР Язов свидетельствовал: «Двум женщинам груди отрезали, одной голову отрезали, с девочки кожу сняли. Видевшие трупы замученных армян курсанты падали в обморок». Политбюро ЦК КПСС принимает решение о вводе войск в Сумгаит и введении комендантского часа, после чего беспорядки удалось остановить. В ходе наведения порядка ранения получили 270 военнослужащих. После этого следственная группа Прокуратуры СССР основными мотивами преступлений в Сумгаите назвала не межнациональную рознь, а «хулиганские побуждения»¹⁵².

С целью замалчивания масштабов преступления сумгаитское дело было разбито на десятки отдельных уголовных дел (в общей сложности около 80), большинство из которых было передано в Верховный суд Азербайджанской ССР и Сумгаитский народный суд, остальные рассматривались в судах различных городов Советского Союза. Такой подход изначально исключил возможность выявления организаторов и зачинщиков погромов.

Тем не менее, данное преступление задокументировано не только согласно свидетельствам очевидцев, но и согласно видео-/ фото доказательствам, собранным в ходе следствия. Официальное число убитых – 26 армян, однако в действительности, по свидетельствам очевидцев, речь идет о сотнях убитых. Трупы армян были рассредоточены по моргам разных городов и поселков Азербайджана, что не позволило установить истинное число жертв¹⁵³.

Согласно официальной позиции армянской стороны, «сумгаитская резня положила начало целой серии преступлений против человечности, совершаемых в рамках государственной политики Азербайджана в отношении армянского народа на всех этапах азербайджано-карабахского конфликта. Геноцид, систематические этнические чистки и массовые убийства, осуществленные азербайджанскими властями в 1988-1991 годах, после

¹⁵⁰ Документальный фильм из цикла «Обыкновенный геноцид». Сумгаит. Karabakhrecords от 15.02.2021, <https://www.youtube.com/watch?v=6l6YHWCxoNE>.

¹⁵¹ «Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев». Под ред. С. Шахмурадяна. Армянский фонд культуры, 1989 г. Книга первая https://karabakhrecords.info/pdf/sumgait_evidences.pdf Книга вторая https://karabakhrecords.info/pdf/sumgait_tragedia_2.pdf.

¹⁵² В. Швед о погроме в Сумгаите: Слухи о том, что из Армении изгоняют азербайджанцев, распространялись провокаторами. Panorama.am от 05.12.2013 www.panorama.am/ru/analytics/2013/12/05/shved/.

¹⁵³ См. Геворкян П. «Сумгаит. Дневник судебного процесса» https://karabakhrecords.info/documents_court_diary-sumgayit.html.

распада СССР сменились военными преступлениями в ходе вооруженных агрессий против Республики Арцах и ее народа в 1991-1994, 2016 и 2020 годах.

В результате геноцидальной политики, проводимой Азербайджаном начиная с 1988 года, тысячи армян были убиты, десятки тысяч стали инвалидами, сотни тысяч подверглись насильственной депортации и лишились родины.

Безнаказанность и отсутствие соответствующей реакции международного сообщества приводили к усилению агрессии и увеличению масштабов преступлений, совершаемых Азербайджаном в отношении народа Арцаха. Человечеконенавистническая атмосфера, годами культивируемая в азербайджанском обществе бакинскими властями, создала ситуацию, при которой военные преступления, включая издевательства, пытки и убийства военнопленных и гражданских лиц, воспринимаются в Азербайджане в качестве нормы и примера для подражания»¹⁵⁴.

Позиция азербайджанской пропаганды

В официальной пропаганде Азербайджана фигурирует несколько версий событий, в каждой из которых выявляется попытка перекладывания ответственности и поиска виновных «извне». В одной версии это могут быть советские спецслужбы, в другой – сами армяне, в третьей – их тандем. Однако концепция пропагандистских тезисов в каждом случае одинакова: отрицание вины и ответственности Азербайджана как государства за преступление против человечества, совершенное гражданами данного государства на его же территории.

Основное отличие от пропагандистских тезисов относительно погромов армян в Баку заключается в наличии многочисленных уголовных дел, судебных процессов и вынесенных приговоров с указанием конкретных лиц, несущих ответственность за преступления против армян в Сумгаите. В случае с бакинскими погромами упор делается на события «Черного января», когда, спустя неделю после начала погромов, в город вошли советские войска. В Азербайджане это траурная дата, и она отмечается как день борьбы за национальное освобождение. Предшествующие этому дню погромы армян в Баку зачастую не упоминаются или вовсе отрицаются.

В случае с сумгайтскими погромами официальная пропаганда сконцентрирована на искажении масштабов и обстоятельств преступления, а не отрицании самого факта, поскольку уголовные дела рассматривались, в том числе, и за пределами Азербайджанской ССР. Поскольку общая официальная позиция относительно погромов армян в Сумгаите в Азербайджане до конца не выработана, тезисы пропаганды претерпевают трансформацию на протяжении последних 33 лет. В последние годы основная концепция пропаганды строится вокруг фигуры Эдуарда Григоряна – члена одной из банд погромщиков.

Рассмотрим нюансы распространения данного тезиса на примерах из публикаций азербайджанских СМИ и официальных источников:

МИД Азербайджанской Республики: «Совершенные в конце февраля 1988 года в городе Сумгайыт Азербайджанской ССР были заранее продуманной и точно спланированной провокацией против Азербайджана. Как известно, Генеральной прокуратурой СССР было возбуждено уголовное дело в связи с этими событиями, проведено расследование, по итогам которого были установлены те, кто совершили эти преступления и лица, действовавшие в сговоре с ними, а также 32 жертвы; в этом плане хотелось бы подчеркнуть, что среди них было 6 азербайджанцев. Были собраны многочисленные свидетельские показания проживавших в Сумгайыте армян против армянина Эдуарда Григоряна, который стал зачинщиком событий, руководил этими

¹⁵⁴ Заявление МИД Республики Арцах в связи с 33-й годовщиной армянских погромов в Сумгаите. 28.02.2021 <http://www.nkr.am/ru/news/2021-02-28/MFA-%20Statement-Pogroms-of-Armenians-in-Sumgait>.

преступлениями и лично убил 6 человек, совершил агрессию в отношении 3 армянок. Решением суда Э. Григорян был приговорен к 12 годам лишения свободы, переведен для отбывания наказания в Армению, а затем отпущен на свободу»¹⁵⁵.

Доктор философии по политическим наукам Эльшад Мирбашироглу: «Сумгайтские события были провокацией армянских националистов. А Горбачев взял на себя функции «идеологического отца» сепаратистов. План по реализации Сумгайтских событий был подготовлен в Москве под руководством именно Горбачева. Целью было создать долгосрочный очаг конфликта, выставить азербайджанцев в мире в невыгодном свете, и таким образом завершить процесс присоединения Нагорного Карабаха к Армении»¹⁵⁶.

Директор Центра истории Кавказа Ризван Гусейнов: «...город был парализован, после чего произошли беспорядки, возглавляемые армянином Эдуардом Григоряном, его братьями и другими армянами. Националисты били, убивали и насиловали армян, и целью этой провокации было обосновать дальнейшую оккупацию азербайджанских территорий и масштабную агрессию против азербайджанского народа»¹⁵⁷.

Депутат Милли Меджлиса (парламент), историк Муса Гасымлы: «Одним из организаторов погромов был Эдуард Григорян, который принимал непосредственное участие в убийствах армян и насилии против армянских женщин. До этих событий Григорян был неоднократно осужден за различные преступления»¹⁵⁸.

Глава клуба политологов «Южный Кавказ» Ильгар Велизаде: «Но даже при том, что следствие подвергалось жесткой цензуре, удалось установить зачинщиков беспорядков во главе с Эдуардом Григоряном, что сразу же отмечает первоначальную версию, которую пытались внедрить в сознание людей, что эти события были спровоцированы азербайджанцами на почве межнациональной розни и неприязненного отношения к армянам»¹⁵⁹.

Главный редактор газеты «Ваки хэбэг», политический эксперт Айдын Гулиев: «Факты недавней истории, анатомия преступлений, совершенных в Сумгайтите, не оставляют сомнений, что эти события были осуществлены именно руками армянских националистов»¹⁶⁰.

«Эти события были частью сценария, организованного Комитетом Госбезопасности СССР совместно с армянами. В качестве организатора сумгайтских погромов был выбран армянин, ранее судимый Эдуард Григорян. Обвиняемый в организации сумгайтских событий азербайджанец Ахмед Ахмедов был приговорен к расстрелу, однако, согласно

¹⁵⁵ «МИД Азербайджана: Кровавые сумгайтские события были заранее продуманной провокацией против Азербайджана». 28.02.2021, <https://apa.az/ru/vneshnyaya-politika-azerbaydjana/MID-Azerbajdzhana-Krovavye-sumgajytskie-sobytiya-byli-zaraneeproductumannoj-provokaciej-protiv-Azerbajdzhana-439073>.

¹⁵⁶ Провокация армян в Сумгайтите была нацелена на дополнительную поддержку в реализации их притязаний на Карабах – политолог. Trend.az от 13.01.2020, <https://www.trend.az/other/commentary/3176615.html>.

¹⁵⁷ Ризван Гусейнов: Январские погромы учинили армянские националисты по указке советского центра. Trend.az от 13.01.2020, <https://www.trend.az/azerbaijan/politics/3176546.html>.

¹⁵⁸ События в Сумгайтите и Баку были провокацией Центра и армянских кругов против азербайджанского народа - Муса Гасымлы. Trend.az от 13.01.2020, <https://www.trend.az/other/commentary/3176383.html>.

¹⁵⁹ Ильгар Велизаде: Сумгайтские события были запланированной акцией армянских националистов. Trend.az от 16.01.2020, <https://www.trend.az/azerbaijan/politics/3177635.html>.

¹⁶⁰ Айдын Гулиев: События в Баку и Сумгайтите — часть армянского плана агрессии против Азербайджана. Trend.az от 14.01.2020, <https://www.trend.az/azerbaijan/politics/3176835.html>.

показаниям очевидцев, было доказано, что основным организатором погромов являлся армянин Эдуард Григорян»¹⁶¹.

Анализ основных тезисов азербайджанской пропаганды

Основной тезис азербайджанской пропаганды базируется на создании мифа вокруг одной фигуры – участника погромов, носящего армянскую фамилию. Сформулируем тезис следующим образом: «Эдуард Григорян армянин, а следовательно, погромы были организованы армянскими националистами». В этой причинно-следственной привязке разрабатывается дальнейшая концепция азербайджанской стороны.

Здесь важно отметить, что, поскольку доказательная база следственных мероприятий свидетельствует не в пользу концепции официальной пропаганды Азербайджана, власти страны отказываются публиковать архивные материалы уголовных дел по сумгайтским погромам. Единственное обнародованное дело – эпизод, в котором фигурирует имя Эдуарда Григоряна.

Уголовное дело под номером 18/55461-88, опубликованное адвокатом Асланом Исмаиловым (позже публикации были удалены), содержит ценные сведения о группе погромщиков, в составе которой фигурирует одна армянская фамилия – Григорян, остальные члены банды – азербайджанцы: Сафаров, Мамедов, Гусейнов, Наджафов, Ганджалыев, Исаев. При ознакомлении с материалами уголовного дела стало известно, что в нем не содержатся какие-либо факты, свидетельства или доказательства того, что Григорян является организатором погромов. Таким образом, согласно опубликованным азербайджанской стороной документам становится очевидно, что человек по фамилии Григорян являлся рядовым погромщиком и приписываемые ему позже функции координатора и организатора не соответствуют действительности¹⁶².

Необходимо также обратиться к теме армянского происхождения Григоряна, как краеугольного камня в концепции азербайджанской пропаганды. Согласно следователю КГБ СССР Валерию Кипоренко, руководителю следственной группы, который лично допрашивал Григоряна в рамках уголовного дела и предъявлял ему обвинения, он носил армянскую фамилию, но по национальности был записан азербайджанцем. «В его детские годы отец их бросил и уехал в неизвестном направлении, поэтому он относился к армянам крайне негативно. У него было несколько судимостей, он хоть и носил армянскую фамилию, но был крайне отрицательно настроен именно к лицам армянской национальности»¹⁶³. Об этом также упоминает Томас де Ваал в книге «Черный сад»¹⁶⁴.

Григорян был в числе 94 арестованных по сумгайтскому делу. Около 80 из них были осуждены на различные сроки заключения, и лишь один – А. Ахмедов – вердиктом Верховного суда СССР приговорен к исключительной мере наказания – смертной казни. В декабре 1989 г. ранее неоднократно судимый Эдуард Григорян был приговорен к 12 годам заключения и позже этапирован в Армению. В декабре 1992 года он попал под амнистию и был освобожден. Позже азербайджанские СМИ со ссылкой на прокуратуру Азербайджана объявили, что известно местонахождение Григоряна – он проживает в подмосковном

¹⁶¹ «Сегодня очередная годовщина сумгайтских событий, совершенных КГБ совместно с армянами». Ona.az от 28.02.2020, <https://ona.az/ru/politika/segodnya-ocherednaya-godovshhina-sumgajytskikh-sobytij-sovershennykh-kgb-sovmestno-s-armyanami-12382>.

¹⁶² Обвинительное заключение по УД №18/55461-88. От 15.02.2021 <https://karabakhrecords.info/documents/investigation/obvinitelnoe-zaklyuchenie-ud-1855461-88.html>

¹⁶³ Валерий Кипоренко: Беспорядки в Баку проходили под теми же лозунгами, что и в Сумгаите. Panorama.am от 13.01.2011, <https://www.panorama.am/ru/news/2011/01/13/analitika/1005171>.

¹⁶⁴ Т. де Ваал. «Черный сад». Глава 2. Февраль 1988 года: Азербайджан. Текст, 2005 г.

городе Сергиев Посад. Однако каких - либо действий по экстрадиции Григоряна в Азербайджан по сей день предпринято не было¹⁶⁵.

Примечательно, что бывший прокурор Азербайджанской ССР Ильяс Исмаилов, в свое время лично подписывавший обвинительные заключения по сумгайтским делам, еще в 2003 году в интервью бакинской газете «Зеркало» заявил: «Виновники, подстрекавшие людей к погромам в Сумгаите, носят в карманах депутатские мандаты и сидят сегодня в Милли Меджлисе»¹⁶⁶.

Таким образом, необходимо зафиксировать:

- Погромы были заранее спланированы и организованы, однако спецслужбы Азербайджанской ССР не пресекли преступление, также правоохранительные органы не вмешались и не восстановили порядок в дни погромов.
- Согласно уголовному делу, один из сотен погромщиков, имеет армянскую фамилию, однако не является организатором и/или координатором погромов.
- Нет свидетельств, фактов или доказательств взятия под контроль и парализации деятельности силовых структур Аз ССР со стороны армян до, во время или после погромов армян в Сумгаите.
- Азербайджан отказывается публиковать уголовные дела по сумгайтским погромам, за исключением дела Григоряна, которое, тем не менее, свидетельствует против официальной позиции Баку.

Если в случае с бакинскими погромами азербайджанская пропаганда использует метод «отвлечения внимания», концентрируясь на последствиях погромов армян, замалчивая само событие, то в случае с погромами армян в Сумгаите используется другой прием – «обвинение жертвы». Современная концепция азербайджанской пропаганды базируется на следующей схеме: 1. концентрация внимания общественности на одной фигуре, носящей армянскую фамилию 2. отвлечение внимания от факта массовых погромов армян и ответственности государства за геноцидальные действия.

Выводы:

Учитывая активные действия азербайджанской пропаганды по работе с внутренней и внешней аудиторией по продвижению мифов о погромах армян в Сумгаите, армянской стороне необходимо выработать ряд механизмов по противодействию азербайджанской пропаганде.

Необходимо проводить ряд профилактических мер:

1. Информирование общественности в Армении, Арцахе и Диаспоре относительно событий 33-летней давности посредством СМИ, открытых лекций, тематических дискуссий и круглых столов.
2. Информирование международной общественности посредством диппредставительств и организаций в Диаспоре
3. Подготовка и распространение материалов ежегодно к памятной дате погромов армян в Баку
4. Проведение официальных мероприятий в Армении, Арцахе и Диаспоре.

¹⁶⁵ «Вот он организатор сумгайтских событий Эдуард Григорян - ОН ЖЕ «ПАША» ИЗ СУМГАЙЫТА И «ГАРИК» ИЗ СЕРГИЕВА ПОСАДА – ФОТО». Vesti.az от 28.02.2020 <https://vesti.az/politika/vot-on-organizator-sumgajytskikh-sobytij-eduard-grigoryan-on-zhe-pasha-iz-sumgajyta-i-garik-iz-sergieva-posada-foto-397542>

¹⁶⁶ Григорян М. «Сумгаит»: Ильяхам Алиев оскорбляет собственный народ. Armenpress.am от 26.11.2019, <https://armenpress.am/rus/news/996562/>.

ՀԱՅԵՐԻ ԶԱՐԴԵՐԸ ՍՈՒՄԳԱՅԻԹՈՒՄ 1988 ԹՎԱԿԱՆԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱԴՐԲԵԶԱՆՈՒՄ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ

ԱՆԺԵԼԱ ԷԼԻԲԵԳՈՎԱ

*Հայ-Ռուսական համալսարան,
բաղաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Հոդվածի նպատակն է սահմանել և վերլուծել ադրբեջանական քարոզչության հիմնական թեզերը 1988 թվականի փետրվարի 27-29-ին Սումգայիթում հայերի ջարդերի շուրջ: Հեղինակի խնդիրն է դուրս բերել այդ դեպքերի լուսաբանման ընթացքում Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշման հակասություններն ու կեղծարարությունները:

Սույն աշխատանքի առաջին փուլում հեղինակը կիրառել է ադրբեջանական ՉԼՄ-ների և պաշտոնական հայտարարության մոնիթորինգը՝ որպես տեղեկատվության հավաքման գործիք: Հետագա փուլերում կիրառվել է քրեական գործերի ու վկայությունների տեքստերի համակարգային և կոնտենտ-անալիզ Սումգայիթի ջարդերի վերաբերյալ:

Հետազոտության ընթացքում հեղինակը դուրս է բերում Ադրբեջանի պաշտոնական քարոզչության հիմնական թեզերը, բացահայտում է թեզերի միջև տարբերությունները հայերի ջարդերի վերաբերյալ, ինչպես նաև հերքում Էդուարդ Գրիգորյանի՝ որպես ջարդերի կազմակերպիչ ու համակարգող լինելու մասին միջոց:

Հետազոտության արդյունքում հեղինակը մշակել է համընդհանուր առաջարկներ հայկական կողմի համար՝ ադրբեջանական կողմի քարոզչության հետևանքները նվազեցնելու և դրանց արդյունավետորեն հակազդելու համար:

Հիմնաբառեր՝ Ադրբեջան, Սումգայիթ, 1988, ջարդեր, քարոզչություն, Էդուարդ Գրիգորյան, հայասոյացություն:

ARMENIANS POGROM IN SUMGAIT IN 1988 AS A FACTOR OF ANTI- ARMENIAN PROPAGANDA IN AZERBAIJAN

ANZHELA ELIBEGOVA

*Russian-Armenian University, Ph.D. in Political Sciences, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to define and analyze Azerbaijan's main propaganda messages about the pogroms of Armenians in Sumgait on 27-29 February 1988. The main aim of the author is to highlight existing contradictions and falsifications in the coverage of Azerbaijan's official position of these events.

During the first stage of the research, the author conducts monitoring of media and official statements of Azerbaijan for data collection. In the next stages, the author uses the method of structural and content analysis to work with the text of criminal cases and testimonies regarding Sumgait pogroms.

During the research, the author takes out Azerbaijan's official propaganda messages, discovers the contradictions regarding the pogroms of Armenians in Sumgait and Baku, as well as refutes the myths about Eduard Gregorian as the organizer and coordinator of the pogroms.

A series of universal recommendations are developed for the Armenian side with the main purpose of minimizing the influence of Azerbaijan's propaganda and effective counteraction against it.

Keywords: *Azerbaijan, Sumgait, 1988, pogroms, propaganda, Eduard Grigoryan, armenophobia.*

ПОТЕНЦИАЛ ВОЕННОЙ БЕЗОПАСНОСТИ ГОСУДАРСТВА: СУЩНОСТЬ, СТРУКТУРА И ОСОБЕННОСТИ*

УДК 355.02

DOI: [10.52063/25792652-2021.1-54](https://doi.org/10.52063/25792652-2021.1-54)

АРТАК АРУТЮНЯН

Начальник кафедры Военного лидерства и военно-политических дисциплин факультета Общеобразовательных дисциплин Военного авиационного университета им. маршала А.Ханферянца МО РА, к. философ. н., доцент политологии, г. Ереван, Республика Армения
harartinter@gmail.com

В данной статье рассматривается потенциал военной безопасности государства, ее составные части, которые, как известно, не являются величиной постоянной. Они меняются в зависимости от этапа развития общества, его возможностей, характера существующего режима, зрелости пришедшей к власти политической элиты и многих других условий.

Целью проведения данного исследования является осуществление философского и политологического анализа военной безопасности государства и системы ее обеспечения.

В соответствии с поставленной целью определяются задачи исследования, последовательность их решения:

- определить сущность понятия «военная безопасность государства» как одного из специфических видов национальной безопасности;*
- рассмотреть сущность и содержание потенциала военной безопасности государства;*
- характеризовать соотношение между сущностью терминов «национальный» и «военный» потенциал.*

В результате проведенного анализа было установлено, что военная безопасность представляет собой целостную взаимосвязь экономического, социального, политического, научно-технического, духовного и собственно военного потенциалов, отличающихся друг от друга качественным своеобразием и внутренней структурой. Выделение этих потенциалов, образующих в своем взаимодействии совокупный потенциал военной безопасности, позволяет ориентировать процесс ее развития таким образом, чтобы потенциальные возможности государства и общества превратились бы в активно действующий фактор, отвечающий требованиям, предъявляемым к военной безопасности.

Ключевые слова: *безопасность, потенциал, мощь, совокупная мощь, военная мощь, военный потенциал.*

Жизненно важные интересы любого государства основываются на национальном достоянии и национальных ценностях, обеспечиваются возможностями экономики, политической и военной организации государства, духовно-нравственным и

* Հոդվածը ներկայացվել է 28.01.2021թ., գրախոսվել՝ 15.02.2021թ., տպագրվել է 30.03.2021թ.:

интеллектуальным потенциалом общества. Поэтому весьма важно проанализировать потенциал военной безопасности государства.

Понятие «потенциал» определяется как «источники, возможности, средства, запасы, которые могут быть использованы для решения какой-либо задачи, достижения определенной цели; возможности отдельного лица, общества, государства в определенной области»¹⁶⁷.

Потенциальные возможности государства определяются совокупностью тех потенциалов, которые характеризуют его мощь. Совокупный потенциал является важнейшим показателем, характеризующим то или иное государство с точки зрения его возможностей в целом. Он включает экономический, социальный, политический, научно-технический, духовный потенциалы¹⁶⁸. Основой потенциальной совокупной и оборонной мощи государства является **экономический потенциал**, который составляет фундамент всех других потенциалов, поскольку они предполагают соответствующее экономическое обеспечение.

Для оценки экономической основы военной безопасности государства необходимо учитывать соотношение между экономическим потенциалом и экономической мощью. Эти категории тесно связаны между собой, но не идентичны. Они характеризуют экономику с различных точек зрения, в разных аспектах. Они взаимосвязаны как категории возможности и действительности.

Экономический потенциал – это объективные возможности, которыми располагает государство (коалиция государств), для производства материальных благ и услуг с целью удовлетворения гражданских и военных экономических потребностей общества при максимальном напряжении сил¹⁶⁹.

Если экономический потенциал характеризует идеальную картину того, каким может быть общественное производство, то *экономическая мощь* – это реальная способность экономики удовлетворять на данный момент многообразные потребности общества. ***Чем полнее реализуются потенциальные возможности, тем выше экономическая мощь.***

Экономический потенциал и экономическая мощь имеют количественную и качественную определенность. Количественная определенность выражается через такие показатели, как валовой национальный продукт, национальный доход, объем производства продукции важнейших отраслевых комплексов. Качественная определенность экономического потенциала и экономической мощи проявляется через отраслевую структуру общественного производства, жизненный уровень населения. Чем шире набор промышленных и сельскохозяйственных отраслей в народно-хозяйственном комплексе, тем разнообразней номенклатура выпускаемой продукции, тем полнее удовлетворяются все материальные, в том числе военные, потребности общества.

При решении вопросов обеспечения военной безопасности важно не только реально оценивать экономический потенциал и экономическую мощь страны, но и ту их часть, которая может быть предназначена для удовлетворения военно-экономических (оборонных) потребностей. *Категорией, характеризующей величину этой части экономического потенциала, является **военно-экономический потенциал.***

Военно-экономический потенциал – это та часть экономического потенциала, которая используется и может быть максимально использована для удовлетворения военно-экономических потребностей государства, обеспечения его военной безопасности.

¹⁶⁷ Советский энциклопедический словарь. – Изд. 4-е. – М.: Сов. Энциклопедия, 1987, С. 1046.

¹⁶⁸ См.: **Ищук М. Н.** Военная мощь государства. Проблема достаточности оборонной мощи в современных условиях. – М., 1989; Табунов Н. Д. Боевой потенциал Советских Вооруженных Сил в структуре военной мощи государства. – М.: ВА БТВ, 1987 и др.

¹⁶⁹ См.: Военная экономика (актуальные проблемы).-М.: ВУ, 1997, С. 36.

Соотношение между экономическим и военно-экономическим потенциалами должно быть научно обоснованным, обязательно учитывающим объективный предел использования экономических ресурсов в военных целях. «Перенапряжение экономической силы государства чревато угрозами проигрыша войны, как бы блестяще не были победы на полях сражений»¹⁷⁰, - отмечал Маршал Советского Союза Б. Н. Шапошников. Опыт прошлых войн показывает, что государство не может даже в самые критические моменты войны приостановить гражданское производство и полностью переклочить все свои ресурсы на выпуск военной продукции. В самом напряженном для СССР 1942 году доля военных расходов в национальном доходе составила 55 % (1940г – 15 %) ¹⁷¹. Важными структурными элементами, характеризующими военно-экономический потенциал, являются¹⁷²:

- промышленно-производственный потенциал страны в той его части, которая уже привлекается или может быть использована для выпуска вооружения и другой продукции военного назначения;
- агропромышленный комплекс в той его части, которая обеспечивает работников оборонного комплекса и личный состав вооруженных сил продовольствием, а военное производство – сырьевыми ресурсами;
- совокупность материальных объектов транспорта, связи, снабжения, торговли, медицинского и другого обслуживания вооруженных сил, военного производства и занятых в нем работников;
- часть финансовой системы государства, обеспечивающая потребности как вооруженных сил, так и производственного персонала оборонного комплекса;
- оборонная (военная) инфраструктура;
- материальные запасы и резервы, которые могут быть использованы.

Наиболее важным показателем является доля ВВП, расходуемая на поддержание военно-экономического потенциала. Например, в СССР в 1980-х гг. она достигала 20 %, сегодня в России составляет около 3%. В войнах XX в. в ряде стран ее уровень доходил до 50%. Совокупные военные расходы в мире приближаются к 2 трлн долл. США (около 2,5% мирового ВВП). В США в 2009 г. они достигали 5,32%, а в 2015 г. снизились до 3,36 %. В ЕС самая большая доля ВВП, идущая на военные расходы, наблюдается в Греции (2,46%), Польше (2,18%), Великобритании (2,07%) и Эстонии (2,04%).

Мировыми лидерами по доле ВВП, направляемого на оборону, являются Саудовская Аравия (около 10%) и ОАЭ (около 5%). Значительная часть этих средств идут на импорт оружия: Саудовская Аравия – второй в мире импортер после Индии (7% мирового импорта вооружений), ОАЭ – четвертый (4%). Высокий рост военных расходов не только Саудовской Аравии и ОАЭ, но и в целом стран Ближнего Востока (их общий военный бюджет составляет 111 млрд долл. США) ведет к усилению напряженности в регионе¹⁷³.

Таким образом, *роль экономического потенциала в обеспечении военной безопасности чрезвычайно велика. От него зависит военный потенциал государства, выражающийся в способности содержать вооруженные силы необходимой численности и качества как в мирное время, так и в ходе войны, снабжать их необходимым вооружением, техникой и материальными ресурсами.*

¹⁷⁰ Шапошников Б.М. Воспоминания: Военно-научные труды. – Изд. 2-е, доп. – М.: Воениздат, 1982, С. 442.

¹⁷¹ См Военная экономика (актуальные проблемы). С. 43.

¹⁷² См.: Арутюнян А.Э. Методика определения потенциала военной безопасности государства. Годичная Научная конференция: Сборник научно-методических статей: Социально-гуманитарные науки. – Ер.: Изд-во РАУ, 2015, С. 38.

¹⁷³ Данные по странам НАТО взяты с сайта www.nato.int, по остальным странам – с сайта www.nato.org.

С экономическим потенциалом военной безопасности непосредственно связан **социальный потенциал**. В научной литературе он определяется как «состояние и возможности социальной структуры, которые могут быть использованы государством для решения стоящих перед ним задач»¹⁷⁴. Эти возможности определяются всей совокупностью отношений между классами, социальными группами и слоями, нациями и народностями, количественной и качественной характеристикой социальной структуры общества, условиями жизни и труда людей, мерой удовлетворения их потребностей¹⁷⁵.

Социальный потенциал характеризуется количественными и качественными показателями. К количественным параметрам можно отнести численный состав классов, социальных слоев и групп, национально-этнических общностей, уровень их образования и профессиональной подготовки. Качественные параметры социального потенциала отражают уровень зрелости сложившейся системы социальных отношений, прежде всего, социально-классовых, национально-этнических, семейно-бытовых и других¹⁷⁶.

Особые возможности социальной сферы общества оказывать существенное воздействие на темпы развития страны, обеспечивать степень участия различных социальных групп в укреплении ее безопасности и есть те внутренние источники, возможности, средства, запасы, которые выкристаллизовываются в социальный потенциал. Его влияние на повышение оборонной мощи и обеспечение военной безопасности государства осуществляется по следующим направлениям: во-первых, социальный потенциал объединяет усилия всех классов и социальных групп, наций и народностей для достижения общей цели и для функционирования других потенциалов военной безопасности и, во-вторых, обуславливает социальную базу комплектования вооруженных сил.

Преимущество в деле укрепления своей военной безопасности получают те страны, чье общественное устройство окажется способным утвердить приоритет человека, социальную справедливость, обеспечить необходимый уровень жизни людей, сплотить народ, укрепить его единство на основе учета всего многообразия социальных интересов. В обществе, где между классами и социальными группами, национально - этническими образованиями существуют глубокие противоречия и отношения неравенства, социальный потенциал противоречив, что снижает военную безопасность государства.

Во все времена и при любом общественном строе основная задача государства – обеспечить социальную защищенность граждан. Только на такой основе можно строить национальную безопасность страны, защитить интересы общества и личности. А этого можно достичь только при решении долгосрочных задач: достижения уровня и качества жизни населения, соответствующего национальным идеалам и стандартам экономически благополучных граждан, в том числе в области получения образования, обеспечения социально-экономических прав и свобод граждан, защиты от преступности.

Как уже отмечалось, национальная безопасность и ее составная часть – военная безопасность – тесно связана с политикой, политической системой общества. Можно сказать, что военная безопасность – дело политическое. Поэтому среди потенциалов военной безопасности **политический потенциал** занимает особо важное место.

Политический потенциал в соответствии с общим понятием «потенциал» трактуется как возможности, заложенные в политической сфере общественной жизни и могущие быть мобилизованы, приведены в действие, использованы для достижения политических целей.

¹⁷⁴ Военный энциклопедический словарь. 2-е изд. – М.: Политиздат, 1986, С. 580.

¹⁷⁵ См.: Горобцов Г.А. Проблемы укрепления социального потенциала оборонной мощи СССР в условиях перестройки. - М., 1990, С. 12-14.

¹⁷⁶ См.: Ишук М.Н. Военная мощь государства., С. 19-20; Шаваев А.Х. Военная мощь государства. С. 150-157.

Величина политического потенциала определяется характером политики и политической организации общества, уровнем легитимности политического режима, эффективностью функционирования законодательной и исполнительной ветвей власти и других политических институтов, степенью влияния органов государства на народные массы и их способностью организовать и направлять общество на решение поставленных задач, наличием реальных демократических свобод, прав и обязанностей граждан, степенью их участия в управлении государством, уровнем развития политических отношений и политического сознания в обществе и др.¹⁷⁷

Политический потенциал оборонной мощи государства определяется как совокупность возможностей государства, реализуемых всеми структурными элементами политики (политического сознания, политических отношений, политической организации общества, политической деятельности) в интересах обороноспособности страны¹⁷⁸, качество и реализация этих возможностей могут удовлетворять или не удовлетворять интересы военной безопасности государства (коалиций государств).

Политический потенциал военной безопасности структурно и функционально воспроизводит специфические особенности политической сферы общественной жизни, ее возможности воздействия на военную сферу, на характер и направленность использования военной мощи государства. Он выражает степень стабильности функционирования сложившейся на данный исторический момент политической власти и прочности всей политической системы общества, ее способность управлять процессами социального развития, и в том числе обеспечения военной безопасности государства.

Основными особенностями политического потенциала, определяющими его специфическое место в системе военной безопасности государства, являются способность концентрировать все социальные интересы до уровня общегосударственных интересов, выражать и определять политическую и практическую направленность функционирования других потенциалов военной безопасности государства, интегрировать социальные действия субъектов общественной жизни, отстаивающих свои интересы и властные полномочия посредством правовых механизмов и средств регулирования социальных процессов. Эти и другие особенности политического потенциала реализуются в национально-специфической форме – определенной общественно-политической системой, конкретным политическим режимом с учетом национально-государственного устройства, традиций и ценностей национальной культуры населения той или иной страны.

На военную безопасность государства оказывают существенное влияние все компоненты политического потенциала. Исходным компонентом является наличие *политических интересов обеспечения военной безопасности*. Приоритетные военно-политические интересы выражаются в политическом содержании военных доктрин государств. Как правило, это содержание закрепляется законодательным порядком, и в результате само содержание выступает законом, регулирующим текущие и перспективные интересы государства в сфере военной безопасности.

Военно-политические интересы любого государства в своем потенциальном виде столь разнообразны, что реализуются на всех уровнях обеспечения безопасности: международном, региональном и национальном.

Содержание и приоритетные направления военно-политических интересов отражаются в *военно-политическом сознании* на концептуально-теоретическом и обыденно-психологическом уровне. Нам представляется, что потребность в военной безопасности должна стать осознанным национальным интересом каждого человека в отдельности, всего общества и в особенности его профессиональных кадровых защитников. Словом, все

¹⁷⁷ См.: Арутюнян А.Э. Учебно-методическое пособие «Основы теории национальной безопасности» - Ер., Изд-во РАУ, 2015. С. 53

¹⁷⁸ См.: Шахов А.Н. Политический потенциал оборонной мощи государства. – М., 1992. С.17.

носители интересов военной безопасности должны быть сознательными субъектами военно-политической практики. Причем интересы военной безопасности требуют идеологического выражения на основе осознания ценностей государственной идеологии – конституционных норм, правовых актов, принципов единоначалия и т.п. Это гарантия от социально-групповой идеологизации сознания и поведения военнослужащих, подтвержденная мировым военно-политическим опытом.

Внешне- и внутривнутриполитическая обстановка, баланс сил и замыслы участников военно-политического процесса, политические мотивы их деятельности выражаются в *военно-политических отношениях*. Анализируя современные межгосударственные военно-политические отношения, можно выделить две тенденции их развития. Первая связана с потребностями большинства народов в создании ненасильственного мира, цивилизованных отношений, в укреплении мер доверия, исключения войн из арсенала средств решения спорных вопросов. Вторая заключается в том, что мир еще живет по законам, где военная сила играет если не главную, то важную роль.

Институциональным звеном политического потенциала военной безопасности являются *военно-политические организации и учреждения*. Они делают управляемыми военно-политические процессы, а их функционирование является основным средством реализации интересов военной безопасности. Как отмечал Б.М. Каневский, «военно-политические учреждения обеспечивают единство политического и военного руководства всей военной деятельности в мирное или военное время, в национальном или межгосударственном масштабах»¹⁷⁹.

Логическим завершением анализа содержания политического потенциала в системе военной безопасности является *военно-политическая деятельность государства*. Она представляет собой синтез политической и военной сторон социальной активности субъектов, направленной на реализацию политических, военно-доктринальных целей и установок государства с помощью применения или угрозы применения средств вооруженного насилия¹⁸⁰.

Характер и масштабы военно-политической деятельности государства определяются степенью военной опасности, направленностью военно-политических отношений с другими государствами. Представляется, что характерными чертами современной военно-политической деятельности государства выступают: ее ненасильственный характер, потенциально непровоцирующий характер военных учений и маневров, ненаступательная структура вооруженных сил, оптимальная дислокация войск, обеспечивающая их готовность к противодействию любой опасности, соответствие масштабов военной деятельности и затрат на нее интересам собственного народа, открытость и доверия в военной деятельности по отношению к друзьям и союзникам, верность собственным доктринальным установкам и соблюдению норм международного права. Наиболее полно и адекватно политическое содержание военной деятельности государств выражает принцип оборонной достаточности и военной мобильности.

Составной частью совокупного потенциала государства является **научно-технический потенциал**. Он определяется как совокупность трудовых, материальных и финансовых ресурсов, научно-технических знаний и производственного опыта, которые имеет страна для удовлетворения всех научно-технических (в том числе оборонных) потребностей общества. Часть научно-технического потенциала, которая предназначена для

¹⁷⁹ Каневский Б.М. Оборонная политика: особенности, структура, функции // В кн.: Армия и общество. – М.: Прогресс, 1990, С. 36.

¹⁸⁰ См.: Барабин В.В. Военно-политическая деятельность государства в системе национальной безопасности. – М., 1997. С. 102.

удовлетворения военных (оборонных) научно-технических потребностей страны, является военным (оборонным) научно-техническим потенциалом¹⁸¹.

Научно-технический потенциал характеризуется системой качественных и количественных параметров. К качественным показателям относятся уровень развития фундаментальной науки, то есть ее способность глубоко проникать в сущность законов природы, общества и военного дела; социальная направленность науки, то есть ее соответствие целям развития общественного прогресса; уровень организации науки и возможность планирования научных исследований в масштабе государства и т.п. К количественным показателям следует отнести численность научно-исследовательских и конструкторско-проектных учреждений и обеспеченность их высококвалифицированными научными кадрами материально-техническая обеспеченность и финансирование науки состояние научно-технической информации и др.¹⁸².

Создание современных систем оружия требует развертывания научно-исследовательских и опытно-конструкторских разработок (НИКОР) широким фронтом в целом ряде областей, а также высокого технологического уровня производственной базы¹⁸³. Ключевыми количественными показателями оценки научно-технического потенциала могут служить масштабы и структура проводимых НИОКР, численность и уровень подготовки научных и инженерно-технических кадров, материально-техническая база научных исследований¹⁸⁴.

Духовный потенциал выражает возможности, заложенные в духовной жизни общества, которые могут быть использованы в ходе решения возникающих перед страной задач. Он представляет собой качественное состояние основных смыслообразующих форм общественного сознания и видов духовной деятельности, определяющих защиту необходимых, жизненно важных национальных ценностей и интересов¹⁸⁵.

Все виды сознания военной безопасности могут присутствовать в духовном потенциале государства, общества и других субъектов, являющихся носителями общественного сознания. Их соотношение может быть различным. Но в силу влияния основных национальных ценностей, вытекающих из особенностей цивилизационного развития, в духовном потенциале государства на каждом конкретно-историческом этапе его развития и функционирования доминирует какой-либо один из видов сознания военной безопасности.

На военно-социальном уровне духовный потенциал военной безопасности государства выступает в виде *морально-психологического состояния личного состава вооруженных сил*, которое представляет собой относительно устойчивое состояние мобилизованности и моральной и психологической настроенности военнослужащих и психологического настроения воинских подразделений, частей на решение поставленных боевых и других служебных задач, степень психологической готовности и способности личного состава выполнять эти задачи.

На личностном уровне духовный потенциал военной безопасности государства проявляется в виде общесоциальных и военно-профессиональных качеств личности воина, в основе которых должны лежать преимущественно национальные ценности, присущие

¹⁸¹ См.: Военная экономика (актуальные проблемы) // Армия и общество, Вып. 3, 2008.

¹⁸² См.: **Ишук М.Н.** Военная мощь государства., С.27-28; **Шаваев А.Х.** Военная мощь государства, С. 122-149 и др.

¹⁸³ **Кривцов О.Ф.** Совершенствование оборонно-промышленной политики государства и ее влияние на безопасность и эффективное социально-экономическое развитие регионов Российской Федерации: организационный аспект: автореферат дис. ... канд. эконом. наук. М. 2008, 23 С.

¹⁸⁴ **Гилькова О.Н.** Военно-экономический потенциал современного государства: сущность, структура и особенности // Экономика: вчера, сегодня, завтра. 2017. Том 7 N 5А. С.227-237.

¹⁸⁵ См.: **Чугунов В.М.** Духовный потенциал военной безопасности государства: (соц. – философский анализ): Дис. ... доктора филос. наук. – Монино, 1998. С. 198.

данному государству, входящему в определенный культурно-исторический тип, цивилизацию.

Без разработки и утверждения новой концепции патриотического воспитания сегодня обойтись нельзя. Это требуется и для укрепления государственной власти, и для обеспечения безопасности страны, и для того, чтобы народ осознанно переносил тяготы реформ. Только на прочном фундаменте гражданского патриотизма и его высшем проявлении – готовности к защите Родины – можно сформировать у народа, личного состава высокие нравственные и боевые качества, необходимые каждому гражданину новой демократической Армении.

Таково содержание основных потенциалов военной безопасности государства. Не трудно заметить, что практически все они тесно связаны между собой. Например, выбор варианта технического оснащения вооруженных сил обусловлен тем, какие военно-политические решения будут приняты относительно их численности, каковы возможности промышленности по разработке и производству вооружения и военной техники. Связь между потенциалами носит, как правило, обоюдный характер. Более того, различные слагаемые совокупного потенциала военной безопасности государства могут в определенной степени выступать как альтернативные в процессе ее обеспечения, а недостаточный уровень одного из потенциалов – частично компенсироваться за счет других. Так, недостаточный уровень технического оснащения вооруженных сил может быть частично компенсирован их большей численностью и более высоким качеством военно-профессиональной и морально-психологической подготовки личного состава и наоборот.

Потенциал военной безопасности государства, его составные части не являются величиной постоянной. Они меняются в зависимости от этапа развития общества, его возможностей, характера существующего режима, зрелости пришедшей к власти политической элиты и многих других условий.

Таким образом, военная безопасность являет собой целостную взаимосвязь экономического, социального, политического, научно-технического, духовного и собственно военного потенциалов, отличающихся друг от друга качественным своеобразием и внутренней структурой. Выделение этих потенциалов, образующих в своем взаимодействии совокупный потенциал военной безопасности, позволяет ориентировать процесс ее развития таким образом, чтобы потенциальные возможности государства и общества можно было бы превратить в активно действующий фактор, отвечающий требованиям, предъявляемым к военной безопасности.

В наше время усиливается как раз самостоятельная ценность экономических, научно-технических, культурных и иных факторов в укреплении национальной безопасности, так и особенно авторитета, влияния, веса государства на мировой арене, эффективности его политики при устойчивой тенденции снижения роли военных возможностей, хотя это и нельзя понимать упрощенно. Нельзя впадать в крайности в подходе к обеспечению военной безопасности страны, потому что одинаково вредны как чрезмерная милитаризация общества, искусственное раздувание «образа врага» так и легкомысленное отношение к обороне государства в условиях, когда возможность войны нельзя отнести к разряду абстрактных. И сегодня наблюдается парадоксальное явление: возникло противоречие между тенденцией снижения удельного веса военного потенциала в гарантированном обеспечении военной безопасности страны и все еще существующим традиционно приоритетным социальным заказом на военную силу в решении спорных проблем.

Разрешить это противоречие не просто даже большим, богатым и внутренне стабильным государствам, но чрезвычайно сложно это сделать малым странам, тем более если они переживают серьезные трудности в экономике, политике, военной области, социальной и духовной сфере.

Практика показывает, что абсолютизация военного компонента национальной безопасности, наращивание военной мощи может не только нарушить равновесие сил в

мире, но и серьезно подорвать экономику государства, научно-технический, духовный, культурный рост, нарушить его внутренний баланс затрат на созидание и предполагаемую защиту от военных угроз и опасностей.

В свою очередь, недооценка значимости эффективной военной безопасности может стимулировать агрессию со стороны других государств. Стремительное нарастание военной опасности из-за незначительных разногласий и превращение ее в непосредственную военную угрозу в условиях пренебрежительного отношения к безопасности страны практически подводит ее на край катастрофы.

В заключение отметим, что национальная безопасность и ее военная составляющая – важнейшие условия сохранения целостности нации, ее суверенитета, конституционных основ общественной жизни. Гуманистическая ценность военной безопасности сохраняется в любых условиях социального развития, ибо она определяет состояние общества, государства и личности.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԸ. ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՅՎԱԾԵԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՏԱԿ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ՊՆ Մարշալ Ա.Խանկերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի հանրակրթական առարկաների ֆակուլտետի պիևվորական առաջնորդության և ռազմաքաղաքական առարկաների ամբիոնի պետ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, քաղաքագիտության դոցենտ, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հոդվածում քննարկվում են պետության ռազմական անվտանգության ներուժը և դրա բաղկացուցիչները, որոնք փոփոխական մեծություններ են: Ռազմական ներուժի փոփոխությունը կախված է հասարակության զարգացման փուլից, հնարավորություններից, գործող քաղաքական ռեժիմից, իշխանության եկած էլիտայի քաղաքական հասունությունից և շատ այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պայմաններից:

Հետազոտության նպատակն է իրականացնել պետության ռազմական անվտանգության և դրա ապահովման համակարգի փիլիսոփայաքաղաքագիտական վերլուծություն:

Համաձայն վերը նշված նպատակի՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- սահմանել «Պետության ռազմական անվտանգություն» հասկացությունը որպես «Ազգային անվտանգության» համակարգի բաղկացուցիչ մաս,
- ուսումնասիրել պետության ռազմական անվտանգության ներուժի էությունը և կառուցվածքը,
- բնութագրել «ազգային» և «ռազմական» ներուժ տերմինների էությունը:

Հետազոտության արդյունքում եզրակացրել ենք, որ ռազմական անվտանգությունը հանդիսանում է տնտեսական, սոցիալական, քաղաքական, գիտատեխնիկական, հոգևոր ու ռազմական ներուժերի ամբողջական փոխկապակցվածություն, որոնք միմյանցից տարբերվում են որակական առանձնահատկությամբ և ներքին կառուցվածքով: Նշված բաղկացուցիչների ամբողջականությունը թույլ է տալիս ռազմական ներուժի զարգացման այնպիսի ուղղորդվածություն, ինչը հնարավորություն կտա պետության ու հասարակության ամբողջական ներուժը վերածել ռազմական անվտանգությանը ներկայացվող պահանջներին համապատասխանող գործին:

Հիմնաբառեր՝ անվտանգություն, ներուժ, հպորություն, համախառն հպորություն, ռազմական հպորություն, ռազմական ներուժ:

THE POTENTIAL OF MILITARY SECURITY OF THE STATE: ESSENCE, STRUCTURE AND FEATURES

ARTAK HARUTYUNYAN

*Ministry of Defense of the Republic of Armenia, Military Aviation University after Marshal A. Khanperyants, Faculty of General-educational Disciplines, Chair of Military Leadership and Military-political Disciplines, Head
Ph.D. in Philosophy, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

This article deals with the military security potential of the state, its components, which, as you know, are not of constant value. They are changed depending on the stage of the development of a society, its potential, the nature of the existing regime, the maturity of the ruling political elite, and many other conditions.

The aim of this study is to carry out a philosophical-political analysis of the military security of the state and its systems.

In accordance with the aim of the study the following objectives are set:

- to define the essence of the concept of «military security of the state» as one of the specific types of national security;
- to consider the essence and content military security potential of the state;
- to characterize the relationship between the essence of the terms «national» and «military» potential.

Military security presents an integral interconnection of economic, social, political, scientific-technical, spiritual and just military capabilities, which differ from each other in their quality and internal structure.

The allocation of these potentials forming in interaction an integral potential of military security allows directing the process of its development to turn the potential abilities of the state and society into an active factor that meets the requirements for the military security.

Keywords: *security, potential, power, combined power, military power, military potential.*

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՕՐԵՆՔԻ ԿՈԼԻԶԻԱՆԵՐԸ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ***

ՉՏԴ 340.12

DOI: [10.52063/25792652-2021.1-64](https://doi.org/10.52063/25792652-2021.1-64)**ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ**

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
artur.ghambaryan@gmail.com

Հոդվածի նպատակն է իրավափոփոխության հարթությունում բացահայտել իրավունքի (արդարության) և օրենքի կոլիզիոն հարաբերակցությունը:

Հոդվածի հիմնական խնդիրներն են՝ վերլուծել իրավունքի և օրենքի հակասությունը լայն իրավաբանական տեսանկյուններից, ինչպես նաև պատասխանել այն հարցին, թե ինչպես պետք է գործի իրավակիրառողը, եթե կոնկրետ գործը լուծելիս հանդիպում է իրավունքի (արդարության) և օրենքի աղաղակող հակասության:

Հեղինակն օգտագործել է մի շարք գիտական մեթոդներ, մասնավորապես՝ պատմաիրավական և իրավահամեմատական մեթոդները:

Հեղինակը եզրակացնում է, որ լայն իրավաբանական կողմնակիցները իրավունքի և օրենքի հակասության հարցը դիտարկում են հիմնականում օրենսդրական քաղաքականության տեսանկյուններից, սակայն չեն քննարկում այն հարցը, թե իրավակիրառողը ինչպես պետք է վարվի, երբ կոնկրետ գործով հանդիպում է իրավունքի և օրենքի աղաղակող հակասության:

Հոդվածում «օրենքը խիստ է, բայց օրենք է» և «անարդար օրենքը օրենք չէ» ասույթները դիտարկվում են լեզիվի և բնական իրավունքի հարթություններում: Հեղինակը եզրակացնում է, որ ռադիկալիզմի բանաձևը «Օրենքը խիստ է, բայց օրենք է» ասույթից բացառությունն է, որն անցել է գործնական ապրոքացիա: Այս բանաձևը մի կողմից արժևորում է օրենքի որոշակիությունն ու կայունությունը, մյուս կողմից մարդուն (հասարակությանը) պաշտպանում է աղաղակող անարդար օրենքներից:

*ՀՀ դատավորները անիրավ օրենքներ ախտորոշելու դեպքում պետք է դիմեն *contra legem* իրավակիրառման:*

*Հիմնաբառեր՝ իրավունք, օրենք, կոլիզիոն իրավունք, հոգեբանական իրավաբանական, մատերիալիստական իրավաբանական, ռադիկալիզմի բանաձև, *contra legem* իրավակիրառում:*

* Հոդվածը ներկայացվել է 07.01.2021թ., գրախոսվել՝ 15.02.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Օրենսդրական քաղաքականությունը և կոլիզիոն իրավունքը

Իրավաբանները, այդ թվում՝ պրակտիկները հանդարտ են վերաբերում, երբ in abstracto հռչակվում է, որ օրենքները պետք է համապատասխանեն արդարությանը (օրենսդիրը պետք է գործի արդարության սկզբունքի հիման վրա), սակայն իրավաբանների համայնքում «հեշտությամբ վրդովմունքի փոթորիկ է բարձրանում, երբ հայտարարվում է, որ դատավորները պետք է գործը լուծեն արդարության, այլ ոչ թե օրենքների համաձայն»¹⁸⁶: Նման դեպքերում բարձրացվում է արդարության (իրավունքի) և օրենքի հակասությունները իրավակիրառ հարթությունում լուծելու հարցը:

Արդարության (իրավունքի) և օրենքների հարաբերությունը իրավունքի փիլիսոփայության կենտրոնական հարցերից է, որի շրջանակներում պետք է առանձնացնել իրավունքի և օրենքի կոլիզիոն փոխհարաբերության երկու հարթություն՝ օրենսդրական քաղաքականությունը և կոլիզիոն իրավունքը:

Փիլիսոփաները օրենսդրական քաղաքականության հարթությունում փաստում են, որ օրենքը (պոզիտիվ իրավունքը) պետք է համապատասխանի պատշաճ իրավունքին (արդարությանը, բնական իրավունքին), իսկ եթե չի համապատասխանում, ապա օրենսդրությունում պետք է կատարել փոփոխություններ, և օրենքը համապատասխանեցնել իրավունքին:

Օրենսդրական քաղաքականությունը չի պատասխանում այն հարցին, թե ինչպես պետք է վարվի իրավակիրառողը, երբ կոնկրետ գործի լուծման շրջանակներում հանդիպում է իրավունքին (արդարությանը) ակնհայտորեն հակասող օրենքի. արդյոք նա պարտավոր է կուրորեն հնազանդվել անիրավ օրենքներին և դառնալ այդ օրենքը կատարող կարգապահ զինվոր, թե՞ առկա է այլ ճանապարհ: Մի կողմից արդարության սկզբունքի վկայակոչմամբ պոզիտիվ օրենքները կատարելուց հրաժարվելը, ամենայն հավանականությամբ, հասարակությանը կուղեկցի դեպի անարխիա և քաոս, մյուս կողմից արդարության տարրական պահանջները բամբարող օրենքների անվերապահ կատարումը հասարակությանը կուղեկցի դեպի ավտորիտարիզմ: Բնականաբար և՛ անարխիան, և՛ ավտորիտարիզմը մարդու և հասարակության համար սպառնալիք են: Սակայն ողբերգությունն այն է, որ այս դիլեման համընդհանուր լուծում չունի:

Սույն հարցի պատասխանը կարելի է փնտրել կոլիզիոն իրավունքի փիլիսոփայական տիրույթում, որը փորձում է պատասխանել այն հարատև հարցին, թե իրավակիրառողը *կոնկրետ գործով* իրավունքի և օրենքի հակասության դեպքում ինչ չափանիշով պետք է որոշի՝ ղեկավարվել արդարացի բովանդակություն ունեցող, սակայն ձևական որոշակիությունից զուրկ իրավունքով (1), թե՞ իրավունքից (արդարությունից) զուրկ, սակայն ձևական որոշակիությամբ օժտված օրենքով (2):

1.2. Իրավունքի և օրենքի կոլիզիաները և լայն իրավաընկալումը

Լայն իրավաընկալման տեսանկյունից իրավունքի և օրենքի փոխհարաբերությունը համակողմանիորեն քննարկվում են «Իրավական և քաղաքական ուսմունքների պատմություն» և «Իրավունքի փիլիսոփայություն» դասընթացների շրջանակներում: Սույն դասընթացում ուսանողներին նախ լայն իրավաընկալման տեսանկյունից կներկայացվեն իրավունքի (արդարության) և օրենքի հակասությունների լուծման տարբերակները, այնուհետև կլուսաբանվեն իրավունքին հակասող օրենքի կիրառման մասին փիլիսոփայական մոտեցումները:

Իրավունքի և օրենքի կոլիզիոն հարաբերությունները հեղինակի սուբյեկտիվ ընտրությամբ կներկայացվեն իրավունքի հոգեբանական ու մատերիալիստական իրավաընկալումների տեսանկյուններից:

¹⁸⁶ D'Amato Anthony On the Connection Between Law and Justice. (2011). Faculty Working Papers. Paper 2. <http://scholarlycommons.law.northwestern.edu/facultyworkingpapers/2>, 02.01.2021.

2. Իրավունքի և օրենքի կոլիզիաները

2.1. Պոպիտիվ և ինտուիտիվ իրավունքների հակասությունն ըստ իրավունքի հոգեբանական իրավաբանական

ա) Ընդհանուր դրույթներ: Իրավունքի հոգեբանական իրավաբանական հիմնադիրը ռուս նշանավոր գիտնական Լ. Պետրաժիցկին է (1867-1931թթ.), որ առանձնացնում էր պոպիտիվ ու ինտուիտիվ իրավունքի տեսակները, որոնց կոլիզիոն հարաբերությունները ներկայացնելու համար անհրաժեշտ է լուսաբանել մի քանի ընդհանուր հարցեր:

Նախ՝ ինտուիտիվ իրավունքը ինքնաբերական (ինքն իր մեջ կատարվող) էմոցիոնալ-հոգեբանական գործընթաց է, որի պարագայում իրավունքը նույնանում է իրավագիտակցության (իրավական էմոցիաների, ինտուիտիվ-իրավական խղճի, ապրումների) հետ: Ինտուիտիվ իրավունքը չունի նյութական ամրագրման ձև, իսկ դրա ներգործությունը մարդու վարքագծի վրա ընթանում է հիմնականում անտեսանելի եղանակով, օրինակ՝ երդվյալ ատենակալը ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը լուծելիս ամենայն հավանականությամբ չի գիտակցում, որ իր որոշման հիմքում ընկած է ինտուիտիվ իրավունքը:

Երկրորդ՝ ի տարբերության բնական իրավունքի տեսության՝ իրավունքի հոգեբանական դոկտրինը պոպիտիվ իրավունքի և ինտուիտիվ իրավունքի հարաբերակցությունը չի դիտարկում արհեստական և իդեալական իրավունքների տիրույթում: Նա ինտուիտիվ իրավունքը չի համարում բացառապես իդեալական կամ ցանկալի իրավունք, ավելին՝ Լ. Պետրաժիցկին նշում է. «Ինտուիտիվ իրավունքի բովանդակությունը կարող է լինել և լինում է նաև խիստ անխելամիտ, բարբարոսական, առավել հետադիմական, քան գոյություն ունեցող պոպիտիվ իրավունքն է: (...) Օրինակ՝ օրենքը սահմանում է կիրթ ամուսնական իրավունք, միևնույն ժամանակում որոշ շերտերի ինտուիտիվ իրավունքը ամուսնուն հնարավորություն է տալիս ծեծել, խոշտանգել կնոջը, թույլ չի տալիս կնոջը բողոքել ամուսնու դեմ, այն համարում է հանցագործություն»¹⁸⁷:

Եթե բնական իրավունքը, որպես իդեալական իրավունք, իր բովանդակային-արժեքային կոդի շնորհիվ *in abstracto* ճանաչվում է որպես գերակայող իրավունք (պոպիտիվ իրավունքը պետք է համապատասխանի բնական իրավունքին), ապա նույնը չի կարելի պնդել ինտուիտիվ և պոպիտիվ իրավունքների հարաբերակցության մասին: Ինտուիտիվ իրավունքը զուտ արժեքային-բովանդակային հիմնավորմամբ *in abstracto* չի կարելի գնահատել պոպիտիվ իրավունքի համեմատությամբ գերակայող իրավունք:

Երրորդ՝ առանձնացվում է պոպիտիվ և ինտուիտիվ իրավունքների փոխհարաբերակցության երեք ոլորտ՝

1. պոպիտիվ իրավունքի գոյության և գործողության բացառիկ ոլորտ (օրինակ՝ պաշտոնական պետական հարաբերությունները, կառավարումը, պետական դատարանը, բյուջեի կազմումը և այլն),

2. ինտուիտիվ իրավունքի գոյության և գործողության բացառիկ ոլորտ (օրինակ՝ տնային կյանքում, ընտանեկան, ընկերական հարաբերություններում չարի և բարու հարցերը, բարիքների բաշխումը),

3. երկու իրավունքների զուգահեռ գոյության և գործողության ոլորտ¹⁸⁸:

Առաջին և երկրորդ ոլորտներում պոպիտիվ և ինտուիտիվ իրավունքների միջև հակասություն չի կարող ծագել, քանի որ այս իրավունքները ընդհանուր առմամբ չեն խաչվում: Օրինակ՝ Լ. Պետրաժիցկին նշում է. «Օրենքով սահմանված է բյուջե կազմելու որևէ կարգը: Եթե փորձենք այդ կարգի վերաբերյալ գործողության մեջ դնել մեր

¹⁸⁷ **Петражицкий Л. И.**, Теория права и государства в связи с теорией нравственности в 2 ч. Часть 2 / М.: Юрайт, 2017. С. 154, 159.

¹⁸⁸ **Петражицкий Л. И.**, Указ. соч. С. 167.

ինտուիտիվ իրավական խիղճը և նրանցի պատասխան ստանալ, թե այդ կարգը ինտուիտիվ իրավունքի տեսանկյունից արդյոք պատշաճ է, թե՞ մեր ինտուիտիվ իրավական խիղճն այլ կարգ է պահանջում, ապա մեր փորձերը հաջողություն չեն ունենա, մենք որևէ պատասխան չենք ստանա, այսինքն՝ մեր գիտակցության մեջ համապատասխան ինտուիտիվ իրավական ապրումներ չեն ծագի»¹⁸⁹:

Այս օրինակից պարզ է դառնում, որ բյուջե կազմելու կարգի վերաբերյալ պոզիտիվ և ինտուիտիվ իրավունքների միջև կոլիզիաներ չեն կարող ծագել:

Պոզիտիվ և ինտուիտիվ իրավունքները միմյանց հետ մրցակցում են զուգահեռ գոյության և գործողության ոլորտում (երրորդ ոլորտում): Ավելին՝ ըստ Լ. Պետրաժիցկու՝ այս ոլորտում պոզիտիվ և ինտուիտիվ իրավունքների տարաձայնությունները անխուսափելի են:

բ) Պոզիտիվ և ինտուիտիվ իրավունքների կոլիզիաները զուգահեռ գոյության և գործողության ոլորտում: Լ. Պետրաժիցկին համակողմանի քննարկում է պոզիտիվ իրավունքի և ինտուիտիվ իրավունքի հակադրության հետևանքները (սման հակադրության հետևանք էր համարում հեղափոխությունները), ինչպես նաև ինտուիտիվ իրավունքի ազդեցությամբ օրենսդրության փոփոխության հարցերը: Նշված փոխազդեցությունը օրենսդրական քաղաքականության տիրույթում է, քանի որ այն պոզիտիվ իրավունքը օրենսդրական փոփոխությունների միջոցով ինտուիտիվ իրավունքին համապատասխանեցնելու (կամ հակառակի) մասին է:

Լ. Պետրաժիցկին հստակ չի պատասխանում այն հարցին, թե իրավակիրառողը ինչպես պետք է վարվի, երբ կոնկրետ գործը լուծելիս հանդիպում է պոզիտիվ և ինտուիտիվ իրավունքների հակասության, ինչ կոլիզիոն կանոնի հիման վրա պետք է որոշի, թե որ իրավունքն է գերակայում: Նա նշում է. «Քանի որ փոխադարձ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կողմերի ինտուիտիվ-իրավական կարծիքներն ըստ բովանդակության համընկնում են, և նրանք (կողմերը) գործում են իրենց ինտուիտիվ-իրավական խղճի պահանջներին համապատասխան (հիմանալով կամ չհիմանալով, որ պոզիտիվ իրավունքի տեսանկյունից լուծումն այլ կլիներ), ուստի ինտուիտիվ իրավունքը ձեռք է բերում վճռական նշանակություն»¹⁹⁰:

Յեղիականի մեջբերված դատողությունից չի կարելի եզրակացնել, որ ինտուիտիվ իրավունքը բոլոր իրավիճակներում գերակայություն ունի պոզիտիվ իրավունքի նկատմամբ, քանի որ վերը նշված մտքին անմիջապես հաջորդում է հեղինակի մեկ այլ դատողությունը. «Այնուամենայնիվ, քանի որ գործը ի սկզբնե քննարկվում և լուծվում է պոզիտիվ իրավունքի հիման վրա կամ կողմերի տարաձայնության հետևանքով, գործով դիմում են պոզիտիվ իրավունքին, ապա ստացվում է, որ վճռորոշ նշանակություն է ձեռք բերում պոզիտիվ իրավունքը»¹⁹¹:

Լ. Պետրաժիցկին պոզիտիվ և ինտուիտիվ իրավունքների կոլիզիաների լուծման մասին հստակ դիրքորոշում չի հայտնել, սակայն այս հարցի վերաբերյալ կարելի է կատարել որոշ ենթադրություններ:

Նախ՝ միմյանց հակասող պոզիտիվ և ինտուիտիվ իրավունքների միջև ընտրություն կատարելու հարցը կախված է կողմերի միջև իրավունքի մասին վեճի ամկայությունից կամ բացակայությունից: Եթե կողմերը հարցը լուծելիս փաստացի ղեկավարվում են ինտուիտիվ իրավունքով, այսինքն՝ ընդունում են ինտուիտիվ իրավունքով սահմանված փոխադարձ իրավունքները և պարտականությունները (հետևապես կողմերի միջև բացակայում է իրավունքի ընտրության վերաբերյալ վեճ), ապա հասկանալի է, որ ինտուիտիվ իրավունքին հակասող պոզիտիվ իրավունքը չի գործում:

¹⁸⁹ Петражицкий Л. И., Указ. соч. С. 163.

¹⁹⁰ Петражицкий Л. И., Указ. соч. С. 170.

¹⁹¹ Петражицкий Л. И., Указ. соч. С. 170.

Այս դեպքում ինտուիտիվ ու պոզիտիվ իրավունքների կոլիզիան լուծվում է հոգուտ ինտուիտիվ իրավունքի:

Մինչդեռ, եթե հարցը լուծելիս կողմերի միջև իրավունքների և պարտականությունների բովանդակության վերաբերյալ ծագում է վեճ, այսինքն՝ կողմերից մեկը չի համաձայնվում հարցը լուծել ինտուիտիվ իրավունքի հիման վրա, ապա կողմերը հարկադրված են դիմելու պոզիտիվ իրավունքին: Այս դեպքում ինտուիտիվ ու պոզիտիվ իրավունքների կոլիզիան լուծվում է հոգուտ պոզիտիվ իրավունքի:

Երկրորդ՝ միմյանց հակասող պոզիտիվ և ինտուիտիվ իրավունքների միջև ընտրության հարցը կախված է նրանից, թե ով պետք է լուծի գործը: «Եթե գործի լուծումը հանձնվել է երրորդ անձին, կամ խղճի դատարանին, ապա վճռորոշ նշանակություն ունի ինտուիտիվ իրավունքը»¹⁹²:

Ասվածը կարելի է առավել պարզ բացատրել պրոֆեսիոնալ դատարանում և երդվյալ ատենակալների դատարանում կիրառվող իրավունքների տարբերության օրինակով: Եթե գործը լուծում է պրոֆեսիոնալ դատավորը, ապա նա ղեկավարվում է պոզիտիվ իրավունքով, մինչդեռ երդվյալ ատենակալը ղեկավարվում է իր ինտուիտիվ-իրավական ապրումներով: Պոզիտիվ իրավունքը և ինտուիտիվ իրավունքը կարող են նախատեսել գործի լուծման վերաբերյալ հակասող կանոններ, ուստի դրանով է բացատրվում, թե ինչու է միևնույն վեճը երդվյալ ատենակալների դատարանում լուծվում մի կերպ, իսկ պրոֆեսիոնալ դատարանում՝ այլ կերպ: Եթե ամբաստանյալի մեղավորությունը որոշում է երդվյալ ատենակալը, ապա նա, ղեկավարվելով ինտուիտիվ-իրավական խղճով, ամբաստանյալին կարողարացնի, իսկ եթե նույն գործով որոշում կայացնողը լինել պրոֆեսիոնալ դատավորը, ապա նա, ղեկավարվելով քրեական պոզիտիվ իրավունքով, ամենայն հավանականությամբ ամբաստանյալին կճանաչեր մեղավոր:

2.2. Օբյեկտիվ, պոզիտիվ և նախապոզիտիվ իրավունքների հակասությունն ըստ մատերիալիստական իրավաբանական

ա) Ընդհանուր դրույթներ: Մատերիալիստական իրավաբանական հետևողական կողմնակիցներից է ժամանակակից ռուս տեսաբան Վ. Սիրոժիխը, որ առանձնացնում է օբյեկտիվ, պոզիտիվ և նախապոզիտիվ իրավունքի տեսակները, որոնց կոլիզիոն հարաբերությունները ներկայացնելու համար անհրաժեշտ է լուսաբանել մի քանի ընդհանուր հարցեր:

Նախ՝ օբյեկտիվ իրավունքը տնտեսական հարաբերությունների ձև է, որն ունի վերացական բնույթ և արտահայտվում է օբյեկտիվ իրավունքի ընդհանուր պահանջներում (օբյեկտիվ իրավունքի սկզբունքներում): Օբյեկտիվ իրավունքը, որպես վերացական հնարավորություն, մի շարք փուլերով (պոզիտիվ իրավունքի ձևավորում, պայմանագրի կնքում, պայմանագրի կատարում և այլն) անցում է կատարում դեպի իրականություն: Օբյեկտիվ իրավունքը անմիջական իրականության մեջ գոյություն ունի կոնկրետ իրավահարաբերությունների տեսքով¹⁹³: Պոզիտիվ և նախապոզիտիվ իրավունքները օբյեկտիվ իրավունքի կոնկրետացման ձևերից են:

Անմիջական իրականությունում օբյեկտիվ իրավունքը, ի տարբերություն պոզիտիվ իրավունքի, կարող է գործել իրավունքի աղբյուրների այնպիսի ձևերում, որոնք կապված չեն պետության իրավաստեղծ գործառույթների հետ. սովորույթներ, նորմատիվ պայմանագրեր, անհատական համաձայնագրեր, իրավաբանական դոկտրին և այլն: Օրինակ՝ պոզիտիվիստական իրավունքի տեսության տեսանկյունից աշխատավորների աշխատանքային և այլ իրավունքները ծագել են այն պահից, երբ ճանաչվել ու ամրագրվել են օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում: Մինչդեռ

¹⁹² **Петражицкий Л. И.**, Указ. соч. С. 170.

¹⁹³ **Сырых В. М.**, Материалистическая философия частного права: монография. М.: Юрлитинформ, 2014. С. 44-45, 50-51.

աշխատավորների ութժամյա աշխատանքային օրվա օբյեկտիվ իրավունքը, գործազրկության նպաստ ստանալու իրավունքը ծագել են ավելի վաղ, երբ մեքենայացված արտադրության գործածության հետևանքով էապես աճեց աշխատանքի արտադրողականությունը¹⁹⁴:

Երկրորդ՝ պոզիտիվ իրավունքը պետության ընդունած կամ սանկցավորած օրենքներում, այլ նորմատիվ իրավական ակտերում ամրագրված իրավական նորմերն են: Մատերիալիստական տեսության կողմնակիցները, ի տարբերության պոզիտիվիստների, վավերական են համարում այն գործող պոզիտիվ իրավունքի նորմերը, որոնք համապատասխանում են օբյեկտիվ իրավունքին: Հակառակ դեպքում պոզիտիվ իրավունքի նորմը պետք է համարել իրավունքի աղճատված (превращенная) ձև, այսինքն՝ այնպիսի նորմ, որը թեև ունի պոզիտիվ իրավունքի ձև, սակայն հանդիսանում է իրավախախտման տեսակ, իրավաստեղծ կամայականություն: Այն կարելի է համարել ամեն բան, բայց ոչ վավերական իրավունք¹⁹⁵: Դրանք գործող նորմեր են միայն ըստ ձևի, իսկ ըստ բովանդակության՝ իրավաստեղծ կամքի սուբյեկտիվ, կամայական դրսևորումներ են:

Երրորդ՝ նախապոզիտիվ (հասարակական) իրավունքը վավերական մասնավոր իրավունքի նորմերի համակցություն է, որը ստեղծվում է քաղաքացիական հասարակության, նրա առանձին անդամների կողմից գործող օրենսդրության բացերը լրացնելու նպատակով և իրացվում են կոնկրետ իրավահարաբերություններում մինչև պոզիտիվ *մասնավոր*¹⁹⁶ իրավունքի կողմից ամրագրվելու պահը¹⁹⁷: Նախապոզիտիվ իրավունքը ծագում է նոր տնտեսական հարաբերությունների զարգացման արդյունքում: Մինչև օրենսդիրն անհրաժեշտ համարի օրենքով կարգավորելու նոր հարաբերությունները, դրանց տալու համապարտադիր բնույթ, պարզվում է, որ հասարակությանն արդեն իսկ հայտնի է հարաբերությունների իրավական ձևը, որ գործում է նախապոզիտիվ իրավունքի ձևով: Նախապոզիտիվ իրավունքը ծնվում է ոչ թե այն բացահայտելու կամ հասարակական ճանաչում ձեռք բերելու օրը, այլև կոնկրետ իրավահարաբերություններում իրացվելու (օրինակ՝ պայմանագրում ամրագրվելու) օրը:

Փաստորեն նախապոզիտիվ իրավունքը վարքագծի այն կանոնների համակցությունն է, որը փաստացի կարգավորում է մասնավոր հարաբերություններ՝ մինչև պոզիտիվ իրավունքում ամրագրում ստանալը:

բ) Օբյեկտիվ իրավունքի և պոզիտիվ մասնավոր իրավունքի կոլիզիաները: Ի տարբերություն պոզիտիվիզմի՝ մատերիալիստական իրավաընկալումն առաջնային դեր է տալիս օբյեկտիվ իրավունքին. պոզիտիվ իրավունքը պետք է համապատասխանի օբյեկտիվ իրավունքին: Օբյեկտիվ իրավունքին հակասող պոզիտիվ իրավունքի նորմերը ոչ թե իրավունք են, այլ դրա աղճատումը:

Վ. Սիմիխը նշում է աղճատված պոզիտիվ մասնավոր իրավունքի հետևյալ ձևերը՝

1. օբյեկտիվ իրավունքի սկզբունքներին ու նորմերին և (կամ) իրավունքի գործառնությանը չհամապատասխանող նորմատիվ կարգադրագրերը,
2. բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին հակասող կարգադրագրերը,

¹⁹⁴ Сырых В. М., Указ. соч. С. 52-53.

¹⁹⁵ Сырых В. М., Указ. соч. С. 141.

¹⁹⁶ Հեղինակը ճանաչում է միայն նախապոզիտիվ *մասնավոր* իրավունքը, քանի որ կարծում է, որ հանրային-իրավական հարաբերությունները չեն կարող ծագել ավելի շուտ, քան պետությունը ինքնուրույն և իր հայեցողությամբ դրանք կամրագրի օրենքում կամ այլ նորմատիվ իրավական ակտերում: Տե՛ս **Сырых В. М.** Материалистическая философия публичного права: монография. М.: Юрлитинформ, 2016, С. 306:

¹⁹⁷ **Сырых В. М.**, Материалистическая философия частного права: монография. М.: Юрлитинформ, 2014. С. 183.

3. Նորմատիվ իրավական ակտերը կամ առանձին ակտերը, որոնք ընդունվել են իրավաստեղծ այն մարմնի կողմից, որի ընդունումը դուրս է նրա իրավաստեղծումից,

4. օրինաստեղծ ընթացակարգի կոպիտ խախտմամբ ընդունված նորմատիվ իրավական ակտերը¹⁹⁸:

Պոզիտիվ իրավունքի աղճատման ձևերից մեկն այն է, երբ պոզիտիվ իրավունքը չի համապատասխանում օբյեկտիվ իրավունքի սկզբունքներին: Այդ սկզբունքներն են՝ փոխկախվածություն, ապրանք փոխանակող սեփականատերերի հավասարությունը, փոխանակության համարժեքությունը, պայմանագիրը՝ որպես փոխանակության մասնակիցների ազատ կամքի ամրագրման ձև¹⁹⁹: Օբյեկտիվ իրավունքի այդ սկզբունքները համընդհանուր չեն, դրանք վերաբերում են միայն մասնավոր իրավունքին²⁰⁰:

Այսպիսով՝ օբյեկտիվ ու պոզիտիվ մասնավոր իրավունքների հակասության դեպքում պոզիտիվ իրավունքը համարվում է օբյեկտիվ իրավունքի աղճատում, սակայն Վ. Սիռիխը չի լուսաբանում այն հարցը, թե իրավակիրառողը ինչպես պետք է վարվի, եթե կոնկրետ գործով հանդիպում է նման հակասության: Կարելի է ենթադրել, որ եթե հեղինակը օբյեկտիվ իրավունքն աղճատող պոզիտիվ նորմերը համարում է իրավախախտման տեսակ, իրավաստեղծ կամայականություն, ապա պետք է ընդունի նաև, որ իրավակիրառողը գործը լուծելիս չի կարող ղեկավարվել այդպիսի իրավախախտ դրույթներով: Որևէ պարագայում իրավախախտումն ու կամայականությունը չեն կարող համարվել գործի լուծման իրավական հիմք:

գ) Պոզիտիվ մասնավոր իրավունքի և նախապոզիտիվ մասնավոր իրավունքի հակասությունը: Վ. Սիռիխը նախապոզիտիվ և պոզիտիվ իրավունքների հակասության դեպքում նախապատվություն է տալիս ոչ թե պոզիտիվ, այլ նախապոզիտիվ իրավունքին: Այսպես, նա նշում է. «Պոզիտիվ և նախապոզիտիվ իրավունքների միջև կոլիզիան լուծվում է վերջինիս օգտին: Վավերական նախապոզիտիվ իրավունքը ճանաչվում է որպես այդպիսին անկախ պոզիտիվ իրավունքի կոնկրետ նորմերին համապատասխանելու աստիճանից: Նման իրավիճակում առկա են պոզիտիվ իրավունքի գործող նորմերն անվավեր ճանաչելու բոլոր հիմքերը, որոնք նույնիսկ եթե պահպանվում են օրենսդրի կողմից, ապա ոչ օպերատիվության, իրավունքի համակարգը արդիական, տնտեսական հարաբերությունների զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխանող վիճակում պահելու անկարողության հետևանքով²⁰¹:

Վ. Սիռիխը պոզիտիվ և նախապոզիտիվ իրավունքների հակասության պարագայում թեև նշում է պոզիտիվ նորմերն անվավեր ճանաչելու հիմքերի մասին, սակայն նրա դիտարկումներն առավելապես օրենսդրական քաղաքականության տիրույթում են: Ըստ տեսաբանի՝ եթե պետությունը հասարակության կողմից ստեղծված վավեր նախապոզիտիվ իրավունքը ճանաչել է իրավախախտում, իսկ այն իրացնող անձանց ենթարկել է պատասխանատվության, մինևույն է, հասարակության

¹⁹⁸ Сырых В. М., Указ. соч. С. 154.

¹⁹⁹ Сырых В. М., Указ. соч. С. 23, 26.

²⁰⁰ Վ. Սիռիխը հանրային իրավունքի մատերիալիստական փիլիսոփայությանը վերաբերող մենագրության մեջ որպես օբյեկտիվ իրավունքի համընդհանուր սկզբունքներ նշում է՝ համապարտադիրությունը, փոխկախվածությունը, համարժեքությունը և իրավաբանական պատասխանատվությունը: Այս սկզբունքները գործում են նաև հանրային իրավունքում, սակայն դրանց ավելանում է ևս յոթ սկզբունք, որոնք վերաբերելի են միայն հանրային իրավունքին՝ օրինականություն, մատչելիություն, հիերարխիկ ենթակարգություն, հիմնավորվածություն և այլն: Տե՛ս Сырых В. М., Материалистическая философия публичного права: монография. М.: Юрлитинформ, 2016, С. 197:

²⁰¹ Сырых В. М., Материалистическая философия частного права: монография. М.: Юрлитинформ, 2014. С. 184.

առաջադիմական զարգացման ընթացքն անխուսափելիորեն կհանգեցնի նախապոզիտիվ իրավունքի հաղթանակին: Օրենսդիրը ինչքան շատ համառոտ՝ պահպանի հնացած օրենքը և չփոփոխի այն, այնքան շատ վնաս կպատճառի հասարակությանը՝ վատնելով կյուբական ռեսուրսներն ու արտադրողական ուժերը:

Այսպիսով՝ ըստ մատերիալիստական իրավաբանական տեսության՝ եթե պոզիտիվ իրավունքը հակասում է օբյեկտիվ իրավունքին կամ նախապոզիտիվ իրավունքին, ապա երկու դեպքում էլ պոզիտիվ իրավունքը «պարտվում է»:

3. Իրավունքին հակասող օրենքը. կիրառել, թե՞ ոչ

3.1. «Dura lex, sed lex» v. «Lex injusta non est lex»

ա) Օրենքը խիստ է, բայց օրենք է: «Dura lex, sed lex» ասույթը, որը թարգմանաբար նշանակում է «Օրենքը խիստ է, բայց օրենք է», իրավաբանական պոզիտիվիզմի (լեգիզմի) կանխադրույթներից է:

«Dura lex, sed lex» ասույթում ուղղակի ու բացահայտ չի խոսվում անարդար օրենքի մասին, սակայն «խիստ օրենք» ձևակերպումը քողարկված արդարացնում է անարդար օրենքների գոյությունը և կիրառումը: Պատահական չէ, որ լեգիստները «Dura lex, sed lex» ասույթի փոխարեն երբեմն օգտագործում են նույնաբովանդակ այլ ձևակերպումներ, օրինակ՝ «օրենքի գոյությունը մի բան է, նրա արժանիքները կամ թերությունները այլ բան են (Չ. Օուստին)», կամ «պետության օրենքը իդեալական չէ, բայց այն մի բան է, որ իրականում գոյություն ունի: ... Դա այն չէ, ինչ պետք է լինի, բայց այն է, ինչ կա» (Չ. Գրեյ): Իսկ Նորմատիվիստ Յ. Զելզենը (11.10.1881-19.04.1973թթ.) ուղղակիորեն նշում է, որ «իրավական նորմերը կարող են ունենալ ցանկացած բովանդակություն»²⁰²: Նա նացիստական բռնակալական օրենսդրության կիրառման աղետներից հետո շարունակում էր պնդել, որ նացիստական օրենսդրությունը իրավունք է. «Մենք կարող ենք ափսոսել, բայց մենք չենք կարող ժխտել, որ նացիստների իրավունքը դա նույնպես իրավունք է: Խորհրդային Միության իրավունքը նույնպես իրավունք է: Մենք կարող ենք նողկանք զգալ նրա հանդեպ, ինչպես որ նողկանք ենք զգում թունավոր օձի նկատմամբ, բայց մենք չենք կարող ժխտել, որ այն գոյություն ունի»²⁰³:

Այս ձևակերպումը նշանակում է՝ օրենքը համապարտադիր ուժ ունի՝ անկախ դրա բովանդակությունից: Օրենքը պարտադիր է նույնիսկ, եթե հակասում է իրավունքի (արդարության) տարրական պահանջներին:

ՀՀ-ում լեգիզմը սիմվոլների հարթությունում ունի պաշտոնական ճանաչում: Այսպես՝ ՀՀ վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչումը իրավաբանների բարձրագույն մասնագիտական կոչումն է, սակայն ՀՀ վաստակավոր իրավաբանի կրծքանշանի օրենսդրական նկարագրության մեջ նշվում է, որ այնտեղ դաջված է լատիներեն «Dura lex, sed lex» ասացվածքը:

«Dura lex, sed lex» ասույթի հակատիպը «Lex injusta non est lex» ասույթն է:

բ) Անարդար օրենքն օրենք չէ: «Lex injusta non est lex» ասույթը, որը թարգմանաբար նշանակում է «անարդար օրենքն օրենք չէ», բնական իրավունքի տեսության կանխադրություններից է:

Շատերն են խոսել օրենքի և արդարության հակասության դեպքում օրենքի անվավերության մասին: Օգոստինոս Երանելիի՝ կամքի ազատությանը նվիրված երկխոսությունում կերպարներից մեկը ասում է. «Օրենքը, որը արդար չէ, օրենք չէ»: Օգոստինոսյան ձևակերպումը երկար ժամանակ մեծ ճանաչում էր վայելում: Թոմաս Աքվինացին մեջբերում է այն, սակայն առաջարկում է ավելի չափավոր ձևակերպումներ՝

²⁰² Кельзен Г., Чистое учение о праве. 2-е изд / пер. с нем. СПб.: 2015. С. 246.

²⁰³ Цит. по Нерсесянц В. С. Философия права: Учебник для вузов. М.: Норма, 1999. С. 593-594.

«անարդար օրենքներն ավելի շուտ բռնություն են, քան օրենքներ կամ ոչ թե օրենք, այլ օրենքի աղավաղում»²⁰⁴:

Ըստ Աբվինացու՝ մարդու կողմից սահմանված ամեն օրենք չէ, որ ենթակա է կատարման: Մարդկային օրենքների կատարման կարևոր պայմանը բնական (աստվածային) օրենքին համապատասխանելն էր: Կոլիզիոն իրավունքի տեսանկյունից կարևոր է նրա այն դատողությունը, ըստ որի՝ բնական օրենքներին հակասող մարդկային օրենքները ենթակա չեն կատարման: Նա նշում էր. «Նման օրենքներին (Աստվածային բարիքներին հակասող օրենքներին՝ հեղ.) արգելվում է հետևել, քանզի Սուրբ Գրքում ասված է. «Պետք է առավել Աստծուն հնազանդվել, քան մարդկանց» (Գործք 5:29): Պետք չէ պահպանել օրենքը, երբ դրան հետևելը կարող է կործանախչ կերպով անդրադառնալ հասարակական բարիքի վրա»²⁰⁵:

«Lex iniusta non est lex» կանխադրույթը պոզիտիվիզմի (լեգիզմի) գերակայության պայմաններում տևական ժամանակ մատնվել է մոռացության: Սառույցը հալվեց միայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որը համարվում է պոզիտիվիզմի մեղմացման և բնական իրավունքի «վերածննդի» ժամանակաշրջան: Հենց այդ ժամանակ Նույնիսկ պոզիտիվիստներն ընդունեցին, որ «Lex iniusta non est lex» կանխադրույթը սահմանափակ դեպքերում կարող է գործնական կիրառություն ստանալ:

գ) «Օրենքը խիստ է, բայց օրենք է» ասույթից բացառությունը: Հիտլերյան Գերմանիայի և ստալինյան Խորհրդային Միության բռնակալական օրենքի միջոցով կատարված անիրավություններից հետո պոզիտիվիստները որոշակիորեն մեղմեցին իրենց ձևակերպումները: Ասվածը վերաբերում է հատկապես Գուստավ Ռադբուխին (21.11.1878 – 23.11.1949թթ.) և Հերբերտ Հարթին (18.07.1907 – 19.12.1992թթ.):

Անգլիացի գիտնական Հ. Հարթը, ելնելով պոզիտիվիզմի դիրքերից, պնդում էր, որ «անարդար օրենքը օրենք չէ» ձևակերպումը չափազանցված ու պարադոքսալ, Նույնիսկ՝ կեղծ մոտեցում է, այնուամենայնիվ, նա համակերպվում է այն մտքի հետ, որ որոշ օրենքներ չափազանց հրեշավոր (անարդար) են, որպեսզի կատարվեն կամ դրանց ենթարկվեն²⁰⁶:

Իրավաբաններին առավել հայտնի է նշանավոր գերմանացի գիտնական Գ. Ռադբուխի՝ աղաղակող անարդար օրենքների կիրառման անթույլատրելիության մասին մոտեցումը:

3.2. Գ. Ռադբուխի բանաձևը արդարության և օրենքի աղաղակող հակասության մասին

ա) Ընդհանուր դրույթներ: Գ. Ռադբուխը, որ մինչև նացիստական բռնապետությունը Գերմանիայի արդարադատության նախարարն էր, ըստ էության կիսում էր պոզիտիվիզմի «Dura lex, sed lex» գաղափարը: Նա իր մոտեցումները մասնակիորեն վերանայեց, երբ ականատես եղավ նվազագույն արդարության հետ անհամատեղելի՝ նացիստական օրենքների գործողության կործանարար հետևանքներին:

Գ. Ռադբուխը վերանայված մոտեցումներն արտացոլել է «Իրավունքի փրկիստփայության հինգ թռույթներ» և «Օրինական անիրավություն և վերօրինական իրավունք» հոդվածներում: Նա ընդունում է, որ գերմանացի իրավաբանները հանցավոր բովանդակությամբ ու կամայականությամբ թելադրվող օրենքների նկատմամբ դարձան անօգնական, քանի որ անվերապահորեն հավատում էին պոզիտիվիզմի՝ «օրենքը բոլոր դեպքերում օրենք է» սկզբունքին:

²⁰⁴ Финнис Дж., Естественное право и естественные права. пер. с англ. М.: 2012. С. 435-453.

²⁰⁵ Сумма теологии. Часть II-I. Вопросы 90-114. - К.: Ника-Центр, 2010. С. 76, 80.

²⁰⁶ Харт Г. Л. А., Понятие права / Пер. с англ.; СПб.: Изд-во С.-Петербур. ун-та, 2007. С. 16, 209.

Իրավունքի և օրենքի բախման հարցի վերաբերյալ Գ. Ռադբրուխի մոտեցումներից առանձնացնենք հետևյալները:

Առաջին՝ Ռ. Իերինգը (22.08.1818 – 05.09.1892թթ.) նշում էր, որ ինչպես զինվորը պետք է սովորի ենթակարգությանը, այնպես էլ դատավորը ծառայության ընթացքում սովորում է հնազանդվել օրենքին²⁰⁷: Ռ. Իերինգը սակայն չէր նշում, թե ինչպես պետք է վարվի զինվորը, երբ վերադասի հրամանը հանցավոր է, կամ դատավորը, երբ օրենքն ակնհայտ անարդար է: Այս հարցի պատասխանը հետագայում տալիս է Գ. Ռադբրուխը «Իրավունքի փիլիսոփայության հինգ թուղթեր» հոդվածում. «Չինվորներին ասում են՝ «հրամանը հրաման է», իսկ իրավաբանն ասում է՝ «Օրենքը օրենք է»: Բայց միևնույն ժամանակ հրամանին ենթարկվելու զինվորի պարտականությունը դադարում է գործել, երբ նա իմանում է, որ հրամանի նպատակը հանցագործությունն է կամ իրավախախտումն է: Իսկ իրավաբաններին ... օրենքի գործողությունից և սրան ենթարկվելուց բացառություններ հայտնի չեն: Օրենքը գործում է, որովհետև դա օրենք է, և դա օրենք է, եթե նրա ուժը շատ դեպքերում ճանաչվում է»²⁰⁸:

Երկրորդ՝ պոզիտիվիզմը ունակ չէ ինքնուրույն հիմնավորել օրենքի վավերականությունը: Պոզիտիվիզմը ելնում է նրանից, որ օրենքի վավերականությունն ապացուցվում է այն հարկադրանքով (ուժով) կատարելու ունակությամբ: Պոզիտիվ օրենքում առկա է առնվազն մեկ արժեք՝ օրենքի առկայությունն ավելի լավ է, քան նրա բացակայությունը, քանի որ այն ստեղծում է առնվազն իրավական կայունություն:

Երրորդ՝ իրավական կայունությունը միակ ու վճռորոշ արժեքը չէ: Իրավական կայունության հետ մեկտեղ առկա են այլ արժեքներ՝ նպատակահարմարությունն ու արդարությունը: Իրավական կայունության ու արդարության, վիճահարույց բովանդակությամբ օրենքի և օրենքում չարտացոլված, սակայն արդարացի իրավունքի միջև կոնֆլիկտը իրականում կոնֆլիկտ է մտացածին ու իրական արդարության միջև²⁰⁹: Ընդ որում, իրավական կայունությունը նույնպես բխում է արդարությունից, քանի որ իրավական կայունությունը չի թույլատրում, որ օրենքը մեկնաբանվի ու կիրառվի այսօր և այստեղ մի կերպ, իսկ վաղը և այլ վայրում՝ մեկ այլ կերպ:

Գ. Ռադբրուխը, ականատես լինելով Երրորդ Ռեյխի հակամարդկային (առաջին հերթին՝ ռասիստական) օրենքներին, նշել, որ դատավորն իրավունք ունի հրաժարվելու կիրառել գործող այն օրենքները, որոնք այնչափ բացահայտ անհամատեղելի են արդարության հետ: Ռադբրուխի այդ մոտեցումը ստացել է «Ռադբրուխյան բանաձև» անվանումը. «Արդարության և իրավական կայունության միջև հակասությունը պետք է այնպես լուծվի, որ պոզիտիվ իրավունքը գերակայություն ունենա նաև այն ժամանակ, երբ այն իր բովանդակությամբ անարդար ու աննպատակահարմար է: Բացառություն են այն դեպքերը, երբ արդարության հետ պոզիտիվ օրենքի հակասությունն այնքան աղաղակող անհամատեղելի է արդարության հետ, որ օրենքը, որպես «անարդար իրավունք», ժխտում է արդարությունը»²¹⁰:

Ռադբրուխյան բանաձևից չպետք է եզրակացնել, որ ցանկացած անարդար օրենք անվավեր է: Անարդար օրենքն անվավեր է, և դատավորներն իրավունք չունեն կիրառել օրենքը միայն այն բացառիկ դեպքերում, երբ արդարության և օրենքի անհամատեղելիությունն աղաղակող է, երբ օրենքի և արդարության հետ հակասությունը հասնում է անտանելի չափերի:

²⁰⁷ **Иеринг Р.**, Цель в праве. Первый том. Санкт-Петербург. 1881. С. 300.

²⁰⁸ **Радбрух Г.**, Пять минут философии права // Философия права. Пер. с нем. М.: Междунар. отношения, 2004. С. 225.

²⁰⁹ **Радбрух Г.**, Законное неправо и надзаконное право // Философия права. Пер. с нем. М.: Междунар. отношения, 2004. С. 233.

²¹⁰ **Радбрух Г.**, Законное неправо и надзаконное право // Философия права. Пер. с нем. М.: Междунар. отношения, 2004. С. 233-234.

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գերմանական դատարանները սկսեցին կիրառել Գ. Ռադբուխի բանաձևը, որի արդյունքում հնարավոր եղավ պատժել առանձին ռազմական հանցագործներին, նացիստական մատնիչներին ու լուտեսներին: Վերջիններս մեղադրանքներից պաշտպանվում էին այն հիմնավորմամբ, որ իրենց արարքները կատարելու պահին համապատասխանել են նացիստական օրենքներին: Միջդեռ գերմանական դատարանները կարծում էին, որ մեղադրյալների վկայակոչած օրենքները չէին կարող ուժ ունենալ, քանի որ հակասում էին բարոյականության հիմնական սկզբունքներին: Ասվածն առավել պարզ ներկայացնելու նպատակով գերմանական դատական պրակտիկայից բերենք օրինակներ:

բ) Ռադբուխի բանաձևի դատական կիրառությունը

1. «Մատնիչ կնոջ» գործը: 1944թ.-ին կինը, որ ցանկանում էր ազատվել ամուսնուց, իշխանություններին հայտնում է, որ ամուսինը արձակուրդում գտնվելու ժամանակ վիրավորական արտահայտություններ է արել Յիդիերի հասցեին: Կնոջ մատնության հիման վրա ամուսնուն մեղադրանք է ներկայացվում նրա համար, որ նա խախտել է այն օրենքները, որոնք արգելում են Երրորդ Ռեյխի հեղինակությունը խաթարող կամ որևէ կերպ գերմանացի ժողովրդի ռազմական պաշտպանունակությունը թուլացնող բառեր արտաբերել: Ընդ որում, նշված օրենքով կինը պարտավոր չէր հայտնել, թե իր ամուսինը կոնկրետ ինչ վիրավորական արտահայտություններ է արտաբերել: Այնուամենայնիվ, ամուսինը ձերբակալվում է և դատապարտվում մահապատժի, սակայն դատավճիռը չի կատարվում, և ամուսինը ուղարկվում է ռազմաճակատ:

1949թ.-ին Արևմտյան Գերմանիայի դատարանում կնոջ դեմ հարուցվում է գործ և նրան մեղադրանք է ներկայացվում ամուսնուն ապօրինի ազատությունից զրկելու համար (rechtswidrige Freiheitsberaubung): Կինը որպես պաշտպանություն նշում էր, որ ամուսնուն ազատությունից զրկելը իրականացվել է նացիստական օրենքների համաձայն, ուստի նրա գործողությունները հանցավոր բնույթ չեն կրել:

Վերաքննիչ դատարանը կնոջը մեղավոր է ճանաչել այն բանի համար, որ նա իր ամուսնուն նացիստական արդարադատությանը հանձնելու եղանակով հասել է նրան ազատությունից զրկելուն: Վերաքննիչ դատարանը նշել է, որ թեև ամուսինը ձևական տեսանկյունից միանգամայն հիմնավորված մեղադրվել է օրենքը խախտելու մեջ (Յիդիերի հասցեին վիրավորական արտահայտություններ անելու մեղադրանքի մասով՝ հեղ.), սակայն այդ օրենքը, ըստ Վերաքննիչ դատարանի, «հակասել է ողջախոհությանը և արդարադատության բուն իմաստին, որոնք բնորոշ են բոլոր բանական մարդկանց»²¹¹:

2. «Գերմանական պատի հրաձիգների» գործը: Մինչև բեռլինյան պատի կառուցումը Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունից (ԳԴՀ) մոտ երկուսուկես միլիոն մարդ փախել էր Գերմանիայի Դաշնային Հանրապետություն: Այս զանգվածային փախուստը կանխելու նպատակով 1968թ.-ին կառուցվեց Բեռլինյան պատը, որը հսկվում էր զինված հրաձիգների կողմից: Ըստ «Սահմանի մասին» ԳԴՀ-ի օրենքի 27-րդ բաժնի՝ հրաձիգներին թույլատրվում էր գնդակահարել այն քաղաքացիներին, որոնք ցանկանում էին հատել սահմանը (պատը) և անցնել արևմտյան Գերմանիա:

Հետագայում սահմանը հատելու փորձ կատարած անձանց գնդակահարությունները կազմակերպած պաշտոնյաներին ներկայացվել են մեղադրանքներ: Այդ գործերով մեղադրյալները փորձել են հիմնավորել, որ թեև իրենք հրամաններ են տվել կրակել, սակայն կատարելու պահին գործող օրենքով այն չի համարվել հանցագործություն: Ավելին՝ պետական սահմանի չթույլատրված հատման բոլոր փորձերը օպերատիվ կերպով կանխելու համար ԳԴՀ-ի ռազմական օրենսդրությունը նախատեսում էր խրախուսական նորմեր:

²¹¹ **Харт Г. Л. А.,** Позитивизм и разграничение права и морали. Пер с англ. // Правоведение. 2005. № 5. С. 127.

Գերմանիայի դաշնային գերագույն դատարանը, իսկ այնուհետև Դաշնային սահմանադրական դատարանը անընդունելի են համարել բարձրաստիճան պաշտոնյաների այն արդարացումները, որոնց հիմքում դրված էր «օրենքը հետադարձ ուժ չունի» սկզբունքը: Այլ կերպ ասած՝ քննարկվող գործում հակադրվել էին արդարության սկզբունքը և օրենքի հետադարձ ուժի սկզբունքը²¹²: Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանը ռադեռուկայան բանաձևի հիման վրա որոշել է, որ կոնկրետ այս դեպքի համար թույլատրելի է Հիմնական օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հետադարձ ուժի արգելքի սկզբունքի սահմանափակումը, որը սովորաբար ունի բացարձակ գործողություն: Այս բացառիկ դեպքում օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը պետք է զիջի կյուրական արդարությանը, որովհետև այդ արդարացնող հիմքերը խախտում են արդարության տարրական պահանջները և միջազգային իրավունքում ճանաչված մարդու իրավունքները: Օրենքով թույլատրել գնդակահարել սեփական քաղաքացիներին զուտ այն պատճառով, որ նրանք փորձում են քաղաքի մի մասից անցնել մյուս մասը, այնքան անարդար է, որ չի կարող արդարացնել մարդու բոլոր հիմնական իրավունքների կենսական հիմքը կազմող կյանքի իրավունքի խախտումը²¹³:

4. Անիրավ օրենքին հակառակ (contra legem) իրավակիրառումը ԳԳ-ում

4.1. *Ընդհանուր դրույթներ*: Սույն բաժնում «անիրավ օրենք» ասելով նկատի ունենք պառլամենտական այն օրենքը (ձևական օրենքը), որում առկա կարգավորումները հակասում են իրավունքի սկզբունքներին (արդարությանը) կամ պարունակում են ակնհայտ անտրամաբանական կարգավորումներ:

Պետք է պարզաբանել նաև «contra legem իրավակիրառում» հասկացությունը: Լայն իրավաբանական տիրույթում առանձնացվում են *intra legem* (ըստ օրենքի), *extra legem* (օրենքից դուրս) և *contra legem* (օրենքին հակառակ) իրավակիրառման տեսակները²¹⁴:

Intra legem իրավակիրառումը օրենքի դասական պոզիտիվ-իրավական կիրառումն է, որի դեպքում իրավակիրառողը գործը լուծում է օրենքի հիման վրա, իրավակիրառ ակտերը բխում են օրենքի պահանջներից, օրինակ՝ վարչական մարմինը օրենքով սահմանված հիմքերով ու կարգով նշանակում է կենսաթոշակ:

²¹² Երկու Գերմանիաների միջև կնքված «Միավորման պայմանագրի» 8-րդ հոդվածի, «Քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» օրենքի 315-րդ հոդվածի և Քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի ուժով հրաձիգների պատժելիության հարցը պետք է լուծվեր նախկին ԳԳ-ի (Արևելյան Գերմանիայի) օրենքներով, որոնց հիման վրա նրանց արարքն արդարացված էր: Միավորված Գերմանիայի Հիմնական օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արարքը կարող է պատժվել, եթե դրա պատժելիությունն օրենքով սահմանված է եղել նախքան արարքի կատարումը»: Փաստորեն գերմանացի դատավորները պարտավոր էին կիրառել արարքի կատարման պահին գործող արդարացման հիմքերը, այս դեպքում՝ «Սահմանի մասին» ԳԳ-ի օրենքի 27-րդ բաժնի դրույթները: Այդպես է պահանջում օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը: Մինչդեռ այս գործով ըստ էության նշված սկզբունքից կատարվեց բացառություն: Այս մասին տե՛ս **Ավետյան Հ.**, Օրենքի հետադարձ ուժի արգելքը «Nullum Crimen Sine Lege» սկզբունքի համատեքստում: Օրինակակոլեկցիոն, 2019, № 110, էջ 28-30:

²¹³ Постановление Европейского суда по правам человека по делу Стрелец, Кесслер и Кренц против Германии. <http://www.jean-onnet.unn.ru/doc/Advanced%20training%202014/IIIстрелец.%20Кесслер%20и%20Кренц%20против%20Германии.pdf>, 04.01.2020.

²¹⁴ **Ղամբարյան Ա.**, Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (համատեական և մեթոդաբանական հիմնախնդիրներ): Ե.: 2013, էջ 200-203, Պետության և իրավունքի տեսություն: Գիտ. խմբ.: Ղամբարյան Ա, Մուրադյան Մ.: 3-րդ լրամշակված հրատ. Ե.: 2018, էջ 496-499, **Հովհաննիսյան Գ.**, Ընդհանուր իրավագիտություն և իրավունքի մեթոդաբանություն: Ե.: 2020, էջ 357, 390-392:

Extra (Praeter) legem իրավակիրառման ժամանակ առկա է օրենքի բաց, որի դեպքում իրավակիրառողը գործը լուծում է իրավունքի ընդհանուր սկզբունքների հիման վրա (օրենքի բացի լրացումն ըստ իրավունքի անալոգիայի): Extra legem իրավակիրառման դեպքում իրավական խնդրի լուծումը, թեև օրենքով ուղղակիորեն կարգավորված չէ, սակայն այն չի հակասում օրենքին (անօրինական չէ), եթե, իհարկե, պահպանվում են օրենքի բացը լրացնելու համար նախատեսված պայմանները:

Contra legem իրավակիրառման դեպքում առկա է օրենքի կարգավորում, սակայն իրավակիրառ մարմինը, ելնելով որոշակի իրավաչափ նպատակներից (օրինակ՝ արդարության աննահանջ պահանջից), կայացնում է օրենքի կարգավորմանը հակառակ որոշում: Իրավակիրառ մարմինը իր ակտով վերացնում կամ փոփոխում է օրենքի կարգավորումները:

Contra legem և extra legem իրավակիրառումները երբեմն նմանվում են, ուստի դրանց սահմանազատումը հստակեցնելու նպատակով պետք է տարբերակել contra legem իրավակիրառման հետևյալ դեպքերը՝

Առաջին՝ կոչտ contra legem իրավակիրառում, երբ օրենքով գրված է, որ իրավակիրառողը պարտավոր է կատարել (կամ չկատարել) A գործողությունը, սակայն իրավակիրառողը օրենքի անիրավության խուսափելու նպատակով չի կատարում (կամ կատարում է) A գործողությունը: Այս դեպքում contra legem իրավակիրառումը extra legem իրավակիրառումից տարբերակելը բարդ չէ, քանի որ օրենքին հակառակ իրավակիրառումն ակնառու է:

Կոչտ contra legem իրավակիրառման օրինակ կարող էր համարվել, եթե ՀՀ դատարանները հակադրվեին 2018թ.-ի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում ամրագրված կոլիզիոն նորմին, ըստ որի՝ հին օրենքը վերացնում է նորի գործողությունը և դրա փոխարեն կիրառելի հակառակ կանոնը՝ նոր օրենքը վերացնում է նախորդի գործողությունը (Lex posterior derogat legi priori):

Եթե ՀՀ դատարանները հին ու նոր օրենքների հակասությունը լուծելիս հիմք ընդունեն ոչ թե «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (հին օրենքը վերացնում է նոր օրենքի գործողությունը), այլ lex posterior կոլիզիոն կանոնը, ապա դա կհամարվի կոչտ contra legem իրավակիրառում, քանի որ դատարանը օրենքով նախատեսված կանոնի փոխարեն կիրառում է պոզիտիվ նորմին ակնհայտորեն հակառակ՝ Lex posterior կանոնը²¹⁵:

Դատարանները հեշտությամբ կարող են արդարացնել կոչտ contra legem իրավակիրառումը այն պատճառաբանությամբ, որ հայկական իրավունքի «հին օրենքը վերացնում է նոր օրենքի գործողությունը» կոլիզիոն նորմը ոչ միայն հակաիրավական է (հակասում է սերունդների ազատության սկզբունքին), այլև հակատրամաբանական է (հակասում է դիալեկտիկայի բացասման բացասման օրենքի տրամաբանությանը)²¹⁶:

Երկրորդ՝ մեղմ contra legem իրավակիրառում, երբ օրենքով սահմանված են որոշակի կարգավորումներ, սակայն իրավակիրառողն այն փոփոխում է և ավելացնում է նոր տարրեր: Այս դեպքում է, որ ծագում է contra legem և extra legem իրավակիրառումների սահմանազատման խնդիր: Օրինակ՝ օրենքով սահմանված է անմիջական բողոքարկման ենթակա դատական ակտերի սպառնիչ (փակ) ցանկ, սակայն ՀՀ վերաքննիչ դատարանը կոնկրետ գործով որոշում է, որ բողոքարկված դատական

²¹⁵ Մինչդեռ իրականությունն այն է, որ ՀՀ դատարանները առ այսօր շարունակում են հետևել օրենսդրի հակաիրավական և հաստատումնաբանական նստաստիունություն: Այս մասին տե՛ս **Ղամբարյան Ա., Կուպեյանց Հ.**, Հին և նոր նորմերի հակասության լուծումը. հետևողական անտրամաբանություն կամ անտրամաբանական հետևողականություն // Դատական իշխանություն: 2018, թիվ 05-06/227-228, էջ 3-10:

²¹⁶ **Гамбарян А. С.**, Коллизийное правило «lex posterior» в армянском праве // Вестник Российского университета дружбы народов. 2020. т. 24. № 4. С. 1224-1239.

ակտը, թեև ընդգրկված չէ բողոքարկման ենթակա դատական ակտերի՝ օրենքով սահմանված սպառիչ ցանկում, սակայն այն ենթակա է դատական ստուգման: Հարց է ծագում՝ այս դեպքում ՀՀ վերաքննիչ դատարանը լրացրե՞ց օրենքի բացը, այսինքն՝ դիմե՞ց extra legem իրավակիրառման, թե՞ գործեց օրենքին հակառակ, այսինքն՝ դիմեց contra legem իրավակիրառման: Այստեղ հնարավոր է երկու տարբերակ:

1. Օրենսդիրը սխալմամբ այդ դատական ակտը չի ներառել բողոքարկվող ակտերի ցանկում (այսինքն՝ առկա է օրենքի բաց), իսկ ՀՀ վերաքննիչ դատարանը, այդ բացը լրացնելու նպատակով հիմք ընդունելով իրավական պաշտպանության սկզբունքը, բողոքարկման ենթակա ակտերի ցանկում ավելացնում է նոր դատական ակտ: Այս դեպքում ՀՀ վերաքննիչ դատարանի գործողությունը կարելի է որակել որպես extra legem իրավակիրառում:

2. Օրենսդիրը, անմիջական բողոքարկման ենթակա դատական ակտերի սպառիչ ցանկ նախատեսելով, գիտակցաբար չի ցանկացել որպեսզի այդ ցանկում չընդգրկված դատական ակտերն անմիջականորեն բողոքարկվեն (օրենսդրի որակյալ լռություն): Մինչդեռ ՀՀ վերաքննիչ դատարանն այդ ցանկում չընդգրկված դատական ակտի դեմ բերված բողոքը ընդունում է վարույթ և քննում է այն, այսինքն՝ օրենսդրի կողմից սահմանած փակ ցանկում փաստացի ավելացնում է նոր դատական ակտ: Այս դեպքում իրավակիրառողի գործողությունը կարելի է որակել որպես contra legem իրավակիրառում (այս մասին՝ հաջորդիվ)²¹⁷:

Contra legem և extra legem իրավակիրառումների սահմանազատման համար կարևոր է նաև իրավական կարգավորման տիպը: Եթե իրավակիրառողը պետական (կամ տեղական ինքնակառավարման) մարմին է, ապա գործում է իրավական կարգավորման՝ «թույլատրվում է այն, ինչ սահմանված է օրենքով» տիպը: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասում ուղղակիորեն սահմանված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Եթե օրենքով նախատեսված չէ ֆունկցիոնալ գործողություն կատարելու մասին պետական մարմնի լիազորություն, ապա նման գործողություն կատարելն արգելվում է: Նման դեպքում, եթե իրավակիրառողը իրավաչափ նպատակների առկայության դեպքում կատարում է օրենքով չնախատեսված (հետևապես՝ արգելված), սակայն իր գործառնություններից բխող գործողություն, ապա այն կհամարվի contra legem իրավակիրառում:

Միևնույն ժամանակ պետական մարմնի գործառնություններից բխող գործողությունը օրենքով (որպես լիազորություն) չնախատեսելը կարող է որակվել որպես օրենքի բաց: Պետական մարմնի՝ վերը նկարագրված contra legem իրավակիրառումը վերածվում է extra legem իրավակիրառման, եթե օրենսդրությամբ իրավակիրառողի համար սահմանված է օրենսդրական բացի պայմաններում իրավունքի անալոգիա կիրառելու մասին լիազորող նորմ (օրինակ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդված): Իրավունքի անալոգիայի հիման վրա գործելու մասին լիազորող նորմի առկայության դեպքում պետական մարմնի գործառնություններից բխող, սակայն օրենքով չնախատեսված գործողությունները կգնահատվեն ոչ թե contra legem, այլ extra legem իրավակիրառում:

²¹⁷ ՀՀ վճռաբեկ դատարանը նման իրավիճակներում հիմք է ընդունել մեկնաբանման expressio unius կանոնը, համաձայն որի՝ սպառիչ ցանկում որևէ տարր չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով: Այլ կերպ ասած՝ եթե որևէ տարր փակ թվարկման մեջ ներառված չէ, ապա թվարկում սահմանող նորմը կարելի է մեկնաբանել որպես տվյալ տարրի արգելք ամրագրող: Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ. Ե.: Ասողիկ, 2011, էջ 22-23:

Անիրավ օրենքի *contra legem* իրավակիրառման թույլատրելիության համար հիմնարար նշանակություն ունի այն, թե իրավակիրառ մարմինը ինստիտուցիոնալ առումով իշխանության որ մարմինն է պատկանում՝ գործադիր, թե՞ դատական իշխանության մարմին է: Ուստի պետք է առանձին քննարկել գործադիր իշխանության և դատական իշխանության համակարգի մարմինների *contra legem* իրավակիրառման հարցը²¹⁸:

4.2. *ԽՍՀՄ օրենսդրությանը և contra legem իրավակիրառումը Հայաստանում:*

ԽՍՀՄ օրենսդրությանը հակառակ իրավունքի զարգացման (*contra legem* իրավակիրառման) դեպքեր հանդիպեցին ԽՍՀՄ-ի փլուզման ժամանակահատվածում, երբ անկախության ճանապարհը բռնած Միութենական Հանրապետությունները գործում էին Կենտրոնի օրենսդրությանը հակառակ՝ այն պատճառաբանությամբ, որ դրանք հակասում են իրավունքին: Օրինակ՝ ԽՍՀՄ պրեզիդենտի 25.07.1990թ.-ի հրամանագրով արգելվում էր ԽՍՀՄ օրենսդրությամբ չնախատեսված սպառազեն կազմավորումների ստեղծումը և սահմանվում էր, որ ապօրինի զենք պահելու դեպքում դրանք պետք է առգրավել: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդի 30.07.1990թ.-ի որոշմամբ ԽՍՀՄ պրեզիդենտի այդ հրամանագրի կիրարկումը կասեցվեց այն պատճառաբանությամբ, որ այն «սկզբունքորեն հակասում է հայ ժողովրդի ինքնապաշտպանության բնական իրավունքին»²¹⁹: Մեկ այլ օրինակ: ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը 16.01.1991թ.-ին որոշում էր կայացրել ԽՍՀՄ պահպանման հարցով ԽՍՀՄ հանրաքվե կազմակերպելու մասին: ՀՀ Գերագույն խորհուրդը այս հարցով նույնպես դիմեց իրավունքի՝ *contra legem* զարգացմանը և 30.01.1991թ.-ին հայտարարություն տարածեց այն մասին, որ ԽՍՀՄ հանրաքվեի միջոցով ընդունված որոշումը վերջնական ու պարտադիր է ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում և կարող է փոփոխվել միայն ԽՍՀՄ նոր հանրաքվեի միջոցով, հետևաբար, նման քվեարկությունը արգելափակում է ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի իրացումը: ՀՀ Գերագույն խորհուրդը նույն հարցով 01.03.1991թ.-ի որոշման մեջ արդեն ուղղակիորեն նշեց, որ ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ հանրաքվեն հակասում է ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին²²⁰: Նշված դեպքերում անկախության ճանապարհը բռնած հայկական իշխանությունները, հիմք ընդունելով իրավունքի սկզբունքները գործել են ԽՍՀՄ օրենսդրության պահանջներին հակառակ, այսինքն՝ դիմել են *contra legem* իրավակիրառման:

4.3. *Contra legem իրավակիրառումը գործադիր իշխանության համակարգում:*

Եթե իրավակիրառողը գործադիր իշխանության ինստիտուցիոնալ համակարգի մաս է, ապա նա կոնկրետ վարչական գործով չի կարող հրաժարվել՝ իր գնահատմամբ անիրավ օրենքը կիրառելուց: Պատկերացնենք հետևյալ իրավիճակը. պառլամենտն ընդունում է օրենք, ըստ որի՝ կենսաթոշակի տարիք է սահմանվում 85 տարեկանը: Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 65 տարեկանը լրացած տարեց մարդը դիմում է իրավասու նախարարին՝ կենսաթոշակ նշանակելու ինդրանքով: Նախարարը գիտակցում է, որ մինչև 85 տարեկանը տարեց մարդը չի կարող առանց պետության աջակցության ապահովել իր

²¹⁸ Հետագայում գիտական քննարկումների առարկա պետք է դարձնել նաև գործադիր իշխանության համակարգի մեջ չմտնող ինքնավար մարմինների ազատ (*extra legem* և *contra legem*) իրավակիրառման պրակտիկա ձևավորելու հարցերը, ինչպես նաև սահմանադրական արդարադատության դռները նաև նրանց համար բացելու հարցերը:

²¹⁹ Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակ: Փաստաթղթերի ժողովածու: Ե.: 2016, էջ 31:

²²⁰ Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակ: Փաստաթղթերի ժողովածու: Ե.: 2016, էջ 47, 63:

կենսագոյությունը: Նախարարի համար ինչքան էլ որ ակնհայտ է կիրառման ենթակա օրենքի անիրավությունը, միևնույն է, նա, հանդիսանալով գործադիր իշխանության ինստիտուցիոնալ մաս, չի կարող հայտարարել, որ օրենքը հակասում է արդարությանը, ուստի չի կիրառում այն, այլ ղեկավարվում է իրավունքի ընդհանուր սկզբունքով և որոշում է կայացնում 65 տարեկան տարեցին նշանակել կենսաթոշակ:

Նախարարը կոնկրետ գործով չի կարող դիմել *contra legem* իրավակիրառման հետևյալ պատճառներով: Նախ՝ որպես գործադիր իշխանության ինստիտուցիոնալ համակարգի մաս՝ նա կաշկանդված է իշխանության տարանջատման սկզբունքով և կառավարության քաղաքականությամբ, երկրորդ՝ նա ունի իրավական հնարավորություն ՅՅ կառավարության միջոցով նախաձեռնելու անհետաձգելի ռեժիմով անիրավ օրենքը փոփոխելու գործընթաց:

Եթե, այնուամենայնիվ, օրենսդիրը հրաժարվի փոփոխել այդ օրենքը, ապա ՅՅ կառավարությունը ունի ևս մեկ սահմանադրական հնարավորություն՝ դիմելու սահմանադրական արդարադատության օգնությանը:

ՅՅ-ում 2020թ.-ին, երբ հայտարարված էր ռազմական դրություն, ՅՅ վարչապետը արել է մի հայտարարություն, որը, իր իսկ գնահատմամբ, չի բխում օրենքից: Այսպես՝ ՅՅ վարչապետ Ն. Փաշինյանը 05.10.2020թ.-ին մարտակոչով (ուղիղ էթերով) դիմել է վերջին մեկ տարում զորացրված զինվորներին. «Այս ուղերձով դիմում եմ վերջին մեկ տարվա ընթացքում ժամկետային զինծառայությունն ավարտած, զորացրված և քաղաքացիական կյանքում գտնվող մեր զինվորներին: Գիտե՛ք, որ շայտատանում հայտարարված է ռազմական դրություն, և մարդիկ կանչվում են զորակոչի: **ԽՆՂԻՐՆ ԱՅՆ Է, ՈՐ ՄԵՐ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՎԵՐՋԻՆ ՄԵՆ ԶՈՐԱԿՈՉԻ (չգիտե՛մ օրենքն ինչու է այսպես գրվել²²¹, ես դա նոր եմ իմացել),** մինչդեռ գործնականում ամենամարտունակ մեր մոբիլիզացիոն ռեսուրսն են: Խնդիրն այն է, որ հայրենիքն այսօր ունի այդ մարդկանց կարիքը: Տղե՛րք, հայրենիքն ունի այսօր ձեր կարիքը»²²²:

ՅՅ վարչապետի կոչից հետո մեկ տարի անաջ զորացրված տասնյակ պահեստազորայիներ դիմեցին զինկոմիսարիատներ, և նրանք այդ տղաներին ներգրավեցին զորահավաքին: Եթե օրենքով իրականում նման արգելք նախատեսված լիներ, ապա կարելի՞ էր արդյոք ՅՅ վարչապետի կոչը և զինկոմիսարիատների՝ դրան հաջորդած իրավակիրառ գործողությունները որակել *contra legem* իրավակիրառում: Պաստասխանը բացասական է: Վերը նշված պատճառներից ելնելով՝ գործադիր իշխանության այս մարմինների գործողությունը ոչ թե *contra legem* իրավակիրառում է (դա իրավաչափ վարքագիծ է), այլ իրավախախտում: Կասկածից վեր է, որ հայրենիքի պաշտպանությունը անաջնահերթություն է, իսկ ռազմական դրության պայմաններում լիովին արդարացված ու տրամաբանական է անաջին հերթին հենց մարտունակ անձանց ներգրավելը զորահավաքին: Այնուամենայնիվ, գործադիր իշխանության ղեկավարը և նրան ենթակա մարմինները նույնիսկ այս պայմաններում չպետք է գործեն օրենքին հակառակ: Գրագետ պետական կառավարման դեպքում գործադիր իշխանության մարմիններն ունեն բավարար միջոցներ՝ հնարավորինս արագ փոփոխելու

²²¹ Իրականում օրենքով նախատեսված չէ զինվորական ծառայությունից արձակելուց հետո՝ մեկ տարուց շուտ, անձանց զորահավաքին ներգրավելու արգելք: Ենթադրվում է, որ տեղի է ունեցել «զորահավաք» և «վարժական հավաք» հասկացությունների շփոթ, քանի որ «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՅՅ օրենքով 59-րդ հոդվածի 5-րդ մասով արգելվում է միայն պարտադիր զինվորական ծառայությունից արձակված պահեստազորայիներին **վարժական հավաքի** կանչել զինվորական ծառայությունից արձակվելուց հետո՝ մեկ տարուց շուտ:

²²² Վարչապետ Նիկոլ Փաշինյանի մարտակոչը՝ վերջին մեկ տարում զորացրված զինվորներին // <https://newshub.am/read-news/881612/>, 12.12.2020:

հայրենիքի պաշտպանության արդյունավետությանը խոչընդոտող օրենսդրական կարգավորումները:

Եթե որևէ կերպ արդարացվի գործադիր իշխանության մարմինների՝ օրենքին հակառակ կատարած գործողությունները, և այն որակվի *contra legem* իրավակիրառում, ապա դրանով կազդարարվի իրավական պետության «հուղարկավորության» սկիզբը: Իրավական պետության կորուստը նույնպես պարտություն է՝ մեկ տարբերությամբ՝ պարտություն ներքին ասպատակողների առջև:

4.4. *Contra legem* իրավակիրառումը դատական իշխանության համակարգում

ա) ԶՅ վճռաբեկ և վերաքննիչ դատարանների *contra legem* իրավակիրառումը:

Դատական համակարգում ԶՅ վճռաբեկ դատարանը ունի հատուկ կարգավիճակ՝ ապահովում է իրավունքի զարգացումը, ուստի չի կարող զբաղվել միայն պարզ (մեխանիկական) *intra legem* իրավակիրառմամբ: ԶՅ վճռաբեկ դատարանը պետք է ունակ լինի դիմելու նաև *extra legem*, իսկ երբեմն նաև՝ *contra legem* իրավակիրառման²²³:

Ներկայումս ԶՅ վճռաբեկ դատարանը, ինքնակաշկանդվելով և ինքնապաշտպանվելով լեգիզմով, իրեն օտարել է իրավունքից: ԶՅ վճռաբեկ դատարանը խուսափում է իրավունքի կիրառումից նույնիսկ այն դեպքերում, երբ հնարավորություն ունի օրենքի մեկնաբանման միջոցով և իրավունքի սկզբունքների հիման վրա վերացնելու (մեղմելու) կիրառվող օրենքի նյութական անարդարացիությունը կամ շտկելու օրենքի ակնհայտ անտրամաբանական կարգավորումը: Խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ առկա է օրենքի սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկած, որի պարագայում ԶՅ վճռաբեկ դատարանը պարտավոր է դիմել ԶՅ սահմանադրական դատարան:

Իհարկե, ասվածը չպետք է բացարձականացնել և եզրակացնել, որ ԶՅ վճռաբեկ դատարանը երբևիցե չի կիրառել իրավունքը օրենքից դուրս, այսինքն՝ չի դիմել *contra legem* իրավակիրառման: Բերենք մի քանի օրինակ:

1. ԶՅ քաղ. օր-ի 1217-րդ հոդվածը և *contra legem* իրավակիրառումը: Օրինակ՝ մինչև 2011թ. ԶՅ քաղ. օր-ի 1217-րդ հոդվածով ժառանգատուի երկրորդ հերթի ժառանգներ էին համարվում ժառանգատուի հարազատ քույրերը և եղբայրները²²⁴: Այս նորմը սահմանելիս օրենսդիրը նկատի էր ունեցել բացառապես հարազատ քույրերին ու եղբայրներին: Մինչդեռ ԶՅ վճռաբեկ դատարանը թիվ ԵԱԶԴ/1516/02/08 գործով 24.07.2009թ. որոշմամբ ԶՅ քաղ. օր-ի 1217-րդ հոդվածը մեկնաբանել էր այնպես, որ այդ նորմով սահմանված՝ երկրորդ հերթի ժառանգների մեջ մտնում են նաև ոչ հարազատ (համամայր և համահայր) եղբայրներն ու քույրերը: Սա համարում ենք *contra legem* իրավակիրառում, քանի որ օրենսդիրը, հստակ նշելով հարազատ քույրերի ու եղբայրների մասին, բացառել է համահայր կամ համամայր եղբայրներին ու քույրերին: Մեր ընդդիմախոսները կարող են նշել, որ այս դեպքում ԶՅ վճռաբեկ դատարանը դիմել է ոչ թե *contra legem*, այլ *extra legem* իրավակիրառման, քանի որ գործել է օրենքի բացի պայմաններում (ի դեպ, ԶՅ սահմանադրական դատարանը ՍԴՈ-917 որոշմամբ այն

²²³ Ռուսական գրականության մեջ առկա է մոտեցում, որ *contra legem* իրավակիրառումը թույլատրվում է ոչ թե ցանկացած դատարանի, այլ միայն բարձր ատյանի դատարաններին, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների գերագույն դատարաններին, Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանին: *Contra legem* վերդիկտը պետք է պարտադիր քննարկվի Գերագույն դատարանում, որի արդյունքում որոշումը պետք է բեկանել, իսկ հաստատելու դեպքում այն պետք է հրապարակել: Տե՛ս Федотов А. В., Возможно ли применение *contra legem* в демократическом правовом государстве? // Журнал российского права. 2002. № 8. С. 92-99.

²²⁴ ԶՅ քաղ. օր-ի 1217 հոդվածը 08.02.2011թ-ի ՅՕ-34-Ն օրենքով ներկայացվել է նոր խմբագրությամբ:

գնահատել է որպես օրենսդրական բաց): Միգուցե *contra legem* իրավակիրառումն առավել ցայտուն տեսանելի լիներ, եթե օրենսդիրը նորմում օգտագործեր «միայն հարազատ ...» ձևակերպումը: Այնուամենայնիվ, «միայն» բառի բացակայությունը չի փոխում հարցի բուն էությունը, քանի որ օրենսդիրը, օգտագործելով «հարազատ քույր և եղբայր» ձևակերպումը, բացառել է ոչ հարազատ քրոջն ու եղբորը:

ՀՀ սահմանադրական դատարանը 18.09.2010թ-ին ՍԴՈ-917 որոշմամբ անդրադարձել է նույն հարցին և վերահաստատել է ՀՀ վճռաբեկ դատարանի *contra legem* իրավակիրառման իրավաչափությունը (կրկին նշեմք, որ ՀՀ սահմանադրական դատարանը այս իրավիճակը որակել է որպես օրենսդրական բաց):

Այս գործով ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ վճռաբեկ դատարանին մեղադրել է այն բանում, որ նա «հարազատ քույրեր և եղբայրներ» հասկացությունը մեկնաբանելիս չի պահպանել *օրենքը տառացի* մեկնաբանելու «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ամոթալի կարգավորումը²²⁵: Թերևս ՀՀ սահմանադրական դատարանի նման գնահատականները հանդիսացան այն պատճառներից մեկը, որ հետագայում ՀՀ վճռաբեկ դատարանը (նաև մյուս ատյանի դատարանները) մառախուղվեց լեգիզմով: Այս ամենի պատճառով ՀՀ վճռաբեկ դատարանը «օրենքի տառից» փոքր-ինչ դուրս գալու անհրաժեշտության դեպքում արհեստականորեն փնտրում է օրենքի սահմանադրականության հարց և դիմում է ՀՀ սահմանադրական դատարան: Հետաքրքիրն այն է, որ այսօր էլ ՀՀ սահմանադրական դատարանի վրդովմունքն է առաջացնում սահմանադրական արդարադատությանը դիմելու դատարանների ակտիվությունը:

2. ՀՀ քր. դատ. օր.-ի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասը և *contra legem* իրավակիրառումը: ՀՀ վճռաբեկ դատարանը, 15.08.2014թ.-ի որոշմամբ անդրադարձել է իրավապահ համակարգին երկար տարիներ հուզող մեղադրյալի կողմից վերահսկվող և կառավարվող իրավաբանական անձի բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ձեռք բերելու իրավաչափությանը: ՀՀ վճռաբեկ դատարանը *Contra legem* իրավակիրառման շրջանակներում իրավացիորեն նշել է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում ամրագրված դրույթի այն մեկնաբանությունը, որ դատարանի որոշման հիման վրա կարող են ստացվել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ բանկային հաշիվների վերաբերյալ տվյալները, օրենսդրական այս դրույթի բովանդակության ու կիրառման շրջանակների անհարկի նեղացում է: ՀՀ քր. դատ. օր.-ի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում տեղ գտած «քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ» հասկացության վերլուծությունը վկայում է, որ խոսքը ոչ թե սոսկ կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ, այլ նրան մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող իրավաբանական անձին վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների մասին է, եթե առկա է

²²⁵ «Իրավական ակտերի մասին» 2002թ. ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր. «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»: Օրենքի մեկնաբանության կանոնների նման ֆորմալացումը (այդ կանոնները օրենքով կարգավորելը) ըստ էության նշանակում է արդարադատություն իրականացումը դարձնել մեխանիկական գործընթաց: Բացի այդ, օրենքով նման կանոն նախատեսելը օրենսդրի անթույլատրելի միջամտությունն է արդարադատության իրականացմանը: Ո՛չ օրենսդիրը, ո՛չ էլ ՀՀ սահմանադրական դատարանը իրավասու չեն ՀՀ դատարանների փոխարեն որոշել, թե նրանք ի՞նչ կանոններով պետք է մեկնաբանեն օրենքը: Պատահական չէ, որ գործնականում ՀՀ դատարանները, հակադրվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմանը, նորմերը երբեմն մեկնաբանում էին ոչ թե տառացի, այլև տարածական կամ սահմանափակ եղանակով: Նման իրավիճակներում ՀՀ դատարանները չէին հնազանդվում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի կարգավորմանը, որը նույնպես կարելի է համարել *contra legem* իրավակիրառում:

հիմնավոր ենթադրություն, որ այդ իրավաբանական անձի գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից (տե՛ս որոշման 25-26 կետերը):

3. *ՀՀ քր. դատ. օր.-ի 376.1-րդ հոդվածը և contra legem իրավակիրառումը*: ՀՀ քր. դատ. օր.-ի 376.1-րդ հոդվածը սահմանում է վերաքննության կարգով անմիջական բողոքարկման ենթակա դատական ակտերի սպառիչ (փակ) ցանկ: Մինչև 2016թ.-ը դատական պրակտիկայում գերակայում էր այն մոտեցումը, որ առաջին ատյանի դատարանի որոշումն անմիջականորեն չի կարող բողոքարկվել ՀՀ վերաքննիչ դատարան, եթե այդ որոշումը նախատեսված չէ ՀՀ քր. դատ. օր.-ի 376.1-րդ հոդվածում: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0225/06/08 գործով 28.11.2008թ.-ի որոշմամբ նշել է. «(...) Զրեադատարավարական օրենքը որևէ նշում չի պարունակում որպես խափանման միջոց ընտրված կալանքն անփոփոխ թողնելու մասին որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության մասին, մինչդեռ սույն գործով բողոքարկվել է առաջին ատյանի դատարանի՝ Դ-ի նկատմամբ ընտրված խափանման միջոցն անփոփոխ թողնելու մասին որոշումը: Հետևաբար, կայացված որոշումը ՀՀ քր. դատ. օր.-ի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով չի կարող բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան»:

ՀՀ վճռաբեկ դատարանի այս որոշումը լեգիվով պարուրված *intra legem* իրավակիրառ ակտ է: Մինչդեռ 2016թ.-ին ՀՀ վերաքննիչ դատարանը, առաջ ընկնելով ՀՀ վճռաբեկ դատարանից, *intra legem* իրավակիրառումից անցում կատարեց *contra legem* իրավակիրառման²²⁶: Այսպես՝ ՀՀ վերաքննիչ դատարանը ԵԿԴ/0032/01/16 գործով (24.01.2017թ.) վարույթ է ընդունել և քննել է ՀՀ առաջին ատյանի դատարանի՝ խափանման միջոցի փոփոխման և կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու մերժման մասով որոշման դեմ բերված բողոքը: ՀՀ վերաքննիչ դատարանը նույնիսկ չի քննարկել, թե այդ դատական ակտը ենթակա՞ է արդյոք անմիջական բողոքարկման, թե՞ ոչ: Պարզապես վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ և ստուգել դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

ՀՀ վերաքննիչ դատարանը թույլ է տվել *contra legem* իրավակիրառում, քանի որ հստակ իմանալով, որ ՀՀ վճռաբեկ դատարանը դեռևս 28.11.2008թ.-ի որոշմամբ նշել է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով ընտրված խափանման միջոցն անփոփոխ թողնելու մասին որոշումը չի կարող բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, այնուամենայնիվ, վերանայել է առաջին ատյանի դատարանի դատական ակտը: ՀՀ վերաքննիչ դատարանը օրենքին հակառակ՝ չբողոքարկվող դատական ակտը փաստացի գործողությամբ դիտել է որպես բողոքարկվող դատական ակտ:

ՀՀ սահմանադրական դատարանը 06.11.2019թ.-ին ըստ ելույթան վերահաստատել է ՀՀ վերաքննիչ դատարանի *contra legem* իրավակիրառման իրավաչափությունը և ՍԴԴ-1487 որոշմամբ նշել է խափանման միջոց ընտրված կալանքի փոփոխման կամ վերացման միջնորդությունների մերժման մասին որոշումների անմիջական բողոքարկման անհրաժեշտության մասին:

Contra legem և *extra legem* իրավակիրառման տեսակների տարանջատման տեսանկյունից կարևոր է նաև հետևյալ հանգամանքը: ՀՀ վերաքննիչ դատարանը ՀՀ քր. դատ. օր.-ի 376.1-ին հոդվածի 4-րդ կետում կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումների անմիջական բողոքարկման

²²⁶ Դատական պրակտիկայում արձանագրվում են նաև վիճարկվող դրույթով ուղղակիորեն չսահմանված միջանկյալ դատական ակտերի անմիջական բողոքարկման արդյունքում ներկայացված բողոքները քննության առնելու դեպքեր (Տե՛ս, օրինակ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 15.09.2016թ. ԵԿԴ/0001/01/15, 08.09.2016թ. ԵԿԴ/0267/01/15, 24.01.2017թ. ԵԿԴ/0032/01/16 քրեական գործերով կայացրած որոշումները):

հնարավորության բացակայությունը չի որակել որպես օրենսդրական բաց, մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանն այն որակել է որպես օրենսդրական բաց (հակասահմանադրական է ճանաչել այդ բացը)²²⁷: Եթե հիմք ընդունենք ՀՀ սահմանադրական դատարանի այդ որակումը, ապա պետք է փաստենք, որ ՀՀ վերաքննիչ դատարանը դիմել է ոչ թե contra legem, այլ extra legem իրավակիրառման²²⁸:

բ) ՀՀ առաջին ատյանի դատարանների contra legem իրավակիրառումը:

Առաջին ատյանի դատարանները, որպես կանոն, իրականացնում են intra legem իրավակիրառում: Բացառիկ դեպքերում է, երբ առաջին ատյանի դատարանները դիմում են extra legem կամ contra legem իրավակիրառման:

Դատական պրակտիկայում contra legem իրավակիրառում կարելի համարել, երբ կորոնավիրուսի (COVID-19) տարածումը կանխարգելելու միջոցառումների շրջանակներում առաջին ատյանի դատարանները, ի հակառակ դատավարական օրենսդրության կարգավորման, սկսեցին ընդունել էլեկտրոնային փոստով ուղարկված դատավարական փաստաթղթերի էլեկտրոնային լուսապատճենները (PDF ձևաչափով): Այսպես՝ ՀՀ դատավարական օրենսդրությամբ նախատեսված է, որ դատավարության մասնակիցները և այլ անձինք գրավոր փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, հայցադիմումի պատասխան, միջնորդություն և այլն) կարող են դատարան ներկայացնել առձեռն, էլեկտրոնային եղանակով կամ փոստով (ՀՀ քաղ. դատ. օր.-ի 99-րդ հոդվածի 4-րդ մաս): Էլեկտրոնային եղանակով բողոքի ներկայացումը պետք է լինի «էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքով: Գործող օրենսդրությունը չի նախատեսում դատավարական փաստաթղթերի էլեկտրոնային լուսապատճենները (PDF ձևաչափով) էլեկտրոնային փոստով դատարան ուղարկելու հնարավորություն: Մինչդեռ ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը կորոնավիրուսի (COVID-19) տարածումը կանխարգելելու միջոցառումների շրջանակներում 24.03.2020թ. ԲԴԽ-12-Ո-25 որոշման 3.2-րդ կետով ՀՀ դատավորներին առաջարկել է ընդունել էլեկտրոնային եղանակով ստացված փաստաթղթերը՝ հետագայում, ըստ անհրաժեշտության, դրանց բնօրինակները պահանջելու պայմանով:

²²⁷ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1487 որոշման եզրափակիչ մասում նշված է. «Քրեական դատավարության օրենսգրքի 376.1-ին հոդվածի 4-րդ կետն այն մասով, որ չի նախատեսում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումների վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75 և 81-րդ հոդվածներին հակասող»: Սույն գործով ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր Վ. Նազարյանը չի համաձայնվել օրենսդրական բացի վերաբերյալ մեծամասնության դիրքորոշման հետ և հատուկ կարծիքում իրավացիորեն նշել է, որ խնդրի լուծման համար ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները չպետք է հանգեր տվյալ նորմի տառացի ձևակերպման, այլ պետք է առկա լիներ դատարանի կողմից օրենքի հստակ ու համակարգային մեկնաբանություն, ըստ որի՝ վիճարկվող նորմը համակարգային առումով փոխկապված է կալանքի որոշումը չվերացնելու կամ չփոփոխելու մասին դատական ակտը բողոքարկելու՝ պաշտպանության կողմի անօտարելի իրավունքի հետ:

²²⁸ ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քր. դատ. օր.-ի 376.1-րդ հոդվածի intra legem կիրառման պրակտիկան վերանայեց 2016թ.-ին: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 01.11.2016թ. որոշմամբ քննարկել է տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակը դադարեցնելու մասին որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման իրավաչափության հարցը: ՀՀ վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով տուժողի (տուժողի իրավահաջորդի) իրավունքների պաշտպանության՝ պետության պոզիտիվ պարտավորության, ինչպես նաև վերջինիս՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացվելիության ապահովման անհրաժեշտությունը՝ արձանագրել է, որ տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակը դադարեցնելու մասին դատարանի որոշումը ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման: - Դատական իշխանություն, 2017, թիվ 1-2, (211-212), էջեր 111-119:

ՀՀ դատարանները, ամենայն հավանականությամբ նկատի ունենալով ՀՀ բարձրագույն դատական խորհրդի որոշումը, ի հակառակ դատավարական օրենքի կարգավորումների, ընդունում էին էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերի էլեկտրոնային լուսապատճենները (PDF ձևաչափով)²²⁹: Դատարանի այս գործողություններն ըստ էության contra legem իրավակիրառում են, քանի որ, ինչպես նշեցինք, դատավարական օրենքը սահմանում է փաստաթղթերի ներկայացնելու եղանակները, որոնց ցանկում փաստաթղթերի էլեկտրոնային լուսապատճենները էլեկտրոնային եղանակով դատարան ուղարկելու կարգ նախատեսված չէ: Բացի այդ, դատարանների նշված վարքագիծը ոչ թե ՀՀ քաղ. դատ. օր.-ի 99-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում է, այլ contra legem իրավակիրառում, քանի որ այն հետապնդում էր թնկալության առողջության ապահովման իրավաչափ նպատակ:

Եզրակացություն

Իրավունքի և օրենքի կոլիզիոն հարաբերակցությունը պետք է դիտարկել ոչ միայն օրենսդրական քաղաքականության, այլ նաև իրավակիրառման տիրույթում: Դատական իրավակիրառողների գիտակցության մեջ կրթության ու վերապատրաստման միջոցով պետք է ներդնել (ամրապնդել) հետևյալ գաղափարները.

Առաջին. դատավորն արդարադատության գործառնության ուժով պարտավոր է ախտորոշել ու տեսնել իրավունքի և օրենքի աղաղակող հակասությունները: Դատավորը չպետք է համարի, որ իրավունքի և օրենքի աղաղակող հակասությունների գնահատումը դուրս է իր իրավասությունից, իսկ այդ հակասությունների վերացումը քաղաքական իշխանության բացառիկ իրավասությունն է:

Երկրորդ. անտանելի անարդար օրենքի պահանջներն ախտորոշելիս դատավորը չպետք է իրեն պատկերացնի վերադասի հրամանը անվերապահ կատարող զինվորի դերում: Նման իրավիճակներում դատավորը պարտավոր է դիմել contra legem իրավակիրառման կամ հիմքերի առկայության դեպքում օրենքի վավերականությունը վիճարկի ՀՀ սահմանադրական դատարանում:

COLLISIONS OF LAW AND JUSTICE IN THE PHILOSOPHY OF LAW

ARTUR GHAMBARYAN

*Russian-Armenian University, Department of Theory of Law and Constitutional law, Head,
Doctor of Law, Professor, Honored Lawyer of the Republic of Armenia,
Yerevan, Republic of Armenia*

The aim of the article is to reveal the collisional relationship between justice and the law in the philosophical dimension.

The main objectives of the article are to analyze the contradictions between law from the point of view of broad legal understanding, as well as the answer to the question of how law enforcement agent should act if, in solving a specific case, an outrageous contradiction between

²²⁹ Մինչև ՀՀ բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-12-Ո-25 որոշումը ուժի կորցնելը (14.09.2020թ.) առանձին դատարաններ, օրինակ՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, դադարեցրին փաստաթղթերի էլեկտրոնային լուսապատճենները էլեկտրոնային փոստով ընդունել այն պատճառաբանությամբ, որ էլեկտրոնային եղանակով ուղարկված փաստաթղթերը «էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստորագրված չեն (տե՛ս թիվ ԵԴ/10296/02/19 գործով վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին 04.08.2020թ. որոշումը):

law and justice is encountered. The author used a number of scientific methods, in particular, historical-legal-comparative methods.

The author concludes that supporters of a broad legal understanding consider the issue of contradiction between law mainly from the point of view of legislative policy, however, they do not discuss the issue of how the law enforcement agent should act when an obvious contradiction between law is encountered in a particular case.

In the article the sayings «dura lex sed lex» (The law [is] harsh, but [it is] the law) and «lex iniusta non est lex» (An unjust law is no law at all) are considered in the dimensions of the legalism and natural law. The author concludes that the Radbruch formula is an exception to the saying «dura lex sed lex» (The law [is] harsh, but [it is] the law), which has undergone practical approbation. On the one hand, this resolution values the certainty and stability of the law, and on the other hand, it protects the person (society) from the unjustly shouting unjust laws.

Keywords: *law, conflict law, psychological legal understanding, materialistic legal understanding, Radbruch formula, law enforcement contra legem.*

КОЛЛИЗИИ ПРАВА И ЗАКОНА В ФИЛОСОФИИ ПРАВА

АРТУР ГАМБАРЯН

заведующий кафедрой теории права и конституционного права

Российско-Армянского (Славянского) Университета,

доктор юридических наук, профессор,

заслуженный юрист Республики Армения,

г. Ереван, Республика Армения

Цель статьи - выявить коллизионное соотношение права (справедливости) и закона в философской плоскости.

Основными задачами статьи являются анализ противоречий права и закона с точки зрения широкого правопонимания, а также ответ на вопрос о том, как должен действовать правоприменитель, если при решении конкретного дела встречается вопиющее противоречие между правом (справедливость) и законом. Автор использовал ряд научных методов, в частности, историко-правовые и сравнительно-правовые методы.

Автор делает вывод, что сторонники широкого правопонимания рассматривают вопрос противоречия права и закона в основном с точки зрения законодательной политики, однако не обсуждают вопрос о том, как правоприменитель должен поступать, когда по конкретному делу встречается вопиющее противоречие права и закона.

В статье положения «закон строгий, но закон» и «несправедливый закон-не закон» рассматриваются в плоскостях легизма и естественного права. Автор делает вывод, что формула Радбруха, которая прошла практическую апробацию, - исключение из положения «закон строгий, но закон». Эта формула, с одной стороны, придает важность определенности и стабильности закона, с другой стороны, защищает человека (общество) от вопиюще несправедливых законов. В случае выявления неправовых законов судьи РА должны обратиться к *contra legem* правоприменению.

Ключевые слова: *право, закон, коллизионное право, психологическое правопонимание, материалистическое правопонимание, радбрухская формула, правоприменение contra legem.*

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ***

ՀՏԴ 341.17

DOI: [10.52063/25792652-2021.1-86](https://doi.org/10.52063/25792652-2021.1-86)

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական իրավաբանական
խորհրդատվության կենտրոնի դասախոս-կոորդինատոր,
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության
պետական հանձնաժողովի անդամ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
բ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
tigranmarkosyan@ysu.am*

ԱՆԱՀԻՏ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

*ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական
հանձնաժողովի իրավաբանական վարչության օրենսդրության
վերլուծության և իրավական ապահովման բաժնի պետ,
բ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
santrosyananahit@gmail.com*

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ու վերլուծել Եվրասիական տնտեսական միության մարմինների նորմատիվ իրավական ակտերի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառման հիմնահարցերը: Հետազոտության ընթացքում խնդիր է դրվել ներկայացնել ԵԱՏՄ իրավունքի աղբյուրները և ԵԱՏՄ մարմինների նորմատիվ իրավական ակտերի տեղը դրանց շարքում, վեր հանել ԵԱՏՄ մարմինների նորմատիվ իրավական ակտերի կիրառելիության վերաբերյալ միջազգային իրավական պահանջները և դրանց բովանդակությունը, պարզել Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ առկա կարգավորումների համարժեքությունը, ինչպես նաև ձևակերպել համապատասխան լուծումների ներդրմանն ուղղված որոշակի առաջարկություններ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (իրավահամեմատական, համակարգակառուցվածքային, վիճակագրական) մեթոդներ:

Հետազոտության արդյունքում հեղինակները հանգել են հետևության, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի նախատեսում ԵԱՏՄ մարմինների ակտերի կատարման ընթացակարգ, իսկ դրանց կիրառումը ապահովող գործիքակազմն ունի կատարելագործման կարիք: Միևնույն ժամանակ հեղինակները կարծում են, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգավորումները վերպետական միջազգային կազմակերպություններին առնչվող որոշ հարցերով ենթակա են բարեփոխման:

Հիմնաբառեր՝ վերազգային իրավունք, վերպետական մարմին, իրավունքի իրացում, անմիջական կիրառում, միջազգային կազմակերպության մարմինների որոշումների կատարում:

* Հոդվածը ներկայացվել է 01.03.2021թ., գրախոսվել՝ 06.03.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

Ներածություն

Միջազգային արդի զարգացումները հանգեցրել են նրան, որ պետությունները տարբեր ոլորտներում գնում են առավել խորը, փոխշահավետ գործակցության: Տնտեսական հարաբերությունների ոլորտում այդպիսի գործակցության դրսևորում է միջազգային տնտեսական ինտեգրացիան, որը, ի թիվս այլնի, միտված է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի խոչընդոտների վերացմանը²³⁰: Ընդ որում, միջազգային տնտեսական ինտեգրացիայի առավել խորթային ձև է դիտարկվում տնտեսական ինտեգրացիոն միությունը, որը բնութագրվում է միասնական շուկայի ձևավորման նպատակով²³¹:

Ինտեգրացիոն գործընթացներն ունեն կարևոր նշանակություն ոչ միայն պետության, այլև իրավունքի զարգացման համար: Միևնույն ժամանակ պակաս կարևոր չէ իրավունքի նշանակությունը հենց ինտեգրացիայի համար, քանի որ առանց գործուն ինտեգրացիոն իրավունքի անհնար է ինտեգրացիայի խնդիրների ու նպատակների կենսագործումը²³²: Դա է պատճառը, որ ինտեգրացիոն գործընթացների կարևորագույն բաղադրատարր է դիտարկվում նաև ինքնուրույն իրավական համակարգի ստեղծումը:

Ներկայումս տնտեսական ինտեգրացիոն գործընթաց իրականացվում է նաև հետխորհրդային տարածաշրջանում: Մասնավորապես, «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով²³³ (այսուհետ նաև՝ Պայմանագիր) որպես տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն հիմնադրվել է Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ նաև՝ ԵԱՏՄ), որի գործունեության նպատակներից է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի ստեղծումը: ԵԱՏՄ հիմնադրմամբ սկիզբ է դրվել նոր իրավական համակարգի՝ ԵԱՏՄ իրավունքի գոյությանը, որում ներառվում են նաև ԵԱՏՄ-ի մարմինների ակտերը: Այլ կերպ ասած՝ ԵԱՏՄ-ն օժտված է ինտեգրացիոն իրավաստեղծ գործունեություն իրականացնելու իրավասությամբ²³⁴:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը ևս միացել է ԵԱՏՄ-ին²³⁵ և այս հանգամանքով պայմանավորված՝ ներպետական իրավական համակարգում ԵԱՏՄ մարմինների նորմատիվ իրավական ակտերի դերի ու կիրառության հետ կապված հարցերը ստացել են գիտագործնական մեծ կարևորություն և պահանջում են համապարփակ մոտեցումների ձևավորում:

Եվրասիական տնտեսական միության իրավունքի ընդհանուր բնութագիրը

Եվրասիական տնտեսական միության իրավունքի աղբյուրները սահմանված են Պայմանագրի 6-րդ հոդվածում, որի հիման վրա դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ միջազգային պայմանագրեր և ԵԱՏՄ մարմինների ակտեր²³⁶:

²³⁰ Տե՛ս **Гончаренко М.А., Хомякова Л.И.**, Евразийская интеграция: перспективы развития // Экономика. Налоги. Право, 2016, №4, С. 103-104:

²³¹ Տե՛ս **Кудряшов В.С.**, Международная экономическая интеграция: теоретические аспекты и мировая практика // Ученые записки Тамбовского отделения РoСМУ, 2019, С. 80-81:

²³² Տե՛ս **Энтин М.Л.**, ПРАВО Европейского Союза. НОВЫЙ ЭТАП ЭВОЛЮЦИИ: 2009–2017 годы. – М.: Изд-во «Аксиом», 2009, С. 175:

²³³ Ուժի մեջ է մտել 02.01.2015թ.: Տե՛ս ՀՀԴՏ 2015.01.21/3(1092) Հոդ.24:

²³⁴ Տե՛ս **Капустин А.Я.**, Право Евразийского экономического Союза: международноправовой дискурс // Журнал российского права, 2015, С. 61:

²³⁵ Տե՛ս ՀՀԴՏ 2015.01.21/3(1092) Հոդ. 54:

²³⁶ Տե՛ս **Соколова Н.А.**, Евразийский экономический Союз: правовая природа и природа права // Lex Russica, Право, 2017, С. 53:

ԵԱՏՍ իրավունքի միջազգային պայմանագրային բազան իր հերթին միատարր չէ: Այն ընդգրկում է միջազգային պայմանագրերի երեք տեսակ՝ Պայմանագիրը, ԵԱՏՍ շրջանակներում կնքված պայմանագրերը և երրորդ կողմի հետ ԵԱՏՍ կնքած պայմանագրերը: Ընդ որում, Պայմանագրի 6-րդ հոդվածից բխում է, որ ԵԱՏՍ իրավունքի աղբյուրների շարքում Պայմանագիրն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, որին հաջորդում են ԵԱՏՍ շրջանակներում կնքվող պայմանագրերը, իսկ երրորդ կողմի հետ ԵԱՏՍ կնքած պայմանագրերը պետք է համապատասխանեն նախորդ երկուսին:

ԵԱՏՍ շրջանակներում ինտեգրացիոն իրավական գործիքների կազմում ուրույն տեղ է զբաղեցնում ԵԱՏՍ իրավունքի աղբյուրների երկրորդ խումբը՝ ԵԱՏՍ մարմինների ակտերը, քանի որ դրանցում արտահայտվում են ԵԱՏՍ ինտեգրացիոն գործընթացի առանձնահատկությունները²³⁷: Այսպես, Պայմանագրի 2-րդ հոդվածով ամրագրված են ԵԱՏՍ մարմինների երկու տեսակի ակտեր՝ «կարգադրություն», որը ԵԱՏՍ մարմինների կողմից ընդունվող կազմակերպակարգադրական ակտն է, և «որոշում», որը ԵԱՏՍ մարմինների կողմից ընդունվող, նորմատիվ իրավական բնույթի դրույթներ պարունակող ակտն է:

Պայմանագիրը նման ակտեր ընդունելու իրավասություն վերապահել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդին, Եվրասիական միջկառավարական խորհրդին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ պայմանով, որ դրանք ընդունվեն Պայմանագրով ու ԵԱՏՍ շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված իրենց լիազորությունների շրջանակներում (հոդվ. 6, մաս 1): Ընդ որում, ԵԱՏՍ մարմինների որոշումները և կարգադրությունները չպետք է հակասեն Պայմանագրին և ԵԱՏՍ շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին, իսկ միմյանց հակասելու դեպքում գերակայում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, այնուհետև Եվրասիական միջկառավարական խորհրդի ակտերը:

Գոյություն ունի ԵԱՏՍ մարմինների կողմից ընդունվող ակտերի երրորդ խումբը՝ «առաջարկությունը», որը չունի պարտադիր բնույթ և դրանով պայմանավորված՝ ԵԱՏՍ իրավունքի համակարգից դուրս է²³⁸:

Շարադրվածի համատեքստում հատկապես հետաքրքրական են ԵԱՏՍ մարմինների որոշումների հետ կապված հարցերը, քանի որ, ինչպես նշվեց, դրանք ունեն նորմատիվ բնույթ: Այս առումով Պայմանագիրը տարբերակված մոտեցում է ցուցաբերել դրանց կիրառելիության հարցի կապակցությամբ: Մասնավորապես, Պայմանագիրը սահմանում է, որ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները ենթակա են անդամ պետությունների կողմից դրանց ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով կատարման: Այլ կերպ ասած՝ չնայած այս մարմինների ակտերի նորմատիվ բնույթին, դրանք Պայմանագրի մակարդակում չունեն անմիջական կիրառություն և այդ հարցում անդամ պետությունների ներպետական ընթացակարգերը ունեն որոշիչ դերակատարում:

Բոլորովին այլ իրավիճակ է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների դեպքում: Պայմանագրի 1-ին հավելվածի 13-րդ կետով սահմանվում է, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ընդունվող որոշումներն ունեն նորմատիվ իրավական բնույթ, պարտադիր են անդամ պետությունների համար և ենթակա են անմիջական կիրառության անդամ պետությունների տարածքներում:

²³⁷ St'u Пименова О.И., Правовая интеграция в Европейском союзе и Евразийском экономическом союзе: сравнительный анализ // Вестник международных организаций: образование, наука, новая экономика, Право, 2019, С. 84:

²³⁸ St'u Довгань Е.Ф., Мокосеева М.А., Правовые проблемы функционирования евразийского экономического союза // Вестник Марийского государственного университета. Серия «Исторические науки. Юридические науки». 2018, Т. 4, №4, С. 78-79:

Պայմանագրի նույն հավելվածում սահմանվում են նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների ուժի մեջ մտնելու, ֆիզիկական և իրավաբանական անձանց կարգավիճակի վատթարացման դեպքում դրանց հետադարձ ուժի արգելքի և այլ հարցեր: Բացի այդ, Պայմանագրի 52-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի՝ ԵԱՏՄ տարածքում ուղղակի գործողության պահանջ, իսկ Պայմանագրի 51-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը ԵԱՏՄ շրջանակներում տեխնիկական կանոնակարգման հիմքում դրել է տեխնիկական կանոնակարգերի անդամ պետություններում առանց բացառումների կիրառման և կատարման սկզբունքը:

Ստացվում է, որ ի տարբերություն ԵԱՏՄ մյուս մարմինների՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումներով ԵԱՏՄ անդամ պետությունների ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար կարող են սահմանվել վարքագծի պարտադիր կանոններ, որոնք ենթակա են անդամ պետություններում անմիջական կիրառության: Այս հանգամանքը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ակտերին հաղորդում է վերազգային իրավունքի աղբյուրին բնորոշ հատկանիշներ²³⁹:

Վերազգային իրավաստեղծման իրավասությունն իր հերթին կանխորոշում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և ԵԱՏՄ բնույթը, քանի որ ուղղահայաց հարաբերությունների, այսինքն՝ կազմակերպության անդամ պետությունների ներսում ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար իրավական նորմեր սահմանելու իրավասությունը դուրս է ավանդական միջազգային կազմակերպությունների գործունեության շրջանակներից և ենթադրում է անդամ պետությունների կողմից որոշակի հարցերով սուվերենության փոխանցում: Դրանով է բացատրվում այն իրողությունը, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը, իսկ որոշ դեպքերում՝ ԵԱՏՄ, համապատասխանաբար դիտարկվում են որպես վերազգային մարմին²⁴⁰ և կազմակերպություն²⁴¹: Ըստ որում, ԵԱՏՄ վերազգային եությունը ածանցվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի բնույթից, որն ըստ եության գտնվում է ԵԱՏՄ մարմինների աստիճանակարգի ամենացածր օղակում²⁴²:

Վերոնշյալի լույսի ներքո ուշագրավ է ԱՊՀ տնտեսական դատարանի 2006 թվականի մարտի 10-ի «2000 թվականի հոկտեմբերի 10-ի Եվրասիական տնտեսական համագործակցության»²⁴³ հիմնադրման պայմանագրի մեկնաբանման մասին» որոշումը, որում դատարանը նշել է, որ միջազգային կազմակերպությանը վերաբերական գործառույթներով օժտելու դեպքում նրա ակտերը ունենում են հետևյալ առանձնահատկությունները.

1. վերաբերական մարմնի իրավական ակտերն ունեն անմիջական գործողություն. այդ ակտերը անդամ երկրներում համարվում են ներպետական օրենսդրության մաս և չեն պահանջում անդամ պետությունների կողմից այդ ակտերին համաձայնություն տալու ընթացակարգի սահմանում,

²³⁹ Տե՛ս **Чиркин В.Е.**, Наднациональное право: основные особенности // Журнал российского права, 2017, С. 135-137:

²⁴⁰ Տե՛ս, օրինակ՝ **Пименова О.И.**, Правовая интеграция в Европейском союзе и Евразийском экономическом союзе: сравнительный анализ // Вестник международных организаций: образование, наука, новая экономика, Право, 2019, С. 83:

²⁴¹ Տե՛ս, օրինակ՝ **Нешатаева Т.Н.**, Интеграция и наднационализм // Вестник Пермского университета. Юридические науки, 2014, 2 (24), С. 245:

²⁴² Տե՛ս **Назарова О. В.**, Участие Республики Беларусь в Евразийском экономическом союзе: конституционно-правовая оценка // Журнал Белорусского государственного университета. Право, 2017, № 2., С. 25:

²⁴³ Եվրասիական տնտեսական համագործակցությունը (Եվրասիական տնտեսական համագործակցության) հիմնադրվել է 2000 թվականի հոկտեմբերի 10-ին՝ միավորելով նախկին ԽՍՀՄ մի շարք պետությունների և դադարել է գործել Եվրասիական տնտեսական միության ստեղծման արդյունքում:

2. իրավակիրառ պրակտիկայում կոլիզիաների առաջացման դեպքում վերաբեռնված մարմնի իրավական ակտերով ամրագրված նորմերն ունեն առաջնահերթություն ներաբեռնված իրավական նորմերի նկատմամբ,

3. վերաբեռնված մարմնի իրավական ակտերն ուղղակիորեն իրավունքներ և պարտականություններ են առաջացում բոլոր անդամ պետությունների ինչպես պետական մարմինների, այնպես էլ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար,

4. անդամ պետությունների դատարանների կողմից վեճերի լուծման դեպքում վերաբեռնված մարմնի իրավական ակտերը կիրառվում են ուղղակիորեն՝ հաշվի առնելով վերաբեռնված մարմնի իրավասու մարմնի (վերաբեռնված դատարանի) կողմից տվյալ իրավական ակտի մեկնաբանությունը²⁴⁴:

Նշալ որոշմամբ արձանագրվել է, որ Եվրասիական տնտեսական համագործակցությունը չի համարվում վերաբեռնված միություն, որի պատճառներից էր նաև այն, որ «Եվրասիական տնտեսական համագործակցության հիմնադրման մասին» պայմանագրի 14-րդ հոդվածի համաձայն՝ համագործակցության մարմինների որոշումները Պայմանավորվող Կողմերը կատարում են ազգային օրենսդրությանը համապատասխան՝ անհրաժեշտ ազգային նորմատիվ իրավական ակտեր ընդունելու միջոցով:

Հարկ է նշել, որ ԵԱՏՄ վերաբեռնված բնույթը և նրա իրավունքի՝ վերազգային լինելու հանգամանքներն իրենց արտացոլումն են գտել նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության ակտերում: Մասնավորապես Սահմանադրական դատարանը, քննության առնելով Պայմանագրում և ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցերը, իր վերլուծություններն իրականացրել է նաև «վերազգային իրավունքի աղբյուր» և «վերաբեռնված մարմին» հասկացությունների համատեքստում²⁴⁵:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ԵԱՏՄ իրավունքն ինքնուրույն համակարգ է, որն ունի երկակի բնույթ, քանի որ դրան բնութագրական են ինչպես միջազգային, այնպես էլ վերազգային իրավունքի հատկանիշները:

ԵԱՏՄ մարմինների նորմատիվ իրավական ակտերի կատարման և անմիջական կիրառության պահանջների իրացումը Հայաստանի Հանրապետությունում

Ցանկացած ինտեգրացիոն գործընթացի հաջողությունը և շարունակականությունը մեծապես կախված են դրա շրջանակներում ստեղծված իրավանորմերի կիրառման գործուն մեխանիզմների առկայությունից²⁴⁶: Այս առումով կարևորվում է այն կառուցակարգային ու ընթացակարգային նախադրյալների դիտարկումը, որոնք ապահովում են կամ պետք է ապահովեն ԵԱՏՄ մարմինների նորմատիվ իրավական ակտերի իրացումը Հայաստանի Հանրապետությունում:

²⁴⁴ Ст'у Консультативное заключение Экономического Суда СНГ от 10 марта 2006 г. № 01-1/3-05 «О толковании Договора об учреждении Евразийского Экономического Сообщества от 10 октября 2000 года» // Информационно-правовая система нормативных правовых актов Республики Казахстан «Әділет»:

²⁴⁵ Ст'ս Սահմանադրական դատարանի 14.11.2014թ. թիվ ՍԴՌ-1175 և 10.10.2017թ. թիվ ՍԴՌ-1381 որոշումները:

²⁴⁶ Ст'ս **Սարգսյան Ա.**, Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի կիրառման արդի հիմնախնդիրները, // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու (գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան), Ե., ԵՊՀ իրատ., 2019, էջ 454:

Այս հարցի կարգավորմանը նվիրված էր «Միջազգային պայմանագրերի մասին» Նախորդ օրենքի²⁴⁷ 55-րդ հոդվածը, որի 2-րդ մասն արձանագրում էր, որ միջազգային կազմակերպության մարմնի որոշումը միջազգային պայմանագիր չի համարվում, իսկ նույն հոդվածի մյուս մասերը նախատեսում էին այդ որոշման կատարման նպատակով պատասխանատու մարմնի կողմից համապատասխան նորմատիվ իրավական ակտի ընդունման ընթացակարգ նախաձեռնելու պահանջ:

«Միջազգային պայմանագրերի մասին» գործող օրենքում²⁴⁸ միջազգային կազմակերպության մարմինների որոշումների մասին դրույթներ առհասարակ տեղ չգտան և միակ վերաբերելի կարգավորումը ներկայումս առկա է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի²⁴⁹ 24-րդ հոդվածում, որը սահմանում է միայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից նորմատիվ իրավական բնույթի ակտերի ընդունումից հետո, կախված այդ ակտով կարգավորվող հարաբերությունների բնույթից, օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու կամ իր նորմատիվ ակտով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ակտը գործողության մեջ դնելու Կառավարության պարտականությունը:

Իհարկե, վկայակոչվածն ամենևին չի ենթադրում միջազգային կազմակերպությունների մարմինների կատարման ենթակա որոշումների չկատարման հնարավորություն: Ասվածն ուղղակիորեն բխում է «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի²⁵⁰ 26-րդ և 27-րդ հոդվածներից, որոնցից առաջինը ամրագրում է, որ յուրաքանչյուր գործող պայմանագիր պարտադիր է դրա մասնակիցների համար և պետք է նրանց կողմից բարեխղճորեն կատարվի («pacta sunt servanda» սկզբունք), իսկ մյուսի համաձայն՝ մասնակիցը որպես պայմանագիրը չկատարելու արդարացման պատճառաբանություն չի կարող վկայակոչել իր ներքին իրավունքի դրույթները: Ընդ որում, «pacta sunt servanda» սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 18-րդ հոդվածում:

Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ միջազգային, այդ թվում՝ վերաբերական կազմակերպությունների մարմինների որոշումների կատարման կարգավորումը ներառական մակարդակում որոշակիություն կհաղորդի այս գործընթացին և կնպաստի նաև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումների կատարման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Միևնույն ժամանակ, հարկ է հատկապես անդրադառնալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների՝ գործողության մեջ դնելու վերաբերյալ կարգավորումներին՝ առաջին հերթին դրանց՝ Պայմանագրի դրույթներին համապատասխանության համատեքստում:

Ինչպես նշվեց, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի որոշումները պարտադիր են անդամ պետությունների համար և նրանց տարածքներում ենթակա են անմիջական կիրառության: Այսինքն՝ այստեղ խոսքը ոչ թե դրանց կատարման, այլ անմիջական կիրառության մասին է:

Հայտնի է, որ իրավունքի տեսության մեջ իրավունքի կատարումը և կիրառումն իրավունքի իրացման ինքնուրույն ձևեր են: Այսպես՝ իրավական նորմի կատարումը

²⁴⁷ Ընդունվել է 22.02.2007թ.: Ուժը կորցրել է 09.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007.04.11/19(543) Հոդ.452:

²⁴⁸ Ընդունվել է 23.03.2018թ.: Ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.29/24(1382) Հոդ.406:

²⁴⁹ Ընդունվել է 21.03.2018թ.: Ուժի մեջ է մտել 07.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373:

²⁵⁰ Ընդունվել է 23.05.1969թ.: Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 16.06.2005թ.:

ենթադրում է իրավունքի սուբյեկտների կողմից իրենց իրավունքների ու պարտականությունների իրագործման համար համապատասխան ակտիվ իրավաչափ գործողությունների կատարում²⁵¹: Ի տարբերություն կատարման՝ իրավունքի նորմի կիրառումը հանրային իշխանության մարմինների միջամտությունն է դրա պահանջների կենսագործման հարցում: Այսինքն՝ իրավական նորմի կիրառումը դրա անհատականացումն է կյանքի կոնկրետ իրավիճակում, կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրա համար լիազորված սուբյեկտների կողմից և սահմանված ընթացակարգերի պահպանմամբ²⁵²: Ընդ որում, իրավական նորմի կիրառման նախադրյալ է դրա գործողության մեջ լինելը, այլ կերպ ասած՝ հասցեատերերի նկատմամբ ուղղակի ազդեցություն ունենալը:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների անմիջական կիրառության հարցի տեսանկյունից հետաքրքրական է Եվրոպական միության կանոնակարգերի վերաբերյալ փորձը, քանի որ դրանք ուժի մեջ մտնելուն պես անմիջականորեն կիրառվում են Եվրոպական միության բոլոր անդամ պետությունների կողմից՝ առանց ազգային օրենսդրության մեջ համապատասխան ինկորպորացիաներ անելու²⁵³: Այսպես՝ Եվրոպական միության արդարադատության դատարանը, թիվ 39/72 գործով 1973 թվականի փետրվարի 7-ի կայացրած վճռում անդարձառնալով ուղղակի կիրառության (direct applicability) և ուղղակի ազդեցության (direct effect) հարցերին, նշել է, որ իմպլեմենտացիոն բոլոր մեթոդները հակասում են կանոնակարգի իրավական բնույթին, քանի որ իմպլեմենտացիայի արդյունքում կարող են ակտի անմիջական կիրառության համար առաջանալ խոչընդոտներ և խայթարել դրանց միաժամանակյա և միասնական կիրառումը միության ամբողջ տարածքում²⁵⁴:

Նման պայմաններում հիմնավոր է թվում մասնագիտական գրականության մեջ արտահայտված այն մտտեցումը, ըստ որի՝ բացակայում է ներպետական մակարդակում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների կիրառման նպատակով որևէ ակտի ընդունման անհրաժեշտությունը²⁵⁵: Յետևաբար, պետք է արձանագրել, որ այդ ակտերի անմիջական կիրառության կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Պայմանագրով ստանձնած պարտավորության բովանդակությունից ուղղակիորեն բխում է առանց ներպետական որևէ ընթացակարգի իրականացման՝ դրանց համապատասխան իրավահարաբերությունների նկատմամբ իրավասու մարմինների կողմից կիրառման պահանջը: Այլ կերպ ասած՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 24-րդ հոդվածը համահունչ չէ Պայմանագրի դրույթներին²⁵⁶:

²⁵¹ Տե՛ս **Ներսեսյանց Վ.Ս.**, Իրավունքի և պետության տեսություն, Ե., Նաիրի 2001, էջ 244:

²⁵² Տե՛ս **Պողոսյան Վ., Սարգսյան Ն.**, Սահմանադրության անմիջական գործողությունը և նորմերի կիրառման աստիճանակարգությունը սահմանադրության գերակայության համատեքստում, մաս 2, «Պետություն և իրավունք», Ե., 2020, թիվ 2 (87), էջ:

²⁵³ Տե՛ս Applying EU Law (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://ec.europa.eu/info/law/law-making-process/applying-eu-law_en, 13.02.2021թ. դրությամբ):

²⁵⁴ Տե՛ս Judgment of the European Court of 7 February 1973. - Commission of the European Communities v Italian Republic. - Premiums for slaughtering cows. - Case 39-72. (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A61972CJ0039>, 13.02.2021թ. դրությամբ):

²⁵⁵ Տե՛ս **Исполинов А.С.**, Приоритет, прямое действие и прямой эффект норм права Евразийского экономического союза // Журнал международного права и международных отношений. 2017. № 1-2 (80-81), (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://evolutio.info/ru/journal-menu/2017-1-2/2017-1-2-ispolinov>, 12.02.2021թ. դրությամբ):

²⁵⁶ Այս ինչորի լուծմանն է ուղղված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.e-draft.am/projects/2496/about>, 12.02.2021թ. դրությամբ):

Այդուհանդերձ, այս հարցի քննարկումը միայն Պայմանագրի շրջանակներում բավարար չէ, քանի որ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև սահմանադրական կարգավորումները²⁵⁷: Այս հանգամանքը շեշտադրվել է նաև Սահմանադրական դատարանի 14.11.2014թ. թիվ ՍԴՈ-1175 և 10.10.2017թ. թիվ ՍԴՈ-1381 որոշումներում, որոնց համաձայն՝ վերաբերյալ մարմինների որոշումների գործողությունը հնարավոր է միայն Սահմանադրությանը²⁵⁸ համապատասխանության շրջանակներում:

Նշյալ համատեքստում հարցը դիտարկելիս առաջին հերթին մտահոգության առիթ է տալիս այն հարցը, թե ինչպիսի տեղ են զբաղեցնում վերաբերյալ միջազգային կազմակերպությունների նորմատիվ իրավական ակտերը ներառյալ նորմատիվ իրավական ակտերի համակարգում: Խոսքն այն մասին է, որ Սահմանադրության 5-րդ հոդվածը նախատեսում է նորմատիվ իրավական ակտերի սպառնալից շրջանակ (Սահմանադրություն, սահմանադրական օրենք, օրենք և ենթաօրենսդրական ակտ) և դրանց որոշակի աստիճանակարգություն: Արդյունքում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների անմիջական կիրառության դեպքում դրանք դուրս կլինեն այս ցանկից, ինչպես նաև պարզ չի լինի այդ ակտերի տեղը նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունում:

Քննարկվող հարցադրումը մյուս կողմից որոշակի աղերսներ ունի Սահմանադրության 1-ին և 2-րդ անփոփոխելի հոդվածների հետ: Մասնավորապես այն առումով, թե որքանով են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում անմիջական կիրառություն ենթադրող որոշումները համատեղելի ինքնիշխանության, ինչպես նաև ժողովրդի իշխանության իրացման միջոցների հետ:

Այս կապակցությամբ 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության համատեքստում հնչել է տեսակետ առ այն, որ անհնար է որևէ վերազգային մարմին ընդունի Հայաստանի Հանրապետության տարածքում պարտադիր ուժ ունեցող իրավանորմեր, քանի որ Սահմանադրությունը հստակ նախատեսում է, որ այդպիսի նորմեր ընդունում են բացառապես Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ու պաշտոնատար անձինք: Ավելին, Հայաստանի Հանրապետության լիիրավ անդամակցությունը որևէ քաղաքական ու տնտեսական միավորմանը, որը կնախատեսի այնպիսի վերազգային մարմնի գոյություն, ինչը կարող է ընդունել պարտադիր ուժ ունեցող իրավական նորմեր նրա տարածքում, հակասահմանադրական է²⁵⁹:

Մինչդեռ գործող խմբագրությամբ Սահմանադրությունը առանձին դրույթով՝ 205-րդ հոդվածով արդեն նախատեսում է Հայաստանի Հանրապետության վերաբերյալ միջազգային կազմակերպությանը անդամակցության հնարավորություն: Ընդ որում, սահմանադիրը այս հնարավորության իրացման միակ ձև է դիտարկել հանրաքվեն, որը Սահմանադրության 2-րդ հոդվածի ուժով ժողովրդի կողմից իր իշխանության իրականացման միջոց է:

²⁵⁷ Տե՛ս **Морозов А.Н.**, Реализация международных обязательств, принятых государствами-членами в рамках Евразийского экономического союза // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения, Право, 2017, С. 115:

²⁵⁸ Ընդունվել է 05.07.1995թ.: 06.12.2015թ. շարադրվել է նոր խմբագրությամբ: Տե՛ս ՀՀԳՏ 2015.12.21/Յատուկ թողարկում Հոդ. 1118:

²⁵⁹ Տե՛ս **Ղազիկյան Ա.**, Վերաբերյալ ինտեգրացիոն միավորումներին անդամակցելու սահմանադրաիրավական հիմնախնդիրները // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու (գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազիկյան), Ե., ԵՊՀ իրատ., 2016, էջ 303:

Վկայակոչված դրույթների, վերազգային իրավունքի և վերպետական միջազգային կազմակերպություններին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ կարելի է ենթադրել, որ այդ կազմակերպություններին անդամակցության գաղափարի ներքո նկատի է առնվում նաև պետության որոշակի հարցերով սուվերենության փոխանցումը: Հետևաբար նման կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում անմիջական կիրառման ենթակա ակտեր ընդունելու հնարավորությունը սահմանադրականության տեսանկյունից ինքնին խնդրահարույց չէ: Այլ հարց է, որ այս խնդրի հետ համակարգային առումով կապված Սահմանադրության դրույթները ներկայումս չեն պատասխանում որոշակի վերաբերելի, այդ թվում՝ վերպետական միջազգային կազմակերպությունների մարմինների ակտերի իրավաբանական ուժի հետ կապված հարցերին, որոնք ներկա գլոբալիզացիայի և ինտեգրման պայմաններում կարևոր են²⁶⁰:

Հենց վերջին հանգամանքով է պայմանավորված այն իրողությունը, որ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» N1441-L որոշմամբ²⁶¹ սահմանադրական փոփոխությունների ռազմավարական ուղղությունների շարքին են դասվել վերպետական կառույցներին անդամակցելիս տվյալ վերպետական կառույցի ընդունած նորմատիվ իրավական ակտերի կիրառելիության առանձնահատկությունների հետ կապված հարցերը:

Խնդրո առարկա հարցի տեսանկյունից ուշագրավ է, որ ԵԱՏՄ անդամ պետություններից միայն Ռուսաստանի Դաշնությունն է սահմանադրական մակարդակով ուղղակիորեն ամրագրել իր որոշ իրավասությունները միջկառավարական կազմակերպություններին պատվիրակելու հնարավորություն²⁶²:

Հարկ է առանձնացնել վերպետական մարմինների որոշումների անմիջական կիրառությանն առնչվող ևս մեկ հիմնախնդիր: Խոսքն այն մասին է, որ մի կողմից Սահմանադրական դատարանի գնահատմամբ վերպետական մարմինների որոշումների գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում հնարավոր է միայն Սահմանադրությանը համապատասխանելու դեպքում, իսկ մյուս կողմից առկա չէ դրանց ոչ նախնական և ոչ էլ հետագա սահմանադրական վերահսկողության հնարավորություն:

Վերը շարադրված հանգամանքների հաշվառմամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների կիրառման գործող կառուցակարգը, չնայած Պայմանագրի դրույթների հետ աններդաշնակությանը, առավել ընդունելի է թվում: Այս առումով տեղին է հիշատակել այն միտքը, որ միջազգային պայմանագրերի կատարման պահանջը վերաբերում է դրա արդյունքին և ոչ թե միջոցին²⁶³: Միևնույն ժամանակ հրատապ է հիշատակված կառուցակարգի կատարելագործման հրամայականը:

Խնդիրն առաջին հերթին վերաբերում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումները գործողության մեջ դնելու նպատակով նախաձեռնություն դրսևորելու ժամկետի բացակայությանը: Այսպես, օրինակ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի N 107 որոշմամբ

²⁶⁰ Տե՛ս **Бахин С.В.**, Международная составляющая правовой системы России // Правоведение, 2007, № 6, С. 126:

²⁶¹ Ուժի մեջ է մտել 26.10.2019թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2019.10.25/74(1527).1 Հոդ.95.1.1:

²⁶² Տե՛ս **Щур-Труханович Л.В.**, К вопросу о конституционной обеспеченности передачи государствами-членами полномочий Евразийскому экономическому союзу и европейскому союзу // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения, Право, 2016, С. 72:

²⁶³ Տե՛ս **Морозов А.Н.**, Реализация международных обязательств, принятых государствами-членами в рамках Евразийского экономического союза // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения, Право, 2017, С. 112:

հաստատված «Ծխախոտային արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության (ՄՍՏԿ 035/2014) տեխնիկական կանոնակարգը գործողության մեջ դնելու Կառավարության համապատասխան որոշման նախագիծը մշակվել է միայն 2020թ.²⁶⁴, իսկ այդ կանոնակարգի պահանջների նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինը սահմանվել է Կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի թիվ 1020 որոշմամբ²⁶⁵: Մեկ այլ օրինակ է Կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 25-ին թիվ 1715-Ն որոշումը²⁶⁶, որով սահմանվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 769 որոշմամբ հաստատված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ 005/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ՝ միայն սննդամթերքի հետ շփվող փաթեթվածքի համար» տեխնիկական կանոնակարգի համար լիազոր մարմինը:

Հաջորդ խնդիրը վերաբերում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների հայերեն թարգմանությանը: Այսպես՝ Պայմանագրի 110-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ԵԱՏՄ մարմինների աշխատանքային լեզուն ռուսերենն է, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ԵԱՏՄ շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումները, որոնք պարտադիր են անդամ պետությունների համար, ընդունվում են ռուսերենով՝ հետագայում թարգմանվելով անդամ պետությունների պետական լեզուներով, եթե դա նախատեսված է դրանց օրենսդրությամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով: Այսինքն՝ քննարկվող որոշումների թարգմանությունը պետք է իրականացվի, եթե նման պահանջ նախատեսված է ներպետական օրենսդրությամբ, իսկ թարգմանությունը իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 72 որոշմամբ հաստատված կարգով²⁶⁷: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի պարունակում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների թարգմանության վերաբերյալ ուղղակի դրույթներ, և նման պահանջը կարող է բխեցվել միայն դրա տարբեր դրույթների համադրումից: Միևնույն ժամանակ հիշատակված կարգի կանոնակարգումներն էլ ինքնին չեն երաշխավորում մինչև համապատասխան որոշման ուժի մեջ մտնելը դրանց թարգմանությունը, որը խնդրահարույց է թե՛ այդ որոշումների կիրառման, թե՛ Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դնելու տեսանկյունից: Ուշագրավ է, որ ԵԱՏՄ մարմինների ակտերի թարգմանության հիմնախնդիրը այլ համատեքստում արդեն իսկ բարձրացվել է հայրենական իրավագիտությունում²⁶⁸:

²⁶⁴ Տե՛ս Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.e-draft.am/projects/2422/about>, 12.02.2021թ. դրությամբ):

²⁶⁵ Ուժի մեջ է մտել 07.09.2017թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2017.09.06/55(1330) Հոդ.848:

²⁶⁶ Ուժի մեջ է մտել 27.10.2020թ.: Տե՛ս Միասնական կայք 10.19.20-11.01.20:

²⁶⁷ Решение Совета Евразийской экономической комиссии от 18.09.2014 N 72 "Об организации перевода международных договоров в рамках Евразийского экономического союза и актов органов Евразийского экономического союза, (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_169492/271bb8b2160c7c8bb3d3fb4ec2116756400e194_6_14.02.2021թ.դրությամբ):

²⁶⁸ Տե՛ս **Դանիելյան Գ.**, ԵԱՏՄ-ի մարմինների որոշումների իրավական արժեքը ներպետական իրավական համակարգում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու (գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազիկյան), Ե., ԵՊՀ հրատ., 2016, էջ 78:

Եզրակացություն

Այսպիսով՝ ԵԱՏՄ մարմինների նորմատիվ իրավական ակտերի Հայաստանի Հանրապետությունում կիրառման հիմնախնդիրների վերաբերյալ կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. ԵԱՏՄ իրավունքն ինքնուրույն համակարգ է, որն ունի երկակի բնույթ, քանի որ դրան բնութագրական են ինչպես միջազգային, այնպես էլ վերազգային իրավունքի հատկանիշները:

2. Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները չունեն անմիջական կիրառություն և ենթակա են ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով կատարման: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը նման ընթացակարգ չի նախատեսում:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի որոշումների անմիջական կիրառության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորության բովանդակությունից բխում է դրանց կիրառման նպատակով ներպետական ակտերի ընդունման անհրաժեշտության բացակայությունը, և այդ առումով դրանք գործողության մեջ դնելու գործող ներպետական կարգավորումը համահունչ չէ այդ պարտավորությանը:

4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նորմատիվ իրավական ակտերը գործողության մեջ դնելու ներպետական ընթացակարգը այն նախաձեռնելու ժամկետի և գործողության մեջ դրվող ակտերի թարգմանության ապահովման առումով ունեն բարեփոխման անհրաժեշտություն:

5. Հետագա սահմանադրական բարեփոխումների օրակարգում հարկ է ներառել վերպետական միջազգային կազմակերպություններին առնչվող սահմանադրական կարգավորումների կատարելագործման հարցը՝ ի թիվս այլնի քննարկման առարկա ունենալով այդ մարմինների ակտերի՝ նորմատիվ իրավական ակտերի շարքին դասելու, դրանց նախնական և հետագա սահմանադրական վերահսկողության, ինչպես նաև անմիջական կիրառությանն առնչվող այլ հարցադրումները:

ISSUES PERTAINING TO THE APPLICATION OF NORMATIVE LEGAL ACTS OF THE EURASIAN ECONOMIC UNION BODIES IN THE REPUBLIC OF ARMENIA

TIGRAN MARKOSYAN

*Yerevan State University, Faculty of Law, Student Law Counselor Center,
Lecturer-Coordinator; State Commission for Protection of Economic Competition
of Republic of Armenia, Member, Ph.D. in Law,
Yerevan, Republic of Armenia*

ANAHIT SANTROSYAN

*State Commission for the
Economic Competition of Republic of Armenia, Legal Department,
Division of Legislation Analysis and Legal Support, Head,
Yerevan, Republic of Armenia*

The article is aimed at studying and analyzing application issues of normative legal acts of the Eurasian Economic Union bodies in the Republic of Armenia. During the research, the task was to present the sources of law of the EEU and the role of normative legal acts of the EEU bodies among them, to reveal international legal requirements with regard to the application of normative legal acts of the EEU bodies and its content, to find out the compliance of the

regulations in the legislation of the Republic of Armenia, as well as to formulate certain recommendations aimed at implementing relevant solutions.

In the course of the research, both general scientific (analysis, synthesis) and special (comparative legal, systematic, static) methods were applied.

As a result of the research, the authors concluded that the legislation of the Republic of Armenia does not regulate the execution procedure of the acts of the EEU bodies and the toolkit ensuring application of these acts should be amended. Meanwhile, the authors found that the constitutional provisions of the Republic of Armenia pertaining to some issues with regard to supranational international organizations should be amended as well.

Keywords: *supranational law, supranational body, realization of rights, direct application, execution of decisions made by the bodies of the international organization.*

ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ НОРМАТИВНЫХ ПРАВОВЫХ АКТОВ ОРГАНОВ ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ТИГРАН МАРКОСЯН

*преподаватель-координатор Центра студенческих
юридических консультаций юридического факультета ЕГУ,
член Государственной комиссии по защите
экономической конкуренции Республики Армения,
кандидат юридических наук,
г. Ереван, Республика Армения*

АНАИТ САНТРОСЯН

*начальник отдела анализа законодательства и
правового обеспечения юридического управления
Государственной комиссии по защите
экономической конкуренции Республики Армения,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи - изучение и анализ вопросов, связанных с применением нормативных правовых актов органов Евразийского экономического союза в Республике Армения. Задачи исследования – представить источники права ЕАЭС, выявить международно-правовые требования к применению нормативных правовых актов органов ЕАЭС и их содержание, выяснить соответствие действующих норм в законодательстве Республики Армения, а также сформулировать определенные рекомендации, направленные на решение соответствующих вопросов.

В ходе исследования были применены как общенаучные (анализ, синтез), так и специальные (сравнительно-правовой, систематический, статический) методы.

В результате исследования был сделан следующий вывод: законодательство Республики Армения не регулирует порядок исполнения актов органов Евразийского экономического союза, а инструментарий, обеспечивающий применение актов ЕАЭС, требует совершенствования. Вместе с тем, авторы замечают, что конституционные положения Республики Армения подлежат реформированию по некоторым вопросам, связанным с наднациональными международными организациями.

Ключевые слова: *наднациональное право, наднациональный орган, реализация прав, прямое применение, исполнение решений органов международной организации.*

**ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ***

ՉՏԴ 341.2, 349

DOI: [10.52063/25792652-2021.1-98](https://doi.org/10.52063/25792652-2021.1-98)

ԷԼԻՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

*Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության միգրացիայի, հայրենադարձների և փախստականների հարցերի բաժնի պետ,
Արցախի պետական համալսարանի պատմության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս,
բ.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն (ԼՂՀ)
mkhitaryan.elina.m@gmail.com*

Հողվածի նպատակն է պարզաբանել «փախստականի իրավական կարգավիճակ» եզրույթը, որը պարտադրված նոր պատերազմի հետևանքով ավելի շատ է շրջանառվում, տարբեր մեկնաբանությունների և ընկալումների տեղիք տալիս, ինչն էլ իր հերթին իրավական, հոգեբանական, սոցիալական հետևանքներ է առաջ բերում: Հողվածում ներկայացվում է փախստականների իրավական կարգավիճակի հարցը Արցախի իրավական դաշտում՝ փախստականների միջազգային իրավական կարգավիճակի հետ համադրմամբ, ինչը հետպատերազմյան շրջանում առավել քան արդիական է և միտված է երկրում ապաստանած, փախստական համարվող անձանց իրավունքների պաշտպանությանը: Մեր խնդիրն է պարզաբանել փախստականների իրավական կարգավիճակի յուրահատկությունները և լուսաբանել միջազգային իրավունքի սուբյեկտ չհանդիսացող Արցախում ապաստանած փախստականների իրավական կարգավիճակի հետ կապված հիմնախնդիրները:

Թեմայի շրջանակներում առաջադրված խնդիրների համապարփակ ուսումնասիրության ընթացքում կիրառվել են ընդհանուր գիտական՝ դիալեկտիկական, տրամաբանական, պատմական, ինչպես նաև մասնավոր կամ հատուկ մեթոդներ, որպիսիք են՝ իրավահամեմատական, վերլուծական, վիճակագրական, համակարգակառուցվածքային մեթոդները:

Հետապոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ փախստականների իրավական կարգավիճակը փախստականների իրավունքները, ապատություններն ու օրինական շահերն են, որոնք արտացոլված են Արցախի Հանրապետության Սահմանադրության մեջ, օրենքներում և Նորմատիվ իրավական ակտերում: Հիմնավորելով, որ փախստականների իրավական կարգավիճակի ապահովման հարցերում պետք է գործի համընդգրկուն, նախամտածված մեխանիզմ՝ հեղինակը մատնացույց է անում Արցախի Հանրապետությունում գործող օրենսդրության ինչպես դրական կողմերը, այնպես էլ բացերը՝ կարևորելով իրավական ակտերում փախստականների իրավական կարգավիճակի սկզբունքների, երաշխիքների ամրագրման շարունակականությունը:

Հիմնաբառեր՝ փախստական, ապաստան, բռնի տեղահանում, իրավական կարգավիճակ, փախստականների պաշտպանություն, փախստականների պաշտպանության միջազգային իրավական սկզբունքներ:

* Հողվածը ներկայացվել է 07.02.2021թ., գրախոսվել՝ 22.02.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

Ներածություն

Փախստականների իրավական կարգավիճակի հիմնահարցերն առանց չափազանցության դասվում են ժամանակակից աշխարհի ցավոտ խնդիրների շարքին և շոշափում են պետության կամ ժողովրդի հիմնարար շահերը: Անհրաժեշտ է նշել, որ այդ հիմնահարցի դիտակետից քննարկվում են այս կամ այն երկրի արտաքին ու ներքին քաղաքականության խնդիրներ, որոնց լուծման նպատակով առաջարկվող ուղիները դարձել են դեմոկրատիայի, մարդասիրության, հայրենասիրության չափորոշիչներ այդ երկրների կառավարությունների կամ առանձին քաղաքական գործիչների գնահատման համար:

Արցախի դեմ նոր պատերազմն իր բոլոր արհավիրքներից զատ տեղահանված արցախահայությանը կանգնեցրեց սեփական կարգավիճակի անորոշության փաստի առաջ, որի պատճառները պետք է փնտրել մինչպատերազմական Արցախում «քաղաքացիության», «փախստականի», «բռնի տեղահանվածի», «տեղահանվածի» իրավական կարգավիճակների հստակեցման, ավելի ճիշտ չհստակեցման, ինչպես հարկն է չկարգավորելու խնդիրներից, որոնց կարևորության մասին տարիներ շարունակ տարփողում էինք:

Նոր պատերազմն առավել քան արդիականացրեց մինչպատերազմյան շրջանում մեր ծրագրած նախաձեռնությունը. այն է՝ հստակեցնելու «փախստականների» իրավական կարգավիճակի հիմնախնդիրներն Արցախում: Այսօր Արցախի բնակչության համար առավել քան անհրաժեշտ է միջազգայնորեն ճանաչված հումանիտար և իրավական կարգավիճակների ամրակայումը, քանի որ ինչպես պատերազմի ընթացքում²⁶⁹, այնպես էլ հետո միջազգային բոլոր կառույցներն անգամ հումանիտար օգնության հասցեագրման համար շեշտադրում են քաղաքացիական բնակչության իրավական կարգավիճակը:

Փախստականների իրավական կարգավիճակի հստակեցման առաջին փորձերը կատարվել են Ազգերի լիգայի լիազորությունների շրջանակներում²⁷⁰, բայց դրանք նախնական քայլեր էին և հեռու էին խնդրի համապարփակ լուծումից:

Երկրորդ աշխարհամարտի հետևանքները պարտադրեցին վերանայել փախստականի իրավական կարգավիճակի դրույթները: Միացյալ Ազգերի Կազմակերպության 1951 թվականի հունիսի 2-ի «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայում (այսուհետ՝ ՄԱԿ-ի 1951թ. Կոնվենցիա) բավական մանրակրկիտ ներկայացվում են փախստականի իրավական կարգավիճակի սահմանման, տրամադրման հիմնադրույթները²⁷¹:

Փախստականների իրավական կարգավիճակի հասկացությունը

Փախստականների իրավական կարգավիճակի հիմնահարցերը, այն էլ միջազգային իրավունքի սուբյեկտ չհանդիսացող երկրի՝ Արցախի Յանրապետության (այսուհետև՝ ԱՅ) պարագայում քննության առնելու համար անհրաժեշտ է նախ պարզաբանել՝ ինչ է նշանակում կարգավիճակ, անձի կարգավիճակ, անձի իրավական

²⁶⁹ The Women of Artsakh: Our Children Are Being Deprived of the Right to Life, URL: www.evnreport.com/spotlight-karabakh/the-women-of-artsakh-our-children-are-being-deprived-of-the-right-to-life, 28.02.2021.

²⁷⁰ Сарашевский Ю. Роль Лиги Наций в формировании права беженцев, «Белорусский журнал международного права и международных отношений», Минск, 2001, N 1, С. 35.

²⁷¹ Анисимович А. Некоторые аспекты решения проблемы беженцев в XX в., «Журнал международного права и международных отношений», Минск, 2006, N 2, С. 18-19.

կարգավիճակ²⁷²: Անձի կարգավիճակն այս կամ այն հասարակության մեջ բնորոշվում է օրենքներով և այդ օրենքներով կարգավորվող հասարակական հարաբերություններով: Իրավագիտական տեսության մեջ «անձի իրավական կարգավիճակ» եզրույթը կապում են հռոմեական իրավունքից սերած «status» տերմինի հետ, որը թարգմանվում է կարգավիճակ, վիճակ, դիրք և, բնականաբար, վերաբերում է անձին, քաղաքացուն, մարդուն: Տեսաբանների մի մասը²⁷³ պնդում է, որ «իրավական կարգավիճակ» և «իրավական վիճակ» հասկացությունները բացարձակապես տարբերվում են իրարից, բայց համաձայնվում են այն մտքի հետ, որ «իրավական վիճակի միջուկը իրավական կարգավիճակն է»²⁷⁴: Ինչ վերաբերում է պետական և միջազգային իրավական ակտերին, դատարանի որոշումներին, ապա սովորաբար այդ հասկացությունները որպես համարժեքներ են օգտագործվում: Տեսության մեջ «անձի իրավական կարգավիճակը նրա դե ֆակտո-փաստացի վիճակն է տվյալ պետության ու հասարակության մեջ, որը կախված քաղաքական ռեժիմից, պետական կառավարման ձևից այս կամ այն չափով արտացոլվում է տվյալ երկրի իրավունքում»²⁷⁵: Անձի իրավական վիճակը, կախված պետության հետ փոխհարաբերություններից, բաժանվում է 3 տեսակի՝ ըստ քաղաքացիության, օտարերկրյա քաղաքացի համարվելու, քաղաքացիություն չունենալու, քանի որ այդ հանգամանքներն ազդում են անձի իրավական վիճակի վրա: Իրավագիտական տեսությունն առանձնացնում է անձի իրավական կարգավիճակի երկու՝ դասակարգային (մատերիալիստական) և քաղաքակրթական տեսակարգերը: Դասակարգային հայեցակարգն անձի իրավական վիճակն ուսումնասիրում է հասարակական դասակարգերի, տնտեսական ֆորմացիաների տեսակետից: Իսկ քաղաքակրթական հայեցակարգն անձի իրավական կարգավիճակը դիտարկում է հասարակության, պետության սոցիալ-տնտեսական, հոգևոր զարգացման տեսանկյունից: Փաստորեն, անձի իրավական կարգավիճակի էվոլյուցիան ուղիղ համեմատական է տվյալ պետության, հասարակության պատմական, դասակարգային զարգացմանը, մարդկանց սոցիալական գործունեությանը և հանդիսանում է քաղաքակրթության առաջընթացի արդյունք:

Մարդու կարգավիճակը հասարակական կյանքի որոշիչ, գլխավոր բնագավառներում ամրագրում է սահմանադրական իրավունքը, այնինչ իրավունքի մյուս ճյուղերն ամրագրում են անձի իրավական վիճակը հասարակական կյանքի որոշակի՝ աշխատանքային, ֆինանսական, գոյքային բնագավառներում²⁷⁶: Փաստորեն անձի իրավական կարգավիճակի հիմունքներն ու հիմքերն ամրագրված են սահմանադրական իրավունքի նորմերում՝ այդպիսով անձի կարգավիճակին տալով սահմանադրաիրավական բնույթ: Եվ այսպես՝ անձի իրավական վիճակի հիմունքներն են նախ՝ քաղաքացիությունը, ապա՝ անօտարելի հիմնական իրավունքները, ազատություններն ու պարտականությունները: Դրան զուգահեռ ենք փախստականի անձնական կարգավիճակ հասկացությունը. ըստ ՄԱԿ-ի 1951 թվականի Կոնվենցիայի՝ այն կարգավորվում է մշտական կամ ժամանակավոր բնակության երկրի օրենքով: Վերոգրյալի համադրությամբ ստացվում է, որ փախստականների

²⁷² **Каблов А.** Беженцы и вынужденные переселенцы в современной России: международно-правовые, политические, социальные аспекты проблемы и технологии её разрешения: дисс. .канд. полит, наук, Н.Новгород, 2004, С. 90.

²⁷³ **Гамцемлидзе Т.** Правовой статус личности в Скандинавских странах: дис. канд. юрид. наук, М., 1985, С. 42; **Воеводин Л.** Юридический статус личности в России: учеб. пособие, М., 1997, С. 16; **Турлаев А.** Права человека как основа правового статуса личности (теоретико-правовое исследование): автореф. дис. канд. юрид. наук, Караганда, 2002, С. 15.

²⁷⁴ **Безуглов А.** Конституционное право России, т. I, М., 2002, С. 233-234.

²⁷⁵ **Магузов Н., Малько А.** Теория государства и права: учебник, М., 2009, С. 232.

²⁷⁶ **Енгигбарян Р., Краснов Ю.** Теория государства и права: учеб пособие, 2-е изд. М., 2010, С.

սահմանադրաիրավական կարգավիճակը նրանց իրավունքների, դրանց իրացման երաշխիքների, պարտականությունների ու պատասխանատվության ընդգրկուն կառուցվածքն է: Իսկ ավելի պարզ՝ փախստականների իրավական կարգավիճակը փախստականների իրավունքները, ազատությունները և օրինական շահերն են ընդունող երկրի սահմաններում և դրանցից դուրս: Այս սահմանումից էլ հասկանալի են դառնում փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի կառուցվածքային բաղադրիչները՝ փախստականի իրավունքներ, այդ իրավունքների իրականացման երաշխիքներ, պարտականություններ, պատասխանատվություն: Այսպիսով՝ «փախստական» հասկացության մեջ նշված պատճառներից որևէ մեկի հետևանքով իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը թափ և ընդունող պետությունում փախստական ճանաչված, ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի իրավունքների և պարտականությունների համակցությունն էլ հենց փախստականի իրավական կարգավիճակն է²⁷⁷:

Փախստականների իրավական կարգավիճակի հիմնադրույթներն Արցախի Հանրապետությունում

ԱՀ-ում փախստականի կարգավիճակի տրամադրման գործընթացը, նրանց իրավունքների պաշտպանության իրավական կարգավորումն իրականացվում է ԱՀ Սահմանադրությամբ, ԱՀ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով: 2018 թվականի փետրվարի 20-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունված ԱՀ երկրորդ Սահմանադրության մեջ առանձնացված չեն փախստականների իրավունքներն ու պարտականությունները, բայց փախստականների վրա տարածվում են ԱՀ Սահմանադրությամբ երաշխավորվող մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները (Գլուխ 2), նաև՝ քաղաքացիություն չունեցող անձանց (Հոդված 48, կետ 4) և օտարերկրյա քաղաքացիների իրավունքները (Հոդված 60, կետ 6)²⁷⁸, եթե ԱՀ օրենքներով այլ բան նախատեսված չէ:

ԱՀ օրենքների շարքում հատկապես անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ ակտերը՝ «Փախստականների մասին» 2003 թվականի ԱՀ օրենքը, «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնազաղթված և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» 2004 թվականի ԱՀ օրենքը, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» 2001 թվականի ԱՀ օրենքը, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիության հիմնական սկզբունքների մասին» 1995 թվականի ԱՀ օրենքը: Ոլորտի կարգավորմանն են ուղղված նաև շուրջ մեկ տասնյակ նորմատիվ իրավական ակտեր, որոնցով կարգավորվում են ֆինանսական և այլ արտոնությունների տրամադրման, ապահովագրական (աշխատանքային) ստաժը սահմանելու, վերականգնելու գործընթացները: Եթե «Փախստականի և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ապաստան հայցողները և փախստականներն ունեն Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ հավասար իրավունքներ և պարտականություններ, իսկ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-

²⁷⁷ **Նիկողոսյան Գ.** Փախստականների սահմանադրաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն ի.գ.թ. աստիճան հայցելու համար, ԵՊՀ, Երևան, 2014, էջ 9:

²⁷⁸ ԱՀ Սահմանադրություն, ԱՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք՝ <http://www.nankr.am/hy/1838>:

ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիներն ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ (եթե ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ), ապա «Փախստականների մասին» ԱՀ օրենքի 18-րդ հոդվածով հստակեցված թվարկվում են ԱՀ-ում ապաստանած փախստականների իրավունքներն ու պարտականությունները՝ դրանք համարելով նաև օտարերկրյա քաղաքացիների համար ԱՀ-ում օրենսդրությամբ սահմանված իրավունքներով: Նշենք, որ ի տարբերություն օտարերկրացիների՝ օրենքը փախստականին օժտում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունքով: Ներկայացվել են նաև փախստականի կարգավիճակի տրամադրման, հատուկ և ժամանակավոր կացարան, ժամանակավոր ապաստան հատկացնելու, ԼՀ տարածք մուտք գործելու, այստեղ բնակություն հաստատած փախստականների իրավունքների և պարտավորությունների հիմնադրույթները: Փախստականները, անշարժ գույքի վարձակալության, շարժական գույքի ձեռքբերման ու տեղափոխման, ինչպես նաև գույքային այլ իրավահարաբերությունների հետ կապված, օժտված են ԱՀ քաղաքացիներին հավասար իրավունքներով: ԱՀ-ում հարգվում են նաև փախստականի՝ նախկինում ձեռք բերած՝ անձնական կարգավիճակից բխող իրավունքները, ինչպես, օրինակ, ամուսնության իրավունքը:

ԱՀ-ում գտնվող փախստականների գերակշիռ մասը 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետության կողմից երեք փուլերով իրականացված ցեղասպանական գործողությունների²⁷⁹ հետևանքով իրենց մշտական բնակության վայրերից բռնազաղթած անձինք են՝ ազգությամբ հայեր: 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից ԱՀ-ում ապաստանածների իրավական կարգավիճակի նախնական բնորոշումը տրվեց «Փախստականների մասին» ԱՀ օրենքի անցումային դրույթներում՝ հետևյալ ձևակերպմամբ. «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն բռնազաղթած և փախստականների հարցերով զբաղվող պետական մարմնում որպես փախստական հաշվառված անձինք հանդիսանում են փախստական՝ սույն օրենքի իմաստով», իսկ 2004 թվականին հաշվի առնելով նրանց՝ ազգությամբ հայ լինելը՝ փորձ կատարվեց ուղղորդված անդրադառնալու իրավական երաշխիքներին «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնազաղթված և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» ԱՀ օրենքի շրջանակներում, սակայն արդյունքում շեշտադրումներ արվեցին հիմնականում սոցիալ-տնտեսական և ոչ իրավական խնդիրների վրա:

Անհրաժեշտ է նշել, որ դեռ 1991-1994 թվականներին պարտադրված պատերազմի պայմաններում ԱՀ իշխանությունների առջև ծառայել էին առաջնահերթ լուծելու հայրենակից-փախստականների կեցության, պարենային, անվտանգության բնույթի, սոցիալ-կենցաղային խնդիրները, իսկ փախստականների իրավական կարգավիճակի հիմնահարցերի իրավական լուծումները հետաձգվել են. նմանօրինակ վիճակ է ստեղծվել նաև 2020 թվականի հետպատերազմյան իրականության մեջ: 1990-ականներին Նորաստեղծ Արցախի Հանրապետության պարագայում բացակայում էր իրավական փորձառությունը՝ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, որ Առաջին Հանրապետության կողմից 1915 թվականի գաղթականության տեղավորման, ՀԽՍՀ շրջանում հայրենադարձության բովով էր անցել: 2004 թվականի Նոյեմբերի 26-ին ԱՀ ԱԺ կողմից ընդունվել են փախստականի կարգավիճակ տրամադրելու «բացառիկ հիմքերը»

²⁷⁹ Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 357:

Նախատեսող փոփոխություններ և լրացումներ²⁸⁰ ամրագրելով փախստականի իրավական կարգավիճակի հատուկ սկզբունքները ևս:

Անդրադառնալով փախստականների իրավական կարգավիճակի այն սկզբունքներին, որոնք առանձնահատուկ են միայն փախստականների համար և Արցախում գործող օրենսդրության մեջ իմպլեմենտացվել են փախստականների իրավունքների պաշտպանության միջազգային իրավական ակտերից.

➤ վերադարձի արգելում, չվտարում՝ nonrefoulement (ֆրանս.), ծագել է 19-րդ դարի առաջին քառորդում, ձևակերպվել է 1933թ.-ին, բայց համապարփակ, լիարժեքորեն ամրագրվել է 1951թ.-ին Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասում²⁸¹, որպես բոլոր փախստականների համար իմպերատիվ սկզբունք, jus cogens նորմ՝ ներդրվելով ունիվերսալ ու տարածաշրջանային մի շարք կոնվենցիաներում: Այս սկզբունքը ներկայացված է «Փախստականների մասին» ԱՅ օրենքում (հոդված 19, պարբ. 2):

➤ ապաստանի երկրում ապօրինի մալու կամ ապօրինի մուտքի անպատժելիություն. փախստականի կարգավիճակ և ապաստան հայցողները կարող են ձերբակալվել միայն օրենսդրությամբ նախատեսված հիմքերով՝ կարճ ժամանակով և ձերբակալման մասին որոշումը դատական կամ վարչական կարգով բողոքարկելու իրավունքով: Ամրագրված է «Փախստականների մասին» ԱՅ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ:

➤ ընտանիքի միասնություն կամ վերամիավորում. ամրագրված է միջազգային փաստաթղթերի մեծամասնության մեջ, հռչակում է ընտանիքի վերամիավորման կարևորությունը՝ որպես փախստականների պաշտպանության, նրանց ընտանիքների տնտեսական վիճակի բարելավման միջոց, չնայած մեր օրերում բազմաթիվ պետություններ տարաբնույթ ձևերով խոչընդոտում են այդ գործընթացին՝ հիմնավորելով ազգային անվտանգության նկատառումներով, իսկ Արցախում փախստականի՝ իր ընտանիքի հետ միավորման իրավունքը ներկայացված է «Փախստականների մասին» ԱՅ օրենքում փախստականի իրավունքներն ու պարտականությունները սահմանելիս (հոդված 18, պարբ. 7). «Փախստականի ընտանիքի անդամը կարող է ստանալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն մուտքի արտոնագիր և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կացության կարգավիճակ, եթե չկան դրանք արգելող օրենքով սահմանված հիմքեր»²⁸²:

➤ Միջազգային համերաշխություն. այս սկզբունքի կիրառման «արտոնությամբ» օժտվել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարը: Փախստականների իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս վերջինս ՄԱԿ-ի կողմից համապատասխան թույլտվության պարագայում իրավասու է դիմել ՄԱԿ-ի անդամ (և ոչ միայն) երկրների կառավարություններին՝ ֆինանսական, նյութական և այլ միջոցներ տրամադրելու խնդրով՝ ստացած մասնավոր և հասարակական միջոցները բաշխելով կարիքավոր փախստականներին²⁸³: Այս սկզբունքը ևս դուրս է եկել փախստականների իրավական կարգավիճակի հատուկ սկզբունքների ցանկից և այսօր ներառվում է բազմաթիվ պետությունների, այդ թվում՝ ԱՊՀ անդամ երկրների ազգային օրենսդրության մեջ:

²⁸⁰ Տես՝ «Փախստականների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենք, <http://arlexis.am/>:

²⁸¹ Женевская Конвенция о статусе беженцев ООН 1951 г., [Электронный ресурс] URL: fms.gov.ru/upload/iblock/konvencia_o_bej.pdf, 28.02.2021.

²⁸² «Փախստականների մասին» ԱՅ օրենքը ընդունված՝ 26.11.2003թ., 24.11.2004թ. փոփոխություններով, <http://arlexis.am/>:

²⁸³ Гай С. Гудвин-Гилл. Статус беженцев в международном праве, Будапешт, 1997, С. 442-443.

Վերոհիշյալ սկզբունքներից միայն վերջինն է, որ չի կիրառվում Արցախում միջազգային իրավունքի սուբյեկտ չհանդիսանալու, ՄԱԿ-ի, ԱՊՀ անդամ չլինելու հանգամանքով պայմանավորված: ԱՅ-ում ապաստանած փախստականներին անգամ չեն էլ հասցեագրվում ՄԱԿ-ի կողմից ուղղորդվող միջազգային համերաշխության հումանիտար միջոցներն ու օգնությունը, նրանք օգտվում են միայն Արցախի բյուջեի կյուրական, ֆինանսական միջոցներից, ներպետական մասնավոր ու հասարակական ծրագրերից:

Եզրակացություն

Արցախյան նոր պատերազմը օրակարգային առաջնահերթ խնդիրների առաջին եռյակում դրեց տեղահանված բնակչության հետ կապված հիմնահարցերի փաթեթը, ինչը ենթադրում է բնակչության այդ հատվածի «կարգավիճակի» քննարկում և «իրավական կարգավիճակի» ամրագրում, երբ հաճախ հասարակության, առավել ևս՝ լրատվամիջոցների կողմից կիրառվում են «փախստականի իրավական կարգավիճակը» բնորոշող եզրույթներ: Այս առումով անհրաժեշտություն է խորքային, մանրաբնիկ պարզաբանել «փախստականների իրավական կարգավիճակը» և դրանից բխող իրավա-սոցիալական հետևանքները:

Փախստականները խոցելի և իրավունքների պաշտպանության տեսանկյունից առավել ուշադրություն պահանջող սոցիալական խումբ են, քանի որ մի կողմից նրանք թողել են իրենց ունեցվածքը և անբարեհույս վիճակում են հայտնվել ընդունող երկրում, մյուս կողմից էլ հիմնականում պատշաճ կերպով տեղեկացված չեն իրենց կարգավիճակից բխող իրավունքների մասին: Նախատեսված է փախստականի իրավական կարգավիճակի ճանաչման անհատական ընթացակարգ, սակայն «փախստականի իրավական կարգավիճակի» միջազգային սկզբունքներին զուգահեռ՝ յուրաքանչյուր պետություն փախստականի իրավական կարգավիճակ սահմանելիս որդեգրում է իր քաղաքականությունը: Արցախի Հանրապետությունը միակողմանի ճանաչել է Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. Կոնվենցիան և 1967թ. Արձանագրությունը՝ ղնելով դրանք փախստականների վերաբերյալ ներպետական օրենսդրության հիմքում: ԱՅ-ում փախստականների իրավական կարգավիճակի ընդհանուր և հատուկ սկզբունքներն ամրագրված են ԱՅ Սահմանադրության և ոլորտային օրենսդրության մեջ՝ հիմնականում արտացոլելով փախստականների իրավական կարգավիճակի միջազգային իրավունքի ընդհանուր և հատուկ սկզբունքները, իսկ առկա թերացումներն ու բացերը հնարավոր է շտկել իրավական ակտերի հետևողական, շարունակական փոփոխություններ իրագործելով:

Այսպիսով՝ փախստականների իրավական կարգավիճակի ապահովման հարցերում պետք է գործի կուռ մտածված մեխանիզմ՝ պահպանելով օրինական իրավունքներն ու ազատությունները, անհապաղ կիրառելով իրական միջոցներ փախստականների դրությունը բարելավելու և նրանց վիճակը երկրի քաղաքացիների կենսահարավական մակարդակին հասցնելու համար:

THE LEGAL STATUS OF REFUGEES IN THE REPUBLIC OF ARTSAKH

ELINA MKHITARYAN

*Ministry Of Labour, Social Affairs and Housing,
Department of Migration, Refugees and Repatriation, Head,
Artsakh State University, Lecturer,
Stepanakert, Republic of Artsakh*

The objective of the article is to raise the problem of the legal status of refugees in the inner legal field, in conjunction with international humanitarian law, which is to protect rights of sheltered refugees in the country. We do clarify the specifics of the legal status of refugees to elucidate main issues related to the legal status of refugees in the Artsakh Republic, which is not a subject of international law.

In comprehensive study of the problems posed within the article, general scientific - dialectical, logical, historical, as well as individual (personal) or special methods were used, such as legal-comparative, analytical, statistical, systemic methods.

The result of the research is the conclusion that legal status of refugees are their rights and freedoms, the legitimate interests, which are reflected in the Constitution, laws, normative legal acts of the Artsakh Republic. Substantiating need of comprehensive, well-thought-out mechanism in ensuring the legal status of refugees, the author points out both the benefits and drawbacks of the legislation in the Artsakh Republic, appreciates incessantly stipulating the principles of legal status of refugees and guarantees in legal acts.

Keywords: *refugees, asylum, legal status, protection of refugees, forced displacement, special international legal principles of refugee protection.*

ПРАВОВОЙ СТАТУС БЕЖЕНЦЕВ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

ЭЛИНА МХИТАРЯН

*начальник отдела миграции, беженцев и
репатриации Министерства труда, социальных и
жилищных вопросов Республики Арцах,
преподаватель Арцахского государственного университета,
г. Степанакерт, Республика Арцах (НКР)*

Целью данной статьи является рассмотрение вопроса о правовом статусе беженцев во внутреннем правовом поле в сочетании с международным гуманитарным правом, которое направлено на защиту прав беженцев, получивших убежище в государстве. Наша задача – раскрыть содержание понятий «правовой статус» и «конституционно-правовой статус» беженцев, уточнить особенности и прояснить основные вопросы правового статуса беженцев в Республике Арцах, который не является субъектом международного права.

При всестороннем изучении поставленных в рамках темы проблем использовались общенаучные методы: диалектические, логические, исторические, а также индивидуальные (частные) или специальные методы, такие, как сравнительно-правовые, аналитические, статистические и системные.

В результате исследования мы пришли к выводу о том, что правовой статус беженцев – это права и свободы, законные интересы беженцев, которые отражены в Конституции Республики Арцах, в законах и внормативно-правовых актах. Обосновывая необходимость наличия всеобъемлющего, продуманного механизма обеспечения правового статуса беженцев, автор указывает как на положительные аспекты, так и на пробелы действующего законодательства Республики Арцах, выделяя фиксации принципов и гарантий правового статуса беженцев в правовых актах.

Ключевые слова: *беженцы, убежище, вынужденное переселение, правовой статус, защита беженцев, специальные международно-правовые принципы защиты беженцев.*

**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES,
ВОСТОКОВЕДЕНИЕ**



**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵԶԱՆԻՆ 2020 Թ.
ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ. ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԱՍԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆԶԵԿ ԶԻՅԱԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ* ²⁸⁴**

ՀՏԴ 316.354.2 (479.22)

DOI: [10.52063/25792652-2021.1-106](https://doi.org/10.52063/25792652-2021.1-106)

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

*ՀՀ ԳԱՎ ԱԻ առաջատար գիտաշխատող,
պատմական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դոցենտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
a_pashayan@hotmail.com*

ՆԱԶՆԵԼԻ ՆԱԿԱՍԱՐԴՅԱՆ

*ՀՀ ԳԱՎ ԱԻ ավագ գիտաշխատող,
Հայ-Ռուսական համալսարանի դասախոս,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
naznav24@gmail.com*

Հոդվածի նպատակն է վեր հանել իսլամական աշխարհի աջակցությունն Ադրբեջանին Արցախյան 2020 թ. պատերազմի²⁸⁵ ընթացքում՝ քննության ենթարկելով Բաքվին մուսուլմանական աշխարհի աջակցության ձևաչափերը, աջակցող կողմերին, աջակցության կրոնական ու աշխարհաքաղաքական շարժառիթներն ու մեխանիզմները:

Հոդվածի խնդիրներն են՝ քննության ենթարկել Ադրբեջանի արտաքին քաղաքականության իսլամական ուղղության և այդ համատեքստում՝ արցախյան խնդրին կրոնական գունավորում տալու թուրք-ադրբեջանական քաղաքականությանն առնչվող հարցերը, առանձնացնել պատերազմի ընթացքում Թուրքիայի դերը իսլամական ու թուրքական համերաշխության գաղափարների

* Հոդվածը ներկայացվել է 03.03.2021թ., գրախոսվել՝ 14.03.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

²⁸⁴ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԱՎ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող Համահայկական հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում

²⁸⁵ 44 օր տևած պատերազմը հանգեցրեց 2020 թ.-ի նոյեմբերի 10-ի Ռուսաստան-Ադրբեջան-Հայաստան եռակողմ հայտարարության ստորագրմանը: Հայկական կողմը կորցրեց չճանաչված Արցախի Հանրապետության 75 տոկոսը, այդ թվում՝ Արցախի Հանրապետի շրջանը, հայկական հնամենի քաղաք Շուշին: Պատերազմի հետևանքով Ադրբեջանին են անցել նաև խորհրդային շրջանում ԼՂԻՄ կազմի մեջ մտած արցախյան այլ բնակավայրեր ևս Մարտունու, Մարտակերտի ու Ասկերանի շրջաններից, Շուշիի շրջանից՝ նաև Զարին տակը: Տե՛ս նաև Azerbaijan and Armenia: Conflict in Nagorno-Karabakh, ACAP short note update, 20 November, 2020, https://reliefweb.int/sites/reliefweb.int/files/resources/20201120_acaps_short_note_update_nagorno-karabakh_0.pdf, (03.03.2021)

հիման վրա միջազգային հարթակներում հակահայկական տրամադրությունների ձևավորման նպատակով, որի ռազմաքաղաքական աջակցության շնորհիվ Ադրբեջանը հաղթեց պատերազմում:

Հողվածը գրվել է միջազգային մամուլի՝ նշված թեմային վերաբերող նյութերի մշտադիտարկման և Արցախյան հակամարտության տարբեր կողմերին վերաբերող մասնագիտական գրականության լայն ուսումնասիրության հենքի վրա:

Ուսումնասիրության ընթացքում հեղինակները հանգել են այն եզրակացության, որ 2020 թ.-ի Արցախյան պատերազմի ընթացքում թուրք-ադրբեջանական տանդեմն օգտագործեց կրոնական գործիքակազմը՝ ձեռք բերելու իսլամական աշխարհի բավակողմ աջակցությունը: Օգտագործվեցին իսլամական, թյուրք-իսլամական համերաշխության, ջիհադականության գաղափարները, վարձկան ջիհադականների, թյուրքական աշխարհի սուննիական և շիայական հատվածների, ինչպես նաև մուսուլման աստվածաբանների ու հեղինակությունների ներուժը:

Թուրք-ադրբեջանական տանդեմը հակահայկական տեղեկատվական քարոզչություն իրականացրեց միջազգային իսլամական լրատվամիջոցներում ու սոցիալական ցանցերում:

Հիմնաբառեր՝ իսլամական համերաշխություն, ումմա, թյուրքական համերաշխություն, Արցախ, Ադրբեջան, Թուրքիա, ջիհադ, վարձկան, պատերազմ:

Ներածություն

Ընդունված է ասել, որ Արցախյան հակամարտությունը էթնոքաղաքական ու տարածքային վեճի բնույթ ունի: Սակայն կրոնական գործոնը միշտ էլ որոշակի դեր է խաղացել թե՛ քրիստոնյա հայերի և թե՛ մուսուլման ադրբեջանցիների փոխադարձ ընկալումների ձևավորման հարցում: Հակամարտության սկզբնավորումից ի վեր էթնիկությունը, նաև կրոնը ընդհանուր դիսկուրսի մաս են կազմել²⁸⁶: 2006 թ.-ին Ադրբեջանի հոգևոր առաջնորդ Ալլահշյուքյուր Փաշազադեն արձանագրեց, որ «պատրաստ է ջիհադ հայտարարել Ադրբեջանի գրավյալ տարածքներն ազատագրելու համար...»²⁸⁷: Իր հերթին ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը 2008 թ.-ին արտերկրյա հանդիպումներից մեկի ժամանակ հայտարարեց, որ կրոնը ամենամեծ դերն ունի Արցախյան հակամարտության մեջ²⁸⁸: Մասնավորապես Ադրբեջանի համար կրոնական գործոնը ժամանակի ընթացքում դարձավ գործուն միջոց միջազգային իսլամական հանրության՝ ումմայի, բայց նախևառաջ Իսլամական համագործակցություն կազմակերպության (ԻՀԿ) շրջանակներում Արցախի հարցում միջազգային աջակցություն ձեռք բերելու գործում: Բացի այդ, ինչպես առաջին Արցախյան պատերազմի ժամանակ, այնպես էլ հիմա հայկական կողմի դեմ օգտագործվեց վարձկան ջիհադականների ներուժը:

2020 թ. Արցախյան պատերազմի շրջանում (սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը) Ադրբեջանի իշխանությունները Թուրքիայի անվերապահ աջակցության շնորհիվ նախ օգտագործեցին թյուրքական աշխարհի թե՛ սուննիական և թե՛ շիայական հատվածների ներումն ամենատարբեր ոլորտներում՝ Հայաստանի դեմ օրակարգ ձևավորելու և պատերազմում բազմակողմ աջակցություն ստանալու հարցում: Չուզահեռաբար նաև Թուրքիայի իրափրմամբ Մերձավոր Արևելքում և իսլամական աշխարհում ընդհանրապես

²⁸⁶ **Tonoyan Artyom.** Armenia-Azerbaijan: Rethinking Role of Religion in the Nagorno-Karabakh Conflict, Religion, Conflict, and Stability in the Former Soviet Union. Editors: Katya Migacheva, Bryan Frederick, Rand Corporation, 2018, p. 17.

²⁸⁷ Նույն տեղում, էջ 31:

²⁸⁸ Նույն տեղում, էջ 16:

ձևավորվեցին Հայաստանի ու հայության նկատմամբ կրոնական գունավորմամբ խիստ բացասական, շատ դեպքերում նույնիսկ թշնամական մոտեցումներ, ինչը անվտանգային մարտահրավեր է աշխարհասփյուռ հայության, այդ թվում՝ Հայաստանի ու Արցախի նկատմամբ: Ադրբեջանին աջակցելու հիմնական շարժառիթը ոչ միայն թուրքական, այլև իսլամական համերաշխության գաղափարն է, որը թուրք-ադրբեջանական տանդեմն օգտագործեց բազմակերտոր կերպով:

Արցախյան հարցում «Իսլամական համագործակցություն» կազմակերպության աջակցությունն Ադրբեջանին

Արցախյան հարցում Ադրբեջանին կրոնական գործոնով պայմանավորված՝ առաջին ամենալուրջ աջակցությունը ցույց է տվել իսլամական աշխարհի ամենամեծ կրոնաքաղաքական կառույցը՝ «Իսլամական համագործակցություն» կազմակերպությունը՝ սկսած դեռևս 1992 թ.-ից²⁸⁹: ԻՀԿ-ն իսլամական աշխարհի շահերն ու հետաքրքրությունները ներկայացնող միջազգային կազմակերպություն է, որի հիմքում ընկած են իսլամական համերաշխության ու համագործակցության, ինչպես նաև իսլամական արժեքների պահպանման ու պաշտպանության գաղափարները²⁹⁰:

Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ իսլամական ուղղությունն ամրապնդվեց Հեյդար Ալիևի իշխանության օրոք (1993-2003), որն իր շարունակությունը գտավ Իլիամ Ալիևի նախագահության շրջանում²⁹¹: Հատկանշական է, որ աշխարհիկ հիմքեր ունեցող Ադրբեջանն իրեն անվերապահորեն համարեց իսլամական ումմայի բաղկացուցիչը՝ ձգտելով իսլամական աշխարհը ներկայացնող պետությունների հետ սերտ ու համապարփակ համագործակցության հաստատմանը²⁹²: Ադրբեջանի իշխանությունները ԻՀԿ հարթակն առավելագույնս օգտագործեցին Հայաստանի դեմ օրակարգ ձևավորելու համար²⁹³: Այլատյացության վերածած հակահայկական քարոզչությունը Բաքուն իրականացրեց թե՛ ներքին, թե՛ արտաքին լսարանի համար: Արտաքին լսարանի հիմնական թիրախներից մեկը փաստորեն դարձավ իսլամական աշխարհը²⁹⁴:

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից սանձազերծված 2020 թ.-ի պատերազմի հենց հաջորդ օրը՝ սեպտեմբերի 28-ին, ԻՀԿ գլխավոր քարտուղարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ խստորեն դատապարտելով «Հայաստանի զինված ուժերի կրկնվող սադրանքներն ու ագրեսիան» Ադրբեջանի դեմ: ԻՀԿ-ն իր համերաշխությունը հայտնեց Ադրբեջանին, Հայաստանից պահանջեց ամբողջովին և առանց նախապայմանների

²⁸⁹ Մանրամասն տե՛ս **Փաշայան Ա.**, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը դարաբաղյան հակամարտության նկատմամբ, Ե., 2003:

²⁹⁰ Charter, Organisation of Islamic Cooperation, <https://ww1.oic-oci.org/english/charter/OIC%20Charter-new-en.pdf>.

²⁹¹ **Փաշայան Ա.**, Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Ե., 2014, էջ 135:

²⁹² Addresses by the Minister of Foreign Affairs of the Republic of Azerbaijan Elmar Mammadyarov, Journal of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, No. 15, 2006, p. 7.

²⁹³ Ստո երեք տասնամյակ է, ինչ ԻՀԿ-ն դատապարտում է հայկական կողմի ռազմական գործողություններն Ադրբեջանի նկատմամբ՝ անտեսելով Արցախի հայ բնակչության ազգային իրավունքները, շրջանցելով բռնության ու էթնիկ զտումների այն բազմաթիվ դեպքերը, որոնք հայ ազգաբնակչության դեմ իրականացրել է Ադրբեջանը: ԻՀԿ-ն Հայաստանին դատապարտել է ամենակոշտ ձևով՝ որպես «ցեղասպան պետություն»՝ բացառապես իսլամական համերաշխության գաղափարներից ելնելով:

²⁹⁴ Մանրամասն տե՛ս **Փաշայան Ա.**, Իսլամական համագործակցություն կազմակերպության դիրքորոշումը արցախյան հակամարտության հարցում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդներ, հ. XXXIII, Ե., 2020, էջ 181-207:

դուրս բերել զորքերը գրավյալ տարածքներից, երկու պետություններին կոչ արեց քաղաքական լուծման հասնել՝ հարգելով Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը²⁹⁵:

2020 թ.-ի դեկտեմբերի վերջին ԻՌԿ արտգործնախարարների 47-րդ համաժողովին ընդունվեց «Իսլամական սրբավայրերի պաշտպանության» մասին բանաձևը, որում դատապարտվեց «հայ ագրեսորների կողմից բարբարոսական գործողությունների իրականացումը, որոնք նպատակաուղղված են եղել իսլամական պատմական և մշակութային ժառանգության ամբողջական ոչնչացմանը»²⁹⁶: ԻՌԿ-ն «իր խոր մտահոգությունն է արտահայտել Լեռնային Ղարաբաղում և Նրա շուրջ գտնվող պատմական հուշարձանների ոչնչացման և կողոպտվելու կապակցությամբ, որոնք իսլամական ժառանգության անբաժան մասն են, մասնավորապես վերջերս ազատագրված Կուբաթլուի շրջանի Մամար գյուղի ավերված մզկիթը»²⁹⁷: Տեքստի շարունակության մեջ մասնավորապես նշված է. «Գրավյալ տարածքներում դարավոր հնություն ունեցող ժառանգությունների ոչնչացումը միջազգային իրավունքի և կոնվենցիաների ակնհայտ խախտում է, մասնավորապես զինված հակամարտությունների ընթացքում մշակութային արժեքների պաշտպանության 1957 թ. Հաագայի և դրան հաջորդած՝ 1954 թ. և 1999 թ. կոնվենցիաների»²⁹⁸:

Ակնհայտ է, որ ԻՌԿ-ն տասնամյակներ շարունակ Հայաստանի դեմ օրակարգ ձևավորել է բացառապես ադրբեջանական աղբյուրների հիման վրա: Եթե գրավյալ տարածքներում մզկիթները ոչնչացվել են, ապա ինչպե՞ս բացատրել Շուշիում հայկական հիմնադրամների կողմից հիմնովին վերանորոգված Գոհար տիկնոջ Վերին մզկիթի և մեդրեսեի գոյության փաստը²⁹⁹ և հակառակը՝ պատերազմից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ մնացած տարածքներում բարբարոսաբար վնասվող և անարգվող բազում հայկական քրիստոնեական հուշարձանների, դրանք այբանական ժառանգությանը վերագրելով՝ Ադրբեջանի սպորիչ քաղաքականության փաստերը³⁰⁰: Ինչպե՞ս բացատրել Շուշիի գրավումից անմիջապես հետո բարեկարգ մզկիթում տեղի ունեցած իսլամական աղոթքն ու հնչեցված ազանը: Հակադարձելով Արցախում մզկիթների վիճակի մասին ադրբեջանական կեղծիքներին՝ իրանական բլոգերներից մեկը, հղում անելով Շուշիի մզկիթը, նշում է, որ Արցախում մզկիթներն ավելի լավ վիճակում են, քան Բաքվում³⁰¹:

Վարձկան ջիհադականների մասնակցությունը պատերազմին

Արցախյան վերջին պատերազմի ընթացքում Թուրքիայի նախաձեռնությամբ պատերազմական գործողությունների մեջ են նետվել Թուրքիայի անմիջական վերահսկողության տակ գտնվող վարձկաններ Սիրիայի տարբեր, այդ թվում՝ քրդական

²⁹⁵ OIC condemns repeated provocations and aggression by Armenian military forces against Azerbaijan, https://www.oic-oci.org/topic/?t_id=23879&t_ref=14184&lan=en, (28.09.2020).

²⁹⁶ OIC Expresses Concern over Destruction of Islamic Historical Shrines in Occupied Territories of Azerbaijan, https://www.oic-oci.org/topic/?t_id=24928&t_ref=15226&lan=en, (11.11.2020).

²⁹⁷ Նույն տեղում:

²⁹⁸ Նույն տեղում:

²⁹⁹ Շուշիում վերականգնվել է Գոհար տիկնոջ Վերին մզկիթը, <https://escs.am/am/news/5191>, (03.03.2021)

³⁰⁰ ՀՀ ԳԱԱ հայտարարությունը Ադրբեջանի հսկողության տակ անցած տարածքների մշակութային ժառանգության պահպանության և մշտադիտարկման կազմակերպման մասին, <https://www.sci.am/newsview.php?id=370&langid=1>, (03.02.2021):

³⁰¹ إيران تكشف أكاذيب أردوغان والحكومة الأذربيجانية حول حماية الآثار الإسلامية, <https://www.vetogate.com/>, (27.02.2001).

շրջաններից՝ թուրքոմաններ և սիրիացի արաբներ³⁰²: Տեղեկատվական արտահոսքեր են եղել նաև Պակիստանի³⁰³, Աֆղանստանի³⁰⁴ և Լիբիայի³⁰⁵ վարձկանների մասին: Այս իմաստով սխալված չենք լինի, եթե նշենք, որ հայկական զինված ուժերը պայթարում էին միջազգային ահաբեկչության դեմ: Չնայած Բաքուն և Անկարան հերքեցին ջիհադական գաղափարներով տոգորված վարձկանների մասնակցությունը պատերազմին, սակայն վերոնշյալի մասին կան բազմաթիվ ապացույցներ ու արձանագրումներ: Վարձկանների մասնակցությունը հաստատեց Լոնդոնում գործող Մարդու իրավունքների սիրիական դիտարանը՝ նշելով, որ ադրբեջանական կողմից պատերազմին մասնակցել է մոտ երկու հազար վարձկան Սիրիայից³⁰⁶: Սիրիացի վարձկանների մասնակցությունը պատերազմին հաստատեց նաև Սիրիայի նախագահ Բաշար Ալ-Ասադը՝ նշելով նաև, որ Լեռնային Ղարաբաղում իրավիճակի սրման մեղավորը Թուրքիան է³⁰⁷: Նշված խնդրին անդրադարձան Ֆրանսիայի նախագահ Է. Մաքրոնը՝ նշելով, որ իրենք հստակ տեղեկություններ ունեն, թե ինչպես են ջիհադական խմբավորումների զինայլերը Գազի Այլթապով տեղափոխվում Լեռնային Ղարաբաղ³⁰⁸: Տեղեկությունը հաստատեց նաև ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովը՝ նշելով, որ Ղարաբաղյան հակամարտության զոտում Մերձավոր Արևելքից վարձակների թիվը հասնում է երկու հազարի, և Ռուսաստանը բազմիցս զգուշացրել է արտաքին խաղացողներին՝ կանխելու դրանք: Խնդիրը շոշափվել էր նաև հոկտեմբերի 27-ին կայացած Պուտին-Էրդողան հեռախոսազրույցի ընթացքում³⁰⁹: Հատկանշական է, որ թեման շատ լայն ու արագ տարածում գտավ միջազգային լրատվամիջոցներում³¹⁰, միջազգային տարաբնույթ կառույցների հրապարակումներում, ամրագրվեց Ռուսաստանի և Իրանի ԱԳՆ հայտարարություններում, որոնցում մտահոգություն էր հայտնվում տարածաշրջանում ահաբեկիչների հայտնվելու փաստով³¹¹: Վարձկան ջիհադականների ներգրավումը ռազմական գործողություններին միանգամայն նոր իրավիճակ ստեղծեց հայկական կողմի համար, որը կոչվում էր ոչ միայն Ադրբեջանի, այլև Թուրքիայի և թուրքական խողովակներով ներդրված վարձկանների դեմ: Վերջիններս եկել էին շփման գիծ՝ առանց

³⁰² Վարձկանները հիմնականում Սիրիայում ալ-Կաիդայի ճյուղավորումը համարվող «Հայա Թահիրի ալ-Շամից», որը հայտնի է նաև «Ջաբհաթ ալ-Նուսրա» անունով, նաև՝ «Սուլթան Մուրադից», «Համզայից», «Սուլեյման շահից», «Սիրիայի ազատ բանակից» և այլն:

³⁰³ Pakistan cradles terror in Azerbaijan-Armenia war, <https://www.newdelhitimes.com/pakistan-cradles-terror-in-azerbaijan-armenia-war/>, 26.10.2020.

³⁰⁴ As Kabul backs Azerbaijan in conflict with Armenia, Afghans recall in fighting previous war, <https://www.rferl.org/a/as-kabul-backs-azerbaijan-in-conflict-with-armenia-afghans-recall-fighting-in-previous-war/30880802.html>, 07.10.2020.

³⁰⁵ Лавров назвал число наемников в Ближнего Востока в Карабахе, <https://www.gazeta.ru/army/2020/11/03/13345573.shtml>, 03.11.2020.

³⁰⁶ Nagorno-Karabakh battles: Over 2,000 mercenaries sent to Azerbaijan, nearly 135 killed so far, <https://www.syriaahr.com/en/188669/>, 18.10.2020.

³⁰⁷ Асад назвал Эрдогана инициатором конфликта в Карабахе, <https://ria.ru/20201006/karabakh-1578356443.html>, 06.10.2020.

³⁰⁸ Macron says Syrian mercenaries operating in Karabakh, <https://www.arabnews.com/node/1742811/world>, 01.10.2020.

³⁰⁹ Лавров заявил о почти 2 тысячах наемников в карабахской зоне конфликта, <https://russian.rt.com/ussr/news/799092-karabah-lavrov-nayomniki>, 03.11.2020.

³¹⁰ The Syrian mercenaries used as “cannon fodder” in Nagorno-Karabakh, <https://www.bbc.com/news/stories-55238803>, 10.12.2020.

³¹¹ Комментарий Департамента информации и печати МИД России относительно переброски иностранных наемников в зону нагорно-карабахского конфликта, https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4363834, (30.09.2020), Глава МИД Ирана выразил обеспокоенность присутствием террористов в районе Карабаха, <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/9885921>, 01.11.2020.

խմանալու, թե որտեղ են եկել, բայց իմացել են, որ գալիս են հանուն ջիհադի՝ կռվելու «անհավատների» դեմ³¹²:

Հատկանշական է, որ վարձկանության նշված խնդրին արձագանքեց Ալ-Ազհարի միաբանության անդամ, սուննի աստվածաբան դր. Մուհամմադ Աբդ Ալ-Ատին: Իր հայտարարության մեջ, որը հրապարակվեց եգիպտական մամուլում, նա նշում է, որ Ադրբեջանում վարձկանների վարքագիծն անընդունելի է իսլամի տեսանկյունից: Հղում անելով Արցախում գերի ընկած սիրիացի վարձկանի վկայությանը, որ հայերի դեմ կռվում է որպես «գյավուրի»՝ ամեն գլխի համար ակնկալելով ստանալ խոստացված հարյուր դոլարը³¹³, Ալ-Ատին, մեջբերելով Ղուրանից և հադիսներից համապատասխան հատվածներ, նշում է, որ այդ վարձկանները, գլխատելով, անդամահատելով մարդկանց, իրականում հանցագործություն են անում մարդկության դեմ՝ իսլամի անունից, ինչը ենթադրում է երկրային տանջանքներ ու պատիժներ: Ազհարի միաբանը նշված համատեքստում խստորեն դատապարտեց նաև Թուրքիայի քաղաքականությունը՝ նշելով, որ Էրդոհանը ձգտում է վերականգնել օսմանյան գերիշխանությունը, դառնալ մուսուլմանների սուլթանը, ինչպես իր նախնիները՝ հրի, արյան ու սրի միջոցով³¹⁴:

Մուսուլման աստվածաբանների ու հոգևորականների աջակցությունն Ադրբեջանին

Հարկ է նշել, որ պատերազմի ընթացքում և դրա ավարտից հետո Ադրբեջանին իրենց աջակցությունը հայտնեցին ոչ միայն առանձին իսլամական կրոնա-քաղաքական կառույցներ, որոնց մեջ առանձնանում է Թուրքիայի կողմից հովանավորվող պաղեստինյան «Համաս» շարժումը³¹⁵, այլև զգալի թվով մուսուլման աստվածաբաններ ու հոգևորականներ աշխարհի տարբեր կողմերից: Նրանցից շատերը պատերազմի ավարտից հետո ջերմորեն շնորհավորում էին Ադրբեջանի նախագահին՝ հաղթանակի առթիվ: Ադրբեջանի և նրա դաշնակից ուժերի քարոզչության արդյունքում տասնամյակների ընթացքում ձևավորված ընկալումների համաձայն՝ Լեռնային Ղարաբաղը «մուսուլմանական տարածք» է, որը զավթվել է և պետք է ազատագրվի: Իսլամական աշխարհընկալման տեսանկյունից՝ Լեռնային Ղարաբաղը «դար ալ-հարբ» («պատերազմի աշխարհ») է, որը պետք է ազատագրել՝ դարձնելով «դար ալ-իսլամ» («իսլամի աշխարհ»): Ըստ այդմ, Արցախում և նրա շուրջ կան բազմաթիվ մզկիթներ, իսլամական սրբավայրեր ու հուշարձաններ, որոնք թշնամու կողմից «ավերվել» են և պետք է վերականգնվեն:

Պատերազմի ավարտից մեկ օր անց Ալլահ Շյուքուր Փաշազադեի գլխավորությամբ հեռակա տեսակապով անցկացվեց համաժողով «Արդի աշխարհի խնդիրները. աստվածության, ահաբեկչության, ծայրահեղականության, իսլամաֆոբիայի դրսևորումները և Ադրբեջանի դեմ Հայաստանի ագրեսիան» խորագրով, որին մասնակցում էին մուսուլման աստվածաբաններ, ԻՀԿ գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը, Դիյանեթի նախագահը, Ադրբեջանում Իրանի հետ մշակութային կապերի իսլամական կազմակերպության նախագահը և այլք³¹⁶: Համաժողովը ևս մի

³¹² Matteo Pugglies, The role of foreign fighters in the Nagorno-Karabakh conflict, <https://www.ispionline.it/en/publicazione/role-foreign-fighters-nagorno-karabakh-conflict-27764>, 08.10.2021.

³¹³ ‘We were ordered to slaughter every Armenian in the village’, <https://armenpress.am/eng/news/1033852/E28098we-were-ordered-to-slaughter-every-armenian-in-the-villageE28099-captured-syrian-mercenary-says.html>, 04.11.2020.

³¹⁴ المرزقة استخدام على اعتاد التركي النظام: أز هري عالم, <https://www.vetogate.com>, 03.11.2020.

³¹⁵ Hamas congratulates Azerbaijan over Karabakh victory, <https://www.aa.com.tr/en/azerbaijan-front-line/hamas-congratulates-azerbaijan-over-karabakh-victory/2038618>, 10.11.2020.

³¹⁶ Online conference on Armenian aggression against Azerbaijan held, <https://www.azernews.az/nation/172506.html>, 11.01.2021.

քայլ էր Ադրբեջանի կողմից՝ այլատյացության շուրջ ձևավորել Բաքվին աջակցող միջազգային շրջանակ:

Ադրբեջանի հաղթանակի հետ կապված բավական մեծ ոգևորություն նկատվեց Ռուսաստանի Դաշնության մուսուլմանների շրջանում ևս: Ռուսաստանի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ Ռավիլ Գայնուդինը Ի. Ալիևին հղած շնորհավորական ուղերձում մասնավորապես արձանագրում է. «Մեծ ուրախությամբ նշում եմ, որ Ադրբեջանը և ողջ ադրբեջանական ժողովուրդը, ձեր իմաստուն ղեկավարության ներքո, հաջողությամբ անցան այս մեծ փորձությունը: Հանրապետության պետական իշխանությունը պատվով կատարեց իր պարտավորությունները սեփական ժողովրդի և ողջ միջազգային հանրության առջև»³¹⁷: «Մեծ գոհունակությամբ միանում եմ իսլամում իմ ադրբեջանցի եղբայրների ուրախությանը՝ կապված պատմամշակութային հուշարձանների վերադարձի հետ, որոնց թվում կան Ամենագոր Ալլահի առջև ծնկի իջնելու շատ հնագույն վայրեր: Համոզված եմ, որ բոլորը կվերականգնվեն և ծառայելու են ընդհանուր մեծ գործին, որը Սուրբ Ղուրանը կտակեց մեզ...»³¹⁸:

Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ ի համերաշխություն Ադրբեջանի. շիայականությունից մինչև թյուրքականություն

Պատերազմի սկզբից իրանական քաղաքական վերնախավի ու հասարակության շրջանում նկատելի էր Արցախի վերաբերյալ պաշտոնական Թեհրանի արձագանքի շուրջ որոշակի բևեռացվածություն: Այս խոսույթում ներգրավված հանրույթի մի մասը համարում էր, որ կրոնական ու մշակութային նկատառումներից ելնելով՝ Իրանը պետք է սատարի Ադրբեջանին, ինչը զուգորդվում էր էթնիկ ադրբեջանցիների կողմից Բաքվին սատարող հանրային ճնշումներով ու բողոքի ցույցերով: Երկրող բևեռը մատնանշում էր, որ Լեռնային Ղարաբաղի անցումն Ադրբեջանին լուրջ աշխարհաքաղաքական հարված է Իրանին և նշանակելու է ոչ միայն թյուրքական, այլ նաև իսրայելական ազդեցության ան Հարավային Կովկասում: Այսուհանդերձ, իրանական պաշտոնական արձագանքը պատերազմին ընդգծված ադրբեջանամետ էր: Իրանի հյուսիս-արևմտյան թյուրքախոս շրջանների շիայական համայնքները պատերազմի հենց սկզբից ևս իրենց աջակցությունը հայտնեցին Ադրբեջանին: Հոկտեմբերի սկզբին սոցիալական ցանցերում ձևավորվեցին շարժումներ, իսկ իրանական մի շարք քաղաքներում, այդ թվում՝ Թեհրանում ու Թավրիզում կազմակերպվեցին բողոքի ցույցեր՝ ի աջակցություն Ադրբեջանի, որոնց ընթացքում քննադատվում էր ԻԻՀ պաշտոնական դիրքորոշման չեզոք գիծը³¹⁹:

Այաթոլլա Ալի Խամենեին³²⁰ այս կապակցությամբ իր պաշտոնական դիրքորոշումը հայտնեց նոյեմբերի 3-ին՝ ընդգծելով, որ Ադրբեջանն իրավունք ունի ազատագրելու բռնազավթված տարածքները, որոնք պետք է վերադարձվեն Ադրբեջանին³²¹: Նա ընդգծեց նաև տարածաշրջանում ապրող հայերի անվտանգության ապահովման անհրաժեշտությունը, ինչը բխում է կրոնադավանական փոքրամասնությունների

³¹⁷ Председатель Духовного управления мусульман России поздравил Президента Ильхама Алиева, <https://www.trend.az/azerbaijan/politics/3340899.html>, 26.11.2020.

³¹⁸ Նույն տեղում:

³¹⁹ Protests Erupt in Iran Backing Azerbaijan In Nagorno-Karabakh Conflict, <https://www.rferl.org/a/protests-erupt-in-iran-backing-azerbaijan-in-nagorno-karabakh-conflict/30870217.html>, 02.10. 2020.

³²⁰ Հարկ է նշել, որ Ալի Խամենեին սերում է ադրբեջանախոս շիաների ընտանիքից, հայրական ընտանիքը ծագումով Ատրպատական նահանգի Խամանե քաղաքի իրանաադրբեջանական համայնքից է:

³²¹ رامحل پايان مناقشه قريباغ، (Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծում, ԻԻՀ Հոգևոր առաջնորդի կայք էջից), <https://farsi.khamenei.ir/others-note?id=46775>, 03.11.2020.

պաշտպանության շիայականության սկզբունքներից³²²: Միաժամանակ համենեին հիշատակեց հակամարտության գոտում ահաբեկիչների առկայության մասին տեղեկությունները՝ զգուշացնելով, որ իրանական սահմանների մերձակայքում նման խմբերի տեղակայման պարագայում Իրանի կողմից վճռական հարված հասցնելն անխուսափելի կդառնա³²³:

Հարկ է նկատել, որ թե՛ իրանական մամուլում և թե՛ գրեթե բոլոր պաշտոնական հայտարարություններում, այդ թվում՝ ուժային կառույցների, առանձնապես կարևորվել է պատերազմում վարձկան ահաբեկիչների ներգրավման խնդիրը և ուղղակի կամ անուղղակի կերպով շեշտադրվել է այդ հարցում Թուրքիայի ապակառուցողական ներգործությունը³²⁴: Ահաբեկիչները, որոնց ոչնչացումն Իրաքում, Սիրիայում, Լիբիայում Իրանի անվտանգային գերակայություններից է, այս պատերազմի արդյունքում ուղղակի սպառնալիք դարձան Իրանի հյուսիսային սահմանների համար ևս:

Իր հերթին Ադրբեջանական ԱԳՆ-ն բարձր գնահատեց ԻԻՀ հոգևոր առաջնորդի աջակցությունը և կարևորեց հակամարտության կարգավորման նախաձեռնությամբ ԻԻՀ նախագահի հատուկ բանազնաց ԱԳ փոխնախարար Սեյեդ Աբբաս Արակչիի այցը տարածաշրջան³²⁵: Նոյեմբերի 9-ին Բաքվում ԻԻՀ դեսպանատունը, վերստին հաստատելով Ադրբեջանին տարածքները վերադարձնելու՝ հոգևոր առաջնորդի հնչեցրած դրույթները, շնորհավորել էր Ադրբեջանին Շուշիի ազատագրման կապակցությամբ՝ ընդգծելով, որ քաղաքն Իրանի ու Ադրբեջանի ժողովուրդների մշակութային ընդհանրության խորհրդանիշներից մեկն է և որ «Աստված տա, որ Շուշիի (հայտարարության մեջ՝ Շուշա) մզկիթի միևարեթների թաքսիթի կանչը շուտով դիպչի տարածաշրջանի բոլոր մուսուլմանների և վելայաթի կողմնակիցների հոգիներին»³²⁶:

Ուշագրավ է, որ մինչև Ալի համենեի ելույթը պատերազմական իրադարձությունների վերաբերյալ բավականին հստակ դիրքորոշումներ էին հնչեցրել Իրանի թոբախոս՝ Արդեբիլի, Արևելյան և Արևմտյան Ադրբեջան, Չանջան նահանգների օրենսդիր մարմնի ու հոգևոր առաջնորդի ներկայացուցիչները: Մեջլիսում ներկայացված հյուսիս-արևմտյան նահանգների պատգամավորների համատեղ հայտարարությունը, հղում անելով ՄԱԿ-ի չորս բանաձևերին, շեշտադրում էր, որ Լեռնային Ղարաբաղը պատկանում է Ադրբեջանին, և որ գիտական ու պատմական փաստաթղթերի համաձայն՝ իսլամական աշխարհի մաս է կազմում: Նրանք դիմում էին Իրանի կառավարությանը և մասնավորապես ԱԳՆ-ին՝ հստակեցնելու Իրանի դիրքորոշումը՝ ի աջակցություն Ադրբեջանի Հանրապետության մուսուլման ժողովրդի և Ղարաբաղի «կեղեքված շիաների»՝ համաձայն ԻԻՀ սահմանադրության 3 և 152 հոդվածների³²⁷: Հոգևոր առաջնորդի ներկայացուցիչների հայտարարության մեջ նույնպես նշվում է, որ Լեռնային Ղարաբաղը պատկանում է Ադրբեջանին, և այն պետք վերադարձվի «Ալի ալ-բեյթի» (Մուհամմադ մարգարեի տան՝ ընտանիքի ժողովրդի) երկրին, որի

³²² بیانات مقام معظم رهبری در خصوص جنگ قرمباغ؛ دیگر جای بهانه نیست³²² (Գերագույն առաջնորդի հայտարարությունները Լեռնային Ղարաբաղի պատերազմի վերաբերյալ, այլևս ոչ մի արդարացում), <https://www.irna.ir>, 04.11.2020:

³²³ Նույն տեղում:

³²⁴ *Maryam Sinaee*, Iran Warns Again Over Sunni Militants In Nagorno-Karabakh War, <https://iranintl.com/en/world/iran-warns-again-over-sunni-militants-nagorno-karabakh-war>, 07.11.2020.

³²⁵ قردانی جمهوری آذربایجان از بیانات مقام معظم رهبری درباره مناقشه قره باغ³²⁵ (Ադրբեջանի Հանրապետությունը բարձր է գնահատում Հոգևոր առաջնորդի հայտարարությունները հակամարտության վերաբերյալ), <https://www.irna.ir>, 04.11.2020.

³²⁶ Iran congratulates Azerbaijan on liberation of Shusha, <https://www.tehrantimes.com/news/454457/Iran-congratulates-Azerbaijan-on-liberation-of-Shusha>, 09.11.2020.

³²⁷ بیانیه مجمع نمایندگان شمالغرب در مورد قره باغ³²⁷ (Հյուսիսարևմտյան պալատի ներկայացուցիչների հայտարարությունը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ), <https://www.isna.ir>, 11.10.2020.

կառավարության գործողություններն օրինաչափ են ոչ միայն ՄԱԿ-ի չորս բանաձևերի շրջանակում, այլ նաև հիմնված են շարիաթական իրավունքի վրա, ինչն ըստ եւրոպան օրինակարգ էր դարձնում Ադրբեջանի սանձազերծած պատերազմը նաև կրոնական տեսանկյունից³²⁸:

Ադրբեջանում հոգևոր առաջնորդի պաշտոնական ներկայացուցիչ հոջաթ-ալ Եսլամ Ալի Աբբար Աջաղնեժադը, որ զգալի հեղինակություն է վայելում հարավկովկասյան շիայական կրոնական համայնքներում, իր հերթին շնորհավորել էր Բաքվին հաղթանակի կապակցությամբ և ադրբեջաներեն հատուկ տեսաուղերձով, ցավակցություն էր հայտնել զոհված զինծառայողների՝ «իսլամի նահատակների» ընտանիքներին³²⁹:

Հարկ է Լշել, որ Թեհրանի համար Ադրբեջանում շիայական ներկայացվածության հավասարակշռման հարցը մեծ կարևորություն ունի՝ հաշվի առնելով նաև վերջին տարիներին շիա իսլամի և Իրանի կրոնական դիրքերի թուլացումը և սուննի իսլամի, մասնավորապես «թուրքական իսլամի» առաջխաղացումն Ադրբեջանում³³⁰: Ադրբեջանի շուրջ գոյություն ունեցող իրանաթուրքական հակազդեցության առավելապես զգայուն հարցերից է Իրանական Ադրբեջանի (Ատրպատական) հարցում թուրքական ազգայնական շրջանակներից եկող իրանաշիայական ինքնագիտակցության թուլացմանը և թուրքական էթնոլեզվական բաղադրիչի ուժեղացման միտումները, ինչն առավել ակնառու դարձան դարաբառյան հարցի շուրջ վերջին գործընթացներում: Այս համատեքստում ուշագրավ է առանձնացնել երկու երկրների միջև հայտնի միջադեպը, երբ դեկտեմբերի 10-ին Բաքվի ռազմական շքերթի ժամանակ Էրդողանն արտասանեց ազերի բանաստեղծ Բախթիար Վահաբզադեի «Արագ, Արագ» բանաստեղծությունը, որը համարվում է թուրքական ժողովուրդների միացումը քարոզող անջատողականների կարգախոսը և մատնանշում է Արաքս գետով Իրանի թուրքախոս ժողովուրդի «բռնի բաժանումը երկու հատվածի»³³¹: Այս համատեքստում Էրդողանի Լշված ելույթը համահունչ է նաև ծայրահեղ ազգայնական գաղափարներ ունեցող «Գորշ գայլերի» առաջնորդ Դեվլեթ Բահչելիի մոտեցումներին: Վերջինս, չնայած թուրք-իրանական «թյուրքմբռնումը» կարգավորելու փորձին, շարունակեց կոշտ արձագանքների շարքն Իրանի ուղղությամբ՝ թվիթեյան իր էջում տեղադրելով վերոնշյալ բանաստեղծությունը³³²: Լշենք, որ Դ. Բահչելին ունի նաև Ռ. Էրդողանի և Ի. Ալիևի համաձայնությունը՝ Շուշիում հիմնելու «Գորշ գայլերի» բարձրագույն դպրոց³³³:

³²⁸ بیانیہ نمائندگان ولی فقیہ در استان های آذربایجان شرقی، آذربایجان غربی، اردبیل و زنجان در مورد مناقشہ قرہ باغ/ عکس (Արեւմտյան Ադրբեջանում, Արեւելյան Ադրբեջանում, Արդաբիլում և Չանջանում Գերագույն առաջնորդի ներկայացուցիչները համատեղ հայտարարություն են տարածել Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ), <https://qafqaz.ir>, 10.10.2020.

³²⁹ حجت الاسلام والمسلمین علی اکبر اجاق نژاد نماینده ولی فقیہ در جمهوری آذربایجان سرویس بین الملل خبرگزاری رسا، به گزارش کرد در خصوص درگیری های نظامی اخیر در منطقه قرہ باغ پیامی صادر کرد (Ադրբեջանի Հանրապետությունում Գերագույն առաջնորդի ներկայացուցիչ Հոջաթ-ուլ-իսլամ Ալի Աբբար Աջաղնեժադը հաղորդագրություն է տարածել Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում վերջին ռազմական բախումների հետ կապված), <https://rasanews.ir>, 11.11.2020.

³³⁰ Իրանա-շիայական գործոնին և դրա շուրջ Ադրբեջանում առկա միտումներին հեղինակներն անդրադարձել են առանձին հոդվածով: Մանրամասն տես **Փաշայան Ա., Լավասարդյան Ն.**, Շիայականության գործոնն ադրբեջանաիրանական հարաբերություններում, Գիտական Արցախ, № 4(7), «Արցախ» հրատարակչություն, Ե., 2020, էջ 104-114:

³³¹ «Նրանք բաժանեցին Արագ գետը և լցրեցին այն ավազով: Ես չեմ բաժանվի քեզանից: Նրանք բաժանեցին մեզ ուժով»:

³³² Amberin Zaman, Turkey-Iran tensions spike over Azerbaijan, Dec 14, 2020, <https://www.al-monitor.com/pulse/originals/2020/12/turkey-iran-tensions-erdogan-azerbaijan-arrests-drug-baron.html?emailaddress=Mukuchik1209#>, 18.12.2020.

³³³ Grey Wolves announce opening in Nagorno Karabakh, <https://www.persecution.org/2021/01/27/terrorist-organization-grey-wolves-announce-school-opening-nagorno-karabakh/>, 27.01.2021.

Երդողանի գեղարվեստական գեղումների արդյունքում երկու երկրների միջև դիվանագիտական լարվածությունն ուժեղացավ: Իրանական ԱԳՆ կանչված Թեհրանում Թուրքիայի դեսպանին կոշտ կերպով նախազգուշացվեց, որ Իրանը թույլ չի տա միջամտելու իր տարածքային ամբողջականության հարցերին, և Իրանի փառապանծ պատմությունը ցույց է տալիս, որ նա ոչ մի թիզ չի զիջելու, երբ խոսքը վերաբերում է ազգային անվտանգությանը: Նաև նշվեց, որ ռազմատենչ ու ծավալապաշտ կայսրությունների տարածքային պահանջների դարաշրջանն ավարտված է³³⁴: Իրանի ԱԳ նախարար Ջ. Չարիֆն իր թվիթերյան պաշտոնական էջում հրապարակեց հետևյալը. «Նախագահ Երդողանին չէ՞ն տեղեկացրել, որ այն, ինչ նա արտասանել է Բաքվում, վերաբերում է Արաբսից հյուսիս գտնվող տարածքները իրանական հայրենիքից բռնի կերպով անջատելուն: Նա չգիտե՞ր, որ խարխլում է Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխանությունը: Ո՞՞ՍԵԿ -ը չի կարող խոսել ՄԵՐ սիրելի Ադրբեջանի մասին»³³⁵:

Այսուհանդերձ, Իրանի շուրջ ձևավորված բարդ աշխարհաքաղաքական իրադրությունը և միջազգային մեկուսացվածությունը ստիպում են Թեհրանին ճկունություն դրսևորել և խնդիրները կարգավորել դիվանագիտական հարթությունում: Լարվածությունը որոշակիորեն հարթվեց արտգործնախարարներ Ջ. Չարիֆի և Մ. Չավուշօղլուի, ապա նաև նախագահներ Ռ. Երդողանի և Յ. Ռոհանիի հեռախոսազրույցների արդյունքում³³⁶:

Այսպիսով՝ ի տարբերություն առաջին Արցախյան պատերազմի՝ 2020 թ.-ի պատերազմում իրանական պաշտոնական դիրքորոշման ձևավորման հարցում շոշափելի էր ինչպես Էթնոկրոնական, այնպես էլ Էթնոլեզվական գործոնի դերը: Իրանի հյուսիսային նահանգների շիայադավան իրանցիների ակտիվությունը պայմանավորված էր ոչ միայն կրոնական՝ շիայական շարժառիթներով, այլ նաև տարիներով իրականացվող համաթյուրքական քարոզչության որոշակի արդյունք էր:

Այս իրողությունը պայմանավորված էր նախ և առաջ հյուսիսային շրջանների թյուրքախոս բնակչության շրջանում Բաքվի գործողությունները խրախուսող հանրային տրամադրությունների աճով և հանրային պահանջով, որոնք թեև ճնշվում էին կենտրոնական իշխանությունների կողմից, սակայն լարվածություն ու սպառնալիք էին ձևավորում ներքին կայունության համար: Մյուս կողմից՝ պայմանավորված էին հակամարտության մեջ Թուրքիայի և Իսրայելի անխաղտա դերակատարման աճով, ինչպես նաև իրանական սահմանների մոտ սուննի ահաբեկչական տարրի կենտրոնացմամբ, որը նույնպես ուղղակի սպառնալիք է Իրանի անվտանգությանը:

Պակիստանի աջակցությունը թուրք-ադրբեջանական տանդեմին

Պատերազմի ընթացքում իսլամական համերաշխության թեզի և Թուրքիայի ու Ադրբեջանի հետ ռազմավարական սերտ համագործակցության շրջանակներում Իսլամաբաղը հանդես եկավ Ադրբեջանի աջակցությամբ: Պակիստանը միջուկային պետություն է, մուսուլմանական աշխարհի առանցքային երկրներից է, որը մեծ ազդեցություն ունի միջազգային ցիհադական ռեսուրսի վերահսկման հարցում: Պակիստանը մինչև օրս, արցախյան հարցով պայմանավորված, չի ճանաչել Հայաստանի Հանրապետությունը, ընդգծված կերպով պաշտպանել է Ադրբեջանին ՄԱԿ-ում և միջազգային այլ հարթակներում: Հայտնի է, որ Արցախյան առաջին պատերազմի ընթացքում ադրբեջանական կողմից ռազմական գործողություններին մասնակցել են պակիստանաաֆղանական վարձկան մոջահիդներ: Պակիստանը մշտապես աջակցել է

³³⁴ Senior official urges Erdoğan to read history accurately, <https://en.irma.ir/news/84143270/Senior-official-urges-Erdo%20C4%9Fan-to-read-history-accurately>, 11.12.2020.

³³⁵ Javad Zarif, Twitter official, <https://twitter.com/JZarif/status/1337280285398999041?s=20>

³³⁶ Turkey underlines friendly ties with Iran, <https://en.irma.ir/news/84144638/Turkey-underlines-friendly-ties-with-Iran>, 12.12.2020.

թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից խրախուսվող հակահայկական հռետորաբանությանը և վերջինիս կողմից Արցախյան հակամարտությունը ուժային ճանապարհով լուծելու քաղաքականությանը: Իր հերթին թե՛ Թուրքիան, թե՛ Ադրբեջանը լիովին սատարում են Զաշմիրի իսլամի կարգավորման հարցում Պակիստանի դիրքորոշումը:

Արցախի հարցն Իսլամաբադի համար կարևորվում է նախ և առաջ Թուրքիայի հետ ռազմավարական գործընկերության ամրապնդման համատեքստում: Սուննիական ինքնությանը երկու խոշոր ավտորիտար պետությունների և դրանց իսլամամետ առաջնորդների միջև ամրապնդվող ռազմավարական հարաբերությունների շրջանակի անդամ են նաև Թուրքիայի ազդեցության գոտու երկրները, այդ թվում՝ շիայական ինքնության համարում ունեցող Ադրբեջանը: Նշված իրողությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում Կենտրոնական Ասիայի՝ հետխորհրդային տարածք թուրք-պակիստանյան ռազմական ու տնտեսական ազդեցության ընդլայնման համար ևս³³⁷: Պատահական չէ, որ պատերազմի ընթացքում համացանցում տեղեկություններ շրջանառվեցին, որ փուլառվածների շրջանում գործող պակիստանյան ահաբեկչական «Չամաաթ-ե Եւլամ» և աֆղանական «Յեզբ-ե Եւլամ» կառույցներից վարձական ջիհադականներ են ուղարկվել Լեռնային Ղարաբաղ: Համարվում է, որ պակիստանյան «Չամաաթ-ե Եւլամը», որին սատարում են պակիստանյան բանակի գեներալ Չիյա Ալ-Հակը և Գուլբեդդին Յեքմաթիյարի ղեկավարած աֆղանական «Յեզբ-ե Եւլամ» կազմակերպությունները, նաև Երդողանի կողմից հովանավորվող «Մուսուլման եղբայրների» գաղափարական ջատագույններն են³³⁸: Պատերազմի առաջին օրերից Պակիստանը հակահայկական տեղեկատվական գրոհի սկսեց մասնավորապես թվիթերում³³⁹: Որպես գոհունակություն՝ ադրբեջանցիները սոցցանցերում Թուրքիայի, Ադրբեջանի դրոշների կողքին կախում էին նաև Պակիստանի դրոշը³⁴⁰:

Չնայած թե՛ Իսլամաբադը, թե՛ Բաքուն տարբեր մակարդակներում հերքում էին Պակիստանից զինյալների ներգրավումը հակամարտության մեջ՝ շեշտադրելով աջակցության միայն քաղաքական ու դիվանագիտական բաղադրիչները³⁴¹, ակնհայտ էր, որ Արցախյան վերջին պատերազմն Էապես նպաստեց Թուրքիայի, Պակիստանի ու Ադրբեջանի մերձեցմանը՝ տարածաշրջանում ռազմավարական նոր առանցքի ակտիվացմամբ: Ասվածի ապացույցն է հետպատերազմական շրջանում ակտիվ եռակողմ հանդիպումները և Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում վերականգնողական աշխատանքներին Իսլամաբադի ակտիվ ներգրավման ցանկությունը³⁴²:

Կրոնական հարցերը ևս Թուրքիայի, Ադրբեջանի ու Պակիստանի օրակարգի անբալկոնելի մասն են: 2021 թ.-ի հունվարին արտգործնախարարների մակարդակով եռակողմ հանդիպմանը կողմերը պայմանավորվեցին խթանելու համատեղ ջանքերը

³³⁷ **Хроленко А.**, «Одно сердце» в Карабахе: кому выгоден союз Азербайджана, Турции и Пакистана, Лазаревский клуб, <https://lazarevsky.club/analitika/odno-serdce-v-karabakhe-komu-vygoden-s/>, 19.01.2021.

³³⁸ **Строкань С.**, В Карабах из-за Гиндукуша, В противостояние Баку и Еревана включается Исламабад, <https://www.kommersant.ru/doc/4549481>, 28.10.2020.

³³⁹ Pakistani bots on Twitter vow to fight for Muslim majority Azerbaijan after clashes erupt with Armenia over border issue, <https://www.opindia.com/2020/09/pakistanis-on-twitter-vow-to-fight-for-azerbaijan-against-armenia/>, 27.09.2020.

³⁴⁰ Tufail Ahmad, Pakistan's military involvement in the Nagorno-Karabakh war, <https://www.memri.org/reports/pakistans-military-involvement-nagorno-karabakh-war>, 09.02.2021.

³⁴¹ Նույն տեղում:

³⁴² Pakistan PM assures to rebuild newly liberated lands of Azerbaijan, <https://www.islamabadscene.com/pakistan-pm-assures-support-to-rebuild-newly-liberated-lands-of-azerbaijan/>, 15.01.2021.

իսլամաֆոբիայի, մուսուլմանական փոքրամասնությունների նկատմամբ խտրականության դեմ պայքարում, մասնավորապես տարածաշրջանային և միջազգային մակարդակներում³⁴³: Հարկ է նկատել, որ Պակիստանն անթաքույց շահագրգռվածություն է դրսևորում Ադրբեջանում Իրանի կրոնական ու մշակութային ազդեցության թուլացման հարցում: Սուննիական ճնշման ներքո գտնվող Իրանի համար շիայական Ադրբեջանի ակտիվ ներգրավումը Թուրքիայի ու Պակիստանի քաղաքական ու կրոնական ուղեծիր բավական խնդրահարույց է Թեհրանի համար:

Եզրակացություն

2020 թ.-ի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Արցախում և Նրա շուրջ լայնածավալ ռազմական գործողություններին զուգահեռ՝ Մերձավոր Արևելքում, Նրա սահմաններից անդին և, ընդհանրապես, իսլամական միջավայրում ի հայտ եկան ու ամրապնդվեցին կրոնական գործոնով պայմանավորված և իսլամական համերաշխության գաղափարներով աչքի ընկնող հակահայկական օրակարգեր ու տրամադրություններ, որոնք դրսևորվեցին «Իսլամական համագործակցություն» կազմակերպության հայտարարություններում ու բանաձևերում, Ադրբեջանի ու Թուրքիայի քաղաքական ու հասարակական դիսկուրսում, միջազգային տեղեկատվական դաշտում ու սոցիալական ցանցերում: Դրանք ուղղորդվում էին Անկարայի, Բաքվի և Նրանց դաշնակիցների կողմից՝ տեղեկատվական լայն գործիքակազմերի օգտագործմամբ: Բացի այդ, Ռ.Էրդողանի Նախաձեռնությամբ և Նրա անմիջական վերահսկողության տակ գտնվող մեծ թվով վարձկան ահաբեկիչներ նետվեցին շփման գիծ: Թուրքիայի Նախագահը ռազմական, քաղաքական, դիվանագիտական, մարդկային, տնտեսական, քարոզչական ռեսուրսներ ներդրեց՝ ի սպաս Ադրբեջանի: Թուրք-ադրբեջանական տանդեմը չխորշեց կրոնական ատելություն հրահրելով ևս գեներացնել հակահայկական տրամադրություններ, ինչը անվտանգային սպառնալիք դարձավ ամբողջ աշխարհում ապրող հայության համար: Պատերազմի ընթացքում հակահայկական տրամադրությունների ձևավորման հարցում թուրք-ադրբեջանական տանդեմի դաշնակիցներ դարձան Իրանի Ատրպատական Նահանգի թուրքախոս շիա ադրբեջանական ելիտաները և հասարակական լայն շրջանակներ, բարձրաստիճան մուսուլման հոգևորականներ ու աստվածաբաններ ամբողջ աշխարհում, առանձին մուսուլմանական պետություններ, ինչպես օրինակ՝ Պակիստանը, Աֆղանստանը և այլն: Պատերազմում հաղթանակն էլ ավելի ամրապնդեց Ադրբեջանի դիրքերը իսլամական միջավայրում, որտեղ լեգիտիմանալու և ներգրավվելու համար Բաքուն մեծ ռեսուրսներ էր ծախսել: Կարելի է արձանագրել, որ մեծամասամբ շիայական ինքնություն ունեցող Ադրբեջանին առավելապես սատարեց սուննիական աշխարհը, որն անմիջական կապ ունի Թուրքիայի գործոնի հետ:

MUSLIM WORLD SUPPORT TO AZERBAIJAN IN THE COURSE OF 2020 ARTS AKH WAR: FROM ISLAMIC SOLIDARITY TO JIHADISM

ARAKS PASHAYAN

*Institute of Oriental Studies, NAS RA, Department of Arab Countries,
Leading Research Fellow;
YSU, Faculty of Oriental Studies, Ph.D, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

³⁴³ Azerbaijan, Turkey and Pakistan: Countries Issue Joint Declaration of Cooperation, <https://worldview.stratfor.com/situation-report/azerbaijan-turkey-and-pakistan-countries-issue-joint-declaration-cooperation>, (04,12,2021).

NAZELI NAVASARDYAN

*Institute of Oriental Studies, NAS RA, Department of Iran, Senior Research Fellow;
YSU, Faculty of Oriental Studies, Ph.D., Lecturer,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to study the degree of support of Azerbaijan by the Islamic world during the 2020 war in Nagorno-Karabakh, to identify the supporting parties, as well as religious and geopolitical motives, mechanisms of this support.

The objectives of the article are to study issues related to the Islamic direction of Azerbaijan's foreign policy and the religious component of the Artsakh problem in the context of the Turkish-Azerbaijani policy, to identify the role of Turkey on the basis of the ideas of Islamic-Turkish solidarity, in order to create anti-Armenian sentiments in the international arena.

The article was written on the basis of monitoring of the international press and materials on this topic, an extensive study of professional literature on various sides of the Nagorno-Karabakh conflict.

In the course of the study, the authors concluded that during the Artsakh war of 2020, the Turkish-Azerbaijani tandem used religious instruments to enlist the full support of the Islamic world. The ideas of Islamic, common Turkic solidarity, jihadism, as well as the potential of hired jihadists, Sunni-Shiite layers of the Islamic world were used.

From the time between September-November 2020, in parallel with the large-scale hostilities in Artsakh, anti-Armenian agendas and moods based on the religious factor and obvious ideas of Islamic solidarity were advanced and strengthened in the Middle East, beyond its borders, and primarily in the Islamic environment, which were manifested in both political and public discourse of Turkey and Ankara, also in international media and social networks, as well as Muslim clergy and government officials.

They were directed by Ankara, Baku and their allies using a wide range of information tools. Besides that, on Erdogan's initiative and direct control, large number of mercenaries were thrust into the line of contact. The President of Turkey invested military, political, diplomatic, human, economic and propaganda resources in support/in favor of Azerbaijan. The Turkish-Azerbaijani tandem was not repulsive to inciting religious hatred by generating anti-Armenian sentiments, which became a security threat to Armenians living around the world. During the war, the Turkish-speaking Shiite Azeri elites of the Iranian Azerbaijan (Atropatene) province of Iran, broad public spectrum, high-ranking Muslim theologians around the world and some Muslim countries, such as Pakistan, Afghanistan, etc. became allies in the formation of anti-Armenian sentiments. The victory in the war strengthened Azerbaijan's position in the Islamic environment, where Baku had spent considerable resources to gain legitimacy and involvement. It can be stated that Azerbaijan, which has a predominantly Shiite identity, was mostly supported by the Sunni world, which has a direct connection with Ankara's unconditional support to Baku.

Keywords: *Islamic solidarity, Ummah, Turkic solidarity, Artsakh, Azerbaijan, Turkey, mercenary, war, jihad.*

**ПОДДЕРЖКА АЗЕРБАЙДЖАНА МУСУЛЬМАНСКИМ МИРОМ
ВО ВРЕМЯ АРЦАХСКОЙ ВОЙНЫ 2020 Г.:
ОТ ИСЛАМСКОЙ СОЛИДАРНОСТИ К ДЖИХАДИЗМУ**

АРАКС ПАШАЯН

*ведущий научный сотрудник отдела арабских стран
Института востоковедения НАН РА,
доцент факультета востоковедения
Ереванского государственного университета
кандидат исторических наук,
г. Ереван, Республика Армения*

НАЗЕЛИ НАВАСАРДЯН

*ведущий научный сотрудник отдела арабских стран
Института востоковедения НАН РА,
преподаватель факультета востоковедения
Ереванского государственного университета,
кандидат исторических наук,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – изучить степень поддержки Азербайджана исламским миром во время войны 2020 г. в Нагорном Карабахе, определить поддерживающие стороны, а также религиозные и геополитические мотивы и механизмы этой поддержки.

Задачами статьи являются исследование вопросов, связанных с исламским направлением внешней политики Азербайджана и религиозной составляющей арцахской проблемы в контексте турецко-азербайджанской политики, выявление роли Турции на основе идей исламско-турецкой солидарности, с целью создания антиармянских настроений на международной арене.

Статья написана на основе мониторинга международной прессы и материалов по указанной теме, обширного исследования специальной литературы, посвященной различным сторонам нагорно-карабахского конфликта.

В ходе исследования авторы пришли к выводу о том, что во время Арцахской войны 2020 г. турецко-азербайджанский тандем использовал религиозные инструменты, чтобы заручиться полной поддержкой исламского мира. Были использованы идеи исламской, общетюркской солидарности, джихадизма, а также потенциал наемных джихадистов, суннитско-шиитских слоев исламского мира.

Параллельно с широкомасштабными боевыми действиями в Арцахе в сентябре-ноябре 2020 г., на Ближнем Востоке, за его пределами - в исламской среде в целом - усилились и укрепились антиармянские настроения, основанные на идеях исламской солидарности. В политическом и общественном дискурсе Анкара, Баку и их союзники, используя широкий набор информационных инструментов, направляли публичный антиармянский религиозный дискурс как внутри своих стран, так же на международном информационном поле и социальных сетях. Турция вложила огромные военные, политические, дипломатические, человеческие, экономические и пропагандистские ресурсы в поддержку Азербайджана. В турецко-азербайджанских интересах выступили различные представители мусульманского мира, в том числе и высокопоставленные мусульманские священнослужители и представители властей.

При посредничестве Эрдогана на линию соприкосновения войск было переброшено большое количество сирийских наемников. Турецко-азербайджанский тандем не чуждался от генерации религиозной ненависти путем разжигания антиармянских настроений, что стало угрозой безопасности армян, проживающих во всем мире. Во время войны в Иране тюркоязычные шиитские азербайджанские политические и религиозные элиты провинции Иранского Азербайджана (Атрпатакан) стали полноправными союзниками в формировании антиармянских настроений. Можно констатировать, что Азербайджан, имеющий преимущественно шиитскую идентичность, при безоговорочной поддержке Анкары был поддержан также суннитским миром. Победа в войне еще больше укрепила позиции Азербайджана в исламской среде. Баку в целом смог добиться легитимизации своей агрессии в исламском мире.

Ключевые слова: *исламская солидарность, умма, тюркская солидарность, Арцах, Азербайджан, Турция, наемник, война, джихад.*

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԱՍՏԱՆՈՒՄ.
ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԱՐՏԱԶՐԱՎԵՐՆԵՐ* 344**

ՀՏԴ 316.354.2 (479.22)

DOI: [10.52063/25792652-2021.1-120](https://doi.org/10.52063/25792652-2021.1-120)

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱԼ

ՀՀ ԳԱՎ ԱԻ առաջատար գիտաշխատող,
Արաբական երկրների բաժնի վարիչ,
պատմական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դոցենտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
lily_har77@hotmail.com

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱԼ

ՀՀ ԳԱՎ ԱԻ Թուրքիայի բաժնի գիտաշխատող,
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դասախոս,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
mtatevik77@gmail.com

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Վրաստանում սալաֆիականության և իսլամական արմատականության ծավալման հիմնական առանձնահատկություններն ու միտումները, վեր հանել այն սպառնալիքներն ու մարտահրավերները, որոնց բախվում է Վրաստանը, հետևապես նաև՝ տարածաշրջանը:

Հոդվածի խնդիրներն են՝ քննարկել Վրաստանի իսլամադավան համայնքներում սուննի իսլամի արմատական ուղղությունների տարածման ներքին ու արտաքին դրդապատճառներն ու արգելները, նախադրյալներն ու հետևանքները, վրացական հասարակության մեջ վերջիններիս ինտեգրման խնդիրները: Հետազոտվում են Վրաստանի էթնիկ ադրբեջանցիների շրջանում (որոնք շիաներ են) սալաֆիականության և սուննի իսլամական ծայրահեղականության նպատակաուղղված քարոզչության պատճառներն ու հետևանքները:

Հոդվածը գրվել է բավալիցու գիտական վերլուծությունների և միջազգային մամուլի, թեմային առնչվող նյութերի, հայտարարությունների, էլոյթների, վերլուծական զեկույցների, պաշտոնական և ոչ պաշտոնական լրատվության մշտադիտարկման հիման վրա՝ պատմավերլուծական ու պատմաքաղաքագիտական քննության մեթոդաբանությամբ:

Հետազոտության արդյունքում հեղինակները հանգել են այն եզրակացության, որ Վրաստանում հետևողականորեն ծավալվող սուննի իսլամի սալաֆիական ուղղությունը և արմատականությունը լրջագույն սպառնալիք են ոչ միայն Վրաստանի, այլ նաև տարածաշրջանում անվտանգային միջավայրի համար: Վրաստանի իշխանությունները կորցնում են իրական վերահսկողությունն Աջարիայի նկատմամբ՝ այն աստիճանաբար «հանձնելով» Թուրքիային: Հետևաբար այստեղ կարող է ձևավորվել «արմատականության հարթակ»՝ հարակից տարածքներ

* Հոդվածը ներկայացվել է 14.02.2021թ., գրախոսվել՝ 18.02.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

³⁴⁴ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԱՎ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող Համահայկական հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

անմիջական ներթափանցման հնարավորությամբ: Թուրքիայի և իսլամական տարբեր կապակերպությունների կողմից ակտիվորեն օգտագործվող Աջարիան կարող է որոշակի կարգացումների դեպքում վերածվել նաև Հայաստանի դեմ «ահաբեկչության օջախի»:

Ճայրահեղական սուլնի իսլամական գաղափարաբանության ծավալումը Վրաստանի ադրբեջանաբնակ շրջաններում հանգեցնում է շիայական ավանդական իսլամի նահանջին: Այս երևույթը, բնականաբար, ապրում է ոչ միայն տարածաշրջանի կրոնական քարտեզի վրա, այլև փոխում է առկա աշխարհահաբաղաբանական ուժային հարաբերակցությունը: Թուրքիան, օգտագործելով նաև իսլամական գործիքակազմը, հետևողականորեն դուրս է մղում Իրանին Վրաստանի էթնիկ ադրբեջանաբնակ շրջաններից՝ Հայաստանի շուրջ սեղմելով ծայրահեղ իսլամական արմատականության օղակը:

Հիմնաբառեր՝ Վրաստան, Պանկիսի կիրճ, Աջարիա, իսլամական արմատականություն, սալաֆիականություն, Իսլամական պետություն (ԻՊ):

Ներածություն

2020թ.-ի Արցախյան պատերազմի հետևանքով տարածաշրջանում սահմանների վերափոխմամբ պայմանավորված՝ աշխարհաբաղաբանական տեղաշարժերն ու ձևավորված անկայունությունն արժևորում են իսլամական գործոնի և դրա ծավալման հեռանկարների ուսումնասիրության կարևորությունը:

Հարավային Կովկասը մշտապես գտնվել է կրոնների ու քաղաքակրթությունների խաչմերուկում, որտեղ բախվում են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային դերակատարների աշխարհաբաղաբանական ու աշխարհատնտեսական շահերը, որոնց փոխակերպումներն ու վերադասավորումներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում տարածաշրջանային ընդհանուր անվտանգային միջավայրի վրա:

Ակներև է, որ 2020 թ.-ի Արցախյան պատերազմի արդյունքում ադրբեջանական վերահսկողության տակ անցած շրջաններում Թուրքիայի՝ սուլնի ահաբեկչական տարրով (գերագանցապես թուրքմեններ) վերաբնակեցման շրջանառվող ծրագրերն էապես նպաստելու են տարբեր իսլամական ուժերի ու դերակատարների ակտիվացմանը՝ խաթարելով տարածաշրջանում առկա հավասարակշռությունը: Այս տեսանկյունից առանձնակի կարևորություն է ստանում տարածաշրջանի՝ տվյալ դեպքում Վրաստանի իսլամադավան համայնքների ուսումնասիրությունը, որոնք կարող են կամրջել ավանդական իսլամական կրոնամշակութային արժեհամակարգերը և դառնալ գործիք՝ ծայրահեղական իսլամի՝ տարածաշրջան ներթափանցման համար:

Հայաստանի սահմանակից չորս պետություններից երեքն իսլամադավան են՝ իրենց բնակչության բացարձակ մեծամասնությամբ: Միակ քրիստոնյա երկիրը Վրաստանն է, որտեղ իսլամը երկրորդ ամենատարածված կրոնն է³⁴⁵: Մուսուլմանական համայնքները Վրաստանում պարփակ ապրում են Պանկիսի կիրճում, Զվեմո Քարթլիի շրջանում և Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում: Կան նաև փոքր մուսուլմանական բնակավայրեր Կախեթիի, Զվարեթի, Թելավի և Սագարեջո վարչական շրջաններում (Էթնիկ ադրբեջանցիներ), ինչպես նաև Ճավկայի, Ջավախքի և Գուրիայի շրջաններում (Աջարիայից այստեղ հաստատվածներ և մխիթթցի թուրքերի փոքր

³⁴⁵ 2014 թ.-ի պաշտոնական մարդահամարի համաձայն՝ Վրաստանում բնակվում է 400.000 մուսուլման, որը կազմում է երկրի բնակչության 10.7 %-ը: National statistics office of Georgia (Geostat), 2014 General Population Census Main Results General Information, http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf, 10.03.2021.

խմբեր)³⁴⁶: Թբիլիսիում բնակվում է մոտ 16.000 մուսուլման³⁴⁷: Ակնհայտ է, որ բացի Ջավախքից, մուսուլմանները գերակշիռ մեծամասնություն են կազմում Յայաստանի հետ սահմանակից բոլոր բնակավայրերում:

Պանկիսի կիրճի մուսուլմանական համայնքն «ավանդական իսլամի» և սալաֆիականության առանցքում

Պանկիսի կիրճում քիստերը³⁴⁸ սկսեցին հաստատվել դեռևս 1840-ական թվականներից և վրացական համայնքների հետ սոցիալ-տնտեսական սերտ շփման արդյունքում կարողացան ինտեգրվել տեղական միջավայրում՝ չնայած կրոնական տարբերակվածությանը: Քիստերը սուլնի իսլամի շաֆիայական մազհաբի՝ կրոնաիրավական դպրոցի հետևորդներ են: 2014 թ.-ի պաշտոնական մարդահամարի համաձայն՝ Վրաստանում էթնիկ քիստերի թիվը 5700 է³⁴⁹: Տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների համաձայն՝ Պանկիսի կիրճում բնակվում է նաև 230 չեչեն, որոնք երկրում հաստատվել են դեռևս 1990-ականներին³⁵⁰: Վերջիններս թեև փախստականի կարգավիճակ ունեն, այնուամենայնիվ բավական լավ ինտեգրված են տեղի քիստ բնակչության շրջանում³⁵¹:

Քիստական համայնքի մեկուսացումը վրացական միջավայրից սկսվեց երկրի անկախացումից հետո: Խորհրդային Միության կազմալուծման, աթեիզմի ու կոմունիստական գաղափարախոսության քայքայման արդյունքում առաջացած «գաղափարական վակուումը»³⁵² խորհրդային ժողովուրդներին և ազգություններին կանգեցրեց ազգային ու էթնոդավանական ինքնությունների փնտրտուքի առաջ³⁵³: Վրաստանում կրոնական ինքնությունների նկատմամբ հետաքրքրությունը կտրուկ վերելք ապրեց. հետզհետե ուղղափառ քրիստոնեությունը դարձավ վրաց ազգայնական ինքնության ու գաղափարախոսության կարևոր բաղադրիչը: Ի հակադրություն՝ մուսուլմանները սկսեցին ինտեգրվել ինչպես իսլամական տարբեր երկրներում գործող,

³⁴⁶ **Kahraman A.**, Azeris and Muslim Ajarians in Georgia: The Swing between Tolerance and Alienation.” Nationalities Papers, vol. 49:2, 2020, p. 309, Mikadze E., “L’islam en Ge’orgie”, Me’moire de DEA, IEP de Paris, 1995, Mikadze E., “L’islam en Adjarie: Trajectoire historique et implications contemporaines”, Cahiers d’Etudessur la Me’diterrane’e Orientale et le Monde Turco–Iranien, No 27, 1999, pp. 241–261.

³⁴⁷ **Сихарулидзе А., Урушадзе М.**, Ислам в Грузии и политика интеграции, Пути к миру и безопасности, 2016. № 2(51), С. 72. DOI: 10.20542/2307-1494-2016-2-71-86.

³⁴⁸ Քիստերը չեչենական էթնիկ ենթախումբ են, Վրաստանում ապրում են Պանկիսի կիրճում՝ Կախետե շրջանի Ախմեթ համայնքում: National statistics office of Georgia (Geostat), 2014 General Population Census Main Results General Information, http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf. (10.03.2021). Վրաստանում քիստական համայնքի մասին մանրամասն տե՛ս <https://osgf.ge/wp-content/uploads/2019/05/Analytical-Report-ISSA-ARM.pdf>

³⁴⁹ National statistics office of Georgia (Geostat), 2014, General Population Census Main Results General Information, http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf, (13.03.2021).

³⁵⁰ 2002 թ-ի մարդահամարի տվյալներում Կիրճի քիստերի թիվը 7110 է, չեչեններինը՝ 1271, ինչը վկայում է արտագաղթի մեծ տեմպի մասին, **Искандарян А.**, Локальный очаг джихадизма в условиях расколотой исламской общины Грузии, Исламские радикальные движения на политической карте современного мира, Выпуск 2, Северный и Южный Кавказ, от. ред. Саватеев А., Нефьяшева Н., Кисриев Э., М. 2017, С. 522

³⁵¹ Islam in Georgia: Policy and integration, Research report, Caucasian House, The Center of cultural relations, Tbilisi, 2016, p. 16

³⁵² **Huntington S. P.**, The Clash of Civilizations Remaking of World Order, 1997. New York, Simon and Schuster, p. 96.

³⁵³ **Agadjanian A.**, Revising Pandora's Gifts: Religious and National Identity in the Post-Soviet Societal Fabric, Europe-Asia Studies, 2001,53 (3), 473-488, p. 474.

այնպես էլ վերազգային իսլամական կառույցներին՝ դառնալով արտաքին ազդեցության հնարավոր թիրախ:

1990-ական թվականներին Կրաստանում տիրող քաղաքական, տնտեսական ու սոցիալական ծանր իրավիճակը Պանկիսի կիրճում կրկնապատկվեց նաև կենտրոնական ու տեղական իշխանությունների շրջանում կոռուպցիայի լայն տարածմամբ: Ըստ որոշ հետազոտողների՝ Չեչնիայում զինված հակամարտությունը դարձավ քիստերի՝ վրացական հասարակությունից մեկուսացման հիմնական պատճառներից մեկը³⁵⁴: Տարբեր աղբյուրների համաձայն՝ Չեչենական առաջին և երկրորդ պատերազմների արդյունքում հազարավոր չեչեն փախստականներ հաստատվեցին Պանկիսի կիրճում, ինչն Էականորեն փոխեց երկրամասի սոցիալական պատկերը³⁵⁵: Այստեղ հաստատվեցին նաև զինված խմբավորումներ, որոնք պարբերաբար անցնում էին Կրաստանի սահմանը՝ ընտանիքներին այցելելու, անհրաժեշտ նյութական ու մեղքային պաշարներ ձեռք բերելու և բուժում ստանալու նպատակով³⁵⁶: Չուզահեռաբար Կիրճ ներթափանցեց սուլնի իսլամի սալաֆիական ուղղությունը³⁵⁷: Սոցիալական ինտեգրման, մասնագիտական կայացման ու առաջխաղացման հնարավորությունների սակավությունը, երկրում կրթության ցածր որակը, ինչպես նաև մեկուսացվածությունը Կրաստանի այլ շրջաններից ստիպեցին տեղացի երիտասարդներին հակվել դեպի սալաֆիական իսլամը՝ որպես ինքնադրսևորման ու ինքնարտահայտման հնարավոր միջոց:

Հյուսիսային Կովկասում պատերազմական իրողություններով պայմանավորված՝ Կրաստանի կառավարությունը բախվեց նաև Պանկիսում անվտանգային իրավիճակի սրմանը: 2000-ական թվականներից Կրաստանի կառավարությունը լայնածավալ միջոցառումներ սկսեց իրականացնել կիրճում իրավիճակը վերահսկողության տակ առնելու ուղղությամբ: Ռուսաստանի Դաշնությունը ևս ընդգծված կոշտ դիրքորոշում որդեգրեց Պանկիսի կիրճի գործընթացների նկատմամբ՝ դրանք դիտարկելով բացառապես իր անվտանգության և հակաահաբեկչական գործողությունների առանցքում:

Մինչև 2000-ական թվականները Պանկիսի կիրճը վերահսկողությունից դուրս տարածք էր, որտեղ անարգել գործում էին հանցագործ զինյալ խմբավորումներ, որոնցից ամենահայտնին Ռուսլան Գելաևի³⁵⁸ ջոկատն էր. կիրճն այդ տարիներին ասոցացվում էր երեխաների առևանգման, թմրանյութերի, զենք-զինամթերքի առքուվաճառքի և այլ հանցագործությունների հետ³⁵⁹: 2002 թ.-ին վրացական իշխանությունները սկսեցին հետզհետե վերահսկել Կիրճի անվտանգային իրավիճակը՝ երկրից վտարելով անօրինական զինյալ խմբերին և հանցագործ տարրերին³⁶⁰: Սալաֆիականությանը հարող շրջանակները, սակայն, մնացին ու փորձեցին համակեցության ուղիներ գտնել Կրաստանի կառավարության վերահսկողության ներքո:

³⁵⁴ **Hahn G. M.**, The Caucasus Emirate Mujahedin: Global Jihadism in Russia's North Caucasus and Beyond, 2014, p. 33.

³⁵⁵ **Shultz R. H.**, Dew Andrea J., Insurgents, Terrorists, and Militias: The Warriors of Contemporary Combat, 2006, p. 144.

³⁵⁶ Նույն տեղում:

³⁵⁷ **Gogvadze G., Kapanadze S.**, Daesh and Challenges Facing Georgia, Georgia's Reforms Associates (GRASS) Policy Document, p. 10.

³⁵⁸ **Sageman M., Hutzley J. D.**, and Unmasking Terror, A Global Review of Terrorist Activities, Volume 3, 2007, p. 332.

³⁵⁹ Beyond al-Qaeda. The Global Jihadist Movement, Editors: Rabasa A., Chalk P., Cragin K., Daly A. S., RAND Corporation, Part 1, 2006, p. 109.

³⁶⁰ **Ozeren S.**, Understanding Terrorism: Analysis of Sociological and Psychological Aspects, (NATO Security Through Science Series E: Human and Societal), 2007, p. 57.

2015 թ.-ից Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը տարեկան 14 անվճար տեղ է հատկացնում Պանկիսի քիստ երիտասարդներին³⁶¹: Այս ծրագիրը նաև նպատակ է հետապնդում լուծել երիտասարդների զբաղվածության, վրաց հասարակության մեջ նրանց ինտեգրման ու գաղափարական կողմնորոշման խնդիրները: Վրացերենը կիրճի բոլոր դպրոցներում կրթության միակ պաշտոնական լեզուն է³⁶²:

Մինչդեռ բարձրագույն կրթությամբ երիտասարդներին աշխատանքով ապահովումը շարունակում է Պանկիսում լրջագույն խնդիր մնալ՝ պարբերական արտագաղթի պատճառ դառնալով: Երիտասարդ քիստերը աշխատանք գտնելու նպատակով մեկնում են Ռուսաստանի Դաշնություն՝ մասնավորապես Չեչնիա³⁶³ և Թուրքիա: ԵՄ երկրներում աշխատանքային ներգաղթյալների թվաքանակն ավելի ցածր է: Անդրադառնելով քիստերի կրոնական նախապատվությանը՝ նշենք, որ երիտասարդների 70–75 տոկոսը (մինչև 35 տարեկան) հարում է սալաֆիականությանը, իսկ համայնքի ավելի տարեց անդամները՝ «ավանդական իսլամին»³⁶⁴: Կիրճում «ավանդական իսլամին» հարող համայնքը 5 մզկիթ (որոնցից սակայն պաշտոնապես գրացված է միայն Դուկիսի գյուղի մզկիթը) և 7 կրոնական դպրոց (մադրասա) ունի, որոնց բնականոն գործունեությունը համակարգում և հոգևորականներին ամսական աշխատավարձ է վճարում Վրաստանի Մուսուլմանների հոգևոր վարչությունը³⁶⁵: Սալաֆիական իսլամի հետևորդները Կիրճում իրենց առանձին 7 մզկիթն ու աղոթատունն ունեն³⁶⁶: Փաստենք, որ սալաֆիական միաբանությունները չեն ճանաչում այդ վարչության գործառույթները և կրոնական ծեսերն անցկացնում են իրենց արտաքին հովանավորների աջակցությամբ: Չեռագոտությունները ցույց են տալիս, որ «ավանդական իսլամի» հետևորդները փորձում են պայքարել Կիրճում սալաֆիականության տարածման դեմ՝ հիմնավորելով, որ այն կարող է հանգեցնել շրջանի հետագա արաբականացմանն ու քիստ-չեչենական ավանդույթների ու արժեքների վերացմանը: Այդ մտահոգությունների նախադրյալներն արդեն իսկ առկա են համայնքում. քիստ սալաֆիականները, հարելով սուֆիական միաբանության Նակշբանդի և Կադիրիյա տարիկաթների, հետևողականորեն փորձում են «ավանդական իսլամի» հետևորդներին բերել դեպի «անաղարտ իսլամ», ստիպել նրանց հրաժարվել քիստ-չեչենական կրոնական առանձնահատկություններից և ավանդական

³⁶¹ 2016 թ.-ի տվյալներով՝ Պանկիսի կիրճից 80 և ավելի ուսանողներ բարձրագույն կրթություն էին ստանում երկրի տարբեր ուսումնական հաստատություններում: Sikharulidze A.I., Urushadze M., Khmaladze G., Chichinadze R., Islam in Georgia: Policy and Integration: Research report, Tbilisi 2016, p. 16

³⁶² Լույս տեղում:

³⁶³ Որոշ տվյալներով 1200 քիստ բնակվում է Չեչնիայում և Ռուսաստանի քաղաքացիություն ունի: Նրանք բավականին լավ ինտեգրված են չեչեն հասարակությունում, սակայն սերտորեն կապված են Վրաստանի իրենց համայնքի հետ: Сихарулидзе А., Урушадзе М., Хмаладзе Г., Чичинадзе Р., *ևլվ աշխ.*, էջ 17:

³⁶⁴ Yearbook of Muslims in Europe, Editors: Scharbrodt O., Akgönül S., Alibašić A., Nielsen J., and Raciuc E., Volume 6, Brill, 2014, p. 251

³⁶⁵ Վարչությունը հիմնադրվել է 2011 թ.-ին: Նպատակն է համակարգել Վրաստանի շիա և սուննի իսլամադավան համայնքների գործունեությունը, հետամուտ լինել դրանց շահերի պաշտպանությանն ու սոցիալ-կենցաղային խնդիրների լուծմանը: Սակայն վերջին շրջանում բազմաթիվ են հրապարակումներն այն մասին, որ Վարչությունը գործում է հիմնականում պետության հետ համաձայնեցված և ուղղորդված: Урушадзе М., Клиффорд Б., Управление мусульман Грузии должно представлять интересы жителей, а не правительства, <https://oc-media.org/ru/mneniya/upravlenie-musulman-gruzii-dolzno-predstavlyat-interesy-zhiteleyo-a-ne-pravitelstva/>, (22. 03. 2017)

³⁶⁶ Yearbook of Muslims in Europe, Editors: Scharbrodt O., Akgönül S., Alibašić A., Nielsen J., and Raciuc E. Volume 6, Brill, 2014, p. 251

սովորույթներից՝ դրանք փոխարինելով շարիաթի օրենքներով³⁶⁷: Սալաֆիականները պնդում են, որ Պանկիսի կիրճի «ավանդական իսլամը» հիմնված է Յուսուֆային Կովկասի ավանդույթների ու սովորույթների վրա. այն լիովին տարանջատվել է Ղուրանի վրա հիմնված «անաղարտ» ու «իրական» իսլամից: Ավելին՝ նրանք նշում են, որ արաբերենին չտիրապետող անձինք չեն կարող իսլամ քարոզել՝ երևույթ, որ տարածված է կիրճի «ավանդական իսլամի» հետևորդների շրջանում: Այս իրողությունները հետզհետե կհանգեցնեն քիստ հանրույթի «արաբականացմանը»³⁶⁸:

Հակասություններն իսլամական ուղղությունների հետևորդների միջև ավելի են խորանում նաև Կրաստանի իշխանությունների երկբևեռ քաղաքականության արդյունքում: Մ. Սաակաշվիլիի կառավարությունը փորձում էր Կիրճում իրավիճակը վերահսկելի պահել՝ սերտորեն համագործակցելով սալաֆիականների հետ, ինչը հանգեցրեց «ավանդական իսլամի» դիրքերի թուլացմանը: Ի հակադրություն՝ ներկա իշխանությունները գրեթե չեն շփվում Կիրճի սալաֆիական շրջանակների հետ՝ աշխատելով հիմնականում «ավանդական իսլամի» հետևորդների հետ³⁶⁹:

Սալաֆիականության ծավալումը կիրճում պայմանավորված է ոչ միայն արտաքին գործոններով, այլ նաև «ավանդական իսլամի» թույլ դրսևորվածությամբ: Ավանդական իսլամական հոգևորականների կրթական շեմն ու հմտությունները ցածր մակարդակի վրա են. շատ հաճախ մզկիթներում իմամներ են դառնում կրոնական կրթություն չստացած անձինք³⁷⁰: «Ավանդական իսլամի» ներկայացուցիչները չեն կարող համեմատվել սալաֆի քարոզիչների հետ, որոնք գերազանց կրոնական կրթություն են ստանում արաբական երկրներում: Կրաստանի Մուսուլմանների հոգևոր վարչությունը չի կարողանում արդյունավետորեն լուծել այս խնդիրը՝ մասամբ նաև երկրում համարժեք կրոնական կրթության բացակայության պատճառով: Քիստական համայնքի Ավագների խորհրդի ավանդական ինստիտուտը տարիներ շարունակ գործում էր որպես ոչ պաշտոնական գործադիր և դատական իշխանություն՝ ըստ շարիաթի և չեչենական ավանդույթների, ներքին գաղափարական հակասությունների պատճառով թուլացած և արժեզրկված է³⁷¹: Պետական կառավարման ուժեղացման ու սալաֆիականության ծավալման արդյունքում Ավագների խորհուրդը կորցրել է երբեմնի հեղինակությունն ու գործառնությունների կարևորությունը:

Սալաֆիական գաղափարների տարածումը Կրաստանում զուգորդվեց ծայրահեղական իսլամականության ներթափանցմամբ: Մինչ Սիրիական ճգնաժամը թվում էր, թե արմատական սալաֆիականներն առանձնակի ակտիվ չեն, սակայն տանյակ երիտասարդ (մինչև 25 տարեկան)³⁷², նույնիսկ դեռահաս (Մ. Կուշտանիշվիլի,

³⁶⁷ **Sanikidze G.**, Islamic Resurgence in the Modern Caucasian Region: "Global" and "Local" Islam in the Pankisi Gorge, Empire, Islam, and Politics in Central Eurasia, Ed. by U. Tomohiko, Slavic Eurasian Studies, No.14, pp. 271-272, https://src-h.slav.hokudai.ac.jp/coe21/publish/no14_ses/contents.html, 13.03.2021.

³⁶⁸ **Matteo Z., Cassano E.**, Pankisi, the land of the offspring. 17/10/2016. <https://www.balcanicaucasos.org/eng/Areas/Georgia/Pankisi-the-land-of-the-offspring-174711>, 28.02.2021.

³⁶⁹ 2016 թ.-ին Կրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելիին Պանկիսի կիրճ իր այցի ժամանակ հրաժարվեց ընդունել սալաֆիական առաջնորդներին՝ հանդիպելով միայն «ավանդական իսլամի» ներկայացուցիչների հետ: Տե՛ս Islam in Georgia: Policy and integration, p. 16

³⁷⁰ Interview with Mamuka Areshidze. "ISIS" Caucasus Wilayat is fairly dangerous, as fighters that previously went to Syria will stay here and operate in situ." Kviris Palitra. 25 June 2015. See full interview: <http://www.kvirispalitra.ge/politic/25595-qisis-is-kavkasiis-vilaiethi-me>, 13.03.2021.

³⁷¹ YearBook of Muslims in Europe, Editors: Scharbrodt O., Akgönül S., Alibašić A., Nielsen J., and Raciuc E. Volume 7, 2015, p. 254.

³⁷² **Gogvadze G.**, Propaganda of the Islamic Caliphate and the Methods of Recruitment of Georgian Citizens, 2017, p. 8.

Ռ. Բազակաշվիլի, որոնք զոհվեցին Սիրիայում³⁷³) մուսուլմանների անդամակցումն ԻՊ-ին, Պանկիսի իմամի ձերբակալությունը, ով մեղադրվեց ահաբեկչական գաղափարախոսություն տարածելու և զինյալ խմբավորումներին աջակցելու մեջ³⁷⁴, փաստում են, որ կիրճում հետևողական քարոզչական աշխատանքներ են տարվել: Կիրճի Ավագների խորհրդի ներկայացուցիչ Խ. Խանգոշվիլին վկայում է, որ սալաֆիականներն ակտիվորեն աշխատում էին դեռահասների ու դպրոցականների հետ³⁷⁵: Ակտիվ քարոզչության արդյունքում դեռահասները, որոնք հեշտությամբ ընկալում էին սալաֆիական գաղափարները, եռանդուն անդամագրվում էին արմատական շրջանակներին:

Այդուհանդերձ հետազոտությունները փաստում են, որ Վրաստանում սալաֆիականության հետևողներն ունեն հավատքի ազատություն, աղոթում են իրենց մզկիթներում, ուսանում են կրոնական դպրոցներում: Սալաֆիականներն ինքնուրույն են համակարգում իրենց վարչակազմակերպչական գործունեությունը՝ փորձելով համայնքը հնարավորինս տարանջատել ու հեռու պահել Իսլամական պետության ներգործությունից և հավաստում են, որ հետևողական են Կիրճի երիտասարդներին ԻՊ գաղափարական ազդեցությունից զերծ պահելու համար: Նշվում է նաև, որ ԻՊ խմբավորումների զինյալ ահաբեկիչների մեջ Պանկիսի կիրճի սալաֆիական համայնքի ներկայացուցիչների թիվը խիստ սահմանափակ է և չի արտահայտում սալաֆիական համայնքի ու ղեկավարների դիրքորոշումը: Սալաֆիականները փորձում են չհակադրվել Վրաստանի իշխանություններին և ընդհանուր առմամբ պատրաստակամ են՝ աշխատելու պետական կառույցների հետ:

Պանկիսի կիրճում իսլամական արմատականության ծավալման ներքին պատճառներից են նաև չզարգացած ենթակառուցվածքները, իշխանությունների կողմից նախընտրական խոստումների չիրագործումը և տեղական ինքնակառավարման մարմինների պասիվ գործունեությունը, ինչը չի նպաստում համայնքի ինտեգրմանը վրացական հասարակությանը, խորացնում է մեկուսացվածությունը և գաղափարական տարանջատվածությունը: Համայնքում առկա ներքին կրոնական հակասությունները և սաստակցվում են այս իրողությունները: Շատ հաճախ տեղացի մուսուլմանների խնդիրներն ուղղակիորեն անտեսվում են կենտրոնական իշխանությունների կողմից՝ առաջ բերելով վերջիններիս դժգոհությունը և մղելով նրանց այդ խնդիրների լուծման այլ արտաքին հովանավորներ ու միջոցներ փնտրելուն:

«Իսլամի վերածնունդ» Աջարիայում. արտաքին ներգործություն և արմատականության դրսևորումներ

Աջարիայի Ինքնավար Հանրապետությունը Վրաստանի միակ երկրամասն է, որտեղ իսլամադավան հիմնական բնակչությունն էթնիկ վրացիներ են՝ մեծամասնությամբ սուննի հանաֆիական մազհաբի՝ կրոնաիրավական դպրոցի հետևողներ³⁷⁶: Աջարիայի իսլամադավան համայնքն ադրբեջանականից հետո երկրորդ ամենամեծ մուսուլմանական համայնքն է Վրաստանում, որը պարփակ բնակվում է

³⁷³ 18-year-old Muslim Kushtanashvili Died in Syria, 02/10/2017. <https://radioway.ge/news/people/item/538-siriashi-18-xlis-muslim-kushtanashvili-daigupa>, 13.03.2021.

³⁷⁴ Имам из Панкисского ущелья получил в Грузии 14 лет за вербовку для ИГ 07.03.2016, https://www.bbc.com/russian/international/2016/03/160307_georgia_syria_recruiting_sentence, 13.03.2021.

³⁷⁵ Khangoshvili Kh., The Customs and Traditions of Kists, 2015, p. 10.

³⁷⁶ Ըստ 2014 թ. պաշտոնական մարդահամարի՝ շրջանն ունի 333 953 բնակիչ, որի 132 852-ը կամ 39,6% իսլամադավան է, National statistics office of Georgia (Geostat), 2014 General Population Census Main Results General Information, http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf, 21/02/2021:

Բաթումում, Խուլո, Քեդա, Խելվաչաուր, Շուախևի, Քոբուլեթի շրջաններում, ինչպես նաև հարևան Գուրիա և Ջավախքի մարզերում³⁷⁷:

Խորհրդային Միության փլուզումից հետո Թուրքիան փորձեց ակտիվացնել իր ներկայությունը Վրաստանում, ինչն այդ ժամանակ միանշանակ չընկալվեց թե՛ իշխանությունների, թե՛ նորահայտ ազգայնականների և թե՛ մտավորականների շրջանում: Թուրքիայի կողմից տնտեսական ներթափանցման փորձերն այդ տարիներին լուրջ խոչընդոտների բախվեցին՝ արմատական իսլամի ներթափանցման և թուրք գավթիչների հնարավոր վերադարձի սպառնալիքի հիմնավորմամբ: Թուրքիայից հնարավոր վտանգները կանխելու համար նորանկախ Վրաստանի իշխանությունները և Վրաց ուղղափառ եկեղեցին Աջարիայում սաստկացրին ազգայնական ու քրիստոնեական ինքնության գաղափարաբանությունը՝ խթանելով ու խրախուսելով դավանափոխության գործընթացը:

Այդուհանդերձ Թուրքիայի անմիջական ներգրավվածությամբ հնարավոր եղավ մուսուլման աջարների շրջանում կրոնական զարթոնք առաջացնել և համայնքը վերահստեգրել իսլամական համայնքին (ուժմային): Կապեր հաստատվեցին Թուրքիայի և այլ երկրների իսլամական կառույցների միջև, որոնք համակարգում էր Բաթումի մուֆթիաթը՝ իրականացնելով մզկիթների ու մադրասաների վերակառուցում ու վերաբացում, աջար երիտասարդների կրոնական կրթության կազմակերպում ու ֆինանսավորում, իսլամական գրականության տարածում և ինքնության վերաարժևորման ծրագրեր: 1992 թ.-ին 50 մուսուլման աջարների մասնակցությունը Մաքբայում Հաջին սկզբնավորեց «Իսլամական վերածնունդ» Աջարիայում³⁷⁸:

Եթե սալաֆիականության տարածումը Պանկիսում պայմանավորված էր Հյուսիսային Կովկասի պատերազմական իրողություններով, ապա Աջարիայում դրա տարածման սկզբնաղբյուր դարձան արտերկրում կրթություն ստացած երիտասարդները:

Մինչև 2016 թ.-ը Աջարիայում սալաֆիականության մոտ 70 հետևորդ կար³⁷⁹: Ի տարբերություն Պանկիսի կիրճի՝ նրանց չի հաջողվել ձևավորել միասնական համայնք, քանի որ տարրալուծված են ինքնավար հանրապետության տարբեր բնակավայրերում: Այդ է պատճառը, որ նրանք էական գաղափարական ու քարոզչական ազդեցություն չունեն հասարակության վրա: Այդուհանդերձ Աջարիայում Վրաց ուղղափառ եկեղեցու և իշխանությունների վերաքրիստոնեցմանը միտված գործողություններն իրապես խթանում են աջար մուսուլմանների շրջանում իսլամական արմատականության տարածմանը:

Երկուստեք ծայրահեղական մոտեցումներն ու առճակատումն ավելի խորացան Բաթումում երկրորդ մզկիթի կառուցման և այլ բնակավայրերում արդեն գոյություն ունեցող մզկիթներին միևնույն ժամանակ ավելացնելով՝ մուսուլմանների պահանջների արդյունքում: Օգտվելով համացանցի ընձեռած հնարավորություններից՝ մուսուլման վրացիները տասնյակ էջեր են ստեղծել տարբեր սոցիալական հարթակներում և բավականին ագրեսիվ ծայրահեղական կրոնաքաղաքական քարոզչություն են տարածում³⁸⁰, ընգծված իսլամաֆոբիա ձևավորելով վրացական հասարակության

³⁷⁷ **Kahraman A.**, Azeris and Muslim Ajarians in Georgia: The Swing between Tolerance and Alienation. Nationalities Papers, p. 309.

³⁷⁸ **Pelkmans M.**, Religion, Nation and State in Georgia: Christian Expansion in Muslim Ajaria, Journal of Muslim Minority Affairs, 2002, 22 (2), 251-273, p. 262.

³⁷⁹ **Sikharulidze A.I**, Urushadze M, Khmaladze G., Chichinadze R Islam in Georgia: Policy and Integration: Research report, Tbilisi 2016, p.24

³⁸⁰ «Ես սիրում եմ իսլամը», «Ղուրանը վրացերեն», «Ղուրանի նշանակությունը վրացերենով», «Իսլամի հետքերով», «Մուսուլման վրացիներ», «Ես վրացի մուսուլման եմ» «Իսլամի դպրոց», «Հադիս-Վրաստան», «Վրաստանը և իսլամը», «Վրաստանի մուսուլմանների միությունը», «Ես հավատում եմ ճշմարտությանը» տարբեր սոցիալական հարթակների այս խմբերը 2011-2017

շրջանում: 2015 թ.-ի նոյեմբերի 23-ին համացանցում հայտնվեց «Վրացիներին ուղղված հաղորդագրություն» անվամբ տեսաֆիլմը³⁸¹, որում Իսլամական պետության աջար իմամ 22-ամյա Խվիչա Գոբաձեն (2016թ. -ին սպանվեց Սիրիայում) վրացի այլ արմատականների հետ սպառնում էր Վրաստանին³⁸²: Սպառնալիքներով մի քանի տեսանյութեր տարածեց նաև Թամազ Չագալիձեն (Ահմեդ ալ-Ջուրջի)³⁸³: Վերջինս սոցիալական ցանցերից մեկում տեղադրել էր կոչ Մուվահիդ Մուվահիդի անունից և առաջարկել էր իրեն ուղարկել «Իսլամի թշնամիների» ամբողջական անունները, նկարներն ու հասցեները³⁸⁴:

Նույն թվականին ընտանիքի հետ Սիրիայի ահաբեկիչներին միացավ Ծալկայի աջար իմամ Մերման Պայչաձեն, որ սերտ կապեր ուներ վերոնշյալ Թ. Չագալիձեի հետ, որ հերթական մյուս տեսանյութում սպառնում էր. «Ալլահի անունով երդվում եմ, որ դուք անհավատներ ձեր կեղտոտ արյունով պատասխան կտաք ամեն ինչի համար»: Տեսանյութը բավականին լայն արձագանք ունեցավ ինչպես Վրաստանում, այնպես էլ միջազգային լրատվամիջոցներում³⁸⁵:

Դժվար է ասել, թե Սիրիայում ու Իրաքում ահաբեկչական գործողություններին Աջարիայից որքան մուտուլման է մասնակցում: Շատերը ԻՊ-ին միանում են Թուրքիայից, որտեղ մեկնել էին սեզոնային կամ մշտական աշխատանքի: Այս իրողություններն առաջին հերթին վտանգավոր են Վրաստանի համար, որի իշխանություններն աստիճանաբար կորցնում են իրական վերահսկողությունն Աջարիայի նկատմամբ՝ այն աստիճանաբար «հանձնելով» Թուրքիային: Այստեղ կարող է ձևավորվել «արմատականության հարթակ»՝ հարակից տարածքներ անմիջական ներթափանցման հնարավորությամբ: Թուրքիայի և իսլամական տարբեր կազմակերպությունների կողմից ակտիվորեն օգտագործվող Աջարիան կարող է որոշակի զարգացումների դեպքում վերածվել նաև Հայաստանի դեմ «ահաբեկչության օջախի»:

Վրաստանում իսլամական արմատականության զարգացման առանձնահատկությունները և արդի մարտահրավերները

Կովկասի ներառմամբ Իսլամական խալիֆայության ստեղծման տեսլականը լայն տարածում ունի նույնիսկ Վրաստանի մուսուլմանների այն շրջանակներում, որոնք ուղղակիորեն ներգրավված չեն ահաբեկչական կազմակերպությունների գործունեության մեջ: Իսլամիստները խալիֆայությունը ներկայացնում են որպես մուսուլմանների իրավունքների պաշտպանության միակ հնարավոր ձևաչափ և առաջ են

թթ.-ին առավել տարածվածներն էին աջար մուսուլմանների շրջանում՝ լցված իսլամական քարոզությամբ և ծայրեղեղ անհանդուրժողականությամբ: **Асланидзе А.**, К вопросу активизации ислама в Аджарии; Ислам и тюркский мир. проблемы образования, языка, литературы, истории и религии. <https://core.ac.uk/download/pdf/197411088.pdf>.

³⁸¹ "ISIS Threatens Georgia in New Video". 24.11.2015. <http://dfwatch.net/isis-threatens-georgia-in-new-video-39060>, 10.03.2021.

³⁸² Նույն տեղում:

³⁸³ **Chagalidze T.**, "You Will Beg on Your Knees!"—Radical Islamist from Batumi Threatens Georgian Christians. 13.01.2015. <https://www.georgianjournal.ge/society/29310-qyou-will-beg-on-your-kneesq-radical-islamist-from-batumi-threatens-georgian-christians.html>, 13.03.2021.

³⁸⁴ "Send Us Photos, Names and Addresses of the People Who Are Enemies of Islam"—ISIS's New Threat to Georgia? 19.09.2016, (In Georgian). <http://www.kvirispalitra.ge/versia/31526-qmogvatsodeth-mtrebis-misamarthebiq.html>, 13.03.2021.

³⁸⁵ **Крикорян О. Д.**, Идентификация угрозы Исламского государства для Грузии, 08.02.2016, <https://iwpr.net/ru/global-voices/identifikaciya-ugrozy-islamskogo-gosudarstva-dlya-gruzii>, 11.03.2021.

տանում այն գաղափարը, որ իսլամական իրական բարբերը հնարավոր են միայն խալիֆայության կազմում³⁸⁶:

Արմատական քարոզիչներն ուղղակիորեն քաջալերում են Վրաստանի քաղաքացիների ներգրավումը սիրիական ահաբեկչական խմբավորումներում՝ նրանց անվանելով «հավատքի և արդարության մարտիկներ», որոնք պատրաստ են զոհվել հանուն սրբազան պատերազմի՝ ջիհադի:

Իսլամիստների կողմից Վրաստանի տարածքը որպես տարանցիկ, Ռուսաստանից և Կենտրոնական Ասիայից Թուրքիա, ապա՝ Սիրիա³⁸⁷ օգտագործումը նույնպես լրջագույն սպառնալիք է տարածաշրջանի անվտանգային միջավայրի համար: Ռուսաստանի Դաշնությունը, պարբերաբար օգտագործելով Վրաստանում իսլամական արմատականության ծավալման վտանգը, մեղադրելով պաշտոնական Թբիլիսիին ահաբեկիչներին ապաստան ու տարանցիկ ուղի տրամադրելու մեջ³⁸⁸, դիվանագիտական ճնշումներ է կիրառում վերջինիս նկատմամբ³⁸⁹: Ռուսական հատուկ ծառայությունները և արտաքին գերատեսչությանների ներկայացուցիչները բազմիցս խոսել են Պանկիսի կիրճից հնարավոր ահաբեկչական վտանգների տարածման մասին³⁹⁰:

Այդուհանդերձ Մերձավոր Արևելքում ԻՊ դիրքերի թուլացումից հետո վտանգ կար, որ Վրաստանից մեկնած ահաբեկիչները կարող են վերադառնալ և հաստատվել այդտեղ: Վրաստանը, լինելով հակաահաբեկչական տարբեր կոալիցիաների անդամ, գտնվում է նաև ահաբեկչական կազմակերպությունների հարձակման թիրախում՝ համացանցում պարբերաբար տարածվող սպառնալիքներով³⁹¹:

Սիրիայի և Իրաքի ահաբեկչական գործընթացների ազդակները Վրաստանում արտացոլվեցին, երբ 2013 թ.-ի սեպտեմբերի 13-ին Վրաստանի Ներքին գործերի նախարարությունը հայտարարություն տարածեց Փրիուզ Ցուլուկիձեի, Թեմուր Բախունտարիձեի և Էթնիկ չեչեն Ռուսաստանի քաղաքացի Ցուսուպ Լականի ձերբակալության մասին: Ցուլուկիձեն, Բախունտարիձեի և Լականի աջակցությամբ պլանավորել էր օտարերկրացի զինյալին անօրինաբար Վրաստանի սահմանով անցկացնել Թուրքիա: Լականը, սահմանային անցակետում անձը հաստատող փաստաթղթի ներկայացման պահանջին ի պատասխան՝ կրակեց ոստիկանների ուղղությամբ³⁹²: Ձերբակալությունից հետո հաստատվեց նրանց անդամակցությունը ԻՊ-ին³⁹³:

³⁸⁶ **Omsarashvili G.**, Radical Islamism in Georgia, Philosophy Study, February 2018, Vol. 8, No. 2, pp. 78-86.

³⁸⁷ **Gunaratna R., Kam S.**, Handbook of Terrorism in the Asia-Pacific. Imperial Collage Press, 2016, p. 446. Այս մասին 2016 թ.-ին հաղորդում էր թուրքական Միլլիթթ պարբերականը՝ հղում կատարելով հատուկ ծառայություններին. "ISIL Transfers Suicide Bombers from Syria to Europe through Azerbaijan, Cyprus, Georgia: Report". 11.07.2016. <https://www.hurriyetdailynews.com/isil-transfers-suicide-bombers-from-syria-to-europe-through-azerbaijan-cyprus-georgia-report-101451>, 13.03.2021.

³⁸⁸ Roots of Violent Radicalization: Nineteenth Report of Session 2010-2012, Volume I. Great Britain: Parliament: House of Commons: Home Affairs Committee, 2012, p. 127.

³⁸⁹ **Fawn R.**, Realignments in Russian Foreign Policy, 2005, p. 140.

³⁹⁰ Russia: ISIL Training Base Located in Georgia's Pankisi. 26.01.2016., <http://www.aljazeera.com/news/2016/01/russia-isil-training-base-georgia-pankisi-160126131853851.html>, 13.03.2021.

³⁹¹ Islamic Caliphate Threatens Georgia as well. 16.11.2015, <https://www.amerikiskhama.com/a/islamic-state-threatens-georgia-too/3059802.html>, 13.03.2021.

³⁹² "Russian Prosecutor Asks Georgia to Extradite Murder Suspect." 05.11.2013., <http://dfwatch.net/russian-prosecutor-asks-georgia-to-extradite-murder-suspect-80138-23894>, 13.03.2021.

³⁹³ Նույն տեղում:

ԻՊ աջակից վրացի ծայրահեղականներն ակտիվ գործունեություն են ծավալում Վրաստանի համացանցային տիրույթում. ստեղծել է խալիֆայության վրացական տեղեկատվական կայք՝ <https://xalifati.wordpress.com> և, ինչպես արդեն նշել ենք, բաց ու փակ խմբեր սոցիալական տարբեր հարթակներում: Երբ արմատականների գործունեությունը տեղափոխվեց հիմնականում համացանցային տիրույթ, նրանց նկատմամբ Վրաստանի Հակահարեկչական կենտրոնի հսկողությունը խստացվեց:

2015 թ.-ի դեկտեմբերին Հակահարեկչական կենտրոնը իրականացրած հետախուզական աշխատանքների արդյունքում Պանկիսի կիրճում, Գուրիայում և Աջարիայում մի շարք քաղաքացիների մեղադրեց ահաբեկչական կազմակերպություններին անդամակցելու կամ աջակցելու մեջ³⁹⁴: Որպես ԻՊ անդամ ձերբակալվեց իմամ Ժուկոյ Ա. Բորչաշվիլին³⁹⁵, իսկ Ջ. Կուլարավան, Ջ. Խուլտունիշվիլին և Դ. Ֆիրիսեբիան, որոնք մուսուլմաններ չէին, մեղադրվեցին ահաբեկչական գործողություններին աջակցելու մեջ³⁹⁶:

Այդ կառույցի տվյալների համաձայն՝ 2015 թ.-ին Վրաստանի մոտ 50 քաղաքացի³⁹⁷ (հիմնականում Պանկիսի կիրճից, Աջարիայից և Վրաստանի արևելյան շրջաններից, որտեղ բնակվում են էթնիկ ադրբեջանցիներ) մեկնել են Սիրիա և Իրաք՝ անդամակցելու տարբեր ահաբեկչական գործողությունների³⁹⁸: Նրանցից 26-ը զոհվել է հակամարտության ընթացքում³⁹⁹:

Հակահարեկչական կենտրոնը 2016 թ.-ի հուլիսին Դուկիսի գյուղի բնակիչ Վ. Խանգոշվիլին մեղադրեց ահաբեկչությանը սատարելու մեջ՝ Դաու Լևակի օգտատիրոջ անվամբ համացանցում ահաբեկչական սպառնալիքներ տարածելու համար⁴⁰⁰:

Պանկիսի կիրճից ահաբեկչական տարբեր գործողություններում ակտիվորեն ներգրավված զինյալներից են Թարխան Բատիրաշվիլին (Աբու Օմար ալ-Շիշանի), որ ԻՊ գլխավոր հրամանատարներից էր⁴⁰¹, Ջիրոջի Կուլտանաշվիլին, Փախուկ Մարգոշվիլին (Սալահ ադ-Դին ալ-Շիշանի)⁴⁰², Ռուսլամ Մաչալիկաշվիլին (Սեյֆուլ Շիշանի) և այլք⁴⁰³:

³⁹⁴ “Counterterrorism Centre under the State Security Service of Georgia Detained 4 Persons.” 01.12.2015., <https://sbg.gov.ge/en/news/73/Counterterrorism-Center-under-the-State-Security-Service-of-Georgia-detained-4-persons>, 13.03.2021.

³⁹⁵ Tsereteli G., Alleged IS Recruiter Arrested in Georgia’s Pankisi Gorge, 22.06.2015, <https://jamestown.org/alleged-is-recruiter-arrested-in-georgias-pankisi-gorge/>, 13.03.2021.

³⁹⁶ “The Court Found A. Borchashvili and Three Persons Guilty.” 03.07.2016. http://old.pog.gov.ge/eng/news?info_id=881 (13.03.2021), The Court Found Ayuph Borchashvili and Three Persons Guilty.03.07.2016. http://old.pog.gov.ge/eng/news?info_id=881, 13.03.2021.

³⁹⁷ Որոշ հետազոտողներ նշում են մինչև 200 վրացի զինյալների մասին, որոնք կռվում են ԻՊ տարբեր զինված խմբավորումներում: Մանրամասն տե՛ս՝ **Գրիգորյան Ս.** Իսլամական արմատականությունը Կովկասում, Երևան, 2017, էջ 96:

³⁹⁸ **Khutsishvili I.**, The directions of Economic Intelligence and Counter-Intelligence, Scientific and practical cyber security journal (SPCSJ), 4(2), pp. 72-84. <https://journal.scsa.ge/papers/the-directions-of-economic-intelligence-and-counter-intelligence/>, 13.03.2021.

³⁹⁹ Giorgi Margoshvili (Faizula Kushtanashvili) from Pankisi Died in Syria.18.12.2017., <http://radioway.ge/news/people/item/627-siriashi-pankisel-giorgi-margoshvili-peizula-kushtanashvili-daigupa>, (13.03.2021), Georgia: The Situation of the Kist Community and the Chechens, Joint Report by the Danish Immigration Service and the Danish Refugee Council, November, 2018, pp. 8-12, <https://www.justice.gov/eoir/page/file/1309611/download>, 13.03.2021.

⁴⁰⁰ “Counterterrorism Centre under State Security Service of Georgia Detained One Person.” 30.07.2016., <http://sbg.gov.ge/en/news/156/Counterterrorism-Center-under-State-Security-Service-of-Georgia-Detained-One-Person>, 13.03.2021.

⁴⁰¹ **Williams B. G.**, “Inferno in Chechnya: The Russian-Chechen Wars, the Al Qaeda Myth, and the Boston Marathon Bombings”, 2015, p. 224.

⁴⁰² “Al-Qaeda Commander from Pankisi Reported Dead in Syria.” 18.12.2017, <http://dfwatch.net/al-qaeda-commander-pankisi-reported-dead-syria-49623>, 13.03.2021.

2017 թ.-ի նոյեմբերին Կրաստանում հակահարեկչական անենահայտնի գործողության արդյունքում Թբիլիսիում սպանվեցին Իսլամական պետության անդամներ Ահմեդ Չատանը (Ահմեդ ալ-Շիշանի) և նրա 3 զինյալները⁴⁰⁴: Կրաստանի դատախազության հրապարակման համաձայն՝ Չատանը պահանջել էր ազատ արձակել 2015 թ.-ին ձերբակալված Կրաստանի քաղաքացի իսլամիստներին և սպառնացել իրականացնել ահաբեկչական գործողություններ⁴⁰⁵: ԱՄՆ հետախուզական վարչության տվյալների համաձայն՝ Ահմեդ Չատանը ներառված է միջազգային ահաբեկիչների ցուցակում⁴⁰⁶: Չատանի անունը կապվում է նաև Ստամբուլի Աթաթուրքի անվան օդանավակայանում պայթյուն կազմակերպելու և իրականացնելու հետ⁴⁰⁷: 2017 թ.-ի դեկտեմբերի 26-ին Կրաստանի ԱԱԾ հակահարեկչական կենտրոնը հայտարարեց Չատանի խմբավորման հետ կապված Կրաստանի հինգ քաղաքացու ձերբակալության մասին, որոնք կասկածվում էին ահաբեկչական գործողությունների համար ֆինանսական և այլ աջակցություն տրամադրելու մեջ: ԱԱԾ հրապարակմամբ՝ Չատանն ու նրա աջակիցները պլանավորել էին ահաբեկչական գործողություններ իրականացնել Կրաստանում և Թուրքիայում գործող տարբեր դիվանագիտական ներկայացուցչությունների դեմ⁴⁰⁸:

Իսլամական ծայրահեղականության դեմ պայքարում Կրաստանի իշխանությունների առաջին քայլերից էր նաև երկրի քրեական օրենսգրքում մի քանի կարևոր հոդվածների ավելացումը⁴⁰⁹: Ջրեական օրենսգրքի խստացմանը զուգահեռ՝ Կրաստանի իշխանությունները փորձում են նաև խստացնել իրավիճակը սահմանի երկայնքով՝ իսլամիստների հետ առնչություն ունեցող անձանց մուտքը Կրաստան թույլ չտալու, իսկ կասկածելի անձանց հաշվառելու և հսկողության տակ պահելու համար: Կրաստանը միջազգային գործընկերների հետ իրականացնում է ինֆորմացիայի ակտիվ փոխանակում: Ահաբեկչության դեմ պայքարի Կրաստանի ջանքերը դրական են գնահատվում ԱՄՆ պետդեպարտամենտի զեկույցներում⁴¹⁰:

⁴⁰³ Georgia: The Situation of the Kist Community and the Chechens, Joint Report by the Danish Immigration Service and the Danish Refugee Council, November, 2018, pp. 8-12, <https://www.justice.gov/eoir/page/file/1309611/download>, 13.03.2021.

⁴⁰⁴ “Wanted Chechen Is Jihadist Chatayev Killed in Georgia Siege.” 01.12.2017., <http://www.bbc.com/news/world-europe-42193273>, 13.03.2021.

⁴⁰⁵ Նույն տեղում:

⁴⁰⁶ “Counter Terrorism Designation.” 10/5/2015. <https://www.treasury.gov/resource-center/sanctions/OFAC-Enforcement/Pages/20151005.aspx>, 13.03.2021.

⁴⁰⁷ “Chatayev: The Man Suspected of the Attack in Istanbul.” 02.07.2016., <https://www.dw.com/en/chatayev-the-man-suspected-of-the-attack-in-istanbul/a-19373830> (13.03.2021)

⁴⁰⁸ ISIS Threatens Georgia in New Video. 24.11.2015. <https://dfwatch.net/isis-threatens-georgia-in-new-video-39060>, 13.03.2021.

⁴⁰⁹ Կրաստանի քրեական օրենսգրքի 3232 հոդվածի (մասնակցություն միջազգային ահաբեկչությանը) համաձայն՝ միջազգային ահաբեկչությանը մասնակցությունը և/կամ զինված աջակցության ցուցաբերումը օտար երկրին կամ այդ երկրի իշխանությանը, մարդկանց խմբին կան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնք մեղադրվում են ահաբեկչության մեջ, ենթական 12-ից 17 տարվա ազատազրկման: Այլ հոդվածների մասին մակրամասն տե՛ս The Law of Georgia on Making Changes to the Criminal Code of Georgia, Entry into Force. 04/04/2014., <https://matsne.gov.ge/ka/document/view/2319468?publication=0>, 13.03.2021.

⁴¹⁰ U.S. Department of State, Bureau of Counterterrorism, Country Reports on Terrorism_ 2016, Chapter 2, Country Reports: Europe, July 2017. <https://www.state.gov/reports/country-reports-on-terrorism-2016/>, 13.03.2021.

Տվյալներ կան, որ այսօր էլ Սիրիայում ահաբեկչական գործողություն են իրականացնում Մուրադ Մարգոշվիլին (Աբու Վալիդ Ալ-Շիշանի)⁴¹¹ և Ադամ (Գուրամ) Գումաշվիլին, որոնք ծայնային հաղորդագրություններ էին հղել համազուլաղահներին և կոչ արել միանալ ԻՊ-ին⁴¹²:

Իսլամական արմատականության երևույթներ տեսանելի են նաև Թբիլիսիի Պոնիչալա մուսուլմանաբնակ շրջանում, որտեղ բնակիչներից մեկը նույնպես մեկնել էր Սիրիա⁴¹³: Պոնիչալայի սալաֆիական համայնքի իմամը, սակայն, հակառակ դիրքորոշում ունի. նա կարծում է, որ «իսլամական արմատականները սպառնալիք են ոչ միայն քրիստոնյաների և ուրիշ կրոններ դավանողների համար, այլ նաև հենց իսլամի, քանի որ հանցանք են գործում «հանուն» իսլամի⁴¹⁴:

Արմատական իսլամի դրսևորումներ նկատվում են նույնիսկ Վրաստանի էթնիկ ադրբեջանցիների շրջանում, որոնք թեև շիաներ են, սակայն հակված են սալաֆիականության և իսլամական ծայրահեղականության: Նպատակաուղղված քարոզչական աշխատանք է իրականացվում ադրբեջանաբնակ համայնքներում՝ հավատացյալներին արմատականության ու ահաբեկչական գործունեության մեջ ընդգրկելու համար: Սալաֆի ոչ վրացի հոգևորականներն իրականացնում են ոչ միայն կրոնական, այլև իսլամագիտության հետ առնչություն չունեցող զաղափարական քարոզչություն՝ օգտագործելով արտերկրում տպված կրոնական գրականություն, որն ազատորեն տարածվում է Վրաստանում⁴¹⁵: Վերոնշյալ ակտիվ քարոզչության արդյունքում առաջին երկու կանայք, որոնք Վրաստանից միացան Սիրիայի ահաբեկիչներին, էթնիկ ադրբեջանական Քարաջալա գյուղից էին⁴¹⁶: Այդտեղից էր նաև բժիշկ Բ. Մուխթարովը, որ 2016 թ.-ին պայթյունի հետևանքով զոհվեց Սիրիայում⁴¹⁷:

Այս շրջաններում արձանագրվեցին դեպքեր, երբ սալաֆի իմամները նույնիսկ կտրում էին զոհերի մատները՝ հղում կատարելով Շարիաթի՝ իրենց համար ընդունելի մեկնություն⁴¹⁸:

Վրաստանի ադրբեջանական փոքրամասնության համար ևս արմատականությունն ինքնադրսևորման և համայնքի «ավանդական իսլամի» նորմերից տարանջատվելու միջոց է, քանի որ համայնքն այդ «ավանդական իսլամի միջոցով» կապված է վրացական պետությանը, նրա քաղաքական ինստիտուտներին, որոնք մերժում են վրացական ազգային ինքնության համատեղելիությունը մուսուլմանական ինքնության հետ:

⁴¹¹ Մ. Մարգոշվիլին Ջունդ ալ-Շամի նախկին ղեկավարներից է, որն անցյալում մասնակցել է չեչենական երկու պատերազմներին և պատասխանատու էր չեչեն և արաբ ահաբեկիչների միջև կապերի հաստատման համար:

⁴¹² Guram (Adam) Gumashvili's liquidation is not yet confirmed in Pankisi., <https://reginfo.ge/people/item/3869-guram-adam-gumashvilis-likvidazias-pankisshi-am-dromde-ar-adastureben>, 13.03.2021.

⁴¹³ “The Interview with Kamil Mamedov, the Imam of Peaceful Salafist Community in Ponichala”, 16.04.2016. Տե՛ս Omsarashvili G., Radical islam in Georgia, Philosophy Study, February 2018, Vol. 8, No. 2, pp. 78-86.

⁴¹⁴ Նույն տեղում:

⁴¹⁵ **Aslanadze A.**, Islam and Modern Era (In Georgian), Tbilisi, 2013, p. 128.

⁴¹⁶ Ի. Դարիբովան և Ա. Սուլեյմանովան Թուրքիայով անցել էին Սիրիա, Ա. Գարիբովան ներառված է Իստերպոլի ցուցակում և մեղադրվում է ահաբեկչական գործունեություն իրականացնելու մեջ: “Karajala Residents Report 5 More Women Plan to Move to Syria.” 20.05.2015. <http://www.humanrights.ge/index.php?a=main&pid=18286&lang=eng>, 13.03.2021.

⁴¹⁷ Georgian's Death on Syria Battlefield Shows Jihadist Lure, 07.03.2016, <https://www.voanews.com/europe/georgians-death-syria-battlefield-shows-jihadist-lure>, 13.03.2021.

⁴¹⁸ Крикорян О. Д., նշվ. աշխ.

Ակնհայտ է, որ ծայրահեղական սուննի իսլամական գաղափարախոսության ծավալումն այս շրջաններում հանգեցնում է շիայական ավանդական իսլամի նահանջի: Այս երևույթը, բնականաբար, ազդում է ոչ միայն տարածաշրջանի կրոնական քարտեզի վրա, այլև փոխում է առկա աշխարհաբաղաբանական ուժային հարաբերակցությունը: Թուրքիան, օգտագործելով նաև իսլամական գործիքակազմը, հետևողականորեն դուրս է մղում Իրանին Վրաստանի էթնիկ ադրբեջանաբնակ շրջաններից՝ Հայաստանի շուրջ սեղմելով ծայրահեղ իսլամական արմատականության օղակը:

Եզրակացություն

2020թ.-ի Արցախյան պատերազմի արդյունքում ադրբեջանական վերահսկողության տակ անցած շրջաններում Թուրքիայի՝ սուննի ահաբեկչական տարրով (գերազանցապես թուրքմեններ) վերաբնակեցման ծրագրերն էապես նպաստելու են տարբեր իսլամական ուժերի ու դերակատարների ակտիվացմանը՝ խաթարելով տարածաշրջանում առկա հավասարակշռությունը: Այս տեսանկյունից առանձնակի կարևորություն է ստանում տարածաշրջանի՝ տվյալ դեպքում Վրաստանի իսլամադավան համայնքների ուսումնասիրությունը, որոնք կարող են կամրջել ավանդական իսլամական կրոնամշակութային արժեհամակարգերը և դառնալ գործիք՝ ծայրահեղական իսլամի՝ տարածաշրջան ներթափանցման համար:

Չեչենական երկրորդ պատերազմից սկսած (1999-2000 թթ.) սուննիական իսլամի սալաֆիական ուղղությունը լայն տարածում գտավ Պանկիսի կիրճում: Սալաֆիականությունը ներթափանցեց հիմնականում Չեչնիայի Հանրապետությունից և արաբական մի շարք երկրներից: Մասնագիտական առաջխաղացման և սոցիալական ինտեգրման հնարավորությունների սակավությունը, երկրում կրթության ցածր որակը, ինչպես նաև մեկուսացվածությունը Վրաստանի այլ շրջաններից ստիպեցին տեղացի երիտասարդներին հակվել դեպի սալաֆիական իսլամը՝ որպես ինքնադրսևորման և ինքնարտահայտման հնարավոր միջոցի:

Սալաֆիականության արագ տարածումը Պանկիսի կիրճում պայմանավորված է ոչ միայն արտաքին գործոններով, այլև «ավանդական իսլամի» թույլ դրսևորվամբ: Ավանդական իսլամական հոգևորականների կրթական շեմը և հմտությունները ցածր մակարդակի վրա են, և շատ հաճախ կրոնական կրթություն չստացած անձինք դառնում են մզկիթներում իմամներ: Ըստ սալաֆիականների՝ Կիրճի «ավանդական իսլամը» հիմնվում է Հյուսիսային Կովկասի ավանդույթների ու սովորույթների վրա և հեռու է Ղուրանի վրա հիմնված «անաղարտ», «իրական» իսլամից:

2011 թ.-ին Սիրիայում զինված հակամարտությունը և 2014 թ.-ին Իրաքի ու Սիրիայի Իսլամական պետության կազմավորումը (ԻՊ) մեծապես նպաստեցին սալաֆիական գաղափարների ծավալմանը Վրաստանում: Այս իրողությունը Վրաստանի իշխանությունները երկրի անվտանգության իրական սպառնալիք են համարում:

Վրաստանի իշխանությունները հետզհետե կորցնում են իրական վերահսկողությունն Աջարիայի նկատմամբ՝ այն աստիճանաբար «հանձնելով» Թուրքիային: Այստեղ կարող է ձևավորվել «արմատականության հարթակ»՝ երկրի շիայաբնակ տարածքներ անմիջական ներթափանցման հնարավորությամբ: Թուրքիայի և իսլամական տարբեր կազմակերպությունների կողմից ակտիվորեն օգտագործվող Աջարիան որոշակի զարգացումների դեպքում կարող է վերածվել նաև Հայաստանի դեմ «ահաբեկչության օջախի»:

Արմատականացման խնդիրն առկա է նաև երկրում բնակվող էթնիկ ադրբեջանցիներին, որոնք թեև շիաներ են, սակայն հակված են սալաֆիականությանն ու սուննի իսլամական արմատականությանը: Ակնհայտ է, որ ծայրահեղական սուննի իսլամական գաղափարախոսության ծավալումն այս շրջաններում հանգեցնում է շիայական ավանդական իսլամի նահանջի: Այս երևույթը, բնականաբար, ազդում է ոչ

միայն տարածաշրջանի կրոնական քարտեզի վրա, այլև փոխում է առկա աշխարհաբանական ուժային հարաբերակցությունը:

Թուրքիան, օգտագործելով նաև իսլամական գործիքակազմը, հետևողականորեն դուրս է մղում Իրանին Վրաստանի էթնիկ ադրբեջանաբնակ շրջաններից՝ Հայաստանի շուրջ սեղմելով ծայրահեղ իսլամական արմատականության օղակը:

RADIACAL ISLAM IN GEORGIA: NEW TRENDS AND CHALLENGES

LILIT HARUTYUNYAN

*Institute of Oriental Studies, NAS RA, Department of Arab Countries, Head,
Ph.D., Leading Research Fellow;
Yerevan State University, Faculty of Oriental Studies, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

TATEVIK MANUKYAN

*NAS RA, Institute of Oriental Studies, Department of Turkey, Researcher;
Yerevan State University, Faculty of Oriental Studies, Lecturer,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the paper is to study the main features and tendencies of Salafi Islam and Islamic radicalism in Georgia, to identify the threats and challenges facing Georgia as well as the region.

The objectives of the article are to discuss the internal and external motives and impulses, preconditions and consequences of the spread of Sunni radical Islam in the Muslim communities of Georgia, the issues of their integration into the Georgian society, the causes and consequences of the propaganda of Salafism and Sunni Islamic radicalism among the ethnic Shi'i Azerbaijanis of Georgia.

The paper was written on the basis of monitoring of the international press and materials on this topic, an extensive study of professional literature on various sides of Radical Islam in Georgia.

In the course of the study, the authors concluded that the spread of Salafism and radical Islam in Georgia poses a serious threat not only to Georgia, but also to the security environment of the region. The Georgian authorities are losing real control over Adjara, gradually "handing it over" to Turkey. Therefore, a "platform of radicalism" can be formed here with the possibility of direct penetration into the surrounding areas. Adjara, which is actively used by various Turkish Islamic organizations, may also become a "hotbed of terrorism" against Armenia in the event of certain developments.

The spread of radical Sunni Islamic ideology in the Azerbaijani-populated regions of Georgia is leading to the retreat of traditional Shi'i Islam. This phenomenon, of course, affects not only the religious map of the region, but also changes the existing geopolitical balance of power. Turkey, using its Islamic tools, is consistently pushing Iran out of Georgia's ethnic Azerbaijani-populated regions, squeezing the circle of Islamic radicalism around Armenia.

Keywords: *Georgia, Pankisi Gorge, Adjara, Islamic Radicalism, Salafism, Islamic State (ISIS).*

ИСЛАМСКИЙ РАДИКАЛИЗМ В ГРУЗИИ: НОВЫЕ ТЕНДЕНЦИИ И ВЫЗОВЫ

ЛИЛИТ АРУТЮНЯН

*ведущий научный сотрудник и
заведующая отделом арабских стран
Института востоковедения НАН РА,
доцент факультета востоковедения ЕГУ,
кандидат исторических наук,
г. Ереван, Республика Армения*

ТАТЕВИК МАНУКЯН

*научный сотрудник отдела Турции
Института востоковедения НАН РА,
преподаватель факультета востоковедения ЕГУ,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи - изучение основных особенностей и тенденций развития исламского радикализма в Грузии исходящих от него угроз и вызовов, с которыми сталкивается Грузия. Связанные с исламским радикализмом реалии оказывают прямое влияние на систему безопасности региона в целом, и на Армению в частности.

Задачи статьи - исследование причин распространения идей создания халифата Исламского государства (ИГ) среди грузинских мусульман и принадлежности некоторых мусульманских кругов Грузии к ИГ, выявление особенностей Панкисского ущелья и суннитских исламских общин Аджарии, проблемы их интеграции в грузинское общество, предпосылки и последствия распространения исламского радикализма в этих регионах, а также целевой пропаганды салафизма, суннитского исламского экстремизма среди этнических азербайджанцев-шиитов Грузии.

В ходе исследования авторы пришли к выводу о том, что салафитское направление суннитского ислама получило широкое распространение в Грузии, проникая в основном из Чеченской Республики и ряда арабских стран. Отсутствие возможностей для профессионального роста и социальной интеграции, низкое качество образования в стране, а также изоляция от других частей Грузии вынудили местную молодежь обратиться в салафитский ислам, что стало средством самовыражения. Распространение салафизма в Грузии связано не только со внешними факторами, но и со слабым проявлением «традиционного ислама».

Власти Грузии стали терять реальный контроль над Аджарией, постепенно «передавая» ее Турции. Проблема радикализации также связана и с проживающими в стране этническими азербайджанцами, несмотря на то, что они шииты, некоторые из них склонны к салафизму и суннитскому исламскому радикализму. Здесь может быть создана «платформа радикализма» с возможным прямым проникновением в сопредельные с Арменией населенные шиитами районы страны.

Это явление, безусловно, влияет не только на всю религиозную карту региона, но и меняет существующий геополитический баланс сил. Турция, используя исламский инструментарий, последовательно вытесняет Иран из регионов Грузии, населенных этническими азербайджанцами, сжимая вокруг Армении дугу исламского радикализма.

Ключевые слова: *Грузия, Панкисское ущелье, Аджария, исламский радикализм, салафизм, Исламское Государство (ИГ).*

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆԿԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՐԱՐԱՏԱՌ ՖՈՆԴԻ ԹԻՎ 1713 ԵՎ ՍԱՌԻԴ ԹԱԳԱՎՈՐ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԹԻՎ 6770 ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ ԱՌԿԱ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ***

ՀՏԴ 0.01.011/016

DOI: [10.52063/25792652-2021.1-136](https://doi.org/10.52063/25792652-2021.1-136)

ՎԱՅԵ ՀԱԿՈԲՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի
արաբագիտության ամբիոնի ասիստենտ և ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
vahe.hakobyan@yahoo.com*

Հոդվածի նպատակն է վերլուծել նշանավոր մուսուլման կրոնաիրավագետ (ով նաև հանդիսանում է հանաֆիական մազհաբի⁴¹⁹ ներկայացուցիչ) Իբրահիմ իբն Մուհամմադ իբն Իբրահիմ ալ-Հալաբիի “Multaqa al-ābḥur” («Ծովերի միաձուլում») աշխատության՝ երկու տարբեր գրիչների կողմից գրված ձեռագիր տարբերակները: Նպատակից բխող խնդիրներն են՝ ուսումնասիրել Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան, այսուհետ՝ ՄՄ) արաբական բաժնում պահվող “Multaqa al-ābḥur” («Ծովերի միաձուլում») աշխատության համանուն ձեռագիր տարբերակը (թիվ 1713) և Սաուդ թագավոր համալսարանում⁴²⁰ պահվող վերոգրյալ աշխատության նույնանուն ձեռագիր տարբերակը (թիվ 6770) և ներկայացնել դրանցում առկա մեկնաբանությունների ու ծանոթագրությունների համեմատական բնութագիրը:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են համալիր և համակարգային ուսումնասիրության մեթոդը, համեմատական վերլուծության ու համադրման մեթոդները:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ երկու ձեռագրերի մեկնաբանությունների ու ծանոթագրությունների հատվածում կան հստակ ու պարզորոշ տարբերություններ: Կան գլուխներ ու ենթագլուխներ, որոնցում մեկնաբանություն կատարողները ընդհանրապես մեկնաբանություն չեն կատարել: Հիմնականում մեկնաբանված են այն հատվածները, որոնք մեկնաբանություն կատարողների կողմից համարվել են դժվարըմբռնելի ձեռագիր ընթերցողների համար:

Հիմնաբառեր՝ հանաֆիական մազհաբ, «Ծովերի միաձուլում», գլուխ, ձեռագիր, համեմատություն, գրիչ, մուսուլմանական իրավունք, մեկնաբանություն, Էջ, հիշատակարան:

* Հոդվածը ներկայացվել է 16.01.2021թ., գրախոսվել՝ 01.02.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

⁴¹⁹ Մազհաբ (maghab) բառն ասբերենից թարգմանաբար նշանակում է ուղի, ուսմունք կամ դոկտրինա, որին պետք է հետևի մուսուլմանը:

⁴²⁰ Օրինակը Սաուդ թագավոր համալսարանի գրադարանի (այսուհետ՝ ՍԹՀ) 6770 համարի տակ պահվող ձեռագիրն է, որը մեզ հասանելի է դարձել Ալ-Մուստաֆա Էլեկտրոնային գրադարանի միջոցով, որի կողմից էլ թվայնացվել է այդ օրինակը: Գրադարանը աշխարհի տարբեր գրադարաններում պահվող իսլամական ձեռագրերի լուսաձրված ֆոնդ է ստեղծել:

Ներածություն

Հանաֆիական մազհաբի կարկառուն ներկայացուցիչ Իբրահիմ իբն ալ-Հալաբին⁴²¹ ծնվել է Հալեպ քաղաքում հիջրայի 864/1460 մ.թ թվականին: Սկզբնական կրոնական կրթությունը ստացել է ծննդավայրում: Հիմնական կրթությանը զուգահեռ մասնակցել է տարբեր դասալսումների Դամասկոս քաղաքում: Նա ուսանել է մի շարք նշանավոր գիտնականների մոտ, որոնցից հայտնի էին Բուրհան ալ-Բուհարավին, Աբու Դահիր իբն ալ-Հաֆիզ Բուրհան ալ-Դին իբն ալ-Քուֆը, ինչպես նաև ուսանել է հայտնի գիտնական Ջալալ ալ-Դին ալ-Սուլուտի (911/1505) մոտ, որ հայտնի էր Ղուրանի և հադիսների մեկնություններով: Այս ամենի արդյունքում Ալ-Հալաբին Հալեպ քաղաքում վաստակեց առաջատար ֆակիհի համբավ: Իսլամական գիտությունների բնագավառում առավել խորն ուսումնասիրություն կատարելու նպատակով 15-րդ դարի վերջին նա տեղափոխվեց Մամլուքյան Սուլթանության մայրաքաղաք Կահիրե: Օսմանյան կայսրության կողմից Սիրիան գրավելուց հետո վերջինս տեղափոխվել է Ստամբուլ, որտեղ էլ 1549 թվականին կնքել է մահկանացուն: Սերտ հարաբերություններ ունենալով Ստամբուլի մի շարք դպրոցների ուսուցիչ Սա'դի Հալաբիի հետ⁴²² Ալ-Հալաբին նշանակվեց «ընթերցողների տան» (دار القراء) (dār al-qurra')⁴²³ ուսուցիչ, որը հիմնադրվել էր մուֆթի⁴²⁴ Սա'դի Հալաբիի կողմից 1539 թվականին: Նա դասավանդեց այդ դպրոցում մինչ իր մահը: Ստամբուլում իբն ալ-Հալաբին գրել ու հրատարակել է իր ամենահայտնի «Multaqā al-ābḥur»⁴²⁵ աշխատությունը: Նա արաբական գիտությունների, Ղուրանի ընթերցման եղանակների, մեկնությունների և հադիսագիտության գիտակ էր: Ծանոթանալով Ալ-Հալաբիի մասնագիտական գործունեությանը՝ կարելի է պատկերացում կազմել տվյալ ժամանակաշրջանի իսլամական մտավոր կյանքի մասին: Չնայած այն հանգամանքին, որ Ալ-Հալաբին հանաֆիական ուղղության հետևորդ էր, այնուհանդերձ նա բավականին հանդուրժողական վերաբերմունք ուներ այլ ուղղությունների նկատմամբ և երբեմն թույլատրում էր հանաֆիական ուղղությանը չպատկանող ծեսեր իրականացնել՝ հաճախ նաև հղում կատարելով մյուս դպրոցների գիտնականներին: Ինչպես նշվեց, Ալ-Հալաբիի ամենահայտնի աշխատությունը «Multaqā al-ābḥur» («Ծովերի միաձուլում») աշխատությունն է: Աշխատությունը ժամանակի կրոնաիրավական բնույթի լավագույն աշխատություններից էր և հանդիսացել է հանաֆիական մազհաբի ձեռնարկներից մեկը: Աշխատությունը բովանդակալից է և գրված է պարզ ոճով՝ պարունակելով դրույթներ մարդու գործունեության գրեթե բոլոր ոլորտների վերաբերյալ՝ ներառյալ երկրպագության, ընտանեկան հարաբերությունների, ժառանգության, առևտրային գործարքների և հանցագործությունների վերաբերյալ: Այն բաղկացած է 57 գլուխներից:

⁴²¹ Որոշ աղբյուրներ, մասնավորապես Jalāl al-Dīn Al-Suyūṭī, “Al-Taḥadduṭ bi ni‘mat Allah”, Al-Qāhira, 1975, էջ 70, ավելացնում են նաև Բուրհան ալ-Դին անվանակոչումը, որը պատվանուն էր, ինչև Ալ-Հալաբին ստացել էր Եգիպտոսում:

⁴²² Has, Şükrü Selim, “A study of Ibrahim al-Halabi with special reference to the Multaqā”, PHD Diss., University of Edinburgh, 1981, p. 7.

⁴²³ Dār (دار) բառը թարգմանաբար նշանակում է կառույց, վայր, բնակատեղի: Տվյալ դեպքում՝ ընթերցողների հավաքատեղի:

⁴²⁴ Արաբերեն muftī (مفتي)՝ կրոնա-իրավական հարցերով եզրահանգում ֆաթվա տվող անձ:

⁴²⁵ Հրատարակումը վերաբերում է ձեռագիր տարբերակին: Օսմանյան կայսրությունում մեծ թվով գրքեր տպագրվում ու տարածում էին ստանում արաբերեն ձեռագրերի տեսքով, ինչը շարունակական բնույթ կրեց մինչև 19-րդ դարի սկզբնական շրջանը:

ՄՍ 1713 ու ՍԹՅ 6770 ձեռագրերում առկա մեկնաբանությունների և ծանոթագրությունների համեմատական բնութագիրը

Վերը նշված երկու ձեռագրերի լուսանցքներում կան մեկնաբանություններ ու ծանոթագրություններ: Անցնելով դրանց համեմատությանը՝ նշենք, որ դրանց հետ կապված որևէ հիշատակարան առկա չէ, հետևաբար հայտնի չէ, թե ում կողմից են դրանք արված: Ուսումնասիրելով առաջին ձեռագիրը՝ հստակ նշմարելի է այն փաստը, որ առաջին ձեռագրում մեկնաբանությունները բավականին քիչ քանակի են՝ ի տարբերություն երկրորդ ձեռագրում առկա մեկնաբանությունների, որոնք էլ առավել հասկանալի են դարձնում բովանդակության իմաստը ընթերցողի համար: Մեկնաբանությունների շատ ու քիչ լինելու պատճառներից մեկը կարելի է համարել ձեռագրերի գրի առնման տարբերությունը: Ձեռագրերի ստեղծման միջև առկա է հիսուներեք (53) տարվա տարբերություն: Ժամանակային առումով ավելի ուշ գրված ձեռագրում մեկնաբանություններն ու ծանոթագրությունները եղել են ավելի շատ, ինչն էլ առավել մատչելի է դարձրել ընթերցումը և նպաստել խորապես հասկանալու տվյալ գիրքն ու ավելի շատ գիտելիքներ ձեռք բերելու մուսուլմանական իրավունքի մասին: Առաջին ձեռագրի ներածության մեջ նշվում է, որ հավաքագրված են հանաֆիների մուսուլմանական իրավունքին վերաբերող ամենաարժեքավոր ու կարևոր գրքերը, իսկ երկրորդ ձեռագրի նույն հատվածում բերված են գրքի հեղինակի կողմից նշված փաստարկները, ինչպես նաև տրված են դրանց մանրամասն ու բովանդակալից մեկնաբանությունները: Կարելի է ասել, որ առաջին ձեռագրի մեկնաբանություն կատարողը, ցանկանալով պահպանել ձեռագրի ինքնատիպությունն ու այն, ինչն իրեն էր հասել անձամբ հեղինակ Ալ-Յալաբիհից, գերծ է մնացել շատ մեկնաբանություններ կատարելուց: Բայց դա չի նշանակում, որ առաջին ձեռագրում մեկնաբանություններ չկան: Ստորև կներկայացնենք երկու ձեռագրերի մեկնաբանությունների ու ծանոթագրությունների միջև առկա տարբերությունները.

- Ներածություն – առաջին ձեռագրի ներածությունը քիչ է մեկնաբանված⁴²⁶, իսկ ինչ վերաբերում է երկրորդ ձեռագրին, ապա վերջինիս տվյալ հատվածը մեկնաբանված է՝ սկսած առաջին բառից: «*Multaqa al-ābḥur*» աշխատության մեջ ասվում է հետևյալը. «Փառք տիրոջը, ով մեզ զորավիգ եղավ լինելու այն ընտրյալները, որոնց հնարավորություն ընձեռնվեց ուսումնասիրելու մուսուլմանական իրավունքը»: «Մուսուլմանական իրավունքն ուսումնասիրելու և ընտրյալներ լինելու»⁴²⁷ վերաբերյալ երկրորդ ձեռագրի մեկնաբանության հեղինակը կատարել է իր մեկնաբանությունը: Նա տվյալ բառակապակցության ընտրությունը կապում է Ղուրանում առկա նմանատիպ բառակապակցության հետ և որպես ապացույց բերում է Ղուրանի այաթներից մեկը՝ ներկայացնելով դրա թե՛ գիտական և թե՛ գաղափարախոսական կողմը՝ գիրքը դարձնելով մատչելի ու հասանելի յուրաքանչյուր ընթերցողի համար:

- «Գլուխ ծիսական մաքրության մասին» առաջին ձեռագրի մեկնաբանություն կատարողը չնչին մեկնաբանություններ է կատարել վերոնշյալ գլխում բառերի միջոցով⁴²⁸ ի տարբերություն երկրորդ ձեռագրի, որում կատարված են լեզվաիմաստային մեկնաբանություններ: Մեկնաբանություն կատարողը մեկնաբանում է մաքրություն բառը լեզվական տեսանկյունից, այնուհետև պարզաբանում է գրքի հեղինակի տեսակետը՝ կապված մի շարք բառերի եզակի կամ հոգնակի թվին և իգական սեռին պատկանելու հետ⁴²⁹: Բացի այդ, հարկ է նշել, որ առաջին ձեռագրի տեքստը առավել ամբողջական է՝ ի տարբերություն երկրորդ ձեռագրի, որում առկա են որոշ բաց

⁴²⁶ ՄՍ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 7բ, 8ա:

⁴²⁷ ՍԹՅ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 1ա բ:

⁴²⁸ ՄՍ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 8ա:

⁴²⁹ ՍԹՅ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 1բ:

թողնված բառեր, որոնք լրացված են մեկնաբանությունների ու ծանոթագրությունների տեսքով, օրինակ՝ «չփել ականջները գլխի համար նախատեսված ջրով» հատվածում բաց է թողնված «ականջներ» բառը, փոխարենը այն գրված է տեքստից դուրս:

- «Գլուխ ծիսական աղոթքի մասին» առաջին ձեռագրի մեկնաբանությունների հեղինակը այս գլխում գերծ է մնացել մեկնաբանություններ կատարելուց⁴³⁰, ի տարբերություն երկրորդ ձեռագրի մեկնաբանության հեղինակի, որ ամբողջ գլխում գետնել է բազմաթիվ մեկնաբանություններ՝ պարզաբանելով բառիմաստներն ու մուսուլմանական իրավունքին վերաբերող տերմինները, երբեմն նույնիսկ իմաստը առավել հստակեցնելու համար նա կատարել է որոշակի նկարագրողումներ⁴³¹:

- «Աղոթքի կոչի ենթագլխում» առաջին ձեռագրի մեկնաբանություն կատարողը որևէ մեկնաբանություն չի կատարել⁴³², ի տարբերություն երկրորդ ձեռագրի, որի մեկնաբանություն կատարողը հետևել է հանաֆիական մագհաբի հիմնադիր Աբու Յանիֆայի տեսակետին⁴³³, որն էլ արտահայտված էր հանաֆիների մուսուլմանական իրավունքին առնչվող գրքերում: Մինչդեռ առաջին ձեռագրի մեկնաբանության հեղինակը հիշատակում է միայն գրքում առկա Աբու Յուսուֆի և Մուհամմադ ալ-Շեյբանիի (սահիբեյն) տեսակետները: Սա վկայում է այն մասին, որ երկրորդ ձեռագրի մեկնաբանության հեղինակը առաջնահերթությունը տվել է Աբու Յանիֆային:

- «Գլուխ ողորմություն տալու մասին» երկրորդ ձեռագրի գրիչը «Գլուխ ողորմության մասին» գլուխը վերնագրել է առանձին, մինչդեռ առաջին ձեռագրի գրիչը գերծ է մնացել ողորմության մասին գլուխը առանձին գլուխ դիտարկելուց և այն միավորել է աղոթքի մասին գլխին մեկ վերնագրի տակ, թեև բովանդակության ցանկում այն թվագրված է առանձին էջերով: Հարկ է նշել, որ առաջին ձեռագրի մեկնաբանություն կատարողը վերոնշյալ գլխում որոշակի մեկնաբանություններ է կատարել Մուզաֆֆար ալ-Դին Ահմադ իբն Ալի ալ-Բաղդադիի (1295) “Majma’ al-Bahrayn” «Երկու ծովերի միաձուլում»-ը գրքի նկարագրությունից⁴³⁴, մինչդեռ երկրորդ ձեռագրի տվյալ գլխում որևէ մեկնաբանություն կամ ծանոթագրություն չկա⁴³⁵:

- «Չույգերի բոլոր հարցերում միմյանց համապատասխանելու մասին» ենթաբաժնի առաջին ձեռագրի մեկնաբանությունների հեղինակը կատարել է մի շարք մեկնաբանություններ՝ որոշ բառերի իմաստը բացատրելով այլալեզու արտահայտություններով⁴³⁶, ի տարբերություն երկրորդ ձեռագրի, որի մեկնաբանությունների հեղինակը կատարել է բազմաթիվ մեկնաբանություններ՝ ինսամակալության ու ժառանգորդ դառնալու հարցում նախապատվությունը տալով մեկ անձին ու դրանով իսկ ցույց տալով հանաֆիների հետ իր կարծիքի համընկնումը⁴³⁷:

- «Ինսամակալի՝ առանց զույգերի կամ նրանցից որևէ մեկի թույլտվության նրանց ամուսնացնելու մասին» ենթագլխում իրենց մեկնաբանություններում ու ծանոթագրություններում երկու ձեռագրերի մեկնաբանությունների հեղինակներն էլ ներկայացնում են վերոնշյալ գործընթացը, թեպետ առաջին ձեռագրի մեկնաբանություն կատարողը իր մեկնաբանություններում առանձնակի նշում է զույգերից մեկի կողմից առաջադրվող երաշխավորի կարևորությունը՝ միաժամանակ տալով հարցի մանրամասն պարզաբանումը բոլոր կողմերով⁴³⁸, որն էլ համընկնում էր հանաֆիների կարծիքի հետ:

⁴³⁰ ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 14բ:

⁴³¹ ՍԹՀ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 6բ:

⁴³² ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 15ա:

⁴³³ ՍԹՀ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 7բ:

⁴³⁴ ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 31ա:

⁴³⁵ ՍԹՀ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 20ա:

⁴³⁶ ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 52ա:

⁴³⁷ ՍԹՀ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 35բ:

⁴³⁸ ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 52ա:

• «Հավատալիցի ամուսնություն» ենթագլխում առաջին ձեռագրի մեկնաբանությունների հեղինակը մանրակրկիտ ու հանգամանալից կերպով անդրադարձ է կատարում վերոնշյալ հարցին իր մեկնաբանությունների ու ծանոթագրությունների միջոցով⁴³⁹, որը նկատելի չէ երկրորդ ձեռագրում⁴⁴⁰: Ինչ վերաբերում է տեքստին, ապա տարբերությունը բառերի մեջ է և բավականին չնչին, քանզի իմաստային առումով այն իր ազդեցությունը ընդհանուր բովանդակության վրա չի թողնում:

• «Գիրք կրծքով կերակրելու մասին» առաջին ձեռագրի գրիչը գլուխները բաժանել է առավել համակարգված ձևով: Առաջին ձեռագրում գրիչը ներկայացնում է գլխի վերնագիրը տեքստի կենտրոնական հատվածում կարմիր թանաքով⁴⁴¹, ի տարբերություն երկրորդ ձեռագրի գրիչի, որ, առանց նշելու գլխի վերնագիրը, միանգամից անցում է կատարում տեքստի շարադրմանը⁴⁴²: Երկու ձեռագրերում էլ այս գլուխը մեկնաբանված չէ:

• «Գիրք ամուսնալուծության մասին» առաջին և երկրորդ ձեռագրերի միջև համեմատական անցկացնելով նկատվեց, որ վերոնշյալ գլխում առաջին ձեռագրի մեկնաբանությունների հեղինակը տալիս է ամուսնալուծության սահմանումը⁴⁴³, միևնույն երկրորդ ձեռագրի մեկնաբանությունների հեղինակը առաջ է քաշում ամուսնալուծությանն առնչվող մի շարք հարցեր՝ վերցված հանաֆիական աղբյուրներից և միևնույն ժամանակ տալիս է դրանց պարզաբանումը⁴⁴⁴:

• «Ապագա ամուսնալուծության մասին» ենթագլուխը առաջին ձեռագրում ներկայացված է բավականին ոլորին ձևով: Գրիչը ենթագլուխը վերնագրել է կարմիր թանաքով: Երկրորդ ձեռագրում կարմիր թանաքով է ներկայացված միայն ենթագլուխ բառը, իսկ մնացած հատվածը՝ սև թանաքով: Ինչ վերաբերում է մեկնաբանություններին, ապա առաջին ձեռագրում դրանք չափազանց շատ են, որտեղ հեղինակը անընդմեջ մեջբերում է Աբու Յանիֆայի կարծիքը, ինչպես նաև մեկնաբանություններ է կատարում Մուզաֆֆար ալ-Դին Ահմադ իբն Ալի ալ-Բաղդադիի «Majma' al-Bahrayn» «Երկու ծովերի միաձուլում» գրքից⁴⁴⁵: Ի տարբերություն դրա՝ երկրորդ ձեռագիրը մեկնաբանված չէ⁴⁴⁶:

• «Ամուսնու կողմից կնոջն իր մորն ու քրոջը նմանեցնելը և նրանց միջև համեմատականներ անցկացնելը» ենթագլուխ. առաջին ձեռագրի այս գլխի մեկնաբանությունները շատ են, որոնք հիմնականում արտահայտում են այս հարցի շուրջ հանաֆիական մազհաբի հայտնի ներկայացուցիչների կարծիքը: Մեկնաբանությունների ու ծանոթագրությունների միջոցով մեկնաբանությունների հեղինակը արծարծում է մի շարք խնդիրներ, որոնք կարող են ծառանալ ցանկացած ընթերցողի առջև ձեռագրի իմաստն ըմբռնելու առումով՝ մեկնաբանելով, որ տվյալ դեպքում ամուսնու և կնոջ միջև ամուսնական կապն ընդհատվում է և տեղի է ունենում ժամանակավոր բաժանում նրանց միջև, որը վերականգնվում է միայն ամուսնու կողմից երեք շաբաթ ծով պահելուց հետո⁴⁴⁷: Ի տարբերություն առաջին ձեռագրի՝ երկրորդ ձեռագրի այս գլուխը մեկնաբանված չէ⁴⁴⁸:

• «Գլուխ գերի ընկածի ազատ արձակման մասին» առաջին ձեռագրի մեկնաբանությունների հեղինակը քիչ թվով մեկնաբանություններ է կատարել ազատ արձակման,

⁴³⁹ Նույն տեղում, էջ 56բ:

⁴⁴⁰ ՍԹ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 38բ:

⁴⁴¹ ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 56բ:

⁴⁴² ՍԹ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 39ա:

⁴⁴³ ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 57ա:

⁴⁴⁴ ՍԹ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 39բ:

⁴⁴⁵ ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 58ա:

⁴⁴⁶ ՍԹ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 40ա:

⁴⁴⁷ ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 65բ:

⁴⁴⁸ ՍԹ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 45բ:

դրա պայմանների և ազատ արձակման մտադրության ճշգրտման վերաբերյալ⁴⁴⁹ ի տարբերություն երկրորդ ձեռագրի, որի այս հատվածը մեկնաբանված չէ⁴⁵⁰:

- «Գլուխ երդումների մասին» առաջին ձեռագրի մեկնաբանություններ կատարողը անդրադառնում է յուրաքանչյուր երդման տեսակի անվանակոչման պատճառներին և դա կարճ բառերի տեսքով ներկայացնում է անմիջապես տվյալ անվան վերին հատվածում⁴⁵¹, ի տարբերություն երկրորդ ձեռագրի, որը մեկնաբանված չէ⁴⁵²:

Առաջին ձեռագրի մեկնաբանություններ կատարողը տեքստի մեջ՝ տողերի արանքում, և բուն տեքստից դուրս՝ էջի ազատ հատվածներում, կատարել է մի շարք մեկնաբանություններ հետևյալ գրքերում.

- «Գլուխ սահմանափակումների և պատժամիջոցների մասին», «Գլուխ գողության մասին», «Գլուխ ընկեցիկ երեխայի մասին», «Գլուխ գտնված իրի մասին», «Գլուխ փախչող գերու մասին», «Գլուխ գործակցության մասին», «Գլուխ դրամային փոխանակման մասին», «Գլուխ երաշխավորության մասին», «Գլուխ դրամական փոխանցումների մասին», «Գլուխ դատավարության մասին»⁴⁵³: Ի տարբերություն առաջին ձեռագրի՝ երկրորդ ձեռագրի մեկնաբանությունների հեղինակը հազվադեպ դեպքերում է մեկնաբանություններ կատարել վերոնշյալ գրքերում⁴⁵⁴:

- Սկսած «արգելքի»⁴⁵⁵ մասին գլխից մինչև ձեռագրի ավարտը առաջին ձեռագրում մեկնաբանություններ գրեթե չկան՝ բացառապես եզակի դեպքերի, այն էլ պարզ բառերի տեսքով⁴⁵⁶ ի տարբերություն երկրորդ ձեռագրի, որում առկա են մեկնաբանություններ⁴⁵⁷, բայց ի համեմատ ձեռագրի սկզբնական հատվածի՝ դրանք ավելի քիչ քանակի են:

Ամփոփելով այս ամենը՝ հարկ է նշել, որ երկրորդ ձեռագրի մեկնաբանությունները ավելի շատ են, քան առաջինում:

Եզրակացություն

Մատենադարանում պահվող արաբերեն ձեռագրերի ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի հայ արաբագիտության համար, քանի որ այնտեղ պահվող արաբերեն շուրջ 2000 ձեռագրերի շարքում մուսուլմանական իրավունքին նվիրված ձեռագրերն ուսումնասիրված և գիտականորեն նկարագրված չեն, այդ թվում նաև՝ մեր կողմից ուսումնասիրված ձեռագիրը: Այն Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի արաբական բաժնում պահվող “Multaqa al-ābḥār” («Մուլթաթի միաձուլում») աշխատության ձեռագիր տարբերակն է (թիվ 1713), որը երբևէ որևէ հեղինակի կողմից ուսումնասիրության չի արժանացել: Արդի արաբագիտության կարևոր խնդիրներից է նմանատիպ ձեռագրերը աշխարհին հասանելի դարձնելը: Ձեռագրերի համակողմանի ու քննական վերլուծությունն ու գիտական նկարագրությունը ունեն նաև աղբյուրագիտական կարևոր նշանակություն, որը հնարավորություն է ընձեռում լուսաբանելու արաբամուսուլմանական մշակութային ժառանգությանը վերաբերող խնդիրները: Նման ձեռագրերի առկայությունը մեկ անգամ ևս ապացուցում է Հայաստանի՝ միջմշակութային հաղորդակցության կարևոր հանգույց լինելու փաստը:

⁴⁴⁹ ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 72ա:

⁴⁵⁰ ՍԹՅ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 51բ:

⁴⁵¹ ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 76ա:

⁴⁵² ՍԹՅ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 54բ:

⁴⁵³ ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 81ա; 84բ; 92բ; 93ա; 93բ; 94բ; 110ա; 111ա; 114ա; 114բ:

⁴⁵⁴ ՍԹՅ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 59ա; 62ա; 67ա; 68ա; 78բ; 79ա; 81ա:

⁴⁵⁵ Արգելքը վերաբերում է անչափահաս երեխաներին, խելագարներին ու ստրուկներին, որոնք ունակ չեն սթափ որոշումներ կայացնելու:

⁴⁵⁶ ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 158բ:

⁴⁵⁷ ՍԹՅ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 103բ:

Այսպիսով՝ եթե հիշատակենք երկու ձեռագրերի մեկնաբանությունների ու ծանոթագրությունների միջև առկա տարբերությունները, ապա կտեսնենք, որ կան հստակ զանազանություններ, ինչն արդյունք է ձեռագրերի գրիչների տարբերության:

Ուստի ամփոփելով այս ամենը՝ կարելի է ասել, որ հիմնական տարբերությունները երկու մեկնաբանողների կողմից տեքստի ընկալման մեջ է, քանզի նրանք իրենց հասկացածը հատված առ հատված ծանոթագրության ու մեկնաբանության տեսքով գրի են առել հիմնական տեքստից դուրս:

COMPARATIVE DESCRIPTION OF THE COMMENTARIES AND ANNOTATIONS IN THE 1713 MANUSCRIPT OF THE MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS OF THE ARABIC FUND AND THE 6770 MANUSCRIPT OF KING SAUD UNIVERSITY

VAHE HAKOBYAN

*Yerevan State University, Faculty of Oriental Studies,
Chair of Arabic Studies, Assistant, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to analyze the two manuscript versions of the work «The Confluence of the seas» composed by Ibrahim ibn Muhammad ibn Ibrahim al-Halabi the prominent religious scholar who is also considered to be one of the outstanding representatives of the Hanafi religious law school, written by two different writers. The tasks arising from this goal are: to study the manuscript version of the work «Multaqā al-ābḥur» kept at the Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts (Matenadaran, No. 1713) and the manuscript of the same work kept at King Saud University (No. 6770) and present a comparative description of the comments and footnotes in them.

During the research various methods were used such as: the complex and systematic study method, methods of comparative analysis and juxtapose.

As a result of our research it was concluded that there are clear and distinct differences in the comments and footnotes to the two manuscripts. There are chapters and subsections in which the commentators did not comment at all. Mostly, comments were made on those passages which the commentators found difficult for readers to understand.

Keywords: *Hanafi madḥab, «The Confluence of the seas», chapter, manuscript, comparison, writer, Muslim law, commentary, page, memoir.*

**СРАВНИТЕЛЬНОЕ ОПИСАНИЕ КОММЕНТАРИЕВ И СНОСОК
РУКОПИСИ № 1713 АРАБСКОГО ФОНДА ИНСТИТУТА ДРЕВНИХ
РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА И РУКОПИСИ 6770
УНИВЕРСИТЕТА КОРОЛЯ САУДА**

ВАГЕ АКОПЯН

*ассистент, аспирант кафедры арабистики
факультета востоковедения
Ереванского государственного университета
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является анализ двух рукописных версий произведения «Слияние морей», составленного выдающимся знатоком мусульманского религиозного права (который является также одним из выдающихся представителей ханафитской школы религиозного права) Ибрагимом ибн Мухаммадом ибн Ибрагимом ал-Халаби и переписанными двумя разными переписчиками. Задачи, вытекающими из этой цели, являются: изучение одноименной рукописной версии произведения «Слияние морей», хранящуюся в Институте древних рукописей имени Месропа Маштоца (Матенадаран, №1713) и одноименной же рукописной версии вышеупомянутого произведения, хранящейся в Университете Короля Сауда (№6770), и предоставить сравнительное описание их комментариев и сносок.

В ходе исследования использовались следующие методы: метод комплексного и системного исследования, методы сравнительного анализа и сопоставления.

В результате исследования мы пришли к выводу о том, что есть явные и четко видимые различия в комментариях и сносках к двум рукописям, и есть главы и параграфы, в которых нет комментариев. Комментарии касаются в основном тех отрывков, которые комментаторы считали трудными для понимания читателей.

Ключевые слова: *Ханафитский мазхаб, «Слияние морей», глава, рукопись, сравнение, переписчик, мусульманское право, комментарий, страница, мемуары.*

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА

**ՈՉ ԳՐԱԿԱՆ (ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԵՎ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ)
ԼԵՉՎԱՇԵՐՏԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ
«ԱՇՆԱՆ ԱՐԵՎ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՉ***

ՀՏԴ 81.28

DOI: [10.52063/25792652-2021.1-144](https://doi.org/10.52063/25792652-2021.1-144)**ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ**

Գործիսի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների
ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար,
Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորման անդամ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
թ. Գորիս, Հայաստանի Հանրապետություն
smanucharyan81@mail.ru

Հոդվածում քննել ենք «Աշնան արև» ստեղծագործության ոչ գրական (բարբառային և խոսակցական) լեզվաչափերը: Հետազոտության նպատակն է ներկայացնել այդ լեզվաչափերը ներառող տարրերի լեզվաոճական դրսևորումները: Այս նպատակից բխող խնդիրն է նկարագրել բնագրային քննվող իրողությունների առանձնահատկությունները:

Ուսումնասիրության բնագրում առկա գրական նորմից շեղվող խոսակցական ու բարբառային իրողությունները հիմնականում ընդհանրական են Արարատյան ու Ղարաբաղի բարբառների համար և մասնավորապես բնորոշ՝ Լոռու խոսվածքին: Դրանք տարբեր հնչյունափոխության հետևանքով ձևավորված բառային ու քերականական երևույթներ են: Այս ստեղծագործության մեջ ոչ գրական լեզվաչափերի բառերն ու արտահայտությունները գործածվել են հիմնականում գեղարվեստական միջավայրի ու կերպարների կերտման նպատակով: Նման ձևերով հարուստ է հատկապես կերպարների խոսքը: Ժողովրդախոսակցական ու բարբառային լեզվաչափերը գրականից տարբերվում են նաև անվանական ու բայական հարադրություններով, որոնք ևս տարածված են քննվող բնագրում: Բարբառային բառաչափերի մեջ դասվող բառաձևերն ու քերականական իրողությունները տեղայնացված բնույթ ունեն, որոնց անհրաժեշտ կիրառումը հուլյարտահայտչական երանգավորում է հաղորդում գեղարվեստական խոսքին:

Հետազոտության ընթացքում գործածվել են համադրության և համեմատության մեթոդներ:

Այսպիսով՝ քննվող լեզվանյութի մեջ ներկայումս գրական ձևերից հետո պզալի կշիռ ունեն ժողովրդախոսակցական, ապա և՛ բարբառային տարբերակները, քիչ են միայն Լոռու խոսվածքին հատուկ բառերն ու արտահայտությունները:

* Հոդվածը ներկայացվել է 15.01.2021թ., գրախոսվել՝ 19.01.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

Հիմնաբառեր՝ բարբառային բառեր, ժողովրդախոսակցական բառաշերտ, խոսվածքային բառաձևեր, լեզվաոճական դրսևորումներ, պատկերավորություն, ժողովրդական լեզվամտածողություն, գեղարվեստական խոսք, ոճական նշանակություն:

Հրանտ Մաթևոսյանը մեր այն գրողներից է, որոնք անվարան օգտվել են հայերենի հարուստ բարբառային ու ժողովրդախոսակցական իրողություններից՝ գործածելով դրանք կերպարակերտման, գեղարվեստական միջավայրի նկարագրման ու ամբողջացման նպատակով:

Հարկ ենք համարում նշել, որ լեզվաբաններից ոմանք «Աշխատանք» ստեղծագործության լեզվանյութի քննությանն անդրադարձել են մասամբ և տարբեր տեսանկյուններից⁴⁵⁸:

Ինդրո առարկա կյուրում առկա գրական նորմից շեղվող խոսակցական ու բարբառային իրողությունները, տարածված լինելով **Ում** ճյուղի՝ հիմնականում Արարատյան ու Ղարաբաղի բարբառներում, մասնավորապես Լոռու խոսվածքում, բառային ու քերականական մակարդակներին պատկանող այնպիսի երևույթներ են, որոնք ժամանակի հոլովությունում տարբեր հնչյունափոխություններ են կրել: Քննվող լեզվանյութի մեջ համաժամանակյա կտրվածքով գրական ձևերից հետո զգալի կշիռ ունեն ժողովրդախոսակցական ու բարբառային տարբերակները:

Մաթևոսյանի այս ստեղծագործությունը նույնպես ներառում է հաղորդակցման կենդանի բարբառային-խոսակցական և գրական լեզվատարբերակների հատուկ միավորների «...լեզվաոճական անկրկնելի հնարանքներով»⁴⁵⁹ կառույցների համադրումներ:

Ինչպես իրավացիորեն նշել է Ա. Մարությանը, «...ժողովրդախոսակցական բառերն ալելի շատ գործածել են այն գրողները, որոնք իրենց ստեղծագործություններում արտացոլել են ժողովրդի կյանքն ու կենցաղը, նրա հարագատ տարերքը, կենդանի խոսքը, բառ ու բանը, ժողովրդական լեզվամտածողությունը»⁴⁶⁰:

Գեղարվեստական խոսքին ժողովրդախոսակցական ոճին բնորոշ պարզության ու անմիջականության երանգ հաղորդելու միտումով հեղինակը կիրառել է բարբառային ու խոսակցական այնպիսի իրողություններ, որոնք լեզվի տարբեր մակարդակների միավորներ են:

Հնչյունական իրողություններ: Ում ճյուղի բարբառներում տարածված հնչյունափոխական երևույթներից է **այ>է** անցումը, որի արդյունքում առաջացած բառաձևերի մի մասը, հաճախադեպ կիրարկություն ունենալով, այսպես ասած, դուրս է եկել բարբառային լեզվաշերտից, ուստի դրանց մեծ մասը կարելի է համարել խոսակցական: Իբրև այդպիսին՝ առանձնացրել ենք **ես, եղ, էն** ցուցական դերանունները և դրանցից բաղադրված կազմությունները, որոնք ևս բավականին շատ են գործածված մաթևոսյանական արձակի էջերում. երբեմն մեկ նախադասության մեջ կարելի է

⁴⁵⁸Տե՛ս **Եգեկյան Լ.**, Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Երևան, 1986, 170 էջ, **Խաչատրյան Գ.**, Բարբառային-ժողովրդախոսակցական տարրերը Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործություններում, ՅՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիությունների», Երևան, 1988, թիվ 3, էջ 23-32, **Հալաջյան Ս.** Բարբառային բառերը և նրանց ոճական արժեքը Հ. Մաթևոսյանի արձակում, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2001, 2(104), 171-177 էջ, **Հալաջյան Ս.** Հրանտ Մաթևոսյանի արձակի բառապաշարի շերտերը և դրանց ոճական արժեքը, Երևան, 2005, 192 էջ, **Հալաջյան Ս.**, Հրանտ Մաթևոսյանի արձակում բառագործածության ինքնատիպ իրողությունների մասին, Մաթևոսյանական ընթերցումներ, Երևան, 2017, 175-186 էջ, **Սահակյան Կ.**, Բարբառային բառերի և դարձվածքների կիրառությունը Հրանտ Մաթևոսյանի «Օգոստոս» և «Ճամբեր» ժողովածուներում, Մաթևոսյանական ընթերցումներ, Երևան, 2017, էջ 187-198:

⁴⁵⁹ **Սահակյան Կ.**, նշվ. աշխ., էջ 188:

⁴⁶⁰ **Մարության Ա.**, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, «Նաիրի», 2000, էջ 210:

հանդիպել մեկից ավելի ձևերի, այսպես՝ «էս ինչո՞ւ է էսքան հանել, էս կարա՞մն էս ինչու է էստեղ»⁴⁶¹, «-էսպես ես ասում՝ հեռու, կարծես Չայաստանից դուրս է» (336), «...«էս մարդը իմն է»։ էլ մարդուն մայր չի ծնել, հենց էլպես պատրաստ եղել է» (339), «Գևա տես էլ ձին արածո՞ւմ է» (337), «էլ բլիդ կոճակն արծակիր»(413), «-էլտեղ անպետք գիրք չկա» (338) և այլն։ Բառասկզբում գործող այս հնչյունափոխությամբ այլ օրինակներ ևս խոսակցական լեզվաշերտը կազմող բառերից են, այսպես՝ *Էսօր*՝ «Իմը իմ Փիլոն է, էսօր երկուսով երկու հավ ենք կերել»(373), *էգուց*՝ «-էգուց էլ ճաշը կտաքացնեք, էգուց չէ մյուս օրվա ճաշը Նազիրը կգա կեփի»(339) և այլն։ Իսկ բառամիջում այս հնչյունական անցմամբ ձևավորված տարբերակներում և նրանցից կազմված բառաձևերում Յ. Մաթևոսյանը սակայն պահպանել է գրական ուղղագրությունը, ինչպես՝ *փայտ>փետ-փետ*՝ «Մուրադեց Ռիսաբացը հանդ գևալիս տանձենուն փետը քաշեց»(338), «...քո փետածեծը ինձ տակ չարեց» (343), «...գիր գտան շեմքափետի տակ»(355), *եղբայր>ախպեր-ախպեր*՝ «վխպերը էլ էր ասում» (338), *հայր>հեր-հեր*՝ «Յերը էլ սոված սոված, ծարավ ծարավ» (338), *ծայն>ծեն-ծեն*՝ «...կախարդ, ծենը դուրս չգա» (349), *մայր>մեր-մեր*՝ «...այ մեր, մենք են ենք, ինչ որ դու ուզում էիր» (339), *կայծ>կեծ-կեծանալ*՝ «...տաբերտի շարուկը կեծանում էր» (360), *սայլ>սել-սել*՝ «-վել ես սարքո՞ւմ» (403), *գայլ>գել-գելերոց*՝ «...գելերոց լինես, նանի ջան»(355) և այլն։ Այս փոփոխությունը գործում է *երեխեք, տրդէ(ր)ք, տրդէս(ւ,դ)* օրինակներում, որոնցում «...գրաբարյան ընկած յ վերջնահնչյունը վերականգնվում է»⁴⁶² հորերից և հոգնակերտ մասնիկներից առաջ՝ ձևավորելով փակ վանկ, այսպես՝ «...չգիտեմ մերը պոծե՞լ է թե երեխեքս են կորցրել» (367), «...տղերքը էլ ողջ-առողջ պտույտ են գալիս շուրջը»(358), «...տղերքը բռնեցին թե...»(412), «-Տղես քեզանից սեր չտեսավ»(363), «...տղեղ էր սիրո արժանի լինելու» (363) և այլն։ Ժողովրդախոսակցական բառաշերտին կարելի է դասել նաև այլ հնչյունափոխություններ կրած բառաձևեր, ինչպես՝ *ե>ի՝ երեկոյ>իրիկուն* (Լոռու խոսվածքում՝ «իրիգուն»⁴⁶³)՝ «...իրիկունը տուն գա»(361), «...խոզարած Նիկալ պապը մի իրիկուն եկավ»(354), «...իրեց դռանը իրիկնամուտի մեջ կանգնել էին» (344), *եաւ>օւ*⁴⁶⁴, *բարեաւ>բարօւ*՝ «Բարոլ եկար, քաղաքացի. ուր գնացիր, ուր եկար» (347), նաև՝ բառասկզբի *ե>ի* անցում՝ հոլովման ժամանակ՝ *է-իշին-իշուլ*՝ «...հյուր եկավ՝ դազախեցի չարչին իշուլ...»(391), «-իշին ե՞ս դրել նանին»(366) և այլն։ Ընդգծված բառաձևերից մի քանիսը (*փետ, կեծանալ, սել, իշին*) մեր օրերում ևս հատկանշական են բարբառային բառաշերտին, քանի որ շարունակում են պահպանել տարածքային սահմանափակ գործառման բնույթը։ Խնդրո առարկա բնագրում հնչյունների անկմամբ ձևավորված բառաձևերը ևս բնորոշ են բարբառային ու խոսվածքային լեզվաշերտերին, այսպես՝ *հ-յ-ի՝ աչօղ* (<հաչ/ջօղ <յաջօղ)՝ (ժամանակակից ընկալմամբ դիտարկել ենք անկում, քանի որ Լոռու խոսվածքում «...յ-ն ընկնում է կամ վերածվում *հ-ի*»⁴⁶⁵, իսկ Արարատյան բարբառում կիրառական է նաև *հաչօղ* ձևը⁴⁶⁶)՝ «...որ տեսնես աջո՞ղ է խփում թե անաջող» (360), *ր-ի՝ շընհավօր* (<շընհավօր<շնորհաւոր)՝ (որին հաջորդել է *ո>ա* առնմանումը՝ ձևավորելով շընհավօր տարբերակը, որն առկա է Արարատյան բարբառում⁴⁶⁷, որին և հաջորդում է *ա-ի* սղմամբ շընհավօր-ը)՝ «-Էկել եմ ձեր տունը շնհավորեմ...» (354), *Գիքոր*(<Գրիգոր)՝ «Գիքորի Մարգոն» (358)։ Հնչյունների անկմամբ և *ե>ի* հնչյունափոխությամբ ձևավորված տարբերակ է *ապի* բառաձևը՝

⁴⁶¹ **Մաթևոսյան Յ.**, Ծառերը, Երևան, «Սովետական գրող», 1978, էջ 344: Այս գրքից քաղված մյուս օրինակների մոտ փակագծերում այսուհետ կնշվի միայն էջը:

⁴⁶² **Ասատրյան Մ.**, Լոռու խոսվածքը, Երևան, ԵՊՀ հրատ., 1968, էջ 58:

⁴⁶³ Տե՛ս նույն տեղում, էջ 51:

⁴⁶⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 59:

⁴⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 79:

⁴⁶⁶ Տե՛ս **Մարկոսյան Ռ.**, Արարատյան բարբառ, Երևան, «Լույս», 1989, էջ 310:

⁴⁶⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 80:

եղբայր>ախպեր>ասպեր «1.մեծ եղբայր, 2. հայր, 3.հորեղբայր, 4. հարգական տիտղոս», որից էլ՝ *ասի* «1. հայր, 2. հարգական տիտղոս, որով դիմում են ավագ տղամարդկանց»⁴⁶⁸ «-Ալլի...ասի, եթե առանձին ասրեի, ասի»(347):

Արդի գրական հայերենից շեղում է նաև **ն** վերջնահանգ ունեցող **փռնից** բառաձևը, օր.՝ «Սիմոնը փռնից մի հինգ հաց վերցրեց, գնաց շաքար առնելու» (421) և այլն:

Հայտնի է, որ «...ժողովրդական լեզուն այժմ է ընկնում զարմանալի սեղմությամբ, հակիրճությամբ, որն արտահայտվում է նաև անձնանունների կրճատման, ձևափոխման մեջ»⁴⁶⁹: Հայերենի արևելյան խմբակցության բարբառներին հատուկ անձնանունների կրճատմամբ ձևերը, լինելով ժողովրդական լեզվամտածողության տարրեր, մտերմական երանգավորում են հաղորդում ուսումնասիրության առարկա բնագրին՝ կիրառված լինելով տարատեսակ կառույցներում շարահյուսական տարբեր պաշտոններով, միաժամանակ հասարակ գյուղացիների կերպարների կերտման ոճական հնարք են: Այսպես՝ *Աղավթի*, *Արմենակ*, *Արուսյակ*, *Նիկոլայ*, *Աստվածատուր*, *Արտաշես* անունների փոխարեն գործածել է *Աղուն*՝ «Աղունը նպատակին հասավ»(337), *Արմեն* կամ *Արմո*՝ «-Քո տարիքին Արմենը պիտե եր գրել» (387), «Քեզ համար պալատ սարքեցինք, Արմո՛...»(351), *Արուն*՝ «Գնա, Արուն Զան, լուրը տար Ծմակուտին»(357), *Նիկալ*՝ «Լո՛ւյս դառնաս, Նիկալ պապի»(354), *Ասատուր*՝ «...լույս դառած Ասատուրը հորեղբայրը դիվոտում էր» (342), *Արտաշ*՝ «Արտաշը կոխոզը կողպտեց, կողպտեց»(338) և այլն: Խնդրո առարկա բնագրում, ի տարբերություն նշված տարբերակների, հաճախակի կիրառելիությամբ առանձնանում են «բաղաձայն+վերջնահանգ ո»⁴⁷⁰ կաղապարով կազմված բարբառային-խոսակցական անձնանունները, որոնք «...գործածվում են առունին, սովորական խոսակցության ժամանակ»⁴⁷¹, օր.՝ Մարգարիտի փոխարեն՝ *Մարգո*՝ «Գիթորի Մարգոն, Ներսեսի Մարգոն» (358), Տիգրանի փոխարեն՝ *Տիգո*՝ «Ատրեց Տիգոյին» (360), Փիլիպոսի փոխարեն՝ *Փիլո*՝ «-Փիլոյի ճկույթի հետ չեմ փոխի» (370), Երջանիկի փոխարեն՝ *Երջո*՝ «Լավ արադից Երջոյին մի բաժակ պիտի խմեցնել» (340), Համբարձումի փոխարեն՝ *Համբո*՝ «...որ սարքել էր Համբոյի գողությամբ»(347), Աթանեսի փոխարեն՝ *Աթո*՝ «Աթոյենց Ստեփանը տնկվեց» (353), Սարգիսի փոխարեն՝ *Սարթ*՝ «...որ Սարթն տվեց իբր թե անվարձ» (354) և այլն: Նմանատիպ ձևերը ժամանակի ընթացքում, կարելի է ասել, դուրս են եկել նեղ բարբառային գործածությունից: Անձնանունների բարբառային հնչատարբերակներից է Սմբատ անվան նախաձևը՝ *Սումբաթ* (վերջինս առկա է նաև վրացերենում⁴⁷²)՝ «Սումբաթի դռնից ծիկրակեց նրա անող-դնող Գոհարը» (409), նաև՝ *ու>ի* հնչյունափոխություն կրած *Մանիշակի*-ը՝ «Հորաթույր Մանիշակի հետ սկեսուրը կռվել էր» (350) և այլն: Բառերի ամփոփման հնչյունական իրողության խոսակցական ու բարբառային օրինակներից են⁴⁷³ *յեսիմ* «ես ինչ իմանամ»՝ «Արզումանյանի եղբայրը կին բերեց ռաստովներից Եսիմ ում» (345), *այտա*՝ «այ տղա»՝ «-Ալտալ ի՛նչ է»(340), *համմե*⁴⁷⁴ (<հրամմե<ի՛նչ հրամմեցիր<ի՛նչ եք հրամայել⁴⁷⁴) «ի՛նչ, ի՛նչպես»՝ «Համմե՞»(402):

Մեկ այլ դեպքում բաղաձայնների կուտակումից խուսափելու՝ լեզվի բարեհնչունության պահանջով ավելացնում են տարբեր ձայնավորներ: Խոսվածքային լեզվաշերտի մեջ կարելի է դասել բառաճման ժամանակ **ը-ի** հնչյունափոխված հետևյալ բառերը՝ «Հովրտի տերտերը ասել էր» (355), «Եղրչի Արուսյակ քոջ հարսանիքով» (426),

⁴⁶⁸ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2001, հ. 1, էջ 94:

⁴⁶⁹ **Հարությունյան Հ.**, Գեղարվեստական խոսք, Երևան, «Սովետական գրող», 1986, էջ 266:

⁴⁷⁰ **Խաչատրյան Գ.**, նշվ. աշխ., էջ 26:

⁴⁷¹ **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 97:

⁴⁷² Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1948, հ. 4, էջ 537-538:

⁴⁷³ Տե՛ս **Մարկոսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 82:

⁴⁷⁴ Տե՛ս **Մալխասեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 1944, հ. 3, էջ 145:

«Ավետոքի քրաղացատեղերից» (420), որոնցում, կարծում ենք, հեղինակը պահպանել է ը-ով հնչատարբերակները՝ ընդգծելով խոսվածքին հատուկ վերջընթեր շեշտադրությունը և իբրև արտահայտչամիջոց՝ դրանով ևս տարբերակելով իր կերպարների խոսքը, քանի որ Լոռու խոսվածքում ը-ի համեմատաբար լայն կիրառություն ունի:

Ժողովրդախոսակցական ոճին բնորոշ է նաև մտքի արտահայտում վերհատույթային միավորի՝ հնչերանգի միջոցով, օր.՝ «Հերո էլ սոված սոված, ծարավ ծարավ»(338), «-Չէ՛, չէ...»(338), «...թո պապ Աբելը, խո՛ր գևա» (340), «Էլ պրծա՛վ, չէ՛, էլ ծեծ չեմ ուտի» (360), «Երանի քե՛զ» (374), «-Հա՛, -մռռաց Արուսը...» (371), որոնք ձևով գրական են, իսկ իմաստով՝ խոսակցական, երբեմն էլ՝ բարբառային շեշտադրությամբ, օր.՝ «-Վա՛նքերեցի, -կանչում էին Է՛ վերևներից...(349), «Այ տղա, է՛յ, սի՛մոնագու, թևիցդ կբռնեմ ու դուրս կշարտեմ, վա՛յրոպագու...» (375), «...աչքալույսն ի՛րինչ» (401), «-Այո...խեթը՛դ» (429) և այլն: Հարկ է նշել նաև, որ բառի վերջնավանկային ձայնավորը երկարացվում է հարցական հնչերանգով արտասանության դեպքում, ինչն էլ երաժշտականություն է հաղորդում Լոռու խոսվածքին⁴⁷⁵, օր.՝ «Բա են լավ-լավ տերտերներո՛ր» (362), «Եսի՛մ, Էնքան հանկարծ եկար»(345), «Համմե՛»(402) և այլն: Նման օրինակներով ավելի է ընդգծվել ժողովրդախոսակցական բնույթի տարրը, որը հեղինակը գործածել է կերպարների խոսքին հուզարտահայտչական մտերմական երանգ և գնահատողական վերաբերմունք հաղորդելու համար, նաև՝ տիպականացնելու բարբառախոս կերպարներին:

Բառապաշարային իրողություններ: Ժողովրդախոսակցական ու բարբառային բառերը ինքնանպատակ չեն Հ. Մաթևոսյանի այս ստեղծագործության մեջ ևս: Պատահական չէ, որ մեր կողմից քննվող նյութում հեղինակի պատկերած գեղարվեստական միջավայրն ամբողջանում է **Ծմակուտ** անունով՝ բաղադրված *ծմակ* արմատից, որը մի շարք բարբառներում պահպանվել է «1.հյուսիսահայաց անարև, ստվերոտ տեղ, 2. անտառ»⁴⁷⁶ իմաստով, և «տեղ կամ ինչ-որ բանով հարուստ վայր» նշանակությունն ունեցող *-ուտ* ածանցից, օր.՝ «Մոսկվայից, **Ծմակուտի** վրայով, Երևան են հասնում մի 100 րոպեում»(336): Բարբառային պարզ, միաժամանակ անհրաժեշտ ու բազմաբովանդակ նման բառի միջոցով «...հնարավոր կլինի ասելիքը «չասելով ասելու» և կռահումը ընթերցողին թողնելու...»⁴⁷⁷ ինքնատիպ ոճական հնարք կիրառել: Արձակագիրն այս հատուկ անունից ստեղծել է հասարակ գոյական, որով բնութագրել է միամիտ, պարզ ու համակերպվող կերպարներին անգամ մեկ բառով կամ արտահայտությամբ՝ նրանց հակադրելով պայթարող, համարձակ ու հնարամիտ կերպարներին, օր.՝ *ծմակուտեցի*՝ «...եթե Վանքերի կողմին է քաշել՝ չի կորչի, իսկ եթե, Սիրանուշ ջան, **ծմակուտեցի** է՝ թեկուզ հանրահաշվից էլ ուժեղ լինի» (337) և այլն: Այդպես և բարբառային կազմությամբ բառը, լինելով բնութագրական ու դիպուկ, կիրառված է որպես մականուն, օր.՝ «Մուրադեց **Ռիսաբագր** հանդ գնալիս տանձենուն փետը քաշեց»(338), «Գողի Արտաշը դրա պատասխանը տվեց» (357) և այլն: Դրանք, որպես «...գնահատողական երանգ ունեցող բառեր»⁴⁷⁸, բնականաբար արտահայտում են գրողի կամ նրա կերպարի գնահատողական վերաբերմունքը, ինչպես և ոճական այլ նշանակություն: Հարկ է նշել, որ նման երանգ ունի բնագրում տեղ գտած բարբառային բառաձևերի զգալի մասը, այսպես՝ *ըռիսավոր*, որը, կազմված լինելով *ռէիս*(<երախ) բառից, գործածվել է «1.*ագահ, աչքածակ, 2. ամենակեր, մեծաբերան*» իմաստներով՝ «...չունեն Ներսեսի ճարակությունն ու **ըռիսավոր** պաշտոնասիրությունը»(410). կարծում ենք՝ արտահայտում է նաև «1. *դիրք և արդեցություն ունեցող, 2. փխբ. պաշտոնավոր*»

⁴⁷⁵ Տե՛ս Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 149:

⁴⁷⁶ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2002, հ.2, էջ 416,

Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013, էջ 309:

⁴⁷⁷ Հայաջյան Մ., նշվ. աշխ., 2017, էջ 176:

⁴⁷⁸ Մարության Ա., նշվ. աշխ., էջ 209:

Նշանակությունները՝ «Դու որ մի քիսավոր մարդ լինեիր՝ գիտե՞ս ինչ կանեիր» (416), կամ *առնակուղ/առնակ(վ)ուտ/ըռնաուտ* (թրք. arnavut (այբանացի)), որը Ղարաբաղի բարբառում նշանակում է «շատակեր, որկրամոլ»⁴⁷⁹, Արարատյան բարբառում՝ «կատաղի, չար, երես առած» և «հաղթանակամ, վիթխարի»⁴⁸⁰, ըստ Լ. Եզեկյանի՝ «...հենց այս իմաստով էլ գործ է ածվում»⁴⁸¹ «...այդքան լեզու առնաուտ Իշխանի դեմ» (346) օրինակում: Կարծում ենք, որ այն ունի նաև «շատակեր» նշանակությունը հետևյալ օրինակներում՝ «Անունս Աղուն չեի, առնաուտ քուրդ էր, շա՛տ շատ էի ուտում իրենց չեղած հացը»(340), «-Առնաուտ, քուրդ, առնաուտ, քուրդ»(348): Տեղին ենք համարում նշել, որ ժողովրդախոսակցական լեզվում քուրդ-ն ունի «օտար, ոչ բարեկամասեր» իմաստը:

Բարբառային բառաշերտն են կազմում քննվող բնագրում առկա այնպիսի բառեր ու բառաձևեր, որոնք, ձևաբանական տարբեր ենթահամակարգերին պատկանելով, հատկանշական են կամ Արարատյան, կամ Ղարաբաղի բարբառային միավորներին, այսպես՝ *գոյական՝ կարտուլ*⁴⁸², «...կարտուլ է՝ կարտուլ էլ կեր»(338), *չափար՝ «չափարի* տակ թեքվում էր սկեսուրը» (342), *նանի՝ «-Հա, նանի ջան»*(344), «...եղպես աղյուս շալակած ապրես հարյուր տարի, նանի ջան»(347), *ջվալ՝ «...տեսավ դեղին կալերը և լիքը ջվալները»*(342), *յախուլ*⁴⁸³, «...պառավը եկավ, յախուլ դրեց փորին»(354), *ըշտարար*, որի բնագրային ձև *աշտարար-Մ*⁴⁸⁴ է՝ «Շողերը վար դրեց աշտարարը»(410-411), *ածական՝ մարյան*⁴⁸⁵, «...բռբռում էր մարյան ձիու պես»(426), *շաշ՝ «Կարդանենց շաշ Արտավազը»*(402), *բայ՝ թոխրել*⁴⁸⁶, «...ուզեց թորիսիչը գտնել ու թոխրել կարտուլը» (422), «-Էլել եմ ձեր տունը շնհավորեմ»(354), «...շապիկների մեջ ոչիլ կար, երեխան բլթբլթոտել էր» (343), «Շողերը ցորեն էր քամհարում»(410), *չրղահարել՝ «չրղերը թափահարել»՝ «Երեխան այգում էր, դեղձենին չրղահարում»* (360), *ճրղատվել՝ «մասնատվել»՝ «...Սիմոնը ճրղատվում էր կոլխոզի գործի և տան արանքում»*(353), *մակբայ՝ «...խեղճ Փիլոն կարեցածի չափ թռցնում հա թռցնում է կոլխոզից»*(365), «...երեսանց մխիթարում Աղունին» (346), *կասա՝ «...Էս գոյալին ձեզ հմար եմ չինել»*(354), *վերաբերական՝ «-Հաջողում»*(410), «...գեղեցկացել էս, հը առողջարան-մառողջարա՞ն չես գնացել»(426), *ծայնարկություն՝ «տո էլի՞ տնկվեցիր դեմ»*(342), «-Տղամարդ էս, տո՛, շուտ-շուտ արի» (418), «-Տո գնա, չեմ գալիս»(418), «-Ա դե հիմար-հիմար քիչ խոսիր»(414), «Ղահ, պահ, պահ, -ասաց Ադամը» (345), «Հը՛, -սպասեց Ադամը» (406), «...մարդիս հետ էլ՝ փիշի-փիշի» (364) և այլն:

Լռու խոսվածքային բառաշերտին են պատկանում *ական* «անկորուստ, լրիվ»⁴⁸⁷ ածականը, որը գործածական է նաև Ղարաբաղի բարբառում՝ *ական-սական* հարադրությամբ՝ «անխաթար, տեղը տեղին, կարգին»⁴⁸⁸ նշանակությամբ, օր.՝ «-Բա՛ չեկա՞ր տեսար խոզերը ական են, հավերը ական են»(383), նաև մակբայական կիրառությամբ՝ «...կայարանը լիքը ժողովուրդ-աղջիկ էս՝ բեռներդ ական պահիր»(382),

⁴⁷⁹ Տե՛ս **Սարգսյան Ա. Յու.**, նշվ. աշխ., էջ 66:

⁴⁸⁰ Տե՛ս Յայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2001, հ.1, էջ 100,

Մարկոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 321, 367:

⁴⁸¹ **Եզեկյան Լ.**, Յայոց լեզվի ոճագիտություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2003, էջ 173:

⁴⁸² Տե՛ս Յայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2004, հ.3, էջ 68:

⁴⁸³ Այդ մասին տե՛ս **Հալաջյան Մ.**, նշվ. աշխ., 2001, էջ 172:

⁴⁸⁴ Մանրամասն տե՛ս **Խաչատրյան Գ.**, նշվ. աշխ., էջ 30-31:

⁴⁸⁵ Տե՛ս **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 32, Յայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2007, հ.4, էջ 8:

⁴⁸⁶ Տե՛ս Յայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2002, հ.2, էջ 124:

⁴⁸⁷ Տե՛ս Յայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2001, հ.1, էջ 23:

⁴⁸⁸ Տե՛ս **Սարգսյան Ա. Յու.**, նշվ. աշխ., էջ 35:

աջջող՝ «Ոտքի տակ մի շատ աջող փայտ կար»(363), *այտա*«այ տղա» ձայնարկությունը, որը արագաբանության հետևանքով և դ-ի անկմամբ վերածվել է համադրական բարդության՝ ի սկզբանե ունենալով այդ նշանակությունը, ապա բառիմաստի ընդլայնմամբ դարձել է դիմելած, «դիմողական կոչական»⁴⁸⁹ ընդհանրապես, օր.՝ «-Այտա ի՛նչ է»(340), «-Այտա...այտա, նրա տեսածը իմ տեսածից շատ է»(414) և այլն: Նշենք նաև, որ հեղինակն իր կերպարների լեզվին բնականություն և տիպականություն հաղորդելու նպատակով միտումնավոր կրկնել է Լոռու խոսվածքից անբաժան «այտա» բառը, որ «...կարծես առանց այդ բառի խոսքն ու միտքը անավարտ կլինեին»⁴⁹⁰:

Մեր կողմից քննվող նյութում, ինչպես իրավամբ նկատել են, Յ. Մաթևոսյանն իր կերպարներին խոսեցնում է Լոռու տարբեր ենթախոսվածքներում⁴⁹¹ առկա բարբառային բառաձևերով՝ ոչ միայն ամբողջական դարձնելու նրանց նկարագիրը, այլև այդկերպ անհատականացնելու նրանց⁴⁹²: Այս կարգի լեզվական երևույթների հանդիպում ենք Սերոյի պատասխաններում՝ «-Բա՛՛ չեկա՞ր տեսար խոզերը ական են, հավերը ական են»(383), «-Վուլեյ-սրանցավարի հեգեց երեխան»(385), դարպասեցի «մերացուկ» խոսվածքին բնորոշ բառերից՝ արտահայտված Աղունի հիշողությունների ու երկխոսությունների մեջ՝ «...դեկտեմբերից չթողեց դասի գնամ իմ դարպասեցի մերացուն՝ անիխությունակ ա»: Ինքն ինությունակ էր...հշխանին իխշան է ասում. իխշան ճան»(384), «...տողք ծեծել էլ չէի կարող, անիխությունակ էի» (386) և այլն: Այս և նմանատիպ բարբառային բառաձևերի կիրառումը՝ իբրև ոճական հնարք, «...միանգամայն տեղին և արդարացված»⁴⁹³ է, քանի որ դրանք հնարավորություն են ընձեռում գրողին միտքն արտահայտելու սեղմ, բայց պատկերավոր, կերպարների խոսքը՝ ավելի բնական ու համոզիչ՝ միաժամանակ ստեղծելով գեղարվեստական միջավայրի երանգավորում: Այդպես և, օրինակ, խոզարած «Նիկալ պապի» խոսքի անմիջականությունն ու մտերմիկ երանգն ապահովում է բարբառային հնչողությամբ համապատասխան իրողությունների անհրաժեշտ գործածումը՝ «-Էլեյլ եմ ձեր տունը շնհավորեմ, այտա, էս ինչ լավ տուն ունեք ...էս գոալինի ձեզ հմար եմ շինել, ճաշ կուտեք, այտա... Վախեք ոչ, աման էլ կսարքեմ» (354-355) և այլն: Նկատելի է, որ բարբառային-ժողովրդական «...այս պարզ ձևերը պարզորոշ ընդգծում են հերոսների խոսքն ու կերպարը՝ ընթերցողին տեղափոխելով գուղական պարզ, ձևականություններից գերծ աշխարհը»⁴⁹⁴:

Բարբառային-խոսակցական լեզվաշերտի մասն են կազմում տարբեր ածանցներից բաղադրված բառաձևերը, որոնք ևս անընդունելի են արդի գրական նորմին, ինչպես՝ *ացու*՝ «...իմ ախպերացու Վալորը տակվերոց արեց»(372), «...ասաց դարպասեցի մերացուն» (345), *դրա թեք հորովածևով*՝ «...բաշեց իր տնացվի տեղը» (353), «...հշխան, մերացվին մի թող եղբան տանջի»(341), *ական*՝ «...դեռ հորենական օժիտի մեջ է քնում» (365), «...դարպասեցին տակվերոց արեց նրա մորենական գորգը»(345), *եցի*՝ «...տալ վանքերեցու ձեռքը. եթե վանքերեցին արժանի լիներ» (346), «...գրուցեց սևքարեցի պառավի հետ»(409), *իկ*՝ «...հո լնի՛կ չի»(357), *իչ*՝ «...ուզեց թորխիչը գտնել ու թորխել կարտողը»(422), *իք*՝ «...նրա տայիքն էլ վաթսուն ռուբլի է»(397), *վարի*՝ «...երեխան սրանցավարի ժպտում էր»(413), (*ա*)*վոր*՝ «...մի հատ ականջավոր գլխարկ»(366), *ուտ*՝ «...բայց լոբուտի կողքին այդպես էլ քնել էր»(422)] *ք՝ բաժինք*⁴⁹⁵, «Սիմոնի բաժինք վերմակի մեջ»(355), *բաժանք*⁴⁹⁶, «...ինչպես կար բաժանքի առաջին ձմեռը»(343),

⁴⁸⁹ Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 147:

⁴⁹⁰ Սահակյան Կ., նշվ. աշխ., էջ 193:

⁴⁹¹ Ահնիձորի, Զարինջի, Մարցի, Լորուտի, Թեղուտի և այլ ենթախոսվածքներ:

⁴⁹² Տե՛ս **Խաչատրյան Գ.**, նշվ. աշխ., էջ 25:

⁴⁹³ **Հալաջյան Մ.**, նշվ. աշխ., 2001, էջ 172:

⁴⁹⁴ Սահակյան Կ., նշվ. աշխ., էջ 189:

⁴⁹⁵ Տե՛ս **Մարկոսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 102:

⁴⁹⁶ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2001, հ. 1, էջ 147:

կայացրթ՝ «Ապրիլին կայառգը սկսեց» (352), օվի՝ «Կով կթելը հեշտ չի, բայց սովորովի է» (359) և այլն:

Ինչպես գիտենք, «...ժողովրդական կամ խոսակցական են կոչվում այն բառերը, որոնք լայն գործածություն ունեն և հասկանալի են շատերի համար»⁴⁹⁷: Խոսակցական իրողությունները, կրելով ու արտացոլելով տվյալ ժողովրդի ազգային լեզվամտածողությունը, համաժողովրդական են իրենց հասկանալիությամբ ու գործածականությամբ և դրանով իսկ լեզվի, նաև գեղարվեստական խոսքի (Ս.Ս.) ժողովրդայնությունն ապահովող հիմնական միջոցն են⁴⁹⁸: «Աշնան արև»-ում ժողովրդախոսակցական լեզվաշերտը կազմող լեզվի տարբեր ենթահամակարգերին պատկանող միավորներն ու կապակցությունները «...աչքի են ընկնում ոճական և արտահայտչական բազմազան երազներով»⁴⁹⁹: Դրանք կարելի է պայմանականորեն տարբերակել հետևյալ խմբերի. **ձևով ժողովրդախոսակցական**, որոնք, ունենալով գրական Նորմին համապատասխան տարբերակներ, օժտված են ոճական իմաստային նրբություններով ու արժեքով. դրանց գրական ձևերը, սակայն, տվյալ համատեքստում չունեն Նույն արտահայտչականությունը, այսպես՝ «Արադը դրված է կես հավի մոտ» (405) (օրի), «Փեղը ես հազնո՛ւմ» (403) (թղանցք), «...մեկը տաք ու լուռ քթքում է շատ մոտիկ» (422) (ծիծաղել, քրքջալ), «...և Արմենակին չանթել է երևանցի մի սվաղած սևը» (411) (հափշտակել, շպարված), «...հազիվ առիթ է, չէրած բեռները կապի ու քոչի Երևա՛ն» (337) (տեղափոխվել), «...գնում եմ մեծիս տնավորեմ» (368) (ամուսնացնել), եսիմ «Եսի՛մ, Էնքան հանկարծ եկար» (345), «Արզումանյանի եղբայրը կին բերեց ռաստովներից Եսի՛մ ում» (345) (չգիտեմ), «-Լավ, լավ, քեզ մի սպանիր, կամաց արի» (420) (դանդաղ), «Յավան Ե՛ս, Աղունիկ» (345) (համաձայնել, հավանել), «...պիտի գնայիր եղբորդ քառասունքին, մի երեսատեղի շոր չունեիր» (344) (հանրության առաջ ներկայանալի), «...Էդ արանքներում տակվերոց արեց» (345) (ժամանակամիջոց, պահ), «Մութաքայի մեջ՝ կար» (355) (թիկնաբարձ), «...մի քանի կոպեկ ես իրար գցել» (372) (հավաքել, կուտակել, ինսայել), նաև՝ «...լայառ Շուշանը բահը առած վրա էր քշել» (427), «Ձիերը լոտր էին» (427), «...Սերո ջան, մի դեկավար էլ հետը, որպեսզի քեզ քզի՝ թե ես խոտը Եստեղ դիր...» (385), «...փափուկ լուղուճու արեց» (423), «...մի երկու շաբաթվա իրիկուն-առավոտում կարվի» (423) և այլն:

Դժվար է գրական լեզվում գտնել կամ «...չկա այնպիսի բառ, որ կարողանա լիարժեք փոխարինել»⁵⁰⁰ բնագրում հանդիպող ժողովրդախոսակցական-փոխառյալ բառախմբին պատկանող հուզարտահայտչական երանգով յար, ջան և այլ բառերին, օր.՝ «Քոչարը գրնգում էր հասած արտերի վրա հանդով մեկ՝ լարուս, լարո՛ւ...» (349), «-Ոտքդ ցավում է՞, Սերո ջան» (382), «Կայ մամա ջան» (378), «Չէ՛, տատի ջան, չեմ ուզում» (345), «Ղոնարարը, Արուս ջան, Էն Է...» (368) և այլն:

Յեղիևակը չի խուսափել կիրառել նաև բարբառային-խոսակցական բնույթ ունցող հասարակաբանություններ, որոնք հիմնականում առկա են երկխոսություններում և չեն ստվերում նրա խոսքարվեստը, օր.՝ «-Սեպերը ինչի՞ ես բացել» (426), «-Բա քո շան լավիկն կաց» (389), «-Ախչի...ախչի...» (370), «...Նրանք կգան, կլակեն, կթափեն...» (416), «-ձենդ կտիր, քած» (363), «-Արա՛, Սամվե՛ր» (364), «...հովիվները խեղճ ջղայինին տվել են ֆերմայի ամբողջ երեսուն գամփռի ռեխը» (426), «Կկյազ Իշխանի տանը ես քոճ էի» (345), «-Քամակը բաց հերն է» (371), «...Որ կողքներիս ծնի ու սրտներիս ցավ տա» (350), «-Գնում եմ քո մեր Արուսին իշին դնեմ» (350) (հայիոյել), «-Մեր ցեղը գործ է անում, լյաստվելու

⁴⁹⁷ Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Բառագիտություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1993, էջ 185:

⁴⁹⁸ Տե՛ս Զարությունյան Զ., Նշվ. աշխ., էջ 252:

⁴⁹⁹ Մարությունյան Ա., Նշվ. աշխ., էջ 209:

⁵⁰⁰ Դամոյան Լ., Սարգսյան Մ., Զարտաշյան Ա., Երևանի խոսակցական լեզուն, Երևան, «Մուկետիկ», 2014, էջ 43:

ժամանակ չունի»(363), «- Դե ռա՛դ եղիր, թո դես ուղարկողի հերն անիծեմ» (419), «Ախչի, տո հարսիդ հերն էլ թաղեմ» (372) և այլն:

Արտահայտման ձևով գրական, սակայն իմաստով ժողովրդախոսակցական են, օրինակ՝ «-Յենց ապրես, - գզվելով խնդրեց Սիմոնը,- հենց ապրես, ձենդ կտրիր» (418) (գովեստ կամ սրտնեղություն), «Չարսը տեսես ինչ ցեղ է լինելու»(339) (տեսակ, բնույթ), «...երեխիս կերար, երեխիս հոգին կերար»(360)(չարչարեցիր, տանջեցիր), «...իսկ թո էր լավ հերը քերանը ծուռ կանգնած էր մոտները» (340) (խեղճուկրակ, անճար, 2.անխոս), «...այս սկեսուրը մազերից բռնեց ու կողպեթով աղաց կողերն» (346), «Արմենի կողը հաստ է»(416), «Գիշերվա էն դառը կեսին»(380), «...տո էլի՞ տնկվեցիր դեմս» (342), «Քո բռնած գործերը» (395), «Էդ ինչի՞ ես կոխել տունը» (350), «Իմ տղերքին ես տվել եմ առողջություն ու մի ձեռք անկողին»[15,373], «Պատերազմի ժամանակ մի փող կարտողով ապրում էիս»(371) «...ես տներին-դռներին լավ կնայես» (405), «-Տնայե՛ն ն-ժպտաց Աղունը»(402), ձայնարկություններից՝ «Ա՛յ ախչի» (411), «Ի՛... դարպասեցի...»(419), «-Իա՛...ներծծվելը էն ներծծվելն է էլի» (384)], «-Ե...թո՛ւ» (419), «Ու բշտվով անկողին.-քոչ, քոչ, քոչ»(397) և այլն: Այս բառախմբի բառերից փոխանվանական կիրառությամբ գործածված է պղինձ-ը՝ պղծե կաթսա բառակապակցության փոխարեն՝ «Մանեն կռացած պղինձ էր լվանում, որ չղմռաց՝ պղինձը գլխովդ կտամ...»(348), տասներորդում-ը՝ համապատասխանելով տասներորդ դասարանում արտահայտությանը՝ «-Ես տարի Նոր վերջացնելու է, տասներորդում է» (415), Նույնն Լ՝ յոթերորդը՝ «-Յոթերորդը վերջացես կգնաս» (400), լիտրանոց՝ մեկլիտրանոց շիշ կառույցի փոխարեն՝ «...ասաց Սիմոնը, լիտրանոցը տարավ...» (402) և այլն: Ինքնատիպ են նաև վրա կապի իմաստային դրսևորումները, այսպես՝ «Մի երկու ամսվա վրա որոշեցին»(346) «հետո», «Վրա ութերորդ օրը ցավերը բռնեցին»(350) «ղնթացքում» իմաստով, իսկ հարադրությունների մեջ՝ «...պառավը վրա բշեց Մանեին»(348), «...որպեսզի հետո վրա տա ավելի չար ու սուր»(427) «հարձակվել» նշանակությամբ: Այդպես և բաշել բայը իմաստային տարբեր կիրառումներ ունի, որոնք արտահայտվում են միայն համատեքստում՝ «...թո բաժին տանջանքը ես արդեն բաշել եմ»(343) «կրել, դիմանալ», «...զիտեր թե ինչ կլինի քաշած նա դարպասեցի մերացվի ձեռքին»(347) «հանդուրժել», «Չի հասկանում, բեռուն է քաշել» (337) «նսնսվել», «Մուրադեց Ռիսաբացը հանդ գնալիս տանձենուն փետը քաշեց»(338) «գողանալ, տանել», իսկ կրավորական տարբերակը՝ «անցել» իմաստով՝ «...բեզանից էլ խոզի ոջիլ էր քաշվել երեխայի վրա»(355) և այլն: 3. Մաթևոսյանը, հարազատ մնալով իր որդեգրած սկզբունքներին, իր կերպարների ապրած գեղարվեստական ժամանակաշրջանն ամբողջապես չէր կարող արտացոլել առանց ռուսերենից անցած փոխառությունների ու օտարաբանությունների, որոնք, խոսակցական բնույթ ունենալով, ըստ հարկի համադրվել են գրական տարբերով, օր.՝ «Սյուլիտ և քյուրոկրատ» (341), «Ես քեայիստ եմ»(370), «...թող գնա իր տեղը գտնի: Վայր՝»(417), «Վանքերի կնյազ Նիկոլը»(377), «-Աղջիկը ինժեներ է» (368), նաև՝ «...խեղճ Փիլոն կարեցածի չափ թոցնում հա թոցնում է կոլխոզից» (365), «Շոֆերին ասել եմ...» (429), «Արմենակը թերթերում շրջկոմների քարտուղարներ է քննադատում» (364), «ժուռնալիստների միությունը...»(341) և այլն:

Քերականական իրողություններ: «Աշնան արև» վիպակում ոճական ուրույն նշանակություն ունեն հատուկ անունների ուղիղ ու թեթ հոլովածների միասին կիրառությունները. նման կերպ անձինք տարբերակել են միմյանց, ինչը բնորոշ էր ժողովրդախոսակցական լեզվին, օր.՝ «Ես Եզորի Սիրուչը չեմ»(364), «Սաթյի Լուսիկն»(412), «Քոչարի Չրանտը Կիրովական ավտո է առել» (408), «Վրացոնց Արշակի Սուրենն էր» (413), «...ամենասիրունը Սիմոնի Աղունն է» (405), «Լևոնի Ելենը սիրուն է»(405), «...իմ սկեսուրը Աբելի Աղունն է եղել» (375) և այլն, այդպես և՝ «գերդաստան, ցեղակցություն» մատնանշող -էնք հոգնակերտ մասնիկի սեռական հոլովածնով հարադրությունները, օր.՝ «Մուրադենց Սրբուհին»(357), «Մելքումենց Իվանը»(410), «Աթոյենց Ստեփանի տունն»(408), «Վարդանենց Արտավազը» 402] և այլն: Այսօրինակ

կիրառությունները ճանաչողական ու բնութագրական են կերպարների համար, միաժամանակ ընդգծում են նրանց անհատականությունը:

Այս կարգի իրողություններից հետաքրքրական են նաև հատուկ անուններից հասարակների կազմությունները մաթևոսյանական ընտրության տեսանկյունից, այսպես՝ «...Այ տղա, է՛յ, սի՛մոնագու, թևիցդ կբռնեմ ու դուրս կշարտեմ, վա՛րողագու...»(375), «...եսի՞մ ինչ սիմոնագվի բաժին է դառնալու հովիտներում»(410) և այլն: Վերջիներս, լինելով ոճականորեն ակտիվ, արտացոլում են խոսակցի գնահատողական վերաբերմունքը: Մեկ այլ դեպքում ոճական նպատակներով տրամայից շեղում է տեղանունների հոգնակի թվով կիրառությունը, որն «...արտահայտում է տվյալ վայրը և նրա նման այլ վայրեր իրենց ամբողջ ընդգրկմամբ»⁵⁰¹, օր.՝ «Արզունանյանի եղբայրը կին բերեց ըաստովներից եսիմ ում» (411):

Արդի գրական հայերենի հոգնակի թվով գոյականներից տարբերվում են կիրառված *թթներ*, *փեշներ* ձևերը, որոնք հատկանշական են խոսակցական լեզվին, օր.՝ «...չուկան թթներիս տակ է»(337), «...սրանք՝ փեշները քշտած աղջիկ փնտրեցին» (365): Իսկ գրաբարից ավանդված արմատից և **-եր** հոգնակերտից բաղադրված *«կռներ»*-ը համաժամանակյա կտրվածքով բարբառային է, օր.՝ «Սիմոնիս կռներին մատա՛ր»(344): Մեր կողմից քննվող նյութում առկա է Արարատյան և Ղարաբաղի բարբառներին բնորոշ **-նի** հոգնակերտով հետևյալ կիրառությունը՝ «...ես գրալինի ձեզ հմար եմ շինել»(354):

Ոչ գրական **-ք**, **-անք**, **-ենք**, **-օնք** հոգնակերտ թեթույթներով կազմությունների ուղիղ ու հիլովված տարբերակները, տարածված լինելով ժողովրդախոսակցական լեզվում, բարբառային երանգ են հաղորդում մաթևոսյանական արձակին, օր.՝ «...չգիտեմ մերը արծե՛լ է թե երեխեքն են կորցրել» (367), «...տղերքը էլ ողջ-առողջ պտույտ են գալիս շուրջդ»(358), «...դուրս գցեց հորանց տված մահճակալը» (354), «Աղունը Վանքեր հորանց էր գնացել»(355), «...պապոնք ունեիր»(363), «...իմ պապոնց տուն էլ եկել էր իմ մոր պապոնց տնից»(369) և այլն: Հավաքականության իմաստ ունեն *-եցի* ածանցի հոգնակի ուղղականով բառաձևերը՝ «...միրգ ծախելու եկած ղազախեցիք»(346), «...նրա գորգը գործեն հովիտեցիք»(368) և այլն:

Ոչ գրական նորմին հատուկ լեզվական հետաքրքրական իրակություններ են նաև բայական հարադրությունների՝ **-ք** հոգնակերտի սեռական-տրական հիլովաձևով արտահայտված վերադիրները, ինչպես՝ «...գելերոց լինես, նանի ջան»(355) *«գայլերի բաժին դառնալ»*⁵⁰², *«Տերտերոց լինես, նանի ջա՛ն: Գիր անել էր տալիս, գելերոց լինես»* (355), «...հիմա հավերն էլ աղվեսերոց կլինեն» (356), «Օժիտի կարպետը դարպասեցին եղ արանքներում տակվերոց արեց»(345), «...իմ ախպերացու Վալորը տակվերոց արեց»(372) (վերջինս համարժեք է խոսակցական լեզվում տեղ գտած *տակով* (Ղարաբաղի բարբառում՝ *տակավ*) *անել* հարադրությանը՝ *«գողանալ, յուրացնել, թաքցնել»*⁵⁰³ իմաստներով) և այլն: Այս կազմությունները դարձվածային միավորի արժեք ունեն: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Լոռու որոշ գյուղերում միավանակ մի շարք բառերի հոգնակին կազմում են **-ան** մասնիկով, իսկ մյուսներում՝ համարժեք **-եր(-եր)**-ով, օր.՝ *գայլ>գյէլ, հոգ. ուղղ. գլիլան-հոգ. սեռ. գլիլանց*⁵⁰⁴: Կարծում ենք՝ վերոնշյալ մյուս ձևերը թերևս առաջացել են համաբանության հետևանքով կամ այլ բարբառային միավորի ազդեցությամբ⁵⁰⁵:

⁵⁰¹ Մկրտչյան Ռ. Խ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Երևան, ԶԳԱ հրատ., 1991, էջ 75:

⁵⁰² Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2001, հ. 1, էջ 234:

⁵⁰³ Տե՛ս Սարգսյան Ա. Յու., նշվ. աշխ., էջ 708:

⁵⁰⁴ Տե՛ս Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 18:

⁵⁰⁵ Կարևո բարբառում **-ք** հոգնակի ստացող որոշ գոյականներ հոգնակի սեռականում ստանում են **-օց** (տե՛ս Մկրտչյան Յ. Մ., Կարևո բարբառը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ, 1952, էջ 45):

Ինչպես ուղիղ, այնպես էլ թեթ հոլովածների հողառությունը ևս բնորոշ է Լոռու խոսվածքին⁵⁰⁶, ուստի խնդրո՞ւ առարկա կյուրթն անմասն չէ նմանաբնույթ կազմություններից, օր.՝ *սեռական*՝ «...տանձնունը փետը բաշեց» (338), *գործիական*՝ «Մեջների խոճովը Սիրանն էր» (348) և այլն: Ստացական հողով տարբեր հոլովածներով կազմությունների մի մասը բարբառային լեզվաշերտի մեջ են դասում, իսկ մյուս մասն էլ, բաղադրված ընդհանուր հայերենյան արմատներից, ավելի մոտ է ժողովրդախոսակցական լեզվին, այսպես՝ *սեռական*՝ «-Ախպերը...ախպորը ցավը տանեմ»(339), «...տղիղ հերն էլ անիծեմ»(372), «...շուկան քթներիս տակ է»(337), մեկ այլ դեպքում կապակցությամբ՝ «Քո լեզվիդ տերը մեռնի, քո լեզվիդ»(411), *հայցական*՝ «Տղերանցը ուղարկել ես»(409), *բացառական*՝ «-Վեր թռիր տեղիցը...»(337), «Աղջկանիցը տեղեկություն ունե՞ս» (429), *գործիական*՝ «...պղինձը գլխովդ կտամ»(348) և այլն: Նկատելի է, որ ստացական հողով բառաձևի և դերանվան սեռական հոլովի համատեղ կիրառությունը նպաստում է իմաստի ընդգծմանը⁵⁰⁷: Ներգոյական հոլովի իմաստն արտահայտել է գրաբարից ավանդված *միտս* «մտքումս» (<ի միտս) բառաձևով՝«...Մի բան էր միտս, մոռացա»(383):

Բարբառային բառաշերտին հատուկ *ստացական դերանունների* հոգնակիանիշ ձևերի օրինակներից են՝«-Իմո՛ւնք որտեղ են ծնվել» (374), «Քոնոնք գուցե ավելի ծանր լինեիս»(369), «...քոնոնք բուրդը լվացած չե» (369) և այլն, որոնք ևս նպաստում են մտքի սեղմ արտահայտմանը:

Խնդրո՞ւ առարկա բնագրում հանդիպում են Լոռու խոսվածքին, ինչպես և Ղարաբաղի բարբառին բնորոշ ըղձական եղանակի ապառնու ժխտականի կազմություն՝ **ոչ** հետադաս մասնիկով⁵⁰⁸, օրինակ՝ «Վախեք ոչ, աման էլ կսարքեմ»(354-355):

Նկատելի է, որ բարբառային բառաշերտի մեջ դասվող բառաձևերն ու քերականական իրողությունները, ունենալով տեղայնացված բնույթ, ոճականորեն լիցքավորված տարրեր են:

Ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ մնալով՝ արձակագիրը ժամանակի պարագան արտահայտել է գոյականի ներգոյական հոլովածնով, օր.՝ «...Էդ արանքներում տակվերոց արեց»(345) «...Մի երկու շաբաթվա իրիկուն-առավոտում կարվի» (423) և այլն: Հրամայական եղանակաձևին հորդորական իմաստ ու մեղմ երանգ է տալիս **մի** բառ-մասնիկը⁵⁰⁹, «-Էն երեխայի դպրոցին մի հետևիր,-ասաց Աղունը,-վատ է սովորում...» (429):

Ժողովրդախոսակցական բնույթ ունեն նաև բնաձայնական հիմքից բաղադրված բայերը, որոնց ըստ հարկի գործածումը ևս գնահատողական ու հուզարտահայտչական երանգավորում է հաղորդում կերպարների ու հեղինակի խոսքին, այսպես՝ «...հին ցավը օձի պես մի պահ չիչիպաց փորում»(342), «...պատուհանի մոտ քթերում ընդդնդաց»(345), «...որ չըմռաց՝ «պղինձը գլխովդ կտամ» (348), «Սիմոնը ըստընդեղով կամուրջն անցավ»(413), «...ըռըռում են կամ բառաչում» (421), «...աչքերը ճայճայցնելով»(365), «...երեսուն հավը չիչիչկալով ձու է ածում»(364) և այլն:

Ուրույն դրսևորումներով կիրառված են բարբառային ու ժողովրդախոսակցական բառաշերտերին պատկանող հարադրավոր բայերը, դրանցից կազմված դարձվածային միավորները, որոնք, օժտված լինելով ոճական տարատեսակ նրբերազներով ու նշանակություններով, պատկերավորություն են հաղորդում Մաթևոսյանի այս բնագրին նույնպես: Այսօրինակ իրողությունների՝ բարբառային ու ժողովրդախոսակցական լինելու սահմանները դժվար է որոշել. կարծում ենք՝ թերևս *բարբառային* կարելի է համարել այն արտահայտությունները, որոնց կիրառությունը սահմանափակվում է որևէ բարբառով,

⁵⁰⁶ Այդ մասին տե՛ս **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 96:

⁵⁰⁷ Մանրամասն տե՛ս **Մարկոսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 140:

⁵⁰⁸ Տե՛ս **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 134:

⁵⁰⁹ Տե՛ս **Մկրտչյան Ռ.Խ.**, նշվ. աշխ., էջ 235:

իսկ մյուսները, որոնք ընդհանրական տարածում ունեն արևելահայ խոսակցական լեզվում *ժողովրդախոսակցական*, օր.՝ *բարբառային*՝ «պառավի յուրի հախից մի լավ էկան, կճուճը կես էր ընկել» (348), «բլուրների արանքից կարկուտը փախս է ընկնում» (336)], «Մանե հարսը նրանց թաթուն քսի էր տալիս» (346), «- Դեց ապրես, ռադ եղիր՝ աչքս թեզ չտեսնի» (419), «Այ տակնապոկ լինի թո լեզուն» (393), «...բաղաթում իմ ընչին ոչ մի կնիկ քազի չի տա»(402), «...տանդ վրա չար աչք կա, ուզում են բախտը կապել» (355) և այլն, *ժողովրդախոսակցական*՝ «հարյուր տարի է՝ ճաք է տվել մեծ ժայռը» (336), «...Աղունիկ, Սիմոնից մարդ սարքիր»(339), «...ծովսը ես էր տալիս» (343), «...ինչպես են շաղ գալիս կրակները» (361), «...տանես քամուն տա՛ս» (370), «...բո դռնից էիր աչքիդ գոռ անում»(360), «...պառավին մատ են արել»(368), «...սրանք՝ փեշները քշտած աղջիկ փնտրեցին» (365), «Դամբո հորեղբայրը մի ժամանակ լավ թափ է վեցրած եղել» (408), «...ապրուստի գուլին էլ հողեմ»(355), «-Տակուգուխ ես անում» (415), «...Սամվելիս գա՛վր տանեմ»(369), «-Դամովը՝ դեռ համով է, համը տեսնենք երբ է դուրս գալու»(414), «...էդ ում են մարդի տալիս, ախչի»(345), «-Ախչի, գործի՞դ գևա» (374), «...ուժեղների դեմ մոռանում են, որ լեզու ունեն»(347), «Գիրկապ լինես դու, Արո՛ւս» (378), «Քո լեզվիդ տերը մեռնի, թո լեզվիդ» (411), «...Ճմակուտի կողմը քերանը կապած է» (375), «Նրա հացում աղ կար» (374), «Չողի տակ հանգիստ չունենա թո պապ իշխանը»(339), «...Լո՛ւյս դառնաս, Նիկալ պապի» (355), «Ոչ մեկի գուլին էլ լուղումեղրի մեջ չի» (429), «...ու դու էլ երեսդ դեմ էիր արել» (345) և այլն:

Հայտնի է, որ խոսակցական լեզուն գրականից տարբերվում է նաև անվանական ու բայական հարադրությունների տարածված կիրառականությամբ: Նմանաբնույթ բարդությունները բնորոշ են և՛ Արարատյան ու Ղարաբաղի բարբառերին, և՛ Լոռու խոսվածքին: Մեր կողմից ուսումնասիրվող բնագրային նյութը ևս հարուստ է կրկնավոր ու հնչյունափոխված անվանական հարադրությունների հետաքրքրական ու ինքնատիպ դրսևորումներով, որոնք, տարբեր խոսքիմասային պատկանելություն ունենալով, «...Մաթևոսյանի լեզվաոճական յուրահատկություններից»⁵¹⁰ են: Հարկ ենք համարում նշել, որ բարդությունների անհնչյունափոխ բառարմատները հիմնականում գրական նորմին համապատասխան տարրեր են, իսկ կրկնության դեպքում դրանք, իբրև ժողովրդախոսակցական լեզվում կիրարկվող իրողություններ, ոճական նշանակություն ունեն՝ պատկերավորություն հաղորդելով ոչ միայն կերպարների, այլև հեղինակի խոսքին: Լեզվի ստորոգական մակարդակում դրանք տարբեր շարահյուսական պաշտոններով են կիրառվել, այսպես՝ *ենթակա*՝ «ես դառւոմա-մաուրման, խնձոր-մնձորը, հինգ հարյուր հատ ձու-մուն՝ գրո»(368), *որոշիչ*՝ «-Տաք-տաք գլխարկ» (408), «...թղթով հատ-հատ փաթաթածը ձու էր»(344), «Բա են լավ-լավ տերտերնե՛րդ» (362), *ձևի պարագա*՝ «...փող հաշվել չգիտի, քուռ-քուռ ստանում է, քուռ-քուռ էլ ծախսում»(337), «Սիմոնը նայում էր ու խեղճ-խեղճ ժպտում»(345), «-Մենք կամագ-կամագ ապրում ենք» (410), «Ենպես էլ կարևոր-կարևոր գալիս է՝ տեսնողը կասի...»(420), «-Երեխա-երեխա մի խոսիր, հեց ապրես» (416), «-Հիմար-հիմար քիչ խոսիր» (429), «...բարձր-բարձր գրուցեց սևբարեցի պառավի»(409), «-Տղամարդ ես, տո՛, շուտ-շուտ արի» (418), «...հերդ վեր կացավ ու հիվանդ-հիվանդ գևաց Զովիտ» (415), *ժամանակի պարագա*՝ «Կափարիչը հիմա-հիմա անաղմուկ էլնելու էր տեղից»(378), *բաղադրյալ ստորոգյալ*՝ «կարգին տղա՛ է, թե՛ լածիրակ-մածիրակ է» (400) և այլն: Իբրև *պարզ ստորոգյալ* կիրառել է բայարմատի կրկնությամբ՝ «Դիմա տրաք-տրաքելու էր շան հաչոցը»[15,379], նաև բայական հարադրության վերադրի կրկնության բարբառային տարբերակ՝ *ես-ես անել*՝ «...պառավը ես-ես արեզ»(348) *«նախանջել*»: Նկատելի է, որ ընդգծվածները հիմնականում արտահայտում են հատկանիշի գերակայություն, իմաստի սաստկականություն, բազմակիություն, տևականություն, երբեմն էլ՝ անորոշություն:

⁵¹⁰ **Խաչատրյան Գ.**, նշվ. աշխ., էջ 28:

Արձակագրի գրական ինքնատիպ կիրառումներից կարելի է համարել արմատի կրկնությունը և գրաբարյան նախդրից բաղադրված անվանական վերադրով կազմությունը, որը բարբառային իմաստ է ձեռք բերել. *ինքզինք՝* «Աստված ինձ ուրիշներին ու *ինքզինք ուտող* է ստեղծել»(361), որն այդպեղ տարածված էր Պուլի բարբառում՝ «ինքն իրեն» իմաստով, նաև նույն հարադրությամբ՝ «1.իր մեջ կատաղել՝ բորբոքվել, 2.անհանգստանալ»⁵¹¹ նշանակություններով. Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում *զինքը* «...գործածվում է որպես ուղղական»⁵¹², իսկ Սյունիք-Արցախ տարածաշրջանի բարբառային միավորներում *զինքը* տարբերակով, որից էլ՝ *զինքը օտելը*՝ նշված իմաստներով:

Բնական է, որ հասարակ, թերի կրթությամբ կամ անուս մաթևնոյանական կերպարների կենդանի խոսքի հնչեղությունն ու անկեղծությունը պայմանավորված են բարբառային, ժողովրդախոսակցական ու գրական տարաբնույթ բառային միավորների, կապակցությունների ու կառույցների հմուտ համադրմամբ: Ուսումնասիրության նյութի սահմաններում փորձել ենք ներկայացնել խնդրո առարկա բնագրի ոչ գրական լեզվաշերտն ամբողջացնող իրողությունների յուրովի դրսևորումները: Հայտնի է, որ այս լեզվաշերտը ներառում է ոճական նորմին համապատասխան բառախմբեր: Միայն Լոռու խոսվածքին հատուկ բառաձևերը սակավ են՝ ի տարբերություն բարբառային տարբերակների:

Այսպիսով՝ քննության առարկա լեզվանյութը հարուստ է ժողովրդախոսակցական բառաշերտը ձևավորող տարատեսակ բառերով ու քերականական իրողություններով, քանի որ գրական արևելահայերենը կազմավորվել է Արարատյան բարբառի հիման վրա: Քննվող բնագրում տեսակարար կշիռով և հաճախադեպ կիրառությամբ զգալիորեն շատ են բառապաշարային տարբեր իրողությունները, որոնց մեծ մասը ժողովրդախոսակցական է, ապա քանակապես հաջորդում են ձևաբանական մակարդակին բնորոշ միավորները, որոնցից սակավաթիվ են բարբառային-խոսվածքային ենթաշերտին պատկանող եղանակաժամանակային ձևերը:

Բնագրային օրինակներով ներկայացված հնչունափոխական երևույթները հիմնականում ձևավորել են բարբառային-խոսակցական տարբերակներ:

NON-LITERARY (DIALECTAL AND COLLOQUIAL) LANGUAGE LAYER IN «AUTUMN SUN» BY HRANT MATEVOSYAN

SVETLANA MANUCHARYAN

Goris State University, Faculty of Humanities, Deputy head;

Member of the Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA),

Ph.D. in Philology, Associate Professor,

Goris, Republic of Armenia

The article examines the non-literary (dialectal and colloquial) language layer of «Autumn Sun». The purpose of the study is to present the linguistic-stylistic expression of the elements that include that language layer. In order to achieve the goal, the objective of investigating the peculiarities of textual reality has been set forth. The colloquial and dialectal realities that deviate from the existing literary norms in the field of research are mainly general of the Araratian and Karabakh dialects and typical, the Lori dialect in particular. They are verbal and grammatical phenomena formed as a result of different types of an alternation. In this work, the words and phrases of a non-literary language layer have been used mainly to create an artistic environment

⁵¹¹ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, «Գիտություն», 2001, հ.1, էջ 176:

⁵¹² Տե՛ս *Մարկոսյան Ռ.*, նշվ. աշխ., էջ 128:

and characters. Especially the speech of heroes is rich in such examples. Folk-colloquial and dialectal language layers differ from literary ones in nominal and verbal forms, which are also common in the examined work. The word forms and grammatical realities that are included in the dialect vocabulary have a localized nature, the proper use of which gives an emotional expression to the artistic speech.

Methods of synthesis and comparison have been used during the research.

In the studied language material, currently after the literary forms, the folk-colloquial and then dialectal versions have a significant weight, and only the words and phrases specific to the Lori dialect are few.

Keywords: *dialectal words, folk-colloquial vocabulary, dialectal word forms, linguistic-stylistic expression, imagery, folk language thinking, artistic speech, stylistic significance.*

НЕЛИТЕРАТУРНЫЙ (ДИАЛЕКТНЫЙ И РАЗГОВОРНЫЙ) ЛЕКСИЧЕСКИЙ СЛОЙ В ПРОИЗВЕДЕНИИ ГРАНТА МАТЕВОСЯНА «ОСЕННЕЕ СОЛНЦЕ»

СВЕТЛАНА МАНУЧАРЯН

врио декана факультета гуманитарных специальностей

Горисского государственного университета,

член Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА),

кандидат филологических наук, доцент

г. Горис, Республика Армения

В данной статье мы рассматриваем нелитературный (диалектный и разговорный) лексический слой произведения Гранта Матевосяна «Осеннее солнце». Целью исследования является представить, как реализуются лексические и стилистические элементы, которые входят в состав рассматриваемого лексического слоя. Данной целью обусловлена задача исследования – охарактеризовать особенности представленных контекстуальных реалий. Разговорные и диалектные реалии, которые отклоняются от существующей в исследуемой сфере литературной нормы в основном одинаковы для араратского и карабахского диалектов и особенно типичны для, лорийского говора. Это лексические и грамматические формы, образованные в результате различных фонетических изменений. В этом произведении Г. Матевосяна слова и выражения лексического нелитературного слоя использованы, главным образом, для создания соответствующей атмосферы и образов персонажей, речь которых отличается богатством языковых средств. Разговорные и диалектные лексические слои отличаются от литературных и особенностями номинально-вербальных и отношений, которые так же широко представлены в рассматриваемом тексте. Слова и грамматические формы языковых реалий, составляющие один из диалектных уровней, здесь уподоблены местному говору, что придает повествованию большую выразительность.

Во ходе исследования нами были использованы сопоставительный и сравнительный методы.

В результате исследования мы пришли к выводу о том, что в рассмотренном нами лексическом материале в наибольшей степени, после актуальных на современном этапе литературных норм, представлены разговорные, далее-диалектные варианты слов, в наименьшей степени – слова и выражения, характерные для лорийского говора.

Ключевые слова: *диалектные слова, народно-разговорный слой речи, разговорные словоформы, лексические и стилистические элементы, выразительность, народное речевое мышление, художественная речь, стилистическое значение.*

ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱԿԱԶԵՎԻ ՈՒՄՈՒՑՈՒՄԸ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴԴՐՈՑՈՒՄ*

ՀՏԴ 811.19

DOI: [10.52063/25792652-2021.1-158](https://doi.org/10.52063/25792652-2021.1-158)

ՀՈՒՓՈՒՄԵ ՍԱՐԳՍՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ,
Ա.Պ. Չեխոսկի անվան հ. 55 դպրոցի հայոց լեզվի և
գրականության ուսուցչուհի,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
sargsyanrippy@gmail.com*

Անցյալ կատարյալը բայի դժվար յուրացվող ժամանակաձևերից է: Գիտականորեն մշակված և հիմնավորապես ուսումնասիրված այս ժամանակաձևի ուսուցման հարցերը համեմատաբար քիչ են քննարկվել մեզանում: Հոդվածում նպատակ է դրվել նոր տեսանկյունից մատուցել հարցը, ուսումնասիրել անցյալ կատարյալ ժամանակաձևի առանձնահատկությունները և ներկայացնել ուսուցման համեմատաբար նոր տարբերակ: Նշված նպատակին հասնելու համար խնդիր ենք դրել պարզել անցյալ կատարյալի ժամանակային իմաստի դրսևորումները և քննել կազմության առանձնահատկությունները:

Հետապոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, սինթեզ), այնպես էլ գիտամանկավարժական հետապոտության մեթոդներ՝ համադրում, վերացարկում, համակարգում:

Ուսումնասիրության ընթացքում հանգել ենք այն երակացության, որ անցյալ կատարյալի ուսուցումը ավելի արդյունավետ կլիներ, եթե միջին դպրոցի դասագրքերում հակիրճ ներկայացվեին գործողության կատարման ժամանակների իմաստային տարաբաժանումները, ժամանակաձևի իմաստային նկարագրությունն ու կիրառությունները, համեմատությունը մյուս անցյալ ժամանակների հետ, իսկ ավագ դպրոցում նպատակ դրվեր ոչ միայն վերհիշելու այդ ամենը, այլև խորացնելու ուսուցումը. պետք է հավելյալ գաղափար տալ բայափոխների մասին, առավել մանրամասն ներկայացնել ժամանակաձևի կազմությունը՝ նշելով նաև նրա կիրառական յուրահատկությունները:

Հիմնաբառեր՝ հանրակրթություն, միջին և ավագ դպրոց, ուսուցում, անցյալ կատարյալ ժամանակաձև, անցյալ ժամանակ, կրթմաստեր, բայի խոնարհման համակարգ, բայի հիմնական ժամանակներ, պարզ և ածանցավոր բայեր, բայափոխներ:

Ներածություն

Անցյալ կատարյալը սահմանական եղանակի այն ժամանակաձևն է, որի ուսումնասիրությունը հաճախ են անդրադարձել հայ լեզվաբանության մեջ⁵¹³: Համեմատաբար քիչ է քննարկվել այդ ժամանակաձևի ուսուցման հարցը: Ժամանակի

* Հոդվածը ներկայացվել է 26.02.2021թ., գրախոսվել՝ 01.03.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

⁵¹³ Տե՛ս Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Գիրք Ա, Ե., 1961: Ղարիբյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., 1954: Աբրահամյան Ս., ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1975: Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965: Ասատրյան Մ., ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Ե., 2004:

ընթացքում փոխվում են հատկապես ուսուցման մասին պատկերացումները, և առաջանում են խնդրի ուսումնասիրության նոր պահանջներ: Անհրաժեշտություն է դառնում ուսուցման նոր մեթոդների ու ձևերի մշակումը:

Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնելու անցյալ կատարյալ ժամանակաձևի ուսուցման համեմատաբար նոր տարբերակ. մասնավորապես անդրադարձել ենք անցյալ կատարյալի ժամանակային իմաստի դրսևորումներին ու կազմության առանձնահատկություններին՝ ընտրելով ուսուցման ժամանակակից եղանակ:

Անցյալ կատարյալ ժամանակաձևը հանրակրթական միջին դպրոցում ուսուցանվում է 7-րդ⁵¹⁴, իսկ ավագ դպրոցում՝ 11-րդ դասարանում. ընդ որում, հումանիտար⁵¹⁵ և ընդհանուր ու բնագիտամաթեմատիկական⁵¹⁶ հոսքերի համար գործում են առանձին դասագրքեր: Դպրոցական ծրագիրը բեռնաթափելու սկզբունքից ելնելով՝ դասագրքի հեղինակները չեն ներառել **հիմնական և հարաբերական ժամանակներ** հասկացությունը, և բայի խոնարհման մեջ ներկայացվում է երեք ժամանակ՝ ներկա, անցյալ, ապառնի⁵¹⁷: Ժամանակաձևերը տրվում են ժամանակների բաժանումով՝ առանց դրանց իմաստային տարաբաժանումների և ժամանակաձևերի իմաստային նկարագրության:

Պատկերը մի փոքր այլ է ավագ դպրոցի դասագրքում, որում շեշտը դրված է անցյալ կատարյալի կազմության առանձնահատկությունների վրա: Ուսուցչի ձեռնարկում բայի ուսուցման համար հեղինակները գրում են. «11-րդ դասարանում պետք է անհրաժեշտության դեպքում հիշեցնել որոշ մանրամասներ և ընդհանուր առմամբ ավելի խորացնել գիտելիքները»⁵¹⁸: Սա մի քիչ անհասկանալի է, քանի որ հստակ նշված չէ, թե որոնք են լինելու թեմայի ուսուցման կարևորագույն տարբերությունները միջին ու ավագ դպրոցում: Իսկ հատվածն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «Բայի խոնարհումը ևս 11-րդ դասարանում հնարավոր է բացատրել համակարգված՝ հարացուցային ձևով, քանի որ նախորդ դասարաններում աշակերտներն արդեն անցել են եղանակներն իրենց ժամանակաձևերով»⁵¹⁹: Այսինքն՝ երկու դասագրքերում էլ որոշակիորեն անտեսվել են գործողության կատարման ժամանակների իմաստային տարաբաժանումները, ժամանակաձևի իմաստակառուցվածքային նկարագրությունը:

Ժամանակի քերականական կարգի իմաստային կառուցվածքը

Ժամանակաձևի իմաստային բնութագիրը հասկանալի դարձնելու համար շատ կարևոր է նախ և առաջ աշակերտներին ընկալելի դարձնել ժամանակի քերականական կարգի իմաստային կառուցվածքը: Բայի եղանակներն ու ժամանակաձևերը ուսուցանելու ընթացքում օգտագործվում են մի շարք տերմիններ՝ ներկա, անցյալ ու ապառնի անվանումների համակցումով, որոնք առաջացնում են շփոթություն, որն ակնառու է հատկապես անցյալ ժամանակի դեպքում, որովհետև հստակ չի ընդգծվում

⁵¹⁴ **Բարսեղյան Ջ., Մեյթիխանյան Փ.**, Հայոց լեզու 7 (դպրոցական դասագիրք), Ե., 2011, էջ 109:

⁵¹⁵ **Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ.**, Հայոց լեզու, Դասագիրք ավագ դպրոցի հումանիտար հոսքերի 11-րդ դասարանի համար, Ե., 2015, էջ 127:

⁵¹⁶ **Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ.**, Հայոց լեզու, Դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 11-րդ դասարանի համար, Ե., 2015, էջ 107:

⁵¹⁷ **Մեյթիխանյան Փ.**, Հայոց լեզու, Ուսուցչի ձեռնարկ 7-9-րդ դասարանների համար, Ե., 2011, էջ 63:

⁵¹⁸ Հայոց լեզու 10-12-րդ դասարաններ, Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր, Ուսուցչի ձեռնարկ, Ե., 2009, էջ 84:

⁵¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 86:

յուրաքանչյուր անցյալ ժամանակաձևի արտահայտած գործողության անցյալ ժամանակակետը: Եվ սա այն դեպքում, երբ սահմանական եղանակն ունի մեկ ներկա, մեկ ապառնի և հինգ անցյալ ժամանակաձև: Գործողության կատարման ժամանակները՝ ներկա, անցյալ, ապառնի, ունեն իմաստային տարատեսակություններ կամ տարաբաժանումներ:

Յ. Աճառյանը, օրինակ, առանձնացնելով բայի կամ գործողության երեք հիմնական ժամանակներ՝ ներկա, անցյալ, ապառնի, միաժամանակ նկատում է, որ այս կամ այն ժամանակը կարող է ունենալ բազմաթիվ «բաժանմունքներ»։ Միևնույն անցյալը, ըստ նրա, կարող է լինել մի ժամ առաջ կամ երեկ կամ խոր անցյալում: Նույնպես ապագան կարող է լինել քիչ անց կամ վաղը կամ հազարավոր տարիներ հետո⁵²⁰:

Այսպիսի մոտեցում է որդեգրել նաև Ա. Ղարիբյանը. «Սահմանական եղանակի բոլոր ձևերը սովորեցնելուց հետո, - գրում է նա, - պետք է նշել, որ թեև ժամանակները հիմնականում երեքն են, բայց իրենց մանրամասնության մեջ ունեն որոշ տարբերություններ. օրինակ՝ **երեկը այսօրվա համեմատությամբ անցյալ է, իսկ նախանցյալ օրը այսօրվա համեմատությամբ վաղ անցյալ օր է, իսկ երեկվա համեմատությամբ՝ միայն անցյալ:** Հետևաբար անցյալները լինում են մի քանի տեսակ, ինչպես և ապառնին: Հայերենում միայն ներկան է, որ մի տեսակ ունի»⁵²¹:

Այսինքն՝ սովորողը *անցյալ կատարյալ* տերմինի նշանակությունն իմանալուց անմիջապես հետո պետք է կարողանա ընկալել, որ լեզվի մեջ անցյալ ժամանակը չի կարելի ընդունել միանշանակ ու միազիծ, այն ունի բազմաթիվ ժամանակակետեր:

Առհասարակ գործողության կատարման ժամանակը ցույց տալու համար անհրաժեշտ է այն վերցնել որևէ որոշակի պահի համեմատությամբ, որը քերականագիտության մեջ խոսելու պահն է: Այսինքն՝ բայի ժամանակը կարող է ցույց տալ կամ խոսելու պահին, կամ խոսելու պահից առաջ, կամ խոսելու պահից հետո կատարվող, կատարված, կատարվելիք գործողություն, եղելություն: Շատ հաճախ կարիք է լինում բայաձևերի ժամանակը որոշել նաև մի անցյալ (երբ գնացի) և մի ապառնի ժամանակի համեմատությամբ (եթե տեսնեմ)⁵²²:

Այսպիսով՝ անցյալ կատարյալի ժամանակային իմաստը ուսուցանելիս հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել անցյալ ժամանակի իմաստային նրբերանգներին: Պետք է նկատի ունենալ, որ ունենք միևնույն ընդհանուր ժամանակը, բայց տարբեր ժամանակահատվածներ. այսինքն՝ **անցյալ ժամանակը չպետք է ընկալել մեկ նշանակությամբ:** Անցյալ կատարյալը բոլորովին տարբեր է մյուս անցյալ ժամանակներից: Այն հստակորեն ցույց է տալիս, թե անցյալի որ կետի մասին է խոսքը: Եթե փորձենք համեմատել անցյալի ժամանակաձևերը, կարող ենք տեսնել ժամանակային իմաստի երեք տարբերություն:

Անցյալ կատարյալի իմաստային յուրահատկությունները

Անցյալ կատարյալի իմաստային առաջին յուրահատկությունը նրա ցույց տված գործողության կարճ տևականությունն է: Մ. Ասատրյանը անցյալ կատարյալի ժամանակային տարբերությունը ցույց տալու համար այն համեմատում է նաև անցյալ անկատարի հետ՝ նշելով, որ վերջինս ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում տևական, հարաձիգ, ընթացքի մեջ գտնվող գործողություն⁵²³:

⁵²⁰ Աճառյան Յ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Գիրք Ա, Ե., 1961, էջ 33:

⁵²¹ Տե՛ս Ղարիբյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., 1954, էջ 308-309:

⁵²² Տե՛ս Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., ժամանակակից հայոց լեզու, հ 2, Ե., 1974, էջ 341:

⁵²³ Տե՛ս Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 296:

Ի՞նչ է նշանակում անցյալի գործողությունը լինում է տևականությամբ կամ առանց դրա. օրինակ՝ *Ժամը 5-ին նա գնում էր: Ժամը 5-ին նա գնաց:* երկրորդ նախադասության մեջ գործողությունը սկսվում և վերջանում է ժամը 5-ին առանց տևականության⁵²⁴:

Իմաստային հաջորդ յուրահատկությունը տեսանելի է դառնում, երբ անցյալ կատարյալը համեմատում ենք վաղակատարի ներկայի հետ: «Այս գիշեր անձրև եկավ. - Ես գարթուն էի, անձամբ տեսա և իմացա անձրևի գալը. - Այս գիշեր անձրև է եկել, - Ես քնած եմ եղել և առավոտը անձրև գալու հետևանքը տեսել և իմացել եմ, կամ ուրիշներն ինձ ասել են, որ անձրև է եկել»⁵²⁵: Այս օրինակներից պարզ է դառնում, որ անցյալ կատարյալը կարող ենք համարել ակնհայտ սիմանակալ:

Այս մոտեցմամբ ընդհանրացնելով անցյալ կատարյալ ժամանակաձևի իմաստային բնութագիրը՝ կարելի է ասել, որ այն ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում սկսված և ավարտված գործողություն: «խոսողը միշտ նկատի ունի մի անցյալ ժամանակակետ, որի նկատմամբ գործողությունը ներկայացվում է որպես ավարտված, ինչպես՝ «Երեկ, երբ մենք խոսում էինք, նա գնացել էր», ապա անցյալ կատարյալի դեպքում խոսողը մի անցյալ ժամանակակետում գործողությունը ներկայացնում է որպես առանց որևէ տևականության կատարված-վերջացած, ինչպես՝ «Երեկ նա գնաց»⁵²⁶: Անցյալ կատարյալը անցյալ ժամանակակետի մեջ ընկնող գործողություն է, որին դիմելիս խոսողը նկատի ունի այն վայրկյանը, երբ առանց տևականության գործողությունը միանգամից կատարվում և վերջանում է: Այստեղ շեշտվում է գործողության վերջը, ավարտվածությունը և, որպես կանոն, արտահայտում է այնպիսի գործողություն, որին խոսողը ակնհայտ է չի եղել:

Անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության առանձնահատկությունը

Ուսուցման համար կարևոր է հստակ տարբերակել, որ պարզ ու ածանցավոր բայերի դեպքում անցյալ կատարյալը կազմվում է բայահիմքի և դիմային վերջավորությունների տարբեր ձևերով:

Առարկայական չափորոշչային պահանջներով՝ բայահիմքերի ուսուցումը դարձնում նախատեսված չէ: Բայց հարկ ենք համարում նշել, որ այն չափազանց տեղին կլիներ, որովհետև լեզվի քերականական կառուցվածքի մեջ բայահիմքերը առանձնացած ու անկախ չեն: «Ծագմամբ պատկանելով հնդեվրոպական լեզուների մեծ ընտանիքին՝ հայերենի քերականական կառուցվածքի հիմքերը կապված են հնդեվրոպական հիմնալեզվի և հնդեվրոպական հին լեզուների ձևերի հետ: Յնդեվրոպական բայի խոնարհման մեջ մեծ դեր են կատարում բայի տարբեր հիմքերը»⁵²⁷:

Ստորև ներկայացվող աղյուսակում կարևորել ենք բայահիմքը, քանի որ բայական յուրաքանչյուր ձև հայերենում կազմվում է համապատասխան հիմքով:

Պատճառական ածանց ունեցող բայերն այս աղյուսակի օրինաչափությունից դուրս են, որովհետև կազմվում են -ի, -իր, -եց, -ինք, -իք, -ին վերջավորություններով: Բացի այդ, պատճառական -ացն, -եցն, -ցն ածանցների փոխարեն անցյալ կատարյալի կազմության ժամանակ օգտագործվում են -ացր, -եցր, -ցր ձևերը, այսինքն՝ **ցն>ցր** + վերջավորություն:

Անցյալ կատարյալ ժամանակաձևի ժխտական խոնարհման դեպքում **չ**-ն դրվում է բայաձևի սկզբից, օրինակ՝ *չէրգեցի*:

⁵²⁴ Աբեդյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 562:

⁵²⁵ Տե՛ս Լույս տեղում, էջ 564:

⁵²⁶ Տե՛ս Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 297:

⁵²⁷ Աբաջյան Ա., Անցյալ կատարյալ ժամանակը հայերենում, Ե., 2015, էջ 16:

**Աղյուսակ 1.
Անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմությունը:**

	Պարզ բայեր	Ածանցավոր բայեր
	<i>Անորոշի հիմք՝ գր-, կարդ-</i>	<i>Կատարյալի հիմք՝ գրեց, կարդաց</i>
-ել խոնարհում		-եցի -եցինք -եցիր -եցիք -եց -եցին
-ալ խոնարհում	-ացի -ացինք -ացիր -ացիք -աց -ացին	-ա -անք -ար -արք -ալ -ան

Այսպիսով՝ անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության համար անհրաժեշտ է նախ իմանալ, թե որ խոնարհմանն է պատկանում բայը, այնուհետև ճանաչել, վերհիշել պարզ ու ածանցավոր բայերը և համապատասխան վերջավորությամբ կազմել: Կարևորելով բայի հիմքի ուսուցումը՝ կարող ենք բարձրացնել թեմայի ուսուցման արդյունավետությունը:

Հանրակրթության զարգացման ներկա փուլում կրթության առջև դրված նոր խնդիրներն ու հեռանկարային զարգացումները պահանջում են համակարգային լուծումներ: Սույն հոդվածում կատարված դիտարկումներից կարելի է եզրակացնել, որ միջին ու ավագ դպրոցի դասագրքերում քերականական միևնույն երևույթի բացատրությունն առանձնապես չի տարբերվում, չի ապահովվում անցումը հեշտից բարդին: Յուրաքանչյուր թեմայի ուսուցման համար շատ կարևոր է կատարել թեմայի նոր ուսումնասիրություն և ընտրել խիստ նախանշված նյութ:

Անցյալ կատարյալ ժամանակաձևը առավել արդյունավետ ուսուցանելու համար նպատակահարմար է միջին դպրոցի դասագրքում հակիրճ ներկայացնել գործողության կատարման ժամանակների իմաստային տարաբաժանումը, ժամանակաձևի իմաստային նկարագրությունն ու կիրառությունները, համեմատությունները մյուս անցյալ ժամանակների հետ, իսկ ավագ դպրոցում նպատակ դնել ոչ միայն վերհիշել այդ ամենը, այլև խորացնել ուսուցումը. գաղափար տալ բայահիմքերի մասին, առավել մանրամասնել ժամանակաձևի կազմությունը՝ նշելով նաև կիրառական յուրահատկությունները:

**THE TEACHING OF PAST PERFECT TENSE AT THE RA
SECONDARY SCHOOL**

HRIPSIME SARGSYAN

*Yerevan State University, Chair of Armenian Language, Ph.D. Student;
Armenian language and literature at School N55 after A.P.Chekhov, Teacher;
Yerevan, Republic of Armenia*

The past perfect is one of the most difficult tenses of the verb. The issues of teaching this scientifically developed, thoroughly studied Tense, have been relatively little discussed among us.

The aim of the article is to present the issue from a new perspective, to study the peculiarities of the past perfect tense and to present a relatively new version of teaching. In order to achieve the mentioned goal, we set a task to find out the manifestations of the temporal meaning of the past perfect and to examine the peculiarities of the composition.

During the research, both cognitive (analysis, synthesis) and scientific-pedagogical research methods were used: comparison, abstraction, coordination.

In the course of our study, we came to the conclusion that teaching Past Perfect Tense would be more effective if the middle school textbooks briefly presented the semantic divisions of action times, the semantic descriptions of times, its applications, comparisons with other past tenses, and the goal in high school was not only to remember all that, but also deepen the teaching: it is necessary to give an additional idea about the bases of the verbs, to present composition of the tense in more detail, noting its practical peculiarities.

Keywords: *general education, middle and high school, education, past perfect tense, past tense, subtleties, verb conjugation system, basic verb tenses, simple and derivative verbs.*

ПРЕПОДАВАНИЕ ПРОШЕДШЕГО СОВЕРШЕННОГО ВРЕМЕНИ В СРЕДНЕЙ ШКОЛЕ РА

ՐԻՍԻՄԵ ՏԱՐԳՏՅԱՆ

*аспирант кафедры армянского языка
Ереванского государственного университета,
преподаватель армянского языка и литературы
основной школы №55 имени А.П. Чехова,
г. Ереван, Республика Армения*

Прошедшее время совершенного вида глагола – одна из самых сложных тем для изучения. Научно обработанные и досконально изученные вопросы преподавания прошедшего времени совершенного вида глагола обсуждались сравнительно мало. Целью статьи является осветить вопрос с новой точки зрения: изучить особенности прошедшего совершенного времени и представить относительно новый метод (способ) обучения. Для достижения указанной цели мы поставили задачу выяснить выражение временного смысла глаголов прошедшего времени совершенного вида и исследовать особенности данной структуры.

В ходе исследования были использованы как когнитивные (анализ, синтез), так и научно-педагогические методы исследования: сравнение, абстракция, систематизация.

В результате мы пришли к о том, что обучение прошедшего времени совершенного вида глагола было бы более эффективным, если в школьных учебниках средних классов было бы кратко представлено семантическое деление времени действия, семантическое описание времени, его приложения, сравнения с другими прошедшими временами, а цель изучения этой темы в старшей школе заключалась бы не просто в том, чтобы запомнить ее, но и в том, чтобы углубить преподавание, дать более подробное представление об основах глаголов, отмечая особенности их использования.

Ключевые слова: *общее образование, средняя и старшая школа, обучение, совершенное прошедшее время, прошедшее время, нюансы, система спряжения глаголов, основные времена глаголов, простые и производные глаголы, основы глаголов.*

**ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՅՈՒՆ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:
SWOT ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ***

ՀՏԴ 338.4

DOI: [10.52063/25792652-2021.1-164](https://doi.org/10.52063/25792652-2021.1-164)**ՆԱԴԵԺՂԱ ԱՖՅԱՆ**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
nafyan@rambler.ru

ԳԱՐՐԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական
հարաբերությունների ֆակուլտետի մագիստրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
gasparyan.garry@mail.ru

Հոդվածում նպատակ է դրվել ներկայացնել Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման հիմնախնդիրները, ինչպես նաև գնահատվել է հանքարդյունաբերության կարևորությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գործում: Այնուհետև վերլուծաբար ներկայացվել են Կանադայի ու Շվեդիայի հանքարդյունաբերության ոլորտների օրինակելի մոդելները: Նպատակից բխող խնդիրներն են՝ համեմատականորեն տարբերակել և վեր հանել հանքարդյունաբերության տնտեսական ու բնապահպանական բնույթի առաջնայնություններն ու թերությունները: Գոյություն ունեցող խնդիրների լուծման ուղիները բացահայտելու համար իրականացվել է հանքարդյունաբերության ոլորտում Կանադայի ու Շվեդիայի փորձի ուսումնասիրություն:

Հոդվածում օգտագործվել է սվայների SWOT վերլուծական մեթոդը: Արդյունքում կատարվել է ելրահանգում, որ հնարավոր է հանքարդյունաբերության ոլորտը զարգացնել համապատասխան միջազգային Էկոլոգիական ստանդարտներով ու պահանջներով՝ միաժամանակ ոլորտում ապահովելով տնտեսական օգուտներ: Իսկ մետաղական հանքարդյունաբերական ընկերությունների շրջանում պետք է ձևավորվեն միայն խոշոր ընկերություններ կամ մի քանի միջին ու փոքր ընդերքօգտագործող ընկերություններից կազմված կոալիցիաներ, որոնք հնարավորություն կտան ապահովելու հանքարդյունաբերության ոլորտի զարգացումը՝ համաձայն կայուն զարգացման սկզբունքների:

* Հոդվածը ներկայացվել է 14.02.2021թ., գրախոսվել՝ 22.02.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:


Հիմնաբառեր՝ հանքարդյունաբերություն, ՀՆԱ, կայուն զարգացում, Էկոլոգիական խնդիրներ, պոչամբարներ, SWOT վերլուծություն, շրջակա միջավայր:

Ներածություն

Համաշխարհային տնտեսության մեջ հանքարդյունաբերությունն իր ծանրակշիռ մասնաբաժինն ունի: Մի շարք զարգացած ու զարգացող երկրներում այն տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է: Հայաստանի տնտեսությունում հանքարդյունաբերության ոլորտը ևս էական ներդրում ունի, այն ապահովում է տնտեսական աճ և օտարերկրյա ներդրումների ներգրավում, ստեղծում է աշխատատեղեր, ինչպես նաև տարածաշրջանային զարգացման հնարավորություններ: Ուստի չթերազնահատելով տնտեսության մյուս ճյուղերի կարևորությունը՝ կարելի է նշել, որ հանքարդյունաբերության նշանակությունը Հայաստանի համար բավականին մեծ է:

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման վերլուծություն

Վերջին տարիներին՝ 2015-2019թթ.-ի ընթացքում, հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքը և դրա մասնաբաժինը ՀՆԱ-ում ընդհանուր առմամբ աճել են (տե՛ս գծապատկեր 1): Մասնավորապես 2015թ.-ին հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի կողմից ստեղծված արդյունքը կազմել է շուրջ 221 մլրդ դրամ՝ կազմելով ՀՆԱ-ի 2.1%-ը, իսկ արդեն 2019թ.-ին հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի կողմից ստեղծված արդյունքը հասել է գրեթե 357 մլրդ դրամի՝ կազմելով ՀՆԱ-ի 2.8%-ը: 2019թ.-ի ցուցանիշով հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտը ընդհանուր ՀՆԱ-ում ներկայացված 20 ոլորտների մեջ զբաղեցրել է տասներեքերորդ հորիզոնականը, իսկ ամբողջ արդյունաբերության մեջ՝ երկրորդ հորիզոնականը 17.1% ցուցանիշով⁵²⁸:



Գծապատկեր 1. 2015-2019թթ. հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի արտադրանքը և դրա մասնաբաժինը ՀՆԱ-ում⁵²⁹

Հատկանշական է նաև հանքարդյունաբերության ոլորտի նշանակությունը Հայաստանում զբաղվածության ապահովման առումով: Մասնավորապես 2019թ.-ին

⁵²⁸ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2020, էջ 295: <https://www.armstat.am/file/doc/99520938.pdf>, 01.02.2021.

⁵²⁹ Գծապատկերը կառուցվել է հեղինակների կողմից՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքի տվյալների հիման վրա, <https://www.armstat.am>, 03.02.2021.

հանքարդյունաբերության ոլորտում աշխատողների միջին տարեկան թվաքանակը եղել է 10,900 մարդ՝ կազմելով ընդհանուր արդյունաբերության զբաղվածության 10.7%-ը⁵³⁰։ Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հանքարդյունաբերության ոլորտը ապահովում է մայրաքաղաքից դուրս համեմատաբար բարձր վարձատրվող աշխատատեղեր, ինչը բավականին կարևոր է սակավ տնտեսական հնարավորություններ ունեցող շրջանների համար։

Ի լրումն այս ամենի՝ հարկ է նշել նաև, որ ըստ Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի «Հանքարդյունաբերության դերը ազգային տնտեսություններում» զեկույցում ընդգրկված հանքարդյունահանման ինդեքսի (Mining Contribution Index)՝ Հայաստանը 183 երկրների շարքում զբաղեցնում է 26-րդ տեղը⁵³¹։ Նշված ինդեքսը ցույց է տալիս հանքարդյունաբերության դերը տվյալ երկրի տնտեսության զարգացման գործում։

Այսպիսով՝ հանքարդյունաբերության՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ ունեցած ուրույն նշանակությունն ու դերը ակնհայտ են։ Սակայն չնայած այս ամենին՝ Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի հետ կապված էկոլոգիական տեսանկյունից առկա են մի շարք խնդիրներ, ինչն էլ վկայում է հանրապետությունում հանքարդյունաբերության կայուն զարգացման ապահովման անհրաժեշտության մասին։ Առկա խնդիրներից մասնավորապես առանձնակի ուշադրության է արժանի հանքարդյունաբերական գործունեության արդյունքում խախտված հողերի վերականգնման հարցը։ Կարելի է ասել՝ հանքավայրերի հողատարածքների, պոչամբարների կենսաբանական վերականգնման ու ռեկուլտիվացիայի համար համապատասխան ծրագրերը ընդհանրապես չեն իրականացվում, իսկ շրջակա միջավայրի պահպանության դրամազիսի ֆինանսական միջոցները բավարար չեն անհրաժեշտ միջոցառումների իրականացման համար։ Եվ այս ամենը այն դեպքում, երբ Հայաստանում շահագործվող մետաղական հանքավայրերի մակերեսը կազմում է 5211,45 հա, իսկ ընդերքօգտագործման նպատակով տրամադրված հողերի ընդհանուր մակերեսը նախնական խոշորացված գնահատականներով կազմում է 13640 հա՝ չհաշված լցակույտերի ու արտադրական թափոնների տակ մնացած հողատարածքների մակերեսները⁵³²։ Հանրապետությունում առկա պոչամբարները թվով 23-ն են (մոտ 365 մլն.իւմ փաստացի ծավալով), դրանք գտնվում են Սյունիքի, Լոռու, Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Արարատի մարզերում։ Նշված 23 պոչամբարներից 11-ը կոնսերվացված են (շուրջ 30 մլն.իւմ ծավալով) և գտնվում են Սյունիքի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում⁵³³։

Առկա խնդիրների համատեքստում հարկ է նշել նաև, որ Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտում բացակայում է կամ դանդաղ է իրականացվում աշխարհի առաջավոր փորձի կիրառման և լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ինչը հետևանք է նաև այն բանի, որ հանքարդյունաբերության ոլորտում դեռևս չունենք խոշոր ու միջազգայնորեն ճանաչում ունեցող

⁵³⁰ Հայաստանի վիճակագրական տարեգիրք. Երևան 2020, էջ 307
<https://www.armstat.am/file/doc/99520938.pdf>, 01.02.2021:

⁵³¹ «Role of Mining in National Economies: Mining Contribution Index (5th edition, 2020)». International Council of Mining and Metals, 2020, էջ 10: https://www.icmm.com/website/publications/pdfs/social-performance/2020/research_mci-5-2020.pdf, 05.02.2021:

⁵³² «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ: <https://www.ecolor.org/files/uploads/pdf/Court/publicenvironmentalcourtminingfinal.pdf>, 04.02.2021:

⁵³³ Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում զոյացած ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրագուրկ արտադրական լցակույտերի և փակված օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազա, էջ 2:
http://www.mnp.am/uploads/1/1561026142HASHVETVUTYUN_Geraka_kayq.pdf, 05.02.2021:

ընկերություններից որևէ ներկայացուցիչ: Թվով շատ են նաև մետաղական և ոչ մետաղական հանածոներ արդյունահանող փոքր ընկերությունները, որոնք գործում են միայն Հայաստանում: Դրանք ոլորտում երբևէ փորձ չունեցող կազմակերպություններ են և հետապնդում են միայն գերշահույթի ստացման գիշատչական տենդ: Եթե հանքարդյունաբերության ոլորտում, մասնավորապես մետաղական հանքարդյունաբերական ընկերությունների շրջանում գերիշխեին խոշոր և այդ ոլորտում միջազգային փորձ ունեցող, այսինքն՝ պատասխանատու հանքարդյունաբերական ընկերություններ, ապա Էկոլոգիական տեսանկյունից պատկերը այլ կլիներ:

Ինչևէ, թերևս կարելի երկար խոսել հանքարդյունաբերության ոլորտի խնդիրների մասին, սակայն չպետք է տպավորություն ստեղծվի, թե հանքարդյունաբերությունը Էկոլոգիական տեսակետից բացառապես անընդունելի է և պետք է հրաժարվել գործունեության այդ տեսակից: Աշխարհի զարգացած երկրների՝ հանքարդյունաբերության ոլորտում ունեցած առաջավոր փորձը փաստում է, որ հնարավոր է ապահովել հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացում: Ուստի ժամանակի հրամայականն է՝ ուսումնասիրել համաշխարհային առաջավոր փորձը և դիտարկել դրա տեղայնացման հնարավորությունները: Այդ նպատակով էլ ստորև իրականացվել է Շվեդիայի ու Կանադայի հանքարդյունաբերության ոլորտի SWOT վերլուծություն (տե՛ս աղյուսակ 1 և աղյուսակ 2):

Աղյուսակ 1. Շվեդիայի հանքարդյունաբերության ոլորտի SWOT վերլուծություն⁵³⁴

S	W
1. Շրջակա միջավայրի պահպանության դրամազուլիս 2. Ֆինանսական և իրավական պատշաճ պաշտպանություն ժամկետից շուտ փակման դեպքում	1. Հանքարդյունաբերական թափոնները չեն հարկվում 2. Մանր ու միջին հանքերի նվազ օգտակարություն
O	T
1. Ներդրում կատարելով՝ կրկնապատկել է արտադրական հզորությունը և շահագործման ժամկետը	1. Շվեդիայի թագավորությունում բնապահպանական և սոցիալական պահանջների խստացման արդյունքում դժվարացել է փոքր ընկերությունների աշխատանքը

Շվեդիայի հանքարդյունաբերության ոլորտի SWOT վերլուծության արդյունքներ: Հանքարդյունաբերության ոլորտում իրականացրած բնապահպանական ու ֆինանսական քաղաքականության արդյունքում Շվեդիայի թագավորությունը Եվրոպական Միության տարածքում համարվում է առաջատար երկիր: Շվեդիայում հստակ գործում են սոցիալական պատասխանատվության չափանիշներ և շրջակա միջավայրի պահպանության դրամազուլիս, որտեղ մուտքագրված միջոցներն ուղղակիորեն արտահայտում են տվյալ պահին հանքը փակելու հաշվարկային ընթացիկ արժեքը: Վերջին ժամանակաշրջանում կտրուկ նվազել է մետաղների շահագործվող հանքերի թիվը, իսկ հանքանյութի արտադրությունն աճել է ավելի քան տասն անգամ: Սոցիալական պատասխանատվության չափանիշներն ապահովում են ի սկզբանե, իսկ

⁵³⁴ Աղյուսակը ստեղծվել է հեղինակների կողմից:

շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի միջոցներն առանձին մուտքեր են, դրանք չեն գոյանում հանքարդյունաբերական թափոնների դիմաց հարկերից և միտված են օգտագործվելու մետաղի գործող հանքերի փակումից հետո: Շվեդիայի թագավորությունում բնապահպանական ու սոցիալական պահանջների խստացման արդյունքում դժվարացել է փոքր ընկերությունների աշխատանքը, քանի որ մանր ու միջին հանքերը նվազ օգտակարություն ունեն:

Աղյուսակ 2. Կանադայի հանքարդյունաբերության ոլորտի SWOT վերլուծություն⁵³⁵

S	W
1. Շրջակա միջավայրի նկատմամբ խիստ պարտավորություն՝ չեզոք թթվային դրենաժ ծրագիր 2. Հանքավայրերի դասակարգում և գույքագրում 3. SL3ԱՆ (տիրագուրկ, լքված հանքավայրերի ազգային նախաձեռնություն), հիմնումը՝ դեռևս 2002թ.-ին	1. Հանքարդյունաբերական թափոնները չեն հարկվում 2. Երկրաբանական հետազոտական ծրագրերից միայն 10%-ը կարող են հասնել տեխնիկատնտեսական հիմնավորման փուլին ⁵³⁶
O	T
1. Բաց հանքավայրերի ռեկուլտիվացիայի տասնյակ օրինակներ	1. Շարունակական բնույթ է կրում պարտավորությունների և ֆինանսավորումների վերաբերյալ օրենսդրական նորմերի վերանայումները

Կանադայի հանքարդյունաբերության ոլորտի SWOT վերլուծության արդյունքներ: Կանադայում հանքարդյունահանող ընկերությունները վերամշակում են պոչերի լցակույտերն ըստ «չեզոք թթվային դրենաժ» ծրագրի և ունեն շրջակա միջավայրի նկատմամբ խիստ սոցիալական պատասխանատվության չափանիշներ, իսկ նման աշխատանքի ծախսերը որոշ դեպքերում կարող են սուբսիդավորվել կառավարության կողմից: Դեռևս 2002թ.-ին հիմնվելով SL3ԱՆ-ի սկզբունքների վրա՝ իրականացվել է հանքավայրերի դասակարգում, գույքագրում և արձանագրվել են բաց հանքավայրերի ռեկուլտիվացիայի տասնյակ օրինակներ: Վերջին 2 տարվա ընթացքում Կանադայում հիմնական մետաղների՝ նոր հայտնաբերված 710 հանքավայրերից միայն 26-ն (3.7%) են հասել տեխնիկատնտեսական հիմնավորման փուլին⁵³⁷, չբավարարելով դրանց շահագործման սոցիալական, տնտեսական ու էկոլոգիական պատասխանատվության չափորոշիչները: Կանադայում նաև շարունակական բնույթ են կրում սոցիալական պատասխանատվության և ֆինանսավորումների վերաբերյալ օրենսդրական նորմերի վերանայումները:

⁵³⁵ Աղյուսակը ստեղծվել է հեղինակների կողմից:

⁵³⁶ Հանքերի փակում, հանքարդյունահանման կայուն շահագործման քաղաքականություն և ուղեցույցներ ու հանքերի փակում, «Շրջակա միջավայր և անվտանգության» նախաձեռնության (ENVSEC), 2005, էջ 76:

⁵³⁷ Հանքերի փակում, հանքարդյունահանման կայուն շահագործման քաղաքականություն և ուղեցույցներ ու հանքերի փակում, «Շրջակա միջավայր և անվտանգության» նախաձեռնություն (ENVSEC), 2005, էջ 27:

Եզրակացություն

Նշված բոլոր տեսակի իրավական, բնապահպանական կամ ֆինանսական մոտեցումները առանձին-առանձին չեն կարող ամբողջական լուծում պարունակել և տրամաբանական է, որ պահանջվում է բոլոր մոտեցումների կառուցվածքային համադրություն: Նման համադրության արդյունքներ ստացել ենք Շվեդիայի ու Կանադայի հանքարդյունաբերության փորձի SWOT վերլուծությունից: Այս համադրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ հանքարդյունաբերական ոլորտը եկամտաբեր է, սակայն շահագործման ընթացքում պարբերաբար ի հայտ են գալիս սոցիալական ու էկոլոգիական խնդիրներ: Ուսումնասիրելով կանադական ու շվեդական հանքարդյունաբերական գործունեության փորձը՝ կարելի է ձևավորել հանքարդյունաբերության հայկական մոդելը, որտեղ հնարավոր է ստեղծել SLՅԱՆ-ի տիպային համակարգ և արդյունքում կապահովվի շահագործվող, տիրագուրկ և լքված գույքագրված հանքավայրերի բանկ կամ կադաստր, որով հնարավոր կլինի բացահայտել բոլոր հեղինակավոր ու անբարեխիղճ ընկերություններին: Այնուհետև միավորելով ու խոշորացնելով փոքր ու միջին հանքավայրեր շահագործող ընկերություններին՝ անհրաժեշտ է ստեղծել ֆինանսական, իրավական, սոցիալական և էկոլոգիական բնույթի ապահովագրական կամ պատասխանատու նախաձեռնություններ (կամ ներգրավել RMI (Responsible Mining Index) կազմի մեջ⁵³⁸)՝ ըստ ճկուն դրամագլուխների: Այդ դրամագլուխներում ֆինանսական միջոցների հոսքը կամ աղքյուրը կարող է լինել բանկային ավանդը, ազդակիր համայնքում կորպորատիվ սոցիալական պատասխանատվության զարգացումը, երկրորդային ռեսուրսօգտագործման արտադրության զարգացումը: Պարբերաբար ֆինանսական միջոցներով համալրվելով՝ կարող է նպաստել հողերի ռեկուլտիվացիայի, ջրերի մաքրման և սոցիալական խնդիրների լուծման աշխատանքներին: Եվ տիպային մոդելի համար որպես վտանգ նախ պետք է դիտարկել փոքր և միջին հանքարդյունահանող ընկերությունների խոշորացման գործընթացի ռազմավարական ծրագրի մշակման և իրականացման փորձի կամ մոտիվացիայի բացակայությունը, և ապա՝ ոչ բավարար հնարավորությունների ու հմտությունների արդյունքում արտաքին մրցակցային դաշտում թույլ դիմակայունությունը:

PROSPECTS FOR SUSTAINABLE DEVELOPMENT OF THE MINING INDUSTRY IN ARMENIA. SWOT ANALYSIS

NADEZHDA AFYAN

*Armenian State University of Economics,
Chair of Environmental Economics, Assistant,
Ph.D. in Economics,
Yerevan, Republic of Armenia*

GARRI GASPARYAN

*Armenian State University of Economics,
Faculty of Regulation of Economy and
International Economic Relations, Master's student,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to present problems of sustainable development of Armenia's mining sector. The importance of the mining industry in the development of the economy of the

⁵³⁸ Responsible Mining Index, <https://responsibleminingindex.org/ru/companies>, 05.02.2021:

Republic of Armenia is also assessed. Then models of the mining industry in Canada and Sweden are presented. Tasks arising in achieving the goal: to comparatively differentiate and identify economic and environmental priorities and disadvantages of the mining industry. A survey of Canadian and Swedish mining experiences is undertaken to find solutions to existing problems.

The article uses the SWOT data analysis method. As a result, it is concluded that it is possible to develop the mining industry in accordance with international environmental standards and requirements, while at the same time providing economic benefits in this area. And among metal mining companies, only large companies or coalitions consisting of a few medium-sized mining companies should be formed, which will enable the development of the mining sector in accordance with the principles of sustainable development.

Keywords: *mining, GDP, sustainable development, environmental issues, tailings, SWOT analysis, environment.*

ПЕРСПЕКТИВЫ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ОТРАСЛИ В АРМЕНИИ. SWOT-АНАЛИЗ

НАДЕЖДА АФЯН

*ассистент кафедры экономики природопользования
Армянского государственного экономического университета,
кандидат экономических наук,
г. Ереван, Республика Армения*

ГАРРИ ГАСПАРЯН

*магистрант факультета регулирования экономики и
международных экономических отношений
Армянского государственного экономического университета,
г. Ереван, Республика Армения*

В статье поставлена цель представить проблемы стабильного развития горнодобывающей отрасли Армении, а также оценена важность горнодобывающей промышленности в развитии экономики Республики Армения. Далее аналитически представлены образцовые модели горнодобывающих секторов Канады и Швеции. Для достижения цели поставлены следующая задача: провести сравнительную дифференциацию и выявить экономические и экологические приоритеты и недостатки горнодобывающей отрасли. Нами был изучен опыт Канады и Швеции в области горнодобывающей промышленности с целью поиска путей решения существующих проблем в горнодобывающей отрасли Армении.

В статье используется метод анализа данных – SWOT. В результате сделан вывод о том, что можно развивать горнодобывающую отрасль в соответствии с международными экологическими стандартами и требованиями, одновременно обеспечивая в этой сфере и экономические выгоды; среди металлургических горнодобывающих компаний следует формировать только крупные компании или коалиции, состоящие из нескольких средних или маленьких горнодобывающих компаний, которые позволят обеспечить развитие горнодобывающей промышленности в соответствии с принципами устойчивого развития.

Ключевые слова: *горнодобывающая промышленность, ВВП, устойчивое развитие, экологические проблемы, хвостохранилища, SWOT-анализ, окружающая среда.*

ՀՀ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ*

ՀՏԴ 336.7

DOI: [10.52063/25792652-2021.1-171](https://doi.org/10.52063/25792652-2021.1-171)

ՀԱՅԿ ԲԵՉԱՆՅԱԼ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բանկային գործի և ապահովագրության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
bejanyan033@gmail.com

ԼՈՒՍԻՆԵ ԽԱՉԻԿՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Բանկային գործ» մասնագիտության մագիստրանտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
lusine.khachikyan.98@mail.ru

Դրամավարկային քաղաքականության պարզությունը երկրի տնտեսության վրա բացահայտվում է արդյունավետության գնահատմամբ, որն իրականացվում է այդ քաղաքականության առջև դրված նպատակների ու խնդիրների իրագործման աստիճանի վերլուծությամբ:

Հոդվածի նպատակն է գնահատել ՀՀ տնտեսության համար դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը, ԿԲ կողմից որդեգրած ռազմավարության համապատասխանությունը ՀՀ տնտեսական նպատակներին:

Նշված նպատակին հասնելու համար հոդվածում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել ՀՀ դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմը, վերլուծել դիտարկվող ժամանակահատվածում գրանցված մակրոտնտեսական նպատակային ցուցանիշների մակարդակները, դրանց համադրման միջոցով բացահայտել Կենտրոնական բանկի Դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը, ինչպես նաև գնահատել Կենտրոնական բանկի կողմից իրականացվող կանխատեսումների ճշգրտությունը:

Հոդվածում կիրառվել են գիտական վերացարկման, պատմականի և տրամաբանականի զուգակցման, գրաֆիկական վերլուծության, տնտեսամաթեմատիկական ինչպես նաև վիճակագրական մեթոդները: Վերլուծության ամբողջականացման համար խնդիր է դրվել այնպիսի ամփոփ ցուցանիշի մշակում, որը թույլ կտա ստանալ ԴՎԶ արդյունավետության հստակ քանակական գնահատականը, և այդ նպատակով տարբերակվել են բացարձակ ու հարաբերական արդյունավետությունն եկրոյթները և իրականացվել համապատասխան վերլուծություններ ու գնահատումներ:

Դրամավարկային քաղաքականության արդյունավետությանը քանակական գնահատական տալու նպատակով հոդվածում առաջարկվել է նաև գնահատման նոր գործոնային մոդել:

* Հոդվածը ներկայացվել է 03.03.2021թ., գրախոսվել՝ 16.03.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

Հիմնաբառեր՝ դրամավարկային քաղաքականություն, ԴՎՔ արդյունավետություն, փոխանցումային մեխանիզմ, տնտեսական աճ, բացարձակ արդյունավետություն, հարաբերական արդյունավետություն, գործոնային մոդել:

Ներածություն

Ժամանակակից շուկայական տնտեսությունը չափազանց բարդ ու հակասական մի համակարգ է, որն ուղղված է հասարակության տարբեր պահանջմունքների բավարարմանը: Այս համակարգի կարևորագույն առանձնահատկությունը ինքնակարգավորվելու հատկությունն է, որի շնորհիվ այն կարողանում է հնարավորինս լավագույն ձևով ապահովել պետության և հասարակության զարգացման համար անհրաժեշտ պայմանները:

Վերջին տարիների համաշխարհային տնտեսությանը համակած ճգնաժամային գործընթացները կասկածի տակ են դրել ցանկացած երկրի, այդ թվում նաև՝ Հայաստանի տնտեսական քաղաքականության, մասնավորապես դրամավարկային քաղաքականության վերաբերյալ դասական տնտեսական հիմնավորումները, ինչի արդյունքում էլ զգացվում է դրանց վերաարժևորման անհրաժեշտությունը: Միաժամանակ դրամավարկային քաղաքականությունը, չնայած իր լայնածավալ լուսաբանմանն ու հրապարակայնությանը, դեռևս մնում է անհասկանալի հասարակության գերակշիռ մեծամասնության համար, ինչը ուղղակիորեն ազդում է ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի, հետևաբար և ամբողջ ԴՎՔ արդյունավետության վրա: Այս համատեքստում արդիական նշանակություն է ձեռք բերում ՀՀ տնտեսական զարգացումների համատեքստում ինչպես դրամավարկային քաղաքականության ազդեցության բացահայտումը, այնպես էլ վերջինիս պարզաբանման միջոցով ԴՎՔ գործառույթների մասին հասարակության իրազեկումը:

Մեթոդաբանություն: Սույն հոդվածում կիրառվել են գիտական վերացարկման, պատմականի ու տրամաբանականի զուգակցման, գրաֆիկական վերլուծության, տնտեսամաթեմատիկական, ինչպես նաև վիճակագրական մեթոդները:

Գիտական վերացարկման մեթոդը ենթադրում է, որ ԴՎՔ արդյունավետության բուն էությունը բացահայտելու համար պետք է անտեսել ոչ էական կամ երկրորդական գործոնները: Կիրառելով պատմականի ու տրամաբանականի զուգակցման մեթոդը, որը համադրվել է գրաֆիկական վերլուծական մեթոդի հետ, ուսումնասիրվել են պատմական միտումները և դրանց պատճառահետևանքային հաջորդականությունը որոշակի ժամանակի ընթացքում: Նշված մեթոդի օգնությամբ դիտարկվել են ազգային արժույթի, փոխարժեքի, սպառողական գների ինդեքսի, գնաճի և այլ մակրոտնտեսական ցուցանիշների մակարդակները, որը թույլ է տվել որոշակի տրամաբանությամբ իրականացնել եզրահանգումներ:

Վիճակագրական մեթոդի, մասնավորապես միջին գծային շեղում հաշվարկելու օգնությամբ վերլուծվել է ԿԲ կողմից կատարվող կանխատեսումների ճշգրտությունը: Եվ վերջապես օգտագործելով մաթեմատիկական մեթոդը՝ ստեղծվել է նոր մոդել՝ ԴՎՔ արդյունավետությանը քանակական գնահատական տալու նպատակով: Վերջինս իրականացվել է մաթեմատիկական ֆունկցիայի կառուցման և քանակական վերլուծություններ իրականացնելու ճանապարհով:

Վերլուծություն: Դրամավարկային քաղաքականության արդյունքների խնդիրը դիտարկվել է երկու մակարդակներում՝ ընդհանուր տնտեսական ու գործնական: Ընդհանուր տնտեսական մակարդակում դրամավարկային քաղաքականության արդյունքների գնահատման խնդիրը հանգում է այդ քաղաքականության փոխանցումային մեխանիզմի հետազոտությանը, իսկ գործնական վերլուծության մակարդակում մակրոտնտեսական նպատակային ցուցանիշների այն մակարդակների

ուսումնասիրությանը, որոնք գրանցվել են դիտարկվող ժամանակահատվածում (ամիս, եռամսյակ, կիսամյակ կամ տարի)⁵³⁹:

Գնաճի նպատակադրման ռազմավարության պայմաններում ԴՎՔ նպատակային ցուցանիշները որոշվում են դրանց կանխատեսումների հիման վրա: Հետևաբար ԴՎՔ արդյունքների գնահատման շրջանակներում պետք է գնահատվի նաև ԿԲ կողմից իրականացվող կանխատեսումների ճշգրտությունը (աղյուսակ 1):

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 1-ից, տևտեսական աճի վերաբերյալ կանխատեսումները առավել ճշգրիտ են եղել ՀՀ Կենտրոնական Բանկի և Համաշխարհային Բանկի դեպքում, հետևաբար կարող ենք հավաստել, որ ՀՀ ԿԲ կանխատեսումները իրենց որակով չեն զիջում և նույնիսկ գերազանցում են միջազգային այլ հաստատությունների ու կազմակերպությունների կանխատեսումներին:

Աղյուսակ 1. ՀՀ 2011-2019 թթ., տևտեսական աճի կանխատեսումներն ըստ տարբեր կազմակերպությունների և հաստատությունների

Տարի	Փաստացի տևտ. աճ ⁵⁴⁰	ԿԲ ⁵⁴¹	ԱՄՀ ⁵⁴²	ԱՁԲ ⁵⁴³	ՀԲ ⁵⁴⁴	Շեղում ԿԲ	Շեղում ԱՄՀ	Շեղում ԱՁԲ	Շեղում ՀԲ
2011	4.7	4.1-5.7	4.6	4	4.6	0.2	0.1	0.7	0.1
2012	7.2	3.1-4.8	3.9	3.8	4.3	3.25	3.3	3.4	2.9
2013	3.5	4.7-5.7	4	4.5	5	1.7	0.5	1	1.5
2014	3.4	5.4-6.1	4.8	4.6	5	2.35	1.4	1.2	1.6
2015	3	0.4-2	5.5	1.6	3.3	1.8	2.5	1.4	0.3
2016	0.2	1.5-2.6	1.9	2	1.9	1.85	1.7	1.8	1.7
2017	7.5	4.4-4.9	3.5	3.2	3.7	2.85	4	4.3	3.8
2018	5.2	4.6-5.1	6	4	5.3	0.35	0.8	1.2	0.1
2019	6	5.9-7.4	4.8	4.3	4.2	0.65	1.2	1.7	1.8
Միջին գծային շեղում						1.66	1.72	1.85	1.53

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք նշել, որ դրամավարկային քաղաքականության ՀՀ ԿԲ որդեգրած ռազմավարությունը և դրա շրջանակներում կայացված որոշումների հիմքում ընկած կանխատեսումների համակարգը ըստ էության ապահովում են բավարար պայմաններ արդյունավետ դրամավարկային քաղաքականություն իրականացնելու համար:

Ընդհանուր տեսական մակարդակում ԴՎՔ արդյունավետությունը վերլուծելիս անհրաժեշտ է ուսումնասիրել, թե որքանով և ինչ ժամանակային խզումներով է ԴՎՔ-ն հասնում իր առջև դրված նպատակներին: Այդ նպատակով վերլուծվել է՝

- ՀՀ դրամով տևտեսությանը տրամադրված վարկերի միջին ամսական տոկոսադրույքների փոփոխության դինամիկան՝ կախված վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությունից,
- Վերաֆինանսավորման տոկոսադրույքի և ԿԲ ռեպո տոկոսադրույքների տարբերությունը ամսական կտրվածքով (Տե՛ս գծապատկեր 1):

⁵³⁹ **Արաբյան Դ. ՀՀ** կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության արդյունքների գնահատման հիմնահարցերը. Ատենախոսություն, 2018, էջ 51-57:


⁵⁴⁰ Տվյալներն ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-դեկտեմբերին 2011-2019, <https://www.armstat.am>:

⁵⁴¹ Տվյալներն ըստ ՀՀ ԿԲ-ի; Դրամավարկային քաղաքականություն: Գնաճի հաշվետվություններ 2011-2019թթ.:

⁵⁴² Տվյալներն ըստ Արժույթի Միջազգային կազմակերպության: IMF World Economic Outlook (WEO) 2011-2019:

⁵⁴³ Տվյալներն ըստ Ասիական Չրգացման Բանկի: Asian Development Outlook (ADO) 2011-2019:

⁵⁴⁴ Տվյալներն ըստ Համաշխարհային Բանկի խմբի: Global Economic Prospects - World Bank Group 2011-2019:



Փճապատկեր 1. ՀՀ ԿԲ Դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմը⁵⁴⁵

Ուսումնասիրելով առաջին ցուցանիշը՝ ակնհայտորեն պարզ է դառնում, որ մինչև 2015 թվականը վարկերի տոկոսադրույքները եղել են բավականին տատանողական և ակնհայտորեն բարձր՝ ի համեմատ հաջորդ տարիների, մասնավորապես 2016 թվականի երրորդ եռամսյակից արդեն վարկերի թե՛ միջին տոկոսադրույքների միջև եղած սպրեդը, թե՛ ամսական միջին տոկոսադրույքները գերազանցապես ունեցել են նվազման միտում, ինչը փաստում է ՀՀ ԿԲ փոխանցումային մեխանիզմի զարգացումը վերջին տարիներին, այն է՝ բարձրացել է ՀՀ ԿԲ ԴԿԶ արդյունավետության մակարդակը, ինչին մեծապես նպաստել է վստահելիության մակարդակի լավարկումը, հետևաբար և ռացիոնալ սպասումների գերակայությունը:

Ինչ վերաբերում է վերաֆինանսավորման տոկոսադրույքի և ԿԲ ռեպո տոկոսադրույքների տարբերությանը ամսական կտրվածքով, ակնհայտորեն պարզ է որ, մինչև 2015 թվականի տարեվերջ այդ տարբերությունը եղել է բավականին ակնհայտ, իսկ արդեն 2014 թվականի դեկտեմբերին այդ տարբերությունը հասնում է 12.11-ի վերաֆինանսավորման տոկոսադրույքի 8.50 և ԿԲ ռեպո տոկոսադրույքի 20.61 %-ների արդյունքում: Իսկ արդեն սկսած 2016 թվականից շուկան բավականին կայունացել է. մինչև այսօր վերաֆինանսավորման տոկոսադրույքի և ռեպո տոկոսադրույքի տարբերությունը չի գերազանցել 0.44-ը, իսկ 2020 թվականի մարտի երեքի դրությամբ այն կազմել է 0.18 տոկոս, ինչը նորից խոսում է ԿԲ ԴԿԶ-ի արդյունավետության մակարդակի լավարկման, մասնավորապես նրա նկատմամբ վստահության մակարդակի բարձրացման մասին:


Այսպիսով՝ ինչպես պարզ դարձավ վերոնշյալ ուսումնասիրությունների արդյունքում վերջին տարիներին՝ հատկապես 2014 թվականին տեղի ունեցած ճգնաժամից հետո, ակնհայտորեն զարգացել է ԿԲ ԴԿԶ փոխանցումային մեխանիզմը՝ այդպիսով բարձրացնելով ողջ ՀՀ ԿԲ ԴԿԶ արդյունավետությունը: Վերջինս ստացվել է գնաճային սպասումների խարսխման և հետևաբար վստահության մակարդակի լավարկման շնորհիվ՝ այդպիսով հանգեցնելով վարկային %-ների իջեցմանը մոտավորապես այնքան, որքան իջել են գնաճային սպասումները: Եվ հենց վստահության մակարդակի և գնաճային սպասումների խարսխմանն են ուղղված, մեր կարծիքով, վերջին տարիներին ՀՀ ԿԲ ջանքերի գերակշիռ մասը, ինչը ապացուցում է վերջին տարիների գնաճի ակնհայտ ցածր մակարդակը թիրախային մակարդակից (30.11.2019-ի դրությամբ՝ 1, 05):

Գործնական մակարդակում դրամավարկային քաղաքականության արդյունավետությունն իրենից ներկայացնում է նրա առջև դրված խնդիրների ու նպատակների իրագործման աստիճանը: Այսինքն՝ այս համատեքստում նախ և առաջ

⁵⁴⁵ Աղյուսակի տվյալները վերցված են ՀՀ ԿԲ տվյալների բանկից <https://databank.cba.am/>:

պետք է վերլուծվի դրամավարկային թաղաքականության առջև դրված խնդիրների իրագործման չափը:

Վերլուծության շրջանակներում դիտարկել ենք ՀՀ ԿԲ կողմից գնային տարաբնույթ շուկերի ազդեցության վերահսկողության արդյունավետությունը: Վերջինիս մասին կարելի է պատկերացում կազմել ըստ եռամսյակների 12-ամսյա գնաճի և 12-ամսյա բնականոն գնաճի ցուցանիշների համեմատության միջոցով: Դիտարկենք վերոնշյալ ցուցանիշների կապը վերջին տարիների տվյալների հիման վրա (տե՛ս գծապատկեր 2.)⁵⁴⁶:





Գծապատկեր 2. 12-ամսյա գնաճի և բնականոն գնաճի ցուցանիշների դինամիկան

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, մինչև 2016 թվականի երկրորդ եռամսյակը գնաճի ընդհանուր ցուցանիշը զգալի շեղումներ է ունեցել 12-ամսյա բնականոն գնաճի ցուցանիշից, մինչդեռ 2016 թվականի երկրորդ եռամսյակից սկսած դրանց միջև տարբերությունը նկատելիորեն նվազել է, ինչը մեծապես կախված է ՀՀ ԿԲ կողմից տարաբնույթ շուկերի ազդեցությունների կանխատեսման ու կառավարման մակարդակների լավարկումից: Գծապատկերից պարզ է դառնում նաև, որ մասնավաճող 2016 թվականից սկսած ԿԲ-ն մշտապես գնաճը պահել է թիրախային մակարդակից զգալի ներքև, ինչը, սակայն, մեր կարծիքով չի կարելի դիտարկել որպես ԴՎՔ անարդյունավետություն, ընդհակառակը, այս ձևով ԿԲ-ն փորձել է խարսխել գնաճը, լավարկել բնակչության սպասումների որակը, ինչպես նաև բարձրացնել ԿԲ նկատմամբ վստահելիության աստիճանը, ինչը ինչպես տեսանք վերը ներառված գծապատկերներում, բավականին հաջող ստացվել է ԿԲ կողմից: Նշենք, որ գնաճի վրա ազդող ամենանշանակալի գործոններից է գնաճային սպասումները, ընդ որում, ադապտիվ սպասումների ազդեցությունը գնաճի վրա գերակշռում է ռացիոնալ սպասումների ազդեցությանը՝ ի տարբերություն զարգացած երկրների:

Սակայն իրականում ինչպես ՀՀ Կենտրոնական բանկը, այնպես էլ ընդհանրապես որևէ երկրի կենտրոնական բանկ չի կարող սահմանափակվել միայն գների և ֆինանսական կայունության կամ համապատասխան երկրի օրենսդրությամբ կենտրոնական բանկի արջև դրված այլ հիմնական խնդրի կատարմամբ: ՀՀ դեպքում նման խնդիրներից կարելի է նշել մասնավորապես արտարժույթի փոխարժեքի հարաբերական կայունության ապահովումը:

⁵⁴⁶ Տվյալները՝ ըստ ՀՀ ԿԲ գնաճի հաշվետվությունների 2011-2019 թթ., <https://www.cba.am/am/SitePages/mppubl.aspx>:



Գծապատկեր 3. Արտարժույթի փոխարժեքի դինամիկան և սպառողական գների ինդեքսը 2011-2019 թթ.-ին՝ ըստ եռամսյակների⁵⁴⁷

Ի հաստատումն ասվածի՝ դիտարկենք արտարժույթի փոխարժեքի դինամիկան վերջին տարիներին: Ինչպես պարզ է դառնում գծապատկերներից, գների մակարդակը նշված ժամանակահատվածում ենթարկվել է նշանակալի տատանումների այն պարագայում, երբ արտարժույթի փոխարժեքի տատանումները նույն ժամանակահատվածում աննշան են եղել: Իսկ եթե հաշվի առնենք նաև ՀՀ ներքին արժույթային շուկայի ծավալները, ապա պարզ է դառնում, որ ԿԲ-ն նպատակադրված գնացել է արտարժույթի փոխարժեքի արհեստական կարգավորմանը, ինչը առաջին հայացքից հակասության մեջ է մտնում գների կայունության ապահովման խնդրի առաջնահերթության դրույթի հետ:

Առավել հստակ արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է այնպիսի մի ամփոփ ցուցանիշի մշակում, որը թույլ կտա ստանալ ԴՎՔ արդյունավետության հստակ քանակական գնահատականը, ինչի համար պետք է տարբերակել բացարձակ ու հարաբերական արդյունավետություն:

Բացարձակ արդյունավետության ներքո պետք է հասկանալ դրամավարկային քաղաքականության իրացումն այնպես, որպեսզի առավելագույն չափով իրագործվեն դրա առջև դրված բոլոր խնդիրները: Դրամավարկային քաղաքականության արդյունավետության բնորոշումից ելնելով՝ դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը, որը ցույց է տալիս ԴՎՔ դերը տնտեսական զարգացումների վրա, ֆունկցիոնալ է դրամավարկային քաղաքականության արդյունքներից, այսինքն՝ գնաճի մակարդակից, տնտեսական աճի մակարդակից և գործազրկության մակարդակից: Վերջին միտքը մաթեմատիկորեն կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ՝

$$EM=f(Y, \pi, u,)$$

Ընդ որում, դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը կլինի բարձր, եթե

1. $Y \rightarrow \infty$ կամ $1/Y \rightarrow 0$
2. $\pi_t \rightarrow \pi_0$ կամ $\Delta\pi = |\pi_0 - \pi_t| \rightarrow 0$
3. $u \rightarrow 0$

Ստացված երեք գործակիցների գումարն անվանենք ԴՎՔ արդյունավետության գործակից, այսինքն՝ գործակից, որը բնութագրում է ԴՎՔ ազդեցությունը տնտեսական զարգացումների վրա՝

⁵⁴⁷ Գծապատկերը կազմված է ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի տվյալների հիման վրա <https://www.cba.am/AM/SitePages/ExchangeArchive.aspx>:

$$K_{EM1} = \frac{1}{y} + \Delta\pi + u$$

Ելնելով վերջին բանաձևից՝ դրամավարկային քաղաքականությունը կհամարենք բացարձակ արդյունավետ, երբ՝

$$K_{EM1} = 0$$

Վերոնշյալներն առավել առարկայական դարձնելու համար ներկայացնենք դրամավարկային քաղաքականության բացարձակ արդյունավետության գործակցի հաշվարկը Հայաստանի համար ըստ 2007-2019 թթ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Դրամավարկային քաղաքականության բացարձակ արդյունավետության գործակցի հաշվարկը Հայաստանի համար 2007-2019 թթ.

Տարի	π	$\Delta\pi$	U	Y	1/Y	K_{EM1}
2007	4.6	0.6	16.6	13.8	0.07	17.27
2008	9	5	16.4	6.9	0.14	21.54
2009	3.4	0.6	18.7	-14.1	-0.07	19.23
2010	8.2	4.2	19	2.2	0.45	23.65
2011	7.7	3.7	18.4	4.7	0.21	22.31
2012	2.6	1.4	17.3	7.2	0.13	18.84
2013	5.8	1.8	16.2	3.3	0.3	18.3
2014	3	1	17.6	3.6	0.27	18.88
2015	3.7	0.3	18.6	3	0.33	19.23
2016	-1.4	5.4	18	0.2	5	28.4
2017	1	3	17.8	7.5	0.13	20.23
2018	2.5	1.5	20.5	5.2	0.19	22.19
2019	1.4	2.6	18.5	7.6	0.13	21.23

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ի տվյալներից, բացարձակ արդյունավետության գործակիցը դիտարկվող ժամանակահատվածում նույնիսկ չի մոտեցել նպատակային 0 ցուցանիշին, ավելին՝ նույնիսկ նվազելու միտում չունի, հետևաբար գործնականում գործակիցը միշտ մեծ կլինի 0-ից: Այդ իսկ պատճառով փորձենք հաշվարկել ԴՎՔ արդյունավետության հարաբերական գործակիցը:

Ընդունենք, որ ԿԲ-ն հատկապես փոքր տնտեսությամբ երկրի դեպքում իր գործիքների միջոցով միշտ էլ կարող է ապահովել գների կայունության իրագործումը: Ուստի եթե այդ խնդիրը չի իրագործվում, ապա տրամաբանական է ենթադրել, որ դրա նպատակը մյուս խնդրի՝ տնտեսական աճի ապահովումն է:

Այսպիսով՝ դրամավարկային քաղաքականության հարաբերական արդյունավետությունը կարելի է ներկայացնել որպես ֆունկցիա գնաճի և տնտեսական աճի մակարդակից:

$$EM=f(Y, \pi)$$

Իսկ ԴՎՔ հարաբերական արդյունավետությունը այս դեպքում ցույց կտա, թե դրամավարկային քաղաքականության հիմնական խնդրի նպատակային ցուցանիշից փաստացի ցուցանիշի շեղումը որքանով է ապահովել մյուս խնդրի իրագործումը: Ելնելով սրանից՝ ԴՎՔ հարաբերական արդյունավետության գործակիցը կունենա այս տեսքը.

$$K_{EM2} = \frac{\Delta\pi}{Y}$$

Երբ $K_{EM2} < 0$ և $K_{EM2} > 1$ դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը պետք է համարել անբավարար:

Մյուս դեպքերում՝

Երբ $0 \leq K_{EM2} \leq 1$ ԴՎՔ արդյունավետությունը պետք է համարել բավարար:

Աղյուսակ 3. ԴՎԶ հարաբերական արդյունավետությունը 2007-2019 թթ.

Տարի	π	$\Delta\pi$	Ս	Կ	K_{EM1}	Հարաբերական արդյունավետությունը
2007	4.6	0.6	16.6	13.8	0.04	Բավարար
2008	9	5	16.4	6.9	0.72	Բավարար
2009	3.4	0.6	18.7	-14.1	-0.05	Անբավարար
2010	8.2	4.2	19	2.2	1.91	Անբավարար
2011	7.7	3.7	18.4	4.7	0.79	Բավարար
2012	2.6	1.4	17.3	7.2	0.19	Բավարար
2013	5.8	1.8	16.2	3.3	0.54	Բավարար
2014	3	1	17.6	3.6	0.28	Բավարար
2015	3.7	0.3	18.6	3	0.1	Բավարար
2016	-1.4	5.4	18	0.2	27	Անբավարար
2017	1	3	17.8	7.5	0.4	Բավարար
2018	2.5	1.5	20.5	5.2	0.28	Բավարար
2019	1.4	2.6	18.5	7.6	0.34	Բավարար

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, դրամավարկային քաղաքականության հարաբերական արդյունավետությունը դիտարկված ժամանակահատվածում եղել է հիմնականում բավարար՝ բացառությամբ երեք տարիների, որոնցից 2009 թ.-ին ապահովվել է գնաճի նպատակային ցուցանիշը, սակայն գրանցվել է նախորդող տասնամյակի համար աննախադեպ 14.1 % տնտեսական անկում, իսկ 2010-ին և 2016թ-ին չի ապահովվել գնաճի նպատակային ցուցանիշը:

Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ ՀՀ տնտեսական զարգացումների վրա ԴՎԶ-ի դերի բացահայտումը ունի էական նշանակություն, իսկ վերջինիս գնահատումը միաժամանակ երկու՝ տեսական ու գործնական մակարդակներով հնարավորություն է տալիս վերջինս ուսումնասիրել համակողմանի և առավել արժանահավատորեն:

Տեսական մակարդակում կատարած վերլուծությունների արդյունքում պարզ է դարձել, որ հատկապես 2016թ.-ից սկսած ակնհայտորեն լավարկվել է ԴՎԶ փոխանցումային մեխանիզմի արդյունավետությունը, ինչը մեր կարծիքով ԿԲ-ին հաջողվել է հատկապես գնաճային սպասումների խարսխման և վստահության մակարդակի լավարկման շնորհիվ:

Ըստ գործնական մակարդակում իրականացրած վերլուծությունների՝ 2016 թվականի երկրորդ եռամսյակից սկսած ՀՀ ԿԲ կողմից տարաբնույթ շուկերի ազդեցությունների կանխատեսման ու կառավարման մակարդակները ակնհայտորեն լավարկվել են: Իրականացրած վերլուծությունների արդյունքները փաստում են նաև, որ գների մակարդակը ուսումնասիրվող ժամանակահատվածում ենթարկվել է նշանակալի տատանումների այն պարագայում, երբ արտարժույթի փոխարժեքի տատանումները նույն ժամանակահատվածում աննշան են եղել: Հետևաբար կարող ենք եզրահանգել, որ ԿԲ-ն նպատակադրված գնացել է արտարժույթի փոխարժեքի արհեստական կարգավորմանը:

Ինչ վերաբերում է ԿԲ կողմից իրականացվող կանխատեսումների ճշգրտությանը, կարող ենք նշել, որ դրամավարկային քաղաքականության ՀՀ ԿԲ որդեգրած ռազմավարությունը և դրա շրջանակներում կայացված որոշումների հիմքում ընկած կանխատեսումների համակարգը ըստ էության ապահովում են բավարար պայմաններ արդյունավետ դրամավարկային քաղաքականություն իրականացնելու համար:

Որպես հողվածի եզրահանգում՝ առաջարկվել է ԴՎԹ արդյունավետության գնահատման նոր՝ քանակական մոտեցում՝ գործոնային մոդելի տեսքով: Վերջինս, ունենալով քանակական արտահայտություն, հնարավորություն է տալիս առավել շոշափելի և պարզ դարձնել ԴՎԹ արդյունավետությունը: Ըստ մշակված գործակցի՝ դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը դիտարկված ժամանակահատվածում եղել է հիմնականում բավարար՝ բացառությամբ երեք տարիների:

ANALYSIS AND ASSESSMENT OF EFFECTIVENES OF RA MONETARY POLICY

HAYK BEJANYAN

*Armenian State University of Economics,
Chair of Banking and Insurance, Aassistant,
Ph.D. in Economics,
Yerevan, Republic of Armenia*

LUSINE KHACHIKYAN

*Armenian State University of Economics,
Master of Banking,
Yerevan, Republic of Armenia*

The impact of monetary policy on the country's economy is revealed by assessing the effectiveness, which is carried out by analyzing the goals and objectives of the policy.

The purpose of the article is to assess the effectiveness of the monetary policy for the RA economy and the compliance of the strategy adopted by the Central Bank with the economic goals of the RA. To achieve this goal, the following issues are resolved in the article: to study the mechanism of the transfer monetary policy of the Republic of Armenia, to analyze the levels of macroeconomic targets registered in the period under review, to compare them to determine the effectiveness of the monetary policy of the Central Bank.

The article uses scientific abstraction, historical and logical combination, graphic analysis, economic, mathematical and statistical methods. To complete the analysis, the task was set to develop a consolidated indicator that would allow obtaining a clear quantitative assessment of the effectiveness of MP. The article also proposes a new factor model for assessment of monetary policy in order to provide a quantitative assessment of the effectiveness.

Keywords. *Monetary policy, MP efficiency, transmission mechanism, economic growth absolute efficiency, relative efficiency, factor model.*

АНАЛИЗ И ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ДЕНЕЖНОЙ ПОЛИТИКИ РА

АЙК БЕДЖАНЯН

*ассистент кафедры банковского дела и страхования
Армянского государственного экономического университета,
кандидат экономических наук,
г. Ереван, Республика Армения*

ЛУСИНЕ ХАЧИКЯН

*магистр банковского дела
Армянского государственного экономического университета,
г. Ереван, Республика Армения*

Влияние денежно-кредитной политики на экономику страны выявляется путем оценки эффективности, которая осуществляется с помощью анализа целей и задач этой политики.

Целью статьи является оценка эффективности денежно-кредитной политики для экономики РА и соответствия принятой Центральным банком стратегии экономическим целям РА. Для достижения поставленной цели в статье решены следующие вопросы: изучить механизм трансфертной денежно-кредитной политики Республики Армения, проанализировать уровни макроэкономических целевых показателей, зарегистрированных в рассматриваемом периоде, сравнить их для определения эффективности денежно-кредитной политики Центрального банка.

В статье используются такие методы, как научная абстракция, историко-логическое сопоставление, графический анализ, экономико-математические и статистические методы. Для подведения итога анализа поставлена задача разработать сводный показатель, который позволит получить четкую количественную оценку эффективности МП.

В статье также представлена новая факторная модель для оценки денежно-кредитной политики, целью которой является количественная оценка ее эффективности.

Ключевые слова: *денежно-кредитная политика, эффективность МП, трансмиссионный механизм, экономический рост, абсолютная эффективность, относительная эффективность, факторная модель.*

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԵԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՏԵԲՍՈՒՄ*

ՀՏԴ 336.273 (479.25)

DOI: [10.52063/25792652-2021.1-181](https://doi.org/10.52063/25792652-2021.1-181)

ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի ֆինանսների ամբիոնի ասպիրանտ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջի դասախոս, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն anigrigoryan176@gmail.com

2020 թվականը սկսվեց կորոնավիրուսային ճգնաժամով և ամփոփվեց Արցախյան պատերազմով՝ պատճառելով թե՛ ֆինանսական և թե՛ մարդկային կորուստներ: Հայաստանի Հանրապետության համար ստեղծվեց ծայրահեղ բարդ տնտեսաբաղաբական իրավիճակ:

Ռազմական գործողություններով պայմանավորված՝ ծախսային առաջնահերթություն հանդիսացող ռազմական ծախսերի ծավալներն ընթացիկ տարում ավելացան մոտ 40 մլրդ դրամի չափով:

Համավարակով պայմանավորված սահմանափակումները կրճատեցին հարկային եկամուտների ծավալները մոտ 113 մլրդ դրամով:

Հողվածի նպատակն է վեր հանել համավարակով և Արցախյան պատերազմով պայմանավորված ՀՀ առջև ծառայած մարտահրավերները՝ հիմնավորելով այն մոտեցումը, որ վերոնշյալ անկայունություններն անխուսափելիորեն կհանգեցնեն ծրագրված տնտեսական աճի տրամաբանության խախտմանը:

Հետապոտության իրականացման ընթացքում քանակական վերլուծության մեթոդով հաշվարկվել են Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության՝ տարբեր տարիների ցուցանիշները, որոնք ցույց են տալիս պարտքի բեռի մեծությունը:

Հետապոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ տնտեսության մեջ առաջացած խնդիրները հանգեցնելու են բյուջեի դեֆիցիտի ավելացմանը, իսկ վերջինիս ֆինանսավորման համար ռեսուրսների բացակայությունը Հայաստանի Հանրապետության համար անխուսափելի կդարձնի արտաքին նոր պարտքի ներգրավումը, ինչն էլ կհանգեցնի պետական պարտքի՝ առանց այդ էլ ծանր բեռի մեծացմանը:

Հետապետության ուսումնասիրման խնդիրներն են՝ ներկայացնել ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման ոլորտի առկա իրավիճակը և վերլուծել արտաքին պետական բեռը բնութագրող փաստացի ցուցանիշներն Արցախյան պատերազմի համատեքստում:

Հիմնաբառեր՝ համավարակ, Արցախյան պատերազմ, ճգնաժամ, տնտեսական աճ, պետական պարտք, արտաքին պետական պարտք, պարտք/ՀՆԱ հարաբերակցություն:

* Հողվածը ներկայացվել է 14.01.2021թ., գրախոսվել՝ 28.01.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

Ներածություն

Պատերազմի ավարտից հետո 2021թ.-ի բյուջեի ցուցանիշների փոփոխության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ դեկտեմբեր ամսին կառավարությունը ներկայացրեց 2021թ.-ի պետական բյուջեի մասին օրենքի լրամշակված տարբերակը, որում սեպտեմբերին ներկայացրած նախագծի համեմատությամբ փոխվել էին ինչպես 2020թ.-ին սպասվող, այնպես էլ 2021թ.-ին կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները: Մասնավորապես նվազեցվել է տնտեսական աճի ցուցանիշը՝ 2020թ.-ի համար հասնելով -7.9%-ի, իսկ 2021թ.-ի համար՝ 3.2%-ի: Ուշագրավ է այն հանգամանքը, որ 2020 թվականին կանխատեսվում էր, որ պետական բյուջեի դեֆիցիտը կկազմի ՀՆԱ-ի 2.4%-ը, մինչդեռ արդեն ապրիլին արդեն կազմել է 7.4%: Սա նշանակում է, որ դեֆիցիտը լրացնելու խնդիր է դրված ՀՀ Կառավարության առաջ, որն առաջին հերթին կատարվում է արտաքին պարտավորությունների ավելացման հաշվին:

Ըստ Համաշխարհային Բանկի (այսուհետ՝ ՀԲ) հրապարակած տվյալների՝ 2020-ին տնտեսական անկման ծավալներով Հայաստանն Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների առաջատարներից մեկն էր: 2020 թվականին Հայաստանից վատ տնտեսության վիճակը եղել է միայն Չեռնոգորիայում, Խորվաթիայում, Կոտվոյում և Ղրղզստանում: Ինչ վերաբերում է Հայաստանի անմիջական հարևաններին, ապա Համաշխարհային բանկի տվյալների համաձայն՝ Նախորդ տարի տնտեսության անկումը Կրաստանում 6, իսկ Ադրբեջանում 5 տոկոս է կազմել: Ըստ բանկի փորձագետների՝ վրացական տնտեսությունը կարող է շուրջ 4 տոկոսի աճ ապահովել: Վերջին տարիներին տնտեսական աճի աննշան տեմպեր ապահովող Ադրբեջանում այդ միտումը կպահպանվի նաև 2021-ին:

Համաշխարհային բանկի կանխատեսմամբ՝ Ադրբեջանի տնտեսության աճն այս տարի չի գերազանցի 2 տոկոսը: Բանկի մասնագետների գնահատմամբ՝ Հարավային Կովկասում Նախորդ տարի արձանագրված կտրուկ անկման գլխավոր պատճառները երկուսն էին՝ կորոնավիրուսի համաճարակը և Հայաստանի ու Ադրբեջանի միջև ծագած պատերազմը: Ընդհանրապես, ՀԲ մասնագետների համոզմամբ՝ քաղաքական անկայունությունը դարձել է Արևելյան Եվրոպայում տնտեսական կյանքի բնականոն զարգացումը վտանգող գլխավոր ռիսկերից մեկը: Ինչ վերաբերում է Հարավային Կովկասին սահմանակից երկրներին, ապա 2020 թվականին տարածաշրջանի միակ երկիրը, որը տարին կփակի տնտեսական աճով, Թուրքիան է: Համեմատության համար սակայն Ռուսաստանում տնտեսության անկումը անցած տարի 4 տոկոս է կազմել, իսկ Իրանում 3,7 տոկոսի շրջանակներում է կանխատեսվում: Այս տարի, ըստ բանկի մասնագետների, ռուսական տնտեսությունը կաճի ընդամենը 2,5, իրանականը՝ 1,5 տոկոսով: Թուրքիայում տնտեսական աճի ծավալները, ըստ ՀԲ զեկույցի, կարող են գերազանցել 4 տոկոսը:

Չեկույցի հեղինակները նաև միջնաժամկետ կանխատեսումներով են հանդես գալիս՝ նշելով, որ նախնական գնահատականների համաձայն՝ 2022 թվականին տնտեսական աճի ծավալները Հայաստանում ու Ադրբեջանում կարող են հասնել 4,5, իսկ Կրաստանում՝ 6 տոկոսի: Նույն ժամանակահատվածում Ռուսաստանում տնտեսական աճի ցուցանիշը, ըստ ՀԲ-ի, չի գերազանցի 3 տոկոսի ցուցանիշը:⁵⁴⁸

2020 թվականին ՀՀ Կառավարության պարտքի գծով տեղի է ունեցել ծրագրերի փոփոխություն: Մասնավորապես որոշվել է 2020թ.-ին նախատեսվող եվրապարտատոմսերի թողարկումը հետաձգել և կազմակերպվել է 2021 թվականին: Դրա արդյունքում նվազել է ընթացիկ տարվա համար պարտքի սպասվող ցուցանիշը՝

⁵⁴⁸ Համաշխարհային բանկի կանխատեսմամբ՝ 2021-ին Հայաստանում տնտեսական աճը կգերազանցի 3 տոկոսը, <https://www.azatutyun.am/a/31036277.html>, վերջին մուտքի ամսաթիվ՝ 25.02.2021թ.:

4,053.1 մլրդ դրամից դառնալով 3,738.9 մլրդ դրամ և փոխարենը՝ փոփոխվել է հաջորդ տարվա՝ 2021թ. կանխատեսումը՝ 4,246.9 մլրդ դրամից դառնալով 4,221.9 մլրդ դրամ:⁵⁴⁹

Այսպես՝ պետական պարտք/ՅՆԱ հարաբերակցությունը 2020թ.-ի վերջի դրությամբ կազմել է 66.5%, իսկ 2021թ.-ի վերջի դրությամբ կանխատեսվում է՝ 67%: «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ Կառավարության պարտքի և Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի հարաբերակցության սահմանային շեմը 60 տոկոս է⁵⁵⁰: Այսինքն՝ տարեվերջի տվյալներով՝ Կառավարության պարտքը չպետք է գերազանցեր ՅՆԱ-ի 60%-ը: Սակայն 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ նշված շեմը գերազանցել է, այնուամենայնիվ այն չի համարվի օրենքի դրույթների խախտում, քանի որ նույն օրենքով սահմանվում են նաև բացառություններ, որոնց պարագայում թույլատրվում է հատել այդ շեմը: Պատերազմը, համավարակով պայմանավորված իրավիճակը բացառությունների շարքում են⁵⁵¹:

Կառավարության պարտքի մակարդակը 2020 թվականի վերջին գերազանցել է օրենսդրությամբ սահմանված շեմերը (40%, 50% և 60%)

2020-ի նոյեմբերի վերջի դրությամբ կառավարության պարտքը 2020թ.-ին սպասվող ՅՆԱ-ի նկատմամբ արդեն կազմում էր 62.4%: Տարեվերջի ցուցանիշի համեմատ՝ ավելի բարձր պարտքի մակարդակը հիմնականում փոխարժեքի արժեզրկման հետևանքն է: Ըստ սեպտեմբերի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի (488.4 դրամ՝ նոյեմբերի վերջի 506.4 դրամի փոխարեն)՝ պարտք/ՅՆԱ հարաբերակցությունը կազմել է 60.6%: Այսինքն՝ փոխարժեքի մոտ 3.6% արժեզրկման արդյունքում կառավարության պարտք/ՅՆԱ հարաբերակցությունն աճել է 1.8 տոկոսային կետով: Նույն՝ 506.4 դրամ փոխարժեքի կիրառման պարագայում 2021թ.-ի բյուջեի ուղերձում արտացոլված պարտքի ցուցանիշները վերահաշվարկելիս ստացվում է, որ 2020թ.-ի վերջին պետական պարտքը/ՅՆԱ հարաբերակցությունը կազմել է 66.5%:

Գծապատկեր 1-ում ներկայացված է 2020թ.-ին կառավարության պարտքի աճի համեմատությունը նախորդ երկու ճգնաժամային տարիների հետ: 2009թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում տնտեսական անկման, տնտեսության աջակցության ծրագրերի իրականացման, ինչպես նաև փոխարժեքի արժեզրկման արդյունքում կառավարության պարտք/ՅՆԱ հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատ աճել է 19.7 տոկոսային կետով:


Պարտքի բեռի կտրուկ աճ է գրանցվել նաև 2016 թվականին՝ սակայն անհամեմատ ավելի փոքր՝ 7.8 տոկոսային կետով՝ 2015-ի համեմատ: Ըստ կառավարության կանխատեսումների՝ 2020թ.-ին պարտքի աճը նույնպես ենթադրվում էր, որ կլինի բավական բարձր՝ 2019-ի համեմատ կազմելով մոտ 11.6 տոկոսային կետ: Սակայն սա բավական լավատեսական կանխատեսում էր, քանի որ հաշվի չէր առնում փոխարժեքի արժեզրկումը, ինչը նշանակալի գործոն է: Այսպես՝ փաստացի տվյալներով՝ նոյեմբերի վերջի դրությամբ կառավարության պարտք/ՅՆԱ հարաբերակցությունը

⁵⁴⁹ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՇՈՎԵՐԻ ԱԶԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԵԻ ԿՐԱ, «ԼՈՒՅՍ հիմնադրամ», 2020թ. <https://www.luys.am/img/artpic/small/438ca0d792a4109eaa4d04-%D5%8A%D5%A1%D6%80%D5%BF%D6%84.pdf>, էջ 15, վերջին մուտքի ամսաթիվ՝ 08/01/2021թ.

⁵⁵⁰ «ՀՀ օրենքը պետական պարտքի մասին», հոդված 5, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=119085>, վերջին մուտքի ամսաթիվ՝ 30.12.2020թ.:

⁵⁵¹ «Հայաստանի պետական պարտքը պատերազմի օրերին սպասարկվում է առանց խոչընդոտների», https://minfin.am/hy/content/havastani_petakan_partqv_paterazmi_orerin_spasarkvum_e_aranc_khochyndotneri/, վերջին մուտքի ամսաթիվ՝ 30.12.2020թ.:

կազմում էր 62.4%, ինչը 12.5 տոկոսային կետով մեծ է 2019թ.-ի ցուցանիշի համեմատ: Իսկ եթե կառավարության սպասումները վերահաշվարկենք Նոյեմբերի վերջի դրությամբ ձևավորված փոխարժեքով, ապա փոփոխությունը 2019թ.-ի համեմատ կկազմի 12.8%:



**Ըստ՝ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների
Գծապատկեր 1. Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության
փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ տարբեր տարիներին, տոկոսային կետ**

Այսինքն՝ կանխատեսելի էր, որ կառավարության պարտքի մակարդակը 2020 թվականի վերջին կգերազանցի օրենսդրությամբ սահմանված շեմերը (40%, 50% և 60%), ինչն ակխուսափելիորեն տեղի ունեցավ՝ հասնելով 66.5%-ի, իսկ 2021 թվականին կմոտենա ԱՄՅ պարտքի կայունության գնահատման մեթոդաբանությունում զարգացող երկրների համար կիրառվող ռիսկայնության շեմին՝ 70%-ին: Պարտքի կտրուկ աճը և սահմանային շեմերի գերազանցումը պարունակում են մի շարք ռիսկեր, որոնց նյութականացումը խնդիրներ կառաջացնի տնտեսության մի շարք ոլորտներում: Մասնավորապես ինչպես արդեն նշվել է, պարտքի մեծ ծավալը ենթադրում է նաև բավականին զգալի չափով տոկոսավճարների բեռ պետական բյուջեի համար՝ նվազեցնելով հարկաբյուջետային քաղաքականության հնարավորությունները տնտեսության խթանման և ներուժի բարձրացման գործում: Բացի այդ, բավականին մեծ ծավալով արտարժույթային պարտքը պարունակում է փոխարժեքի ռիսկ. դա արդեն իսկ տեսանելի է, քանի որ Նույնիսկ փոքր չափով փոխարժեքի արժեզրկումը հանգեցնում է պարտք ՀՆԱ-ի զգալի աճին: Մասնավորապես կարող ենք փաստել, որ 2020 թվականի վերջի դրությամբ Կառավարության պարտքի/արտաքին պարտք հարաբերակցությունը կազմել է 74.5%, ներքինը՝ 25.5%, ընդ որում, ՀՀ դրամով ներգրավված պարտքը կազմել է 24.4%, իսկ արտարժույթովը՝ 75.6%: Ի հավելումն այս գործոնների՝ պարտք/ՀՆԱ հարաբերակցության աճը ապագա տեսլականում կհանգեցնի նաև ներդրողների շրջանում (հատկապես օտարերկրյա) երկրի ռիսկայնության ընկալումների վատթարացման, ինչը բացասաբար կազդի ինչպես մասնավոր (հատկապես բանկային համակարգի), այնպես էլ պետական հատվածում ֆինանսավորման կարիքների բավարարման հնարավորությունների վրա⁵⁵²:

⁵⁵² 2020 ԹՎԱԿԱՆԻ ՇՈՎԵՐԻ ԱՇԽԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿՐԱ, «ԼՈՒՅՍ հիմնադրամ» 2020թ. էջ 13-14
<https://www.luys.am/img/artpic/small/438ca0d792a4109eaa4d04%D5%8A%D5%A1%D6%80%D5%BF%D6%84.pdf> վերջին մուտքի ամսաթիվ՝ 08/01/2021թ.

Կառավարության պարտքի աճը՝ պայմանավորված կորոնավիրուսային համավարակով և Արցախյան պատերազմով

Պետական պարտքի կառավարման նպատակների սահմանման պարագայում տնտեսագետների շրջանում դեռևս բացակայում է միասնական կարծիք: Սակայն ամենատարածված տեսակետներից մեկի համաձայն՝ պետական պարտքի կառավարման հիմնական նպատակը դրա գծով սպասարկման ծախսերը նվազագույնի հասցնելն է և արդյուբնում պետության կողմից առավել շահեկան պայմաններով փոխառությունների ձեռք բերումը⁵⁵³:

Հարկ է նշել, որ վերը նկարագրված ռիսկերն արդեն սկսել են ի հայտ գալ: Մասնավորապես «Ֆիթչ» միջազգային հեղինակավոր վարկանշային կազմակերպության կողմից վատթարացվել է Հայաստանի ֆինանսական վարկանիշը, իսկ բյուջեի պակասուրդի ֆինանսավորման տեսանկյունից դժվարություններ են առաջացել ներքին պարտքի շուկայում գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումների գործընթացում:

Ինչպես նշում է «Ֆիթչ»-ը, «կորոնավիրուսային ցնցումը բացասաբար է ազդել ՀՀ տնտեսության վրա՝ մեծապես պայմանավորված արտահանման ծավալներով: Այս համատեքստում ՀՀ-ն ունի համեմատաբար բարձր արտաքին պարտք և ընթացիկ հաշվի դեֆիցիտ, որը միայն մասամբ է ֆինանսավորվում ոչ պարտքային կապիտալի ներհոսքի հաշվին»⁵⁵⁴:

Ամփոփելով նշենք, որ 2020 թվականին կառավարության պարտքը աճել է շեշտակիորեն՝ պայմանավորված կորոնավիրուսային համավարակով և Արցախյան պատերազմով: Ընդ որում, Հայաստանի համախառն պետական պարտքը մեկ տարում աճել է 652 մլրդ դամով՝ 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմելով 4,16 տրիլիոն դրամ (շուրջ 8 մլրդ դոլար)⁵⁵⁵:

Բացի այդ, 2020թ.-ի զարգացումների արդյունքում որոշակիորեն աճել է դրամային պարտքի տեսակարար կշիռը՝ նպաստելով փոխարժեքի ռիսկի զսպմանը: Սակայն այս գործընթացը անխուսափելիորեն կուղեկցվի պարտքի սպասարկման ծախսերի աճով, քանի որ դրամային պարտքը, որ տեղաբաշխվում է ներքին շուկայում, ունի առավել բարձր տոկոսադրույթ⁵⁵⁶:

Կառավարության պարտքի կառուցվածքում արտաքին պարտքը 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ տոկոսային հարաբերակցությամբ կազմել է 74,5 տոկոս, իսկ ներքին պարտքը՝ 25,5 տոկոս: Ընդ որում, ՀՀ դրամով ներգրավված պարտքը կազմում է 24,4 տոկոս, արտարժույթով վերցված պարտքը՝ 75,6 տոկոս: Ներքին պարտքը մեկ տարվա ընթացքում աճել է 373 մլրդ դրամով՝ կազմելով 1 տրիլիոն դրամ (1,9 մլրդ դոլար): Հատկանշական է, որ մոտ 1,8 մլրդ դոլարը բաժին է ընկնում ռեզիդենտների ձեռք բերած պետական պարտատոմսերին, իսկ արտարժույթով

⁵⁵³ «Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» / Ա. Յ. Բայադյան, Յ. Ա. Մարկոսյան. - Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., 2015, էջ 5-6:

⁵⁵⁴ «Ֆիթչ» վերանայել է Հայաստանի ֆինանսական վարկանիշը՝ BB-, «Ֆիթչ» վարկանշային կազմակերպություն 03.04.2020թ., <https://www.fitchratings.com/research/sovereigns/fitch-revises-outlook-on-armenia-to-negative-affirms-at-bb-03-04-2020> վերջին մուտքի ամսաթիվ՝ 08/01/2020թ. վերջին մուտքի ամսաթիվ՝ 25.02.2021թ.:

⁵⁵⁵ Հայաստանի պետական պարտքը մեկ տարում աճել է 652 մլրդ դամով, <https://www.civilnet.am/news/2021/01/27>

⁵⁵⁶ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՇՈՎԵՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿՐԱ, «ԼՈՒՅՍ հիմնադրամ», 2020թ. էջ 15, <https://www.luys.am/img/artpic/small/438ca0d792a4109eaa4d04%D5%8A%D5%A1%D6%80%D5%BF%D6%84.pdf> վերջին մուտքի ամսաթիվ՝ 08.01.2020թ.:

պետական պարտատոմսերը կազմել են 80,6 մլն դոլար: Այս համատեքստում հարկ է նշել նաև, որ ներքին պարտքի աճի տեմպը 2020թ.-ի ընթացքում եղել է ամենաարագը:

Արտաքին աղբյուրներից ներգրավված կառավարության վարկերի կառուցվածքը հետևյալն է՝ միջազգային կազմակերպություններից՝ 3,5 տրիլիոն դրամ, օտարերկրյա պետություններից՝ շուրջ 1 տրիլիոն դրամ: 2021-2024 թթ.-ին առկա պարտավորությունների գծով վճարումների ծավալը նախատեսվում է 350-500 միլիոն դոլարի չափով, վճարումների գագաթնակետը սպասվում է 2025 և 2029 թվականներին, երբ դրանք կգերազանցեն 1 մլրդ դոլարը:⁵⁵⁷

2020թ.-ին Էական բացասական շուկերի պայմաններում կառավարությունը չի իրականացրել ընթացիկ ծախսերի կրճատում՝ չնայած այն հանգամանքին, որ համավարակով պայմանավորված՝ ծախսերի մի շարք տեսակներ հնարավոր չի լինելու իրականացնել: Փոխարենը կառավարությունը նվազեցրել է կապիտալ ծախսերը՝ մոտ 22.2%-ով, ինչը անկասկած բացասական ազդեցություն կունենա առանց այդ էլ ճգնաժամային փուլում գտնվող տնտեսության վրա: Այս գործելակերպը հակասում է հարկաբյուջետային կանոնների «տառին և ոգուն», քանի որ պետական պարտքը ուղղվում է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը՝ չավելացնելով տնտեսության ներուժային կարողությունները: Հետևաբար բյուջետային ծախսերը պլանավորելիս անհրաժեշտ է որդեգրել ավելի հավասարակշռված մոտեցում՝ հարկաբյուջետային կայունությանը սպառնացող ռիսկերը զսպելու նպատակով:⁵⁵⁸

Եզրակացություն

Թեև 2020թ.-ի ընթացքում պետական պարտքի ծավալի աճը ունեցել է հիմնավորման օբյեկտիվ պատճառներ՝ պայմանավորված համավարակով և Արցախյան պատերազմով, այդուհանդերձ պետական պարտքի կայունության տեսանկյունից անհրաժեշտ միջոցառումների բացակայությունը երկարաժամկետ հեռանկարում կարող է հանգեցրել հարկաբյուջետային «անհարթությունների»: Մի կողմից 2020թ.-ին պլանավորված կապիտալ ծախսեր չեն իրականացվել՝ հանգեցնելով տնտեսական արդյունավետության անկման, որի ցուցանիշը 2020 թվականի դեկտեմբերին շոշափել է գրեթե 8%-ը, մյուս կողմից շարունակաբար ավելացել են հաջորդող տարվա ընթացիկ ծախսերը: Առաջիկա տարիներին ՀՀ կառավարությունը պետք է վերանայի ծախսային քաղաքականությունը, սահմանի ծախսային առաջնահերթություններ՝ պայմանավորված Արցախյան պատերազմի հետևանքների հաղթահարման, ինչպես նաև համավարակով պայմանավորված իրավիճակի հաղթահարման ուղղությամբ գործունե քայլերի իրականացմամբ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է բացահայտել և կրճատել բոլոր տեսակի անարդյունավետ ծրագրերին ուղղվող ֆինանսական միջոցները՝ դրանք ներարկելով առավելապես տնտեսական աճ ստեղծող ծրագրերի իրականացմանը: Այդպես նաև հնարավոր է միջնաժամկետում բարձրացնել տնտեսական աճի ապահովման ներուժը:

2020 թվականին ՀՀ-ն, գտնվելով պատերազմական ժամանակահատվածում, այնուամենայնիվ շարունակել է ժամանակին և ամբողջ ծավալով կատարել արտաքին պետական պարտքի սպասարկումը, մասնավորապես 2020թ.-ի սեպտեմբերի 30-ին ամբողջությամբ մարել է 2013 թվականին ստացված 700 մլն դոլար պարտքի մնացորդը՝ շուրջ 97.7 մլն դոլարը: Միևնույն ժամանակ ՀՀ-ն թողարկել է 500 մլն դոլարի եվրապարտատոմսեր, սակայն ավելի քիչ եկամտաբերությամբ՝ 4.2 %-ով, ինչը

⁵⁵⁷ Տե՛ս նույն տեղը:

⁵⁵⁸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՇՈՎԵՐԻ ԱՉԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԵԻ ԿՐԿ, «ԼՈՒՅՍ հիմնադրամ», 2020թ. էջ 26, <https://www.luys.am/img/artpic/small/438ca0d792a4109eaa4d04%D5%8A%D5%A1%D6%80%D5%BF%D6%84.pdf> վերջին մուտքի ամսաթիվ՝ 08.01.2020թ.:

Նշանակում է որ այս պարտքի բեռը ՀՀ-ի համար ավելի ցածր կլինի, քան նախկինն էր: Նոր եվրասարտատոմսերը թողարկվել են 10 տարի ժամկետով, որը ՀՀ-ն պարտավորվել է մարել 2025 և 2029 թվականներին: Այնսիքն, առաջիկա տարիներին ՀՀ-ն ևս ստիպված կլինի արտաքին պարտքի տոկոսագումարների սպասարկմանն ավելի մեծ գումարներ հատկացնել, քան ֆինանսական միջոցներ ներարկել այնպիսի ոլորտների զարգացմանը, ինչպիսիք են՝ կրթությունը, մշակույթը, առողջապահությունը և այլ ոլորտներ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ արտաքին պետական պարտքի դինամիկան պատերազմական ժամանակահատվածում, կարող ենք փաստել, որ թեև արտաքին պետական պարտքը սպասարկվել է առանց խոչընդոտների, այնուամենայնիվ կարծում ենք՝ ՀՀ պետական պարտքի կառավարելիության ապահովման համար պարտքի կառավարման հիմքում պետք է դրվի ոչ թե պարտքի մեծության կամ ծավալների շարունակական աճի կրճատման խնդիր, այլ վերջինիս օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակադրում, ինչը կնպաստի սոցիալ-տնտեսական արդյունքի ավելացմանը՝ նվազեցնելով պետական պարտքի սպասարկման ու մարման ծախսերի մեծությունը: Այսինքն՝ ներգրավված արտաքին պարտքային միջոցները անհրաժեշտ է ներդրումների տեսքով գեներացնել առավել հեռանկարային ոլորտներում: Այսկերպ հնարավոր կլինի նաև խուսափել խնդրահարույց բեռը հետագա սերունդներին ժառանգելուց:

ECONOMIC DEBT SECURITY PROBLEMS OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF THE ARTSAXH WAR

ANI GRIGORYAN

*Armenian State University of Economics, Department of Finances, Ph.D. Student;
College Of Armenian State University of Economics, Lecturer,
Yerevan, Republic of Armenia*

The 2020 began with the Coronavirus crisis and ended with the Artsakh war, causing both financial and human losses. An extremely difficult economic and political situation was created for the Republic of Armenia.

The volume of military expenditures, which is expenditure priority due to military operations, has increased by about 40 billion drams in the current year.

The epidemic restrictions reduced tax revenues by about 113 billion drams.

The purpose of this article is to reveal the challenges that Armenia has been facing, due to the epidemic and the Artsakh war, substantiating the approach, that the above-mentioned instabilities will inevitably lead to a violation of the logic of the planned economic growth.

During the research, the indicators of the government debt-to-GDP ratio of different years were calculated by the method of quantitative analysis, which show the amount of the debt burden.

As a result of the research we came to the conclusion that the economic problems will lead to an increase in the budget deficit. And the lack of the resources to finance the latter will make it inevitable for the Republic of Armenia to attract new external public debt, which will increase the already heavy external public debt burden of the RA.

Considering the above-mentioned issues as a priority, this article aims to study the dynamics of the external debt obligations of the RA economy during the difficult economic and political period for the Republic of Armenia.

Keywords: *epidemic, Artsakh war, crisis, economic growth, public debt, foreign public debt, debt/GDP ratio.*

ПРОБЛЕМЫ ЭКОНОМИЧЕСКОГО ДОЛГОВОГО ОБЕСПЕЧЕНИЯ РА В КОНТЕКСТЕ АРЦАХСКОЙ ВОЙНЫ

АНИ ГРИГОРЯН

аспирант кафедры финансов

*Армянского государственного экономического университета,
преподаватель колледжа Армянского государственного
экономического университета,
г. Ереван, Республика Армения*

2020 год начался коронавирусным кризисом и закончился Арцахской войной, которая привела к финансовым и человеческим потерям. Для Республики Армения сложилась чрезвычайно сложная экономическая и политическая ситуация.

Объем военных расходов, являющихся приоритетными в связи с боевыми действиями, в текущем году увеличился примерно на 40 млрд драммов. Ограничения из-за эпидемии снизили налоговые доходы примерно на 113 млрд драммов.

Целью данной статьи является выявить вызовы, стоящие перед Арменией из-за эпидемии и Арцахской войны, которые основываются на том, что указанные факторы нестабильности неизбежно приведут к нарушению логики запланированного экономического роста.

В процессе исследования методом количественного анализа были рассчитаны соотношения государственного долга к ВВП за разные годы, которые показывают объем долга в целом.

В результате исследования мы пришли к выводу о том, что проблемы экономики приведут к увеличению бюджетного дефицита, а отсутствие ресурсов для финансирования последнего сделает неизбежным для Республики Армения привлечение нового внешнего государственного долга, что приведет к увеличению и без того тяжелого груза государственного долга РА.

Основываясь на том, что вышеперечисленные вопросы являются приоритетными, данная статья исследует динамику внешних долговых обязательств экономики РА в сложный для страны экономической и политической период.

Ключевые слова: пандемия, Арцахская война, кризис, экономический рост, государственный долг, внешний государственный долг, отношение долга к ВВП.



**ՀՀ ԶՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՈՉ ՖՈՐՄԱԼ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ***

ՀՏԴ 377:343.8

DOI: [10.52063/25792652-2021.1-189](https://doi.org/10.52063/25792652-2021.1-189)

ՄԻՇԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի մանկավարժության ամբիոնի ասպիրանտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն,
mishavtadevosyan@gmail.com*

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել անկախացումից ի վեր ՀՀ քրեակատարողական հիմնարկներում (ԶԿՀ) իրականացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման ու կազմակերպման պրակտիկան: Մասնավորապես դիտարկվում են պետության ու հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերը, դրանց բովանդակային բազմազանությունն ու ընդգրկման տիրույթը՝ ԶԿՀ-ներում գտնվող անձանց մասնակցությամբ կրթամանկավարժական գործունեության պարզացումը նկարագրելու նպատակով:

Հետապոտության իրականացման ընթացքում իրականացվել է քրեակատարողական հիմնարկներում կրթության իրավունքի իրացմանն առնչվող միջազգային հիմնական նորմերի ուսումնասիրություն, ՀՀ ԶԿՀ-ներում իրականացվող կրթական ծրագրերի առնչությամբ փաստաթղթերի ուսումնասիրություն, վիճակագրական տվյալների հավաքագրում, ամփոփում ու վերլուծություն:

Ամփոփելով սույն հոդվածը՝ կարող ենք նշել, որ ժամանակագրական համատեքստում ՀՀ ԶԿՀ-ներում իրականացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերը պարզացել և բազմազանեցվել են իրենց ուղղվածությամբ, ընդլայնվել է ծրագրերի իրականացման տիրույթը (2000-ական թթ.-ներին՝ 2 ԶԿՀ-ում, իսկ 2020թ.-ին՝ արդեն 6-ում. ընդհանուր՝ 12 ԶԿՀ-ում), ձևավորվել են ինստիտուցիոնալ մեխանիզմներ ու կառուցակարգեր՝ ապահովելով ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման կայունություն ու շարունակականություն (ՀԿ-ների նախաձեռնությամբ մեկնարկած ծրագրերը անցել են պետական հոգածության ներքո, գործում է այդ նպատակով առանձնացված հատուկ ծրագիր՝ պետական կազմակերպատիրապական միավորման իրականացմամբ):

Հիմնաբառեր՝ քրեակատարողական հիմնարկներ, ոչ ֆորմալ կրթություն, պետական և հասարակական ծրագրեր, կրթության իրավունք, բանտային կրթություն, վերասոցիալականացման և անկախ կյանքի հմտություններ:

* Հոդվածը ներկայացվել է 25.01.2021թ., գրախոսվել՝ 15.02.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

Ներածություն

Կրթության իրավունքը առանցքային դերակատարում ու նշանակություն ունի քաղաքացու ձևավորման, զարգացման և ողջ կյանքի ընթացքում գործունեության, ինչպես նաև մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների ու ազատությունների համակարգում: Դրա մասին են վկայում կրթության իրավունքի ամրագրումը միջազգային տարաբնույթ փաստաթղթերում, տարբեր ժամանակներում և պարբերաբար միջազգային հանրույթի և առաջավոր կազմակերպությունների կողմից դրա շուրջ քննարկումները, ընդունվող կարգավորումները և բոլոր պետությունների համար միջազգայնորեն սահմանված հռչակագրերը, ինչպես նաև կրթության իրավունքի ամրագրումը մի շարք երկրների (այդ թվում՝ Հայաստանի) Սահմանադրություններում և այլ ակտերում:

Ընդհանրապես, գոյություն ունեն կրթության իրավունքը մեկնաբանող տարբեր մոտեցումներ: Քաղաքացու իրավունքների և ազատությունների դասական դասակարգման համաձայն (բոլոր իրավունքները և ազատությունները դասակարգվում են 3 խմբի՝ անձնական, քաղաքական, տնտեսական սոցիալական և մշակութային)՝ կրթության իրավունքը դասվում է իրավունքների 3-րդ խմբին: Սակայն գիտնականների շրջանում առկա են տարբեր մոտեցումներ այդ հարցի շուրջ: Գիտնականների մեծ մասը (Ա.Ա.Բեգուզով, Ա.Գ.Չերնյավսկի, Բ.Ն.Գաբրիչաձե և այլն) այն դասում է սոցիալական իրավունքների խմբին, իսկ որոշ գիտնականներ դիտարկում միայն որպես մշակութային իրավունք⁵⁵⁹: Այսպես, Տ.Վ. Գրաչևան նշում է, որ կրթության իրավունքը առանցքային տեղ է զբաղում մարդու մշակութային իրավունքների շարքում և որ առանց այդ իրավունքի՝ գիտական առաջընթացի և դրա կիրառման բարիքներից օգտվելու, ինչպես նաև մշակութային, տեխնիկական, գիտական բնագավառներում ստեղծագործական ազատության մշակութային իրավունքները գործնականորեն կորցնում են իրենց իմաստը⁵⁶⁰: Որոշ գիտնականներ (օրինակ՝ Ս.Լ. Բուրմիստրովը) կարծում են, որ կրթության իրավունքը հանդիսանում է ինչպես մշակութային, այնպես էլ սոցիալական իրավունք: Երբեմն սոցիալական ու մշակութային իրավունքները միավորվում են մեկ խմբում՝ անվանվելով սոցիալ-մշակութային իրավունքներ, որի շրջանակներում դիտարկվում է նաև կրթության իրավունքը (Տ.Ն.Մատյուշևա և այլն): Վ.Ա. Յուրկոն կրթության իրավունքը համարում է «սոցիալական իրավունք՝ մշակութային ասպեկտով»⁵⁶¹:

Իր հերթին կրթության իրավունքի իրացման հավասար հնարավորությունների ստեղծումը գտնվում է միջազգային հանրության մշտական ուշադրության ներքո: Այդ նպատակով մշակվում են միջազգային ստանդարտներ, առաջ են քաշվում հռչակագրային ու խորհրդատվական բնույթ կրող ուղենիշներ: Վերջին տասնամյակում առանձնահատուկ ուշադրության են արժանանում նաև քրեակատարողական հիմնարկներում (ԶԿՀ) գտնվող անձանց կրթության իրավունքի իրացման հիմնախնդիրները:

Ըստ էության, անհնար է խոսել կրթության իրավունքին առնչվող միջազգային դրույթների, ԶԿՀ-ներում գտնվող անձանց կրթության իրավունքի մասին՝ առանց մարդու իրավունքներին առնչվող միջազգային ու տարածաշրջանային հիմնական փաստաթղթերին անդրադառնալու: Մարդու իրավունքներին (այդ թվում՝ կրթության

⁵⁵⁹ Катцова Т., Гайкович С., Образование в контексте концепции прав человека, 2015, https://prison-off.com/wp-content/uploads/2020/02/module1_EOD.pdf, հասանելի է 08.01.2021 դրությամբ.

⁵⁶⁰ Грачева Т.В., Право человека на образование и его развитие в условиях глобализации, Закон и право. 2004. № 3. С. 49.

⁵⁶¹ Юрко В.А., Место конституционного права на образование в системе основных прав и свобод личности // Право и образование. 2015. № 10. С. 26.

իրավունքին) անդրադարձեր են կատարված Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), Եվրոպական խորհրդի (ԵԽ) և Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) կառույցների կողմից ընդունված միջազգային ու տարածաշրջանային նշանակություն ունեցող փաստաթղթերում:

Մարդու իրավունքներին առնչվող հիմնարար առաջնային փաստաթուղթ է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ.-ի դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը⁵⁶², որը կրում է խորհրդատվական բնույթ: Հռչակագիրը, ի թիվս այլ իրավունքների, անդրադառնում է նաև կրթության իրավունքին, որում մասնավորապես ասվում է. «Յուրաքանչյուր ոք կրթության իրավունք ունի» (հոդված 26, կետ 1), ինչպես նաև մատնանշում «Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը» (հոդված 26, կետ 1): Ըստ էության, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը հիմք է դրել մարդու իրավունքների ոլորտում ստանդարտացմանը՝ ստեղծելով նախապայմաններ տարբեր քաղաքական համակարգեր ունեցող պետություններում մարդու իրավունքների միատեսակ ընկալման համար⁵⁶³, միևնույն ժամանակ այն կարող ենք դիտարկել դեռևս 20-րդ դարի երկրորդ կեսից կրթության իրավունքի հասանելիությանն ու մատչելիությանն առնչվող քաղաքականությունների ու պրակտիկաների մշակման նախադրյալ:

Մարդու իրավունքներին առնչվող մյուս կարևոր փաստաթղթերն են 1966թ.-ի մարտի 7-ին ՄԱԿ-ի կողմից ընդունված «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը⁵⁶⁴, ինչպես նաև 1967թ.-ի մարտի 26-ին ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը⁵⁶⁵: Մասնավորապես «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը սահմանում է, որ «Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի կրթության իրավունքը: Նրանք համաձայնում են, որ կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի և նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը և պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ» (հոդված 13, կետ 1), ինչպես նաև շեշտադրում կրթության իրավունքի լիարժեք իրացման նպատակով տարրական կրթության պարտադիր լինելը, միջնակարգ ու բարձրագույն կրթության՝ հավասարապես մատչելի լինելը բոլորի համար (հոդված 13, կետ 2 ա, բ, գ, դրույթներ): Տարածաշրջանային մակարդակում կարևորվում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրությունը»⁵⁶⁶ (20 մարտի, 1952թ.), որը նախատեսում է

⁵⁶² Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ՄԱԿ, 1948թ., <https://www.un.org/en/universal-declaration-human-rights/>, հասանելի է 21.11.2020 դրությամբ:

⁵⁶³ Сафаров Б.А. Всеобщая декларация прав человека как основополагающий документ международной стандартизации прав человека, Юриспруденция, 2013, № 3, С. 14.

⁵⁶⁴ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, ՄԱԿ, 1966թ., <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/cescr.aspx>, ՀՀ-ը վավերացրել է 1993թ.-ի սեպտեմբերի 13-ին, հասանելի է 21.11.2020 դրությամբ:

⁵⁶⁵ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, ՄԱԿ, 1967թ. https://treaties.un.org/doc/Treaties/1976/03/19760323%2006-17%20AM/Ch_IV_04.pdf, ՀՀ-ը վավերացրել է 1993թ.-ի սեպտեմբերի 13-ին, հասանելի է 21.11.2020 դրությամբ:

⁵⁶⁶ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրություն», 1952թ., <https://rm.coe.int/168006377c>, հասանելի է 21.11.2020 դրությամբ:

կանխել կրթության և ուսուցման իրավունքի մերժումը. «Ոչ մեկին չի կարելի մերժել կրթության իրավունքը...» (Հոդված 2, Կրթության իրավունք):

Ընդհանրական փաստաթղթերի շարքում կարող ենք առանձնացնել նաև կրթության ոլորտին վերաբերող ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1960թ.-ի դեկտեմբերի 15-ին ընդունված «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիային⁵⁶⁷, որը հստակեցնում է «խտրականությունը» հասկացությունը կրթության ոլորտում: Մասնավորապես խտրականություն հասկացությունը ներառում է նաև «որևէ անձի կամ անձանց խմբի՝ ցանկացած տեսակի կամ մակարդակով կրթություն ստանալու հնարավորությունից զրկելը» (հոդված 1, կետ 1, «ա» ենթակետ): Կոնվենցիան նաև ենթադրում է, որ մասնակից պետությունները «... պարտավորվում են մշակել, զարգացնել ու կիրառել այնպիսի պետական քաղաքականություն, որն ազգային պայմաններին ու սովորույթներին համապատասխանող մեթոդներով միտված լինի նպաստելու կրթության բնագավառում հավասար հնարավորություն և վերաբերմունք ապահովելուն» (հոդված 4): Իր հերթին, ՄԱԿ-ի կողմից 2016թ.-ի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ են մտել «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակները (ԿՂՆ)⁵⁶⁸ ընդունված աշխարհի երկրների առաջնորդների կողմից 2015թ.-ի սեպտեմբերին կայացած ՄԱԿ-ի պատմական գագաթնաժողովի ժամանակ⁵⁶⁸: ԿՂՆ 4-րդ նպատակն անդրադառնում է կրթությանը՝ նախատեսելով մինչև 2030թ.-ը «Ապահովել ներառական ու համապատասխան որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունները», որի ներքո նաև «Մինչև 2030 թ. բոլոր կանանց և տղամարդկանց համար ապահովել մատչելի և որակյալ տեխնիկական, միջին-մասնագիտական և բարձրագույն, այդ թվում՝ համալսարանական կրթության հավասար հասանելիություն» (ԿՂՆ 4, կետ 4.3): ԶԿՀ-ներում գտնվող անձանց իրավունքների վերաբերյալ առկա են մի շարք առանձնացված (ԶԿՀ-ների գործունեությանն առնչվող) միջազգային ուղենիշներ, որոնք անդրադառնում են ԶԿՀ-ներում գտնվող անձանց կրթության իրավունքին, օրինակ՝ «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ» (1955), «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու մասին ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ» (վերանայված) (1985թ.), «Եվրոպական բանտային կանոնները» (1987թ, վերանայված 2006թ.-ին), ԵԽ նախարարների կոմիտեի թիվ R(89)12 հանձնարարականը բանտերում կրթության վերաբերյալ (1989թ.) և այլն:

Ամփոփելով ներածական մասը՝ կարող ենք նշել, որ կրթության իրավունքը կարևոր դերակատարում ու նշանակություն ունի մարդու իրավունքների համակարգում, ԶԿՀ-ներում գտնվող անձանց իրավունքներին (այդ թվում՝ կրթության իրավունքին) առնչվող միջազգային իրավական նորմերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ԶԿՀ-ներում կրթության կազմակերպումը դիտարկվում է որպես դատապարտյալի վրա դրականորեն ազդող գործոն՝ համարելով այն անձի սոցիալական ադապտացիային ու վերականգմանը նպաստող, հանցագործությունները կանխարգելող գործիք:

Ոչ ֆորմալ կրթության կազմակերպման պրակտիկան ՀՀ քրեակատարողական հիմնարկներում

2001թ.-ից Քրեական պատիժների իրականացման վարչությունը (նախկինում՝ 1991թ.՝ Քրեական պատիժների իրականացման վարչություն, 1988թ.՝ Ուղղիչ գործերի

⁵⁶⁷ «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիա, ՅՈՒՆԵՍԿՕ, 1960թ., http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=12949&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html,


ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 1993թ.-ի դեկտեմբերի 5-ին, հասանելի է 21.11.2020 դրությամբ:

⁵⁶⁸ Կայուն զարգացման նպատակներ, ՄԱԿ, 2016թ., <http://un.am/hy/p/sdgs-in-general>, հասանելի է 21.11.2020 դրությամբ:

վարչություն) ենթակա ստորաբաժանումներով հանձնվել է ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությանը և առ այսօր գործում է որպես ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն՝ կենտրոնական մարմնով և 12 հիմնարկներով⁵⁶⁹, որոնցում, համաձայն ՀՀ արդարադատության նախարարի 2012թ.-ի փետրվարի 28-ի թիվ 30-Ն հրամանի, կարող են պահվել մինչև 5346 ազատազրկված անձ: Սույն աշխատության մեջ ՀՀ ԶԿՀ-ների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է դաշտային ուսումնասիրությունների արդյունքներում մեր կողմից հավաքագրված տվյալների երկրորդային վերլուծության հիման վրա: Հարկ է նշել, որ ՀՀ-ում առկա չէ ԶԿՀ-ներում պահվող անձանց ընդհանուր թվաքանակի, նրանց կրթական մակարդակի, ԶԿՀ-ներում իրականացվող ծրագրերի, ծրագրերի մասնակիցների վերաբերյալ վիճակագրության հավաքագրման միասնական համակարգ ու մեխանիզմներ՝ համապատասխան հաշվառում չիրականացվելու պատճառով: Այսպես, 2020թ.-ի հոկտեմբերի դրությամբ ՀՀ ԶԿՀ-ներում պահվում է շուրջ 1974 անձ, որից 213-ը ընդգրկված են եղել կրթական ծրագրերում: ՀՀ ԶԿՀ-ներում ոչ ֆորմալ կրթական ծրագրեր/նախաձեռնություններ իրականացվում են 3 հիմնական եղանակով՝

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից,
- ՀԿ-ների կողմից միջազգային դոնորների աջակցությամբ դրամաշնորհային ծրագրերի շրջանակում,
- Ինքնագործ միավորումների տեսքով:

Ինչպես ցույց է տրված Գծապատկեր 1-ում, վերջին 5 տարիների ընթացքում ոչ ֆորմալ կրթական նախաձեռնություններում/ ծրագրերում ընդգրկված են եղել շուրջ 2296 անձ, որոնցից մեծ մասը (1742)՝ ինքնագործ միավորումներում:



Գծապատկեր 1: ՀՀ ԶԿՀ-ներում պահվող անձանց ընդգրկվածությունը ոչ ֆորմալ կրթական ծրագրերի ստ իրականացնող սուբյեկտի վերջին 5 տարիների ընթացքում, 2015-2019թթ.

⁵⁶⁹ Պատմություն, ՀՀ արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայություն, <https://www.penitentiary.am/%D5%8A%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6>, հասանելի է 11.01.2021 դրությամբ

Այսպես, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը ստեղծվել է ՀՀ կառավարության 2005թ.-ի նոյեմբերի 3-ի N2118-Ն որոշմամբ: Նշյալ ժամանակահատվածում այն կրել է «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոնը»⁵⁷⁰ անվանումը, որի հիմնական նպատակը և առարկան իրավախախտումներ կատարած անչափահաս երեխաների համար հատուկ հաստատություններում և դրանցից դուրս մշակութային մասնագիտությունների ուսուցման կազմակերպումն է եղել: 2007թ.-ից ՀՀ Մշակույթի և երիտասարդության նախարարության (այժմ՝ ՀՀ ԿԳՄՍՆ) ենթակայությամբ գործող «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոնը» 2012թ.-ին փոխանցվել է ՀՀ արդարադատության նախարարությանը՝ վերանվանվելով որպես «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն»: 2016թ.-ին ՀՀ Կառավարության նոյեմբերի 24-ի թիվ 1253-Ն որոշմամբ՝ «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ը միացվել է «ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ»-ին: Վերջինս ստեղծվել է ՀՀ Կառավարության 1990թ.-ի հոկտեմբերի 18-ի թիվ 681 կարգազրույթով, որից հետո ՀՀ Կառավարության 2003թ.-ի փետրվարի 13-ի թիվ 224-Ն որոշմամբ վերակազմակերպվել է որպես «ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ»-ի: Վերակազմավորման արդյունքում Կենտրոնը վերանվանվել և մինչ օրս կրում է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ⁵⁷¹ անվանումը: Համաձայն Կենտրոնի գործող կանոնադրության՝ Կենտրոնի գործունեության առարկայի ու խնդիրների շարքում դիտարկվում են նաև՝

- Իրավախախտում կատարած անձանց ուղղման, սոցիալական վերականգնման և վերաինտեգրման արդյունավետ ու նպատակային ծրագրերի (այսուհետ՝ սոցիալական վերականգնողական ծրագրեր), այդ թվում՝ կրթական, մշակութային, մարզական, մանկավարժական, հոգեբանական ու սոցիալական աշխատանքի միասնական չափորոշիչների մշակում և լիազոր մարմնի հաստատմանը ներկայացնելը (կետ 2),
- սոցիալական վերականգնողական ծրագրերի իրականացումը ԶԿՀ-ում պահվող կամ ազատությունից զրկման հետ չկապված պատիժ կրող կամ վերահսկողության տակ գտնվող, ինչպես նաև պատժից ազատված անձանց համար (կետ 3):

Այսպիսով՝ ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը պետական միակն կառույցն է, որը մատուցում է համապարփակ կրթական ծառայություններ ՀՀ ԶԿՀ-ներին: Ներկայումս ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագիրը գործող միակ պետական կայուն, շարունակական և ինստիտուցիոնալ գործիքն է՝ ուղղված դատապարտյալների համար գեղագիտական և կրթական դասընթացների իրականացմանը (ոչ ֆորմալ դասընթացների տեսքով): Այն իրականացվում է 2004թ.-ից: Մեկնարկից ի վեր ծրագիրը կրել է բազմաթիվ բովանդակային փոփոխություններ, ընդլայնվել են դրա իրականացման ուղղությունները

⁵⁷⁰ «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշում, 2005թ., <https://www.arlis.am/documentview.aspx?Docid=21548>, հասանելի է 06.01.2021 դրությամբ:

⁵⁷¹ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ, Կանոնադրություն, <https://lawinstitute.am/2018/wp-content/uploads/2019/04/KANONADRUTYUN.pdf>, հասանելի է 26.11.2020 դրությամբ:

և ԶԿՅ-ների ընդգրկման տիրույթը: Ծրագրի իրականացումը հիմնականում յուրաքանչյուր տարի առանձին հրամանով հաստատվում է ՀՀ արդարադատության նախարարի կողմից: 2020թ.-ի հունվարի 23-ին ՀՀ արդարադատության նախարարի N25-Ա հրամանով⁵⁷² հաստատվել է Ծրագրի իրականացումը ներառյալ 3 ԶԿՅ-ի համար («Աբովյան», «Արմավիր», «Կարդաշեն»), իսկ նույն թվականի հուլիսի 20-ին նախարարի N268-Ա հրամանով⁵⁷³ ծրագրում ներառել են նաև «Սևան» և «Կոչ» ԶԿՅ-ները: Այսպես, ստորև ներկայացվում են ՀՀ ԶԿՅ-ներում պետության կողմից իրականացված ոչ ֆորմալ կրթական դասընթացները ըստ տարիների (2013-2020թթ): Վիճակագրության տվյալների բացակայության պատճառով հնարավոր չէ ներկայացնել ԶԿՅ-ներում ծրագրերի իրականացման մեկնարկից (2000-ական թթ.-ից) մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը:

Տարեթիվ	Ոչ ֆորմալ դասընթացներ
2020	<ul style="list-style-type: none"> ➤ Դեկորատիվ կիրառական արվեստ ➤ Հայոց լեզու և գրականություն ➤ Օտար լեզու/անգլերեն ➤ Օտար լեզու/ռուսերեն ➤ Բիզնես գրագիտություն ➤ Համակարգչային հմտություններ
2019	<ul style="list-style-type: none"> ➤ Դեկորատիվ կիրառական արվեստ ➤ Համակարգչային հմտություններ ➤ Բիզնես գրագիտություն ➤ Հայոց լեզու և գրականություն ➤ Անգլերեն լեզու
2018	<ul style="list-style-type: none"> ➤ Դեկորատիվ կիրառական արվեստ ➤ Առողջ ապրելակերպ ➤ Սոցիալական ուսուցում և կյանքի հմտություններ ➤ Հիմնական գրագիտություն/ հայոց լեզու և գրականություն/ ➤ Հիմնական գրագիտություն /մաթեմատիկա
2017	<ul style="list-style-type: none"> ➤ Խեցեգործություն, խեցեգործության ներկման և թրծման տեխնոլոգիա ➤ Ժամանակակից դեկորատիվ կիրառական արվեստ ➤ Փայտամշակում և փայտի գեղարվեստական

⁵⁷² «Իրավախախտում կատարած անձանց 2020 թվականի գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագրին մասնակցող ունկնդիրների թիվը, դասընթացի տևողությունը և ծրագրի ընդհանուր արժեքը սահմանելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2020թ.-ի հունվարի 23-ի N25-Ա հրաման

⁵⁷³ «Արդարադատության նախարարի 2020 թվականի հունվարի 30-ի N 30-Ա հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2020թ.-ի հուլիսի 20-ի N268-Ա հրաման

	<p>փորագրություն</p> <ul style="list-style-type: none"> ➤ Առողջ ապրելակերպ ➤ Համակարգչային հմտություններ ➤ Ռուսաց լեզվի տարրական գիտելիքներ ➤ Հոգեբանություն
2016	<ul style="list-style-type: none"> ➤ Խեցեգործություն, խեցեգործության ներկման և թրծման տեխնոլոգիա ➤ Բրուտագործություն, զարդարվեստ և նկարչություն ➤ Ժամանակակից դեկորատիվ կիրառական արվեստ ➤ Փայտամշակում և փայտի գեղարվեստական փորագրություն ➤ Հոգեբանություն
2015	<ul style="list-style-type: none"> ➤ Խեցեգործություն, խեցեգործության ներկման և թրծման տեխնոլոգիա ➤ Բրուտագործություն, զարդարվեստ և նկարչություն ➤ Ժամանակակից դեկորատիվ կիրառական արվեստ ➤ Հոգեբանություն
2014	<ul style="list-style-type: none"> ➤ Խեցեգործություն, խեցեգործության ներկման և թրծման տեխնոլոգիա ➤ Բրուտագործություն, զարդարվեստ և նկարչություն ➤ Ժամանակակից դեկորատիվ կիրառական արվեստ ➤ Փայտամշակում և փայտի գեղարվեստական փորագրություն
2013	<ul style="list-style-type: none"> ➤ Խեցեգործություն, խեցեգործության ներկման և թրծման տեխնոլոգիա ➤ Բրուտագործություն, զարդարվեստ և նկարչություն ➤ Ժամանակակից դեկորատիվ կիրառական արվեստ

Աղյուսակ 1: Պետության կողմից ԶԿՀ-ներում իրականացվող ոչ ֆորմալ կրթական դասընթացները ըստ տարիների, 2013-2020թթ

Ընդհանուր առմամբ, 2013-2020թթ.-ների ընթացքում պետության կողմից իրականացվել է 14 ուղղվածության ոչ ֆորմալ կրթական ծրագիր, որից 5-ը՝ փափուկ/soft հմտությունների ձեռքբերման ուղղությամբ, 5-ը՝ գեղագիտական/մշակութային ուղղվությամբ, 4-ը՝ հիմնական գրագիտության և լեզվական հմտությունների:

ՀՀ ԶԿՀ-ներում ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման առաջին փորձը Նախաձեռնվել է հասարակական կազմակերպությունների կողմից: Առաջամարտիկը այս ցանկում «Տրտու» հասարակական մշակութային կազմակերպությունն էր դեռևս 2000-ական թթ.-ներից սկսած: Ըստ կազմակերպության հիմնադիր Նախագահի՝ մտահաղացման համար հիմք է հանդիսացել Արցախյան պատերազմի օրերին՝ 1990-ական թթ.-ներին, խարույկի շուրջ մի պատմական իրողություն, երբ Նա (Թեմիկ Խալափյան) բացահայտել է, որ «իր հետ պատերազմական դաշտում կովոր տղաներից որոշները պատանի հասակում հանցագործության համար դատապարտված են եղել, բայց

կրակն քակաս քաջ և հայրենասեր չէին...»⁵⁷⁴: Այս գաղափարով ոգեշնչված՝ դրամաշնորհային աջակցությամբ առաջին կրթական ծրագիրը մեկնարկել է «Աբովյան» ԶԿ-ում՝ անչափահաս դատապարտյալների ու կալանավորների մասնակցությամբ և ներառել է կերպարվեստի, խեցեգործության, փայտի փորագրության, թատերական արվեստի, երգ-պարի ուսուցանում: Ըստ եուֆան, այս նախաձեռնությունը հիմք է հանդիսացել ԶԿ-ներում մասնավարժական գործընթացների, ինչպես նաև պետական ծրագրերի նախաձեռնման համար:

Առհասարակ, ՀՀ-ում ԶԿ-ներում կրթական ծրագրեր և/կամ նախաձեռնություններ իրականացնող հասարակական կազմակերպությունները սակավաթիվ են՝ պայմանավորված այս հաստատություններում աշխատանքների իրականացման տարաբնույթ գործոններով՝ օրենսդրական սահմանափակումներ, դատապարտյալների հետ աշխատանքի սոցիալ-հոգեբանական դժվարություններ և այլն: 2005-2015թթ.-ների ընթացքում մեզ հասանելի ու մատչելի առկա տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ԶԿ-ներում հասարակական կազմակերպությունների կողմից կրթական ծրագրեր չեն իրականացվել: Նման փորձերը կրկին վերսկսվել են 2015թ.-ին Փի-Էյչ Ինթերնեյշնալ կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Իրավական սոցիալականացման» ծրագրի շրջանակում և ԱՄՆ պետդեպարտամենտի Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բաժնի ֆինանսավորմամբ: «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ծնողական ակումբի ստեղծում» անվանումը կրող ծրագրի շրջանակում, ի թիվս այլ գործողությունների, իրականացվել է նաև ծնողավարության հմտությունների ձեռքբերման շուրջ 36 դասընթաց, որում ընդգրկվել են 43 կին դատապարտյալ⁵⁷⁵: ՀԿ-ների կողմից իրականացվող հաջորդ ոչ ֆորմալ կրթական բաղադրիչով ծրագիրն իրականացվել է «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից: Վերջինս 2016թ.-ին Հայաստանում Լիտվայի դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Ավելի բարենպաստ պայմանների ստեղծում նախկին կին դատապարտյալների վերաինտեգրման համար» ծրագրի շրջանակներում կրկին «Աբովյան» ԶԿ-ում կառուցել է վարսահարդարության մասնագիտական ուսուցման սենյակ և Երևանի թիվ 6 արհեստագործական պետական ուսումնարանի հետ համագործակցությամբ (դասընթացավարների կողմից) իրականացրել վարսահարդարման մասնագիտական ուսուցման դասընթացներ 21 դատապարտյալի մասնակցությամբ⁵⁷⁶: Նշյալ ՀԿ-ի կողմից 2017-2018թթ.-ի ընթացքում ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի ֆինանսավորմամբ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացրել է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ. թափանցիկության, արդյունավետության և վերականգնողական մշակույթի ստեղծում» ծրագիրը⁵⁷⁷: Այսպես,

⁵⁷⁴ Հարցազրույց «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոնի հիմնադիր Թ.Նալափյանի հետ, <http://csi.am/hy/interview/2011/04/14/trtu>, հասանելի է 06.01.2021 դրությամբ:

⁵⁷⁵ «Իրավական սոցիալականացում» ծրագիր, Փի-Էյչ Ինթերնեյշնալ կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ, <https://www.ph-int.org/office/4/>, հասանելի է 08.11.2020 դրությամբ:

⁵⁷⁶ Վարսահարդարման դասընթաց կին դատապարտյալների համար, «Ավելի բարենպաստ պայմանների ստեղծում նախկին կին դատապարտյալների վերաինտեգրման համար» ծրագիր, «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ, <http://www.csi.am/hy/events/2016/06/07/project>, <http://www.csi.am/hy/events/2016/09/30/varsahardarum>, հասանելի է 08.11.2020 դրությամբ:

⁵⁷⁷ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ. թափանցիկության, արդյունավետության և վերականգնողական մշակույթի ստեղծում» ծրագիր, «Քաղաքացիական հասարակության

ստորև ներկայացվում են ՀՀ ԶԿ-ներում ՀԿ-ների կողմից իրականացված ոչ ֆորմալ կրթական դասընթացները, դասընթացների մասնակիցները ըստ տարիների (2015-2020թթ):

Տարեթիվ	Դասընթաց	Մասնակիցների քանակ
2020թ.	<ul style="list-style-type: none"> ➤ Ներքին հարդարման դասընթաց ➤ Սոցիալ-հոգեբանական դասընթաց ➤ Խոհարարական դասընթաց ➤ Հացաթխման դասընթաց 	<p>26</p> <p>30</p> <p>25</p> <p>5</p>
2018թ.	<ul style="list-style-type: none"> ➤ Համակարգչային դասընթաց ➤ Խոհարարական դասընթաց ➤ Բրոյա թելերի մանածագործություն ➤ Հելուևագործության դասընթաց ➤ Գորգագործության և կարպետագործության դասընթաց ➤ Վարսահարդարման դասընթաց ➤ Բիզնես պլանավորման դասընթաց ➤ Անգլերեն լեզվի դասընթաց 	<p>12</p> <p>16</p> <p>8</p> <p>11</p> <p>6</p> <p>6</p> <p>8</p> <p>8</p>
2017թ.	<ul style="list-style-type: none"> ➤ Վարսահարդարում 	11
2016թ.	<ul style="list-style-type: none"> ➤ Վարսահարդարում 	21
2015թ.	<ul style="list-style-type: none"> ➤ Ծնողավարություն 	43
Ընդհանուր		236

Աղյուսակ 2: ՀԿ-ների կողմից ԶԿ-ներում իրականացվող ոչ ֆորմալ կրթական դասընթացները ըստ մասնակիցների քանակի և տարիների, 2015-2020թթ.


Այսպիսով՝ վերջին 5 տարիների (բացառությամբ 2019թ.-ի) ընթացքում ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ 6 ԶԿ-ներում իրականացվել են 14 ուղղվածության կարճաժամկետ դասընթացներ՝ ընդհանուր առմամբ 236 անձի մասնակցությամբ:

ԶԿ-ներում ոչ ֆորմալ կրթական ծրագրերի և նախաձեռնությունների շարքում առանձնահատուկ դերակատարում ունեն ԶԿ-ներում գործող ինքնագործ միավորումները, որոնց համար իրավական հիմք է հանդիսանում գործող ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 91-րդ հոդվածը: Վերջինս սահմանում է.

- Դատապարտյալները կարող են ստեղծել մշակութային, լուսավորչական և մարզական ինքնագործ միավորումներ, որոնք գործում են ուղղիչ հիմնարկի վարչակազմի հսկողությամբ: Այդ միավորումները կարող են համագործակցել համապատասխան միությունների և կազմակերպությունների հետ: Դատապարտյալի մասնակցությունն ինքնագործ միավորումների աշխատանքներին խրախուսվում է և հաշվի առնվում նրա ուղղման աստիճանը որոշելիս: Ինքնագործ միավորումների անդամ դատապարտյալը լրացուցիչ արտոնություններից չի օգտվում (մաս 1),
- Դատապարտյալների ինքնագործ միավորումների հիմնական խնդիրներն են՝

ինստիտուտ» ՀԿ, <http://moj.am/article/2245?fbclid=IwAR21-zRqsBvtDKwukWR0msD9jBzoOaQffEV7Lbfesnk9ZgU6aa-4Ezivic>, <http://bit.do/fMq8s>, հասանելի են 08.11.2020 դրությամբ:

- զարգացնել դատապարտյալի մտավոր, մասնագիտական, ֆիզիկական կարողությունները,
 - դրական ազդեցություն ունենալ դատապարտյալի ուղղման գործում,
 - մասնակցել դատապարտյալի աշխատանքը, կենցաղը և հանգիստը կազմակերպելուն,
 - սոցիալական օգնություն ցուցաբերել դատապարտյալին և նրա ընտանիքին,
 - դատապարտյալների ինքնագործ միավորումների առջև կարող են դրվել նաև պատիժը կատարելու նպատակներին, կարգին ու պայմաններին չհակասող այլ խնդիրներ (մաս 2),
- Դատապարտյալների ինքնագործ միավորումների կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով (մաս 3) :




Գծապատկեր 2: ՀՀ-ների կողմից ԶԿՀ-ներում իրականացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերում ընդգրկված անձանց մասնակցության դինամիկան ըստ տարիների


2006թ.-ին ընդունված «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ»-ում առանձին բաժնի 10 մասով ներկայացված է «XIV. Դատապարտյալների ինքնագործ միավորումների կազմավորման և գործունեության կարգը»:

Այսպես՝ ստորև ներկայացվում են ՀՀ ԶԿՀ-ներում գործող ինքնագործ միավորումները ըստ տեսակների, մասնակիցների ընդգրկվածության, ըստ տարիների:

Վերջին 5 տարիներին ԶԿՀ-ներում գործող ինքնագործ միավորումներում ընդգրկվել է շուրջ 1742 անձ, որը կազմում է վերջին 5 տարիներում ոչ ֆորմալ կրթական նախաձեռնություններում ընդգրկված անձանց շուրջ 76%-ը: Հատկանշական է, որ չնայած նմանօրինակ ոչ ֆորմալ կրթական նախաձեռնություններում ընդգրկված անձանց մեծ քանակին, պետության ու ՀՀ-ների կողմից իրականացվող ոչ ֆորմալ ծրագրերը չենթ թիրախավորում այս հարթակները:



Գծալատկեր 3: ՀՀ ԶԿՀ-ներում գործող ինքնագործ միավորումները ըստ տեսակների



Գծալատկեր 4: ԶԿՀ-ներում գործող ինքնագործ միավորումներ ընդգրկված անձանց մասնաԿցութալան ղինամիԿան ըստ տարիների

Ամփոփում: Հիմք ընդունելով մեր կողմից կատարված ուսումնասիրությունը և վեր հանված տվալները՝ կարող ենք տեսնել, որ ԶԿՀ-ների մասնաճարճաԿանացման գործընթացը ՀՀ երրորդ հանրալետությունում մեկնարկել է դեռևս 2000-աԿան թա- ների սԿզբին հասարաԿաԿան կաճմաԿերալությունների նախաճեռնությամբ, սաԿալն կարճ ճամնաԿ անց անցել ալետության հոճաճության ներքո: ԶԿՀ-ներում իրաԿանացվող ճրաճերի մեկնարԿից ի վեր ոչ ֆորմալ կրթաԿան ճրաճերը ճերաԿշռել են իրաԿանացվող ընդհանուր ճրաճերի շրջանաԿում: Պետության և հասարաԿաԿան կաճմաԿերալությունների կողմից իրաԿանացվող ոչ ֆորմալ կրթաԿան ճրաճերը բովանդաԿալին ուղղվաճությամբ ճրեթե նույնաԿան են և թիրախաճրում են ինչալես մասնաճիտաԿան, ալնալես էլ փափուԿ/սոֆթ հմտությունների ճեռքբերման դասընթացները: ԿրթաԿան ճրաճերի մեկնարԿից սԿսաճ ալետության կողմից դրանք իրաԿանացվել են 12 ԶԿՀ-ներից երԿուսում, իսԿ ալճմ դրանց իրաԿանացման տիրույթն

ընդլայնվել է՝ ներառելով 6 ԶԿՀ, որը կրթական ծրագրերի ինստուցիոնալիզացման, հետևաբար նաև ԶԿՀ-ների մանկավարժականացման կարևոր ցուցանիշ ու գործոն է:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ ՀՀ ԶԿՀ-ներում գտնվող անձանց՝ Սահմանդրությամբ ամրագրված կրթության իրավունքի իրացման և դրա հնարավորությունների ստեղծման նպատակով վերջին տասնամյակում ՀՀ-ում իրականացվում են մի շարք նշանակալի կարևորություն ունեցող ծրագրեր ու նախաձեռնություններ ինչպես պետության, այնպես էլ հասարակական կազմակերպությունների կողմից:

PRACTICE OF ORGANIZATION OF NON-FORMAL EDUCATION IN PENITENTIARY INSTITUTIONS OF RA

MISHA TADEVOSYAN

*Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Chair of Pedagogy, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to present the practice of non-formal educational programs implemented in the penitentiary institutions of the Republic of Armenia. In particular, to describe the development of educational and pedagogical activities in penitentiaries, presented non-formal education programs implemented by the state and non-governmental organizations, their diversity and scope of coverage.

In the course of the research, a study was made of the main international norms related to the realization of the right to education in penitentiary institutions, the documents related to educational programs implemented in the penitentiary institutions of the Republic of Armenia, collection of statistical data, generalization and analysis.

Summing up this article, the following conclusion was formed: the programs of non-formal education implemented in the penitentiary institutions of the Republic of Armenia in the chronological context have developed and diversified, the scope of programs has been expanded (in 2 penitentiary institutions in 2000, and in 2020 already in 6 out of 12 penitentiary institutions), created institutional mechanisms and structures to ensure the stability and continuity of the implementation of non-formal education programs.

Keywords: *penitentiary institutions, non-formal education, state public programs, the right to education, prison education, resocialization and life skills.*

ПРАКТИКА ОРГАНИЗАЦИИ НЕФОРМАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ В ПЕНИТЕНЦИАРНЫХ УЧРЕЖДЕНИЯХ РА

МИША ТАДЕВОСЯН

*аспирант кафедры педагогики
Армянского государственного педагогического университета
им. Хачатура Абовяна,
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является представление практики реализации и организации неформальных образовательных программ, реализованных в пенитенциарных учреждениях РА после обретения независимости.

В частности, для описания развития образовательной и педагогической деятельности с участием лиц, содержащихся в пенитенциарных учреждениях, рассматриваются неформальные образовательные программы, реализуемые государственными и негосударственными организациями, их разнообразие, содержание и объем. В ходе исследования было проведено изучение основных международных норм, связанных с реализацией права на образование в пенитенциарных учреждениях, изучение документов, связанных с образовательными программами, реализуемыми в пенитенциарных учреждениях РА, сбор статистических данных, обобщение и анализ.

Подводя итог данной статьи, можно отметить, что программы неформального образования, реализуемые в пенитенциарных учреждениях РА в хронологическом контексте развивались, диверсифицировались по всем своим направлениям; объем программ расширен (в 2 пенитенциарных учреждениях в 2000 г., а в 2020 г. уже в 6 из 12 пенитенциарных учреждений), созданы институциональные механизмы и структуры, обеспечивающие стабильность и непрерывность реализации программ неформального образования (программы, запущенные по инициативе НПО, перешли в ведение государства, для этого существует специальная программа, реализуемая государственным организационно-правовым объединением).

Ключевые слова: *пенитенциарные учреждения, неформальное образование, государственные общественные программы, право на образование, тюремное образование, ресоциализация и навыки самостоятельной жизни.*

ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ, PSYCHOLOGY, ПСИХОЛОГИЯ



ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼԵԿՏԻՎԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԻ ՎՐԱ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ*

ՀՏԴ 159.98

DOI: [10.52063/25792652-2021.1-203](https://doi.org/10.52063/25792652-2021.1-203)

ՍՎԵՏԼԱՆԱ ԲԱԴՂԱՍԱՐՅԱՆ

ՀՀ ՊԿԱ-ի կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմավարական առաջնորդության և կառավարման
հետապոստոլությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
baqhdasaryan.svetlana@mail.ru

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել մոտիվացիոն գործոնների և կոլեկտիվում հոգեբանական մթնոլորտի փոխադասմանավորվածությունը պետական և միջազգային կազմակերպություններում: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է անձնակազմի գործունեության բարելավման անհրաժեշտությամբ: Աշխատողների մոտիվացիայի տիպը պարզվել բարդ, սակայն հույժ կարևոր գործ է, որը նպաստում է առաջադրված խնդիրների արդյունավետ ու որակյալ կատարման գործին: Հոդվածի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել և փորձարարական ճանապարհով վեր հանել տարբեր կազմակերպություններում կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտի և աշխատանքային գործունեության ընթացքում անձին մոտիվացնելու առաջնային գործոնների կապը, կատարել կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտի և մոտիվացիոն գործոնների փոխադասմանավորվածության վերլուծություն:

Աշխատանքի վերաբերյալ համապատասխան տեսական հիմքերի վերլուծության արդյունքում ընտրված թեստավորման ու հարցարանի մեթոդների կիրառությամբ պարզվել են, որ մոտիվացիայի ցանկացած տեսակի կիրառություն պետք է համապատասխանի անձնավորության պահանջմունքներին, որ պետական ու միջազգային կազմակերպություններում հետապոստոլները գիտակցում են իրենց պահանջմունքները, սակայն սոցիալ-հոգեբանական մթնոլորտը 25-ից 45 տարիքային կազմում ընդգրկված քաղաքացիական ծառայողների կոլեկտիվում անբարենպաստ է՝ ի տարբերություն միևնույն տարիքային կազմում ընդգրկված հասարակական կազմակերպության կոլեկտիվի: Առաջարկում ենք ՄՌԿ մասնագետի կամ կառավարման հոգեբանի ընդգրկում վերոնշյալ կազմակերպություններում՝ բացահայտելու աշխատակիցների աշխատանքային մոտիվացիայի սոցիալ-հոգեբանական դիրքորոշումները, առաջնային մոտիվացիոն գործոնները՝ հիմք ընդունելով տարիքային խումբը, որը կարող է կանխատեսել աշխատողների պահանջմունքները բավարարելու եղանակները:

Հիմնաբառեր՝ կոլեկտիվ, մոտիվացիոն գործոններ, հոգեբանական մթնոլորտ, սոցիալ-հոգեբանական դիրքորոշումներ, անձնավորության պահանջմունքներ,

* Հոդվածը ներկայացվել է 14.11.2020թ., գրախոսվել՝ 24.12.2020թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

փորձարարական խումբ, կառավարման հոգեբան, մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետ (ՄՌԿ):

Մոտիվացիոն գործոնների բովանդակության տեսական հիմքերը

Մոտիվացիոն գործոնների ընտրությունը և դրանց ազդեցությունը կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտի վրա տարբեր ժամանակներում եղել և շարունակում են մնալ հոգեբանների, մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) մասնագետների ուշադրության կենտրոնում: Մոտիվացիոն գործոնների դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրության գործում մեծ ներդրում ունեն այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են՝ Ա. Լեոնտևը (1975թ.), Բ. Լոմովը (1984թ.), Ս. Ռուբինշտեյնը (2000թ.), Ե. Իյինը (2002թ.), Յ. Յեկհաուզենը (2003թ.), Գ. Ատկինսոնը (1957թ.), Ա. Մալլոուն (1954թ.), Դ. Մաքքելլանդը (1978թ.), Ֆ. Յերցբերգը (2003թ.) և ուրիշներ: Իսկ հայրենական հոգեբանության մեջ այս երևույթին ոչ լիարժեքորեն են անդրադարձ կատարել, կան միայն առանձին հոդվածներ, կոլեկտիվ մենագրություններ (Ռ. Աղուզումցյան, Լ. Պետրոսյան, Ս. Պողոսյան, Լ. Մելիքյան և ուրիշներ), որոնցում մոտիվացիոն գործոնների և հոգեբանական մթնոլորտի փախապայմանավորվածությունը դիտարկվում է մասնակիորեն:

Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ կառավարման համակարգի աշխատակազմը աստիճանաբար ոչ միայն դիտարկվում է որպես աշխատանքը կատարող մարդկանց խումբ, որոնք կատարած աշխատանքի դիմաց վճարվում են, այլև գերիշխում է մարդակենտրոն մոտեցումը: Ղեկավարները հոգ են տանում աշխատողի հարմարավետության, աշխատանքային պայմաններում լարվածության նվազման, նրանց՝ կոլեկտիվում սոցիալական ընդգրկվածության մասին՝ հիմք ընդունելով այն փաստը, որ առավել հանգիստ, մոտիվացված, իր աշխատանքն ու աշխատանքային միջավայրը սիրող անձնավորությունը կարող է նպաստել կառավարման համակարգի գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Հայտնի է, որ արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկը անձի դրդապատճառները հասկանալն է, որոնք կարող են անձին մղել՝ կատարելու որոշակի գործունեություն՝ հանդիսանալով խթանն ու պահանջմունքը միավորող օղակ: Դրդապատճառի ձևավորման համար կարևոր գործոն է անձի պահանջմունքի համակարգը, քանի որ պահանջմունքները առաջացնում են դրանք բավարարելու ձգտում, և հետևաբար պետք է ձևավորվի խրախուսմանն ուղղված համապատասխան քաղաքականություն: Մակկելլանդը կարծում էր, որ դրդապատճառը կապված է խթանների հետ, քանի որ պահանջմունքների բավարարումը հանդիսանում է դրդապատճառի նպատակը⁵⁷⁸, իսկ Ատկինսոնը նշում էր, որ դրդապատճառը (մոտիվ) մարդու անմիջական մղումն է որոշակի գործունեության՝ կապված իր պահանջմունքների բավարարման հետ⁵⁷⁹: Եթե մարդը ձգտում է կատարել որոշակի գործունեություն, կարող ենք ասել, որ նա ունի մոտիվացիա:

Բազմաթիվ տեսություններ են նվիրված մոտիվացիայի խնդրի ուսումնասիրությանը, սակայն հարկ ենք համարում նշել, որ «մոտիվացիա» տերմինն առաջին անգամ օգտագործել է Ա. Շոպենհաուերը իր «Բավարար պատճառի չորս սկզբունքները» հոդվածում պնդելով, որ մոտիվացիան առանց արտաքին խթանների գոյություն ունենալ չի կարող, դրա հետ մեկտեղ համոզված լինելով, որ բացի արտաքին խթաններից, նաև ներքին խթանները (ցանկություններ, իմպուլսներ, բնագոյներ,

⁵⁷⁸ **McClelland D. C.** Managing motivation to expand human freedom. *American Psychologist*, 1978, № 33(3), p. 201–210.

⁵⁷⁹ **Ламберт Дэкерс**, Мотивация, Москва, 2007, С.18-19.

կարիքներ) կարող են մարդուն մղել՝ ծավալելու որևէ գործունեություն⁵⁸⁰։ Հետագայում այս տերմինը հոգեբանության բնագավառ ներմուծվել է մարդու վարքի պատճառները բացատրելու համար։ Հաջորդ սահմանումն առաջ է քաշել Ա. Մասլոուն, որ կարծում էր՝ մարդիկ մոտիվացվում են իրենց իսկ նպատակներին հասնելու համար, որն իրենց կյանքը դարձնում է իմաստավորված ու կարևոր⁵⁸¹։

Ժամանակակից հոգեբանության մեջ մոտիվացիան գործածվում է երկակի իմաստով։ Մի դեպքում այն նշանակում է մարդու վարքը պայմանավորող գործոնների համակարգ (դրդապատճառներ, հետաքրքրություններ, պահանջմունքներ, նպատակներ), մյուս դեպքում բնութագրվում է որպես մարդու վարքի ակտիվությունը ապահովող գործընթաց։ Մեկ այլ սահմանման համաձայն՝ մոտիվացիան, որպես հոգեկան գործընթաց, մեկնաբանվում է իբրև գործոնների ամբողջություն՝ ուղղված հոգեկան գործընթացի կարգավորմանը։ Մոտիվացիոն ճիշտ գործոնների ընտրությամբ է պայմանավորված կոլեկտիվի բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ապահովումը⁵⁸²։ Ն. Մանսուրովը «հոգեբանական մթնոլորտ»-ը բնութագրում է որպես կոլեկտիվի անդամների մտերմություն, համակրանք, բնավորություններ, հետաքրքրություններ⁵⁸³։

Վ. Շեպելն առանձնացնում է կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտի կառուցվածքային երեք բաղադրիչ՝

1. սոցիալական մթնոլորտ,
2. բարոյական մթնոլորտ,
3. հոգեբանական մթնոլորտ⁵⁸⁴։

Բ. Լոմովը «հոգեբանական մթնոլորտ» հայեցակարգում ներառում է միջանձնային հարաբերությունների համակարգը, որն ունի հոգեբանական բնույթ, փոխադարձ պահանջների համակարգ, ընդհանուր տրամադրություն, աշխատանքային միասնական ոճ, թիմի հուզական, կամային, մտավոր կարողությունների միասնություն⁵⁸⁵։

Այսպիսով՝ մոտիվացիան բնութագրվում է որպես մարդու այս կամ այն գործունեությանը միտված պահանջմունքների ամբողջություն։ Կազմակերպություններում խիստ կարևոր է պարզել աշխատակիցների մոտիվացիայի տիպը։

Կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտը խմբի հոգեբանական տրամադրվածությունն է, որը ձևավորվում է այդ խմբին հատուկ սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությամբ, որը նպաստում է համատեղ արդյունավետ գործունեությանը և անձնավորության համակողմանի զարգացմանը այդ խմբում։

Փորձարարական հետազոտություն

Համաձայն առաջադրված նպատակի ու խնդիրների՝ մեր կողմից կազմվել է ուսումնասիրության ռազմավարություն։ Հիմնվելով տեսական վերլուծության վրա՝ նպատակահարմար ենք գտել հետազոտությունը կատարել թեստավորման ու հարցարանի մեթոդներով։

Հետազոտության համար ընտրված մեթոդներն են՝

⁵⁸⁰ Atkinson J. W. Motivational determinants of risk-taking behavior, University of Michigan, 1957, № 6, P. 1-14.

⁵⁸¹ Maslow A.H. Motivation and personality, English Edition, 1954, P. 35.

⁵⁸² Պետրոսյան Լ. Անձի մասնագիտական զարգացման հոգեբանական օրինաչափությունները, ՀՀ ՊԿԿ հրատ., Ե., 2016, էջ 55։

⁵⁸³ Егорова Л.С., Челнокова Н.Ю. Управление социально-психологическим климатом на предприятиях, Ивановская государственная текстильная академия, 2008, С. 1-8.


⁵⁸⁴ Почебут Л.Г., Чикер В.А. Организационная социальная психология, СПб, 2002, С. 127-128.

⁵⁸⁵ Парыгин Б., Социально-психологический климат коллектива, М. 1979, С. 130-131.

1. Ֆ. Չերցբերգի դրդապատճառների (մոտիվատորների) թեստ⁵⁸⁶,
2. Օ.Ֆ. Պատյունկինի աշխատանքային գործունեության մոտիվացիայի «Սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների» բացահայտման հարցարան⁵⁸⁷,
3. Օ. Ս. Միխայուկի և Ա. Յու. Շալիտոյի կոլեկտիվում սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բացահայտման հարցարան⁵⁸⁸.

Ստացված արդյունքները ենթարկվել են հաշվարկման՝ MS Excell էլեկտրոնային աղյուսակների մաթեմատիկական հնարավորություններով⁵⁸⁹: Փորձարարական հետազոտության ընտրանքը կազմված է երկու փորձարարական խմբից. առաջին խմբում ՅՅ մշակույթի նախարարության (*Ներկայումս՝ ՅՅ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն*) տարբեր վարչությունների ու բաժինների, տարբեր մասնագիտացումներ ունեցող, 25-ից 45 տարեկան քաղաքացիական ծառայողներ են, իսկ 2-րդ խմբում Վորլդ Վիժն Յայաստան հասարակական կազմակերպության տարբեր պաշտոններ զբաղեցնող, 25-ից 45 տարիքային կազմում ընդգրկված աշխատակիցներն են:

Ֆ. Չերցբերգի մշակած «Դրդապատճառների (մոտիվատորների)» թեստի արդյունքներից ելնելով՝ ստորև ներկայացնենք երկու խմբերի համեմատականները.



Նկար 1. Գնտազոտված երկու խմբերի համար առաջնային մոտիվացիոն գործոնները որոշող թեստի արդյունքների համեմատություն (n=60)

Ելնելով առաջնային մոտիվացիոն գործոնների բացահայտմանն ուղղված Չերցբերգի դրդապատճառների թեստի արդյունքներից՝ կարող ենք եզրակացնել, որ քաղաքացիական ծառայողների համար որպես մոտիվացիոն առաջնային գործոն են հանդիսանում անձնական նվաճումները (Չ) և աշխատանքի էությունը (Է), հետևաբար նրանց համար կարևոր է աշխատանքի բովանդակությունը, պատասխանատվության աստիճանը, աշխատանքի համար ներկայացվող պահանջները, կատարվելիք աշխատանքի ու մասնագիտության համապատասխանությունը, իսկ անձնական նվաճումների բարձր ցուցանիշները խոսում են քաղաքացիական ծառայողների՝ կայուն

⁵⁸⁶ Պետրոսյան Մ., Ջավադյան Ա., Ամիրյան Դ. Անձը և պաշտոնը, Պետական ծառայություն հրատ., Ե., 2013, էջ 273-275:

⁵⁸⁷ Райгородский Д.Я., Практическая психодиагностика, Методики и тесты. Учебное пособие, Самара, 2001, С. 641-648.

⁵⁸⁸ Экспресс-методика по изучению социально-психологического климата в первичном подразделении организации (О.С. Михалюк и А.Ю. Шальто), <https://hr-portal.ru/tool/ekspress-metodika-ocenki-socialno-psiologicheskogo-klimata-v-trudovom-kollektive>, 13.06.2010.

⁵⁸⁹ Գալստյան Ա. Մաթեմատիկական վիճակագրության մեթոդները հոգեբանական հետազոտություններում: Ուսումնական ձեռնարկ, Ե., 2015, էջ 63:


հաջողություններ ունենալու ձգտման մասին, որն արտահայտվում է պաշտոնի բարձրացմամբ, պարգևավճարներով ու գովասանքով: Պետական կառավարման համակարգի գործունեության բնույթից ելնելով՝ ստացված արդյունքները կանխատեսելի էին:

Հասարակական կազմակերպության աշխատակիցների մոտիվացիան նույնպես կախված է աշխատանքի եռությունից (Ե), սակայն հասարակության կողմից ընդունված ու գնահատված լինելը (Բ) վեր է անձնական նվաճումներից, որն արտահայտվում է հանրության գովասանքով: Այս մոտիվացիոն գործոնի բարձր ցուցանիշ ստանալը նույնպես կանխատեսելի էր՝ հաշվի առնելով կազմակերպության ծավալված մարդասիրական ու բարեգործական գործունեությունը:

Առաջնային մոտիվացիոն գործոններ	25-ից 45 տարիքային կազմում թաղաքացիական ծառայողներ (n=30)		25-ից 45 տարիքային կազմում աշխատակիցներ (n=30)	
	M	σ	M	σ
Ա-ֆինանսներ	15	6.3	15	5.2
Բ-հասարակության կողմից ընդունված, գնահատված լինել	19	2.8	20	4.3
Գ-պատասխանատվություն	17	4.2	18	3.4
Դ-Հարաբերությունները ղեկավարության հետ	15	3.5	14	3.7
Ե-Կարիերա	13	5.5	15	5.0
Զ-Անձնական նվաճումներ	20	2.4	18	3.4
Է-Աշխատանքի եռություն	22	5.4	23	4.9
Ը-Համագործակցություն կոլեկտիվում	15	4.6	16	5.1

Աղյուսակ 1. Հերցբերգի «Դրդապատճառների բացահայտման» թեստի ստանդարտ շեղումները՝ ըստ խմբերի և տարիքային շեմի (n=60)

Օ. Ֆ. Պատյոմկինի աշխատանքային գործունեության մոտիվացիայի «Սոցիալ-հոգեբանական» դիրքորոշումների բացահայտմանն ուղղված հարցարանի արդյունքներից ելնելով՝ ստորև ներկայացնենք դրանց համեմատականները:



Նկար 2. Հետազոտված երկու խմբերի համար աշխատանքային գործունեության մոտիվացիայի սոցիալ-հոգեբանական դիրքորոշումները (n=60)

Հասարակական կազմակերպության աշխատակիցների կողմից լրացված հարցարանի արդյունքները ցույց են տալիս նրանց կողմնորոշումը դեպի մարդասիրություն, որը կարևոր որակ էնք համարում յուրաքանչյուր աշխատանքային գործունեության դեպքում: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ երկու փորձարարական խմբերի համար առաջնային է աշխատանքային գործունեության ընթացքում դեպի ազատություն կողմնորոշվածությունը, ինչը ենթադրում է հետևյալը՝ որքան ազատ են աշխատանքային միջավայրում, ինքնուրույն ու անկախ՝ որոշումներ կայացնելու հարցում, այնքան նրանց մոտիվացիան բարձր է: Ազատության ապահովումը կնպաստի ինքնադրսևորվել, առավել արագ ներգրավվել աշխատանքային գործընթացում և ապահովել կոլեկտիվում բարենպաստ հոգեբանական մթնոլորտ:

Սոցիալ-հոգեբանական դիրքորոշումները	25-ից 45 տարիքային կազմում ընդգրկված քաղաքացիական ծառայողներ (n=30)		25-ից 45 տարիքային կազմում ընդգրկված աշխատակիցներ (n=30)	
	M	σ	M	σ
Գործընթաց	6	2	6	1.5
Արդյունք	7	1.8	6	1.4
Մարդասիրություն	5	1.9	6	2.2
Էզոիզմ	4	1.9	5	1.9
Աշխատանք	5	2.2	6	2.1
Գումար	7	1.5	4	2.2
Ազատություն	4	2.2	7	2.2
Իշխանություն	2	1.8	5	2.1

Աղյուսակ 2. Օ. Ֆ. Պատյունիի «Սոցիալ-հոգեբանական» դիրքորոշումների բացահայտման ուղղված հարցարանի ստանդարտ շեղումները՝ ըստ խմբերի և տարիքային շեմի (n=60)

Օ.Ֆ. Միխայուկի և Ա.Յու. Շալիտոյի՝ կոլեկտիվի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բացահայտման թեստի արդյունքների համաձայն՝ քաղաքացիական ծառայողների կոլեկտիվում սոցիալ-հոգեբանական մթնոլորտը ոչ բարենպաստ է, հակասական է, անորոշ ու անկայուն: Նրանց դուր չի գալիս գործընկերների հետ շփումը և նույնիսկ ազատ ժամանակ նախընտրում են աշխատել, քան շփվել ու ճանաչել միմյանց: Հասարակական կազմակերպությունում հոգեբանական մթնոլորտը բարենպաստ է, այսինքն՝ կոլեկտիվի անդամները նպաստում են բարենպաստ տրամադրության ձևավորմանը, և գործընկերների հետ հարաբերությունները լարված չեն: Նրանք համախմբված են մեկ գաղափարի շուրջ, ունեն միևնույն կարծիքներն ու համոզմունքները:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքների հիման վրա կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ՝

1. Ե՛վ պետական կառավարման համակարգում և՛ հասարակական կազմակերպությունում խիստ կարևոր է պարզել աշխատակիցների մոտիվացիայի տիպը, որը պետք է համապատասխանի անձնավորության պահանջմունքներին՝ իրենց առջև դրված խնդիրները որակյալ և արդյունավետ կատարելու համար,

2. կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտի և մոտիվացիոն գործոնների փոխկապակցվածությունը պայմանավորված է կազմակերպության կառավարման մոդելից, գործունեությանը ներկայացվող պահանջներից,

3. կոլեկտիվում սոցիալ-հոգեբանական մթնոլորտի և դրա հետ կապված աշխատողների դրդապատճառների, աշխատանքային մոտիվացիայի սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների կապը բացահայտելով՝ պարզեցինք, որ երկու խմբում էլ մասնակիցները գիտակցում են իրենց պահանջմունքները, սակայն սոցիալ-հոգեբանական մթնոլորտը 25-ից 45 տարիքային կազմում ընդգրկված քաղաքացիական ծառայողների կոլեկտիվում անբարենպաստ է՝ ի տարբերություն հասարակական կազմակերպության կոլեկտիվի, որտեղ ստացված արդյունքները փաստում են բարենպաստ հոգեբանական մթնոլորտի առկայության մասին:

Կարծում ենք, որ երկու խմբերի դեպքում ՄԴԿ մասնագետին կամ կառավարման հոգեբանին խրախուսվում է մշակել կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտի վրա ազդող մոտիվացիոն գործոնների կիրառության ռազմավարություն՝ հաշվի առնելով խմբերի գործունեության առանձնահատկությունները և տարիքային շեմը:

THE INFLUENCE OF MOTIVATING FACTORS ON THE PSYCHOLOGICAL ENVIRONMENT OF THE PERSONNEL: COMPARATIVE ANALYSIS OF RESEARCH RESULTS

SVETLANA BAGHDASARYAN

*Public Administration Academy of RA, Chair of Psychology of Governance,
Ph.D. Student; Ministry of Defence, National Defense Research University,
Center for Research on Strategic Leadership and Management, Research Fellow,
Yerevan, Republic of Armenia*

The aim of the article is to study the mutual agreement of the psychological atmosphere in the team of motivational factors in state and international organizations. The urgency of the work is due to the need to improve staff performance. Determining the type of employee motivation is a difficult but very important task that contributes to the effective and efficient performance of the set tasks. The purpose of the article is to study and to find out experimentally the link between the psychological environment of the team in different organizations and the primary factors of motivation of the person during work, to perform the analysis of the psychological atmosphere of the team also the reciprocity of motivational factors.

Analysis of the relevant theoretical foundations of work using the test-questionnaire methods figured out that any application of motivation should meet the needs of the individual, that those surveyed in state and international organizations are aware of their needs, but the socio-psychological environment among 25 to 45 years old is unfavorable among the staff of civil servants, in contrast to the staff of an international organization of the same age. The engagement of an HR specialist or management psychologist in the above mentioned organizations is suggested to identify the socio-psychological behavior of employees, work hygiene, motivational factors, based on the age group, which can predict ways to meet the needs of employees.

Keywords: *collective, motivating factors, psychological environment, social-psychological institutions, necessary personalities, experimental group, management psychologist, management specialist in human resources (HRM).*

ВЛИЯНИЕ МОТИВАЦИОННЫХ ФАКТОРОВ НА ПСИХОЛОГИЧЕСКУЮ АТМОСФЕРУ КОЛЛЕКТИВА: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ РЕЗУЛЬТАТОВ ИССЛЕДОВАНИЯ

СВЕТЛАНА БАГДАСАРЯН

*аспирант кафедры психологии управления АГУ РА,
ученый-аналитик Центр исследований стратегического
лидерства и управления НИУО МО РА,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является изучение взаимной согласованности психологической атмосферы в коллективе и мотивационных факторов в государственных и международных организациях. Актуальность работы обусловлена необходимостью повышения эффективности работы персонала. Определение типа мотивации сотрудников сложная, но очень важная проблема, способствующая эффективному и качественному выполнению поставленных задач. Цель статьи – изучить и экспериментально выявить взаимосвязь между психологической атмосферой коллектива и первичными факторами мотивации в процессе работы в разных организациях, проанализировать взаимозависимость между психологической атмосферой коллектива и мотивационными факторами.

Анализ соответствующей теоретической основы работы с использованием методов тест-анкеты и опросников показал, что опрошенные в государственных и международных организациях респонденты осведомлены о своих потребностях, но социально-психологическая атмосфера в коллективах государственных служащих с работниками в возрасте от 25 до 45 лет неблагоприятна, в отличие от коллективов международных организаций с сотрудниками того же возраста.

Привлечение HR-специалиста или управленческого психолога в вышеуказанные организации предлагается для выявления социально-психологических установок сотрудников и первичных мотивационных факторов работы (исходя из возрастной группы) которые могут спрогнозировать способы удовлетворения потребностей сотрудников.

Ключевые слова: *коллектив, мотивационные факторы, психологическая атмосфера, социально-психологические установки, потребности личности, экспериментальная группа, психолог управления, специалист по управлению человеческими ресурсами (HRM).*

ՀՈԳԵՂԻԱԳՆՈՍՏԻԿ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԶԻ ԴԱՇՏԴԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ*

ՀՏԴ 159.9

DOI: [10.52063/25792652-2021.1-211](https://doi.org/10.52063/25792652-2021.1-211)

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԿԱՐԱԴԵՏՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
ընդհանուր հոգեբանություն ամբիոնի ասպիրանտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
karapetyanmargarita111@gmail.com*

Հողվածի նպատակն է առաջ բաշել և հիմնավորել այն մոտեցումը, ըստ որի՝ հոգեբանական խորհրդատվության մեջ՝ հատկապես անձի պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրման գործընթացում, պետք է խստորեն հաշվի առնել հոգեդիագնոստիկ մեթոդների կիրառական առանձնահատկությունները: Մեր խնդիրն է բացահայտել պարտադիր հոգեբանական թեստավորման դերը պրակտիկ թերապիայում, ընդգծել հոգեբանական ճշգրիտ գնահատման մեթոդների՝ մասնավորապես հոգեդիագնոստիկական ստանդարտիկացված թեստերի և պրոյեկտիվ մեթոդի ներդաշնակ համադրման կարևորությունը, փորձել հստակեցնել մեթոդների՝ հիմնավորման ու արդյունավետության տեսանկյունից օբյեկտիվ-սուբյեկտիվ լինելու հարաբերական սահմանը: Որպես օրինակ դիտարկվում է Մակ Կրայթի և Պ. Կոստայի կողմից մշակված և այժմ մարդու անձնային գծերը օբյեկտիվորեն բացահայտող «Մեծ Հնգյակ» մոդելը:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն ելրակացության, որ հոգեբանության հետապոտական կամ կիրառական ոլորտում ցանկացած խնդրում դրական արդյունք գրանցելու համար նպատակահարմար է հուսալի հոգեբանական գնահատման (հոգեդիագնոստիկա) և թիրախային հոգեբանական ներապման մեթոդների ներդաշնակ կիրառությունը: Նկատի ունենալով, որ հոգեբանության ոլորտը առանձնանում է մարդու անձնային գծերի և հոգեկան գործընթացների հետ անմիջական առնչությամբ, անդրադարձ է կատարվել նաև մասնագետի առանցքային անձնային առանձնահատկություններին, որոնցից էլնելով էլ վերջինս իրավապար է դիմացինի հոգեկան աշխարհի խճանկարը հավաքելու և տալու դրական արդյունք:

Հիմնաբառեր՝ անձ, հոգեբանական խորհրդատվություն, պաշտպանական մեխանիզմ, հոգեդիագնոստիկա, թեստեր, հարցարան, պրոյեկցիա:

Ներածություն

Դիմելով հոգեբանական խորհրդատվության՝ այցելուն նախ և առաջ ակնկալում է ստանալ մի ամբողջ օգնող-օժանդակող գործիքների համակարգ, որը նրան կօգնի լուծել առօրյա միջանձնային խնդիրները, կշտկի հարաբերությունները մտերիմների հետ, ընտանիքում կամ աշխատավայրում գործընկերների ու թիմի հետ, կընդգծի վերջինս առաջնորդի, ձեռներեցի կամ ուղղակի խմբի լիարժեք դեկավարի կամ անդամի հմտությունները, նաև ինչու չէ, հոգեթերապևտի, թրենինգավարի կամ խորհրդատուի

* Հողվածը ներկայացվել է 22.02.2021թ., գրախոսվել՝ 03.03.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

այցելությունների և ծախսած գումարի դիմաց կստանա համարժեք մասնագիտական ծառայություն (դրական տրամադրվածություն, ուժ, ավյուն, վաղվա օրվա նկատմամբ հավատ, լավատեսություն և այլն): Ահավասիկ, այստեղից է բխում որակավորված մասնագետի գրագիտության և մասնավորապես հոգեդիագնոստիկ մեթոդներին լավագույնս տիրապետելու անհրաժեշտությունը: Հոգեբանի մոտ այցերն ավարտելուն պես այցելուն ստանում է իր անհատական խնդրի լուծմանն առաջնորդ խորհրդատվություն, որը նա լիովին գիտակցված կերպով կիրառելու է կյանքի տարբեր իրավիճակներում, իրական խնդիրների ի հայտ գալուն պես: Բնականաբար, այցելուն մասնագետ չէ և երբեմն կարող է չնկատել և ռեալ գնահատական չտալ իր հետ կատարվող դրական փոփոխություններին: Իդեալական գնահատել ստացված արդյունքներն անգամ ի զօրու չէ մասնագետ-կոնսուլտանտը (խորհրդատուն): Հետևաբար անկախ այն հանգամանքից, որ անձը ավարտել է խորհրդատվությունը, երբեմն հարկ է լինում անձի՝ հետսեանսային հոգեդիագնոստիկ դիտարկման շարունակություն: Այդ խնդիրը շատ արդիական է ու համակցված, մեծ էֆեկտիվություն է տալիս հոգեդիագնոստիկ մեթոդների՝ մասնավորապես թեստերի կիրառման հետ մեկտեղ: Ինչու՞ է դա այդպես, և մի՞թե բավարար չեն խորհրդատվության ընթացքում անձի մասին հավաքած ինֆորմացիան և անձի մոտավոր նկարագիրը⁵⁹⁰:

Վերը նշված իրավիճակին զուգահեռ նշենք, որ հաճախ առաջին կամ մի քանի հանդիպումների ընթացքում մասնագետը կարող է բարդություն ունենալ այցելուի անձնային հատկանիշների բազմաշերտ ենթատիպերի, խառնվածքի առանձնահատկությունների, հնարավոր է՝ թույլ արտահայտված անձնային հատկությունների ու ենթագիտակցորեն կատարվող սովորությունների մասին լիարժեք պատկերացում ստանալու հարցում⁵⁹¹: Տվյալ բարդությունից խուսափելու համար արդի հոգեբանության մեջ մեծ կիրառություն են գտել տարաբնույթ հոգեդիագնոստիկ թեստերը, որանք օժանդակում են հոգեբանական ներազդման արդյունավետության գնահատմանը: Գրագետ մասնագետը պարտավոր է մի քանի՝ առնվազն երկու անգամ թեստավորել այցելուին միևնույն խորհրդատվությունը և դրանից հետո⁵⁹²: Եվ հետևաբար անձի պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրման գործընթացում հոգեդիագնոստիկ մեթոդների կիրառման առանձնահատկությունները պետք է խստորեն հաշվի առնել, ավելին՝ հոգեդիագնոստիկական թեստավորումը պրակտիկ թերապիայի մեջ ավելի շուտ պետք է դիտել որպես կանոն:

Հոդվածի նպատակն է վերլուծել և ամփոփել անձի պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրման գործընթացում հոգեդիագնոստիկ մեթոդների ընտրության սկզբունքների պահպանման ու կիրառման առանձնահատկությունները: Հասկանալի է, որ շփման տարբեր ոլորտներում ու գործնական ասպեկտներում հոգեբանական խորհրդատվության բարձր արդյունավետության և օգտավետ արդյունքի հասնելու համար կարևորվում են անձնային որոշ գծեր: Դրանք ինչ-որ չափով օգնում կամ էլ խանգարում են նպատակին հասնելուն՝ լինի միջանձնային շփումներում, թե միանձնյա ինքնուրույն որոշումների կայացման մեջ⁵⁹³: Այդ փաստը կներկայացվի հաջորդիվ՝ հոգեդիագնոստիկական մեթոդների ներկայացմանը զուգընթաց:

⁵⁹⁰ **Немов Р.С.** Н 50 Основы психологического консультирования: Учеб. для студ. Педвузов. М.: Гуманит. изд. центр ВЛАДОС, 1999, С. 5-8, <https://www.klex.ru/3a0>, 29.12.2020.

⁵⁹¹ **Кочюнас Р.**, Основы психологического консультирования, М., Академический проект, 1999, С. 59-66.

⁵⁹² **Ավանեսյան Հ.** Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը, Ե., ԵՊՀ հրատ., 2017, էջ 68-71:

⁵⁹³ **Ստեփանյան Ռ., Գալստյան Ա.** Հոգեդիագնոստիկա, Ուսումնական ձեռնարկ/ ԵՊՀ: Կազմ.՝ Ռ. Ստեփանյան, Ա. Գալստյան.- Ե.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 62-71:

Պաշտպանական մեխանիզմների գերակայման դեպքում իրականացվող միջոցառումները և դրանց խոչընդոտումը անձնային աճին

Նախքան պաշտպանական մեխանիզմների նկարագրությանն անցնելը՝ նշենք մի քանի գլխավոր և բոլոր մեխանիզմների համար ընդունելի սկզբունք: Հարկ է փաստել, որ գրեթե բոլոր «պաթոգեն» պաշտպանական մեխանիզմները ենթադիտակցական մակարդակում են գտնվում: Մեկ այլ առանձնահատկությունն այն է, որ ժամանակի հետ պաշտպանական մեխանիզմները ենթակա են փոփոխման և ունեն ադապտիվ ֆունկցիա: Կարևոր է փաստել, որ եթե անձն ինքն իր մեջ նկատել է որևէ պաշտպանական մեխանիզմ, ապա այդ պահին այն չի կիրառվում: Ըստ Ֆրեյդի՝ երբ պաշտպանությունը շատ ազդեցիկ է դառնում, սկսում է գերակայել Էգոյին և կրճատել վերջինիս շարժունակությունն ու ադապտացիայի կարողությունը: Վերջվերջո, եթե պաշտպանական մեխանիզմը չզսպվի, Էգոն ամբողջովին օղակված կլինի տագնապի կողմից:

2. Ֆրեյդն սկզբնապես առանձնացրել է պաշտպանական մեխանիզմների 7 տեսակ՝ ռեպրեսիա (ճնշում, դուրս մղում), ժխտում, ռացիոնալիզացիա, ռեակտիվ գոյացություններ, իզոլյացիա, պրոյեկցիա և ռեգրեսիա⁵⁹⁴:

Որպես օրինակ դիտարկենք ռացիոնալիզացիա պաշտպանական մեխանիզմը, որը համարվում է ոչ սովորական պաշտպանական մեխանիզմ, այլ մյուս մեխանիզմների արդարացման միջոց ու հիմնավորում: Այն միշտ տանում է նույն դեպքերի դասավորությանը. ծառայում է որպես ինքն իր Ես-ից իրական դրդապատճառների քողարկման միջոց, բացասական իրողությունը շտկելու կարողությունը դարձնում է դժվար իրագործելի, եթե դրա ռացիոնալ ու թույլատրելի մասնաբաժինը յուրաքանչյուր շարքային, բնականոն կյանքով ապրող անձի մոտ անցնում ու հասնում է սահմանաչափը: Պաշտպանական մեխանիզմի այս մեկնաբանությունը կարող է հիմք հանդիսանալ գնահատման հստակ չափորոշիչներ մշակելու համար: Վ.Ա. Նեգրիյի հեղինակած «Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հոգեդիագնոստիկան և կարգավորումը՝ որպես ուսուցմանը դիմադրության գործոն» հոդվածում անձի պաշտպանական մեխանիզմները դիտվում են որպես կենսահոգեբանական ինդիվիդուալ կայուն ու փակ համակարգին խոչընդոտող ցանկացած փոփոխություն վերացնող կամ կրճատող միջոցառումների մի ամբողջական համալիր: Ներկայացված է պաշտպանական մեխանիզմների դիագնոստիկայի հեղինակային մեթոդիկա: Միաժամանակ ցույց են տրված տվյալ մեթոդիկայի կիրառական ոլորտները, որոնք են՝ պաշտպանական մեխանիզմների դիագնոստիկան, հիպոթեզի առաջադրման համար անհրաժեշտ պրոֆիլի ստացումը, կլինիկական զրույցի ժամանակ հիպոթեզի ստուգումը և ուսուցմանը խոչընդոտող ու արդեն բացահայտված պաշտպանական մեխանիզմների հետ հետագա աշխատանքը⁵⁹⁵:

Հետաքրքրական և դիտարկման արժանի է ռեգրեսիան կամ հետաճը, որը ֆրոստրացիայից խուսանավելու արդյունարար մոդել է: Սա պարզեցված վարքագծին վերադառնալու տեսակ է, երբ ֆրոստրացիայի ազդեցության տակ ունակ չլինելով առնչվել լուրջ ինտելեկտուալ խնդիրների՝ մարդն իրեն տալիս է մեծ Էներգիա և պատրաստվածություն չպահանջող գործունեությանը: Ռեգրեսիան կարող է լինել ժամանակավոր: Պաշտպանական մեխանիզմների երրորդ մեծ ենթախումբ անպատճառ կարելի է նշել ռեպրեսիան կամ արտամղումը: Ֆրեյդն այս մեխանիզմը նկարագրել է որպես հոգեկանի պաշտպանության միջոց, որի էությունը գիտակցությունից ինչ-որ բանի, երևույթի վերացումը, գիտակցությունից դրա՝ որոշակի հեռավորության

⁵⁹⁴ **Райгородский Д.Я.** Психология личности. Т.1. Хрестоматия. Издание третье, дополненное, Самара: Издательский Дом БАХРАМ-М . 2002, С. 89-94.

⁵⁹⁵ **Негрий В.А.** Психодиагностика и коррекция механизмов психологической защиты как фактора сопротивления обучению // Журнал: Научное мнение, № 3, 2013, С. 175-180.

պահպանությունն է: Դժբախտաբար, արտամղած ամբողջությունը մտում է ենթագիտակցական ոլորտում, գոյատևում որպես հոգու մի մասը և անձի համար շարունակում մնալ խնդիր: Հարկ է փաստել, որ կան համընդհանուր նորմեր, դաստիարակության չափանիշներ, սոցիալական ու մշակութային առանձնահատկություններ, որոնց անձն ուղղակի պարտավոր է հետևել՝ ճնշելով մի շարք բնագույներ ու գեներտիկ հակվածություններ: Հետևաբար նման խնդրով այցելուին հոգեբանները պետք է ճիշտ ուղղորդեն առօրյա և հասարակական շփումներում հաշվի առնելով անձի ազգային պատկանելությունը, ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները, վարվեցողության նորմերը և մի շարք այլ չափանիշներ⁵⁹⁶: Ռոմանինի այս միտքը ևս մատնանշում է այն գործոնները, որոնք կարիք ունեն հստակ արձանագրման:

Անսա Ֆրեյդի կողմից առաջ բերված և նրա իսկ կարծիքով առավել դժվար բացահայտելի ու հետաքրքրական է սուբլիմացիան: Այս պաշտպանական մեխանիզմի դեպքում անձն ընտրում է իրեն անհանգստացնող և ակունծելի խնդրի շուրջ ապարդյուն մտատանջվելու փոխարեն զբաղվել միզուցե ոչ արդյունաբար, սակայն ստեղծագործ ու էներգետիկ առումով առավել զարգացնող աշխատանքով: Երբեմն հասնելով անձնային աճի և դիպչելով վեհ գաղափարների՝ մարդը բարձրացնում է իր ինքնագնահատականը և հասկանում, որ իրեն սթրեսի մեջ գցած երևույթը այնքան էլ ակունծելի չէ, որքան թվում էր, կամ էլ հաշտվում է այն փաստի հետ, որ որոշ իրողություններ ուղղակի փոփոխման ենթական չեն, և ինքն ի զօրու չէ արմատապես լուծում տալու որոշ հարցերի, որքան էլ մեծ լինի ցանկությունը⁵⁹⁷: Այնուամենայնիվ, զբաղվելով կողմնակի աշխատանքով՝ առողջ ու բանական սահմանն անցնելը այստեղ ևս ցանկալի չէ, և ամեն առանձին դեպք պահանջում է հոգեթերապևտիկ տեղին մոտեցում:

Մյուս պաշտպանական մեխանիզմը, որը կոիտարկենք, իր ուրույն տեղն ու նշաշակությունն ունի անձի հոգեկան առողջության պահպանման և ֆրուստրացիաներից ընկրկելու գործում: Այն գիտականորեն անվանվել է պրոյեկցիա: Այս տերմինն անգլերենից թարգմանաբար նշանակում է արտահանում, արտապատկերում: Եզրույթն առաջին անգամ գործածել է Չ. Ֆրեյդը, իսկ հոգեվերլուծության ու հոգեբուժության մեջ հանրաճանաչ է դարձել Ռ. Մյուրրեի կողմից, որը 1939 թվականին թերթապես հիմնադրել է այժմ մեծ համբավ ու գործածություն ունեցող հոգեդիագնոստիկա ուղղվածությունը՝ պրոյեկտիվ թեստերի մեծ արսեսալ մշակելով, որոնք լայն կիրառություն ունեն ենթագիտակցության ուսումնասիրման համար⁵⁹⁸: Պրոյեկցիան մի պաշտպանական մեխանիզմ է, որը բնութագրական է անձի՝ ինքն իր որոշակի հատկանիշների վերագրմամբ մեկ այլ անձի: Ավելի հաճախ իհարկե մենք՝ մարդկային բոլոր առավելություններով ու թերություններով ի ծնե օժտված անհատներս, հակված ենք դիմացինին վերագրել ոչ թե այն դրական և հասարակության մեջ ընդունելի հատկանիշները, այլ բացասականը, որը անձը թաքցնում է ենթագիտակցական մակարդակում⁵⁹⁹: Ստեղծված խնդրահարույց իրողության մեջ պրոյեկցիայի հայտնաբերման դեպքում հոգեթերապևտիկ մոտեցումը արդյունավետ դարձնելու նպատակով մասնագետը պետք է համակ ուշադրությամբ լսի այցելուին, ընթացքում ֆիքսի այլոց մասին վերջինիս արտահայտած կարծիքները և այդպիսով հասկանա այցելուի իրական մարդկային տեսակն ու բնույթը, քանի որ նա կարտապատկերի իր իսկ

⁵⁹⁶ **Романин А.Н.**, Основы психотерапии: учебник / А.Н. Поманин, М. : КНОРУС, 2006, С. 170.

⁵⁹⁷ **Райгородский Д.Я.**, Психология личности. Т.1. Хрестоматия. Издание третье, дополненное, Самара: Издательский Дом БАХРАМ-М . 2002, С. 87.

⁵⁹⁸ **Романин А.Н.**, Основы психотерапии: учебник / А.Н. Поманин – М. : КНОРУС, 2006, С. 176.

⁵⁹⁹ **Райгородский Д.Я.**, Психология личности. Т.1. Хрестоматия. Издание третье, дополненное, Самара: Издательский Дом БАХРАМ-М . 2002, С. 92.

բացասական բնութագրական գծերը՝ նկարագրելով մյուսներին, որոնք իր պես չեն մտածում և իր կարծիքը չեն կիսում այս կամ այն հարցի շուրջ⁶⁰⁰:

Չոգեվերլուծության մեջ ավանդաբար ընդունված է պաշտպանական մեխանիզմների դիագնոստիկական իրականացնել պրոյեկտիվ մեթոդների կիրառությամբ, սակայն վերջիններս եզրույթի նեղ իմաստով թեստ չեն կարող համարվել, քանի որ թեստի անհրաժեշտ ու բավարար չափանիշները հետևյալն են՝ ներկայացվածի ստանդարտիզացված լինելը և արդյունքների մշակումը, արդյունքի անկախությունը փորձարարական իրավիճակից և փորձարկողի անձից և, վերջապես, ինդիվիդուալ տվյալների համադրումը նորմատիվների հետ: Իսկ վերջիններս ստացվել են նույնատիպ պայմաններում բավարար ներկայացուցչական խմբում: Ելնելով տվյալ չափանիշներից՝ կարելի է փաստել, որ պրոյեկտիվ տեխնիկան բավական անկատար է և ոչ օբյեկտիվ⁶⁰¹:

Անձնային աճի հիմնական բնութագրիչներն են՝ ուղղվածությունը կամ հակվածությունը, մասշտաբը և ակտիվությունը: Արդի հոգեբանության մեջ անձնային աճը չափելի մեծություն է: Այն սերտորեն կապված է այն բոլոր դրական ու շոշափելի փոփոխությունների հետ, որոնք պատահել են անձի Ես-ի հետ ինչ-որ ժամանակահատվածում: Եվ ինչպես էլ որ անվանենք այդ փոփոխությանը՝ անձնային աճ, անձի Ես-ի աճ կամ զարգացում, անձնային զարգացում և այլն, միևնույն է, տարբեր անվանումների տակ ամփոփված է անձի հիմնական առնագրի կայունացում, անձի Ես-ի հետ կատարված դրական տեղաշարժ և անձնային ներքին պոտենցիալի հզորացում: Անհասկանալի է, թե ինչ է կատարվել անձի հետ, անբացատրելի է տեսանելի փոփոխությունը, սակայն մի զգալի բան փոխվում է, դառնում է այլ: Մարդը դառնում է ավելի խորը, ուժեղ, ներթնապես ավելի հարուստ, սկսում է իր կյանքն ավելի հմտորեն կառավարել և ճիշտ ու նպատակահարմար որոշումներ կայացնել: Անձի Ես-ը դառնում է ավելի ճկուն ու հարմարվող արտաքին գործոններին ու միջավայրին⁶⁰²:

Եզրափակելով որոշ պաշտպանական մեխանիզմների մասին ուսումնասիրությունը և նկարագրելով դրանց անբակտելի կապը ու նաև խոչընդոտումը անձնային աճին՝ հարկ է նշել, որ ամեն դեպքում ցանկալի է ամեն իրադրության մեջ աշխատել լինել իրատես և չկորցնել իրականության զգացումը: Նշենք, որ Ֆրեյդն ինքը, հայտաբերելով պաշտպանական մեխանիզմների որոշ տեսակներ, այն մտքին էր, որ հոգեվերլուծաբանի խնդիրը կոնֆլիկտի պատճառը գտնելը և այցելուի գիտակցականին հասցնելն է: Չիպոկրատի խոսքով՝ «բնությունը կրուժի»⁶⁰³: Չոգեբանական խորհրդավորության գործընթացում բացի անձի՝ ինքն իր հոգեվիճակի շուրջ սուբյեկտիվ նկարագրությունից, կարևոր է նաև նույն հոգեվիճակի ճիշտ, օբյեկտիվ գնահատականը: Այս վերջին հարցի պատասխանը տալիս է հոգեդիագնոստիկական, որի զինանոցում կան բազմաթիվ մեթոդներ: «Դիագնոզ» (հուն.՝ diagnosis - ճանաչում, dia - առանձին, gnosis - գիտելիք) եզրույթը հունարենից թարգմանաբար նշանակում է ինչ-որ բանի ճանաչում, բացահայտում: Բժշկագիտության բնագավառում այն թարգմանվում է ախտորոշում, որը ընդունելի է: Ըստ «Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը» գրքի հեղինակ, հոգեբանական գիտությունների դոկտոր,

⁶⁰⁰ **Романин А.Н.**, Основы психотерапии: учебник / А.Н. Поманин – М. : КНОРУС, 2006, С. 176-177.

⁶⁰¹ **Пантилеев С.Р.**, Жилина Е. Ю. Методика диагностики защитных механизмов личности // Вестник Московского университета. Серия 14. Психология, 2009, С. 67-79.

⁶⁰² **Козлов Н.И.**, Психоголос, Энциклопедия практической психологии, мужской и женский взгляд на личность, личностный рост и развитие, <https://www.psychologos.ru/articles/view/muzhskoy-i-zhenskoy-vzglyad-na-lichnostzpt-lichnostnyy-rost-i-razvitiye>, 11.05.2020.

⁶⁰³ **Романин А.Н.**, Основы психотерапии: учебник / А.Н. Поманин – М.: КНОРУС, 2006, С. 179-182.

պրոֆեսոր Յ.Ավանեսյանի՝ հոգեբանության և մասնավորապես հոգեբանական ճանաչման կամ գնահատման պարագայում ավելի ճիշտ է պահպանել հունական արմատը և գործածել «հոգեդիագնոստիկա» բառը⁶⁰⁴: Եթե փորձենք մեկնաբանել «հոգեբանական դիագնոզ» եզրույթը, ապա կարելի է ասել, որ այն ախտորոշում է անձի հոգեկան առանձնահատկությունները՝ դիտելով դրանք անձի դինամիկ կառույցում, բացահայտ դարձնելով դրանց ի հայտ գալու պատճառահետևանքային կապերը, նաև առավել տիպաբանորեն մոտեցում ցուցաբերում անձի առանձնահատկությունների ախտորոշմանը: Նման կոնտեքստում ավելի գերադասելի է օգտագործել հոգեդիագնոստիկա կամ «հոգեբանական գնահատում» (psychological assessment) տերմինը, որը չի խեղաթյուրում բժշկական ու հոգեբանական կոնսուլտացիաների հստակ սահմանագիծը: Հետևաբար «հոգեախտորոշում» բառացի թարգմանությունը ճիշտ և նպատակահարմար չէ⁶⁰⁵: Հատուկ մշակված հարցարանների, հոգեբանական թեստերի միջոցով գնահատումը կամ ճանաչումը իրականացվում է մշակված նորմերին կամ հատուկ չափանիշներին համապատասխանությունը ճշգրտելու համար:

«Մեծ հնգյակ» հարցարանի դիտարկումը անձնային բացասական գործոնների և անձի պաշտպանական մեխանիզմների հետ համադրման տեսանկյունից

Այժմ որպես օրինակ դիտարկենք 1983-1985 թթ. -ին ամերիկյան հոգեբաններ Մակ՝ Կրայթի և Պ. Կոստայի կողմից մշակված անձնային հնգագործոն հարցարանը կամ «Մեծ հնգյակ» (BIG FIVE) կոչվող թեստը, որը արդի չափանիշներով համարվում է լիովին բավարար անձի հոգեբանական օբյեկտիվ պատկերը կամ անձնային օբյեկտիվ մոդելը ստանալու համար: Ավելի ուշ մեթոդիկական վերամշակվեց այլոց կողմից և ներկայացվեց ՆեՌ-անձնային հարցարան (NEO, (անգլ. Neurotism, Extraversion, Openness) կամ ՆեՌ-Պի-Ռ (NEO-PI-R) անձնային հարցարան վերջնական տեսքով:

Այն ըստ ոլորտների անձնային անթիվ բնութագրերի խմբավորման յուրատեսակ միասնական համակարգ է: Հոգեբանական դաշտում նման մեթոդիկայի ընդունումն ու ներդրումը հիմնված է հոգեվեգվաբանական մոտեցման ու գործոնային վերլուծության մեթոդի վրա: Անձի հինգ հիմնական գծերն են՝ նեյրոտիզմը (neuroticism), եքստրավերտությունը (extraversion), լայնախոհությունը կամ բացությունը փորձին (openness to experience), բարյացակամությունը (agreeableness), բարեխղճությունը (conscientiousness): Վերջիններս միմյանցից անկախ, ժամանակի մեջ կայուն ֆակտորներ են⁶⁰⁶: «Մեծ հնգյակ»-ի անկախ ցուցանիշների չափումը կատարվում է վերը նշված նույնանուն թեստով: «Մեծ հնգյակ» թեստը բաղկացած է 75 զույգ խթանիչ իմաստավորում ունեցող հարցերից, որոնցից յուրաքանչյուրն իրենց հերթին պարունակում են իրարամերժ երկու հարցադրումներ, որոնք նկարագրում են մարդու վարքագիծը: Քանի որ «Մեծ հնգյակ» մոտեցումը շոշափում է միայն անձնային դրական կողմերը՝ չընդգծելով անհատի բացասական դրսևորումները, այժմ լայն կիրառություն է ստացել «Մուրճ եռյակ» եռագործոն մոդելը: Այն ներառում է նարցիսիզմ, փսիխոպատիա և մաքիավելիզմ անձնային գծերը, որոնց միջև հայտնաբերվել են դրական կոռելացիոն կապեր⁶⁰⁷:

⁶⁰⁴ Ավանեսյան Յ., Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը, Ե., ԵՊՀ հրատ., 2017, էջ 19-21:

⁶⁰⁵ Ստեփանյան Ռ., Գալստյան Ա., Հոգեդիագնոստիկա, Ուսումնական ձեռնարկ/ ԵՊՀ: Կազմ.՝ Ռ. Ստեփանյան, Ա. Գալստյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2012. էջ 5-6:

⁶⁰⁶ Хромов А.Б., Пятифакторный опросник личности: Учебно-методическое пособие, Курган: Изд-во Курганского гос. университета, 2000. – 23 էջ, <http://osp.kgsu.ru/hromov/5faktor.pdf>, 22.08.2020.

⁶⁰⁷ Սերոբյան Ա., Անձնային գործոնների փոխկապակցվածության խնդիրը անձի ուսումնասիրման «Մեծ Հնգյակ» և «Մուրճ եռյակ» մոդելներում, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» / ԵՊՀ հրատ., 2019, էջ 62-73:

Իր հերթին հոգեբանական թեստերի կիրառական ոլորտը նույնն է բոլոր երկրների ժողովուրդների ու մասնագետների համար, սակայն անհրաժեշտ է և պարտադիր, որպեսզի հոգեդիագնոստիկ թեստերը (սաև հոգեդիագնոստիկ պրոյեկտիվ թեստերը) լինեն հայերեն տեղայնացված և որ կարևոր է՝ շարունակական: Վերջինս ենթադրում է թե՛ փոխառնված, թե՛ հայրենական թեստերի կատարելագործում, նորացում, անվերջ մշակման միտում: Դրվում է սաև մեկ պահանջ-պարամետր՝ նյութի օրիգինալությունը: Արտասահմանյան՝ սկզբնաղբյուր հանդիսացող գրականությունից թարգմանության ժամանակ գրականությունը չպետք է կորցնի իր օրիգինալությունը: Այս գործոնը խստագույնս կարևորվում է, քանի որ մենք՝ հայերս, չհանդիսանալով հոգեբանական գիտության սկզբնավորման օրրան, օգտվում ենք այլոց աշխատություններից, որոնք անհրաժեշտաբար պետք է հանդիսանան մայր-օրինակ և ոչ թե ինչ-որ երրորդ կողմի՝ ինքն իր ազգային առանձնահատկություններին համապատասխան տեղայնացված նյութ կամ անհաջող թարգմանություն⁶⁰⁸: Անձի առանձնահատկությունների ուսումնասիրությունը պահանջում է բազմակողմանի ու համալիր մեթոդների կիրառում տարբեր բնույթի ստանդարտիզացված, վերբալ ու պրոյեկտիվ թեստերի համադրման միջոցով: Այս ուղղությամբ հետաքրքրական աշխատանք է կատարել Աստղիկ Սերոբյանը, որ իր գիտական հոդվածում ցույց է տվել վերոնշյալ հոգեդիագնոստիկ պրոյեկտիվ թեստերում անձնային գծերի փոխկապակցվածությունը, սաև դրանցից մեկի կամ մի քանիսի ի հայտ գալու դեպքում վերջիններիս արտահայտվածության աստիճանը: Վերլուծության միջոցով փորձ է արվում բացահայտելու «Մուլթ Եռյակ» գործոնների պայմանավորվածությունը անձնային գծերով: Գծային ռեգրեսիոն վերլուծությունը հանգեցնում է այն արդյունքին, որ մաքիավելիզմ, նարցիսիզմ և փսիխոսոպապիա ռեգրեսիայի անկախ փոփոխականները միմյանցից իրականում անկախ չեն: Ավելին՝ պարզվում է, որ $p < 0,001$ նշանակալիության աստիճանի դեպքում «Մուլթ Եռյակ»-ի մոդելում փսիխոպատիան ու նարցիսիզմը համեմատաբար միմյանցից անկախ գործոններ են, իսկ ամենամեծ կշիռն ու դերն ունի մաքիավելիզմը, այսինքն՝ վերջինս նարցիսիզմի ու փսիխոպատիայի արտահայտվածության չափն է տալիս: Միևնույն ժամանակ մաքիավելիզմի համար դրական կանխորոշիչ են նարցիսիզմն ու փսիխոպատիան: Սակայն կատարված հետազոտության արդյունքում «Մուլթ Եռյակ» գործոնների լիակատար փոխկապակցվածությունը լիովին չի բացահայտվում, ստույգ է այն փաստը, որ երեք գործոնները միմյանցից անկախ չեն⁶⁰⁹:

Ներմուծելով անձնային 5 հիմնական գծերը և կատարելով ռեգրեսիա՝ դուրս է բերվել մի շատ հետաքրքրական փաստ, այն, որ նարցիսիզմը լիովին բացասական գիծ դիտել պետք չէ, այն դրական դրսևորում է և միջանձնային հարաբերություններում կարող է շատ պիտանի դեր խաղալ: Ստացվում է, որ մաքիավելիզմը հիմնաբարային գործոն է նարցիսիզմի ու փսիխոպատիայի միջև, իսկ նարցիսիզմն ու փսիխոպատիան միմյանցից անկախ են:

Վերլուծության այրյունքում կարող ենք եզրակացնել, որ պաշտպանական մեխանիզմների փոքր մասնաբաժին առկա է և թույլատրելի բոլորի մոտ, սակայն երբ այն գերազանցում է որոշակի իրական սահմանները, դառնում է մասնագիտական միջամտության ենթակա երևույթ, ինչի մասին հիշատակել է Դ.Ե.Ռայգորոդսկին: Չետևաբար անկախ այս կամ այն անձնային գծերը բացահայտող հոգեբանական թեստի

⁶⁰⁸ Ավանեսյան Զ., Զայրապետյան Դ., Զովհաննիսյան Զ., Զովհաննիսյան Ս. Զոգեախտորոշիչ համակողմանի մոդելի մշակման հիմնախնդիրը/ Զոգեբանությունը և կյանքը, Երևան «Ձանգակ-97», 2008 թ. (1-2), էջ 9:

⁶⁰⁹ Սերոբյան Ա., Անձնային գործոնների փոխկապակցվածության խնդիրը անձի ուսումնասիրման «Մեծ Զնգյակ» և «Մուլթ Եռյակ» մոդելներում, «Բանբեր Երևանի համալսարանի Փիլիսոփայություն, Զոգեբանություն» / ԵՊՅ հրատ., 2019, էջ 62-73:

պատասխանները ունենալու հանգամանքից, միևնույն է, անհերքելի են մտում հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կամ գոնե դրանցից մեկի (եթե ոչ մի քանիսի սիներգետիկ էֆեկտի) ազդեցության կարևորությունը ստացվելիք իրական արդյունքի վրա⁶¹⁰: Չենք ընկրկի օգտագործել անգամ ստացված պատկերի «խեղաթյուրում» արտահայտությունը, և որակավորված մասնագետի գործի դժվարեցումն այդ թեկուզ մեկ թաքնված մեխանիզմի՝ անձի մոտ առկայության պատճառով:

Անհերքելի է նաև «Մեծ հնգյակ» և «Մուր շոյակ» մոդելներում ընդհանրացված անձնային գծերի կանխորոշիչ դերը հոգեբանական խորհրդատվության մեջ:

Եզրակացություն

Չոգեդիագնոստիկական մեթոդիկաների արսենալը չափազանց լայն է, հետևաբար հայտնի են տարբեր դասակարգումներ, բազմազան մոտեցումներ ու խմբավորումներ: Իրենց հերթին հոգեդիագնոստիկական մեթոդիկաներում թեստերի կիրառությունը բավական ծավալուն և հոգեդիագնոստիկական մեթոդիկաների արդյունքը ներկայացնող համակարգ է: Թեստերը, կախված կիրառման նպատակից ու նշանակությունից, առանձնացվում են ամենատարբեր խմբերի մեջ: Դրանցից են՝ հարցարան-թեստերը, հաստատող պարունակությամբ թեստերը, արդյունք ցույց տվող թեստերը, գործողություն արտահայտող թեստերը, ֆիզիոլոգիական (օրգանիզմի պատասխան ռեակցիան ի հայտ բերող) թեստերը և այլն:

Այսպիսով՝ հոգեդիագնոստիկ մեթոդների հիմնավորման ու արդյունավետության տեսանկյունից առաջատար է կիրառված մեթոդի օբյեկտիվ-սուբյեկտիվ լինելու գործոնը: Վերջիններս հստակ տարանջատված չեն, քանի որ առաջինի դեպքում մինիմալի է հասցվում հոգեբան-դիագնոստի գործոնը, մյուսի դեպքում մեթոդիկայի վերջնարդյունքը կախում ունի մասնագետի փորձից ու ինտուիցիայից: Այս երկու մեթոդիկաների մեջ կիրառվում են տարաբնույթ տեխնոլոգիական օպերացիաներ, և այդտեղից նրանց դասակարգումը օպերացիոն է: Նաև շատ կարևոր է հստակ գիտակցել այն հանգամանքը, որ եթե օբյեկտիվ թեստավորման դեպքում անձին տրվում են ինտելեկտուալ և անձնային հատկանիշները պարզող, առանձնահատկությունները կամ միզոցե ձեռքբերումները բացահայտող թեստային հարցեր, և արդյունքը պարզում ու արձանագրում է մասնագետը, ապա սուբյեկտիվ մեթոդիկայի դեպքում պրոցեսի ընթացքն ու վերջնահաշիվը ակնհայտորեն այլ է: Փորձարկվողը դիտում ու գնահատում է արտաքին օբյեկտներն ու հասկացությունները, և ինքն իրեն է գնահատում: Հետևաբար չկա էքսպերտային գնահատական, օբյեկտիվ արդյունքների համադրում, ինչպես ստանդարտիզացված թեստերի դեպքում, երբ մասնագետը հետևում է կոնկրետ մեթոդիկայի, շեշտադրում է փորձարկվողի վարքագծային կամ անձնային կոնկրետ հատկանիշներ, կազմում բացահայտող տիպիկ թեստ, մտնում բուն էության մեջ: Սուբյեկտիվ մեթոդիկայի վառ օրինակներ են մեր դիտարկված պրոյեկտիվ թեստերը, որոնցում թեստային ստիմուլը շեշտված չէ, չկան ցուցումներ և ստացված պատասխանի ընտրանքային դաշտը լայն մասշտաբ է զբաղեցնում:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ պրոյեկտիվ թեստերը կարելի է կոչել յուրօրինակ «ազատ թեմայով շարադրություն»: Նման թեստերի արդյունքները տարաբնույթ պատկերներ են կամ տեքստեր: Վերջնարդյունքը կախված է փորձարկվողի փորձից, անձնային հատկություններից, արժեհամակարգից, ինչը խիստ սուբյեկտիվ է, քանի որ այս կամ այն պատկեր-տեքստ-պատասխանը անձը ընտրում է իր ներքին մոտիվներից ելնելով: Եվ հենց դա էլ թույլ է տալիս, որպեսզի պրոյեկտիվ թեստերը հանդիսանան հոգեդիագնոստիկական լուրջ մեթոդիկա, որը կոչված է բացահայտելու

⁶¹⁰ Райгородский Д.Я., Практическая психодиагностика. Методики и тесты. Учебное пособие.- Самара: Издательский Дом «БАХРАМ-М», 2001. – 672 С., <https://brainmod.ru/tests/manual/psychological-defense/>, 10.12.2020.

անձի մղումները, ռեալ արժեհամակարգը և ավելի խորին անձնային շերտերը, որոնք, օրինակ, ոչ միշտ են լիովին բացահայտվում ստանդարտիզացված՝ ստույգ ստիմուլով թեստերի դեպքում, և կամ էլ հաճախ լիովին չեն էլ սանձվում ու տրվում հոգեթերապիային կամ այլ հոգեդիագնոստիկ մեթոդիկայի: Վերոնշյալից բխող եզրահանգումն այս սուբյեկտիվիզմն է, որը պետք է ընդունել որպես անձի բացահայտման օբյեկտիվ գնահատական, քանի որ հենց այստեղ է, որ չկա մասնագետի որակավորման հարց ու ազդեցություն, կա անձնային սուբյեկտիվիզմի ստացված փաստ, անձնային պրոֆիլի իդեալական ստացում, որը միգուցե հենց ամենառեալն է գոյություն ունեցողներից⁶¹¹:

Սակայն պրոյեկտիվ ու ստանդարտիզացված թեստերի համադրման և այս վերջին պնդման մեջ ևս կա ինքնատիպ հակասություն, այն է՝ ոլորտի աշխատողների կողմից ցածր մեթոդաբանական կուլտուրայի և պարագիտական պրոյեկտիվ թեստերի կիրառական տարածվածությունը, նաև ստացված պատկեր-տեքստ-պատասխանը ոչ գիտատեխնիկական գործիքահամակարգի օգտագործմամբ մեկնաբանելը, ինչը բերում է այնպիսի արտեֆակտների ի հայտ գալու ռիսկին, ինչպիսիք են՝ արոյունքի գործիքային սխալը և հոգեդիագնոստի սուբյեկտիվ սխալը: Մինչդեռ պրոյեկտիվ թեստերը գիտատեխնիկական տեսանկյունից ևս հանդիսանում են հոգեդիագնոստիկական փորձագիտական գնահատման մեթոդի տարատեսակ և ըստ այդմ պետք է բավարարեն մեթոդի բոլոր ընդունված չափանիշներին:

Ահավասիկ, այս մեթոդիկաներով ավելի հուսալի և վալիդ տեղեկություն ստանալու միակ ուղին մի քանի անկախ էքսպերտ-մասնագետների արոյունարար գնահատականը ստանալը և այդ գնահատականների ստուգումն է՝ միմյանց հետ համաձայնեցնելով:

Ընդ որում, բոլոր այդ մասնագետները պետք է ընդհանուր հոգեբանական որակավորում և տվյալ կոնկրետ մեթոդիկայով զբաղվելու միասնական մասնագիտական փորձ ունենան:

Մեծ հաշվով ասած՝ հոգեբանական ոլորտում ցանկացած խնդրում լավագույն արոյունք գրանցելու համար ցանկալի է հուսալի հոգեբանական գնահատման (հոգեդիագնոստիկա) և թիրախային հոգեբանական ներազդման (խորհրդատվություն, թերապիա, թրենինգ) մեթոդների ներդաշնակ համադրությունը, որը կունենա լուրջ գիտական հիմնավորում:

FEATURES OF APPLICATION OF PSYCHODIAGNOSTIC METHODS IN STUDYING PERSONAL PROTECTIVE MECHANISMS

MARGARITA KARAPETYAN

*Yerevan State University, Faculty of Philosophy and Psychology,
Chair of General Psychology, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to put forward and justify the approach according to which, in psychological consultation, especially in the course of studying of protective mechanisms of the person, the application of the characteristics of the psychodiagnostics methods should strictly be taken into account. Our task is to reveal the role of obligatory psychological testing in practical therapy and the exact psychological estimation, particularly highlighting the importance of the harmonious standardized psychodiagnostic tests and projective methods, to try to clarify the comparative boundaries from the point of view of corroboration and efficiency of the methods of

⁶¹¹ Журавлев Д.В., Психодиагностика: классификация видов и типов, Бим-Бад, (2009)
http://www.bimbada.ru/biblioteka/article_full.php?aid=132&binn_rubrik_pl_articles=112. Այց՝ 15.11.2020

being objective-subjective. The model «Big Five» developed by P.Costa and McCray which is objectively revealing the personal traits of people nowadays, is observed as an example.

As a result of the conceptual analysis, we came to the conclusion that in order to achieve a positive result, both in the research and applied areas of psychology, it is advisable to harmoniously apply a reliable method of reliable psychological assessment (psychodiagnostics) and target psychological influence is purposeful. Considering that psychology sphere is differentiated with its direct relevance to personal traits and mental processes of a person, a reference is also made to the main characteristics of the specialist, on the basis of which the latter is authorized to process the information of a person's mental world in front of him and give a positive result.

Keywords: *person, psychological consultation, defense mechanism, psychodiagnostics, tests, questionnaire, projection.*

ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ ПСИХОДИАГНОСТИЧЕСКИХ МЕТОДОВ ПРИ ИЗУЧЕНИИ ЗАЩИТНЫХ МЕХАНИЗМОВ ЛИЧНОСТИ

МАРГАРИТА КАРАПЕТЯН

*аспирантка кафедры общей психологии
факультета философии и психологии
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Цель данной статьи - выдвинуть и обосновать подход, согласно которому при психологическом консультировании, особенно в процессе изучения защитных механизмов человека, следует строго учитывать особенности применяемых психодиагностических методов. Наша задача - выявить роль обязательного психологического тестирования в практической терапии, подчеркнуть важность гармоничного сочетания методов точной психологической оценки, в частности стандартизированных психодиагностических тестов и проективного метода, попытаться выяснить относительный предел объективности-субъективности методов с точки зрения обоснования и их эффективности. С этой точки зрения рассмотрена модель «Большой Пятерки», разработанная П. Костой и Р. Маккрейем, которая сейчас наиболее объективно описывает черты личности человека.

В результате концептуального анализа мы пришли к выводу, что для достижения позитивного результата, как в исследовательской, так и прикладной области психологии, целесообразно гармоничное применение надежного метода достоверной психологической оценки (психодиагностики) и целевого психологического воздействия. Учитывая, что область психологии отличается своим прямым отношением к личностным качествам и психическим процессам человека, также, уделено внимание ключевым личностным характеристикам специалиста, на основании которых, он может собрать мозаику ментального мира другого человека и дать положительный результат.

Ключевые слова: *личность, психологическое консультирование, защитный механизм, психодиагностика, тесты, опросник, проекция.*

**«ՀԱՅՐԵՆԻԷԻ ՊԱՇՏՊԱՆԻ» ԵՎ «ՄԱՐԴԱՄՊԱՆԻ»
ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԶԻՆՃԱՌԱՅՈՂԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՄԵՉ***

ՉՏԴ 159.9

DOI: [10.52063/25792652-2021.1-221](https://doi.org/10.52063/25792652-2021.1-221)

ՄԱՐԻԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*«Ժեստ» հոգեբանական կենտրոնի
միջազգային բաժնի ղեկավար, ԵՊՀ դասախոս,
բ. Երևան, Հայաստանի Հանրապետություն,
mariam-99@mail.ru*

Սույն հոդվածի նպատակն է տարբերակել պինճառայողներին՝ ըստ բնավորության շեշտվածության և հետապոտել պատերազմի թողած ազդեցությունը նրանց ներաշխարհում:

Հոդվածի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ հետապոտել մարտական գործողություններին մասնակցած պինճառայողների տարիքային խմբերը, դուրս բերել ռիսկային խմբերը, վերլուծել «մարդասպան»-ի և պինճառայողի հոգեբանական հակվածությունները:

Հոդվածում կիրառվել են մի շարք հետապոտական մեթոդներ՝ դիտարկում, որակական և քանակական տվյալների վերլուծություն և ներկայացում, Ռորշախի թեստ: Հետապոտության ընթացքում հանգել ենք որոշակի եզրակացությունների, որոնցից գլխավորներն են՝ պատերազմի մասնակիցները միշտ չէ, որ հետապնդում են միևնույն նպատակը, պատերազմը կարող է լինել միջոց՝ բավարարելու իրենց սպանության բնագործ կամ կարող է վեր հանել նախկինում ունեցած տրավման և առաջացնել սպանելու հաճույք, պինճառայողները պարտադիր չէ, որ ունենան ակնհայտ հոգեկան խնդիրներ, որ համարվեն մարդասպաններ և չմասնակցեն մարտական գործողություններին:

Մարտական գործողություններին մասնակցում են տարբեր բնավորության շեշտվածություն ունեցող անձինք, որոնք կարող են ունենալ տարբեր տրավմաներ, որոնք էլ պատերազմական տարբեր իրավիճակներում կարող են գլուխ բարձրացնել:

Հիմնաբառեր՝ պատերազմ, «հայրենիքի պաշտպան», «մարդասպան», Ռորշախի թեստ, ռազմական հանցագործություն, բռնություն, տրավմա, սպանելու հաճույք, բնավորության շեշտվածություն:

«Զկան վտանգավոր զենքեր, կան վտանգավոր մարդիկ»
Սերժանտ Զարլզ Զիմ

Պատերազմների նպատակները և օրենքները

«Պատերազմ» հասկացությունը շատ խոր արմատներ ունի. այն կենդանիների վարքագծի կրկնօրինակումն է, երբ կենդանիները պայքարում էին տարածքի, ուտելիքի կամ զույգի համար: Պատերազմի նպատակը երբեք պարզապես սպանելուն ուղղված բռնություն չի եղել, պատերազմի նպատակը սեփական երկրի որոշմանը աջակցելու համար ուժի վերահսկված և նպատակաուղղված գործողությունն է: Վերահսկված,

* Հոդվածը ներկայացվել է 20.02.2021թ., գրախոսվել՝ 03.03.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

որովհետև զինվորը չի որոշում, թե որտեղ, երբ և ինչ ձևով է պետք գործել, դա որոշում է հրամանատարական անձնակազմը:

Այսինքն՝ պատերազմի նպատակն ինքնին կռվելը կամ սպանությունը չէ, և ի տարբերություն սպանությունների՝ այն ունի միջազգայնորեն հաստատված կանոններ, թե ինչ է կարելի անել և ինչ չի կարելի: Պատերազմի օրենքները միտված են տանջանքները սահմանափակելուն և հաստատված են 196 երկրների կողմից: Ըստ այդ կանոնների՝ չպետք է թիրախավորվեն քաղաքացիական օբյեկտները, պետք է պաշտպանված լինեն քաղաքացիների, բուժաշխատողների, ռազմագերիների իրավունքները, չպետք է սեռական բռնության կամ տանջանքների ենթարկել որևէ մեկին: Սակայն արդյոք մի՞շտ են պահպանվում այս օրենքները:

Պատերազմը որպես իշխանության պահպանման և համախմբման քողարկված նպատակ

Երբեմն պատերազմների իրական նպատակը կարող է լինել նաև քողարկված: Ի՞նչը կարող է առավել համախմբել մարդկանց վատ դեկավարի, թեկուզ և բռնակալի շուրջ, եթե չլինի հողի (երկրի) ու հավատի անվտանգության հարցը: Շատ լավ իմանալով այդ ամենը՝ դեկավարները կարող են հրահրել կամ նախաձեռնել պատերազմ՝ թաքցնելու համար տնտեսական ճգնաժամը կամ զսպելու ընդդիմադիրների հավաքը: «Պատերազմը կարգապահություն է մտցնում ոչ միայն պատերազմի մասնակիցների, այլ նաև սովորական քաղաքացիների շրջանում՝ ստիպելով նրանց ավելի զուսպ և կամեցող դառնալ»⁶¹²:

Պատերազմը նաև դրական ազդեցություն է թողնում մարդկանց վրա. կարծես արթնացնում է նրանց, աշխուժացնում՝ կտրելով ամենօրյա հոգսերից կամ միապաղաղ կյանքից:

Պատերազմի հետևանքները զինծառայողների հոգեբանական առանձնահատկությունների վրա

20-րդ դարի սկզբին առաջացավ «ռազմական հանցագործություն» տերմինը⁶¹³, սակայն առաջին ռազմական հանցագործությունը տեղի է ունեցել դեռևս 1474 թ.-ին, երբ բուրգունդյան ասպետ սըր Փիթեր վոն Յագենբախը դատապարտվել է Ad hoc տրիբունալի 18 դատավորների կողմից⁶¹⁴: «Ռազմական հանցագործություն» եզրույթի սահմանումը տրված է Միջազգային քրեական դատարանի Յոմի ստատուտի (կանոնադրության) 8-րդ հոդվածի 2-րդ մասում, որում հստակ սահմանված են ռազմական հանցագործությունները՝ ներառյալ նաև դիտավորյալ սպանությունները, խոշտանգումներն ու քաղաքացիական անձանց վրա հարձակումները⁶¹⁵:

Մարտական գործողություններին մասնակցում են տարբեր բնավորության շեշտվածության տեսակ ունեցող անձինք, որոնք կարող են ունենալ տարբեր տրավմաներ, որոնք էլ պատերազմական տարբեր իրավիճակներում կարող են գլուխ բարձրացնել: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սպայական անձնակազմի մեջ էլ կարող են այդպիսի դեպքեր լինել: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ

⁶¹² **William James**: The Moral Equivalent of War, 1910, p. 19.

⁶¹³ **George P Fletcher & Jens David Ohlin**, Reclaiming Fundamental Principles of Criminal Law in the Darfur Case, 3. Int'l Crim., Just 539, 541 /2005/p. 25.

⁶¹⁴ **Gregory S. Gordon**, The Trial of Peter von Hagenbach: Reconciling History, Historiography, and International criminal Law, China, 2012, p. 8.

⁶¹⁵ Յոմի ստատուտ/կանոնադրություն A/CONF.183/9 - 17 հուլիս, 1998թ. /փոփոխությունները արված են 1998թ. նոյեմբերի 10-ի, 1999թ. հուլիսի 12-ի, 1999թ. նոյեմբերի 30-ի, 2000թ. մայիսի 8-ի, 2001թ. հունվարի 17-ի, և 2002 թ. հունվարի 16ի հիման վրա: Կանոնադրությունն ուժի մեջ է մտել 2002թ. հուլիսի 1-ից:

հետազոտությունները ցույց են տվել, որ սպայական անձնակազմն ավելի էր հակված այնպիսի երևույթներին, ինչպիսիք են՝ մարտողության խանգարումը, ուժասպառ լինելը, անբնությունը⁶¹⁶:

Պատերազմի ընկալումն ու հոգեբանությունը ազգերի միջև տարբեր է, հատկապես ցեղասպանությունը վերապրած ազգերի շրջանում: Վերջիններիս զինվորները կրում են ոչ միայն իրենց, այլ նաև իրենց ընտանիքի, ինչու ոչ նաև ողջ ազգի գոյության պայթարը: Այսինքն՝ զինվորի ներաշխարհում այս դեպքում ամեն կերպ առաջ է գալիս հոգեբանական պաշտպանական մեխանիզմ՝ ես-ի կոնցեպցիայի պահպանման համար:

Պատերազմը կարող է արթնացնել ներսում թաքնված ագրեսորին, բռնարարին, սեռական սադիստին, սերիական մարդասպանին: Ի տարբերություն մարդասպանների այլ տեսակների՝ սերիական մարդասպաններին պետք չէ որևէ դրդապատճառ սպանություն կատարելու համար: Երբ վերջիններիս ձեռքում հայտնվում է անպաշտպան անձը՝ զերին, նրանք սկսում են իրենց երևակայությանը տուրք տալ՝ հասկանալով հանդերձ, որ դրա համար որևէ պատիժ չեն կրելու: Ճիշտ է, պատերազմի ընթացքում թույլատրվում է սպանել, բայց ոչ բոլորին, սակայն եթե չեն հայտարարել խաղաղ բնակչի կամ ռազմագերու առկայության մասին, կարող են շատ հանգիստ վարվել այնպես, ինչպես կցանկանան, հետո էլ թաքցնել խոշտանգված դիերը արդեն իսկ զոհված զինծառայողների մեջ: «Շատ մարդիկ հաճույք են ստանում սպանելուց, Ֆրեյդի մահվան բնագործ վերակենդանանում է բացատրելու մարդկանց պատրաստակամությունը 4 տարի և 3 ամիս շարունակ (Առաջին համաշխարհային պատերազմի տևողություն) սպանելու և սպանվելու⁶¹⁷: Մարդիկ շարունակում են կռվել, որովհետև նրանք ցանկանում են դա անել⁶¹⁸, և երբ քաղաքացիները դառնում են արդյունավետ զինվորներ, սպանելը երբեմն ասոցացվում է «սպանելու եռանդուն ցանկության» հետ⁶¹⁹: Այնուհանդերձ ոչ միայն պատերազմի ժամանակ է արթնանում սպանելու բնագործ, այլ նաև հնարավոր է, որ ցանկացած պատերազմին միանալու քաղաքացիների մարտակոչին միանան այնպիսի անձինք, որոնք արդեն գիտեն, թե ինչ է նշանակում մարդ սպանելը և չեն ցանկանում կամ էլ չեն կարողանում կանգ առնել:

Հանցագործության և հոգեբուժական խնդիրների միջև առկա սերտ կապը մշտապես եղել է ուսումնասիրությունների կենտրոնում: Հանրության մեջ ձևավորված է կարծիք, որ հոգեկան խնդիրներով տառապող մարդիկ մշտապես հակված են բռնության: 2006թ.-ին Ամերիկայի Միացյալ Նահանգներում հանրության հետ իրականացված սոցիալոգումը վկայում է, որ հարցվածների 60%-ը մտածում է, որ շիզոֆրենիայով տառապող մարդիկ ագրեսիվ են և մյուսների հանդեպ բռնություն են գործադրում, իսկ 32%-ը մտածում է, որ դեպրեսիայով տառապող մարդիկ են՝ հակված բռնության⁶²⁰: Այս կարծիքին հատկապես նպաստում է մամուլի արձագանքը կատարված հանցագործությունների հանդեպ, որտեղ հանցագործին առանց բժշկական ախտորոշման որակում են որպես հոգեբուժական հիվանդ: Սակայն կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ իրականությունն այլ է. չնայած հանցագործություն կատարած անձանց, առավել ևս սերիական մարդասպանների թվում առավել հաճախ են հանդիպում հոգեբուժական խնդիրներ ունեցող անձինք⁶²¹,

⁶¹⁶ **Wilmot Herringham**, A Physician in France, London, 1919, P. 32.

⁶¹⁷ **Niall Ferguson**, The Pity of War, London 1998, P. 358.

⁶¹⁸ Լույն տեղում, էջ 357:

⁶¹⁹ **Joanna Bourke**, An Intimate History of Killing, London, 1999, P. 13.

⁶²⁰ **Harvard Health Publishing**, Harvard medical School, Mental illness and violence, 2011 January/
https://www.health.harvard.edu/newsletter_article/mental-illness-and-violence/.

⁶²¹ **Emily D. Gottfried, Sheresa C. Christopher**, Mental Disorders among Criminal Offenders, A Review of Literature, July 2017, P. 337.

այնուամենայնիվ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող մարդիկ ավելի հաճախ են լինում բռնության զոհ⁶²²:

Օրինակ՝ սերիական մարդասպանը կամ բռնության հակում ունեցող անձը պարտադիր չէ, որ ունենա ակնհայտ հոգեկան խնդիրներ, կարող է լինել հավասարակշռված, սառնասիրտ, ուժեղ, շատ խելացի: Պատերազմից հետո գրված հուշերում, օրագրերում ու նամակներում հաճախ են հանդիպում զինծառայողների կողմից պատերազմի մասին ցնծության արտահայտությունների: «Ես պաշտում եմ պատերազմը. այն կարծես պիկնիկ լինի, միայն թե նպատակառուղված»⁶²³, «Մի օր... ես հարվածեցի ուղիղ թշնամու ճամբարին և տեսա, թե ինչպես են թշնամու մարմինները կամ մարմինների մասերը օդ թռչում, լսեցի փախչողների և վիրավորների հուսահատ աղաղակները: Ես ստիպված եմ ինձ խոստովանել, որ դա իմ կյանքի ամենաերջանիկ պահերից մեկն է»⁶²⁴:

«Մարդասպանի» բնագրային դրսևորումները պատերազմի դաշտում կամ խաղաղ բնակչության հանդիպելիս

Հետազոտությունները դաժանության, խոշտանգումների վերաբերյալ փաստում են այն մասին, որ դեռևս քաղաքակրթությունից հեռու իրականությունն ունի այլ պատկեր: Որոշ մարդասպաններ իրենց զոհերին վերաբերում են ինչպես գերիների, որոնց տանջելն ու սպանելը իրենց դարձնում է «հերոսներ»: Իսկ ի՞նչ է տեղի ունենում, երբ այդ մարդասպանը ընկնում է ռազմաճակատ: Դիտարկենք մեկ օրինակ. Արցախյան պատերազմները (Այրիյան քառօրյա պատերազմը, 2020թ. սեպտեմբերին սանձազերծված 44-օրյա պատերազմը) ցույց տվեցին, որ համացանցի միջոցով արագ տարածում են տեսանյութեր, թե ադրբեջանցիները ինչպես են կտրում զինվորի գլուխը և դրա հետ պարում, ինչպես են խորովածի շամփուրով տանջահար անում ռազմագերիներին և այլն: Այդ նույն երկրի զինվորները ներխուժեցին արցախյան գյուղեր, որոշ դեպքերում կտրեցին տարեցների ականջները և նկարելուց հետո սկսեցին ակտիվ տարածել: Երբ մարդասպանը վերցնում է «հուշանվերներ» սպանության վայրից կամ նկարում է կատարած սպանությունը, առավել ևս տանջանքները, նշանակում է՝ նա ցանկանում է նորից վերապրել իր կատարած բռնության հաճույքը⁶²⁵: Իսկ ի՞նչ նպատակ են հետապնդում այդ տեսանյութերը ակտիվ դիտողները և տարածողները: Այստեղ կարող է լինել անուղղակի հաճույքը ստանալու մեխանիզմը. սպանությունը կատարում է այլ անձ, իսկ դրա կատարելու համարձակությունը չունեցողը կարողանում է իր բնագրն այդպես բավարարել:

Առավել վտանգավոր է մարդասպանի հոգեկերտվածքով սպան: Վերոնշյալ հետազոտությունների ամփոփման հիման վրա կարող ենք փաստել, որ եթե սերիական մարդասպանը սպայի կոչում է ստացել՝ բավարարելու իր սպանելու բնագրը, ապա նշանակում է, որ նա ունի բարձր ինտելեկտ, քանի որ ինչքան քիչ է լինում զոհերի

⁶²² **Watson A, Hanrahan P, Luchins D, Lurigio A.**, Mental Health Courts and the Complex Issue of Mentally Ill Offenders, *Psychiatr Serv.* 200, P. 478.

⁶²³ Մեջբերում **Samuel Hynes**, *The Soldiers' Tale. Bearing Witness to Modern War* (London 1997), p.39. Նույնպիսի նկարագրություն՝ «Ես այսքան շատ ոչինչ չեմ տեսել իմ կյանքում – կրակ, ծուխ, փրկության կանչեր, լույսեր, հրացանների կրակահերթեր, փամփուշտների շրշույն», տե՛ս **Denis Winter**, *Death's Men. Soldiers of the Great War* (Harmondsworth 1978), p. 181.

⁶²⁴ **Henry de Man**, *The Remaking of a Mind. A Soldier's Thoughts on War and Reconstruction* (London 1920), 198–9; մեջբերված՝ Bourke, op. cit., P. 31.

⁶²⁵ **Mariam Vardan Karapetyan**, *The Causality of Serial Killers' Crime in Early Childhood*, Berlin, 2020, P. 4.

ռիսկայնությունը, այնքան բարձր է լինում մարդասպանի ինտելեկտը⁶²⁶: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կատարված մտավոր գործակցի՝ IQ հետազոտությունները ցույց են տվել, որ դատավարությամբ անցնող ռազմական հանցագործների շարքում են եղել բարձր IQ ունեցողներ, որոշ դեպքերում էլ՝ դոկտորական աստիճան ունեցող անձինք: Վերջիններիս IQ-ն բավական բարձր ցուցանիշներ ունի, իսկ դոկտորական աստիճան ունեցող քիմիկոս Լեյը ինքնասպան է եղել⁶²⁷: Կարելի է դիտարկել այն վարկածը, երբ պատերազմ տեղի չի ունենում, և սպան մենակ չի գործում, այլ ընտրում է իր «ենթակային»: Քանի որ սպան իշխող է, տիրակալ, ապա ենթական այնպիսին պետք է լինի, որ իրեն նվաստացած է միշտ զգացել և միայն իրեն հզոր կզգա գլխավորի շնորհիվ:

Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող ամիսների ընթացքում Նացիստական Գերմանիայի 200-ից ավել ներկայացուցիչների հետ հոգեբանական ու հոգեբուժական հետազոտություն է կատարվել, որպեսզի հասկանան Երրորդ Ռեյխի ղեկավարության և հրամաններ կատարողների բնավորության հոգեբանական առանձնահատկությունները⁶²⁸: Հետազոտող մասնագետը թարգմանչի օգնությամբ ցույց է տվել բոլոր մասնակիցներին 10 քարտ (հետագայում դա հայտնի Ռորշախի թեստն էր) և պարզապես հարցրել, թե դա ինչ կարող է լինել: Թեստի մասնակի պատասխանները ցույց են տվել հոգեախտաբանություն՝ մի դեպքում պարանոիդ խանգարումներ, մեկ այլ դեպքում՝ սուր դեպրեսիա: Ըստ հետազոտությունների՝ հետազոտության մասնակիցների մեծամասնությունը ունեցել է հոգեբանական Նույն առանձնահատկությունները՝ խնդիրը լուծելու միևնույն մեթոդը՝ հիմնվել արդեն իսկ եղած փորձի վրա: Հատկանշական է եղել հատկապես թեստի երկրորդ քարտի պատասխանների վերլուծությունը:



Rorschach Card 2

⁶²⁶ Նույն տեղում, p. 5:

⁶²⁷ **Eric A. Zilmer, Molly Harrower, Barry A. Ritzler, Robert P. Archer**, Personality and Clinical Psychology Series, The Quest for the Nazi Personality, A psychological Investigation of Nazi War Criminals, New York and London, 2009, p. 47

⁶²⁸ Նույն տեղում, p. 47:

Գեստապոյի հիմնադիրը՝ Զերման Գերինգը, տվել է հետևյալ մեկնաբանությունը. «Երկու պարող տղամարդ. ֆանտաստիկ պար: Երկու տղամարդ, ահա իրենց գլուխները, ձեռքերը միասին, ինչպես պտտվող դերվիշները: Ահա նրանց մարմինները, ոտքերը»: Ըստ Ռորշարխի թեստի երկու փորձագետների՝ Միայի և Չելցերի, այն փաստը, որ Գերինգը տեսավ պարային ֆիգուրներ այս քարտի մեջ, վկայում է «հիպոմանիակային պաշտպանության» հոգեբանական օրինաչափության մասին, մինչդեռ այն փաստը, որ նա տղամարդկանց տեսնում էր կարմիր գլխարկներով, վկայում է կարգավիճակի մտահոգության մասին»: Ռուդոլֆ Զեսը՝ Զիտլերի նախկին Ֆյուրերի տեղակալը, նույն քարտի վերաբերյալ նկարագրել է այլ կերպ. «Մանրադիտակային հատում, արյան բծերով միջատի մասեր ... կարմիր արյան բծերով թռչող միջատի (ճանճ) ոտք. մեջտեղի տարածությունը ոսկրածուծն է ... Դիմակ: Կղզու վայրենի դիմակ ... բաց հատվածը բերանի համար է ... դա սատանայական է, այդ պատճառով աչքերը և մորուքը կարմիր են»: Միային և Չելցերը մեկնաբանեցին որպես «բռնության, ոգևորվածության հուզականության մնացորդներ, որոնք դեռ ինտենսիվ են, բայց կտրված են ցանկացած իրականությունից», իսկ Վիրջինիայի համալսարանի հոգեբուժության պրոֆեսոր Թոմաս Ուայզը սա որակում է որպես «տարօրինակ պատասխան, որը վկայում է հոգեկան խանգարման մասին»: Դիմադեյը կատարված վերլուծությունն ամփոփում է՝ նշելով, որ Նյուրենբերգյան դատավարությունն այն մասին չէ, թե ով է հանցագործությունը կատարել, այլ թե ինչու է դա կատարվել»⁶²⁹:

Այսպիսով՝ շատ կարևոր է հասկանալ, թե ով կարող է ղեկավարել կամ իրականացնել մարտական գործողությունները, այսինքն՝ ոչ միայն կարևոր է մարտունակությունը, այլ նաև հոգեբանական հետազոտությունը: Կատարված հետազոտությունները համաշխարհային պատերազմներից հետո ուսումնասիրվել են մի շարք գիտնականների կողմից՝ կանխարգելելու ռազմական հետագա հանցագործությունները:

INDIVIDUAL PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF THE «DEFENDER OF THE FATHERLAND» AND THE «KILLER» IN THE PERCEPTION OF A SERVICEMAN

MARIAM KARAPETYAN

Psychological Center «Zhesture», International Department, Head;

Yerevan State University, Lecturer,

Yerevan, Republic of Armenia

The purpose of this article is to differentiate servicemen according to the character accentuation and to study the impact of war on their mental features. The objectives stemming from the purpose of the article is to study the age groups of the servicemen who took part in the hostilities, to identify the risk groups, to analyze the psychological tendencies of the «murderer» and the serviceman.

The investigation uses a number of research methods: observation, qualitative and quantitative analysis of data and presentation, Rorschach test. In the course of the research, the following conclusions were made: war participants do not always pursue the same goal, war can be a means to satisfy their killing instinct or it can bring out a previous trauma and cause a killing

⁶²⁹ **Dimsdale, J.** (2015). Use of Rorschach tests at the Nuremberg war crimes trial: A forgotten chapter in history of medicine Journal of Psychosomatic Research DOI: <http://dx.doi.org/10.1016/j.jpsychores.2015.04.001>.

pleasure. It is not necessary for the servicemen to have obvious mental problems to be considered murderers and not take part in hostilities.

During the hostilities, people with different personality types are involved, which can lead to different traumas that can arise in different military situations.

Keywords: *war, «defender of the Fatherland», «killer», Rorschach test, war crime, violence, trauma, pleasure from murder, character accentuation.*

ИНДИВИДУАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ «ЗАЩИТНИКА ОТЕЧЕСТВА» И «УБИЙЦЫ» В ВОСПРИЯТИИ ВОЕННОСЛУЖАЩЕГО

МАРИАМ КАРАПЕТЯН

*заведующая международным отделом психологического центра «Жест»,
преподаватель Ереванского государственного университета
г. Ереван, Республика Армения*

Цель данной статьи – провести различие между военнослужащими по акцентуации характера, изучить влияние войны на их психические особенности.

Вытекающие из цели задачи: изучить возрастные группы военнослужащих, участвовавших в боевых действиях, выявить группы риска, проанализировать психологические склонности «убийцы» и военнослужащего.

В статье использован ряд методов исследования: наблюдение, качественный и количественный анализ данных и их представление, тест Роршаха. В ходе нашего исследования мы пришли к некоторым выводам, основные из которых заключаются в том, что участники войны не всегда преследуют одну и ту же цель, война может быть способом удовлетворить их инстинкта убийства или может быть вызвана прошлой травмой и удовольствием от убийства. Военнослужащие не обязательно должны иметь явные психические проблемы, чтобы считаться убийцами и не принимать участие в боевых действиях.

В боевых действиях участвуют люди, обладающие различными личностными типами, которые могут иметь травмы, обострение которых возможно в разных военных ситуациях.

Ключевые слова: *война, «защитник Отечества», «убийца», тест Роршаха, военное преступление, насилие, травма, удовольствие от убийства, акцентуация характера.*

**2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԵՐՈՒՄ
ԱՆՁՆԱԿԵՆՏՐՈՆ ԻՆՏԵՆՍԻՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀՈԳԵԹԵՐԱԴԻԱՅԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ***

ՀՏԴ 159.9

DOI: [10.52063/25792652-2021.1-228](https://doi.org/10.52063/25792652-2021.1-228)

ՄԱՐԻԱՄ ՄԵՅՐԱԲՅԱԼ

*«Ժեստ» հոգեբանական կենտրոնի հիմնադիր ղեկավար,
ՀՀ ԳԱՎ ԳԿՄԿ հոգեբանության ամբիոնի դոցենտ,
հոգեբանական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
zhest.center@gmail.com*

Հոդվածի նպատակն է ներկայացնել և հիմնավորել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձապերծված պատերազմի ընթացքում կիրառված «Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիայի» արդյունավետ մոտեցումը մարտական գործողություններին մասնակցած տարբեր խմբերի հետ:

Ելնելով առաջադրված խնդրից՝ հողվածում քննարկվել են հետևյալ խնդիրները՝ առանձին ներկայացնել, վերլուծել ու ամփոփել մարտական գործողություններին մասնակցած և վիրավորում ստացած զինծառայողների, նրանց ընտանիքի անդամների, զոհված զինծառայողների ընտանիքի անդամների, անհայտ կորած զինծառայողների ընտանիքի անդամների, գերեզարկումից հետ վերադարձած անձանց հետ հոգեբանական աշխատանքը, կատարել մեթոդական-գործնական շեշտադրումներ:

Հողվածում ներկայացված են առաջնային պրոլոցի ալգորիթմներ, հետապոստությունը վարելու անկետավորման նմուշներ, մեթոդական տարբեր ապարատներ, որոնք էլ հանդիսացել են կատարված աշխատանքի մեթոդաբանական հիմք:

Արդյունքում կատարվել են եպրահանգումներ, ըստ որոնց՝ վերլուծելով քառամյա աշխատանքները, վիճակագրական տվյալներից վերհանելով օրինաչափությունները՝ հնարավոր է դառնում «Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիայի» (այսուհետ՝ ԱԻԾՀ) շրջանակներում առավել արդյունավետությամբ շարունակական բնույթ հաղորդել տարվող հոգեբանական աջակցության ձևերին նշված խմբերում:

Ներկայացվել են կատարված նախնական հոգեբանական գնահատման, հոգեախտորոշիչ⁶³⁰, հոգեթերապիական աշխատանքների հետ կապված առաջարկներ արդյունավետ ինտենսիվ աշխատանքներ կազմակերպելու համար շահագրգիռ մարմիններին:

Հիմնաբառեր՝ հոգեբանական աշխատանք, մարտական գործողություն, պատերազմ, հետպատերազմյան փուլ, անձնակենտրոն, ինտենսիվ ծրագրային հոգեթերապիա, հոգեբանական ախտորոշում, առցանց հոգեթերապիա, տնայց,

* Հողվածը ներկայացվել է 20.02.2021թ., գրախոսվել՝ 03.03.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

⁶³⁰ Практическая психодиагностика, Методики и тесты, Самара, 2001, 672 С.

ընտանեկան մոդել, կորստի հետ աշխատանք, վշտի թերապիա, վիրավոր, ստեղծագործող, անհայտ կորած պինձառայող, գերեվարված պինձառայող:

Ներածություն

Ելնելով կիրառական հոգեբանության դրույթներից՝ նշված շրջանում հոգեբանության առջև խնդիր դրվեց կարճ ժամանակում մշակել, կիրառել, ներդնել արդյունավետ հոգեբանական գնահատման, հոգեախտորոշման, հոգեբանական խորհրդատվության, հոգեթերապևտիկ աշխատանքների գործիքակազմ, մեթոդական ապարատ:

Ստորև ներկայացվող վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ միայն հատուկ մշակված ծրագիրը թույլ կտար ապահովել ցանկալի արդյունք:

Կիրառական հոգեբանության ոլորտն ինքնին լայն հնարավորություններ է ընձեռում գործնական մասնագետին իր ոլորտում արագ կողմնորոշվել և ստեղծել համակարգ: Հենվելով լայնածավալ աշխատանքների, փորձի վրա՝ ընդգծենք այն հանգամանքը, որ ստեղծված «Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիան» ապահովում է նաև հետագա կանխարգելիչ միջոցառումները: Այն է՝

1. Վերածնակերպել անձնային կառույցները:
2. Հաղթահարել «Շնչկծվածության, տագնապայնության» համախտանիշը:
3. Հակազդումների կարգավորման լծակ մշակել:

Հոդվածում ներկայացված հետազոտական խմբերում կատարված ողջ աշխատանքը ամփոփման փուլում է: Մեկնարկային տվյալները ցույց են տալիս, որ ԱԻԾՀ մոտեցումը կարճ ժամանակահատվածում արդյունավետ էլ է ապահովում:

Հոգեբանական աշխատանքի նպատակն է պատերազմական ու հետպատերազմական իրավիճակում ունենալ կայուն հոգեուղական վիճակ ընտանիքներում, կորուստը հաղթահարել գրագետ, չփոխանցել հաջորդ սերնդին, ինչն առաջացնելու է բարդ հետևանքներ: Վիճակագրությունը⁶³¹ փաստում է, որ ընտանիքների հուզահոգեբանական տրամադրվածությունն ուղիղ համեմատական է ապագա սերնդի տրամադրվածությանը:

Հետպատերազմյան ստեղծված իրավիճակում գերակա անելիք ունի ընտանիքը, քանի որ առկա են տարաբնույթ ահագնացող սոցիալ-հոգեբանական խնդիրներ⁶³²: Այն պետք է «մոդելավորի» ապագա մարդուն, քաղաքացուն, որ կունենա իր անձնային տարածքը, հնարավորություն կունենա չկուտակել ավելորդ, բացասական հույզեր և հաջորդ սերունդներին կփոխանցի ավելի առողջ մոդել, կհաղթահարվեն կարծրատիպերը, մեծ ու փոքր հասկացությունները անհավասարից կդառնան հավասար: Այս համատեքստում ենք կազմակերպել զոհված զինծառայողների հետ ընտանիքների աշխատանքը: Կազմվել է ներբոնշյալ ալգորիթմը, որի փուլայնությունն իրականացվում է հոգեբանական աշխատանքը կազմակերպելիս:

⁶³¹ Համաձայն «Ժեստ» հոգեբանական կենտրոնի վիճակագրության (2020թ.)՝ մարտական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած, զոհված, գերությունից վերադարձած և գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և նրանց հարազատների հետ 2020թ.-ի սեպտեմբերի 29-ից մինչև 2021թ.-ի հունվարի 15-ը կենտրոնը ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարությամբ իրականացրել է զոհված զինծառայողների ընտանիքների **1895** տնայց երևանում և հանրապետության բոլոր մարզերում: Հոգեբանական առաջնային խորհրդատվություն է տրամադրվել **4120** անձի: Ներկայումս շարունակական հոգեբանական աշխատանքներ են իրականացվում կենտրոնում, մարզային մասնաճյուղերում **3800** անձի հետ:

⁶³² **Մեհրաբյան Մ.Վ., Հակոբյան Ն.Ռ.**, «Շնչկծվածության հոգեախտորոշում և հոգեթերապիա», Երևան, 2017: Մեջբերում «Հասարակության մեջ շերտավորման արդյունքում առաջացել են «մեղավորներ», «անմեղներ», «պայքարողներ», «փախչողներ», որոնք իրականում ավելի նման են պիտակների, քան առաջ տանող և հանրօգուտ հասկացություններ են: Ուստի կարևորում ենք «ընտանիքի» գործառնությունների վերանայումը և նոր առաջարկների քննարկումը»:

Գծապատկեր 1. Հոգեբանական աշխատանք կորստի հետ, փուլայնությունը

<p>Առաջին փուլ Տնայց, ծանոթություն</p>
<p>Երկրորդ փուլ Նախնական հոգեբանական գնահատում Հոգեախտորոշում ընտանիքների բոլոր անդամների հետ</p>
<p>Երրորդ փուլ Հետազոտության արդյունքների քննարկում, հոգեթերապևտիկ ծրագրի առաջարկ</p>
<p>Չորրորդ փուլ Վշտի թերապիա (անհրաժեշտության դեպքում հոգեբույժի խորհրդատվություն)</p>
<p>Հինգերորդ փուլ Սոցիալական հարմարումը հասարակության մեջ Մեծամասնության դեպքերում՝ փակվածություն տանը</p>

Անդրադառնանք սոցիալ-հոգեբանական մեկուսացման հիմնախնդրին: Այն ամփոփում է հոգեբանական այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝

- վախ անորոշությունից,
- հետագա հարաբերություններ կառուցելու անհնարիություն,
- եզակիի կորուստ, անդամնալիություն,
- ինքնամեղադրանք,
- բոլորը մեղավոր են:

Սոցիալական հարմարման համար հոգեբան-մասնագետի կողմից ուղեկցումը դեպի սոցիալական շփում, հաղորդակցություն, ինքնաներում, հարմարում հրատապ խնդիրներից է:

Կորստի հաղթահարման աշխատանքներն իրականացնելիս աշխատանքային **Նպատակն է** եղել վշտի ապրման հենց առաջին փուլում ընտանիքին կառուցողական ուղղորդել հարազատի մասին հիշողությունների հավաքագրմանն ու շարադրմանը: Նշված աշխատանքը տեխնիկապես սկսեց իր դրական հետադարձ կապով⁶³³ ապահովել բարձր արդյունավետություն ընտանիքի բոլոր անդամներին համախմբելու, միասնական ձևով մեկուսացումից դուրս գալու համար: Հետագարձ կապի օրինակներ են՝ «...սկզբում դժվար է գրել նրա մասին, դողում եմ, արցունքներս խեղդում են, իսկ վերջում դատարկվում եմ և հանգստանում...», «...Նա արժանի է, որ ես գիրք գրեմ նրա մասին, դա իմ միակ նպատակը դարձավ: Շնորհակալ եմ...»: Թվով 21 մայր ցանկություն հայտնեց կրկին մայրանալու: Մայրանալու և սերունդը շարունակելու բնագոյը պատերազմի կործանարար ազդեցությունը ճնշեց, քանզի վերածնվելու գաղափարը բերում է յուրահատուկ զգացողություն. «Ես չեմ պարտվում, երբ մահանում եմ, այլ պատրաստ եմ վերածնվել սերունդների մեջ»: Նշենք նաև, որ զոհված զինծառայողների ընտանիքներում տիրում էր բարոյահոգեբանական մարտունակ մթնոլորտ մինչև պատերազմի առաջին հատվածը, երբ ծնողները մեջբերում էին անում հայոց

⁶³³ Հետագարձ կապը այն լավագույն հնարն է, ինչը կարճ ժամանակում հնարավորություն է ընձեռում ադապտացնել նորը, ստանալ օբյեկտիվ պատկեր նշված տեխնիկայի արդյունավետության մասին:

պատմության էջերից և լավատեսորեն սպասում հաղթանակի: Այստեղ մատնանշենք վշտի հաղթահարման այն առանձնահատկությունը, ինչը «հանուն» առաջատար գաղափարների կարող է ստվերի մեջ հայտնվել, իսկ չկա «հանունը», այսինքն՝ գաղափարախոսությունը չի առաջնորդում, մարդիկ անգամ վշտի մեջ կարող են «լացը» փոխել «ագրեսիայի»⁶³⁴:

Կատարված հոգեբանական աշխատանքների շարքում ուշագրավ է ներկայացնել այն զոհված զինծառայողների ընտանիքների հոգեբանական վերլուծությունը, որոնք Արցախի Հանրապետությունից էին: Նրանց շրջանում առկա հոգեբանական անելանելիությունը կրկնապատիկ էր տան, հողի կորստի հետ:

Աշխատանքի երրորդ փուլում՝ հետազոտության արդյունքների քննարկման ժամանակ, նկատելի էր տարակուսանք, վախ ապագայից, նաև կյանքի իմաստի կորուստ: Էթիստենցիալ, սոցիալ-հոգեբանականի ինդիվիդուալ կողքին առաջնային դիրքում էին նաև սոցիալ-կենցաղային պայմանները⁶³⁵:

Հեռախոսազանգերի, տնայցերի, կենտրոն այցերի նախնական հետազոտությամբ բարձր է գրանցվել մարդկանց ընկճվածության, ինքնամոլորության, չընդգրկվածության սցենարները, սակայն հստակ կարող ենք փաստել, որ երրորդ այցից ակնառու նկատվել է դրական միտում շփվելու, խոսելու և հանդիպումների շարունակականության սպասումի:

Այրվածքաբանության ազգային կենտրոնում գտնվող տարբեր աստիճանի այրվածքներ ստացած 97 զինծառայողի և 91 հարազատի (հայր, մայր, քույր, եղբայր, տատիկ, հորեղբայր) տրամադրվել է առաջնային հոգեբանական աջակցություն, հոգեբանական խորհրդատվություն, շարունակական հոգեթերապիա ԱԻԾՀ շրջանակներում (Տե՛ս ԱԻԾՀ դրույթները):

Վերակենդանացման բաժանմունքում գտնվող 5 զինծառայողից 2-ի մոտ գրանցվել է կենսաբանական մահ, իսկ 3-ի հետ կայացել են առաջնային հանդիպումները, և կա պայմանավորվածություն՝ և՛ իրենց, և՛ ընտանիքի անդամներին հոգեբանական աջակցություն տրամադրելու: Այս բաժնում «մահը» և «կյանքը» կողակիցներ էին և, մեջբերելով վիրավոր զինծառայողի խոսքերը, թե՛ «...բոլորը կորուստ ունեն, ես էլ իմը՝ հայրս...», կարող ենք նկատել ընդհանրացվող մահվան գաղափարը. «բոլորը», նաև «ես»:

Ներկայացված ալգորիթմի բարձր արդյունավետությունը զինծառայողների կողմից շարունակական հոգեբանական աշխատանքի մասնակցելն է, հետադարձ կապի ապահովումը:


Պատերազմի սարսափը մարտահրավեր նետեց ընդունելու առկա իրականությունը, որը սթրեսից մարդկային ռեսուրսների գերլարման, ուժեղացման ապացույցն է:

Հոգեբանական աշխատանքները համագործակցային տեսանկյունից համաձայնեցնելով բուժաշխատողների հետ՝ առաջարկել ենք հետևյալ սխեման՝

⁶³⁴ Ազգային գաղափարախոսության հոգեբանական վերլուծությունն այսօր մարտահրավեր է ապագա սերունդներին առաջնորդելու համար:

⁶³⁵ Կանխավ գնահատվում է ընտանիքի հոգեբանական, սոցիալական վիճակը, համաձայն որի կազմակերպվում են աշխատանքները: Տե՛ս Նկար 1:

Գծապատկեր 3. Բուժաշխատող-հոգեբան համագործակցության ալգորիթմ⁶³⁶




Արդյունքում մշակվել է «Վիրավոր զինծառայողի հետ հոգեբանական աշխատանքի կազմակերպման» ձևաչափ, ինչը հանդիսանում է անկետավորում հատուկ կետերի միջոցով: Այն ներառում է անձնական տվյալների հավաքագրում, կարիքի գնահատում, հոգեբանական գնահատման համար ընտրված մեթոդիկաների համախումբ, որոնց տվյալները զետեղվում են քարտի մեջ: Յուրաքանչյուր թերապևտիկ հանդիպում գրանցվում է, նշվում վերջնարդյունքը, տրվում ցուցում, ապահովում հետադարձ կապ:


Հետտրավմատիկ սթրեսը մարտական գործողությունների ժամանակ հաճախ հանդիպող և քննարկվող ախտորոշումն է, որն ուղեկցվում էր ընկճվածությամբ քննարկվող ժամանակահատվածում: Սակայն ընկճվածությունը չէր զուգահեռվում հուսահատությամբ և ֆրոստրացվածությամբ: Ընկճվածությունը հիմնականում բացատրում էին ցավի անկառավարելիությամբ, նաև ընկերների կորստով: Երկրորդ ամսվա ընթացքում բարձրացավ հուսահատության ալիքը, ինչը հանգեցրեց ֆրոստրացիայի: Սակայն հաճախակի այցերը, նաև ծնողների հետ աշխատանքը տվեց ցանկալի արդյունք, քանի որ վերջին 22 վիրավոր զինծառայողի հետ աշխատանքն ունի հետևյալ տեսքը. **դրական են տրամադրված դեպի ապագան, երբ խոսում են ցավոտ կորուստների մասին, նաև թերապևտիկ աշխատանքից մեջբերում են, որ պարտությունը հաղթանակի սկիզբն է:**

⁶³⁶ Սխեման մշակվել է «Ժեստ» հոգեբանական կենտրոնի մասնագիտական խորհրդի կողմից թիվ 2 քննարկման ժամանակ՝ «Վիրավորի հետ հոգեբանական աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները թեմայով»:

Գծապատկեր 4. Կատարված աշխատանքի ցուցանիշներն ու արդյունքները. առաջին ամիս (01.10.2020-02.11.2020)



Գծապատկեր 5. Կատարված աշխատանքի արդյունքները, երկրորդ ամիս, ցուցանիշները (02.11.2020-05.12.2020)



Առաջին ամսվա բարձր տազնապայնության մասին նշենք, որ այն ավելի շատ պայմանավորված էր ծնողների խումնապային տրամադրությամբ ու անորոշությամբ: Պատերազմի ավարտից հետո տազնապը նվազեց, անորոշությունն ու վախը ապագայի հանդեպ անցան: Վերջին շաբաթվա տեսանելի արդյունքը ընկերների մոտ վերադառնալու ցանկությունն է մայրական խնամքից հետո:

Անհայտ կորած զինծառայողների ընտանիքներից առաջնային աշխատանք է տարվել **368** անձի հետ, հեռախոսազանգով ինտենսիվ (հատուկ մշակված ալգորիթմով) գրույցներ է իրականացվել հոգեբան-մասնագետների կողմից **398** ընտանիքի հետ:

Աղյուսակ 1.

Մարտական գործողությունների ընթացքում գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ընտանիքներին հոգեբանական աջակցություն տրամադրելու վերաբերյալ

Տրված անվանացանկի քանակը	Դեռախոսազանգով կապ է հաստատվել	Գրածարվել են	Դեռախոսակապի միջոցով տրվել է հոգեբանական խորհրդատվություն	Հոգեբանական աջակցություն է տրվել այցի միջոցով
400	398	0	368	276

Սոցիալ-հոգեբանական վերլուծության, արդյունքների ամփոփման ժամանակ պարզ դարձավ անհայտ կորած զինծառայողների ընտանիքի անդամների հետ աշխատելու հետևյալ օրինաչափությունը՝

1. մեղադրանք,
2. անօգնականություն,
3. հուզական պոռթկումներ,
4. բարձր ազրեսիվություն:

«Ցասումի հետևում անօգնականությունն է», - ֆրանսիական հայտնի արտահայտությունը տեղին է, քանի որ անհայտ զինծառայողների ընտանիքները հոգեբանական աջակցության առաջին փուլից անմիջապես հետո սկսում են աշխատել բաց, առանց դիմադրության՝ ի տարբերություն զոհված զինծառայողների ընտանիքների վշտի թերապիայի առաջին փուլի: Յուրահատուկ է նրանց **սպասումը**: Սպասման հոգեբանական ֆենոմենը հետապտերազմյան այլ երանգ ունի. «Նա կգա, ես գիտեմ...», «...Երագիս նա ծառի տակ էր նստած...» և այլն: Յուրաքանչյուր սպասում արտահայտող նախադասության մեջ նկատելի է լավատեսությունը, հույսը: Ժամանակի ու տարածության մեջ հնարավոր է դառնում հոգեթերապևտիկ աշխատանքի արդյունքում հասնել հարմարման, մեկնաբանել երազները և նախապատրաստել վատագույնին:

Հաջորդ ֆենոմենը «որոնումն է»: Այն բովանդակում է անհնարին հույզեր, անչափելի զգացողություններ, որոնք չեն ենթարկվում հոգեախտորոշման գործիքներին: Ուստի այստեղ հոգեբան-մասնագետի միջամտությունը ապրումակցման մեծ հնարավորության մեջ է, որը հղի է հուզական այրման վտանգներով⁶³⁷:

Եզրահանգումներ

Հոդվածում ներկայացված մեթոդական-կիրառական ապարատը, հենված լինելով նախանշված մեթոդաբանության վրա, ենթադրում է շարունակական հոգեբանական աշխատանքներ ԱԻԾՀ շրջանակներում: Այն է՝

Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիա⁶³⁸

1. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիան իր հիմքում տեսնում է անձին մինչև այցելու դառնալը՝ շեշտադրելով հայ մարդու բնավորության ցցուն կողմերը, ժամանակակից միջմշակութային տեսությունների համատեքստում դրանց կիրառման հնարավորությունները:

2. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիայում հոգեբանական խնդիրները դասակարգված են 2007-2020 թթ. «Ժեստ» հոգեբանական կենտրոնի արխիվի սոցիոլոգիական հետազոտության տվյալների հիման վրա:

3. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիայում յուրաքանչյուր հոգեբանական խնդիր նկարագրված ու սահմանված է ըստ միջազգային չափանիշների: Յուրաքանչյուրի համար սահմանված է հոգեթերապևտիկ աշխատանքի ժամկետ:

4. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիայում յուրաքանչյուր անձի համար կազմվում է աշխատանքային պլան, ընտրվում է մասնագիտական թիմ:

5. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիան ընթանում է փուլային շարժընթացակարգով:

6. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիայի առաջին փուլը սկսվում է հոգեախտորոշումից՝ հատուկ մշակված փաթեթով:

7. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիայի երկրորդ փուլը հոգեախտորոշման արդյունքների քննարկումն է անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապևտի հետ:

8. Արդյունքները, մասնագիտական թիմը, ժամկետը, գումարը քննարկվում են Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիայի մասնագիտական խորհրդում:

9. Յուրաքանչյուր նորույթ հոգեախտորոշման արդյունքների քննարկման ժամանակ հոգեթերապևտիկ աշխատանքի ավարտից հետո ամփոփվում և ներկայացվում է գիտական հոդվածի տեսքով: Նպատակն է՝ զարգացնել և ստեղծել

⁶³⁷ Պարտադիր նշված խմբերի հետ աշխատանքներում կազմակերպել անընդհատ և շարունակական սուպերվիզիաներ: Տե՛ս ԱԻԾՀ «Սուպերվիզիայի այգորիթմ», դրույթ 26:

⁶³⁸ **Mariam Mehrabyan**, The Purpose, Tasks, Provisions, of a Person-centered Intensive Program Psychotherapy, Social Science, Humanities&education, ISBN: 978-609-485-082-0, Berlin, 2020, p 5-20.

հոգեախտորոշման օպտիմալ փաթեթ՝ խնդրի առաջնային, սակայն խորքային վերլուծության համար, ինչը Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիան կդարձնի հասարակության պահանջներին ավելի հարմարեցված:

10. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիայի երրորդ փուլը թերապևտիկ աշխատանքի մեկնարկն է:

11. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիան յուրաքանչյուր խնդրի հոգեթերապևտիկ ծրագրի անհատական մշակման մեջ ճկուն է:

12. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիան նախատեսված է բոլոր մարդկանց համար առանց տարիքային սահմանափակման, կրոնական խտրականության, սեռային պատկանելության:

13. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապևտիկ ուղղությունը միջգիտակարգային է և ներառում է տարբեր ոլորտների (հոգեբուժություն, նյարդաբանություն, սեքսուալաթյուզիա, մանկաբուժություն) մասնագետների հետ համագործակցություն, ինչը պարտադիր գրավոր կցվում է տվյալ անձի անհատական քարտին:

14. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապևտիկ ուղղության աշխատանքային տեխնիկաների կիրառելիությունը, արդյունավետությունը գնահատվում են անձի հետադարձ կապի հիման վրա, ինչպես նաև երեք ամիսը մեկ քննարկվում են Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապիայի մասնագիտական խորհրդում:

15. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապևտիկ ուղղությունը տարեկան հետազոտությունները, Նորույթը ամփոփում է գիտական հոդվածների, զեկոյցների, միջազգային գիտաժողովների մասնակցության, տեսանյութերի ձայնագրման, խմբային քննարկումների տեսքով:

16. Անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեթերապևտիկ ուղղությունը ելթադրում է ինտենսիվ սուպերվիզիաներ՝ նախապես կազմելով դեպքի կառուցվածքը և ընտրելով սուպերվյազեր մասնագիտական խորհրդի անդամներից կամ ազատ ընտրությամբ դիմելով նեղ ուղղվածության մասնագետի:

Նշված կետերը հնարավորություն կտան կարճ ժամկետներում և արտակարգ կամ ճգնաժամային (հատկապես մարտական գործողությունների ժամանակ) իրավիճակներում ապահովել «հոգեբանական գնահատում», «հոգեախտորոշում», «հոգեբանական խորհրդատվություն», «հոգեթերապևտիկ աշխատանք»:

THE ANALYSIS OF PSYCHOLOGICAL WORK DURING THE HOSTILITY AND AT THE POST-WAR STAGE IN DIFFERENT GROUPS IN THE FRAMEWORK OF PERSON-CENTERED INTENSIVE PROGRAM PSYCHOTHERAPY

MARIAM MEHRABYAN

*Psychological center «Zhesture», The founding director;
NA NAS RA, Ph.D. in Psychology, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to present and substantiate the effective approach of "Person-Centered Intensive Program Psychotherapy" used during the war unleashed on September 27, 2020 with the various groups involved in the hostilities.

Based on the current objective, the article discussed the following issues: separately present, analyze, summarize the psychological work with wounded servicemen, their families,

family members of killed servicemen, family members of missing servicemen, and returnees from captivity, make methodological-practical emphases.

The article presents primary conversation algorithms, research questionnaires, methodological apparatus, which were the methodological basis of the work.

As a result, it was concluded that by analyzing the four-month work, revealing the patterns from the statistical data, it is possible to give a more effective continuous character to the manners of psychological support in the above-mentioned groups within the Person-centered Intensive Psychotherapy. Proposals related to the performed preliminary psychological assessment, psychodiagnostic, psychotherapeutic work were submitted to the interested bodies in order to organize effective intensive work.

Keywords: *psychological work, hostility, war, post-war phase, Personal centered intensive program psychotherapy, psychological diagnosis, online psychotherapy, home visits, family model, work with loss, grief therapy, wounded, dead soldier, missing soldier, captured soldier.*

АНАЛИЗ ПСИХОЛОГИЧЕСКИХ РАБОТ 2021 ГОДА, ПРОВЕДЕННЫХ В РАЗНЫХ ГРУППАХ ВО ВРЕМЯ ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ И НА ПОСЛЕВОЕННОМ ЭТАПЕ В РАМКАХ ЛИЧНОСТНО-ОРИЕНТИРОВАННОЙ ИНТЕНСИВНОЙ ПРОГРАММНОЙ ПСИХОТЕРАПИИ

МАРИАМ МЕГРАБЯН

*учредитель и директор психологического центра «Жест»,
доцент кафедры психологии ИКСМ НАН РА,
кандидат психологических наук,
г. Ереван Республика Армения*

Цель данной статьи – представить и обосновать эффективный подход «Личностно-ориентированной интенсивной программной психотерапии», использованный во время войны, развязанной 27 сентября 2020 года, с различными группами, участвовавшими в боевых действиях.

В статье рассматриваются следующие вопросы: выделить, представить, проанализировать, обобщить психологическую работу с ранеными военнослужащими, их семьями, членами семей погибших военнослужащих, членами семей пропавших без вести военнослужащих и репатриантами, сделать акценты на методологическом и практическом аспектах.

В статье представлены первичные алгоритмы беседы, образцы исследовательских анкет, методические приемы, которые явились методологической основой проделанной работы. В результате был сделан вывод о том, что, анализируя четырехмесячную работу, выявляя закономерности из статистических данных, можно придать более эффективный непрерывный характер группам психологической поддержки в указанных группах в рамках личностно-ориентированной интенсивной программной терапии. Предложения по выполненной первичной психологической оценке, психодиагностической, психотерапевтической работе были переданы в соответствующие структуры с целью организации эффективной интенсивной работы.

Ключевые слова: *психологическая работа, боевая операция, война, послевоенный этап, личностно-центрированная, интенсивная программная психотерапия, диагностика, онлайн-психотерапия, домашний визит, модель семьи, работа с потерей, терапия горя, раненый, мертвый солдат, пропавший без вести, пленный солдат.*

ԱՐՎԵՍ, ИСКУССТВО, ART

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՐՈՍ
ՏԱՐՈՆԱԳՈՒ ԱՐՎԵՍՏՈՒՄ (1307Թ. ԵՍԱՅԻ ՆՉԵՑՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ)*

ՀՏԴ 7.03:75.056:091

DOI: [10.52063/25792652-2021.1-237](https://doi.org/10.52063/25792652-2021.1-237)

ՆԱԻՐԱ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ,
 ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
naranazaryan67@gmail.com

Հոդվածը նվիրված է Գլաձորի համալսարանի XIV դ. սկզբի մանրանկարիչ Թորոս Տարոնացու ծաղկած ձեռագրերի տիտղոսաթերթերին՝ նրա վաղ ձեռագրի՝ 1307 թ. Եսայի Նչեցու Ավետարանի օրինակի հիման վրա: Սույն ձեռագրի տիտղոսաթերթերի ուսումնասիրությունը մեր հետազոտության կարևոր մասն է կազմում: Բազմաթիվ հեղինակներ Գլաձորի մանրանկարչական դպրոցի մասին խոսելիս անդրադարձել են Տարոնացու արվեստին՝ Սիրարփի Տեր-Ներսեսյանը, Լիդիա Դուռնովոն, Արամ Ավետիսյանը, Էմմա Կորիմապյանը, Վիգեն Ղապարյանը և այլք: Սակայն մինչև օրս նրա թողած ժառանգությունը հիմնովին չի ուսումնասիրվել: Մեր ընտրությունը կանգ առավ նկարչի արվեստի ուսումնասիրության վրա հենց այդ պատճառով:

Թորոս Տարոնացու ստեղծագործության ուսումնասիրության նպատակն է ցույց տալ նրա նկարապարդած ձեռագրերի առանձնահատկությունները, նկարչի հմտությունները մանրանկարչության ոլորտում:

Հոդվածի հիմնական խնդիրն է տիտղոսաթերթերի պատկերապարզման համակարգի բաղադրիչների՝ գլխավարդերի, վերնագրերի, գլխատառերի, սկզբնատողերի, լուսանցապարդերի վերլուծությունը: Հետազոտության համար օգտագործվել են արվեստաբանական վերլուծության համալիր մեթոդները: Տարոնացու տիտղոսաթերթերը հետազոտելիս հանգել ենք հետևյալ հիմնական եզրակացությանը. նկարչի արվեստում առկա է հայկական մինչևկլիկյան և մասնավորապես կլիկյան տարրերը: Կլիկիայում ծաղկած ձեռագրերի հետ զուգահեռներ ու համեմատություններ անցկացնելիս համոզվեցինք, որ տիտղոսաթերթերում ներկա է հիմնականում ռուսիկյան ավանդույթը: Նկարչի ստեղծած ձեռագրերի քանակի (նրան է վերագրվում 24 ձեռագիր) ու որակի շնորհիվ նրան կարելի է դասել իր ժամանակաշրջանի ամենատաղանդավոր արվեստագետների շարքին և անվանել «ակադեմիական, մեծ վարպետ»:

* Հոդվածը ներկայացվել է 22.01.2021թ., գրախոսվել՝ 16.02.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

Հիմնաբառեր՝ Գլածոր, Թորոս Տարոնացի, գլխատառ, գլխապարո, մանրանկարչություն, տիտղոսաթերթ, Ավետարան:

Ներածություն

Թորոս Տարոնացին XIV դ. առաջին կեսի հռչակավոր արվեստագետներից էր՝ մանրանկարիչ, գրիչ: Սակայն նրա արվեստը հիմնովին չի հետազոտվել: Մեր ուսումնասիրության առարկան Թորոս Տարոնացու 1307 թ. նկարագարոված Եսայի Նչեցու Ավետարանն է (Վենետիկի Մխիթարյան միաբանություն, 1917) և նրա արվեստը: Սույն ձեռագիրը հանդիսանում է նկարչի հեղինակած առաջին Ավետարանը: Ձեռագիրը մեծ կարևորություն ունի նրա արվեստը ուսումնասիրության գործում: Տիտղոսաթերթերը, խորանների հետ մեկտեղ, Թորոս Տարոնացու արվեստում ամենահարուստ զարդարված էջերն են: Նրանք աչքի են ընկնում վառ գույների ընտրանիով և գունապնակի ներդաշնակությամբ, երկրաչափական զարդերի սիմետրիկությամբ, բուսական ու կենդանական մոտիվների առատությամբ: Հոդվածում կդիտարկենք 1307 թ. Եսայի Նչեցու Ավետարանի տիտղոսաթերթերը՝ համեմատություններ անելով նկարչի մյուս ձեռագրերի հետ, փորձելով ցույց տալ առնչությունները հայ մինչևիլիկյան ու կիլիկյան ավանդույթների հետ:

Թորոս Տարոնացու տիտղոսաթերթերի վերլուծությունը

Թորոս Տարոնացու տիտղոսաթերթերում արտահայտված են հայկական պատկերազարդման տարրերը՝ Ու-ձև ուղղանկյուն գլխազարդը՝ կազմված երկրաչափական, բուսական, կենդանակերպ ու թռչնակերպ մոտիվներից, վերևում ամփոփվում է խաչով, գլխազարդի բացվածքում (յունետ) Ավետարանի վերնագիրը գրված է ոսկով⁶³⁹ և ավելի փոքր գրով: Աջ լուսանցքում էջի երկարությամբ բուսակերպ լուսանցազարդը վերևում ավարտվում է խաչով: Ձախ անկյունում գլխատառը հարդարված է ավետարանչի խորհրդանիշով: Սկզբնատողը գրված է երկաթագրով, խճանկարային եղանակով, հյուսվեն նախշերով և ուրվագծված է ոսկով: Բոլոր էջերում գլխազարդի ութ անկյուններում կեռախաչեր են: Մատթոսի, Մարկոսի, Ղուկասի տիտղոսաթերթերում գլխազարդի անկյուններից բուսազարդեր են «աճում»: Բոլոր էջերում գլխազարդի խորքը ոսկյա է: Հարկ է նշել, որ հայկական գրքարվեստում «Անիի դպրոցում» ստեղծված XI դ. երկրորդ կեսի ձեռագրերը զարգացնում են 966 թ. Թարգմանչաց Ավետարանի (Բալթիմոր, Ուոլթերս, 537) պատկերազարդման կառուցվածքը. գլխավոր ավետարանները սկսվում են ավետարանչի դիմանկարով և գեղարվեստորեն ձևավորված տիտղոսաթերթով⁶⁴⁰: Նշենք նաև, որ տիտղոսաթերթերի գլխազարդերի ձևավորման վրա ազդել է խորանների ձևավորումը, «որոնք կոչվել են կիսախորաններ և հաճախ բովանդակել գրեթե նույն մոտիվները, ինչ խորանները»⁶⁴¹:

Գլխազարդերը

Ուղղանկյուն գլխազարդը բոլոր չորս տիտղոսաթերթերում Ու-ձև է, ներսում բուսական ճոխ հարդարանքով՝ առնված շրջանակի մեջ: Ու-ձև ծաղկազարդ գլխազարդը

⁶³⁹ «Ոսկի տառերը և տողերը ավետարանական բնագրում նշանակում են Տիրոջ «անսուտ և անապական» խոսքերը, որոնցով լուսավորվում են հավատացյալների միտքն ու հոգին», **Ղազարյան Վ.**, խորանների մեկնություններ, Սարգիս Խաչենց, Երևան, 1995, էջ 16:

⁶⁴⁰ **Казарян В., Манукян С.**, Иллюстрированная книга XI в. // Матенадаран, Армянская рукописная книга VI-XIV веков, Том 1, Москва, Книга, 1991, С. 53.

⁶⁴¹ **Ղազարյան Վ.**, խորանի տեսակները և նշանակությունը// Զ.Հ. հանրագիտարան, 27 Հունիսի, 2017, <http://ter-hambardzum.net/xorani-tesaknereh-ev-nshanakuthyuneh/>, վերջին այց՝ 2020 թ. սեպտեմբեր:

բյուզանդական ավանդույթ է, որը ներթափանցել է հայ արվեստ դեռևս XI դ.⁶⁴²: Բյուզանդական արվեստի այդ տարրը սկզբում արտահայտվել է մինչկիրիկյան, այնուհետև կիրիկյան ձեռագրերում և նրանց միջոցով՝ Թորոս Տարոնացու արվեստում (իր աշխատանքային ուղու սկզբում նա եղել է Կիրիկիայում և այնտեղից է բերել շքեղ զարդարված գրքի նկատմամբ սերը⁶⁴³): Տիտղոսաթերթերի պատկերազարդման ձևավորումները հայ մանրանկարչությունում կանոնական տեսք են ստացել դեռևս Տրապիզոնի Ավետարանում (X-XI դդ., Վենետիկ, 1400/108). «նեղ գլխազարդում... բուսական և կենդանական զարդերով, գլխազարդի վրա՝ խաչ»⁶⁴⁴: Թորոս Տարոնացու տիտղոսաթերթերի գլխազարդերը ուղղանկյուն են, ավելի բարձր, էջի կիսով չափ, ինչը համապատասխանում է XII դ. հայ արվեստում ընդունված ավանդույթին, երբ ավարտվում է տիտղոսաթերթերի վերջնական տեսքի ձևավորումը⁶⁴⁵: Իսկ գլխազարդի վերևամասի խաչը հանդիպում ենք արդեն XI դ. տիտղոսաթերթերում՝ 1053 թ. Ավետարան (Մ⁶⁴⁶: 3793), Մողնու Ավետարան (XI դ., Մ. 7736): Մեր ուսումնասիրած ձեռագրում այն միայն Մարկոսի տիտղոսաթերթում է (էջ 99ա):

Ճակատազարդի անկյուններում պատկերված են ութ կենախաչեր՝ բացառությամբ Մատթեոսի անվանաթերթը, որում դրանք տասն են: Հայկական լեռնաշխարհում կենախաչը հավերժության խորհրդանիշ էր⁶⁴⁷: Կենախաչի հետ մեկտեղ պատմամշակութային հուշարձանների վրա բազմաթիվ են նաև ութաթև արևախաչերը և ութանկյուն աստղերը⁶⁴⁸, որոշ եկեղեցիների հատակազծերը ութանկյուն աստղ են ներկայացնում (Էջմիածնի Մայր Տաճար): Քրիստոնեական գաղափարախոսության մեջ ութը (ութերորդ օր) խորհրդանշում էր Կերպարանափոխությունը, Նոր Կտակարանը և Քրիստոսի Հարությունը⁶⁴⁹: Մենք կարծում ենք, որ ութ կենախաչեր պատկերելով՝ Տարոնացին ցանկացել է հավերժացնել չորս Ավետարանները: Երեք համատես Ավետարանների անվանաթերթերում (Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի) գլխազարդի անկյուններից «աճող» ոսկե ուրվագծով բուսանցազարդերը հանդիպում ենք դեռևս XI-XII դդ. մինչկիրիկյան ձեռագրերում: Մողնու, 1053 թ. Ավետարաններ, XII դ. Ավետարաններ (Մ. 2952, 6264): Մեծաթիվ է այդ տարրը նաև կիրիկյան ձեռագրերում: Տարոնացու արվեստում զգացվում է հարդարման այս ավանդույթը պատկերելու կիրիկյան ազդեցությունը. դրանք ավելի մեծ են ու կատարելագործված: Հովհաննեսի տիտղոսաթերթում ոլորուն պարույրների ֆոնի վրա պատկերված են երկու սիրիններ:

⁶⁴² **Մանուկյան Ս.**, Տեքստաբաժանումները (ռուբրիկացիան) հայկական ձեռագիր ավետարանների գեղարվեստական ձևավորման համակարգում, Սեղմագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Երևան, 2008, էջ 22:

⁶⁴³ **Дурново Л.**, Очерки изобразительного искусства средневековой Армении, издательство Искусство, Москва, 1979, С. 270.

⁶⁴⁴ **Հակոբյան Հ., Ղազարյան Վ.**, ԺԱ դարի գրքարվեստը/Հայկական մանրանկարչություն, Տիգրան Մեծ, Երևան, 2019, էջ 46:

⁶⁴⁵ «Ճակատազարդի չափերը մեծանում են, նա ստանում է ուղղանկյան տեսք, որոնց մեջ պատկերվում է կամարը կամ կամարաշարքը...»: **Մանուկյան Ս.**, Տեքստաբաժանումները (ռուբրիկացիան) հայկական ձեռագիր ավետարանների գեղարվեստական ձևավորման համակարգում, էջ 22:

⁶⁴⁶ Մ. - Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, այսուհետ՝ Մ.:

⁶⁴⁷ Հավերժության նշանն ու հայկական կենախաչը, <https://www.armgeo.am/armenian-eternity-sign/>, վերջին այց՝ 2020 թ. սեպտեմբեր:

⁶⁴⁸ Ութանկյուն աստղը (օկտագրամմա) վերածննդի գաղափարի արտացոլում է, Մր. Ваганян Г., канд. иск. Ваганян В., 2013, <http://www.iatp.am/vahanvan/articles/krest2.htm>, վերջին այց՝ 2020 թ. սեպտեմբեր:

⁶⁴⁹ «Nella simbologia cristiana l'ottavo giorno rappresenta la trasfigurazione e il Nuovo Testamento,...la resurrezione di Cristo...», 12 settembre 2020, [https://it.wikipedia.org/wiki/8_\(numero\)](https://it.wikipedia.org/wiki/8_(numero)), վերջին այց՝ 2020 թ. սեպտեմբեր:

Վերնագրերը

Ավետարանների վերնագրերը գրված են ոսկե մանր գրով՝ գլխազարդի բազմատիպ կտրվածք ունեցող բացվածքի մեջ (Մատթեոս, Յովհաննես) կամ նրանից դուրս՝ ներքևում (Մարկոս, Ղուկաս): Մատթեոսի տիտղոսաթերթում (Էջ 16ա)՝ բացվածքի ներքո, եռամաս կամարները ստեղծում են բազմաձևություն, կենտրոնական կամարի անկյուններում պատկերված են երկու վարդագույն, ոսկե թևերով թռչուններ: Այդ կամարի «գագաթից» դեպի ներքև բուսակերպ զարդամոտիվ է աճում: Մարկոսի տիտղոսաթերթում (Էջ 99ա) ուղղանկյուն բացվածքի ներսում երկնակամարից իջնող բուսազարդի պտուղը համտեսում են նրա շուրջը կանգնած երկու թռչուններ: Ղուկասի տիտղոսաթերթի (Էջ 151ա) շրջանակի ներքին բառանկյուն հատվածում ուղղանկյուն շրջանակը ուրվագծված է ծիրանիով, որն իր մեջ ամփոփում է բուսական և հյուսածո զարդամոտիվներ: Յովհաննեսի տիտղոսաթերթում (Էջ 235ա) Ավետարանի վերնագիրը գրված է եռաթև բացվածքի մեջ: Պատկերազարդման այս տեսակը, այն է՝ անվանաթերթերի վերնագիրը գրված ավելի մանր գրով գլխազարդի տակ կամ ուղղանկյուն բացվածքի մեջ, լայն տարածում է գտնում Կիլիկիայում, սակայն այն հանդիպում ենք դեռևս մինչև կիլիկյան ձեռագրերում՝ Սողոու Ավետարան (1069թ.), Ավետարան (Մ. 10434): Բոլոր տիտղոսաթերթերում վերնագրերը ոսկյա են: Թորոս Տարոնացու արվեստում դա կիլիկյան ավանդույթի ազդեցությունն է: Այնտեղ XII դ. ի վեր, Ս-ձև գլխազարդի բացվածքի ներքո վերնագիրը գրվում էր ոսկով կամ կարմիր թանաքով⁶⁵⁰: Սակայն այդ ավանդույթը ձևավորվում է դեռևս «X դ., երբ հիպոթեզիսները⁶⁵¹ գրվում էին ոսկե կամ կարմիր թանաքով»⁶⁵²:

Գլխատառերը

Ինչպես ընդունված էր հայ մանրանկարչությունում, գլխատառերը պատկերված են ավետարանիչների խորհրդանիշներով: XI դ. այս ավանդույթը հայկական գրքարվեստի անբախտելի մասն է կազմում⁶⁵³: Հայկական ավանդույթում խորհրդանիշների ու գլխատառի համադրման ձևերը, տեսակները, տեսքն ու մեթոդները միանգամայն ինքնատիպ ու տարբերակիչ են⁶⁵⁴: Այն տիտղոսաթերթերի գեղարվեստական ձևավորման ամենաինքնատիպ տարրերից է: Խորհրդանիշները պատկերված են լուսապսակներով և առանց դրանց: Մատթեոսի Ավետարանի անվանաթերթի Գ գլխատառը ձախ անկյունում ավետարանչի խորհրդանիշ մարդ-հրեշտակն է՝ երիտասարդ տարիքի, անմորուս, լուսապսակով, վարսերը սև են, փետրավոր թևերը՝ մուգ շագանակագույն: Թևերից մեկը պարզած է դեպի վեր, մյուսը՝ վար: Լուսապսակը ուրվագծված է սև թանաքով, վրան՝ սպիտակ մարքարտատիպ կետեր: Գլուխը խոնարհված է, հայացքը՝ ուղղված դեպի տեքստը: Ձախ ձեռքը ծալված է, իսկ աջով ոսկյա մատյանն է պարզել դեպի սկզբնատողը: Լուսապսակի նման մատյանի ուրվագիծը սև է, վրայի սպիտակ կետերը որոշակի միասնականություն են ստեղծում

⁶⁵⁰ **Казарян В., Манукян С.**, Книга киликийской Армении//Матенадаран, Армянская рукописная книга VI-XIV веков, С. 104.

⁶⁵¹ Նախադրություն ավետարանիչների, ավետարանների և նրանց զլուխների մասին տեղեկություններով հիշատակարաններ և սրբազան նշանակություն ունեցող անուններ ու բառեր:

⁶⁵² **Մանուկյան Ս.**, Տեքստաբաժանումները (ռուբրիկացիան) հայկական ձեռագիր ավետարանների գեղարվեստական ձևավորման համակարգում, էջ 12; «À partir du Xe siècle... les hypothèses, les colophons et les nomina sacra, les mots sacrés, sont écrits en or ou bien en encre rouge», **Manukyan S.**, Le rôle de la rubrication dans le système décoratif des évangiles arméniennes, 2018, Revue des études arméniennes 38 (2018-2019), P. 89.

⁶⁵³ **Казарян В., Манукян С.**, Иллюстрированная книга XV//Матенадаран, Армянская рукописная книга VI-XIV веков, С. 53.

⁶⁵⁴ **Մանուկյան Ս.**, Տեքստաբաժանումները (ռուբրիկացիան) հայկական ձեռագիր ավետարանների գեղարվեստական ձևավորման համակարգում, էջ 9:

լուսապսակի հետ: Հանդերձանքը՝ կապույտ խիտոն և բաց շագանակագույն պարեգոտ ու ոտնամաններ: Մարկոսի անվանաթերթի Ս սկզբնատառը Ավետարանի խորհրդանիշ գետնին պառկած թևավոր առյուծն է և երկու ֆիգուրներ, որոնք կազմում են Ս տառի ուղղահայաց մասերը: Առյուծը առանց լուսապսակի է՝ թաթերում բռնած ոսկե մատյանը: Նրա շագանակագույն թևերը պատկերված են գլխի և նստուկի մակարդակով, որոնց ետևում կանգնած են ֆիգուրները: Նրանք լուսապսակներով են, երիտասարդ տարիքի, անմորուս: Ղուկասի անվանաթերթում Ք սկզբնատառը կազմված է թևավոր, ամբողջ հասակով վեր ձգված ցուլից, որը գլուխը բարձր նայում է գլխազարդին, առանց լուսապսակ, թաթերում ոսկե մատյանն է, մարմինը երկնագույն է, թևերը՝ շագանակագույն, ուրվագծված է ոսկով: Հովհաննեսի անվանաթերթի էջի գրեթե ամբողջ բարձրությամբ Ի սկզբնատառը կազմված է չորս ավետարանիչների քառակերպ խորհրդանիշներից՝ տետրամորֆից, կամ ապոկալիպտիկ կենդանիներից⁶⁵⁵: Նրանց վերևում երիտասարդ, անմորուս Ամենակալ Քրիստոսն է բազմած, ձախ ձեռքում գալարակն է բռնած, աջը՝ օրհնության դիրքով: Խորհրդանիշները, մեկը մյուսին հաջորդելով, կազմում են Ի տառի ուղղահայաց մասը: Ներքևում առյուծն է, նրա վերևում՝ ցուլը, մարդ- հրեշտակը, իսկ արծիվը կազմում է Ի տառի թևը: Նա իր կտուցով բռնել է ոսկյա մատյանը: Բոլոր խորհրդանիշները թևավոր են, բայց մարդ-հրեշտակն ու արծիվը՝ առանց լուսապսակների:

Տիտղոսաթերթի գլխատառը Ավետարանի խորհրդանիշով պատկերելը լայնորեն տարածված էր Կիլիկիայում: Ձախ անկյունում այն ձգվում է էջի կիսով չափ և գրված է կենդանակերպ երկաթագրով: Տարոնացու արվեստում դա նույնպես կիլիկյան ձեռագրերի ազդեցությունն է, թեև պատկերագրության այդ տարրը ևս հանդիպում ենք բուն Հայաստանի ձեռագրերում արդեն XI դ. երկրորդ կեսից ի վեր: Բոլոր խորհրդանիշները պատկերված են ըստ XIII դ. հայ գրքարվեստում ընդունված ավանդույթի՝ թևավոր են⁶⁵⁶: Եվ չնայած որ խորհրդանիշներից որոշները առանց լուսապսակների են, նրանք պատկերված են իրենց «երկնային» տեսքով, քանզի թևերով են ու մատյաններով⁶⁵⁷: Միգուցե նկարիչը, չչպատկերելով լուսապսակները, հիմք է ընդունել այդ հին ավանդույթը և ցանկացել է ընդգծել խորհրդանիշների «երկնային և երկրային» բնույթները միաժամանակ:

Սկզբնատողերը

Ավանդաբար հայ մանրանկարչության մեջ սկզբնատողերը գրված են երկաթագրով: Նրանք տարբերվում են իրենց մեծ չափերով, կատարված են հյուսածո կամ խճանկարային եղանակով և առնված են ոսկե եզրագծի մեջ: Կատարման այս եղանակը Տարոնացու ծաղկած էջերում ևս կիլիկյան ազդեցության հետևանք է: Կիլիկիայում XII դ. ի վեր գլխատողը մարդակերպ, կենդանակերպ, թռչնակերպ կամ ծաղկազարդ տառերից էր կազմված՝ ուրվագծված ոսկով: Մատթեոսի Ավետարանի տիտղոսաթերթի սկզբնատողը զարդագիր է, հյուսկեն նախշերով գրված «ԳԻՐՔ ԾՆԸՆԴԵ»: Մարկոսի տիտղոսաթերթի առաջին տողը՝ «ՍԿԻԶԲՆ», կատարված է խճանկարային եղանակով, իսկ հաջորդ երկու տողերը, ինչպես ընդունված էր XI- XII դդ. հայկական մինչկիլիկյան գրքարվեստում, ոսկե երկաթագիր են՝ «ԱԻԵՏԱՐԱՆ Ի ՅԻ ԹԻ ՈՐԴԻՈ ՅԱ Յ ՈՐՊԵՍ Ի ԳՐԵ»: Ղուկասի տիտղոսաթերթում այն զարդագիր է՝ «ՔԱՆԶԻ ԲԱԶՈՒՄՔ ՅԱԻԺԱՐԵՑԻՆ»: Հովհաննեսի Ավետարանի տիտղոսաթերթում ծաղկագիր երկաթագրով գրված է՝ «Ի ՍԿԶԲԱՆԷ ԵՐ

⁶⁵⁵ Նույն տեղում:

⁶⁵⁶ **Կորիմազյան Է.**, Բարձր Հայքի մանրանկարչությունը ԺԱ-ԺԴ դդ., «Մատենադարան» Ս. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, Երևան, 2015, էջ 36:

⁶⁵⁷ Խորհրդանիշների «երկրային» տեսքը՝ առանց առանց լուսապսակի, թևերի ու մատյանների, շատ հին ավանդույթ ունի, նույն տեղում, էջ 36:

ԲԱՆՆ ԵՒ ԲԱՆՆ ԷՐ»: Նկարչի հետագա ձեռագրերում գլխատողերը գրված են նաև մարդակերպ, կենդանակերպ, թռչնակերպ եղանակներով:

Լուսանցազարդերը

Էջի բարձրությամբ ծաղկազարդ լուսանցազարդը հարդարում է աջ լուսանցքը: Այն եզերված է ոսկով: Բացի Ղուկասից, Մատթեոսի, Մարկոսի ու Յովհաննեսի անվանաթերթերում այն պսակվում է խաչով: Այս դեպքում լուսանցազարդը պատկերված է պատվանդանի վրա: Մարկոսի ու Յովհաննեսի տիտղոսաթերթերում խաչը շքեղացված է ծիրանագույն զարդերով: Խաչով պսակվող բուսակերպ լուսանցազարդի ավանդույթը լայնորեն կիրառվում էր Կիլիկիայի դպրոցում, որտեղից էլ այն ներթափանցել է Թորոս Տարոնացու նկարազարդված էջեր: Սակայն այն հանդիպում ենք դեռևս հայկական միջկիլիկյան ձեռագրերում՝ X-XI դդ. Տրապիզոնի Ավետարան, XII դ. Ավետարաններ (Մ. 6264, 313) այլև:

Ոսկու գործածումը

Թորոս Տարոնացու նկարազարդումները աչքի են ընկնում ոսկու առատ օգտագործմամբ: Ոսկին խորանների ու տիտղոսաթերթերի խորքում է, լրիվ էջ մանրանկարներում: Ոսկով են եզերված բուսական ու կենդանական մոտիվները, լուսանցազարդերը, գլխատառերը, սկզբնատողերը, Ավետարանների վերնագրերը: Ոսկու առատ օգտագործումը գեղարվեստական յուրահատուկ շքեղություն էր հաղորդում ձեռագրերին: Չարմացնում է նկարչի՝ ոսկու տեխնիկայի բարձր տիրապետումը: Որպես պատկերների հիմք՝ նա օգտագործում է ոսկեթերթ: Դրվագված ոսկին նա օգտագործում էր գլխազարդերում և լրիվ էջ մանրանկարներում: Սկզբից էջը ծածկելով ոսկե շերտով և հետո միայն պատկերազարդելով՝ մանրանկարը «վաճվում էր» «աստվածային լույսով»⁶⁵⁸, ստանում յուրահատուկ փայլ, որը դարեր շարունակ դեռ չի կորչել: Այդ տեխնիկան ծագել ու զարգացում է ապրել դեռևս XI դ. երկրորդ կեսի բյուզանդական ձեռագրերում⁶⁵⁹: Երբեմն գույների կամ ոսկե թերթի տակ դնելով մածուծիկ մի շերտ՝ մանրանկարին տրվում էր որոշակի բազմաշերտություն՝ ռելիեֆայնություն⁶⁶⁰: Այդ տեխնիկան արևմտաեվրոպական ծագման է⁶⁶¹: Դրվագման ու ռելիեֆայնացման այս տեխնիկաները կիրառում էին կիլիկյան վարպետները դեռևս XIII դ. 80-90- ական թթ.-ին⁶⁶²: Ուրվագծերի համար Տարոնացին օգտագործում էր ոսկե ներկ: Դա ևս կիլիկյան ավանդույթ է, որը դառնում է կանոն Արքունական և Յովհաննես արքայազարդ դպրոցների նմուշներում XIII դ. երկրորդ կեսից⁶⁶³: Թորոս Տարոնացին ծանոթ լինելով կիլիկյան դպրոցի ոչ միայն պատկերազարդման առանձնահատկություններին, այլև ձեռագրերի տեխնիկական հնարքներին, օգտագործել է դրանք իր աշխատանքներում:

⁶⁵⁸ Մանուկյան Ս., Տեքստաբաժանումները (Ռուբրիկացիան) հայկական ձեռագիր Ավետարանների գեղարվեստական ձևավորման համակարգում, էջ 26:

⁶⁵⁹ Лазарев В. Н., Столичные рукописи третьей четверти XI века//История византийской живописи, Искусство, Москва, 1986, https://www.icon-art.info/book_contents.php?lng=ru&book_id=29.

⁶⁶⁰ Manoukian S., L'art du livre en Cilicie et les traditions byzantines//L'Arménie et Byzance, Histoire et culture, Publications de la Sorbonne, Paris, 1996, p. 130.

⁶⁶¹ Մանուկյան Ս., Տեքստաբաժանումները (Ռուբրիկացիան) հայկական ձեռագիր Ավետարանների գեղարվեստական ձևավորման համակարգում, էջ 26:

⁶⁶² Казарян В., Манукян С., Книга киликийской Армении//Матенадаран, Армянская рукописная книга VI-XIV веков, С. 130, 146

⁶⁶³ Նույն տեղում, էջ ^{156, 199}: Manoukian S., L'art du livre en Cilicie et les traditions byzantines//L'Arménie et Byzance, Histoire et culture, p. 130.

1307թ. Եսայի Լչեցու Ավետարանի տիտղոսաթերթերի գեղարվեստական ձևավորումների ընդհանրությունները և համեմատությունները այլ ձեռագրերի հետ

Մենք հակիրճ ներկայացրինք 1307թ. Եսայի Լչեցու Ավետարանի տիտղոսաթերթերը՝ ցույց տալով հայ մինչկիլիկյան և կիլիկյան բազում տարրերի առկայությունը սույն ձեռագրում: Տեսնենք, թե գեղարվեստական ձևավորումների ո՞ր տարրերին ենք հանդիպում նկարչի այլ ձեռագրերում: Մատթեոսի անվանաթերթի խորհրդանիշ մարդ-հրեշտակի թևերից մեկը պարզած է դեպի վեր, մյուսը՝ վար: Նույն դիրքով են պատկերված հրեշտակները նույն Ավետարանի «Խաչելություն» (Էջ 143բ), «Յուզաբեր կանայք Քրիստոսի գերեզմանին» (Էջ 145բ) և «Կույսի ավետումը» (Էջ 153ա) տեսարաններում: Նմանակերպ են դրանք Տարոնացու նկարագրողած 1323 թ. Ավետարանի (Մ. 6289) Մատթեոսի Ավետարանի սկզբնաթերթում (Էջ 12ա), «Յուզաբեր կանայք» տեսարանում (Էջ 88ա): Նույն առանձնահատկությունը հանդիպում ենք Թորոս Ռոսլինի արվեստում 1256 թ. Չեյթունի Ավետարանի (Մ. 10450) «Ավետում» տեսարանին մանրանկարում (Էջ 197բ), 1267-1268 թթ. Մալաթիայի Ավետարանի (Մ. 10675) Մատթեոսի Ավետարանի տիտղոսաթերթում (Էջ 16ա): Նմանությունները 1307 թ. Եսայի Լչեցու Ավետարանի և Մալաթիայի Ավետարանի Մատթեոսի Ավետարանի սկզբնաթերթերի մարդ-հրեշտակի պատկերման մեջ են. մարմնի դիրքի (երկու դեպքերում էլ հրեշտակը թեթևակի առաջ է կռացած, գլուխը՝ խոնարհված, հայացքը՝ ուղղված դեպի տեքստը), թևերի դիրքի (մեկը՝ դեպի վեր, մյուսը՝ վար), աջ ձեռքով մատյանը պարզած դեպի սկզբնատողը, կարմիր-շագանակագույն ոտնամանների մեջ: Նմանությունը երկու ավետարաններում նաև սկզբնատողերի խճանկարային պատկերագարոման մեջ է: 1307 թ. Ավետարանի Մարկոսի անվանաթերթի խորհրդանիշ սկզբնատառ ցույց կարելի է համեմատել Մալաթիայի Ավետարանի Մարկոսի սկզբնատառի հետ (Էջ 103ա): Թեպետ խորհրդանիշ տառերը նմանությամբ կրկօրինակված չեն, սակայն մեր կարծիքով Թորոս Տարոնացին ոգեշնչվել է Ռոսլինի սույն ձեռագրից: Տարոնացու գլխատառը տարբերվում է Ռոսլինի գլխատառից միայն մեկ առանձնահատկությամբ՝ Ռոսլինի Ս տառի մեջտեղում պատկերված է մեկ ֆիգուր՝ Քրիստոսը: Ղուկասի անվանաթերթի խորհրդանիշ Ք սկզբնատառը նույնն է, ինչ 1323թ. Ավետարանում (Էջ 141ա): Նմանակերպ է Կիլիկիայում ընդօրինակված XIII դ. Ավետարանի Ղուկասի Ավետարանի խորհրդանիշ սկզբնատառը (Մ. 7648, Էջ 136ա): Յովհաննեսի Ավետարանի անվանաթերթի Ի գլխատառը՝ կազմված չորս ավետարանիչների քառակերպ խորհրդանիշ տետրամորֆից, չնչին տարբերությամբ, սակայն նմանվում է 1323թ. Տարոնացու Ավետարանի Յովհաննեսի անվանաթերթի գլխատառին (Էջ 226ա): Երկու ձեռագրերում խորհրդանիշների հաջորդականությունը նույնն է՝ առյուծը, ցուլը, մարդ-հրեշտակը, արծիվը, որը կազմում է Ի տառի թևը, վերևում երիտասարդ, անմորուս Քրիստոսը: Երկուսում էլ բոլոր խորհրդանիշները թևավոր են, և միայն երկուսը՝ լուսապսակներով: Իհարկե, նկարչի ուշ շրջանի ձեռագրերում պատկերագարոման գեղարվեստական լեզուն ավելի արտահայտիչ է, զգացվում է նրա մասնագիտացված, ավելի հասուն, վստահ ձեռքը ֆիգուրների, դեմքերի, կենդանակերպ ու բուսակերպ հարդարանքի պատկերման և գունապնակի ընտրության մեջ: Մեր համոզմամբ՝ գլխատառի նմանատիպ ձևավորումը բխում է կիլիկյան ավանդույթից: Յովհաննեսի անվանաթերթի Ի սկզբնատառը որոշակի տարբերությամբ (խորհրդանիշների հերթականությունը տարբեր է և գահակալ Քրիստոսը՝ բացակա) հանդիպում ենք Կիլիկիայում ընդօրինակված ձեռագրերում՝ 1290թ. Ավետարան (Մ. 5736, Էջ 245ա), 1293թ. Ավետարան (Մ. 5784, Էջ 280ա):

Թորոսի ոճը թեպետ արևելյան է, որում հիմնականում արտացոլված են Բուն Չայաստանի ոճական ավանդույթները, որոնք զգացվում են Տերունական պատկերներում, ֆիգուրների հանդիսավորության և կոթողայնության, բնապատկերի, ճարտարապետական խորքի, գունապնակի, ինչպես նաև արևելյան դեմքերի մշակման

մեջ⁶⁶⁴: Նրա ծաղկած էջերում անշուշտ զգացվում է կիլիկյան արվեստի ազդեցությունը, ինչը արտահայտված է ոչ միայն անվանաթերթերի, այլև խորանների, լուսանցազարդերի տարրերի մշակման մեջ:

Եզրակացություն

Հոդվածում մենք զուգահեռներ անցկացրինք և համեմատություններ արեցինք Թորոս Ռոսլինի և կիլիկյան այլ ձեռագրերի հետ: Համոզվեցինք Տարոնացու արվեստում Ռոսլինի ոճական առանձնահատկությունների առկայության մեջ: Կարող ենք եզրահանգել, որ հենց Թորոս Ռոսլինի ձեռագրերն են ոգեշնչել Տարոնացուն, որի արվեստը նա առանձնապես է գնահատել և փորձել հավերժացնել իր ձեռագրերում: Թորոս Տարոնացու և Թորոս Ռոսլինի ստեղծագործությունների համեմատությունը թույլ է տալիս նրանց համարել հայ միջնադարյան արվեստի «երկու հանճար Թորոսներ»:

Թորոս Տարոնացու նկարազարդած տիտղոսաթերթերը ունեն յուրահատուկ հմայք, ինքնատիպ ճոխություն, զարմացնում են իրենց արտահայտիչ լեզվով: Բուսակերպ, կենդանակերպ ու թռչնակերպ մոտիվները աշխուժություն ու կենդանություն են հաղորդում նկարազարդված էջերին: Իրական ու երևակայական թռչուններից բաղկացած հարդարանքը կատարված է վարպետությամբ, ճկունությամբ: Բազմապիսի բուսազարդ հարդարանքը առանձնանում է կատարման երկրաչափական ճշգրտությամբ: Գունապնակի ընտրանու չճշացող գույները ներդաշնակությամբ համատեղվում են ոսկու հետ: Չնայած հետազոտվող ձեռագիրը նրա առաջին ձեռագրին է, պատկերազարդման բոլոր տարրերը կատարված են մանրակրկիտությամբ, ինչը բնորոշում է ձեռագրի պատկերազարդման բարձր գեղարվեստական որակը: Նկարչի արվեստը նրանով է հետաքրքիր ու գրավիչ, որ դրանում արտացոլված են մանրանկարչական տարբեր դպրոցների պատկերազարդման ավանդույթները: Օգտագործելով այդ հարուստ գեղարվեստական փորձը, երևակայությունն ու մտքի թռիչքը՝ նա կարողացել է ստեղծել իր սեփական, եզակի լուծումներ ունեցող մանրանկարները:

TITLE PAGES DECORATION IN THE ART OF TOROS TARONATSI (THE GOSPEL OF YESAI NCHETSI 1307)

NAIRA NAZARYAN

*National Academy of Sciences, Institute of Arts, Applicant;
Yerevan, Republic of Armenia*

The article is dedicated to the title pages by Toros Taronatsi, a miniaturist of the first half of the XIV century of Gladzor University. Many authors, such as S. Ter-Nersesyan, L. Durnovo, A. Avetisyan, E. Korkhmazyan, V. Ghazaryan, speaking about the Gladzor School of miniature, in their works referred to the art of Toros Taronatsi: But his legacy has not been thoroughly explored to this day yet. Our choice fell on studying the art of Taronatsi for this very reason. The artist's art is interesting and attractive because it reflects the traditions of various schools miniature painting.

The main objective of the article is the analysis of the main components that make up the title pages illustration system: rectangular illuminations, titles, initials, rubrics, marginals. The study used complex methods of artistic analysis.

⁶⁶⁴ **Հակոբյան Յ., Կորիմագյան Է.,** Բուն Հայաստանի մանրանկարչությունը (XIII-XIV դդ.)// **Չաբարյան Լ., Դրամիյան Ի., Կորիմագյան Է., Հակոբյան Յ.,** Հայկական մանրանկարչություն, Երևան, 2014, էջ 45: **Հակոբյան Յ., Ղազարյան Վ.,** Գլաձորի մանրանկարչական դպրոցը // Հայկական մանրանկարչություն, էջ 72:

Studying the title pages of Taronatsi, we came to the conclusion, that there is an Armenian pre-Cilician and Cilician elements in the work of the master. Drawing parallels with the Cilician manuscripts, we made sure that the title pages contain especially Roslin elements. Comparison of the works by Toros Taronatsi and Toros Roslin allows us to call them “two brilliant Toroses” of medieval Armenian art.

Keywords: *Gladzor, Toros Taronatsi, miniature, title page, rectangular illumination, initial, Gospel.*

ХУДОЖЕСТВЕННОЕ ОФОРМЛЕНИЕ ТИТУЛЬНЫХ ЛИСТОВ В ИСКУССТВЕ ТОРОСА ТАРОНАЦИ (ЕВАНГЕЛИЕ ЕСАИ НЧЕЦИ 1307 ГОДА)

НАИРА НАЗАРЯН

*соискатель института искусств НАН РА,
г. Ереван, Республика Армения*

Статья посвящена титульным листам миниатюриста первой половины XIV в. Гладзорского университета Тороса Таронаци. Многие авторы, говоря о гладзорской школе миниатюр, ссылаются в своих трудах на искусство Тороса Таронаци: С. Тер-Нерсисян, Л. Дурново, А. Аветисян, Э. Корхмазян, В. Казарян. Однако его наследие до сегодняшнего дня еще не достаточно изучено, и именно этим обстоятельством обусловлен выбор темы данного исследования. Искусство художника интересно и привлекательно тем, что в нём гармонично соединяются традиции различных школ миниатюры.

Главной задачей статьи является анализ основных компонентов, составляющих систему иллюстрирования титульных листов: заставки, заглавия, инициалы, рубрики, маргиналии. В исследовании использованы комплексные методы художественного анализа. Изучая титульные листы Таронаци, мы пришли к выводу, что в творчестве мастера присутствуют армянский докиликийский и киликийский элементы. Проводя параллели с киликийскими рукописями, мы убедились, что в титульных листах Таронаци выделяются характерные для почерка Тороса Рослина элементы. Сравнение произведений этих двух миниатюристов позволяет назвать их «двумя гениальными Торосами» средневекового армянского искусства.

Ключевые слова: *Гладзор, Торос Таронаци, миниатюра, титульный лист, заставка, инициалы, Евангелие.*



1307թ. Եսայի Նչեցու Ավետարան, Ղուկասի Ավետարանի տիտղոսաթերթը, էջ 151ա



1307թ. Եսայի Նչեցու ավետարան, Մատթեոսի ավետարանի տիտղոսաթերթ, էջ 16ա



1318թ. Եսայի Նչեցու աստվածաշունչ, Մարկոսի Ավետարանի տիտղոսաթերթ, էջ 461ա



1323թ. ավետարան, Հովհաննեսի Ավետարանի տիտղոսաթերթ, էջ 226ա

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄՈՂԵՌՆԻՉՄԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ XX ԴԱՐԻ ԻՐԱՆԻ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՉ (1920-1980 ԹՎԱԿԱՆՆԵՐ)*

ՅՏԴ 7.03:75.056:091

DOI: [10.52063/25792652-2021.1-250](https://doi.org/10.52063/25792652-2021.1-250)

ՉԱՅՐԱ ՄԱԼԵՔԻ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ,
բ. Շիրապ, Իրանի Իսլամական Հանրապետություն
sepide_825@yahoo.com

Յոգվածի նպատակն է ուսումնասիրել եվրոպական նորարարական արվեստի ոճական տարբեր ուղղությունների արձագանքները 20-րդ դարի, մասնավորապես 1920-1980 թվականների Իրանի կերպարվեստում: Հետազոտության խնդիրներն են՝ անդրադառնալ Զյամալ ալ Մոլթի նախաձեռնությամբ թեիրանում 1920-ին հիմնադրված Գեղանկարչության և քանդակագործության ուսումնարանում դասավանդած վարպետներ Հոսեյն Բեհլադի, Անդրե Սևրյուզիսի և Հասանալի Վալիրիի գործունեությանը, ձևակերպել Իրանում նորարարական շարժման առաջնորդներ Քալալ Չիափուրի, Ահմադ Էսֆանդիարի, Մարկոս Գրիգորյանի և Սոհրաբ Սեփեհրիի, ինչպես նաև Սադդախանե շարժման առաջնորդներ Հոսեյն Չենդերուդիի և Փարվիզ Թանավոլիի ներդրումը իրանական կերպարվեստում:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են արվեստագիտության մեջ լայնորեն կիրառվող նկարագրական, պատկերագրական և քննական-համեմատական մեթոդները:

Վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ եվրոպացի արվեստագետների ազդեցությունն Իրանի նկարիչների վրա առավելապես վերաբերում է արտաքին ձևերին ու տեխնիկական կատարմանը: Իրենց արվեստում հարելով եվրոպական մոդեռնիզմի տարբեր ուղղություններին՝ իմպրեսիոնիզմին, պոստիմպրեսիոնիզմին, կուբիզմին, վերացական արվեստին ու սյուրռեալիզմին՝ միևնույն ժամանակ իրենց մշակութային ինքնությունը պահպանելու նպատակով նրանք հենվում էին ազգային դարավոր ավանդույթների վրա:

Հիմնաբառեր՝ Իրանի նկարչություն, եվրոպական մոդեռնիզմ, Հոսեյն Բեհլադ, Անդրե Սևրյուզիս, Ահմադ Էսֆանդիարի, Մարկոս Գրիգորյան, Սոհրաբ Սեփեհրի, Սադդախանե շարժման առաջնորդներ:

Ներածություն

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ անկախության ձգտող ասիական երկրներում նոր, աննախադեպ թափ ստացան ազգային-ազատագրական շարժումները, ավանդական շատ հասարակություններում ավելի սրվեց տնտեսական, սոցիալական ու մշակութային բարեփոխումների անհրաժեշտության հարցը:

Իրանում նույնպես տեղի ունեցան մի շարք փոփոխություններ, որոնց արդյունքում արվեստում ձևավորվեց և հետզհետե ակտիվացավ մոդեռնիստական միտումը: Իրանական կերպարվեստի հետագա ընթացքի համար կարևոր դեր խաղաց մասնավորապես թեիրանում 1920-ին Զյամալ ալ Մոլթի նախաձեռնությամբ բացված Գեղանկարչության և քանդակագործության ուսումնարանը, որն արդեն բավականին հասուն տարիքում հաճախած և հետագայում այնտեղ դասավանդած առավել հայտնի

* Յոգվածը ներկայացվել է 08.03.2021թ., գրախոսվել՝ 12.03.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

վարպետներից էին Յոսեյն Բեհգադը (1894-1968), Անդրե Սևրյուզինը (1894-1996) և Հասանալի Վազիրին (1899-1954):

Յոսեյն Բեհգադ

Յետևելով Քյամալ ալ Մոլթի օրինակին՝ Յոսեյն Բեհգադն իրանական ավանդական նկարչության մեջ ներմուծեց եվրոպական ուշ ակադեմիզմին ու նատուրալիզմին հատուկ բնապաշտական տարրեր: Իր կյանքի ընթացքում նա վրձնեց շուրջ 400 նկար, որոնց մեծ մասի թեմատիկ ու կերպարային բովանդակությունը սերտորեն կապված էր պարսից դասական տաղերգության՝ Ռուդաբիի, Ֆիրդուսու, Սաադիի և Հաֆեզի բանաստեղծական երկերի հետ: Յոսեյն Բեհգադը համաշխարհային հռչակ վայելող արվեստագետ էր: Նա նոր շունչ հաղորդեց պարսկական մանրանկարչությանը՝ այն օժտելով գեղարվեստական թարմ, ժամանակակից դիմագծերով: Նրա ստեղծագործություններում առկա մարդկանց կերպարները, ներկայացված իրավիճակներն ու տեսարանները ստացան հոգեբանական որոշակի խորություն և ռեալիստական համոզիչ ձևեր: Ինչպես նկատել է Ալիռեզա Յագդանին՝ «նախկինում եղած մանրանկարներում սովորյալ գոյություն չունեին: Յոսեյն Բեհգադն առաջին անգամ դրանք կիրառեց մանրանկարչության մեջ: Եթե մինչև այդ մանրանկարը հիմնականում նախատեսվում էր գրքերի նկարազարդման համար, և դրա չափերը համեմատաբար փոքր էին, ապա Բեհգադը խոշորացրեց մանրանկարի չափսերն ու դրան տվեց ինքնուրույն նշանակություն»⁶⁶⁵:

Անդրե Սևրյուզին՝ «Դարվիշ»

Միջազգային ճանաչում գտավ նաև «Դարվիշ» ստեղծագործական ծածկանունով ներկայացող իրանահայ մանրանկարիչ Անդրե Սևրյուզինը, որը Իրանի առաջին լուսանկարիչներից մեկի՝ Աստուան հասն Սևրյուզինի (1830-1933) զավակն էր: Հենվելով միջնադարյան պարսկական մանրանկարչության, առաջին հերթին՝ Քյամալ ալ Էդդին Բեհգադի և Ռեզա Աբբասիի արվեստի վրա և ստեղծագործաբար յուրացնելով այն՝ նա յուղաներկով ու ջրաներկով վրձնեց հարյուրավոր կտավներ ու մանրանկարներ, որոնցից շատերը վկայում են պարսից դասական գրականության հանդեպ նրա տածած խոր ու տևական հետաքրքրության մասին: Առավել հայտնի են Անդրե Սևրյուզինի՝ Ֆիրդուսու «Շահնամեի» մոտիվներով ներշնչված աշխատանքները, Օմար Խայամի ու Հաֆեզի բանաստեղծությունների, ինչպես նաև հայ հանճարեղ աշուղ Սայաթ-Նովայի խաղերի պատկերազարդումները:

Հասանալի Վազիրի

1934-ին Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Մեծ Բրիտանիայում ու Գերմանիայում անհատական մի շարք ցուցահանդեսներով հանդես եկած ու արևմտյան քննադատների ուշադրությունը գրաված Հասանալի Վազիրին իմպրեսիոնիստական ոճով կատարված իր կտավներին՝ բնանկարներին ու կենցաղային տեսարաններին տվել է արևելյան վառ, դեկորատիվ գունավորում: Նկարչի սյուժետային պատկերներից շատերում կարելի է հանդիպել պարսից դասական գրականությանից, մասնավորապես Ռումիի ու Հաֆեզի տաղերգությունից մեզ ծանոթ բանաստեղծական թեմաների ու կերպարների⁶⁶⁶:

⁶⁶⁵ Ալիռեզա Յագդանի, Իրանական արվեստի տեսարժան նմուշներն Ազգային արխիվում, «Նեշան», Թեհրան, 2008, հ. 15, էջ 78: تهران. مجله نشان. شماره 15. علیرضا یزدانی. جلوه های هنر ایرانی در اسناد ملی. مجله نشان. شماره 15. زمستان 2008, صفحه 78.

⁶⁶⁶ Տե՛ս Հասանալի Չերալի, Առաջին իրանցի նկարիչն Ամերիկայում, «Գոլջարխ» Թեհրան, 1993, հ. 1, էջ 32-39: از. شماره یک. تهران. 1993. مجله گلچرخ. سال اول. نخستین نقاش ایرانی در آمریکا. مجله گلچرخ. سال اول. شماره یک. تهران. 1993. صفحه 32 تا 39.

1941-ին՝ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ, Մեծ Բրիտանիայի և Խորհրդային Միության կողմից Իրանի վրա հարձակվելուց հետո շահ Ռեզա Փահլավին (1878-1944) հրաժարվեց թագից, և գահ բարձրացավ նրա որդին՝ Սոհամմադ Ռեզա Փահլավին (1919-1980): Պարսկաստանում ստեղծվեց քաղաքական նոր իրավիճակ, և երկրում ի հայտ եկան իրար հակասող տարբեր գաղափարներ:

Գեկորատիվ արվեստների բարձրագույն դպրոցը՝ Նորարարական շարժման բարձրակետ

Նկարիչներից ու քանդակագործներից շատերը փորձում էին գտնել գեղարվեստական նոր արտահայտչամիջոցներ: Այս նորարարական շարժման բարձրակետը դարձավ 1959 թվականը, երբ Թեհրանում բացվեց Գեղարվեստական համալսարանը (Գեկորատիվ արվեստների բարձրագույն դպրոց)⁶⁶⁷: Այսպիսի քաղաքական պայմաններում նախորդ տարիների համեմատ ավելի ընդգծվեց ժամանակակից քաղաքակիրթ աշխարհի, առաջին հերթին՝ Արևմուտքի հետ հաղորդակցվելու, ստեղծագործական փոխադարձ կապեր հաստատելու ցանկությունը:

Գեղարվեստական համալսարանն իր գործունեությունն սկսեց ֆրանսիացի իրանագետ ու արվեստաբան Անդրե Գոդարի տնօրենությամբ: Ֆրանսիայից հրավիրված մասնագետներն ու Զյամալ ալ Մոլթի աշակերտներից մի քանիսը ևս լծվեցին դասախոսական աշխատանքին: Համալսարանի առավել օժտված շրջանավարտներն ուղարկվեցին եվրոպական երկրներ, որտեղ ծանոթացան ժամանակակից արվեստի նորագույն դպրոցներին և ուղղություններին, կատարելագործեցին իրենց տեխնիկական հմտությունը: Վերադառնալով հայրենիք՝ նրանք Նոր էջ բացեցին Իրանի կերպարվեստի պատմության մեջ: Առաջ եկավ նորարարական՝ ավանդապաշտ արվեստագետների և Զյամալ ալ Մոլթի հետևորդների, մյուս կողմից՝ երիտասարդ նորարարների միջև:

Զյամալ ալ Մոլթի սաներից վերջինը՝ Հոսեյն Խանը (1910-1991), նորարարական արվեստի վերաբերյալ հայտնել է հետևյալ՝ ծայրահեղ ժխտողական կարծիքը. «Իրանի նոր գեղանկարչության ռեալիստական հիմքերը դրեց Զյամալ ալ Մոլթը, իսկ այսպես կոչված «նորարարական» արվեստն անիմաստ է՝ մի արվեստ, որը դիտելիս մարդիկ զարմացած ու տարակուսած հարցնում են. «Սա ի՞նչ է»⁶⁶⁸: Մինչդեռ 1946-ին կայացած Իրանի և Խորհրդային Միության մշակութային համատեղ ցուցահանդեսում Զյամալ ալ Մոլթի սաների ներկայացրած աշխատանքներից շատերն ունեին իմպրեսիոնիստական միտում: Կային նաև այնպիսի արվեստագետներ, որոնք ավելի առաջ գնացին՝ հակվելով պոստիմպրեսիոնիզմին:

Բայց հարկ է նշել, որ եվրոպացի արվեստագետների ազդեցությունն իրանցիների վրա առավելապես վերաբերում է արտաքին ձևերին ու տեխնիկական կատարմանը: Ինչպես գտնում է Մեիր Շարիֆին, «բովանդակության տեսակետից նրանց աշխատանքներն ընկալվում են որպես ազգային մտածողության արգասիք»⁶⁶⁹: Այլ կերպ ասած՝ իրանցի նորարար արվեստագետները մի կողմից հակված էին դեպի արևմտյան արվեստն ու գեղարվեստական նոր երևույթները, իսկ մյուս կողմից իրենց մշակութային

⁶⁶⁷ Տե՛ս **Սոհամմադ Հադի**, Իրանի ժամանակակից գեղանկարչության առաջին ուսուցիչը, «Հոնար», Թեհրան, 1987, հ. 13, մարտ, էջ 102: «فصلنامه هنر «محمد هادی». نخستین معلم نقاشی نوین ایران. شماره 13. از صفحات 102. مارس 1987.

⁶⁶⁸ Տե՛ս **Ահմադ Ռեզա Դավանդ**, Իրանցի արվեստագետներ. ուսումնասիրել արվեստը Արևմուտքից, «Թանդիս», Թեհրան, 2008, հ. 136, էջ 10-11: «احمد رضا دالوند. بررسی دستاورد نقاشان ایرانی از: صفحه 10. شماره 136. «تندیس» هنر غرب. 11 نوامبر 2008.

⁶⁶⁹ **Մեիր Շարիֆի**, ժամանակակից նկարչությունը Իրանում **مهری شریفی. «نقاشی نو در ایران»**: (2013.11.10): <http://sharifimehr.blogfa.com/post-104.aspx>

ու ազգային ինքնությունը դրսևորելու, ցուցաբերելու համար նրանք հենվում էին ավանդական պատկերացումների ու մտայնության վրա:

Զալալ Չիափուր

Իրանի արվեստում նորարարական շարժման առաջնորդներից էր Զալալ Չիափուրը (1920-1999), որ նույնպես մեկնել էր Եվրոպա՝ ծանոթանալու եվրոպական արդի մշակույթի հետ: Փարիզում ֆրանսիացի անվանի գեղանկարիչ, քանդակագործ և արվեստի տեսաբան Անդրե Լորթի արվեստանոցում, նա ծանոթացավ կուբիզմի հետ⁶⁷⁰: Իսկ երբ 1949-ին վերադարձավ Իրան, մի խումբ մտավորականների, բանաստեղծների, նկարիչների ու երաժիշտների աջակցությամբ ստեղծեց «Աքլորակոմիվ» միավորումը, որի նպատակն էր պայքարել հնապաշտության ու ավանդապաշտության դեմ: Այն հարցին, թե ինչու՞ որոշվեց միավորումն անվանել «Աքլորակոմիվ», Չիափուրը պատասխանել է. «Աքլորն արտաքինից ուժեղ և նախահարձակ կենդանի է և գունային առումով շատ ակնառու: Նա մի կարևոր պարտականության ունի՝ արթնացնել մարդկանց: Աքլորի գեղեցիկ, գունագեղ արտաքինը մոտ է գեղանկարչությանը, և նա կռվելու ու պայքարելու խորհրդանիշն է»⁶⁷¹:

Խումբը մեծ ոգևորությամբ սկսեց քարոզել մոդեռնիստական գեղակարչության սկզբունքները, իսկ 1950-ից ի վեր կազմակերպեց բազմաթիվ ցուցահանդեսներ: Թեև Չիափուրին անվանում էին կուբիստ, սակայն շուտով նա գտավ իր սեփական ոճը, որի հիմքում ընկած էին ավանդական նկարչության պարզեցված տարրերը: Դա կոչվում էր «ձևերի պարզեցում»: «Չիափուրի ստեղծագործություններն իրանական ազգային, ավանդական արվեստը միախառնում են կուբիստական երկրաչափական արվեստի հետ, բայց, այսուհանդերձ, աչքի են ընկնում իրենց ներդաշնակությամբ: Չիափուրը փորձում է կուբիստական ոճը պատվաստել իրանական գեղանկարչության դարավոր բնին»⁶⁷²: Նա ցանկանում էր իրանցի արվեստագետների սովորեցնել մտածել ավելի պարզ ու ճիշտ: Չիափուրն անընդհատ կրկնում էր. «Ես ուզում եմ ներշնչվելով մեր գեղարվեստական հինավուրց ժառանգության լավագույն օրինակներից, բայց դրանք բնավ չընդօրինակելով՝ նորովի բացահայտել մեր ազգային ինքնությունը»⁶⁷³:

Ահմադ Էսֆանդիարի

Կուբիզմից բացի, իրանցի նորարար արվեստագետները հակված էին նաև եվրոպական այլ ուղղություններին՝ իմպրեսիոնիզմից ու պոստիմպրեսիոնիզմից մինչև վերացական արվեստն ու սյուրռեալիզմը: Իրանցի իմպրեսիոնիստների ստեղծագործությունները, որոնք սերտ կապի մեջ էին մարդկանց առօրյա կյանքի հետ և ունեին իրապաշտական ձևեր, արվեստասերների շրջանում ավելի մեծ համակրանք էին վայելում, քան մոդեռնիստական ոճերին հարող աշխատանքները: Այս գեղանկարիչներից առաջին հերթին հարկ է նշել Ահմադ Էսֆանդիարիի (1922-2013) անունը, որը միջազգային ճանաչում գտավ: Նրա կտավների թիվը հասնում է շուրջ 8000-ի⁶⁷⁴: Ակադի

⁶⁷⁰ Տե՛ս **Հոսեյն Միր Աբեդիևի**, Իրանի նովելագրության 100 տարին, Թեհրան, Չեշմե հրատարակչություն, 1998, էջ 192: صفحه 198. نشر چشمه. تهران. ایران. نويسی ايران. صد سال داستان حسين ميرعابدینی.

⁶⁷¹ Տե՛ս **Փարվիզ Թանավոյի**, Արվեստի պատմություն, Թեհրան, Գիտամշակութային հրատարակչություն, 1984, էջ 315: صفحه 315. نشر علمی و فرهنگی. تهران. تاریخ هنر. تاریخ هنر. پرویز تناولی.

⁶⁷² **Ֆարզանե Փուրյասաման**, Զերմանի դեղին արևն ու կապույտ սալիկները: ժամանակակից դիզայնի միջազգային առաջին ցուցահանդեսի կատալոգ, Թեհրան, 1999, էջ 9-11: نشر آفتاب کرمان و ابی کاشی ها. نشریه اولین نمایشگاه بین المللی طراحي معاصر. تهران. شماره. 9-11. نوامير. فرزانه پورياسمن.

⁶⁷³ **Նույն տեղում**, էջ 10:

⁶⁷⁴ Տե՛ս **Հատված Ահմադ Էսֆանդիարիի մասին պատմող վավերագրական ֆիլմից** (ռեժիսոր՝ Ֆարիվար Համգեի), <http://www.youtube.com/watch?v=bGSmEooXLRk> (2014.05.16):

լեզուներով, այդ թվում նաև՝ հայերենով⁶⁷⁷: Սոհրաբ Սեփեհրիի ստեղծագործությունները պատճառ դարձան, որ գեղանկարչությունն ու բանաստեղծությունը կրկին սերտորեն շաղկապվեն: Նա մի բանաստեղծ էր, որ շատ լավ էր ճանաչում գեղանկարչությունը և ի վերուստ օժտված էր գեղանկարչի շնորհով: Օգտվելով այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ ռիթմը, ժամանակը, շարժումը և միախառնելով այդ ամենը՝ նա ստեղծում էր բանաստեղծական ու նկարչական ինքնատիպ երկեր: Սեփեհրիի չափածո գրվածքներից շատերը, օրինակ՝ «Դաշտերի լռության մեջ» և «Անապատի ոսկե բլուրների մեղմ ուրվագծերը» հայտնի բանաստեղծությունները, գրականության ու գեղանկարչության, խոսքային ու տեսողական արվեստների միաձուլման հրաշալի նմուշներ են: Նրա զգայական ու մտավոր աշխարհը հետաքրքիր է շատերի համար: Սեփեհրին ստեղծագործում էր՝ ներդաշնակորեն համադրելով բառն ու զույնը, զիծն ու հնչյունը: Նրա ստեղծագործություններում մշտապես առկա է Արևելքի միստիկական ոգին: Նա խորհում և խոսում էր կյանքի ու մահվան մասին իրականության ու երագի միջև գտնվող տարածության մեջ: Սեփեհրիի՝ երկրաչափական մարմիններ պատկերող աշխատանքները, որոնք ինչ-որ տեղ հիշեցնում են Վասիլի Կանդինսկու վերացական հորինվածքները, տարբերվում են իրանցի մյուս արվեստագետների գործերից և Իրանի իսլամական հեղափոխությունից հետո նկատելի ազդեցություն թողեցին հետհեղափոխական սերնդի ստեղծագործության վրա: «Իմ նկարչությունը, - խոստովանել է վարպետը, - կարծես գունավոր երաժշտություն լինի»⁶⁷⁸:

Սաղղախանեի նկարչությունը

Իրանում Նորարարական կերպարվեստի հաստատմանը նպաստած երևույթներից էր նաև Սաղղախանեի նկարչությունը: Սաղղախանեն ևս Նորագույն ժամանակաշրջանի ծնունդ էր, երբ մի խումբ իրանցի արվեստագետներ, համադրելով ազգային ու եվրոպական ավանդույթները, փորձում էին ստեղծել գեղարվեստական Նոր ոճ: Նրանց առաջին գործերը կատարվել են ուխտավայրերում և մահմեդական մատուռներում, և այդ իսկ պատճառով դպրոցը կոչվում է «սաղղախանե», այսինքն՝ սրբավայր, որտեղ մարդիկ աղոթում ու մոմեր են վառում: Սաղղախանեի շարժումը սկիզբ առավ 1961-ին, երբ մոդեռնիզմը գնալով զարգանում էր և դրան զուգահեռ՝ սրվում էին հակասությունները ավանդապաշտների ու Նորարարների միջև: Հենց այդ իրավիճակում էլ իրանցի մի շարք գեղանկարիչներ հիմնեցին Սաղղախանեի դպրոցը, որը խորապես ազդեց իրանական արվեստի վրա: «Սաղղախանե շարժումը կարելի է անվանել Նոր ավանդական շարժում, կամ ինչպես ասում են՝ Նոր ավանդականություն»⁶⁷⁹: Այն ներառում է Իրանի ժողովրդական մշակույթն ու արվեստը: Մի շարք արվեստագետներ, որոնք քաջատեղյակ էին Իրանի մշակույթից ու պատմությունից, փորձեցին ստեղծել լեզվով արդիական, ժամանակակից գործեր՝ դրանցում, սակայն, պահպանելով ու շեշտադրելով իրանական ազգային հոգևոր արժեքները:

Սաղղախանե շարժման առաջնորդներից է գեղանկարիչ, «Կալիգրաֆ» շարժման հիմնադիր **Հոսեյն Չենդերուզին** (ծն. 1937)⁶⁸⁰: «Օգտագործելով իրանական

⁶⁷⁷ Տե՛ս **Սոհրաբ Սեփեհրի**, Կանաչ ծավալ: Բանաստեղծություններ և պոեմներ (թարգմանիչ՝ Էդուարդ Հախվերդյան), Ե., «Վան Արյան» հրատարակչություն, 2000թ.:

⁶⁷⁸ **Հասան Մուրիդինեջադ**, Իրանի Իսլամական հեղափոխության ժամանակաշրջանի գեղանկարչությունը, «Թանդիս», Թեհրան, 2007, հ. 92, էջ 6: حسن موریزی نژاد. هنرمندان معاصر ایران. دو هفته. نامه تندیس. 2007. شماره 92. صفحه از تا 6.

⁶⁷⁹ **Զարիմ Ինամի**, Ներածություն գրքույկը (Ղանդիզի Ֆուցահանդես) Բորգեզի սրահ, Թեհրան 1966: مقدمه بروشور (نمایشگاه آثار قندریز)، گالری بزرگ، تهران، 1966. کریم امامی.

⁶⁸⁰ «Կալիգրաֆ» շարժման ներկայացուցիչներն իրենց ստեղծագործություններում ձգտում էին համադրել նկարչական պատկերավոր և գեղագրական զարդային տարրերը՝ Նորովի մեկնաբանելով ու կիրառելով պարսկական միջնադարյան մանրանկարչության ավանդույթները:

ավանդական խորհրդանիշերն ու գեղագրությունը, նա իրանական արվեստում ստեղծեց նոր ոճ»⁶⁸¹:

Հոսեյն Չենդերուդիի ստեղծագործություններում մշտապես առկա է բնության տարերթը՝ հողը, ջուրը, օդն ու կրակը: Ֆրանսիացի արվեստաբան Ժան-Կլոդ Կառի խոսքերով՝ «ծանոթանալով Չենդերուդիի ստեղծագործություններին, մենք ականայից վերանում ենք այն ձևերից, շրջակա իրականությունից ու մթնոլորտից, որոնցում ապրում և որոնց հետ շփվում ենք առօրյա կյանքում»⁶⁸²:

Սաղղախանեի գեղանկարչության հիմնադիրներից է նաև **Փարվիզ Թանավոյին** (ծն. 1937): Նա մեծ դեր է կատարել այդ շարժման ձևավորման ու կայացման գործում: Թանավոյին զարգացրեց Սաղղախանեի նկարչությունը, իսկ նրա ավագ և կրտսեր գործընկերներից ու հասակակիցներից յուրաքանչյուրն ընտրեց շարժման իր սեփական ուղին ու ճյուղավորումը: Նրանցից են Ֆիրդուսու «Շահնամին» բազմիցս անդրադարձած Հոսեյն Հոլլեբադասին (1902-1966) և պարսից դասական տաղերգույամբ ներշնչված, իր ստեղծագործություններում գեղագրական տարրերին մեծ տեղ հատկացրած Ֆարամարզ Փիրամը (1937-1983): Օգտագործելով այնպիսի խորհրդանշաններ, որոնց հետ մարդիկ առնչվում են ուխտատեղերում կամ պաշտամունքային այլ վայրերում, արվեստագետների այս սակավաթիվ խումբն իրանական կերպարվեստում բացեց նոր արահետ:

Եզրակացություններ

1. Եվրոպացի արվեստագետների ազդեցությունն Իրանի նկարիչներ Հոսեյն Բեհզադի, Անդրե Սևրյուգինի, Հասանալի Վազիրիի, Քալալ Չիափուրի, Ահմադ Էսֆանդիարիի, Մարկոս Գրիգորյանի, Սոհրաբ Սեփեհրիի, Սաղղախանե շարժման առաջնորդներ Հոսեյն Չենդերուդիի և Փարվիզ Թանավոյի վրա առավելապես վերաբերում է արտաքին ձևերին ու տեխնիկական կատարմանը:

2. Իրենց արվեստում հարելով եվրոպական մոդեռնիզմի ուղղություններին՝ իմպրեսիոնիզմին, պոստիմպրեսիոնիզմին, կուբիզմին, վերացական արվեստին ու սյուրռեալիզմին, միևնույն ժամանակ իրենց մշակութային ինքնությունը պահպանելու նպատակով նրանք հենվում էին ազգային դարավոր ավանդույթների վրա:

IMPACT OF EUROPEAN MODERNISM ON IRANIAN PAINTING OF THE XX CENTURY (1920-1980S)

ZAHRA MALEKI

NAS RA Institute of Arts, Ph.D. Student,
Shiraz, Islamic Republic of Iran

The paper studies the impact of various stylistic trends of the European innovative art of the XX century, 1920s-1980s in particular, on visual arts of Iran. The objective of the study is a) to examine the activity of masters Hossein Behzad, Andre Sevryugin and Hasanali Vaziri, who taught at the School of Painting and Sculpture, founded on the initiative of Kyamal al Molq in Tehran; b) to assess the contribution to Iranian visual arts of the pioneers of innovative movement

⁶⁸¹ Մարեամ Հոֆան, Մշակույթ և արվեստ, BBC անգլիական հեռուստաալիքի պարսկերեն թողարկումը (2004.04.04):

⁶⁸² Տե՛ս Շահրոխ Գոլեստան, Հոսեյն Չենդերուդի Ցուցահանդես Փարիզում: http://www.bbc.co.uk/persian/arts/story/2004/04/040417_ag-g-zendehroodi-1.shtml (2.10.2012):

شاهرخ گلستان. نمایشگاه آثار حسین زنده رودی در پاریس.

in Iran Kalal Ziapuri, Ahmad Esfandiari, Markos Grigoryan and Sohrab Sepehri, as well as the pioneers of the Saggahane movement Hossein Zenderudi and Parviz Tanavoli.

To conduct the investigation, the widely applied in art criticism descriptive, graphical and analytic-comparative methods were employed.

As a result of the analysis, it has been established that the European influence on the art of Iranian artists is predominantly to be found in the outward appearance and technical execution. While adhering in their creation to this or that trend of European modernism, such as impressionism, post-impressionism, cubism, abstractionism and surrealism, they, however, in order to preserve their cultural identity, draw upon the centuries-old national traditions.

Keywords: *painting of Iran, European modernism, Hossein Behzad, Andre Sevryugin, Ahmad Esfandiari, Marcos Grigoryan, Sohrab Sepehri, pioneers of the Saggahane movement.*

ОТРАЖЕНИЕ ЕВРОПЕЙСКОГО МОДЕРНИЗМА В ИРАНСКОЙ ЖИВОПИСИ XX ВЕКА (1920-1980 ГОДЫ)

ЗАХРА МАЛЕКИ

*Аспирантка Института искусств НАН РА,
г. Шираз, Исламская Республика Иран*

Цель статьи – исследовать отражение различных стилистических направлений европейского новаторского искусства XX века, в частности 1920-1980-х годов, в изобразительном искусстве Ирана. Задачи исследования – изучить деятельность мастеров Хосейна Бехзада, Андре Севрюгина и Хасанали Вазири, преподававших в основном по инициативе Кямала ал Молка в Тегеране в Училище живописи и скульптуры; оценить вклад в иранское изобразительное искусство зачинателей новаторского движения в Иране Калала Зиапуре, Ахмада Эсфандиари, Маркоса Григоряна и Сохраба Сепехри, а также зачинателей движения Саггахане Хосейна Зендеруди и Парвиза Танаволи.

В процессе исследования использовались широко применяемые в искусствоведении описательный, графический и аналитико-сравнительный методы.

В результате анализа установлено, что европейское влияние на искусство художников Ирана отражается преимущественно во внешней форме и техническом исполнении. Примыкая в своем творчестве к тому или иному направлению европейского модернизма, как-то: импрессионизму, постимпрессионизму, кубизму, абстракционизму и сюрреализму, они, в то же время, опираются на вековые национальные традиции с целью сохранения культурной идентичности.

Ключевые слова: *живопись Ирана, европейский модернизм, Хосейн Бехзад, Андре Севрюгин, Ахмад Эсфандиари, Маркос Григорян, Сохраб Сепехри, зачинатели движения Саггахане.*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԵՏԱԶՈՏՈՂԻ ԱՍԲՈՆ
TRIBUNE OF YOUNG RESEARCHER
ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ

**ՏՐԱՆՍԵՆԴԵՆՏԱԼ ՖԵՆՈՄԵՆԱԼՈԳԻԱՆ ՈՐՊԵՍ ԻՐԱԿԱԿԱՆ
 ԶԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴ***

ՉՏԴ 340

DOI: [10.52063/25792652-2021.1-258](https://doi.org/10.52063/25792652-2021.1-258)

ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵԴՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի իրավագիտության
 ֆակուլտետի 1-ին կուրսի մագիստրանտ,
 Արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական և
 ծրագրամեթոդական աշխատանքների կապմակերպման
 բաժնի գլխավոր մասնագետ,
 ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
gevorgbarseghian@gmail.com*

ՄԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի իրավագիտության
 ֆակուլտետի 1-ին կուրսի մագիստրանտ,
 ՀՀ տարածքային կառավարման և
 ենթակառուցվածքների նախարարի օգնական,
 ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
markosyanmane003@gmail.com*

ՀՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի իրավագիտության
 ֆակուլտետի 1-ին կուրսի մագիստրանտ,
 ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
 հետազոտական և կրթական կենտրոնի մասնագետ,
 ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
hovakimianhrayr@gmail.com*

Սույն հոդվածում քննարկվում են ֆենոմենալոգիայի փիլիսոփայության և ֆենոմենալոգիայի տրանսցենդենտալ դարոցի հիմնական հասկացությունները: Անդրադարձ է կատարվում իրավունքի ճանաչման ֆենոմենալոգիական մոտեցման մեթոդաբանական առանձնահատկություններին: Հայրենական իրավական դոկտրինի համատեքստում ուշադրություն է դարձվում այս մոտեցման ինչպես արժանիքներին, այնպես էլ թերություններին: Եվրակացություն է կատարվում առ

* Հոդվածը ներկայացվել է 25.02.2021թ., գրախոսվել՝ 28.02.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.03.2021թ.:

այն, որ **ֆենոմենալոգիան** յուրօրինակ, արդյունավետ, իրավունքի ընկալման բազմաբնույթ հետապոտական մոտեցումներ սինթետիկ մեթոդաբանություն է:

Ֆենոմենալոգիան, որպես իրավունքի ճանաչման տեսություն ու մեթոդաբանություն, ոչ դասական իրավաբանական գիտության մի մասն է, այս մեթոդի առանձին տարրերն օգտագործվում են ոչ դասական այլ մոտեցումների՝ իրավաբանական հերմենևտիկայի, իրավունքի արժեքաբանության շրջանակներում: Պետք է արձանագրել, որ իրավունքի ֆենոմենալոգիան այլընտրանք է իրավունքի ընկալման սոցիոլոգիական և բնական-իրավական մոտեցումներին, միաժամանա, դրա շրջանակներում որոշակի իմաստով իրականացվում է իրավունքի հետապոտման այս երկու մեթոդների սինթեզ: Իրավունքի ֆենոմենալոգիայի առանձնահատկությունը նրա ուսումնասիրության կողմնորոշումն է մի կողմից արդի իրավունքի՝ որպես սոցիալական գործընթացի, որը տեղի է ունենում սկզբունքորեն «բաց» կյանքի աշխարհում, մյուս կողմից պոստեցիալ իրավունքի՝ որպես համընդհանուր իդեալական իրավունքի հիմքի: Ֆենոմենալոգիական մոտեցումը կարող է օգտագործվել որպես գործող դրական իրավունքի հետապոտության տեխնոլոգիա: Նման տեսանկյունից ցանկացած իրավական նորմում բացահայտվում է իդեալական իրավական համակարգը, որը պայմանավորում է նորմի իրացման գործընթացը:

Սույն աշխատանքի նպատակը իրավունքի տրանսցենդենտալ ֆենոմենալոգիայի՝ որպես իրավական հետապոտությունների իրականացման մեթոդի վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություն կատարելն է:

Դրված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- տրանսցենդենտալ ֆենոմենալոգիայի՝ որպես ուղղության ուսումնասիրումը,
- տրանսցենդենտալ ֆենոմենալոգիայի՝ որպես հետապոտության եղանակի ուսումնասիրումը,
- տրանսցենդենտալ ֆենոմենալոգիայի էության՝ որպես իրավունքի ճանաչման մեթոդաբանության բացահայտումը:

Սույն աշխատանքի մեթոդոլոգիական բազան են կազմում դիալեկտիկական ու պատմական մեթոդները: Հետապոտության օբյեկտը և առարկան դիտարկվել են գիտական ճանաչողության այնպիսի ընդհանուր ու հատուկ մեթոդների օգտագործմամբ, ինչպիսիք են՝ դոգմատիկ, իրավահամեմատական, իրավական մոդելավորման և տրամաբանական վերլուծության մեթոդները:

Հիմնվելով սույն աշխատանքի շրջանակում կատարված վերլուծության վրա՝ ներկայացվել են առաջարկներ՝ ուղղված ֆենոմենալոգիայի՝ որպես իրավական հետապոտությունների իրականացման մեթոդի կիրառության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև իրավական մոդելավորման կատարելագործմանը:

Հիմնաբառեր՝ տրանսցենդենտալ ֆենոմենալոգիա, փիլիսոփայություն, իրավունքի դպրոց, մեթոդ, արժեք, ֆենոմեն, իրավաբանական գիտություն:

Իրավունքի տեսության զարգացման միտումները տեսության փիլիսոփայական նախադրյալների հիմնավորման անհրաժեշտության խնդիր են առաջացնում:

Ֆենոմենալոգիան, որպես փիլիսոփայական ուղղություն, կարևորվում է մի քանի պատճառներով: Այն լայն տարածում է գտել Եվրոպական ակադեմիական շրջանակներում⁶⁸³ և նշանակալից կերպով ազդել է անգլոամերիկյան փիլիսոփաների⁶⁸⁴,

⁶⁸³ Տե՛ս Escomans V. D, Modern french philosophy (1980), Les Editions de Minuit, (1979), P. 191:

⁶⁸⁴ Տե՛ս Chomsky N., Language and mind Cambridge (3rd edition), (1968); էջ 89: Տե՛ս նաև D. Ihde, Hermeneutic phenomenology, Northern University Press, (1971), P. 25:

սոցիոլոգների⁶⁸⁵, գրաքննադատների գործունեության վրա: Ֆենոմենալոգիայի ուսումնասիրության կենտրոնում *անորոշության* գաղափարն է, որը պետք է ընդունել, որպեսզի հասկանանք՝ ինչպես ենք մենք մտածում, ապրում ու գործում⁶⁸⁶:

«**Ֆենոմեն**» բառը, որն ընկած է ֆենոմենալոգիայի հիմքում, ունի եմպիրիկ մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանություն⁶⁸⁷: Այս ուղղության ներկայացուցիչները կարծում են, որ մենք ընկալում ենք երևույթները արագ և ուղիղ՝ իրենց էության չեզոք մեկնաբանությամբ: Ուստի դրա նշանակությունը հակադրվում է հունարեն տերմինի նշանակությանը, քանի որ ֆենոմենալոգների տված մեկնաբանությունը վերաբերում է ոչ պասիվ վերաբերմունքի արդյունքում ձևավորված ընկալմանը:

«Ֆենոմենալոգիա» տերմինը վերցված է հունարենից, որտեղ այն նշանակում է «այն՝ ինչ կա»⁶⁸⁸: Հուսերի կարագրական հոգեբանության հիմքը իդեալական օբյեկտներն են, որոնք անկախ են կոնկրետ գիտակցական պատահական առանձնահատկություններից⁶⁸⁹:

Փիլիսոփայության տարբեր ուղղություններից ժամանակի ընթացքում ձևավորվեցին ֆենոմենալոգիական փիլիսոփայության մի քանի մոտեցումներ⁶⁹⁰, որոնցից սակայն առանձնացվում են ֆենոմենալոգիական փիլիսոփայության երկու հիմնական ուղղություններ՝ տրանսցենդենտալ ու հերմենևտիկ⁶⁹¹:

Ֆենոմենալոգիայի **տրանսցենդենտալ** ուղղության հիմնադիրը է. Հուսերըն է⁶⁹²: Ի տարբերություն է. Հուսերի, որ կենտրոնանում էր երևույթի հասկացության վրա, **հերմենևտիկ** ֆենոմենալոգիայի հիմնադիրը՝ Հայդեգերը, առավելապես կենտրոնանում էր «աշխարհում մարդու իմաստի» ուսումնասիրության վրա: Հայդեգերը դիտարկում էր անհատներին որպես «անհանգիստ էակներ», որոնք մտահոգված էին աշխարհում իրենց ճակատագրով⁶⁹³:

Սույն հոդվածում ուսումնասիրվելու են ֆենոմենալոգիայի՝ որպես իրավական հետազոտությունների իրականացման մեթոդի տրանսցենդենտալ ուղղության առանձնահատկությունները: Այդ նպատակով նախ համառոտ կուսումնասիրվի տրանսցենդենտալ ֆենոմենալոգիայի՝ որպես փիլիսոփայական ուղղության

⁶⁸⁵ Տե՛ս **Dallmayr F.**, *Beyond Dogma am Despair: Toward a Critical Phenomenology of Politics* (1981), P. 250: Տե՛ս նաև **Glucksman M.**, *Structuralist Analysis in Contemporary Social Thought*, (1st Edition) (1974), էջ 215: Տե՛ս նաև **Sumner C.**, *Reading ideologies*, Paperback, (1979), P. 89:

⁶⁸⁶ Տե՛ս **Stroller S.**, *The Indeterminable Gender: Ethics in Feminist Phenomenology and Poststructuralist Feminism*, 13 JANUS HEAD, No 1, 2013, էջ 17, 23, https://www.academia.edu/5073982/The_Indeterminable_Gender_Ethics_in_Feminist_Phenomenology_and_Poststructuralist_Feminism, 31.01.2021:

⁶⁸⁷ Տե՛ս **Husserl E.**, *CARTESIAN MEDITATIONS: AN INTRODUCTION TO PHENOMENOLOGY* (D. Cairns trans. 1977), PP. 17-18:

⁶⁸⁸ Տե՛ս **Donald H. J. Hermann**, *Phenomenology, Structuralism, Hermeneutics, and Legal Study: Applications of Contemporary Continental Thought to Legal Phenomena*, 36 U. Miami L. Rev. 379 (1982), էջ 383, <https://repository.law.miami.edu/umlr/vol36/iss3/3>, 10.12.2020:

⁶⁸⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 384:

⁶⁹⁰ Ֆենոմենալոգիական փիլիսոփայության այլ ուղղությունների մասին տե՛ս *Contributions to phenomenology*. In: Embree L, editor. *Encyclopedia of phenomenology*. Vol. 18. Netherlands: Springer; 1997.

⁶⁹¹ Տե՛ս B. E. Neubauer, Catherine T. Witkop, Lara Varpio, *How phenomenology can help us learn from the experiences of others*, 2019 April, P. 91:

⁶⁹² Տե՛ս <http://www.phenomenologyonline.com/inquiry/orientations-in-phenomenology/transcendental-phenomenology>, 07.03.2021:

⁶⁹³ Տե՛ս S. M. Laverty, *Hermeneutic Phenomenology and Phenomenology: A Comparison of Historical and Methodological Considerations*, 2003 Laverty, <https://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/160940690300200303>, 08.03.2021:

առանձնահատկությունները և հիմնական գաղափարախոսությունը, այնուհետև կվերլուծվի տրանսցենդենտալ ֆենոմենալոգիայի՝ որպես իրավական հետազոտությունների իրականացման մեթոդի հիմնական առանձնահատուկ գծերը, այդ մեթոդի՝ հայրենական իրավունքում գործնական կիրառման հիմնախնդիրները:

Ըստ Է. Յուսերիի՝ ֆենոմենալոգիան կարող է բացահայտել, թե ինչպես են իմաստի ձևավորման անընդհատությամբ ստեղծվել ու ձևավորվել մարդու սկզբնական գոյաբանության ձևերը⁶⁹⁴: Գիտությունը, որը պետք է ընկալվի որպես կյանքի պրակտիկա, չպետք է գերակա լինի կենսական աշխարհի նկատմամբ. գիտությունը պետք է փոխադարձ կապ ունենա կենսական աշխարհի հետ՝ չխեղաթյուրելով «սկզբնական ակնհայտությունների աշխարհը»⁶⁹⁵:

Ժամանակակից իրավունքի տեսության ու փիլիսոփայության հիմնախնդիրը պետք է լինի իրավունքի՝ որպես կենսական աշխարհի բացահայտումը և ցույց տալը, որ ակնհայտ երևույթները հաշվի առնելն այնպիսին, ինչպիսին դրանք կան, այլընտրանք չունի: Իրավական հետազոտության ֆենոմենալոգիական մոտեցումը հնարավորություն է տալիս հիմնավորել իրավունքի ռեֆլեքսային մոդելի անհրաժեշտությունը: Չնայած որ այդպիսի մոդելի անհրաժեշտության մասին նշվել էր դեռևս քսաներորդ դարասկզբին, այն մնում է չիրականացված: Գործնականում չկան իրավունքի ֆենոմենալոգիական մեթոդին նվիրված հետազոտություններ: Սակայն բավական է վկայակոչել միայն տեսական նախադրյալների առկայությունը, որոնք ենթակա են տրամաբանորեն ստուգված համակարգման⁶⁹⁶:

Յուսերիը մեկնաբանում էր ֆենոմենալոգիան որպես **նկարագրական փիլիսոփայության** մաս՝ հակադրելով այն *Էմպիրիկ հոգեբանությանը* և դրա մեկնաբանման դասական եղանակներին: Ըստ Յուսերիի՝ ֆենոմենալոգիան բացատրում է երևույթի ընկալումը մարդու մտքում⁶⁹⁷: Ֆենոմենալոգները պնդում են, որ մարդկային գիտակցությունը միտումնավոր կերպով «գունավորում է» երևույթի վերաբերյալ ընկալումները⁶⁹⁸: Այս համատեքստում ընկալումը դիտարկվում է որպես մարդկային գիտակցության վարքագիծ, որի միջոցով բխեցվում է երևույթների հասկացությունը: Այս վարքագիծը ակնթարթային է և չարտացոլվող: Լեզվական առումով գիտակցությունը որոշում է հասկացությունների բացատրությունը⁶⁹⁹, իսկ ընկալման մեջ՝ մեր տեսածի մոդելն ու նշանակությունը:

Նկարագրական հոգեբանության ամենակարևոր գործառույթներից է տարբեր երևույթները նկարագրող կանոնների բացահայտումն ու սահմանումը⁷⁰⁰: Այդ կանոնները կոչվում են **Էյդետիկ կանոններ**, և ֆենոմենալոգիական դպրոցի կողմնակիցները փորձել են մեկնաբանել դրանք այնպիսի տարբեր համատեքստերում, ինչպիսիք գեղագիտությունն ու տրամաբանությունն են⁷⁰¹: Էյդետիկ կանոնները չեն կիրառվում

⁶⁹⁴ Տե՛ս **E. Husserl**, *CARTESIAN MEDITATIONS: AN INTRODUCTION TO PHENOMENOLOGY* (D. Cairns trans. 1977), P. 6:

⁶⁹⁵ Տե՛ս **Пантыкина М. И.**, *Феноменологическая методология: опыт исследования права* Изд-во Урал. ун-та, 2008, С. 7:

⁶⁹⁶ Տե՛ս նույն տեղում:

⁶⁹⁷ Տե՛ս նույն տեղում:

⁶⁹⁸ Տե՛ս **Husserl E.**, *Logical investigations*, (J. Findlay trans. 1970); P. 337-432:

⁶⁹⁹ Տե՛ս **Mohanty J.**, *Edmund Husserl's theory of meaning*, (3-րդ հրատ. 1976), P. 54-76:

⁷⁰⁰ Տե՛ս **Husserl E.**, *CARTESIAN MEDITATIONS: AN INTRODUCTION TO PHENOMENOLOGY* (D. Cairns trans. 1977), էջ 80: Տե՛ս նաև **Donald H. J. Hermann**, *Phenomenology, Structuralism, Hermeneutics, and Legal Study: Applications of Contemporary Continental Thought to Legal Phenomena*, 36 U. Miami L. Rev. 379 (1982), P. 382, <https://repository.law.miami.edu/umlr/vol36/iss3/3>, 10.12.2020:

⁷⁰¹ Տե՛ս **Bachelard S.**, *A Study of Husserl's Formal AND Transcendental Logic* (1968), էջ 87: Տե՛ս նաև M. Scheler, *Formalism in ethics and non-formal ethics of values* (1973), P. 23:

զգայական ընկալման մակարդակում. դրանք առավելապես վերաբերում են երևույթի ելության տեսական ընկալմանը:

Ֆենոմենալոգիայի՝ որպես հետազոտության եղանակի առարկան կոնկրետ օբյեկտները չեն, որոնք փաստացի գոյություն ունեն, այլ առավելապես **երևույթների ելությունը**: Երևույթի ելությունն այն գործոնն է, որով կոնկրետ օբյեկտը տարբերվում է մյուս բոլոր օբյեկտներից: Ֆենոմենալոգիական մեթոդի կիրառմամբ մենք չափում ենք մեր փիլիսոփայական գիտելիքները իրական աշխարհում առկա երևույթների հետ:

Հուները տարանջատում էր **էմպիրիկ գիտությունը** Էյդետիկ գիտությունից⁷⁰²: Ֆենոմենալոգիան մեթոլոգիական առումով երևույթի ելության գիտությունն է՝ **ապրիորի (a priori) գիտություն**⁷⁰³: Ըստ այս ուղղության կողմնակիցների՝ ելությունն է ընկած երևույթի հիմքում, և դա էլ հենց համարվում է ֆենոմենալոգիայի հիմքը:

Ֆենոմենալոգիայի տրանսցենդենտալ ուղղության ներկայացուցիչները կարծում են, որ մենք ուսումնասիրում ենք օբյեկտներն իրենց ելության չեզոք մեկնաբանմամբ և անմիջականորեն: Ըստ Հուների՝ սա ներառում է **Էյդետիկ ինտուիցիան**, որը հասկացողության մտային կարողությունն է⁷⁰⁴:

Ֆենոմենալոգիայի տրանսցենդենտալ ուղղության ներկայացուցիչները կարծում են, որ քանի որ մենք սկզբում ընկալում ենք երևույթները և հետո նկարագրում, դրանց մասին կարող ենք տալ բացարձակապես ճիշտ պատկերացում⁷⁰⁵: Ուստի ֆենոմենալոգիական մեթոդից բխեցված ճշմարտությունն արդեն իսկ ապացուցված է և ենթակա չէ քննադատության: Երևույթի **Էյդետիկ ընկալումը** տալիս է հիմնավոր նախապայմաններ հետազոտության համար⁷⁰⁶:

Էյդետիկ ընկալումը պահանջում է որոշակի մեթոդների կիրառում: Ըստ Հուների՝ սա ներառում է **երկու պայման**՝ Էյդետիկ փոփոխություն և ֆենոմենալոգիական փոփոխություն⁷⁰⁷: Առաջին հերթին պետք է նվազեցնել էքսիզտենցիալ դատողությունները և պետք է անջատել վերացականը և աշխարհը գոյությունից⁷⁰⁸: Դրանից հետո մտում են միայն տրանսցենդենտալ գիտակցության օբյեկտները: Սրանք հետո պետք է հետազոտվեն ֆենոմենալոգիական փոփոխության մեջ՝ գիտակցական ընկալման համատեքստում:

Տրանսցենդենտալ ֆենոմենոլոգիան առաջին հերթին հենց իրավունքի հետազոտության մեթոդաբանություն է: Իրավունքը հիմնականում հենց մարդկանց մասին է, քանի որ մարդիկ ապրում են կյանքը էապես տարբեր եղանակներով և մարդկանց համար երբեմն իրավական համակարգը սոսկ հիմնական իրավունքներն ու փոխադարձ հարգանքը երաշխավորող կառուցակարգ է: Այս առումով թերևս դիպուկ է

⁷⁰² Տե՛ս **Husserl E.**, CARTESIAN MEDITATIONS: AN INTRODUCTION TO PHENOMENOLOGY, (D. Cairns trans. 1977), P. 11-14:

⁷⁰³ Տե՛ս **Husserl E.**, THE IDEA OF PHENOMENOLOGY, (Springer Netherlands), P. 46:

⁷⁰⁴ Տե՛ս **Donald H. J. Hermann**, Phenomenology, Structuralism, Hermeneutics, and Legal Study: Applications of Contemporary Continental Thought to Legal Phenomena, 36 U. Miami L. Rev. 379 (1982), P. 384:

⁷⁰⁵ Տե՛ս **Husserl E.**, CARTESIAN MEDITATIONS: AN INTRODUCTION TO PHENOMENOLOGY (D. Cairns trans. 1977), P. 16:

⁷⁰⁶ Տե՛ս **Donald H. J. Hermann**, Phenomenology, Structuralism, Hermeneutics, and Legal Study: Applications of Contemporary Continental Thought to Legal Phenomena, 36 U. Miami L. Rev. 379 (1982), էջ 385, <https://repository.law.miami.edu/umlr/vol36/iss3/3>, 10.12.2020:

⁷⁰⁷ Տե՛ս **Husserl E.**, 'Ideas: General Introduction to Pure Phenomenology', (W.Gibson trans. 1931), PP. 61-75:

⁷⁰⁸ Տե՛ս **Donald H. J. Hermann**, Phenomenology, Structuralism, Hermeneutics, and Legal Study: Applications of Contemporary Continental Thought to Legal Phenomena, 36 U. Miami L. Rev. 379 (1982), P. 385, <https://repository.law.miami.edu/umlr/vol36/iss3/3>, 10.12.2020:

Սառա Ահմեդի հետևյալ բնորոշումը. «Ֆենոմենալոգիան ծառայում է իրականության շրջափեղի, կինէսթետիկ և տեսողական ընկալմանը»⁷⁰⁹:

Ֆենոմենալոգիական մեթոդաբանության շրջանակներում հետազոտության օբյեկտը՝ որպես իրավական իրականություն, իր դրսևորումների բազմազանության մեջ ընկալվում է չափազանց լայն: Ուսումնասիրության առարկան ներկայացվում է որպես իրավունքի իդեալական հիմք՝ **իրավունքի էյդոս (գաղափար)**: Ֆենոմենալոգիայի տեսանկյունից իրավունքն ունի իր օնթոլոգիական արմատավորված իդեալական հիմքը՝ իրապես գոյություն ունեցող իրավական ֆենոմենների նկատմամբ առաջնային իդեալական ելությունը: Իրավունքի ֆենոմենալոգիական տեսլականը մեծապես ձևավորվում է այն հանգամանքը բացատրելու ձգտման արդյունքում, որ անցյալի ու ներկայի իրավական համակարգերի անսահման փոփոխականության հետ մեկտեղ գոյություն ունեն անփոփոխ, մի իրավական համակարգից մյուսն անցնող հիմնարար սկզբունքներ և իրավադրույթներ: Իրավունքի այս տեսակի անփոփոխ հիմքը, օրինակ, բնական իրավունքի դպրոցը դիտում էր որպես բնական երևույթ: Իրավունքի ֆենոմենալոգիական դպրոցը բացատրում է նման անփոփոխ իրավական կառույցների գոյությունը՝ չլիմելով յուսմատուրայիզմին:

Այսպիսով՝ ֆենոմենալոգիան դիմում է ոչ թե իրավունքի էմպիրիկ փոփոխական-գոյաբանական (էքզիստենցիալ) ձևերին, այլ նրա եութենական (էսսենցիալ) հիմքին՝ հետազոտողի գիտակցության բացահայտմանը՝ իրավական էյդոսին: Իրավունքի ֆենոմենալոգների տեսլականում իրավունքի իդեալական ելությունը հավերժական է և ոչ տարածական. այն մի համակարգ է, որտեղ արտահայտվում է իրավունքի էյդետիկ իմաստը: Հետևաբար իրավաստեղծ մարմինների գործունեությունը ընկալվում է որպես իդեալական իրավական մոդելների մարմնավորում: Այդ իդեալական մոդելները իրավաստեղծ գործընթացում մարմնավորվում են կոնկրետ սոցիալ-մշակութային պատմական բովանդակությամբ, լեգիտիմացվում են սոցիալական սուբյեկտի ճանաչման ակտում, իրավական էներգիա են հաղորդում հասարակության անդամների իրավունքներին ու պարտականություններին:

Ֆենոմենալոգիայի ելությունը՝ որպես իրավունքի ճանաչման մեթոդաբանություն, այն է, որ իրավունքի կոնկրետ-պատմական համակարգերը ճանաչվում են իրավունքի հիմքը կազմող իդեալական համակարգերի մտավոր նվազեցմամբ: Այս տեսակի ճանաչողությունը հանգում է նախ՝ դարաշրջանին՝ բոլոր դատողություններից հրաժարվելու ընթացակարգին, որոնք վերաբերում են իրավունքի տարածաժամանակային, անհատական-հոգեբանական, կոնկրետ-պատմական, սոցիալական գոյությանը, երկրորդ՝ դարաշրջանին հաջորդող կառուցվածքի նկարագրության ընթացակարգին: Ֆենոմենալոգիական իմացաբանական ընթացակարգերի կիրառման արդյունքում կոնկրետացվում է իրավունքի ֆենոմենալոգիական դպրոցի կողմից սահմանվող ճանաչողության առարկան՝ «էյդոս», «մաքուր կառուցվածք», «մաքուր ձև», «իդեալական կառուցվածք», «նոեմա», «նոեզիս», «ինտենցիա» հասկացությունների միջոցով:

Ինչպես կարծում են իրավունքի ֆենոմենալոգիական ըմբռնման կողմնակիցները, առավել անմիջականորեն իրավական էյդոսը արտահայտվում է իրավագործության մեջ: Հենց իրավագործությունը կարելի է դիտարկել որպես իրավունքի որոշակի իդեալական հիմք:

Իրավունքի ֆենոմենալոգիական դպրոցը ներթուստ միատարր չէ, իր մտավոր տարածության մեջ ֆենոմենալոգիական ռեդուկցիայի տարբեր տատանումները տարբեր հեղինակների կողմից մեկնաբանվում են տարբեր ձևերով՝ որպես իրավունքի

⁷⁰⁹ St'ua Ahmed S., A Phenomenology of Whiteness, Feminist theory 149, 153 (2007):

ապրիորի հիմքերի նկարագրություն (Է.Յուսերլ⁷¹⁰, Ա.Ռայնսխ), «իրերի բնույթի» կառուցում (Գ.Ռադերիխ), արժեքների բացահայտում (Ն.Ն.Ալեքսեև) և այլն:

Իրավական ֆենոմենալոգիայի դասականներից մեկը կարելի է համարել գերմանացի իրավական մտածող, Է.Յուսերլի հետևորդ, 20-րդ դարի ֆենոմենալոգիական շարժման ներկայացուցիչ Ադոլֆ Ռայնսխին⁷¹¹ (1883-1916թթ.): «Քաղաքացիական իրավունքի ապրիորի հիմքերը» աշխատությունում Ռայնսխը ֆենոմենալոգիական մոտեցման դիրքերից փորձում է ուսումնասիրել բնական իրավունքը: Նա կարծում է, որ իրավունքի եությունը բացահայտող իրավական առաջնային իրողությունը սոցիալական ակտերն են: Ա.Ռայնսխի կողմից առանձնացվող սոցիալական ակտի հատկանիշներից հետևում է, որ առաջնային իրավական իրողություններ են համարվում արարքի, կոլեկտիվության ու փոխադարձության արտահայտությամբ բնութագրվող իրավական հարաբերությունները: Ընդ որում, այս կամ այն իրական հասարակական հարաբերությունը իրավական համարելու համար չի պահանջվում պետության կողմից սահմանված նորմով կարգավորում: Իրավական են ճանաչվում այն հարաբերությունները, որոնցում իրականացվում է իրավունքի եությունը և որոնք ձևավորվում են ինտերսուբյեկտիվության սկզբունքի հիման վրա:

Ռուսական իրավագիտության մեջ իրավունքի ֆենոմենալոգիայի առաջին ներկայացուցիչը եղել է պանսավոր ռուս իրավաբան Նիկոլայ Ալեքսեևը⁷¹² (1879-1964թթ.): «Իրավունքի փիլիսոփայության հիմունքներ», «Պետության գաղափարը. քաղաքական մտքի պատմության ակնարկներ», «Նաղաղություն և հոգի. փիլիսոփայական մտորումներ մատերիայի և ոգու մասին» դիալեկտիկական ռեալիզմի հիման վրա», «Ռուսական կայսրությունը պատմական ակունքներում», «Զրիստոնեությունը և միապետության գաղափարը», «Փիլիսոփայության գաղափարի և նրա հասարակական առաքելության մասին» աշխատություններում նա հիմնավորում էր իրավունքի ճանաչման ֆենոմենալոգիական մեթոդի օգտագործման անհրաժեշտությունը նրանով, որ այլ մեթոդներ սկզբունքային թերություններ ունեն: Ալեքսեևը պնդում էր, որ իրավունքի ռացիոնալիստական կամ էմպիրիկ սահմանումները որոշակի միաչափության բնույթ ունեն, քանի որ իրավունքը հանգեցնում են ինչ-որ մի չափման՝ նորմի, կամքի, հետաքրքրության: Օրենքի բազմաչափ բնույթը պարզաբանելու համար, Ալեքսեևի համոզմամբ, անհրաժեշտ է ընդհանրապես թողնել սահմանումների հողը և տալ իրավունքի ֆենոմենալոգիական կառուցվածքի նկարագրությունը, որը մի քանի չափումների միասնություն է:

Իրավական կառուցվածքի առաջին տարրը, Ալեքսեևի կարծիքով, սուբյեկտն է՝ որպես իրավունքի մեջ հայտնաբերված արժեքների կրող: Ալեքսեևը սուբյեկտի տակ հասկանում է ոչ թե ավանդական իրավունքի սուբյեկտին, ինչպես այն ընկալում է ավանդական իրավաբանական տեսությունը, այլ սուբյեկտի՝ որպես արժեք հայտնաբերող գործչի:

Ն.Ն.Ալեքսեևի հայեցակարգում այս կառույցի երկրորդ տարրը իրավունքի մեջ հայտնաբերվող արժեքներն են: Ինչ-որ արժեքի առկայությունը, Ալեքսեևի կարծիքով, իրավական երևույթների համար անվերապահ ենթադրություն է, քանի որ հակառակ

⁷¹⁰ St' u Donald H.J. Hermann, Phenomenology, Structuralism, Hermeneutics, and Legal Study: Applications of Contemporary Continental Thought to Legal Phenomena, 36 U. Miami L. Rev. 379 (1982), էջ 384: St' u Նաև Гуссерль Э. Кризис европейских наук и трансцендентальная феноменология. Введение в феноменологическую философию – СПб., 2005.

⁷¹¹ St' u Райна А., О феноменологии: доклад в Марбурге, январь 1914 года, / URL:http://www.ruthenia.ru/logos/number/1999_01/1999_1_04.htm, 07.01.2021:

⁷¹² St' u Алексеев Н. Н., Основы философии права / Н. Н. Алексеев. – СПб.: Издательство «Лань», 1999.

դեպքում գոյություն չէին ունենա շահագրգռվածության ու անտարբերության դրսևորումները:

Իրավական կառուցվածքի երրորդ տարրը Ալեքսենը համարում է որոշ նախնական իրողությունները: Ցանկացած իրավական ֆենոմենի նման նախատիպերը, ըստ Ալեքսենի, «իրավագրությունը» և «պարտականություններն» են: Այդ երեք տարրերի միասնությունը ձևավորում է Ալեքսենի հայեցակարգի կենտրոնական հասկացությունը, իրավական կառուցվածքի հասկացությունը: Հետագոտողը գրում է. «Այն, ինչ մենք հասկանում ենք իրավական կառուցվածքի կամ իրավական լոգոսի ներքո, ընդհանուր և հավերժական իրավական ինչ-որ նորմերի գումար չէ: Իրավական կառուցվածքը մեզ համար իրավական երևույթների կատարյալ ամբողջականությունն է... Մենք ունենք իրավունքի գաղափարը և կատարյալ հաստատականությամբ ենք տիրապետում դրան և օգտվում դրանից: Դա նշանակում է, որ անվերջանալի իրավական երևույթները կապված են ամբողջականության իրավական գաղափարով: Այս ամբողջականության մեջ է հայտնաբերվում իրավունքի կառուցվածքը: Իրավական կառույցն այն է, ինչը տարբեր երևույթներին իրավական ձև է տալիս: Եվ մասնավորապես իրավունքի նորմերը «իրավական» են միայն այն պատճառով, որ դրանցում արտացոլվում է իրավական կառուցվածքը: Ի տարբերություն այլ տեսակի նորմերի, մենք «իրավական» ենք անվանում այն նորմերը, որոնք ենթադրում են հատուկ կրող (ճանաչման կարողություն ունեցող), որոնցում արտահայտվում են իրականացված արժեքները և որոնք ձևակերպվում են հատուկ սահմանումներով (իրավունքներ - պարտականություններ)»⁷¹³:

Իրավունքի ընկալման նման մոտեցումը բացատրել է դրա փաստացի բազմազանությունը՝ պահպանելով իմաստային միասնությունը: Իրավունքը, ըստ Ալեքսենի, միշտ կա այնտեղ, որտեղ կա իրավական համակարգ: Այդ տարրերի բովանդակության և դրանց կապերի բնույթի բազմազանությունն էլ ստեղծում է իրավական կյանքի ողջ գունագեղությունը:

Հայրենական իրավագիտության մեջ իրավունքի ֆենոմենալոգիայի խոշորագույն ներկայացուցիչը պրոֆեսոր Հ. Ստեփանյանն է, որ մանրամասնորեն քննարկել է իրավունքի ֆենոմենալոգիական տեսության հիմնախնդիրները: Ըստ պրոֆեսորի՝ իրավունքի ուսումնասիրության արդյունավետ մոտեցումներից մեկը իրավունքի ֆենոմենալոգիական ուսումնասիրությունն է: Անհրաժեշտ է իրավունքը դիտել որպես մարդկային սուբյեկտիվության երևույթ, քանի որ աշխարհը, այդ թվում՝ իրավունքի աշխարհը մարդուն տրվում են ոչ այլ կերպ, քան նրա սուբյեկտիվության միջոցով⁷¹⁴:

Պրոֆեսոր Հ. Ստեփանյանի կարծիքով՝ իրավունքի եությունը կոնկրետ իրավական երևույթների գոյության նախապայմանն է: Իրավունքի եությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու այս կամ այն երևույթի էական որոշարկումները, որոնց առկայության դեպքում միայն տվյալ երևույթը կարող է գոյություն ունենալ իրավունքի կատեգորիայով պայմանավորված կեցության ոլորտում: Իրավունքի եությունը տարբեր երևույթներին հաղորդում է իրավական ձև, նրանց դարձնում է «իրավական» երևույթ: Իրավունքի մինչփորձային եությունը իրավական եզակիության գոյության բանալին է, նրա գոյության բանաձևը⁷¹⁵:

⁷¹³ Տե՛ս **Алексеев Н.Н.**, Основы философии права / Н. Н. Алексеев. – СПб.: Издательство «Лань», 1999, С. 78.

⁷¹⁴ Տե՛ս **Ստեփանյան Մ.Հ.**, Իրավունքի ֆենոմենալոգիական տեսության հիմնախնդիրները, «Պետության և իրավունքի տեսության և պատմության, իրավական ուսմունքների պատմության» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան 2008, էջ 8:

⁷¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 9:

Ֆենոմենալոգիայի տեսանկյունից դիտարկելով իրավունքի էությունը՝ պրոֆեսոր Ստեփանյանը նշել է, որ իրավունքի էութենական հատկանիշներից են ինտերսուբյեկտիվությունը, իրավատիրական-պարտապանական բնույթ ունեցող նորմատիվությունը և արժեքայնությունը: Իրավունքի էութենական հատկանիշների վերլուծությունից բխում է կեցության իրավական ոլորտի հիմնական միևնույն օրինաչափությունը՝ ցանկացած երևույթ կեցության իրավական ոլորտի իրողություն է, այսինքն՝ «իրավական» երևույթ է, եթե անդրանցային ազատ սուբյեկտների հավակնությունների ինտերսուբյեկտիվ ճանաչման շնորհիվ մարմնավորում է իրավատիրական-պարտապանական այնպիսի կապեր, որոնք հիմնված են արդարության վրա և ուղղված են որոշակի արժեքների ձեռքբերմանը, տիրապետմանը, տնօրինմանը կամ որևէ այլ կերպ հաղորդակից լինելուն⁷¹⁶:

Պրոֆեսոր Յ. Ստեփանյանը իրավական կենսաշխարհի ուսմունքի դիրքերից հետազոտել է իրավական կենսաշխարհի կառուցվածքը և դրա բովանդակության առանձնահատկությունները: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել «առօրյա իրավունք» հասկացությունը, բացահայտել այդ հասկացության էությունը: Այսպես՝ իրավական կենսաշխարհի և իրավական կենսափորձի բաղկացուցիչ մասն է առօրյա իրավունքը, որում մարմնավորված են իրավունքի բոլոր էլեմենտիկ գծերը: Այդ տեսակետից առօրյա իրավունքը անդրանցային ազատ սուբյեկտների հավակնությունների ճանաչման շնորհիվ ձևավորված այնպիսի իրավատիրական-պարտապանական կապերի վերաբերյալ պատկերացումների ամբողջություն է, որոնք մարմնավորում են արդարության գաղափարը և ուղղված են որոշակի նյութական ու հոգևոր բարիքների: Առօրյա իրավունքի նորմերը ընդհանուր, տիպականացված, ինտերսուբյեկտիվ պատկերացումներն են տիպական իրադրություններում տիպական վարքագծի վերաբերյալ⁷¹⁷:

Այսպիսով՝ ֆենոմենալոգիան յուրօրինակ, արդյունավետ, իրավունքի ընկալման բազմաբնույթ հետազոտական մոտեցումներ սինթեզող մեթոդաբանություն է: Այն, որպես իրավունքի ճանաչման տեսություն ու մեթոդաբանություն, ոչ դասական իրավաբանական գիտության մի մասն է, իսկ այս մեթոդի առանձին տարրերն օգտագործվում են ոչ դասական այլ մոտեցումների՝ իրավաբանական հերմենևտիկայի, իրավունքի արժեքանության շրջանակներում: Պետք է արձանագրել, որ իրավունքի ֆենոմենալոգիան հանդես է գալիս որպես այլընտրանք իրավունքի ընկալման սոցիոլոգիական և բնական-իրավական մոտեցումներին, միաժամանակ դրա շրջանակներում որոշակի իմաստով իրականացվում է իրավունքի հետազոտման այս երկու մեթոդների սինթեզ: Իրավունքի ֆենոմենալոգիայի առանձնահատկությունը դրա ուսումնասիրության կողմնորոշումն է մի կողմից՝ արդի իրավունքին՝ որպես սոցիալական գործընթացի, որը տեղի է ունենում սկզբունքորեն «բաց» կյանքի աշխարհում, մյուս կողմից՝ պոստենցիալ իրավունքին՝ որպես համընդհանուր իդեալական իրավունքի հիմքի: Ֆենոմենալոգիական մոտեցումը կարող է օգտագործվել որպես գործող դրական իրավունքի հետազոտության տեխնոլոգիա: Նման տեսանկյունից ցանկացած իրավական նորմում բացահայտվում է իդեալական իրավական համակարգը, որը պայմանավորում է նորմի իրացման գործընթացը:

Դրա հետ մեկտեղ ժամանակակից հայրենական գիտության մեջ այս մոտեցումը հազվադեպ է օգտագործվում, ինչը կապված է մի շարք պատճառների հետ: Նախ՝ ֆենոմենալոգիայի նկատմամբ բացասական վերաբերմունքը պայմանավորված է խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված որոշ կարծրատիպերով, որոնց շրջանակներում ֆենոմենալոգիան սահմանվում է որպես «բուրժուական գիտություն», երկրորդ՝ ֆենոմենալոգիայի մերժումը կապված է ֆենոմենալոգիական

⁷¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 9:

⁷¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 10:

տերմինաբանության բարդության հետ՝ մասնավորապես այնպիսի տերմինների, ինչպիսիք են՝ «ինտենցիա», «լոտեմա», «լոտեգիս» և այլն, երրորդ՝ ֆենոմենալոգիայի՝ որպես իրավունքի ճանաչման մեթոդաբանության չպահանջվածությունը պայմանավորված է հայկական իրավական իրականության ճանաչման ուղղությամբ ֆենոմենալոգիական մեթոդի կիրառման կայուն հետազոտական ավանդույթի բացակայությամբ: Հայաստանի իրավագիտությունում ֆենոմենալոգիական մոտեցման օգտագործման խնդիրը մնում է չլուծված, սակայն հիմնական ֆենոմենալոգիական համակարգերը կարող են կարևոր մեթոդաբանական դեր խաղալ հայրենական իրավական իրականության ճանաչման գործում:

Ֆենոմենալոգիան, որպես *իրավական հետապոտության* մեթոդ, ուղղորդում է իրավագետներին ու պրակտիկ իրավաբաններին, որպեսզի նրանք ընկալեն իրավաբանի, դատավորի, սոցիալական աշխատողի, գիտնականի մասնագիտության եությունը: Փաստերը չափազանց կարևոր են իրավունքի համար. որոշ իրավաբանական դպրոցներում փաստերի ուսումնասիրությունը դարձվում է հատուկ ուշադրություն: Հաճախ փաստերը խեղաթյուրվում են տեսության կամ նախադեպերի վերլուծության մեջ: Տեսությունը չպետք է խեղաթյուրի փաստերը, այլ կարևորի դրանք, քանի որ կյանքի մատերիալիստական պայմանները պահանջում են նույնքան տեսականացում, որքան ոչ մատերիալիստականները⁷¹⁸: Ֆենոմենալոգիական մեթոդի նպատակը իրավունքի մատերիալիստական տեսությունն առաջ քաշելը չէ, որը կենտրոնանում է միայն մատերիալիստական պայմանների վրա⁷¹⁹: Ֆենոմենալոգիան առավելապես առաջ է քաշում **մատերիալիստական իրավական համակարգ**, որը գնահատում է կյանքի մատերիալիստական և ոչ մատերիալիստական պայմանները միաժամանակ: Այլ կերպ ասած՝ այն մատերիալիստական գաղափարախոսություն է, որի դեպքում փաստերն ունեն կարևոր ազդեցություն իրավունքի և տեսության վրա⁷²⁰:

Ըստ ֆենոմենալոգների՝ մարդու իրավունքների և ազատությունների անորոշ իրավական սահմանումները մտահոգիչ են, քանի որ այդպիսի նորմավորումը խոչընդոտում է իրական կյանքում իրավունքների և ազատությունների կիրառման գործընթացին:

Ֆենոմենալոգիայի՝ որպես իրավական հետազոտությունների իրականացման մեթոդի կիրառումը ավելի լավ պատկերացնելու համար հարկ ենք համարում սույն աշխատանքում ֆենոմենալոգիական մեթոդի կիրառումը քննարկել ստորև բերված օրինակով, որն առնչվում է հանցավոր անփութության՝ որպես մեղքի ձևի մեկնաբանությանը:

Դոնալդ Մորանոն հանցավոր անփութության վերաբերյալ իր հողվածում տվել է ֆենոմենալոգիական մեթոդի հետաքրքիր ու պատկերավոր նկարագրությունը: Մորանոն օգտագործել է հանցավոր անփութության դասական սահմանումը՝ այսպես կոչված, «մեղադրման ենթակա անփութություն»: Անփութությամբ կատարված արարքի համար պատասխանատվությունը որոշելու համար նա առանձանացրել է երեք ակնառու և կարևոր այլընտրանքներ⁷²¹:

⁷¹⁸ Տե՛ս **Assiter A.**, *Philosophical Materialism or the Materialist Conception of History*, Radical Phil. Winter 1979, PP. 12, 16:

⁷¹⁹ Տե՛ս **Levine N.**, *The German Historical School of Law and the Origins of Historical Materialism*, 48 J. Hist. Ideas, PP. 431, 437–45 (1987):

⁷²⁰ Տե՛ս **Walter Greene R.**, *Rhetoric and Capitalism: Rhetorical Agency as Communicative Labor*, 37 PHIL. & RHETORIC, PP. 188, 198–203 (2004):

⁷²¹ Տե՛ս **Donald H.J. Hermann**, *Phenomenology, Structuralism, Hermeneutics, and Legal Study: Applications of Contemporary Continental Thought to Legal Phenomena*, 36 U. Miami L. Rev. 379 (1982), էջ 386, <https://repository.law.miami.edu/umlr/vol36/iss3/3>, 10.12.2020:

• Եթե անփութությամբ հանցանք կատարած անձի պատասխանատվությունը որոշվում է բացառապես արարքը անփութությամբ կատարած լինելու փաստի հիման վրա, ապա ինչպե՞ս պետք է որոշել անփութության բովանդակությունն ու բնույթը այն պայմաններում, երբ անփութությամբ արարք կատարած անձը չի գիտակցում անփութ վարքագծի փաստի առկայությունը: Այս հարցադրման կարևորությունը հատկապես սուր է արտահայտվում ֆենոմենալոգների համար, որոնք փորձում են ուսումնասիրել գիտակցության բովանդակությունը: Այսպիսով՝ Գ. Վիլյամսը ընդգծել է, որ չնայած անփութությունը համարվում է մեղքի ձև, թվում է, թե կա ամեն հակափաստարկ այս դիրքորոշման դեմ: Անփութությունը մարդու մտային կարգավիճակի սահմանմամբ չի լինում՝ բացառությամբ կամքի բացասական արտահայտումների դեպքի⁷²²:

• Եթե պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է մեղավոր մտայնություն, ապա ինչպե՞ս մարդը կարող է լինել իրավաբանորեն պատասխանատու՝ առանց իմանալու իրավաբանորեն սանկցիավորված արարքի մասին:

• Ինչու՞ պետք է անփութությամբ արարք կատարած անձը բարոյական դատապարտման ենթարկվի, եթե բացակայում է մեղքը՝ որպես հանցակազմի տարր:

Ըստ Մորանոյի՝ վերջին երկու հարցադրումները փոխկապակցված են: Չնայած որ անփութությամբ հանցանք կատարած անձը վնաս է պատճառում անգոյշ կերպով, նա, այնուամենայնիվ, ենթակա է պատասխանատվության բավարար չափով ուշադիր չլինելու համար⁷²³:

Անուշադիր վարքագծի հասկացությունը, որը բխեցվում է ֆենոմենալոգիական վերլուծություններից, թույլ է տալիս խուսափել այս արմատական երկփեղկվածությունից և ակնհայտ հակասությունից⁷²⁴: Անուշադրությունը որպես հանցավոր անփութություն դիտարկելու երկփեղկվածությունը լուծելու համար Մորանոն իրականացրել է հանցավոր անփութության ֆենոմենալոգիական վերլուծություններ: Ըստ Մորանոյի՝ հանցավոր անփութության ֆենոմենալոգիան կառաջացնի վերջինիս անփոփոխ կառուցվածքը. անփութության նշանակությունը գիտակցության համար որոշելիս Մորանոն ընդգծում է, որ գիտակցությունը չի կարող կենտրոնանալ ամեն ինչի վրա միանգամից, և յուրաքանչյուր բաղադրիչ միաժամանակ այն ամենի բացառությունն է, ինչն ընդգրկված չէ⁷²⁵: Ուշադրությունն այս համատեքստում հասկանալը հանգեցնում է անուշադրության բացասական սահմանման: Մինևոյն ժամանակ ամեն դեպքում չէ, որ հանցավոր անփութությունը անուշադրության արդյունք է: Չնայած անփութության եությանը պետք է ընկալել որպես բացթողում, անփութության եությունից հետևում է ուշադիր լինելու պարտականությունը: Այսպիսով՝ անփութությունը որոշակի արարք կատարելիս կամ վարքագիծ դրսևորելիս պատշաճ ուշադրության բացակայությունն է կամ ձախողելն է այն վարքագիծը դրսևորելու կամ արարքը կատարելու հարցում, որը սուբյեկտը պարտավոր էր դրսևորել կամ կատարել⁷²⁶:

⁷²² Տե՛ս **Williams G.**, *Criminal Law*, 36, (2d ed. 1961), PP. 102-103 :

⁷²³ Տե՛ս **Morano**, *A Phenomenology of Negligence*, 5 J. BRIT. SOC'Y FOR PHENOMENOLOGY 135 (1974); P. 138: Տե՛ս նաև **Williams G.**, *Criminal Law*, 36, (2d ed. 1961), P. 103:

⁷²⁴ Տե՛ս **Donald H.J. Hermann**, *Phenomenology, Structuralism, Hermeneutics, and Legal Study: Applications of Contemporary Continental Thought to Legal Phenomena*, 36 U. Miami L. Rev. 379 (1982), էջ 387, <https://repository.law.miami.edu/umlr/vol36/iss3/3>, 10.12.2020:

⁷²⁵ Տե՛ս **Morano**, *A Phenomenology of Negligence*, 5 J. BRIT. SOC'Y FOR PHENOMENOLOGY (1974), P. 135, Տե՛ս նաև **Husserl E.**, *The Idea of Phenomenology*, P. 56:

⁷²⁶ Տե՛ս **Morano D.**, *A Phenomenology of Negligence*, *Journal of the British Society for Phenomenology*, (1974), P. 139:

Ֆենոմենալոգիայի մեթոդի կիրառմամբ անուշադրության սահմանումը որպես «հանցավոր անփութություն»⁷²⁷ մարդկային վարքագծի նեղ իմաստով մեկնաբանության արդյունք է: Նեղ իմաստով մեկնաբանությունը սահմանում է սուբյեկտի անուշադրությունը անմիջական սպառնալիքի նկատմամբ, որն էլ հանգեցնում է վնասի առաջացմանը: Ի հակադրումն այս դիրքորոշման՝ ֆենոմենալոգիայի մոտեցման կողմնակիցները դիտարկում են մարդու վարքագիծը շարունակականության մեջ և ավելի լայն ժամանակային ասպեկտով⁷²⁸: Երբ անուշադրությունը շարունակական է ժամանակի ընթացքում, և անձը չի կարողանում ուշադիր լինել այս առումով, կարելի է հետևություն անել, որ անձն անփույթ ու անուշադիր է կամ էլ «դիտավորությամբ» է անփույթ վարքագիծ դրսևորել, քանի որ ուշադրության արժանի կոնկրետ երևույթի շարունակական արհամարհումը կարող է լինել այն դեպքում, երբ անձը միտված է այդպիսի վարքագիծ դրսևորում: Այս առումով անուշադրությունն ու անփութությունը գոյություն են ունենում միաժամանակ, այլ ոչ թե որպես առանձին կատեգորիաներ, և բացակայում է «հանցավոր անփութություն» հասկացության հակադիր որակումը⁷²⁹:

Մորանոյի ֆենոմենալոգիական վերլուծություններն անփութության մասին վերափոխում են այս ուղղության նկատմամբ առկա իրավական ընկալումները: Ֆենոմենալոգիան խուսափում է անփութության վերաբերյալ առկա ավանդական երկփեղկվածությունից ու հակադրություններից: Ֆենոմենալոգիայի մեթոդի կիրառմամբ հանցավոր անփութությունը որակվում է որպես հանցավոր վարքագիծ, քանի որ արտացոլում է իրավիճակի կարևոր առանձնահատկությունները ըստ պատշաճի գնահատելու ձախողումը⁷³⁰:

Ֆենոմենալոգիական առումով անփութությունը ուշադրության հանցավոր շեղումն է: Այն ֆենոմենալոգիական մեթոդի կիրառման պարագայում դիտարկվում է որպես սուբյեկտի՝ ոչ ամբողջապես գիտակցված ընտրությունը՝ արհամարհել էական նշանակություն ունեցող որոշ հանգամանքներ:

Հարկ է նշել, որ մեր օրենսդիրը հանցավոր անփութությունը դիտարկել է որպես անզգուշությամբ դրսևորվող մեղքի ձև՝ չմեկնաբանելով անփութությունը ֆենոմենալոգիական մեթոդի կիրառման համատեքստում⁷³¹:

Մասնավորապես համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի՝ անզգուշությամբ կատարված հանցանքը կարող է դրսևորվել ինքնավստահությամբ կամ **անփութությամբ**: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է **անփութությամբ** կատարված, եթե անձը չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք:

Նույն մոտեցումն է առկա նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում⁷³², որի 26-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է. «Հանցանքը համարվում է հանցավոր

⁷²⁷ Տե՛ս Donald H.J. Hermann, Phenomenology, Structuralism, Hermeneutics, and Legal Study: Applications of Contemporary Continental Thought to Legal Phenomena, 36 U. Miami L. Rev. 379 (1982), P. 386, <https://repository.law.miami.edu/umlr/vol36/iss3/3>, 10.12.2020:

⁷²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 140:

⁷²⁹ Տե՛ս Donald H.J. Hermann, Phenomenology, Structuralism, Hermeneutics, and Legal Study: Applications of Contemporary Continental Thought to Legal Phenomena, 36 U. Miami L. Rev. 379 (1982), P. 388, <https://repository.law.miami.edu/umlr/vol36/iss3/3>, 10.12.2020:

⁷²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 389:

⁷³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 389-390:

⁷³¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրք: Ընդունվել է 18.04.2003թ.: Ուժի մեջ է մտել 01.08.2003թ.: Սկզբնաղբյուրը՝ ՀՀԴՏ 2003.05.02/25(260):

անփութությանը կատարված, եթե անձը չի նախատեսում իր արարքի վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել»:

Այսպիսով՝ ֆենոմենալոգիայի դիտանկյունից ամփոփելով հանցավոր անփութության վերաբերյալ առկա տեսակետները՝ գալիս ենք հետևության առ այն, որ հանցավոր անփութությունը՝ որպես մեղքի ձև, պետք է բացառվի:

Ֆենոմենալոգիան կենտրոնանում է իրավական որոշումների ազդեցության ոլորտում գտնող **սուբյեկտների** վրա: Ըստ այս ուղղության՝ իրավաբան գիտնականները և պրակտիկ աշխատողները պետք է մտածեն այնպես, ինչպես բոլոր մարդիկ: Իրավաբանի մասնագիտությանը կամ իրավունքին ծառայելու գաղափարներն արդեն արդիական չեն: դրա փոխարեն պետք է փիլիսոփայության գաղափարների հիմքում դրվեն մարդկանց իրական կյանքի մասին պատկերացումները: Սա թույլ է տալիս, որ իրավաբանները պատճառաբանություններն անեն մարդկանց տեսանկյունից, այլ ոչ թե օրենքի: Այսպիսով՝ ֆենոմենալոգիան, որպես իրավական հետազոտության մեթոդ, հանդիսանում է **մարդակենտրոն արդարադատության իրականացման հիմքը**⁷³³:

Վոլֆգանգ Ֆրայդմանն առաջ է քաշել իրավաբան ֆենոմենալոգների հիմնական նպատակը, այն է՝ անհատի և աշխարհի միջև եղած Կանտյան պարադոքսը հաղթահարելը⁷³⁴: Իրավաբան գիտնականների համար ֆենոմենալոգիական մեթոդը նշանակում է հետազոտել կոնկրետ իրավաբանական երևույթը՝ առանձնացնելով իրավաբանական դոկտրինի, հայեցակարգի, ինստիտուտի հիմնական էությունն ու հարաբերակցությունը և իրավաբանական երևույթը որպես այդպիսին մեկնաբանելու հանգամանքը⁷³⁵:

Վերլուծելով այս մեկնաբանությունները՝ կարող ենք վեր հանել ֆենոմենալոգիայի՝ որպես իրավական հետազոտության մեթոդի գլխավոր նպատակը՝ իրավական արժեքների, պոստուլատների և դրանց փիլիսոփայական հիմքերի պարզաբանումը:

Ֆենոմենալոգիական մոտեցումը առանձնացնում է իրավական սկզբունքների և ինստիտուտների էությունը ո՛չ պոզիտիվիստիկական, ո՛չ էլ բնական իրավունքի տեսանկյունից: Այն պոզիտիվիստական չէ, քանի որ չի սահմանում իրավասու մարմնի կողմից կամ էմպիրիկ տվյալներով իրավական համակարգի մեկնաբանումն ու կանոնակարգումը: Մինևույն ժամանակ ֆենոմենալոգիական մեթոդը խուսափում է բնական իրավունքի տեսությունից բխող անփոփոխ վերլուծություններից՝ վերլուծելով իրավունքի սկզբունքների ու հասկացությունների անփոփոխ հատկությունները երևույթի էության մեջ: Ֆենոմենալոգիական մեթոդը փորձում է պարզաբանել երևույթների բնույթը գիտակցության մեջ, որպեսզի որոշի երևույթների էությունը: Նման մոտեցումը վերացնում է իրավական երևույթի էմպիրիկ վերլուծության ակնհայտ հակասությունները⁷³⁶:

⁷³² Տե՛ս ԶԶ քրեական օրենսգրքի նախագիծը, որը հասանելի է ԶԶ Աժ պաշտոնական կայքուրևում www.parliament.am-ում՝ հետևյալ հղմամբ՝ http://www.parliament.am/reading1_docs7/K-634_R1.pdf, 06.02.2021.

⁷³³ Տե՛ս **Nick J. Sciallo**, *Queer Phenomenology in Law: A Critical Theory of Orientation*, 39 *Pace L. Rev.* 667 (2019), P. 674, <https://digitalcommons.pace.edu/plr/vol39/iss2/4>, 09.12.2020:

⁷³⁴ Տե՛ս **Friedman W.**, *Phenomenology and the social sciences*, (M. Natanson ed. 1973), P. 343:

⁷³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 344:

⁷³⁶ Տե՛ս **Donald H.J. Hermann**, *Phenomenology, Structuralism, Hermeneutics, and Legal Study: Applications of Contemporary Continental Thought to Legal Phenomena*, 36 *U. Miami L. Rev.* 379 (1982), էջ 389, <https://repository.law.miami.edu/umlr/vol36/iss3/3>, 10.12.2020:

Եզրակացություն

Ֆենոմենալոգիայի՝ որպես իրավական հետազոտությունների իրականացման մեթոդի կիրառմամբ առարկան ուսումնասիրվում է որպես իրավունքի իդեալական հիմք՝ իրավունքի **Եյդոս (գաղափար)**: Ֆենոմենալոգիական առումով իրավունքն ունի իր օնթոլոգիական արմատավորված իդեալական հիմքը, այն է՝ իրապես գոյություն ունեցող իրավական ֆենոմենների նկատմամբ առաջնային իդեալական Եությունը: Իրավունքի ֆենոմենալոգիական մոտեցումը մեծապես ձևավորվում է այն հանգամանքը բացատրելու հետևանքով, որ անցյալ ու ներկա իրավական համակարգերի անսահման փոփոխականության հետ մեկտեղ՝ գոյություն ունեն անփոփոխ՝ մի իրավական համակարգից մյուսն անցնող հիմնարար սկզբունքներ ու իրավադրույթներ: Իրավունքի ֆենոմենալոգիական դպրոցը մեկնաբանում է անփոփոխ իրավական կատեգորիաների գոյությունը՝ չդիմելով յուսմատուրայիզմին:

Սույն աշխատանքում կատարված ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքում պարզ է դառնում, որ ֆենոմենալոգիան դիմում է ոչ թե իրավունքի էմպիրիկ փոփոխական գոյաբանական (*էպիստենցիալ*) ձևերին, այլ նրա Եութենական (*Էստենցիալ*) հիմքին՝ հետազոտողի գիտակցության բացահայտմանը՝ իրավական Եյդոսին: Ըստ ֆենոմենալոգների՝ իրավունքի իդեալական Եությունը հավերժական է և ոչ տարածական. այն մի համակարգ է, որում արտահայտվում է իրավունքի Եյդետիկ իմաստը: Չետևաբար իրավաստեղծ մարմինների գործունեությունը ընկալվում է իդեալական իրավական համակարգերի մարմնավորման համատեքստում:

Ամփոփելով սույն աշխատանքում տրանցենդենտալ ֆենոմենալոգիայի՝ որպես իրավական հետազոտությունների իրականացման մեթոդի վերաբերյալ ուսումնասիրությունը՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները՝

1. Ֆենոմենալոգիան առաջադրում է կարևոր հարցադրումների նոր շարք և նոր ինդիկսներ իրավունքի ճանաչման գործընթացում:

2. Ֆենոմենալոգիայի մեթոդը ստուգում է իրավական մեկնաբանությունների ողջամտությունը՝ դրանք դիտարկելով սոցիալական փորձի համատեքստում, որտեղից պետք է բխեն իրավական մեկնաբանությունները: Այսպիսով՝ հիմնավորվում է, որ իրավունքը կանխամտածված ձևով դիտարկվում է սոցիալական փորձի համատեքստում, իսկ իրավական կոլիզիաների ու փաստերի հետևում «թաքնված է» իրավունքի իմաստավորման՝ անընդհատ տևող պրոցեսը:

3. Ֆենոմենալոգիական ռեդուկցիան թույլ չի տալիս սահմանափակվել այս կամ այն առարկայի շրջանակներում և ենթադրում է իրավունքի ճանաչողության ազատում տեսության ու պրակտիկայի սահմանումներից: Այդ իսկ պատճառով ֆենոմենալոգիական հետազոտությունն ինտեգրատիվ մեթոդ է:

4. Ֆենոմենալոգիական հետազոտության առարկան իրավունքի ուսումնասիրությունը չէ (վերջինս համարվում է իրավագիտության ուսումնասիրության առարկան), այլ այն անուղղակի ձևերի նկարագրությանը, որոնցում իրավունքը ընկալվում է գիտակցության մեջ որպես «մաքուր ֆենոմեն»:

5. Ֆենոմենալոգիական մեթոդը թույլ է տալիս առանձնացնել իրավական իրականության հետազոտության երկու եղանակ՝ ***իրավունքի իդեալական Եյդետիկ Եությունը և իրավունքի սոցիալ-մշակութային բազմակողմանիությունը***:

6. Ֆենոմենալոգիայի համատեքստում ուսումնասիրվող «կենսական աշխարհ»-ի հասկացությունը վերացրեց սուբյեկտ-օբյեկտ պարադիգմի կարծրացումը և թույլ տվեց մոտենալ իրավունքի ինտերսուբյեկտայնության ինդիքին (իրավունքը՝ որպես մարդու կողմից ստեղծված երևույթ, իրավունքը՝ որպես երկխոսության հարթակ, իրավունքը՝ որպես «իրավական կյանք»):

TRANSCENDENTAL PHENOMENOLOGY AS A METHOD FOR CONDUCTING LEGAL STUDY

GEVORG BARSEGHYAN

*Yerevan State University, Faculty of Law, Master's degree, 1st year;
Academy of Justice, Unit of Organization of Scientific Research and
Programmatic-Methodological Activities, General legal Specialist,
Yerevan, Republic of Armenia*

MANE MARKOSYAN

*Yerevan State University, Faculty of Law, Master's degree, 1st year;
Ministry of Territorial Administration and Infrastructure of the RA, the Minister Assistant,
Yerevan, Republic of Armenia*

HRAYR HOVAKIMYAN

*Yerevan State University, Faculty of Law, Master's degree, 1st year;
Staff of Human Rights Defender of the RA, Research and Education center, Legal Specialist,
Yerevan, Republic of Armenia*

This article examines the essential meanings of phenomenological philosophy and law school of transcendental phenomenology. Attention is paid to methodological features of phenomenological approach of legal perception. In the context of domestic legal doctrine, attention is paid to both advantages and disadvantages of this approach. Conclusion is made that phenomenology is a specific, effective methodology synthesizing diverse explorative perceptions. Phenomenology, as a theory and methodology of law, is part of non-classical legal science, separate elements of this method are used in the context of other non-classical legal approaches such as hermeneutics and axiology of law. It must be emphasized that phenomenology of law is an alternative to sociological and natural-legal perception of law and, at the same time, in its context the synthesis of these two methods of legal exploration is done to some extent. The main feature of legal phenomenology is its orientation to modern law as a sociological process that is going on in the world of “open” life on the one hand, and to potential law as a basis for universal ideal law, on the other hand. Phenomenological approach can be used as a mechanism for exploring current positive law. From such point of view, ideal legal system is discovered in any legal regulation due to which the enforcement of legal regulation is exercised.

The purpose of this work is to conduct a comprehensive study of transcendental phenomenology of law as a method of conducting legal study.

In order to satisfy the purpose set above, the following problems are introduced.

- The study of transcendental phenomenology as an approach,
- The study of transcendental phenomenology as a research method,
- The reveal of transcendental phenomenology essence as a means of methodology of acknowledgement of law.

The methodological basis of this article are the dialectical and historical methods. The object and subject of the research were observed using such general and special methods of scientific knowledge, as dogmatic, comparative-legal, legal modeling, logical analysis.

Based on the analysis made in the context of this work, suggestions are made which are directed at developing the efficiency of phenomenology as a means of conducting legal studies, as well as the accomplishment of legal modeling.

Keywords: *transcendental phenomenology, philosophy, school of law, method, value legal science.*

ТРАНСЦЕНДЕНТАЛЬНАЯ ФЕНОМЕНОЛОГИЯ КАК МЕТОД ПРОВЕДЕНИЯ ПРАВОВЫХ ИССЛЕДОВАНИЙ

ГЕВОРГ БАРСЕГЯН

*магистрант 1-го курса юридического факультета
Ереванского государственного университета,
главный специалист отдела по организации научно-исследовательских и
программно-методических работ Академии юстиции,
г. Ереван, Республика Армения*

МАНЕ МАРКОСЯН

*магистрант 1-го курса юридического факультета
Ереванского государственного университета,
помощник министра территориального управления и инфраструктур РА,
г. Ереван, Республика Армения*

ГРАЙР ОВАКИМЯН

*магистрант 1-го курса юридического факультета
Ереванского государственного университета,
специалист исследовательского и образовательного центра персонала
Защитника прав человека РА,
г. Ереван, Республика Армения*

В настоящей статье рассматриваются основные понятия философии феноменологии и трансцендентальной школы феноменологии, акцентируется внимание на методологических особенностях феноменологического подхода к познанию права. Обращается внимание как на достоинства, так и на недостатки данного подхода в контексте отечественной правовой доктрины и делается вывод о том, что феноменология представляет собой оригинальную, продуктивную, синтезирующую разнообразные исследовательские подходы в понимании права, методологию. Феноменология как теория и методология познания права является частью неклассической юридической науки, отдельные элементы этого метода используются в рамках иных неклассических подходов – юридической герменевтики, аксиологии права. Необходимо констатировать, что феноменология права выступает как альтернатива социологическому и естественно-правовому подходам в понимании права, и одновременно в ее рамках осуществляется, в определенном смысле, синтез этих двух способов исследования права. Особенностью феноменологии права является ее ориентированность на исследование, с одной стороны, актуального права как социального процесса, происходящего в принципиально «открытом» жизненном мире, с другой стороны, потенциального права как универсальной идеальной основы права. Феноменологический подход может быть использован в качестве технологии исследования действующего позитивного права. В таком ракурсе в любой правовой норме выявляется идеальная правовая структура, обуславливающая процесс реализации нормы.

Целью данной работы является проведение комплексного исследования трансцендентальной феноменологии права как метода проведения правовых исследований.

Для достижения поставленной цели были выделены следующие задачи:

- изучение трансцендентальной феноменологии как направления
- изучение трансцендентальной феноменологии как метода исследования,

- выявление сущности трансцендентальной феноменологии как методологии познания права.

Методологической основой данной работы является метод диалектического и исторического подхода к рассмотрению объекта и предмета исследования с использованием общих и специальных методов научного познания, таких, как догматический, сравнительно-правовой, правового моделирования, логического анализа.

На основе анализа, проведённого в рамках данной работы, представлены предложения, направленные на повышение эффективности применения феноменологии как метода проведения правовых исследований и совершенствование правового моделирования.

Ключевые слова: *трансцендентальная феноменология, философия, школа права, метод, ценность, юридическая наука.*

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպության «Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների» ցանկում: Պարբերականը, որի հիմնադիրը Երևանի պետական համալսարանն է, լույս է տեսնում տարեկան 4 անգամ:

«Գիտական Արցախ» պարբերականը պետեղված է www.elibrary.ru կայքում:

Պարբերականում տպագրության են ընդունվում նախկինում տպագիր կամ էլեկտրոնային պարբերականներում չհրատարակված բարձրորակ աշխատանքներ (գիտական հոդվածներ, գրախոսություններ), որոնք համապատասխանում են պարբերականի ուղղվածությանը (հասարակական գիտություններ), ունեն գիտական նորույթ և արդիականություն:

Բոլոր նյութերը գրախոսվում են: Գիտական աստիճան չունեցող հեղինակները պետք է հոդվածին կից ներկայացնեն գիտական ղեկավարի կարծիքը՝ ստորագրված կամ ամբիոնի երաշխավորությունը՝ ստորագրված և կնքված:

Նախքան հոդված ուղարկելը հեղինակները պարտավոր են www.aegmm.org կայքի «Գիտական Արցախ» պարբերականի բաժնում ծանոթանալ գիտական հրատարակումների էթիկային և խստորեն հետևել դրան:

1-ին համարը լույս է տեսնում ապրիլի (հոդվածներն ընդունվում են մինչև փետրվարի 15-ը), 2-րդ համարը՝ հուլիսին (հոդվածներն ընդունվում են մինչև մայիսի 15-ը), 3-րդը՝ հոկտեմբերին (հոդվածներն ընդունվում են մինչև հուլիսի 15-ը), իսկ 4-րդ համարը՝ դեկտեմբերին (հոդվածներն ընդունվում են մինչև հոկտեմբերի 1-ը):

«Գիտական Արցախ» պարբերականում տպագրված հոդվածները տեղադրվում են ԱԵԳՄՄ-ի նախագիծ հանդիսացող Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքում (www.artsaklib.am), որից հետո հղումներն ուղարկվում են հեղինակներին:

Հոդվածները պետք է ուղարկել scientific.artsakh@gmail.com էլեկտրոնային փոստին, որին պետք է կցել նաև հեղինակի բջջային հեռախոսահամարը և բնակության հասցեն՝ ինդեքսի նշումով:

Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներն են.

Համակարգչային շարվածքը՝ MS Word 2003-2010 ծրագիր:

Էջի ֆորմատը՝ 170*240 մմ, լուսանցքները բոլոր կողմերից՝ 20 մմ:

Ծավալը՝ 7-20 էջ՝ ներառյալ ամփոփագրերը:

Տեքստի տառատեսակը՝ հայերեն՝ Arian AMU, ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman:

Հոդվածի ներկայացման լեզուն՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Առաջին էջի վերին տողում (մեջտեղում) 13 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով տողի ծախ կողմում նշվում է հոդվածի **ՀՏԴ**-ն: Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում 12 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ): Մեկ տող ներքև՝ տողի մեջտեղում 12 pt տառաչափով, շեղատառ (Italic) տրվում է աշխատավայրը, բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը,

Ֆակուլտետը, գիտական աստիճանը, կոչումը, քաղաքը և երկիրը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:

Մեկ տող բաց թողնելով՝ 12 pt տառաչափով, շեղատառ (*Italic*), թավ (**Bold**) ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (*аннотация, abstract*), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետապոստության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական ելրահանգումները: Ամփոփագիրը պետք է իրենից ներկայացնի ինքնուրույն տեքստ, որը կնկարագրի հետապոստության հիմնական արդյունքներն առանց հոդվածն ընթերցելու: Ամփոփագրում պետք է բառացիորեն կրկնել հոդվածի նախադասությունները:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել «**Հիմնաբառեր**» և նշել 7-10 հիմնաբառ:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը, որի տառաչափը 12 pt է, տողերի հեռավորությունը՝ 1: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (*Alignment: Justify*): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ:

Աղյուսակները պետք է համարակալվեն և ունենան վերնագրեր:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը և լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածի լեզվից տարբերվող մյուս 2 լեզուներով ամփոփագրերը պարտադիր են, որոնք պետք է լինեն հոդվածի սկզբնական մասի (վերնագրից մինչև բանալի բառերը ներառյալ) թարգմանությունը և տրվում են հիմնական տեքստից հետո:

Հղումները պարտադիր են. տրվում են տողատակում, աճման կարգով՝ 10 pt տառաչափով, տողերի հեռավորությունը՝ 1: Հղման տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (*Alignment: Justify*): Պարբերություններն սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ: Հղման մեջ պետք է ներկայացված լինեն օգտագործված աշխատանքի հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (**Bold**), այնուհետև աշխատանքի վերնագիրը, հատորը, հրատարակության վայրը, տարեթիվը և էջը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապվել «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր, ի.գ.թ., դոցենտ Ավետիք Հարությունյանի հետ՝ գրելով avetiq.hh@gmail.com էլեկտրոնային փոստին կամ պանգահարելով +37497277770, (+374) 55277755 հեռախոսահամարներին:

The requirements for «SCIENTIFIC ARTSAKH» journal

The «Scientific Artsakh» journal of the «Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)» NGO is included in the list of «Scientific publications acceptable for the publication of the main results and provisions of theses» approved by the RA HAC. The journal, founded by Yerevan State University, is published 4 times a year.

The «**Scientific Artsakh**» journal is posted on www.elibrary.ru website.

High-quality works that are not previously published in printed or electronic journals (scientific articles, reviews), which correspond to the orientation of the journal (Social Sciences) and have scientific novelty and relevance, are accepted for publication in the journal.

All materials are reviewed. The authors, without academic degrees, along with the article represent the opinion of the supervisor, certified by the signature, or the recommendation of the Department, certified by signature and seal.

Before submitting the article, the authors are required to become familiar with the ethics of scientific publications set on the website www.aegmm.org in the «Scientific Artsakh» journal section and strictly follow it.

The 1st issue is published in April (**articles are accepted until February 15**), the 2nd issue – in July (**articles are accepted until may 15**), the 3rd issue – in October (**articles are accepted until July 15**), and the 4th issue – in December (**articles are accepted until October 1**).

The articles published in the «Scientific Artsakh» journal are placed on Artsakh E-Library website (www.artsakhlib.am), which is the UYSSA project, after which the links are sent to the authors.

Articles should be sent to the scientific.artsakh@gmail.com e-mail, with the obligatory indication of the mobile number of the author and the actual address (postal code is required).

Technical requirements for works:

Computer typing: program MS Word 2003-2010.

Page format: 170*240 mm, margins (left, right, top, bottom) ` 20 mm.

Volume: 7-20 pages (summary inclusive).

Text font: Armenian-Arian AMU, Russian and English – Times New Roman.

Language of articles: Armenian, Russian, English.

On the top line of the first page (center alignment) in capital letters, bold, font size – 13 pt the title of the article is written. The UDC of the article is indicated in the left-aligned line a line down. Over the line, in the center of the line, font size – 12 pt, capital letters, bold the name(s) of the author(s) is indicated. In the center of the line below, font size 12 pt, italicized the place of work, University or research center, faculty, scientific degree, title, city and country are indicated. On the line below in the center, font size 12pt the author's email is provided.

Over a line, font size 12, bold, italic an abstract (սակիմունի, аннотация), in the 120-170 words amount including forth goals, objectives, research methods, and main conclusions of the author must be set. The abstract should be a separate text describing the main results of the study without reading the article.

Over a line the word «Keywords» must be written and 7-10 words must be specified.

Over a line, the main text of the work with the font size of 12 pt, line spacing of 1 pt must be submitted. The text should be aligned on both sides (Alignment: Justify). The paragraph should be started with an indentation of 1 cm, using the TAB:

Tables should be numbered and have titles.

Diagrams, diagrams, drawings and drawings must be clear and printable.

Abstracts in two languages other than the language of writing are required, which are the translation of the initial part of the article (from the title to the keywords inclusive) and are indicated after the main text.

References required are listed in the bottom of the page, on the rise, font size 10 pt with line spacing 1pt. The link text must be aligned on both sides (Alignment: Justify). Paragraphs begin with a space of 1 cm, using the TAB: The link indicates the name and the first letter of the author's name of the source used (Bold), then the title of the work, volume, place of publishing, year and page.

For more information, please contact the editor-in-chief of «Scientific Artsakh» journal, Ph.D. in Law, Associate Professor Avetik Harutyunyan, e-mail at avetiq.hh@gmail.com or by phone +37497277770, (+374) 55277755.

Требования к оформлению статей журнала «НАУЧНЫЙ АРЦАХ»

Журнал «Научный Арцах» общественной организации «Объединение молодых учёных и специалистов Арцаха» (ОМУСА) включен в список «Научных изданий, принятых для публикации основных результатов и положений диссертаций», утвержденных ВАК Республики Армения. Журнал, учредителем которого является Ереванский государственный университет, издается 4 раза в год.

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

К публикации в журнале принимаются высококачественные работы, не публиковавшиеся ранее в печатных или электронных журналах (научные статьи, рецензии), которые соответствуют направленности журнала (общественные науки) и имеют научную новизну и актуальность.

Все материалы рецензируются. Авторы, не имеющие ученой степени, должны представить вместе со статьей отзыв научного руководителя, заверенный подписью, или рекомендацию кафедры, заверенную подписью и печатью.

До предоставления статьи авторы обязаны ознакомиться с этикой научных публикаций на сайте www.aegmtt.org в разделе журнала «Научный Арцах» и неукоснительно следовать ей.

1-ый номер публикуется в апреле (статьи принимаются до 15-го февраля), 2-ой номер – в июле (статьи принимаются до 15-го мая), 3-ий номер – в октябре (статьи принимаются до 15-го июля), а 4-ый номер – в декабре (статьи принимаются до 1-го октября).

Статьи, опубликованные в журнале «Научный Арцах», размещаются на сайте Электронной библиотеки Арцаха (www.artsakhlib.am), являющемся проектом ОМУСА, после чего ссылки отправляются авторам.

Статьи должны быть присланы на электронный адрес scientific.artsakh@gmail.com, с обязательным указанием номера мобильного телефона автора и фактического адреса (почтовый индекс обязателен).

Технические требования к оформлению работ:

Компьютерный набор: программа MS Word 2003-2010.

Формат страницы: 170*240 мм, поля (левое, правое, верхнее, нижнее) ` 20 мм.

Объем: 7-20 страниц (резюме включительно).

Шрифт текста: армянский – Arian AMU, русский и английский – Times New Roman.

Язык представления статей: армянский, русский, английский.

На верхней строке первой страницы (выравнивание по центру) прописными буквами, полужирным (Bold) шрифтом, размер – 13 кегль пишется заголовок статьи. Через строку с выравниванием по левому краю указывается УДК статьи. Через строку, по центру строки кеглем 12, прописными буквами, полужирным шрифтом указывается имя и фамилия (фамилии) автора (авторов). На строке ниже по центру кеглем 12, курсивом (Italic) указывается место работы, вуз или научно-

исследовательский центр, факультет, ученая степень, звание, город и страна. На строке ниже по центру кеглем 12 предоставляется электронный адрес автора.

Через строку кеглем 12, полужирным шрифтом (**Bold**) и курсивом (*Italic*) предоставляется аннотация (*summary*, abstract), в которой в объеме 120-170 слов должны быть изложены цели, задачи, методы исследования, а также основные выводы автора. Аннотация должна представлять собой самостоятельный текст, описывающий основные результаты исследования без прочтения статьи.

Через строку необходимо написать «Ключевые слова» и указать 7-10 слов.

Пропустив одну строку, необходимо представить основной текст работы кеглем 12 с межстрочным интервалом – 1 пт. Текст должен быть выровнен с двух сторон (*Alignment: Justify*). Абзац необходимо начинать с отступом в 1 см, используя **TAB**:

Таблицы должны быть пронумерованы и иметь заголовки.

Диаграммы, схемы, чертежи и рисунки должны быть четкими, подлежащими печати.

Резюме на двух языках, отличных от языка написания статьи, обязательны, представляют собой перевод начальной части статьи (от заголовка до ключевых слов включительно) и указываются после основного текста.

Ссылки обязательны, указываются в конце страницы по нарастающей кеглем 10 с межстрочным интервалом 1 пт. Текст ссылки должен быть выровнен с двух сторон (*Alignment: Justify*). Абзацы начинаются с отступом в 1 см, используя **TAB**. В ссылке указываются фамилия и первая буква имени автора использованного источника (**Bold**), затем название работы, том, место издательства, год и страница.

За дополнительной информацией можно обратиться к главному редактору журнала «Научный Арцах», к.ю.н., доценту Аветику Арутюняну, написав по электронному адресу avetiq.hh@gmail.com или позвонив по телефону +37497277770, (+374) 55277755.

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(8), 2021

*«Գիտական Արցախ» պարբերականը լույս է տեսնում տարեկան 4 անգամ:
 Հրատարակվում է 2018 թվականից:*

The «Scientific Artsakh» journal is published four times a year. It has been published since 2018.

Журнал «Научный Арцах» выходит четыре раза в год. Издается с 2018 года.

Գլխավոր խմբագիր՝
 Editor-in-Chief:
 Главный редактор:

Ավետիք Հարությունյան
Avetik Harutyunyan
Аветик Арутюнян

Գլխավոր խմբագրի տեղակալ,
 հայերենի պատասխանատու
 Deputy Editor-in-Chief,
 Responsible for Armenian
 Заместитель главного редактора,
 Ответственный за армянский язык

Թեմինա Մարության
Tehmina Marutyan
Теймина Марутян

Անգլերեն լեզվի պատասխանատու՝
 Responsible for English
 Ответственный за английский язык

Ալվինա Ներսեսյան
Alvina Nersesyan
Альвина Нерсесян

Ռուսերենի պատասխանատու՝
 Responsible for Russian
 Ответственный за русский язык

Ռուզաննա Սարգսյան
Ruzanna Sargsyan
Рузанна Саркисян

Համակարգչային շարվածքը, ոճը,
 տառաձևերը և էջադրումը՝
 Computer set, style, font and layout
 Компьютерный набор, стиль, шрифт
 и верстка

«Արցախ» հրատարակչություն
«Artsakh» Publishing House
Издательство «Арцах»

Շապիկի ձևավորումը՝
 Cover design
 Дизайн обложки

Արմինե Քոչարյան
Armine Kocharyan
Армине Кочарян

Website: www.scientificartsakh.com;

www.aegmm.org, www.artsakhinstitute.org.

E-mail: scientific.artsakh@gmail.com, avetiq.hh@gmail.com.

Tel. (+374) 97277770, (+374) 55277755.

Ստորագրված է տպագրության՝ 30.03.2021թ.:

Չափսը՝ 70*100/16: Թուղթը՝ օֆսետ:

Ծավալը՝ 17,5 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 150 օրինակ:

Տպագրված է «ՄՀՄ ԳՐԱՏՈՒՆ» ՍՊԸ տպագրատանը: